Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության


ՀԱՍ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

ОЧЕРКИ ПО ЛЕКСИКОЛОГИИ И ТЕРМИНОЛОГИИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1982

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Ա 68440

ՀԱՍԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՆՂԱՄԵՆՅԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿՈՐԴԵՄԻ ՍՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1982

ԳՄԴ 81.2 Հ
Ա 391

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտ. թեկնածու
Հ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտ. թեկնածուներ Ի. Մ. ՔՈԽՄԱԽՅԱՆԸ և Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆԸ

Ա 391 *Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության (ժողովածու)/ՀՍՍՀ ԳԱ, Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տ; Պատ. խմբ.՝ Հ. Գ. Հակոբյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982. 316 էջ.*

Ժողովածուն ամփոփում է ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության առանձին հարցերին նվիրված ուսումնասիրություններ: Հանգամանորեն քննվում են փոխառության վերաբերյալ հայ իրականության մեջ առաջ բաշված տեսակետները, խոսքի մասերի բառաբարդման կազապարներն իրենց կառուցվածքային-իմաստային առանձնահատկություններով, հայերենի տերմինակազմության ուղիներն ու աղբյուրները, ռազմական տերմինաբանության կառուցվածքային վերլուծությունը և նրա պատմական զարգացումը:

Հասցեագրվում է հայոց լեզվի հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջաններին

4602010000
Ա ———————— 50—82
703 (2)—82

ԳՄԴ 81.2 Հ
4 Ap

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հ. Ա. ՕՀԱՆՅԱՆ

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք

Լեզուների բառային կազմի հարստացման գործում որոշակի դեր են խաղում նաև փոխառությունները[1]: Դրանք բառապաշարի համալրման կարևոր միջոցներից են: Աշխարհի բոլոր լեզուներն էլ այս կամ այն չափով բառեր են վերցնում հարևան ու հեռավոր ժողովուրդների լեզուներից: Եվ դա ինքնըստինքյան հասկանալի է: Չէ՞ որ ժողովուրդները դառնում են դաշնագան կապերի ու փոխհարաբերությունների մեջ, որոնց շնորհիվ էլ տարբեր բնագավառներում որևէ ժողովրդի նվաճումները անմիջաբար կամ միջնորդավորված անցնում են մյուս ժողովուրդներին, որոնք նոր հասկացությունների ու երևույթների հետ հաճախ ընդունում են նաև դրանց անվանումները: Լեզուների բառային կազմի մեջ, այսպիսով, առաջ են գալիս փոխառյալ բառեր:

Կան լեզուներ, որոնց բառապաշարի մի զգալի մասը փոխառություն է, իսկ որոշ լեզուների մեջ փոխառյալ բառերը համեմատաբար քիչ են: Այստեղ դեր են խաղում մի շարք գործոններ. տվյալ լեզվի զարգացման առանձնահատկությունները, բառակազմական ավանդույթներն ու հնարավորությունները, լեզուն կրող ժողովրդի քաղաքական, տնտեսական դիրքը և վիճակը, երբեմն նաև միջազգային կյանքում խաղացած դերը և այլն: Մաքուր լեզուներ չկան և չեն կարող լինել: Այդպիսին է նաև հայոց լեզուն, որի բառապաշարի մեջ բավական շատ են օտար բառերը, որոնց ընդունումն ու գործածությունը հատուկ է եղել հայերենի զարգացման բոլոր շրջաններին: Փոխառություններն ավելի ակտիվանում են արդի փուլում, մի բան, որ պայմանավորված է գիտության ու տեխնիկայի, մշակույթի ու

---

1 *Այստեղ հիմնականում ուսումնասիրվում են արևելահայ իրականության մեջ առաջացրած տեսություններն ու տեսակետները:*

արվեստի, արտադրության ու հասարակական կյանքի այլ բնագավառներում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններով ու տեղաշարժերով, այլև դրանց զարգացմամբ ու վերելքով։

Փոխառությունը սոսկ բառապաշարային երևույթ չէ և չի սահմանափակվում միայն բառային կազմով։ Այն ընդգրկում է ավելի լայն շրջանակներ՝ ուղղախոսություն, ուղղագրություն, շեշտադրություն, մասամբ նաև քերականական կառուցվածք։ Ահա թե ինչու տվյալ հարցը հետաքրքրում է ոչ միայն լեզվաբաններին, այլև մտավորականության տարբեր ներկայացուցիչների, հատկապես՝ դրողների, գրականագետների, մամուլի աշխատողների, թարգմանիչների, բառարանագիրների և այլն։

Նկատենք, սակայն, որ այդ խնդիրը տակավին իր վերջնական լուծումը չի ստացել։ Այն եղել է և մնում է ուշադրության կենտրոնում՝ երբեք չկորցնելով իր արդիականությունը։ Դա բնական է, քանի որ գրչի մեկ հարվածով հնարավոր չէ որոշել մեր վերաբերմունքը հօգուտ կամ ի վնաս փոխառության։ Ամեն դեպքում պետք է կոնկրետ մոտեցում ցուցաբերել, կշռադատել բազմազան հանգամանքներ, նոր միայն որոշել փոխառյալ կամ ազգային ձևի բազարացիության իրավունքը։ Իրականում հենց այդպես էլ կատարվել է։ Տարբեր ժամանակներում տարբեր մոտեցումներ են եղել, որոնք կա՛մ մերժվել են, կա՛մ ընդունվել, կա՛մ էլ աստիճանաբար ճշգրտվել։ Փոխառությունները չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի տասնամյակով, այլ ուղեկցում են լեզվի զարգացման ողջ ընթացքին, ուստի դրանց ընդունման սկզբունքները անընդհատ ճշգրտման, լրացման ու պարզաբանման կարիք են զգում։

Մեր շատ մտավորականներ իրավացիորեն գտնում էին, որ հայերենը պետք է դիմի փոխառությունների, եթե դրա անհրաժեշտությունը զգացվում է, եթե դա այլևայլ կռվաններով հիմնավորված է և նպաստում է բառապաշարի հարստացմանն ու զարգացմանը։ Այս առումով տեսակետը որոշ հեղինակներ հաճախ աղավաղում և սխալ էին մեկնաբանում, որոնք թեև արտաքուստ կողմ էին, սակայն իրականում դեմ էին օտար բառերը հայերեն համարժեքներով փոխարինելու միտումին։ Նրանց բերած փաստարկներն, իհարկե, անհիմն էին։

Փոխառությունների նկատմամբ ոչ միանշանակ մոտեցման փաստերի հանդիպում ենք նաև այսօր։ Դեռևս չկան դրանց ընդունման վերջնականապես կայունացած սկզբունքներ ու գնահատման չափանիշներ։ Փոխառության վերաբերյալ գիտական ու գրական մամուլի էջերում բացված բանավեճերը, ինչպես նաև ոչ բանավիճային հոդվածներն ու այլ կարգի հրապարակումները առայժմ չեն հանգեցրել միանշանակ սկզբ-

բունքների հաստատման։ Ջնայած դրան, առաջադրված ու գիտականորեն հիմնավորված մի շարք հարցադրումներ, բացատրություններ ու նկատառումներ, այնուամենայնիվ, ղգալի չափով նպաստեցին հարցի նկատմամբ հիմնականում ընդունելի կողմնորոշմանը և փոխառությունների հետ առնչվող բազմաթիվ մանրամասների ճշգրիտ մշակմանը։

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Փոխառության հարցը գտնվել է մեր գրողներից շատերի ուշադրության կենտրոնում։ Մի շարք գրողներ այս կամ այն առիթով, իսկ երբեմն էլ հատուկ նպատակադրմամբ անդրադարձել են փոխառության խնդրին և արտահայտել իրենց տեսակետները։ Փոխառությանը անդրադարձել են Րաֆֆին, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, վ. Տերյանը, Ե. Չարենցը, Դ. Դեմիրճյանը, Պ. Սևակը, և ուրիշներ[2]։

Ղ. Աղայանը դեմ էր և՛ ծայրահեղ մաքրաստիրությանը, և՛ ծայրահեղ օտարամոլությանը։ Նրա կարծիքով փոխառյալ բոլոր բառերից հրաժարվելու դեպքում մեր լեզուն չափազանց կաղքատանար և հնարավոր չէր լինի հրատարակել «Լեզու» հանդեսը[3]։

վ. Տերյանը գտնում էր, որ պետք չէ թարգմանել օտար մի շարք բառեր. օրինակ՝ պիչ, պալտո, գալոշ և այլն։ Նրա կարծիքով, որոշ օտար բառերի թարգմանությամբ ստեղծվում են անկենդան, շինծու և անհասկանալի բառեր ու դարձվածքներ, որոնք լեզուն դարձնում են դժվարամատչելի[4]։ Տերյանը կարծում էր, թե հայերեն բառերը աղճատում են փոխառվածների իմաստները, թե իբր դրանք անհասկանալի են ժողովրդական լայն խավերին։ Մինչդեռ այսօր մենք ականատես ենք նշված բառերի հայերեն թարգմանությունների լայն տարածմանն ու կիրառությանը, իսկ դա նշանակում է, որ դրանք շինծու և անհասկանալի չէին։ Ի նպաստ Տերյանի նշենք, որ նրա տեսական սկզբունքները իրենց մարմնավորումը չգտան նրա ստեղծագործությունների լեզվի մեջ։ Տերյանի

---

2 Մեր նպատակից դուրս է բոլոր հեղինակների տեսակետների քննությունը։ Ուսումնասիրությունը սկսվում է 1960-ական թվականներից և ավարտվում մեր օրերով՝ ընդգրկելով շուրջ 80 տարի, ընդ որում, անցյալի ոչ բոլոր հեղինակների կարծիքներն են քննության առնվում։ Առանձնահատուկ ուշադրություն է բևեռվում հատկապես սովետական շրջանի հեղինակների վրա, որոնք արժեքավոր մտքեր են արտահայտել քննվող խնդրի կապակցությամբ։

3 Ղ. Աղայան, *Երկերի ժողովածու*, հ. 3, Երևան, 1963, էջ 300։

4 վ. Տերյան, *Երկերի ժողովածու*, հ. 4, Երևան, 1925, էջ 169։

երկերում չափազանց քիչ, ավելի ճիշտ՝ դրանք բացակայում են անհարկի փոխառությունները (նրա երկերում օտար բառերի քանակը մի քանի տասնյակից չի անցնում)։ Լեզուն իր զարգացման ընթացքում դուրս մղեց այն օտար բառերը, որոնց հայերեն համարժեքները առավելություն հանդես բերեցին առաջինների նկատմամբ։

Չափազանց ուշագրավ է Հ. Թումանյանի ըմբռնումը քննարկվող հարցի վերաբերյալ։ Նա փոխառության խնդրին անդրադարձել է տարբեր առիթներով և հիմնականում պաշտպանել ճիշտ տեսակետ։ Նա իրավացիորեն դեմ է արտահայտվել թե՛ ծայրահեղ մաքրամոլությանը և թե՛ օտարաբանությանը։ Փոխառության վերաբերյալ Թումանյանի մտքերը մեծ մասամբ բանավիճային բնույթ են կրել։ Դրանք հիմնականում շարադրվել են տարբեր հեղինակների տեսակետները հերքելու (կամ ճըշգըրտելու), դրանց հետ բանավիճելու առիթով։ Այդպիսի առիթ էին հանդիսացել Մ. Մաահենճյանի, Ա. Մեղրյանի և այլոց հոդվածները, որոնց կարծիքների դեմ էլ հենց հանդես եկավ Թումանյանը՝ գրելով մի քանի ուշագրավ հոդվածներ։ Հ. Թումանյանը ավելի խոր ու հանգամանալից է քննության առել փոխառության հարցը։ Ուշագրավ է Հ. Թումանյանի բանավեճը Մ. Մաահենճյանի դեմ։ Վերջինս նշում է, թե Թումանյանը սխալվում է, գրելով, որ Հ. Աբովյանը կողմնակից էր օտար բառերի գործածությանը։ Թումանյանը գտնում է, որ իր և Աբովյանի վեճը երբեք էլ այս կամ այն օտար բառի գործածության մասին չէ, որ խնդիրը սկզբունքային է, մի բան, որ չի հասկացել Մ. Մաահենճյանը (վերջինս բերում է Աբովյանի այն նախադասությունները, որոնք մերժում են օտար բառերի գործածությունը)։ Իսկ դա նշանակում է, որ Թումանյանի նման մեծությունը երբեք այս կամ այն օտար բառի կիրառության հարցը առաջ չէր քաշի։ Ելնելով սկզբունքային դիրքերից՝ նա ավելի խորն է քննում այդ խնդիրը. փոխառությունը դիտում է որպես լեզվի բառային կազմի հարստացման միջոց։ Նա իրավացիորեն նկատում է, որ կան օտար բառեր, որոնք անկախ նրանից գործածվում են թե ոչ, մտնում են լեզվի բառապաշարի մեջ. «Օտար բառեր կան, որ գործ են ածում ժողովուրդները, օտար բառեր կան, որ լեզուն արդեն որդեգրել է՝ գործ ածեք թե չէ, օտար բառեր կան, որ մտնում են օտար գաղափարների հետ, գործ ածեք թե չէ»[5]։

Թումանյանը մեղադրում է Մ. Մաահենճյանին, որը չհասկանալով Աբովյանի ասածի էությունը, հայտարարում է, թե Աբովյանը հակառակ

---

5 Հ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, հ. 6, Երևան, 1959, էջ 129։

է օտար, միջազգային բառերի գործածությանը։ «Մի՞թե նա (Աբովյանը—Հ. Ո.) հակառակ է լեզվի արդեն որդեգրած օտար բառերի գործածությանը, մի՞թե դեմ է էն նոր օտար բառերին, որ մտնում են գաղափարների ու գիտությունների հետ»[6]։

«Լեզվական փոխառությունների մասին» հոդվածում Թումանյանը գրում է. «Եվ իհարկե, ինչպես շատ ուրիշ ազդեցություններից չի ազատվելու, էնպես էլ լեզվի խնդրում, նա ոչ կարող է և ոչ էլ պետք է իրենից թոթափի ժամանակի ընթացքում եղած զանազան ազդեցությունները, որոնցից շատերն արդեն հարազատացել են, որդեգրված են միանգամ մենկընդմիշտ»[7]։ Նույն հոդվածում Թումանյանը ընդգծում է, որ փոխառությունները հարևան ժողովուրդներից ամեն մի լեզվի համար սովորական երևույթ են։ Նա միմյանց հետ շփվող ժողովուրդների լեզվական փոխառությունները համարում է կանոնավոր ու կամավոր, որին հակադրում է այն ազդեցությունը, երբ մի ժողովուրդ բռնությամբ տիրում է մի այլ ժողովրդի, որի հետևանքով նվաճված ժողովրդի լեզուն, ենթարկվելով իշխող ժողովրդի լեզվին, նրանից վերցնում է բաղմաթիվ անհարկի բառեր։ Սա ոչ թե փոխառություն է սովորական իմաստով, այլ հեղեղում օտար բառերով։ Թումանյանը նկատում է, որ փոխառության միջոցով հայոց լեզուն յուրացրել ու մարսել է շատ բան, որոնք, մերվելով մեր լեզվի մեջ, դարձել են միս ու արյուն[8]։ «Հայ գրական լեզվի հարցի շուրջը» հոդվածում Թումանյանը մեր գրական լեզվի բառապաշարի հարստացման միջոցներից մեկը համարում է փոխառությունը, որը բարբառային և դրաբարյան բառերի հետ պետք է ճոխացնի գրական հայերենը։ «Թերևս այն ժամանակ էլ գոյություն ուներ հայ ժողովրդական լեզուն իր առանձնահատուկ շարադասությունով։ Բայց թեկուզ եղած էլ չլինի, այսօր կա և կարիք չկա փոխելու, այլ նրա վրա պետք է հիմնել մեր գրական լեզուն և ճոխացնել թե՛ բոլոր բարբառներով, թե՛ դրաբարով և թե՛ օտար փոխառություններով»[9]։

Հ. Թումանյանը «Լեզվական փոխառությունները» հոդվածում առարկելով Նոր Նախիջևանի «Լույս» շաբաթաթերթի 10-րդ համարում տպագրված Ա. Մեղրյանի «Մեր մանկական գրականությունը և հայոց լեզուն» հոդվածի մեջ առաջ քաշած տեսակետին՝ նորից է անդրադառնում օտար բառերի գործածությանը։ Այստեղ ավելի որոշակիորեն են դրսևորվում

---

6 Նույն տեղում, էջ 139։
7 Նույն տեղում, էջ 160։
8 Նույն տեղում, էջ 161։
9 Նույն տեղում, էջ 396։

Թումանյանի սկզբունքները փոխառության հարցում։ Ա. Մեղրյանը մեղադրում է որոշ գրողների (այդ թվում նաև Հ. Թումանյանին), որոնք գործածում են ջան, ջիգյար, յար, յարաբ, ղարիբ և նման օտարամոտ բառեր։ Նա դատապարտում է օտար, մինչև անգամ բարբառային բառերի գործածությունը և մաքուր հայերեն լեզվի պահանջ է դնում։

Թումանյանը բերելով տարբեր լեզուներից տարբեր շրջաններում փոխառված տասնյակ բառեր (վարդ, նվագ, նվաստ, նունուֆար, նախշուն, նշան, նարգիզ, նավ, նուռ, նազուկ, նահապետ, մոմ, գրավ, կարիք, կարապ, գավազան, դայակ, շողք, շվաք, դումար, աշակերտ, սուր, շուշան, սպիտակ, սեր և այլն), նշում է, որ այս բառերը դիտվում են իբրև մաքուր հայերեն կամ էլ արդեն հայացած բառեր, և այդ պրոցեսը շարունակվելու է այսուհետև էլ, այն չի ընդհատվելու, որովհետև տվյալ ժողովրդի կենցաղի մեջ նորանոր հասկացություններ ու երևույթներ են մտնում, որոնք իրենց հետ բերում են նոր բառեր ու արտահայտություններ։

«Դրանք եթե մեր լեզվի մեջ են մտել ու հայացել, արդյոք պրանից հետո կա՞նգ է առել էդ պրոցեսը և էլ նոր բառեր չե՞ն մտնում ու հայանում թե մեր ժողովրդական լեզվի մեջ, թե գրական, ուրիշ խոսքով՝ էլ չեն կատարվում ժողովրդական ու գրական լեզվի փոխառություններ։ Իհարկե, այս պատասխանն էլ դրական է լինելու։ Քանի որ մի ժողովուրդ հաղար ու մի ձևերով հարաբերություն ունի ուրիշ ժողովուրդների հետ, քանի որ նրա կյանքը զարդանում է նաև արտաքին աղդեցությունների տակ, քանի որ մեծանում է, էնքան էլ աղդեցություններ է կրում և նրա լեզուն, հարստանում, ճոխանում ու զարգանում։ Նորանոր գաղափարների հետ նորանոր ոճեր ու բառեր է ընդունում, և մինչդեռ դուք բողոքում եք, թե չի կարելի հայերեն լեզվի մեջ դործ ածել դարպ, ջան, չոլ, պիլ և նման բառեր, մյուս կողմից ներս են հոսում ինտելիգենտ, կուլտուրա, լեգենդ, սոնետ, պոեմ, պոեզիա, օպերա, դիպլոմատ, պրոպագանդ և այլն»[10]։ Թումանյանը նշում է, որ փոխառությունները բնորոշ են բոլոր լեզուներին, որ իղուր է Ա. Մեղրյանը վկայակչում ռուսաց և եվրոպական դրականությունները, իբր դրանք օտար բառեր չեն ընդունում իրենց լեզվի մեջ և մաքուր լեզվով են դրում իրենց մանուկների համար։

«Էս արդեն էնքան է սխալ, որ ես հերքելն ավելորդ եմ համարում։ Գրեթե ամեն մի նոր եվրոպական բառ, ինչ որ հայերը շինում են կամ թարգմանում, ռուսները նույնությամբ առնում են ու տալիս իրենց երե-

10 «Հ. Թումանյանը քննադատ», Երևան, 1939, էջ 150—151։

խաներին։ Ոչ. թե՛ ժողովրդական, թե՛ գրական լեզվի մեջ լեզվական փոխառությունները եղել են միշտ, կլինեն միշտ, և շատ է գեղեցիկ, որ էդպես է, միայն պետք է իմանալ շնորհքով, խելացի առնել ու տեղը գործածել, ահա խնդիրը»[11]։

Ինչպես տեսնում ենք, Թումանյանը կողմնակից է անհրաժեշտության թելադրանքով կամ մղումով կատարված փոխառություններին։ Նա որոշակիորեն դանագանում է լեզվի մեջ անհրաժեշտորեն մտած օտար բառերը անհարկի փոխառություններից։ Եվ դա, իհարկե, ճիշտ է։ Նշված հոդվածում Թումանյանը ընդգծում է այն միտքը, որ չպետք է բավարարվենք միայն սեփական լեզվի միջոցով ստեղծված բառերով, միայն մայրենի լեզվի բառապաշարով, այլ պետք է հարստացնենք մեր լեզուն նաև փոխառյալ բառերով. «Եվ ինչու՞ պիտի վշտանաք ու կռվեք, ի սեր աստծո։ Դուք կարծում եք միայն նրանով պիտի ճոխանաք ու բավականանաք, ինչ որ հայի միտքն ու հանճարն է տալիս...»[12]։

Թումանյանը դեմ արտահայտվելով մեր լեզվի մեջ եղած բոլոր օտար բառերը հայերեն համարժեքներով փոխարինելու կարծիքին և գտնելով, որ լեզվական փոխառությունները միշտ եղել են և կլինեն, գրում է. «Խնդրեմ ասեք. եթե մեր լեզվից հանեք ձեր հալածած «ջան»-ը, որ չինական է թե մոնղոլական-թաթարական, ինչո՞վ կփոխարինենք։ Մի քիչ մտածեցեք. կտեսնեք մի բառ եք վտարում, որի տեղը համապոր ու համաշունչ մի այլ բառ դնել չեք կարող։ Դրա նման և շատ ուրիշ բառեր, որ մաքուր հայերեն չեն։ Եթե էդ օտարամուտ բառերի փոխարենը դուք ունեք-ինչ խոսք։ Եթե ձեր լեզուն ընդունակ է հարազատ թարգմանելու կամ հարմար բառեր շինելու, տելեֆոնին հեռախոս ասացեք, տելեգրաֆին հեռագիր կամ վելիսապեդին հեծանիվ, բայց հո չի կարելի ամեն բան թարգմանել կամ շինել, էքսպրոպրիատորը ճողոպրիստ, ինչպես արել են մեր պոլսահայերը, տրամվայը քարշակ անվանել, հանգ. Գամառ Քաթիպայի նման՝ խավիարը ձկնկիթ կամ ֆրակը՝ պոչապդեստ»[13]։

«Թեև մեր լեզուն,— գրում է Թումանյանը,— դեռ կազմակերպվելու շրջանի մեջ է և ամեն մի գրող ընտրում է իրեն համար մի ճանապարհ։ Նրանց առջև են և՛ եղած գրական լեզուն, գրաբարը, և՛ բարբառները, և՛ օտար լեզուները։ Ես էն կարծիքին եմ, էդպես էլ գրել եմ իմ հոդվածում...

---

11 Նույն տեղում, էջ 152։

12 Նույն տեղում, էջ 151։

13 Նույն տեղում։

որ գրողը իր լեզուն հարստացնելու, կազմելու համար ազատ է օգտվելու էդ բոլոր աղբյուրներից»[14]։

«Հայոց գրական լեզվի խնդիրը» թեմայով զեկուցման մեջ՝ կարդացած 1916 թ. նոյեմբերի 5-ին հայ գրողների ընկերության երեկույթին, Թումանյանը նորից է անդրադառնում փոխառության հարցին, նկատելով, որ ոչ մի լեզու չի կարող զերծ մնալ փոխառությունից, կղզիանալ և բավարարվել սեփական բառապաշարով։ Գնալով փոխառությունները ավելի մեծ տեղ են գրավելու լեզուների բառային կազմում, և չպետք է խուսափել դրանից և ճգնել անպատճառ թարգմանել կամ ստեղծել նոր բառ։ Թումանյանը զգուշացնում է, որ անշնորհք թարգմանություններն ավելի մեծ վնաս են պատճառում լեզվին, քան փոխառությունները[15]։ Նա այն կարծիքն է հայտնում, որ հաջող փոխառությունն ու ճիշտ թարգմանությունը մեծ չափով շնորհքի ու տաղանդի գործ են դառնում, ցավով նշելով, որ անճաշակ, անշնորհք մարդիկ լեզվի վրա շատ են ազդում. ուստի պահանջում է փոխառության կամ թարգմանության ժամանակ խիստ զգույշ լինել, գտնելով, որ ամեն մի բառ, ձև կամ ոճ մի ստեղծագործություն է, մի ամբողջ աշխարհ[16]։

Նշելով բառական ու ոճական փոխառությունների մեծ չափերը մեր լեզվում, Թումանյանը միաժամանակ ցույց է տալիս այն սխալ արտահայտություններն ու ոճերը, որ մուտք են գործել հատկապես ռուսերեն համապատասխան արտահայտությունների ոչ ճիշտ, բառացի թարգմանությունների հետևանքով (նրա մոտ ձայն չկա, հրացանից արձակեցին, երևակայեցեք ձեզ, գետի եռում և այլն)[17]։ Թումանյանը իրավացիորեն դժգոհում է, որ ռուսերենի просвещение, цивилизация, культура բառերը երբեմն թարգմանվում են միևնույն բառով՝ լուսավորություն, որը, իհարկե, թյուրիմացությունների տեղիք կարող է տալ։

1910 թվականին գրած «Վռազ պատասխան Ա. Մեղրյանին» հոդվածում առարկելով Մեղրյանին, որ պահանջում էր հայոց լեզվից դուրս մղել թուրքերեն, պարսկերեն և այլ օտար բառերը (զարիբ, դարդ, մաբալ, մուշտարի, յար, մուրազ, նազուք, ջան, չեյրան և այլն), Թումանյանը նշում է, որ հայերենում կան բազմաթիվ բառեր, որոնք փոխ են առնված եվրոպական լեզուներից ինչպես վարվել դրանց հետ։ Արդյոք դրանք նույնպես դուրս նետել հայոց լեզվից, թե պահել։ Մեղրյանի կար-

14 Նույն տեղում, էջ 163։
15 Նույն տեղում, էջ 389։
16 Նույն տեղում, էջ 389—390։
17 Նույն տեղում, էջ 386։

ծիքով, դրանք պետք է բողնել երկու պատճառով՝ ա) որ դրանք միջազգային են, գործ են ածվում և ուրիշ շատ լեզուներում, բ) դրանք չունեն հայերեն համարժեքներ։ Թումանյանը նշում է, որ Մեղրյանի պնդումները հիմնավոր չեն, քանի որ ինտելիգենտ, կուլտուրա, լեգենդ, պոեմ, սոնետ և այլ բառեր նույնպես չունեն իրենց հայերեն համարժեքները, ինչպես նրա բերած մյուս բառերը, բացի դրանից, եթե եվրոպական ազգերը կարող են փոխառություններ կատարել, ապա ինչու հայերենը չի կարող։

Թումանյանը դատապարտում է Մեղրյանին ջան-ը հոգյակով փոխարինելու համար։ Ըստ Թումանյանի հոգյակը չի կարող փոխարինել ջան բառին։ Այստեղ, սրամտորեն նկատում է Թումանյանը, հոնքը շինելու փոխարեն աչքն էլ հանվում է։ Դիմելով Մեղրյանին՝ Թումանյանը գրում է. «Մեզ համոզելու համար Ձեր առաջ բերած օտար բառերի տեղ դնում ենք մաքուր հայերենը. օրինակ. առաջարկում եք «ջան»-ի տեղ դործ ածել հոգյակ։ Եվ ահա բանը դրստվեց. այսուհետև փոխանակ ախպեր ջան կամ Գրիգոր ջան ասելու, մաքուր հայերենով կասեք հոգյակ եղբայր, կամ հոգյակ Գրիգոր, կամ թե քեֆ աննելիս, ներողություն, մաքուր հայերենով ասենք, իրախճան աննելիս կամ առհասարակ ուրախանալիս փոխանակ «ջան» բացականչելու, կկանչենք «հոգյակ»։ Եվ միթե դուք չեք տեսնում ու չեք զգում, թե ինչքան է սա անմիտ ու անճաշակ։ Միթե չեք տեսնում, որ հոնքը շինելու տեղ, աչքն էլ հանում եք»[18]։ Այսպիսով, Թումանյանը կանգնած էր ճիշտ տեսակետի վրա, և նրա առաջ քաշած սկզբունքները հիմնականում արդիական են։

Ե. Չարենցը փոխառության հարցին անդրադարձել է Գ. Աբովի «Դանակը բկին» բանաստեղծությունների ժողովածուի մասին դրած դրախոսության մեջ։ Մեծ բանաստեղծը սկզբունքորեն դեմ էր անտեղի ու անհարկի օտարալեզվյան բառերի գործածությանը՝ գտնելով, որ փոխառյալ բառերին անհրաժեշտ է դիմել այն դեպքում, երբ մայրենի լեզվում այդպիսիք չկան։

«Փողոցը, խոշոր քաղաքի փողոցը,— գրում է նա,— դարձել է... «քուչա»։ Այսինքն՝ պրովինցիալ քաղաքի քոսոտ փողոցը, ուր այնքան հասկանալի է երեխաների այն հոգեբանությունը, որ եթե «պլոշչադ» ասեն հրապարակին-քոսոտ մեյդանը կդառնա խոշոր քաղաքի եռուն հրապարակ, կամ եթե դույլին «վեդրո» ասեն՝ կստացվի խոշոր քաղաքի «խոսակցություն»։ Ինչու՞ վեդրո և ոչ դույլ, երբ այդ դույլը կա։ Հասկա-

18 Նույն տեղում, էջ 165։

նում ենք՝ «պրոպելլեր»—հայերենում «պրոպելլեր» չկա։ Ոչ միայն բառը, այլ ինքը ևս չկա»[19]։

Ջարենցը ճշտորեն նկատում է, որ պլոշչադ, վեդրո և այլ օտար բառերի գործածությունը ոչնչով չի նպաստում լեզվի հարստացմանը, ընդհակառակը իջեցնում է լեզվի մակարդակը։

Թեև Ջարենցը հիմնականում ճիշտ էր կողմնորոշվում քննարկվող հարցում, սակայն իր ստեղծագործությունների մեջ որոշ չափով տուրք էր տալիս դրանց։ Օտարալեզվյան անհարկի բառերի գործածությունների հանդիպում ենք հատկապես նրա 20-ական թվականների ստեղծագործություններում։ Այդպիսիք են՝ բոչկա, կաճալ, պալտո, պլանետ, էտաժ, մաշինա և այլն։ Սա ոչ այնքան հեղինակի լեզվական ճաշակի, որքան ժամանակաշրջանի արդյունք էր։ Շատ հեղինակներ, հրաժարվելով մայրենի լեզվի բառերի ու ոճերի գործածություններից, թխում էին նորանոր բառեր կամ էլ կատարում փոխառություններ։ Մեր կյանքի մեջ առաջ եկած նոր երևույթները արտահայտելու համար շատ դրողներ դիմում էին աղմուկ ու շառաչ առաջացնող բառերի ու անհարկի փոխառություններին։ Էլ չենք խոսում այն մասին, որ դեռևս պարզ ու հստակ պատկերացում չկար փոխառություններ կատարելու հարցում։

Փոխառության հարցը շոշափել է նաև Դ. Դեմիրճյանը։ «Ժամանակակից հայ գրական լեզվի զարգացման տենդենցները»[20] ուշադրավ հոդվածում նա գրական հայերենի զարգացման միտումների քննարկման կապակցությամբ անդրադառնում է նաև փոխառության խնդրին և հիմնականում պաշտպանում ընդունելի տեսակետ։ Դեմիրճյանը գտնում է, որ փոխառությունները անհրաժեշտ են լեզուների, այդ թվում և հայերենի համար։ Նրա կարծիքով կարևորը միայն տվյալ լեզվում համապատասխան բառ ունենալը չէ և ոչ միշտ է, որ սեփական բառը ծառայում է իր նպատակին։ Դեմիրճյանը բերում է ինտելիգենտ-մտավորական և ինտելիգենտսկի-մտավորական ձևերը, որոնք խոսուն են։ Այդպես են նաև անասոմիա-մարդակազմություն և կենդանիների մարդակազմություն, տուբերկուլյոզ-թոքախտ և ոսկորների թոքախտ և այլն ձևերը[21]։ Սրա պատճառը նա համարում է օտար բառերի նկատմամբ ցուցաբերված բառապաշտությունը։ Առարկելով Վ. Տերյանին, նշում է, որ վերջինս մոռա-

---

19 «Նորք», 1923, № 2, էջ 240։

20 Տե՛ս, «Սովետական գրականություն և արվեստ», 1951, № 9, էջ 103—143։

21 Նկատենք, որ այժմ տրված է անատոմիա բառի ճիշտ թարգմանությունը՝ կազմախոսություն, իսկ ոսկորների թոքախտ, որ սխալ թարգմանության հետևանք էր, փոխարինվել է ոսկրախտ բառով։

նում է լեզվի հիմնական օրենքներից մեկը՝ պայմանականությունը։ Դեմիրճյանը գտնում է, որ վերարկուն պալտոն չէ, կրկնակոշիկը՝ գալոշ, վառարանը՝ պեչ։ Սակայն մարդիկ պայմանավորվել են այդպես ասել և այդպես հասկանալ։ Ուստի սխալ է համարում Վ. Տերյանի մոտեցումը վերը նշված օտար բառերի հայերեն թարգմանությունների վերաբերյալ։

Դեմիրճյանը գտնում է, որ փոխառությունները անհրաժեշտ են, սակայն չափազանց վախը ու խիզախությունը ավելորդ են։ «Վախը նրանից է,— գրում է Դեմիրճյանը,— որ շատերը կարծում են, թե լեզուն կորցնում է իր «մաքրությունը»։ Մենք տեսանք, որ չի կորցնում։ Չափազանց խիզախներն էլ ղրկում են լեզուն իր ինքնուրույն արտահայտչական միջոցներից, դարձնում են ժողովրդի համար իրոք որ մի անհասկանալի լեզու»[22]։ Ըստ Դեմիրճյանի՝ լեզվի մեջ ոչ մի բառ միանգամից քաղաքացիական իրավունք չի ստանում։ Մրցության մեջ են մտնում փոխառյալ բառը հայերեն համարժեքի հետ, նորաբանությունը՝ օտար բառի հետ։ Նրա կարծիքով, պատգամավորը տեղի ավեց դելեգատին, իսկ կրեդիտ–վարկ, սոկ–ժամկետ, բազար–շուկա բառերը հաստատվելու վրա են։ Նկատենք, որ երկու դիտողություններն էլ հնացած են և լեզվական փաստերով չեն հավաստվում։ Նախ՝ պատգամավորը բոլորովին էլ իր տեղը չի զիջել դելեգատին, իսկ փոխառյալ մյուս բառերի հայերեն համարժեքները վաղուց հաստատվել են և դուրս մղել օտար բառերին։ Վերջիններս հանդիպում են միայն խոսակցական լեզվում, այն էլ ոչ հաճախ։ Գրական լեզվի գրավոր տարբերակում բացարձակապես կիրառվում են հայերեն բառերը, իսկ բանավոր տարբերակում երբեմն գործածվում են նաև այդ փոխառությունները, իհարկե, հայերեն համարժեքների հետ զուգահեռ։

Դեմիրճյանի հոդվածը վերջանում է մի ճիշտ դիտողությամբ՝ դա այն է, որ հայերենը սկսում է իր լեզվով արտահայտել շատ նոր հասկացություններ, որ նրա գարավոր, հին, փորձված լեզվի իրավունքն է, որ պետք է հարգել, երբեմն հասկանալ և հաշվի առնել։ Եվ եթե ռուսերենը օտար լեզուներից կատարված փոխառությունների առատությունից կարող է չխանգարվել, բնական հնչել, ապա նույնը չի կարելի հայերենի համար ասել[23]։ Այս ամենից հետևում է, որ Դեմիրճյանը հիմնականում ճիշտ էր կողմնորոշվում փոխառության հարցում։

Պ. Սևակը 1962 թ. մարտի 25-ին «Գրական թերթում» հանդես եկավ

---

22 Դ. Դեմիրճյան, նշվ. հոդվածը, էջ 136։ («Սովետական գրականություն և արվեստ», 1951, №9»)։

23 Դ. Դեմիրճյան, նշված հոդվածը, էջ 141։

«Պահպանենք և հարստացնենք մայրենին» խորագիրը կրող հոդվածով։ Հոդվածը թեև ուղղված էր տերմինաբանական կոմիտեի 1940 թվականին կայացրած այն որոշման դեմ, որով քաղաքացիական իրավունք տրվեց ռեսպուբլիկա, պարտիա, կոնստիտուցիա, դելեգատ, սովետ, սեսիա, դեպուտատ բառերին, որոնց համարժեքները վաղուց գործածվում էին հայերենում, սակայն ըստ էության լրջորեն շոշափում էր փոխառության հարցը։ Պ. Սեւակը դեմ չէր փոխառություններին ընդհանրապես, նա պահանջում էր վերցնել այն բառերը, որոնք պակասում են հայերենում, որոնց կարիքը զգացվում է։ Հոդվածագիրը մանրամասնորեն քննության է առնում հիշյալ հայերեն բառերի իմաստային ու բառակազմական առավելությունները օտար բառերի նկատմամբ և գիտականորեն հիմնավորում նրանց գործածությունը հայերենում։ Վերապահություն է արվում միայն սովետ բառի նկատմամբ, որը իբրև կառավարության նոր տիպի, պետական նոր կարգի ու վարչաձևի անվանում լիովին արդարացնում է իր գործածությունը։ Համեմատություն անցկացնելով ռևոլյուցիա և հեղափոխություն բառերի միջև, հեղինակը ճշտորեն նկատում է, որ առաջինը երկրորդին զիջում է իր ստուգաբանությամբ, հասկանալիությամբ և բառակազմական ճկունությամբ, որ հեղափոխություն բառի բաղադրիչներով և համապատասխան ածանցներով կազմված բազմաթիվ բառեր հնարավոր չէ արտահայտել ռևոլյուցիա բառով։

«Այսպիսի արդյունք կստացվի, գրում է Պ. Սևակը,— եթե մենք շարունակենք մեր բնիկ բառերի համեմատությունները եվրոպական «պարտիա», «ռեսպուբլիկա», «կոնստիտուցիա», «դելեգատ», «դեպուտատ» և մյուս բառերի հետ»[24]։

Պ. Սևակը դեմ է արտահայտվում ոչ միայն հրամանագրված այդ բառերի գործածությանը, այլև այնպիսի բառերի, որոնց հայերեն թարգմանությունները բավական հաջող են ու հասկանալի։ Օրինակ՝ էպետիկա (գեղագիտություն), լիրիկա (ճնարերգություն), պրոզա (արձակ), պրոզաիկ (արձակագիր), դրամատուրգիա (թատերագրություն), դրամատուրգ (թատերագիր), մոնոլոգ (մենախոսություն), դիալոգ (երկխոսություն), պրինցիպ (սկզբունք), պրոգրեսիվ (առաջադիմական), սատիրա (երգիծանք) և այլն, և այլն։ Նա իրավացիորեն դժգոհում է, որ մենք չենք օգտվում մեր լեզվի բառակազմական առավելությունից։ Հայերենի բառակազմության հեշտությունն ու շահավետությունը աշխարհի քիչ լեզուներ ունեն, ուստի եթե որևէ լեզու, նույնիսկ հայերենից ավելի հա-

2 Պ. Սևակ, *Երկերի ժողովածու*, հ. 5, էջ 148—149։

բուստ ու ճկուն, տեսնելով է օտար բառը ընդունել, որովհետև բառակազմության իր հնարավորությունները սուղ են, ապա հայերենը պարտավոր է հայացնել այդ բառը։ Այնուհետև նշում է, որ եթե մեր նախնիները այնպես վարվեին, ինչպես այժմ մենք ենք անում, ապա հայերենում չէիր գործածվելին թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն, եռանկյունաչափություն, աշխարհագրություն, բուսաբանություն և նման շատ ու շատ բառեր, որոնք, իրրև գիտության նոր ճյուղերի անվանումներ, ժամանակին նույնպես նորություններ էին, ինչպիսին են հիմա միջուկային տեսությունը կամ կիբեռնետիկան։ Սխալ է համարում նաև տրամաբանությունը լոգիկայով, երկրաբանությունը՝ գեոլոգիայով, բուսաբանությունը՝ բոտանիկայով, կենդանաբանությունը՝ զոոլոգիայով փոխարինելը։

Օտար բառերի կիրառման խնդրում, ըստ Պ. Սևակի, ամենից առաջ պիտի գործի կշռադատության և ոչ թե թույլ դիմադրության կամ ինքնահոսի օրենքը։ Եթե գործեր կշռադատության նվազագույն պահանջը, ապա մենք տեղ չէինք տա պարկ, ցեխ և նման տիպի բառերին։ Պ. Սևակը փոխառության հարցում պաշտպանում է միանգամայն ճիշտ տեսակետ։ Այսօր մենք ականատես ենք, թե ինչպես նրա բերած օտար բառերի ճնշող մեծամասնությունը փոխարինվել է հայերեն համարժեքներով։ Բացի դրանից, Պ. Սևակի այս հոդվածը ճիշտ դիրքորոշում տվեց հրատարակչություններին, մամուլի աշխատողներին, թարգմանիչներին, որոնք աստիճանաբար գործածության մեջ դրեցին հայերեն պարզ ու հասկանալի բառերը այլ լեզուներից արհեստականորեն մտցված բառերի փոխարեն։ Ճիշտ է, դրանից հետո վիճաբանությունները չավարտվեցին, կրքերը չմեղմացան, և հարցը վերջնական լուծում չստացավ, սակայն դա դրական դեր խաղաց հայերենի բառային կազմը անհարկի փոխառություններից բեռնաթափելու և մայրենի լեզվի բառակազմական միջոցներով նոր բառերի կերտման գործում։

Վաղարշակ Նորենցը և Սողոմոն Տարոնցին իրենց «Բաց նամակ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեին և Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեին»[25] նամակ-հոդվածում հարց են բարձրացնում հետևելու ցուցանակների լեզվի մաքրությանը։ Այդ կապակցությամբ միանգամայն իրավացիորեն առարկում են օտար՝ ցեխ, սելմագ, կաֆե և այլ բառերի դեմ, պահանջելով գործածության մեջ դնել դրանց հայերեն համարժեքները՝ առտադրամաս-ը, գյուղ-

25 «Գրական թերթ», 3. 9. 1965։

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

խանութ–ը և սենյակ–ը: Նրանք դեմ են արտահայտվում նաև «Ատելյե–մոդ»–ին, գտնելով, որ դա ավելի լավ չէ, քան «Նորաձևության տաղավարը» կամ «Տարազների արհեստանոցը»: Նույնը վերաբերում է փոխառյալ «սալոն» բառին, որը, ըստ նրանց, որևէ առավելություն չունի հայերեն սրահ, դահլիճ և դրանց համանիշ այլ բառերի նկատմամբ: Նամակ-հոդվածի հեղինակները պահանջում են հիմնարկների օտար անվանումները փոխարինել ազգայինով [«Տրուդ»-«Աշխատանք», «Մեբելշիկ»-«Կահույքագործ» և այլն]: Ինչպես տեսնում ենք, վ. Նորենցը և Ս. Տարոնցին կանգնած են լեզվի մաքրության պաշտպանության դիրքերում:

Փոխառության և լեզվի մաքրության հարցին անդրադարձել է նաև Բ. Հովսեփյանը «Դպրոցը և դասագիրքը»[26] ուշագրավ հոդվածում: Բ. Հովսեփյանը գտնում է, որ դասագրքերի լեզուն պետք է օրինակելի լինի, գրված գրական մաքուր հայերենով, քանի որ այն գրական լեզվին տիրապետելու լավագույն միջոցներից մեկն է և ուղեկցում է մարդուն նրա ուսումնառության (և ոչ միայն ուսումնառության) ամբողջ ընթացքում: Հեղինակը հիշյալ հոդվածում քննության է առնում հատկապես «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա» դասագրքի լեզուն (թարգմանիչ՝ Ս. Մ. Մելիք-Ստեփանյան, խմբագիր՝ Ի. Գ. Հարությունյան), վեր հանելով դասագրքի մեջ եղած լեզվական սխալներն ու անճշտությունները: Դասագրքի հիմնական թերությունը, ըստ նրա, բառերի սխալ թարգմանությունների ու ոչ ճիշտ կիրառությունների մեջ է: Այսպես՝ դասագրքում արյան կարմիր գնդիկների և արյան սպիտակ գնդիկների փոխարեն գործ են ածվում արյան կարմիր մարմնիկներ և արյան սպիտակ մարմնիկներ, որոնք ճիշտ չեն և իրավացիորեն մերժվում են Բ. Հովսեփյանի կողմից: Բացի դրանից, դասագրքի թարգմանիչը օգտագործում է սրտի աջ փորոք, սրտի ձախ փորոք տերմինները աջ սրտախոռչ, ձախ սրտախոռչ տերմինների փոխարեն: Դեռ ավելին, ռուսերենի «правое предсердие» թարգմանվել է «աջ նախասիրտ» «սրտի աջ նախախոռչ» տերմինի փոխարեն: Հայերենում, իրավացիորեն նկատում է Հովսեփյանը, աջ և ձախ նախասրտեր չկան: Կա միայն սիրտ, որն ունի աջ նախախոռչ և ձախ նախախոռչ: Ուստի դասագրքում միանգամայն սխալ է կատարված վերոհիշյալ տերմինի թարգմանությունը: Ելնելով մայրենի լեզվի մաքրության և տերմինների հասկանալիության շահերից՝ Բ. Հովսեփյանը մեղադրում է դասագրքի թարգմանչին հայերեն մի շարք տերմիններ

---

26 «Գրական թերթ», 18. 7. 1965.

դասագրքից վտարելու և դրանց փոխարեն օտար տերմիններ գործածելու մեջ։ Այսպես՝ «Նյարդային համակարգություն»-ը թարգմանվել է «Ներվային սիստեմ», իսկ մատոսկր, ընդունիչ, վերճաշերտային, ծայրամաս, ղեր, նյարդ, նյարդաբջիջ, շրջապատում, արտադրում, օդափոխում և այլն հայերեն տերմինները՝ ֆալանգ, ռեցեպտոր, էպիթելային, պերիֆերիա (նաև պերիֆերիկ), ֆունկցիա, ներվ, նեյրոն, բլոկադա, սեկրեցիա, վենտիլյացիա և այլն։ Երբեմն թարգմանիչը օտար տերմինից հետո փակագծում դնում է հայերեն տերմինը կամ նրա բացատրությունը (ֆագոցիտներ-լափող բջիջներ, ինֆեկցիոն-վարակիչ, ատերիլ-վարակազերծված, փոխանակ՝ վարակազերծ), բայց դա գործին քիչ է օգնում։ Այս ամենից հետևում է, որ հոդվածագիրը կանգնած է մայրենի լեզվի մաքրությունն ու անաղարտությունը պահպանելու ընդունելի տեսակետի վրա։

ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

Փոխառության հարցը հուզել է հայ լեզվաբաններից շատերին։ Մասնագիտության բերումով նրանք թերևս ավելի շատ են զգացել այդ խնդրի լուծման անհրաժեշտությունը և ավելի մեծ ջանքեր են գործադրել այն վախճանակետին հասցնելու համար։ Առանձնապես մեծ է Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Գ. Սևակի, Ս. Աբրահամյանի, Ռ. Իշխանյանի և այլոց դերը այդ բնագավառում։

Փոխառության վերաբերյալ նուրբ դիտողությունների ենք հանդիպում Մ. Աբեղյանի աշխատություններում, ուր մեր լեզվի բառակազմության կապակցությամբ ընդգծվում է, որ հայերենը իր ներքին միջոցներով նոր բառերի կազմությունը գերադասում է համապատասխան փոխառությունից։ Շատ դեպքերում, նշում է Աբեղյանը, հայոց լեզուն վերցնում է միայն օտար բառի նշանակությունը և իր սեփական հնարավորություններով նոր բառեր ստեղծում՝ խուսափելով փոխառությունից։ Հայերենի այդ հատկությունը, որը, ըստ Աբեղյանի, գալիս է լեզվի զարգացման նախորդ շրջաններից, գործուն է նաև այժմ և նպաստում է մեր լեզվի բառային կազմի հարստացմանը։ «Հայերենը շատ մեծ չափերով ընդունակ է բաղադրության։ Հին լեզվից ունենք բազմաթիվ բաղադրված բառեր, որոնց անալոգիայով այժմ էլ կազմում ենք նոր բառեր։ Այս հատկությունը նպաստում է մեր լեզվի բառամթերքը հարստացնելու և օտար, մանավանդ գիտական ու տեխնիկական բառերի փոխանակ՝ հայերեն նոր բառեր կազմելու։ Այս է պատճառը, որ թե՛ հնում և թե՛ այժմ մեր լեզուն օտար գիտական բառերի նշանակությունն է միայն առ-

նում և իր սեփական բառերով դրանց համապատասխան բաղադրություններ է կազմում»[27]։

Աբեղյանը պահանջում է կազմել այնպիսի բառեր, որոնք համապատասխանեն հայերենի բառակազմության օրենքներին, ճիշտ արտահայտեն տվյալ հասկացության էությունը և լինեն կարճ ու ներդաշնակ, որպեսզի հեշտությամբ տարածվեն ու ընդհանրանան։ «Այսպիսի նոր բառերը հեշտությամբ գործածվում և ընդհանրանում են. բավական է միայն, որ օտար բառի համապատասխան նոր բառը ճշտությամբ արտահայտի այլազգի բառի նշանակությունը, կազմված լինի հայերենի բառակազմության օրենքներով և, որքան կարելի է, կարճ ու ներդաշնակ»[28]։

Ինչպես տեսնում ենք, Աբեղյանը գերադասությունը տալիս է մայրենի լեզվի բառերին՝ պահանջելով ճիշտ թարգմանել օտար բառի նշանակությունը։

Լեզվական փոխազդեցությունը քննելիս նա դատապարտում է այն երևույթը, երբ խոսողը բարձր դնահատելով օտար լեզուն կամ կիրթ լինելու հատկանիշ համարելով ուրիշ լեզվով խոսելը, պարծանք է կարծում իր մայրենի լեզվի մեջ օտարալեզվյան բառեր, դարձվածքներ ու ասացվածքներ գործածելը։ Աբեղյանը նկատում է, որ հաճախ փոխառության են դիմում, չիմանալով կամ չդտնելով մայրենի լեզվում համապատասխան բառեր կամ էլ կարծելով, թե հայերեն բառը չի արտահայտում օտար բառի իմաստը և ոչ թե անհրաժեշտությունից դրդված։ Օտար բառերի դիմաց, ըստ Աբեղյանի, հայերենը երբեմն իր բնիկ բառերը գործածում է նոր նշանակությամբ կամ էլ ստեղծում նորակազմություններ, որոնք սկզբում խորթ են թվում, բայց հետագայում դառնում են սովորական ու տարածվում, ինչպես՝ տրամադրություն, տարբերվել, արտասանել, արտադրել, առոգանել, տրամաբանություն և այլն։ Այնուհետև Աբեղյանը նշում է, որ վերջին տարիներս ոչ միայն ավելի մեծ թվով օտար բառեր են մտնում մեր լեզվի մեջ, այլև ավելի շատ նոր բառեր են կազմվում։ Այստեղից հետևում է, որ Աբեղյանը մի կողմից խրախուսում է նորակազմությունները, մյուս կողմից չի ժխտում փոխառությունները։ Նա կողմնակից է անհրաժեշտորեն կատարված փոխառյալ բառերի գործածությանը՝ գտնելով, որ հայերենը հին և նոր ժամանակներում մեծ ազդեցություն է կրել ուրիշ լեզուներից, և դա նպաստել է մեր լեզվի բառապաշարի հարստացմանը։ Իբրև փոխառու լեզուներ,

---

27 Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965, էջ 167։

28 Նույն տեղում։

նշվում են պարսկերենը, ասորերենը, հունարենը, արաբերենը, իսկ նոր շրջանում՝ ռուսերենը[29]։

Հր. Աճառյանը ավելի մեծ ուշադրություն է դարձրել և ավելի բազմակողմանիորեն քննել փոխառության հետ առնչվող շատ հարցեր։ Նա սկզբունքորեն կողմնակից է օտար բառերը հայերեն համարժեքներով փոխարինելուն։ Նրա «Հայոց լեզվի պատմության» II հատորի մեջ բերվում են բազմաթիվ հաջող օրինակներ, միայն առանձին դեպքերում է նա առաջնությունը տալիս փոխառյալ բառերին՝ անհրաժեշտ չհամարելով դրանց թարգմանությունները։ «Ընդհանրապես մեզ մոտ բացասական կարծիք է տիրում նորակերտ բառերի հանդեպ, որոնք անարգական ձևով կոչում ենք «թխած բառ»։ Այս բանը ճիշտ է կայանակեցիկ կամ նման բառերի համար, բայց սխալ է ընդհանրապես նորակերտ բառերի մեծ մասի համար։ Մեր գրողները բազմաթիվ ընտիր բառեր կազմեցին գիտության բոլոր ճյուղերի համար՝ ճիշտ ու ճիշտ թարգմանելով եվրոպական բառերը»[30]։ Դրանք են՝

երկաթուղի —chemin de for	*լուսատպություն*—phototypie
ծանրաչափ—barometre	*սղագրություն*—stenographie
ջերմաչափ—thermometre	*կենդանաբանություն*—zoologie
ուժաչափ—dynamometre	*հարթաչափություն*—planimetrie
հնէաբանություն—paleontologie	*հանքաբանություն*—mineralogie
մենագրություն—monographie	*եռանկյունաչափություն*—trigonometrie
հեռագիր—telegraphe	*ձևաբանություն*—morphologie
հյուսվածաբանություն—histologie	*մանրէ*—microbe և այլն։

Աճառյանը նշված եվրոպական բառերի ճիշտ թարգմանություններ համարելով հայերեն համարժեքները, առաջնությունը տալիս է վերջիններին։ Դեռ ավելին, նա նկատում է, որ հայերեն բառը երբեմն մի քիչ շեղվելով բնատիպից՝ ավելի հաջող է ներկայացնում տվյալ առարկայի պատկերը, այսինքն՝ այդ երևույթի կամ հասկացության էությունը։

Աճառյանը, համեմատելով եվրոպական և հայերեն որոշ բառերի կազմությունը, նկատում է, որ հայերեն ճաշարան, համագգեստ, համերգ և այլ բառեր ոչ միայն իրենց կազմությամբ, այլև իմաստի հստակու-

---

29 Նույն տեղում, էջ 51։

30 Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 484։

թյամբ ու հասկանալիությամբ առավելություն ունեն համապատասխան փոխառյալ բառերի նկատմամբ, այսպես՝ ֆրանսերեն restaurant բառը, ըստ Աճառյանի՝ կազմությամբ դերբայ կամ ածական է և նշանակում է «կազդուրիչ». բայն է restaurer «կազդուրել, վերականգնել»։ Դառնալով գոյական՝ ստացել է ճաշարան իմաստը, որը բավական հեռու է կազդուրիչ նշանակությունից։ Չափազանց լավ է հայերեն ճաշարան բառը։ Քննելով մյուս երկու բառերը, Աճառյանը նշում է դրանց առավելությունները թե՛ կազմության և թե՛ իմաստային տեսակետից։ Ֆրանսերեն uniforme ածական է և նշանակում է «միաձև, միատեսակ, միանման»։ Իբրև գոյական նշանակում է որոշ խմբի մարդկանց զգեստը, որ ռուսերեն՝ ավելի կարճ ձևով ասվում է форма (նշանակում է պարզապես «ձև»)։ Աճառյանը նշում է, որ սքանչելի է հայերեն բառը՝ համազգեստ, որը տեղիք չի տալիս ոչ մի թյուրիմացության։ Նույն կարծիքն է արտահայտվում ֆրանս. concert բառի հայերեն թարգմանության մասին։ Փոխառյալ concert բառը Աճառյանի պնդմամբ նշանակում է «համամիտ, համակամ, համախորհուրդ լինել իրար հետ». միևնույն ժամանակ երաժշտական կոնցերտն է, ուր «երգ կամ նվագ» նշանակող ոչինչ չկա։ Հիանալի է հայերեն համերգը, ուր կա թե՛ ընդհանուր համաձայնություն, թումբ, թե՛ երգ (կամ նվագ) իմաստը[31]։ Առավելություն է վերագրվում նաև ֆրանսերեն Journal և welocipede բառերի հայերեն համարժեքներին։

Այս ամենից հետևում է, որ Աճառյանը ամենից առաջ հաշվի է առնում մեր լեզվի մաքրության, նրա զարգացման ու հարստացման շահերը։

Նշվեց, որ նա առանձին դեպքերում նպատակահարմար չի գտնում որոշ օտար բառերի հայերենով փոխարինումը։ «Ինչ միտք ունի,— գրում է Աճառյանը,— թարգմանել կամ աշխատել թարգմանել շոկոլադը, վանիլը, վիտամինը, կակաոն, խլորը, ատամնաբույժի էքսկավատորը, շպատելը, շտոֆելը, արդուզարդի պուդրան, պոմադան, կրեմը, լակը, դերձակի մանեքենը և այլն, և այլն»[32]։ Աճառյանը պահանջում է չթարգմանել այն բառերը, որոնք մուտք են գործել մեր լեզվի մեջ նրանց միջոցով արտահայտվող առարկաների հետ միասին և մերվելով մեր լեզվին՝ դարձել են նրա հարազատ տարրը։ Իբրև այդպիսիք դիտվում են նաև կեպի, ցիլինդր, բերետկա, ֆուրդոն, կալյասկա, կոռլետ, ատբիլ-

31 Նույն տեղում, էջ 486—487։

32 Նույն տեղում, էջ 588։

նոյ, սուպ, բորշչ, բուլկի, տորթ, պեչենի, գալետ, պիրոգ, պոնչիկ, բլինչիկ, բյազ, սատին, կավերկոտ, բատիստ, ինդիկո, մարկիզետ, սապոգ, բաուդոժկի, տուֆլի, սիգա, վոբլա, աստերինա, սազան, սելյոդկա, կեֆալ, սերյուգա և այլ բառերը[33]: Նկատենք, որ դրանց մեջ կան այնպիսիները, որոնց փոխարինելու են գալիս հայերեն համարժեքները (պոմադա-շրթներկ, սուպ-ապուր, բյազ-քաթան, սապոգ-երկարաճիտ կոշիկ և այլն): Սա նշանակում է, որ հնարավոր է լեզվի մեջ վաղուց արմատավորված փոխառյալ բառերի՝ հայերեն համարժեքներով փոխարինում:

Ճիշտ է նկատում Աճառյանը, որ փոխառությունները վերը նշվածով չեն սահմանափակվում: Դրանց թիվը անվերջ է և այդպիսին կլինի, քանի փոխվի կյանքը և ստեղծվեն նորանոր առարկաներ ու երևույթներ:

Աճառյանը նշում է նաև, որ փոխառություններից շատ հետաքրքրքրական են այն բառերը, որոնք հայերը թարգմանել կամ թարգմանում են ռուսերենից (երբեմն անփոփոխ, երբեմն էլ բարելավելով ու գեղեցկացնելով): Իբրև այդպիսիք բերվում են՝

поезд — *գնացք*	номер — *համար, թիվ, հյուրանոցի սենյակ*
пулемет — *գնդացիր*	пересмотреть — *վերանայել*
паровоз — *շոգեքարշ*	совпадать — *համընկնել*
теплоход — *ջերմանավ*	поле зрения — *տեսադաշտ*
гостиница — *հյուրանոց*	закономерность — *օրինաչափություն*
ледное поле — *սառցադաշտ*	закономерный — *օրինաչափ*
опытное поле — *փորձադաշտ*	использовать — *օգտագործել*
целесообразный — *նպատակահարմար*	подпольный — *ընդհատակյա*[34]

Այդպիսի բառերի թիվը օրեցօր պետք է ավելանա, ճշտորեն նկատում է Աճառյանը: Նա ընթերցողների ուշադրությունը հրավիրում է մի քանի բառերի իմաստների վրա, որոնք, պահելով իրենց նշանակությունը, ռուսերենի նմանակությամբ ձեռք են բերել նաև նոր իմաստներ: Այդպիսիք են՝ անպայման, հայտնի, կարեւել և այլն: «Անպայման (безусловно) հայերեն բառը նշանակում էր «առանց պայմանի»: Հայերենը ռուսերենի հետևողությամբ այժմ նշանակում է «անշուշտ, անպատճառ»: Այս նոր իմաստը ճիշտ չէ, բայց այնքան հին է և այնքան է տարածված,

33 Նույն տեղում, էջ 588—589:
34 Նույն տեղում, էջ 589:

որ մինչև անգամ մտել է արևմտահայ գրականության մեջ: Հայտնի (известный) *սովորական իմաստով նշանակում է «ծանոթ». օր. այդ բանը ինձ հայտնի է: Այդպես նաև ռուսերենը: Բայց ռուսերենը ունի նաև «նշանավոր, երևելի, ականավոր» իմաստը, որ մտել է նաև հայերենի մեջ: Ջկա արևմտյանի մեջ...* կարճել (сократить), *դարաբառում էլ կա այս բառը և նշանակում է «կարճացնել». բայց արդի հայերենում, ռուսերենի հետևողությամբ ստացել է նոր, իրավաբանական իմաստ.* կարճել գործը, *այն է՝ դատական հետապնդումից դուրս հանել, վերջ տալ գործին»*[35]:

Փոխառության հարցը եղել է նաև Գ. Սևակի ուշադրության կենտրոնում: Քննարկվող խնդրի վերաբերյալ նրա տեսակետները հիմնականում շարադրված են «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» (Երևան, 1948) աշխատության մեջ և տարբեր ժամանակներում հրապարակված հոդվածներում: Գ. Սևակը գտնում է, որ փոխառությունները, անհրաժեշտություն լինելով բոլոր լեզուների (այդ թվում և հայերենի) համար, միաժամանակ բարձր կուլտուրայի հասնելու և ճշգրիտ տերմինաբանություն ունենալու կարևոր գործոններ են: Սխալ համարելով արևմտահայերենի՝ ամեն տեսակի փոխառությունների մերժման և դրանց թարգմանությունը խրախուսելու քաղաքականությունը՝ Գ. Սևակը բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս արևելահայ գրական լեզվի բառապաշարի հարստացումը փոխառյալ բառերով: Այսպես՝ մի կողմից անհիմն ու սխալ են համարվում ֆիմիա, ռադիո, միճիսար, տանկ[36] *և նման բառերի թարգմանությունները՝ արևմտահայերենում (տարրաբանություն, ձայնասփյուռ, նախարար, հրասայլ), մյուս կողմից՝ խրախուսվում* տրակտոր, կոմբայն, բրիգադ, դեկան, սովետ, լեյտենանտ, մայոր, ավտոմատ, էվակուացիա *և այլ օտար բառերի մուտքն ու գործածությունը մեր լեզվի մեջ*[37]: *Նշվում է նաև, որ ոչ միայն օտար բառերը կարող են հետագայում փոխարինվել ազգային համարժեքներով, այլև ընդհակառակն՝ մայրենի լեզվի որոշ բառեր կարող են դուրս մղվել փոխառյալ բառերի կողմից (նյութապաշտ, իրապաշտ, մեծամասնական, կառուցական, համայնավարական, ուսուցչապետ և այլն)*[38]:

Գ. Սևակը դատապարտում է ինչպես անհարկի, ոչ անհրաժեշտաբար

---

35 *Նույն տեղում, էջ 591:*

36 *Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 219:*

37 *Նույն տեղում, էջ 160:*

38 *Նույն տեղում, էջ 161:*

կատարված փոխառությունները (մուզեյ, տելեֆոն, կոնցերտ, տուստ, ստիպենդիա, կաֆեդրա, խրոնիկա և այլն)[39], այնպես էլ անհաջող թարգմանություններն ու բառակազմությունները (պրոլետար-ընչազուրկ, մատերիալիստ-նյութապաշտ, ասֆալտ-մայթաձյութ, կոմիսար-գործավար, կուլակ-ունևոր, յոդ-մանիշ, բենզին-կնդրին և այլն), միաժամանակ խրախուսում անհրաժեշտ փոխառություններն ու հայերեն ճիշտ բառերի ստեղծումը: Այսպես՝ միանգամայն հաջող բառակերտումներ են դիտվում համալսարան, հաճրահաշիվ, երկրաչափություն, գրադարան, հեռախոս, հեռագիր և այլ բառերը[40], որոնց օտար համարժեքները առանց թարգմանության են գործածվում շատ լեզուներում: Իսկ ռադիո, սոցիալիզմ, կոմունիզմ, սովետ, բոլշևիկ, ավիացիա և այլ օտար բառերի մուտքը հայերենի մեջ համարվում է միանգամայն օրինաչափ ու անհրաժեշտ: Հարկ է նշել, որ Սևակը անհրաժեշտաբար կատարված փոխառությունների շարքն է դասում նաև սեսիա, ռեսպուբլիկա, ռևոլյուցիա, կոնստիտուցիա, պարտիա և այլ բառերը[41], որոնք հետագայում փոխարինվեցին ազգային համարժեքներով: Բացի այդ, հայերեն մի շարք տերմիններին զուգահեռ սկսեցին կիրառվել նաև միջազգային բառեր (կենսաբանություն-բիոլոգիա, երկրաբանություն-գեոլոգիա, գյուղատնտես-ագրոնոմ, գաղափարախոսություն-իդեոլոգիա, տեսություն-թեորիա), և Գ. Սևակի կարծիքով դեռ չի կարելի պնդել, թե նրանցից որն է գերակշռում ու հաղթանակում[42]: Այժմ հաստատապես կարելի է պնդել, որ նշված օտար տերմինները դուրս են մղվում մայրենի լեզվի բառերի կողմից:

«Սովետական Հայաստան» թերթի լեզվի քննության կապակցությամբ նշելով լրագրի կատարած դրական դերը հայերենի մաքրության, նոր տերմինների կերտման ու մասսայականացման գործում՝ Գ. Սևակը մեկ անգամ ևս ընդգծում է անհարկի փոխառությունները հայերենով փոխարինելու անհրաժեշտությունը, պահանջելով դրանք կատարել չափավոր և պատճառաբանված: Այսպես՝ միանգամայն ավելորդ է համարում շինովնիկ, ադմիրալ, լոտարեա, դեզերտիր, ստարիլ, դելեգատ և այլ օտար բառերի կիրառությունները և պահանջում է դրանք փոխարինել հայերեն համարժեքներով (աստիճանավոր, ծովակալ, վիճակախաղ, դասալիք, կայուն, պատվիրակ)[43]:

---

39 Նույն տեղում, էջ 162:
40 Նույն տեղում, էջ 216:
41 Նույն տեղում, էջ 239:
42 Նույն տեղում, էջ 161:
43 Նույն տեղում, էջ 189:

Գ. Սևակը սկզբունքորեն ճիշտ և ընդունելի տեսակետ է պաշտպանում՝ կողմնակից լինելով անհրաժեշտաբար կատարված փոխառություններին, դատապարտում է և՛ անհաջող թարգմանությունները, և՛ անտեղի փոխառությունները: Սակայն նշենք, որ նա երբեմն առաջնությունը տալիս է այնպիսի օտար բառերի, որոնց հայերեն համարժեքները ակնհայտորեն առավելություն ունեն դրանց նկատմամբ:

Լեզվի մաքրության և հայերենի լեզվաշինարարության հարցերին էր նվիրված ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստը, որը կայացավ 1951 թ. մայիսի 23—25-ը: Զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի դիրեկտոր Գր. Ղափանցյանը: Մաքրի փոխանակության կարգով բանավեճին մասնակցեցին 22 հոգի՝ լեզվաբաններ, գրողներ, գրականագետներ, թարգմանիչներ և այլն:

Գր. Ղափանցյանը կանգ առավ նաև փոխառության վրա, նշելով, որ պետք է չափազանց զգույշ լինել, չշտապել և չընկնել ծայրահեղության մեջ: Զեկուցումը ուներ կողմնորոշող տեսական նշանակություն, պահանջվում էր պարսկերենից կատարված որոշ փոխառություններ թարգմանել հայերեն, պահպանելով այն բառերը, որոնց համարժեքները չկան հայերենում (յար, ջան, ռիսկ, ֆահմ, յոլա գնալ, քյալլադյոզ)[44]: Գր. Ղափանցյանը նշում էր, որ երբեմն ոչ ճիշտ կամ անհաջող կազմված բառերը երկար գործածվելու շնորհիվ կարող են մտնել կենցաղի մեջ (կանգառ-остановка, շագանակ-каштан), որոնցից այժմ չենք կարող հրաժարվել և դրանց փոխարեն մտցնել ուրիշը: Շտապելը այս հարցում հաճախ չի արդարացվում: Փոխառյալ բառերի հետ կապված նա պահանջում էր պահպանել փոխառու լեզվի բառերի արտասանությունը, ինչպես ռուսերենում է: Հաճախ, նշված է զեկուցման մեջ, գրվում է կոմիտե, սյուժե, պորտրե, ինչպես ֆրանսերենում է, փոխանակ կոմիտեա, սյուժեա, պորտրեա ձևերի, որպիսին կա ռուսերենում: Տ-ի գրությունը հարմար է բառակազմական տեսակետից, քանի որ պորտրե, սյուժե ձևերից հարմար չէ կազմել բաղադրյալ ձևեր (պորտրետային, սյուժետային)[45]:

---

44 Նկատենք, որ ռիսկ, ֆահմ և յոլա գնալ բառերից ռիսկը ունի հայերեն համարժեքը, իսկ մյուսները բնորոշ չեն գրական լեզվին: Դրանք բարբառներին և խոսակցական լեզվին հատուկ միավորներ են, ուստի չպետք է հավասարեցվեն յար, ջան և այլ բառերի հետ:

45 Գրական հայերենում նշված բառերը կայունացել են առանց ս-ի՝ կոմիտե, պորտրե, սյուժե և դրանից չի առաջ մեր լեզուն: Պարտադիր չէ բոլոր դեպքերում պահպանել փոխառու լեզվի բառերի գրությունն ու արտասանությունը:

Բանավեճի մասնակիցներից շատերն անդրադարձան լեզվական փոխառություններին և արտահայտեցին իրենց տեսակետներն ու ըմբռնումները։

Այս բանավեճի ժամանակ ևս դրսևորվեցին ծայրահեղ տեսակետներ։ Ս. Ղազարյանը մեղադրում էր արևմտահայ գրականության այն ներկայացուցիչներին, որոնք վարում էին ամեն բան հայացնելու քաղաքականություն։ Այդ պատճառով էլ, նշում էր հեղինակը, միջազգային շատ տերմիններ ու բառեր ստանում են «հայաշունչ» կերպարանք (կինոն դառնում է շարժանկար, ռադիոն՝ ձայնասփյուռ, էվոլյուցիան՝ բարեշրջություն, դիկտորը՝ խոսնակ, յոդը՝ մանիշ, ֆոսֆորը՝ լուսածին, բալկոնը՝ արևնակ, պարոլը՝ անցախոս, մոտանորելիք և այլն)։ Նկատենք, որ մեղադրանքը հիմնականում տեղին էր, թեև բերված բառերի մեջ կան և հաջող կազմություններ, որոնք դերազանցելի են փոխառյալ ձևերից (անցախոս, բարեշրջություն)։

Ս. Ղազարյանի տեսակետը որոշակի է. դիմել փոխառությունների, եթե հարկ կա։ Առանձին դեպքերում նա գերազանցում է փոխառյալ ձևերը։

Բանավեճի որոշ մասնակիցներ շեշտում էին լեզվի մաքրության անհրաժեշտությունը, գտնելով, որ լեզուն պետք է հարստանա սեփական հենքի վրա, միաժամանակ կատարելով անհրաժեշտ փոխառություններ այլ լեզուներից։

Եթե ամփոփելու լինենք ԳԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի՝ լեզվի մաքրության և լեզվաշինարարության հարցերին նվիրված նիստի արդյունքները, ապա կարելի է նշել, որ դրանք այնքան էլ գոհացուցիչ չէին։ Առաջ քաշվեց երկու հիմնական տեսակետ։

1. Օտար բառերը փոխարինել հայերեն համարժեքներով, եթե դրանք ճիշտ են արտահայտում տվյալ հասկացության էությունը։

2. Գործածության մեջ թողնել օտար բազմաթիվ բառեր, որոնք արդեն լայն տարածում են ստացել մեր լեզվի մեջ. (պարտիա, կոնստիտուցիա, սեսիա, ռեսպուբլիկա, սովետ և այլն)։

Փոխառությանը տարբեր առիթներով անդրադարձել է Է. Աղայանը և հիմնականում ճիշտ և ընդունելի տեսակետ պաշտպանել։ Ըստ նրա, փոխառությունը բառապաշարի հարստացման միջոցներից մեկն է (արտաքին միջոցը), որը տեղի է ունենում տեխնիկայի, գիտության, կուլտուրայի նորությունների, նոր մեքենաների ու գործիքների յուրացման ընթացքում՝ նրանց անվանումները տվյալ լեզվի մեջ թափանցելու միջոցով։ Այդպիսի փոխառություններ են սովետ, բոլշևիկ, պարտիա,

տրակտոր, կոմբայն, կինո[46]: Նա իրավացիորեն քննադատում է արեմտահայերի մաքրասիրական միտումները, որոնք անխտիր թարգմանում են օտար բառերը[47]:

Է. Աղայանը ընդգծում է, որ լեզուների բառային կազմի հարստացման գործում ներքին և արտաքին միջոցները միշտ միևնույն դերը չեն կատարում: Երբեմն գերիշխող է դառնում փոխառությունը, երբեմն լեզվի ներքին միջոցը:

Է. Աղայանի տեսակետը ավելի որոշակիորեն արտահայտված է «Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին»[48] հոդվածում, ուր հանգամանորեն կանգ առնելով տերմինների փոխարինման վրա՝ ճիշտ դիտողություններ է անում քննարկվող հարցի վերաբերյալ: Նա իրավացիորեն նշում է, որ տերմինաբանական կոմիտեի որոշումները միայն տեսական ուղեցույց են, կարևորը մշակած սկզբունքների գործնական կիրառումն է, հարցի կոնկրետ լուծումը: Այստեղ է, որ առաջ են գալիս դժվարություններ, քանի որ սահմանված օրենքները երկու հնարավորություն էլ տալիս են՝ օտար տերմինը գործածել նույնությամբ և թարգմանաբար: Այդ է պատճառը, որ շատ դեպքերում տերմինների ստեղծումը ընթացել է առանձին անհատների ճաշակին ու դիտելիքներին համապատասխան: Է. Աղայանը դատապարտում է թե՛ օտար տերմինը անպայման հայացնելու և թե՛ լեզվի դռները փոխառությունների առաջ բաց անելու տեսակետները: Ըստ նրա, ճիշտ չէ էվոլյուցիան բնաշջություն կամ բարեշրջություն թարգմանելը, քանի որ դրանք չեն արտահայտում էվոլյուցիա բառի գիտական բովանդակությունը: Նա միաժամանակ մեղադրում է նրանց, ովքեր հոգ չեն տանում մայրենի լեզվի մաքրության մասին և իրենց խոսքը լցնում են անհարկի օտար բառեր (էմոցիոնալ, կոնցեպտուալություն, ռեֆլեքսիա, պլաստիկություն, դինամիկա): Անհրաժեշտ է համարում բոլոր բնագավառների վերաբերյալ ունենալ հաստատված տերմինների ցանկ, որը պետք է պարտադիր լինի բոլորի համար: Աղայանը պահանջում է ճշտել, թե որ դեպքում պետք է տվյալ բառը թարգմանել և որ դեպքում փոխառնել, դրա համար առաջարկում է կատարել տերմինների դասակարգում ըստ ճյուղերի և որոշել դրանց հայերեն, թե օտար լինելը: Եթե տվյալ ճյուղի տերմինները հիմնականում օտար են, ապա օտար տերմինը հայերենով փոխարինելը այնքան էլ նպատակահարմար չի համարում և ընդհակառակն՝ եթե այդ բնագա-

46 Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1963, էջ 291:

47 Նույն տեղում, էջ 300:

48 «Լրաբեր», 1979, № 1:

վառի տերմինները ընդհանուր առմամբ հայերեն են, ապա անհրաժեշտ է համարում նոր տերմինի թարգմանությունը։ Հիմնականում ընդունելի համարելով առաջարկվող սկզբունքը, նկատենք մի թերություն. այն, որ այս դեպքում կկաշկանդվենք օտար տերմինների համակարգայնությամբ, ուստի չենք փորձի խախտել այն՝ նույնիսկ դրա անհրաժեշտությունը զգացվելու դեպքում։ Բանն այն է, որ նախապես կատարված մի շարք փոխառություններ, թեկուզ միայն տվյալ բնագավառի վերաբերյալ, կարող են գուրս մղվել նոր կազմված հայերեն տերմինների կողմից։ Այդ դեպքում մենք ստիպված պետք է լինենք պահպանել օտար բառերը, չնայած այն բանին, որ հնարավոր է դրանք արտահայտել հայերեն համարժեքներով՝ առանց իմաստի աղճատման։ Տերմինաբանական կոմիտեի հրահանգում ասված է, որ չպետք է խուսափել տերմիններից, եթե դա հնարավոր է առանց օտար տերմինի իմաստը աղճատելու։ Աղայանի այդ սկզբունքը կարծեք մի տեսակ հակասում է տերմինաբանական կոմիտեի որոշմանը, թեև հոդվածը ամբողջությամբ վերցրած համապատասխանում է նրա ոգուն, ելնում է այդ որոշումներից։ Նկատենք, որ ճիշտ է Աղայանի այն պնդումը, թե գիտությունների անվանումները սովորաբար չեն փոխառվում։ Բացառությամբ մի քանի անվանումների, բոլոր գիտությունները անվանվում են հայերեն համարժեքներով (հանրահաշիվ, երկրաչափություն, գյուղատնտեսություն, տնտեսագիտություն, քաղաքատնտեսություն, բանասիրություն, լեզվաբանություն, գրականագիտություն, երկրաբանություն, եռանկյունաչափություն), ուստի չի արդարացվում բիոլոգիա, բոտանիկա, գեոլոգիա, ֆիզիոլոգիա, անատոմիա բառերի գործածությունը։ Առաջարկվում է վերջիններս փոխարինել հայերենով (կենսաբանություն, բուսաբանություն, երկրաբանություն, բնախոսություն, կազմախոսություն)։

Աղայանը առավելությունը տալիս է կոմպոզիտոր, էվոլյուցիա, տուբիսա բառերին, գտնելով, որ դրանք ավելի լիարժեք ու համակարգային են, քան նրանց հայերեն համարժեքները։

Միասնականության պահանջը նկատի առնելով, Աղայանը գտնում է, որ կոսմոնավտ, կոսմոնավտիկա, բիոֆիմիա, բիոմեխանիկա և նման բառերը պետք է իրենց տեղը զիջեն հայերեն անվանումներին։ Դրանցից առաջին երկուսը արդեն թարգմանաբար են գործածվում (տիեզերագնաց, տիեզերագնացություն), մյուսները հիմնականում օգտագործվում են նույնությամբ, երբեմն էլ թարգմանաբար։ Բիո բաղադրիչի դիմաց ունենք կեն(ս) բաղադրիչը (կենսաբանություն, կենսուժ, կենսածնություն), հետևաբար պետք է դիմել հայերեն բառակերտումներին (կեն-

սաքիմիա, կենսամեխանիկա)։ Իսկ մյուս կողմից նույն բաղադրիչով կազմված բիոլոգիզմը պետք է թողնել նույնը, քանի որ սովորաբար չեն թարգմանվում արվեստի, գրականության, գիտության և այլ ուղղությունների, հոսանքների, դպրոցների անունները։

Աղայանը հիմնականում ճիշտ և ընդունելի տեսակետ է պաշտպանում և, որ կարևոր է, խնդրի լուծման ժամանակ հաշվի է առնում նրա գիտական կողմը։ Իրավացիորեն պահանջում է յուրաքանչյուր դեպքում կոնկրետ մոտեցում ցուցաբերել՝ նկատի առնելով տերմինի բառակազմական ճկունությունը, համակարգայնությունն ու միօրինակությունը և դատապարտում է փոխառության հարցում թույլ տրված անփութությունն ու քմահաճ վերաբերմունքը։

Փոխառության խնդրին անդրադարձել է նաև Ա. Աբրահամյանը իր «Մի քանի դիտողություններ ժամանակակից հայերենի նորաբանությունների վերաբերյալ»[49] հոդվածում, որը ուշագրավ է ոչ միայն այն տեսակետից, որ այնտեղ հիմնականում ճիշտ են լուսաբանվում փոխառության և սրան առնչվող հարցերը, այլև այն առումով, որ ճշտորեն նրշվում են բառապաշարի հարստացման ու զարգացման պայմանավորվածությունը, հիմնական ուղիներն ու միջոցները և հատուկ ընդգծվում է, թե ինչ չափով են համալրում բառային կազմը փոխառություններն ու մայրենի լեզվի բառակերտումները։ Ելնելով մարքսիզմի կլասիկների, հատկապես Վ. Ի. Լենինի և Ֆր. Էնգելսի դրույթներից՝ նա պահանջում է մերժել օտար բառերի անհարկի կիրառությունները՝ ընդգծելով դրանց գործածությունների թույլատրելիությունը միայն անհրաժեշտության դեպքում։

Ա. Աբրահամյանը բերում է մի շարք օտար բառեր, որոնք թեև այսօր էլ նույնությամբ օգտագործվում են աշխարհի շատ լեզուներում և գործածվել են նաև հայոց լեզվում, սակայն այժմ փոխարինվել են հայերեն համարժեքներով՝ նշելով, որ դրանք հաստատուն տեղ ունեն մեր լեզվում և իրենց դրսևորած իմաստներով հաջողությամբ ծառայում են հայ ժողովրդին (ստուդենտ-ուսանող, տրոտուար-մայթ, տելեֆոն-հեռախոս, մոլեյ-թանգարան և այլն)։ Մատնացույց են արվում նաև այնպիսի փոխառություններ, որոնց դիմաց հնարավոր չէ համապատասխան հայերեն բառ դնել, դրա անհրաժեշտությունը չի էլ զգացվել (տրոլեյբուս, տրամվայ, տրակտոր, ցեմենտ, բետոն, շոկոլադ և այլն)։ Այս հաշվանակում է, որ Ա. Աբրահամյանը պաշտպանում է ինչպես օտար բառերը հաջող թարգմանելու, այնպես էլ անհրաժեշտ փոխառություններ կատարելու ընդու-

49 «Լրաբեր», 1970, № 12։

նելի տեսակետ։ Նեղ մասնագիտական որոշ տերմինների փոխառման կապակցությամբ (լազեր, մազեր, մեզոն, վարիտրոն) նշում է, որ նախ՝ համապատասխան իմաստներով պետք է յուրացվեն այդ բառերը, ապա նոր, հոգ տարվի դրանց հայերեն համարժեքները ստեղծելու մասին՝ ընդգծելով այն համոզմունքը, որ հետագայում այդ կարգի տերմինների համար ևս կարելի է հայերեն բառեր կերտել, ինչպես ստեղծվել են ալգեբրա, տրիգոնոմետրիա, գեոմետրիա և այլ բառերի հայերեն համարժեքները՝ հաճախաշիվ–ը, եռանկյունաչափություն–ը, երկրաչափություն–ը, որոնք շատ բնական են հնչում համապատասխան բնագավառներում։

Օտար բառերը փոխառնելու կամ դրանք հայերեն համարժեքներով արտահայտելու ժամանակ նա պահանջում է հիմք ընդունել բառի հասկանալիության և մատչելիության հատկանիշը։ Այդ տեսակետից հարցին մոտենալով՝ Ա. Աբրահամյանը ճեմարան, լոդափ, երթուղի, ուղերթ, առուգայց, արտադրամաս բառերը գերազատում է ֆոյե, պլյաժ, մարշրուտ, ռեյս, ռեյդ և ցեխ օտար բառերից։ Նույն ձևով էլ առաջնությունը տալիս է արադիցիա, տեճդենցիոզ, մարկա, տելևիզոր, տանկեր բառերի հայերեն թարգմանություններին։ Իրավացիորեն խրախուսում է վարորդ, կանգառ, տոմսավաճառ, սառնարան, խաչմերուկ, վազանց և այլ բառերի մուտքն ու լայն տարածում ստանալը։ Հաջողված թարգմանություններ է դիտում նաև ինչույթ, գրույթ, ձևույթ, բառույթ, շարույթ, բաշխումային, համաժամանակյա, տարժամանակյա և այլ լեզվաբանական տերմինները։ Ա. Աբրահամյանը իրավացիորեն գտնում է, որ չպետք է թարգմանաբար գործածել տարբեր ժողովուրդների կյանքի ու կենցաղի հետ սերտորեն կապված և ուրիշ ժողովուրդների համար հայտնի ու գործածելի դարձած որոշ բառեր (բոլշևիկ, սովխոզ, ռուբլի, կոպեկ, մուժիկ, բորշչ, չաստուշկա, բիլինա, դոլլար, վիսկի, կնֆիր, կարակուլ և այլն)։

Ա. Աբրահամյանը փոխառության հարցում, առաջնորդվելով գիտական սկզբունքներով և ելնելով լենինյան դրույթից, միանգամայն ընդունելի տեսակետ է պաշտպանում։ Նա մերժում է անհարկի փոխառությունները և ընդգծում դրանք հայերեն համարժեքներով փոխարինելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը, միաժամանակ պահանջելով հաշվի առնել բառի հասկանալիությունը, մատչելիությունը, տարածում ստանալու չափն ու աստիճանը, այլև իմաստային համապատասխանությունն ու լիարժեքությունը։

Ա. Աբրահամյանը, ելնելով գիտական սկզբունքներից և հաշվի առնելով լեզվի զարգացման ներքին օրինաչափությունները, դատապար-

տում է օտարամոլության և մաքրամոլության ամեն մի դրսևորում և պաշտպանում ճիշտ և ընդունելի տեսակետ։

Ա. Ոսկերչյանի «Մայրենի լեզվի մաքրության և հարստացման համար՝ ընդդեմ լեզվական պուրիզմի»[50] խորագրով հոդվածը իրավացիորեն դժգոհություն առաջացրեց գիտական հասարակայնության շրջանում։ Ս. Աբրահամյանը, որ միշտ առաջնակարգ տեղ է հատկացրել հայոց լեզվի մաքրության և անաղարտության պահպանմանն ու խստորեն դատապարտել այդ հարցում թույլ տրված ամեն մի քմահաճություն ու կամայականություն, բնականաբար, չէր կարող անտարբեր անցնել Ա. Ոսկերչյանի տեսակետների ու սկզբունքների կողքով։ Ի պատասխան այդ հոդվածի, Ս. Աբրահամյանը հանդես եկավ «Ընդդեմ լեզվական օտարամոլության և մաքրամոլության»[51] հոդվածով, որտեղ ցույց է տրվում Ա. Ոսկերչյանի դավանած սկզբունքների սխալ ու անհիմն լինելը։

Ս. Աբրահամյանը դատապարտում էր Ա. Ոսկերչյանի ինչպես լեզվական օտարամոլությունը, այնպես էլ իրեն զգացնել տվող մաքրամոլական միտումը, գտնելով, որ դրանք չեն բխում հայերենի զարգացման շահերից և չեն նպաստում հայոց լեզվի բառային կազմի զարգացմանն ու մաքրությանը։ Նա միանգամայն հաջողված է համարում գաստրոլ և լաուրեատ բառերի հայերեն թարգմանությունները՝ հյուրախաղր և դափնեկիրը, որոնք, ըստ նրա, չեն զիջում օտար համարժեքներին։

Այստեղ ճշտորեն նշվում է, որ հայոց լեզվի զարգացման, մասնավորապես տերմինաշինության բնագավառում գործող սկզբունքները համապատասխանում են կուսակցության ծրագրին ու քաղաքականությանը և մեր լեզվի ներկա վիճակին ու հնարավորություններին։ Այդ սկզբունքները ձևակերպված են տերմինաբանական կոմիտեի որոշման մեջ, ըստ որի, երբ հնարավոր է առանց տերմինի իմաստը աղճատելու կազմել նոր բառեր, պետք է դիմել այդ եղանակին, իսկ այն տերմինները, որոնց համարժեքները հայերենում չկան և չեն կարող կազմվել առանց իմաստի աղճատման, պետք է գործածել նույնությամբ, առանց թարգմանելու։

Փոխառության հարցի վերաբերյալ Ս. Աբրահամյանի ըմբռնումներն ավելի որոշակիորեն և մանրամասն շարադրված են նրա «Ղեկավարվել գիտական սկզբունքներով»[52] հոդվածում, որտեղ ընդգծվում է, որ հայերենը դիմել է ու այժմ էլ պետք է դիմի փոխառությունների, երբ դրա կարիքը կա, երբ ներքին միջոցները չեն կարող բավարարել լեզվի պա-

50 «Սովետական գրականություն», 1967, № 7։

51 «Գրական թերթ» 17. 11. 1967 թ.։

52 «Լրաբեր», 1970, № 12։

հանջները։ Տերմինաբանությունը, ըստ նրա զարգանում է և պետք է զարգանա նրա հարստացման ընդհանուր օրինաչափություններով՝ ներքին հնարավորությունների ազատ ու անկաշկանդ օգտագործումով և անհրաժեշտության դեպքում՝ դիմելով փոխառության։ Այդ տեսակետը, ինչպես տեսնում ենք, բխում է տերմինաբանական կոմիտեի որոշումից։ Ս. Աբրահամյանը ական և հեռուստ բաղադրիչներով կազմված բառերի օրինակով ցույց է տալիս տերմինաշինության մեջ անցյալին հատուկ բառերի ու արմատների որոշակի առավելությունը (սեղմություն, հասկանալիություն, բառակերտման ճկունություն) ավյալ հասկացությունն արտահայտելու այլ միջոցների համեմատությամբ։ Այսպես՝ мина բառի հայերեն համարժեքը՝ ական-ը ոչ միայն արագորեն տարածվեց, այլև հեշտությամբ մտավ բառաբարդությունների մեջ՝ կազմելով բազմաթիվ այլ բառեր (ականադաշտ, ականազերծ, ականակիր, ականահան, ականահավաք, ականանետ, ականապատել և այլն)։ Իսկ հեռուստով կազմված հեռուստաաշտարակ, հեռուստադիտող, հեռուստածրագիր և այլ բառերի իմաստը անհնար է արտահայտել մեկ բառով (համմտ. հեռուստաաշտարակ և տելևիզորի (տելևիզոն) աշտարակ, հեռուստածրագիր և տելևիզորի ծրագիր (կամ տելեվիզոն հաղորդումների ծրագիր և այլն)։ Այստեղից հետևում է, որ Ս. Աբրահամյանը պաշտպանում է Դ. Դեշերիևի այն տեսակետը, ըստ որի հայերեն և վրացերեն գրական լեզուները լայնորեն հենվում են իրենց պատմական ավանդույթների վրա և ավելի քիչ են դիմում փոխառության։ Հեղինակը մեղադրում է նրանց, ովքեր պնդում են, թե հայերենը զարգանում է մաքրամոլության սկզբունքով և մեկուսացվում է այլ լեզուներից։ Այդպես մտածողները ճիշտ չեն ներկայացնում կամ չեն կարողանում ճիշտ տեսնել փաստերը։ Կարելի է վիճել առանձին բառերի բարգմանության հաջողվածության կամ նույնիսկ անհրաժեշտության մասին, բայց չի կարելի կասկածի տակ առնել տերմինաշինության սկզբունքների ճշտությունը։ Իր միտքը հաստատելու նպատակով Ս. Աբրահամյանը գլխավոր ուղղագրական բառարանից (1968 թ.) բերում է Ռ-ով սկսվող օտար բառերի մի ընդարձակ շարք (ռադիատոր, ռադիոակտիվ, ռադիոկոմիտե, ռադիոֆիզիկա, ռեակտոր, ռեկորդ, ռեպատաժ, ռեֆերատ, ռոմանտիզմ և այլն), նշելով որ չի կիրառվում օտար տերմինները մերժելու քաղաքականություն, որը կլիներ սխալ և անիմաստ։ Նա իրավացիորեն դատապարտում է օտար մեկ տերմինի դիմաց հայերեն մի քանի բառերի գործածությունը, գրտնելով, որ դրանով դանդաղեցվում է հայերեն մեկ տերմինի հաստատման ընթացքը։ Այսպես՝ ցեխ-ի դիմաց գործածվում են արտադրամաս,

գործամաս և արտադրաբաժին *բառերը, պլաստինկա-ի փոխարեն՝ ձայնասկավառակ, ձայնապնակ, երգապնակ և այլն, իսկ սբոռնի-ի համար հավաքական-ի հետ զուգահեռ գործածվում է ընտրանի-ն: Իհարկե, դրանցից առավելությունը տրվում է առաջին համարժեքներին, սակայն դրանով դժվարանում է ավելի հաջողված տերմինի արմատավորումը ու լայն տարածում ստանալը:*

Փոխառությանը Ս. Աբրահամյանը անդրադարձել է նաև «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» (Երևան, 1973) կոլեկտիվ աշխատանքի ներածության մեջ: Փոխառությունը համարելով ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից մեկը, մեկ անգամ ևս ընդգծում է, որ լեզուն մերժում է այն, ինչի անհրաժեշտությունում չի զգում: Իբրև ապացույց բերում է 20-ական թվականներին մեր մամուլում առատորեն գործածված կրիգիս, ինիցիատիվա, ստատիստիկա, ֆակտոր, ագենտ, զավոդ, պալտո, մաշինա և ավելի ուշ շրջանում արհեստականորեն ներմուծված բառերի դուրս մղվելը և դրանց փոխարինումը հայերեն համարժեքներով:

Հեղինակը ցույց է տալիս, որ հաճախ օտար լեզվի բառակապակցության իմաստը հայերենում թարգմանվում է մեկ բառով. օրինակ՝ հավատարմագիր, գրապալատ, եկամտահարկ, պահատեղյակ, տեսադաշտ, փոստարկղ, գատապաշտպանություն: Սրանք, ինչպես տեսնում ենք, միանգամայն հաջող կազմություններ են: Ս. Աբրահամյանը նշում է, որ շատ փոխառյալ բառեր ավելի կարճ ժամանակում են ձուլվում ազգային բառապաշարի մեջ և ավելի հաճախադեպ են հայերեն բաղադրիչների հետ կազմում մեծ թվով բարդ բառեր (էլեկտրացանց, տանկաշինություն, ավտովերանորոգում, ֆուտբոլասեր, ռադիոհամերգ և այլն): Այդ երևույթը դիտվում է որպես սովետական շրջանի մեր լեզվի բառային կազմի զարգացման բնորոշ կողմերից մեկը: Ինչպես երևում է վերը շարադրվածից, Ս. Աբրահամյանը կանգնած է իր նախորդ հոդվածներում առաջ քաշած տեսակետների վրա և ղեկավարվելով գիտական սկզբունքներով ու հաշվի առնելով լեզվի մաքրության շահերը և զարգացման օրինաչափությունները, պաշտպանում է միանգամայն ընդունելի ու ճիշտ տեսակետ:

Լեզվի մաքրության և դրա հետ սերտորեն կապված փոխառության հարցին բազմիցս անդրադարձել է Ռ. Իշխանյանը: «Բանավոր խոսքն ու ինքնահսկումը»[53] հոդվածում նա դժգոհում է բանավոր խոսքի մեջ հե-

---

53 «Գարուն», 1967, № 7.

ղեղված օտարաբանություններից։ Ըստ նրա, այդ օտարաբանությունների պատճառը ոչ թե չգիտենալն է, այլ սովորույթի ուժը, սեփական խոսքի նկատմամբ անփույթ վերաբերմունքն ու ինքնահսկման բացակայությունը։ Իշխանյանը իրավացիորեն պահանջում է խոսակցական լեզուն մաքրել անհարկի օտարաբանություններից։ Ռ. Իշխանյանի «Հաշվի առնել լեզվի զարգացման ներքին օրինաչափությունը»[54] հոդվածը ուղղված է Ա. Ոսկերչյանի տեսակետների դեմ։ Հոդվածագիրը մեղադրում է Ա. Ոսկերչյանին հայոց լեզվի դռները օտար բառերի առաջ ազատորեն բաց անելու, իր իսկ վկայակոչած հեղինակությունների՝ Աճառյանի, Թումանյանի և այլոց մտքերն ու ասույթները խեղաթյուրելու, այլև օտար բոլոր բառերը թարգմանելու տեսակետը հորինելու, այն ուրիշներին վերագրելու և դրա դեմ հանդես գալու մեջ։ Իշխանյանը ցույց է տալիս Ոսկերչյանի դավանած սկզբունքի սխալականությունն ու խոցելի կողմերը։ Նա ճշտորեն նշում է, որ ոչ մեկը օտար բառերը թարգմանելու պահանջ չի դրել և չէր էլ կարող դնել, թեկուզ հենց այն պատճառով, որ ոչ մի լեզու չի կարող ազատվել փոխառություններից։ Ոսկերչյանի կարծիքով թարգմանաբար չպետք է գործածվեն սոսիսկի, պլաստինկա, բուլյոն, մենյու, լաուրեատ, ռեպերտուար, ինտելիգենցիա, տուրիստ, գաստրոլ և այլ բառերը։ Իշխանյանը դեմ է արտահայտվում այդ սկզբունքին՝ պահանջելով դրանք փոխարինել հայերեն համարժեքներով։ Նա նշում է, որ մեկ ուրիշը անհրաժեշտորեն կատարված փոխառություններ է համարում պոլիտիկա, ատմիրալ, կոնվերտ, պիանինո, արխիտեկտոր բառերը։ Դրանք անհարկի փոխառություններ են։

Իշխանյանը նշում է, որ լեզվի մաքրության հարցով զբաղվում են նաև չեխերը, սլովակները, հունգարացիները, գերմանացիները, ռումինացիները և բոլորի նպատակը հնարավորին չափ լեզուն օտար բառերից մաքրելն է։ Հոդվածագիրը գտնում է, որ հայերենը պատկանում է քիչ փոխառություններ կատարող լեզուների թվին։ Հայերը դեռևս V—VI դարերում հունարեն տերմինների դիմաց փորձել են ստեղծել հայերեն բառեր, որոնց մի զգալի մասը մինչև այժմ էլ օգտագործվում է։ Աճառյանի քերած փոխառությունների մի մասը դուրս է եկել գործածությունից։ Իսկ մի շարք փոխառյալ բառեր, որ գործածվում էին 1900-ական թվականներին, հետագայում փոխարինվեցին հայերենով (տելեֆոն, պրոսպեկտ, բազար, ֆորմուլա, ռեցեպտեն, պապիրոս, պուլիմյոտ և այլն)։ Սա հայոց լեզվի օրենքն է։

---

54 «Սովետական գրականություն», 1968, № 1, էջ 139—143։

Իշխանյանը այն կարծիքն է հայտնում, որ նորաթուխ, շինծու, նոր իմաստով օգտագործվող հին, մեռած համարվող շատ բառեր, հաճախակի գործածվելով, դառնում են սովորական: Այսպես՝ նախապես թխված կամ շինծու բառեր համարված հեռագիր, թղվածին, գործադուլ, երկաթուղի, խմբագրություն, շոգեքարշ, ինքնաթիռ, տպագիր, տպարան, ընդհատակ, սուզանավ և այլն այսօր շատ սովորական բառեր են, իսկ որոշ մարդկանց դեռևս «շինծու» կամ «մեռած» թվացող հյուրախաղ, դափնեկիր, երգահան, մարզադաշտ, ձայնագրական, հյուլե, լոլիկ, սմբուկ, ավանդույթ և այլն վաղը կարող են ամենքին սովորական թվալ:

Իշխանյանը պահանջում է փոխառություններ կատարել միայն այն դեպքում, երբ հայերենի բոլոր հնարավորությունները սպառված են: Ընդորում, հնարավոր է համարում նոր փոխառված բառերի մի մասի փոխարինելը հայերեն համարժեքներով՝ հետագայում, ժամանակի ընթացքում:

Իշխանյանի տեսակետները ավելի մանրամասն արտահայտված են նրա «Հայերենի տերմինաշինության հարցերը»[55] խորագրով հոդվածում: Այդ բանավիճային հոդվածի մեջ թեև քննվում է տերմինաշինության և տերմինների փոխառության հարցը, սակայն այն լիովին կիրառելի է նաև ոչ տերմինային արժեք ունեցող բառերի նկատմամբ, այսինքն՝ այնտեղ ուսումնասիրվում են փոխառության և հատկապես տերմինափոխառման ու տերմինաշինության խնդիրները:

Իշխանյանը այս հոդվածում ևս առարկում է միջազգային համարված մի շարք տերմինների դեմ, գտնելով, որ դրանք միջազգային չեն, քանի որ թարգմանված են եվրոպական մի շարք լեզուներում (սեպսիս, կոնստիտուցիա, դիպուտատ, պարտիա): Սհա թե ինչու սխալ է համարում 1940 թ. տերմինաբանական կոմիտեի որոշումը նատաշրջան, պատգամավոր, կուսակցություն և այլ բառերը օտար համարժեքներով փոխարինելը, նկատի առնելով վերջիններիս, այսպես ասած, միջազգային լինելը: Յույց է տալիս նաև, որ միջազգային հայտարարված կուլտուրա, ադմիրալ, տանկ, ատադիոն, ֆորմուլա, իդեա, կոմպոզիտոր, ալգեբրա, գեոմետրիա, տեխնիկա, պոլիտիկա, լոգիկա, ֆիմիա, ֆիզիկա, լինգվիստիկա, տելեֆոն, արխիտեկտուրա, էսթետիկա, ավտոմոբիլ, ռադիո, տրամվայ, վագոն, լիֆտ, կինո, գաստրոլ, տուրիստ, օպերա, թատրոն և այլ բառեր բոլորովին էլ միջազգային չեն: Դրանք թարգմանված են աշխարհի մի շարք լեզուներում, ուստի դրանց հայերեն համարժեքով փոխարինելը միանգամայն հնարավոր է:

55 «Լրաբեր», 1969, № 7, էջ 87—103:

Իշխանյանը հերքում է օտար բառերը ոչ թարգմանաբար կիրառելու տեսության կողմնակիցների բերած փաստարկները, ցույց տալիս նրանց անբավարար ու անհիմն լինելը: Սխալ է համարում նաև այն պնդումը, թե նորակերտ բառերը, նաև դրաբարի չօգտագործվող բառապաշարից վերցվածները շինծու են, արհեստական, մեռած, հետևաբար օտար բառերը չպետք է փոխարինվեն դրանցով: Հեղինակը նկատում է, որ այսօր էլ կան ոչ հաջող թարգմանություններ ու բառակերտումներ, սակայն դա չի նշանակում, թե պետք է հրաժարվել հայկական տերմինաշինությունից: Ճիշտ չէ այսօր գաստրոնոմ-ը՝ ուրկրամոլ, մաթեմատիկա-ն՝ ուսուցություն թարգմանելը, այլև ասիատեների փոխարեն ընթերակա, իմաեղաճաի փոխարեն համբարակ գործածելը, սակայն դա չի կարող հիմք հանդիսանալ բաղաքակաճություն, բանաձև, հաստիք, դեղատոմս, տրամաբանություն, գեղագիտություն, հեռախոս, կենսաբանություն և այլ բառերը մերժելու համար:

Ի. Իշխանյանը ճշտորեն նկատում է, որ տերմինները չպետք է բառացի հասկացվեն, քանի որ այդպես ըմբռնելու դեպքում շատ թյուրիմացություններ տեղիք կտրվի: Այսպես՝ մերժել բիբլիոգրաֆիա և էսթեթիկա բառերի փոխարինումը հայերեն համարժեքներով այն պատճառաբանությամբ, թե այժմ մատենագիտություն անվանվող առարկան գրքերի մասին գիտություն չէ, իսկ գեղագիտություն-ը ավելի նեղ հասկացություն է արտահայտում, քան էսթետիկան, նշանակում է մոռացության տալ մի կարևոր հանգամանք, այն որ բիբլիոգրաֆիա-ն և էսթետիկա-ն բառացի հասկացվելու դեպքում ավելի մեծ սխալների պատճառ կդառնան: Չէ որ առաջինը բառացի նշանակում է գիրք գրել կամ ընդօրինակել, իսկ մյուսը՝ զգացողություն, որոնք չեն բխում անվանվող առարկաների բուն էությունից:

Հաճախ հայերեն տերմինները մերժվում են օտար բառերի բառացի թարգմանությունը լինելու համար (երկրաբանություն, կենսաբանություն, բանասիրություն): Իշխանյանը գտնում է, որ նման մոտեցումը ճիշտ չէ՝ կարելի է օգտագործել նաև փոխառյալ բառերի բառացի թարգմանությունները, եթե դրանք ճիշտ են արտահայտում առարկայի էությունը: Հետևաբար, ճիշտ է գեոլոգիա, բիոլոգիա, ֆիլոլոգիա բառերի փոխարինումը հայերեն համարժեքներով: Մեկ անգամ ևս ընդգծում է, որ շինծու, արհեստական համարված շատ բառեր, գործածության մեջ դրվելով, դառնում են սովորական ու բնական: Ահա թե ինչու հեղինակի կողմից ընդունելի են համարվում հյուրախաղ, դափնեկիր, փառատոն,

ևվագավար, մակնիշ, մրցաշար, ձայնապնակ, ավանդույթ, ճաշարանոց, ստուգայց և այլ բառերի կիրառությունները։

Ռ. Իշխանյանը հիմնավորում է նաև դեղատոմս, դիմանկար, փորագրություն, նրբերանգ, արվեստագետ և այլ բառերի գործածությունները օտար տերմինների փոխարեն։

Հոդվածում նշվում է, որ անհաջող թարգմանությունները հետագայում դադարում են գործածվելուց, մերժվելով հենց լեզվի կողմից (խոռվարար, պոչազգեստ)։ Իշխանյանը կողմնակից է նաև պոմիդոր, բադրիջան, ավտոմոբիլ, ատոմ բառերը հայերենով փոխարինելու (լոլիկ, սմբուկ, ինքնաշարժ, հյուլե)։ Կարծում ենք, որ Իշխանյանը այս դեպքում որոշ ծայրահեղության մեջ է ընկնում։ Չէ որ նշված փոխառյալ բառերը լայն տարածում են ստացել հայերենում, դարձել նրա բառապաշարի անբաժանելի մասը, և հասկանալիությամբ ու բառակազմական տեսակետից որոշ առավելություն են հանդես բերում հայերեն համարժեքների նկատմամբ։

Հոդվածի վերջում Իշխանյանը նշում է օտար տերմինները հայերեն համարժեքներով փոխարինելու բոլոր հնարավոր դեպքերն ու միջոցները։

Ռ. Իշխանյանի վերը նշված սկզբունքները նույնությամբ պաշտպանվում են «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» կոլեկտիվ աշխատանքի մեջ զետեղված նրա «Տերմինաշինություն» ծավալուն և ուշագրավ հոդվածում։ Ռ. Իշխանյանը խրախուսում է մի շարք խմբագրությունների՝ հայոց լեզվի մաքրության և հայերեն տերմինաշինության զարգացման ու հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ դատապարտելով նշված սկզբունքներից նահանջելու կամ այդ հարցում անփութություն ցուցաբերելու ամեն մի դրսևորում։

Տերմինաբանության հարցի շուրջ ծավալված բանավեճին մասնակցեց նաև Հ. Բարսեղյանը՝ հանդես գալով «Ազգայինն ու միջազգայինը տերմինի ու տերմինաշինության մեջ»[56] հոդվածով։ Փոխառության հարցում նա պաշտպանում է միանգամայն ընդունելի տեսակետ, ըստ նրա, տերմին փոխառվում է միայն այն ժամանակ, երբ հայերենի բառակազմական միջոցներն ու բառապաշարի հարստացման բոլոր աղբյուրները օգտագործված են, բայց հնարավոր չէ տերմինը թարգմանել առանց իմաստի աղավաղման։ Հ. Բարսեղյանը ճշտորեն նկատում է, որ մայրենի լեզվի մեջ ներմուծված բառերը հետագայում կարող են փոխարինվել ազգային համարժեքներով։ Դա համարվում է բնական երևույթ, որի հա-

---

56 «Լրաբեր», 1971, № 1, էջ 97—102։

մար հայոց լեզուն տալիս է հարյուրավոր օրինակներ: Այսպես՝ տասնամյակներ շարունակ հայերենում գործածվում էին մարկա, վիտրինա, կոմպլեքս, կորպուս, ցեխ, շտանգա, շտանգիստ փոխառյալ բառերը, որոնք վերջերս փոխարինվեցին հայերեն անվանումներով՝ մակնիշ, ցուցափեղկ, համալիր, մասնաշենք, արտադրամաս, ծանրաձող, ծանրորդ և այլն: Հունարենից անցած ստադիոն բառը 1600 տարի գործածվելուց հետո իր տեղը զիջում է մարզադաշտին: Այս նշանակում է, թե չպետք է բացառվեն հայերենի մեջ մտած փոխառությունների թարգմանությունները հետագայում: Մի սկզբունք, որ, ինչպես տեսանք, առաջ էր քաշել Ռ. Իշխանյանը: Հոդվածագիրը մեղադրում է Ա. Ոսկանյանին կատաստրոֆիկ բառը գործածելու համար և պահանջում է կատաստրոֆա, կատաստրոֆիկ բառերը փոխարինել կործանում, կործանարար, աղետ և աղետալի տերմիններով: Հ. Բարսեղյանը դեմ է ինչպես անհարկի փոխառություններին, այնպես էլ արհեստական, անհաջող թարգմանություններին:

«Լրաբեր»-ի էջերում բացված բանավեճին մասնակցեց նաև Ս. Ասլանյանը «Փոխառությունները տերմինակազմության աղբյուր»[57] հոդվածով: Ասլանյանը տարբերում է երկու կարգի տերմինների փոխառություն.

1. Տերմիններ—բառապատճեններ, որոնք օտար լեզվի բառային նշանակությունների վերարտադրումն են լեզվի սեփական միջոցներով (հակագաղ—противогаз, պարգևադրամ—наградные деньги):

2. Տերմիններ որոնք պահպանում են իրենց իմաստը և ձևաբանական կառուցվածքը՝ կրելով հնչյունական որոշ փոփոխություն. աբստրակտ—абстрактный, ագենտ—агент, ագրեգատ—агрегат, ազբեստ—азбест, ազարտ—азарт, աբսենտ—абсент. կոմունա—Коммуна, կոմունիզմ—Коммунизм, կոմունիստ—коммунист: Նկատենք, որ առաջին խմբի բառերը ըստ էության փոխառություն չեն: Դրանք լեզվաբանական դրականության մեջ բառապատճեններ անվանումն են կրում: Երկրորդ կարգի մեջ ընդգրկված շատ տերմիններ հնչյունական որևէ փոփոխություն չեն կրել (ագրեգատ, ազարտ, ազբեստ և այլն): Իսկ կոմունա, կոմունիզմ, կոմունիստ բառերի մեջ հնչյունական մակարդակի փոփոխություն չի կատարվել, պարզապես փոխառյալ բառերի գրությունը հարմարեցված է մեր լեզվի ուղղագրական և արտասանական կանոններին: Դա ոչ թե հնչյունափոխությանն է վերաբերում, այլ ուղղագրու-

57 «Լրաբեր», 1971, № 2, էջ 113—119:

թյանն ու արտատանությանը, ուստի ճիշտ չէ նշել, թե օտար տերմինները հայերենում հնչյունական փոփոխություն են կրել: Իրրև եղրակացություն Ս. Ասլանյանը նշում է, որ օտար տերմինները դժվար են հասկացվում, յուրացվում ու հիշվում և խանգարում են լեզվի մաքրությանը: Անշուշտ, որոշ վերապահությամբ պետք է ընդունել այդ հայտարարությունը, դա ճիշտ է միայն փոխառյալ որոշ բառերի նկատմամբ: Կոմունիզմ, կոմունիստ, սոցիալիզմ, սոցիալիստ, տրակտոր, կոմբայն և նման հարյուրավոր բառեր բոլորովին էլ դժվարությամբ չեն հասկացվում ու հիշվում և ոչ էլ խանգարում են լեզվի մաքրությանը: Խոսքը կարող է վերաբերել ոչ թե փոխառություններին ընդհանրապես, այլ նրանց մի մասին: Ս. Ասլանյանը ճիշտ չի կողմնորոշվում օտար բառերը նույնությամբ կամ թարգմանաբար գործածելու հարցում:

«Լրաբեր»-ի էջերում բացված բանավեճի արդյունքների ամփոփմամբ հանդես եկավ Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը»[58] հոդվածով: Նա բավական հանդամանորեն քննության ենթարկեց բանավեճի մասնակիցների առաջ բաշած տեսակետներն ու առաջարկությունները և արեց մի շարք արժեքավոր դիտողություններ: Գ. Ջահուկյանն առաջարկում է յուրաքանչյուր տերմինի հարցը լուծել առանձին՝ ելնելով տերմինների բարեհնչյունությունից, բառակազմական և ձևաբանական առանձնահատկություններից: Հոդվածագիրը գտնում է, որ հայոց լեզվի հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունները պետք է հաշվի առնել ոչ միայն փոխառությունների դեպքում, այլև նոր բառեր կազմելու ժամանակ: Ջահուկյանը նույնպես դատապարտում է օտար տերմինների անհաջող թարգմանությունները, այսպես՝ սխալ է համարում կոմպոզիտոր, էվոլյուցիա, տուրիստ, տուրիզմ, տուրբազա բառերը հայերեն համարժեքներով (երգահան, բնաշրջություն, զբոսաշրջիկ, զբոսաշրջություն, զբոսաբազա, զբոսաշրջաբազա) փոխարինելը: Գ. Ջահուկյանը, պաշտպանելով բանավեճի մասնակիցների մեծ մասի տեսակետները, նույնպես անհանդուրժելի է համարում լայն տարածում գտած և բոլորի համար հասկանալի հայերեն բառերի ու տերմինների փոխարեն օտար բառերի գործածությունը: Այսպես՝ մերժում է Պ. Նազարյանի առաջարկը կտորառաճ (ջարդոն), մեջբերել և այլ բառերը լոմ, ցիտել բառերով փոխարինելու վերաբերյալ: Հեղինակը իրավացիորեն դեմ է արտահայտվում միևնույն տերմինի դիմաց մի քանի բառեր առեղծելուն (пылесос—փոշեծուծ, փոշեծծիչ, փո-

58 «Լրաբեր», 1971, № 9:

շնհան, փոշեհալաք, փոշեքաշ, փոշեքաշիչ)։ Նպատակահարմար չհամարելով գիտական գրականության հիմնական լեզուներում մենիմաստ գործածականություն ունեցող տերմինների չհիմնավորված թարգմանությունը, որը դժվարություն է հարուցում տվյալ ճյուղով զբաղվող մասնագետների համար և խախտում գիտության տվյալ ճյուղի համակարգայնությունը՝ Գ. Ջահուկյանը ընդունելի է համարում Ա. Աբրահամյանի և Հ. Բարսեղյանի՝ բոլոր ժողովուրդների կյանքն ու կենցաղը արտացոլող բառերը, այլև հատուկ անունները, քիմիայի և համատեղ այլ բնագավառների անվանակարգային տերմինները չթարգմանելու վերաբերյալ տեսակետները։ Այսպիսով, Ջահուկյանը փոխառության հարցում պաշտպանում է ճիշտ և ընդունելի սկզբունք, դատապարտելով ինչպես լայն տարածում գտած և բոլորին հասկանալի հայերեն տերմինների փոխարինումը օտար բառերով, այնպես էլ միջազգայնության ձգտող և գիտական գրականության հիմնական լեզուներում գործածվող փոխառությունների չհիմնավորված թարգմանությունը։

Տերմինաբանական կոմիտեն իր հիմնադրման օրից զգալի աշխատանք է տարել մայրենի լեզվի մաքրության, նորմավորման, այլև հայերենը հարստացնելու ուղղությամբ։ Նա մի շարք սկզբունքներ է սահմանել նաև փոխառության վերաբերյալ, որոնցից շատերը կենսագործվում են՝ նպաստելով մի կողմից հայերենի հարստացմանը նորակազմությամբ ու փոխառյալ բառերով, մյուս կողմից՝ նրա մաքրությանն ու անաղարտությանը։ Ընդհանուր առմամբ տերմինաբանական կոմիտեի որոշումներն ու սկզբունքները ճիշտ և ընդունելի են և հաշվի են առել մեր լեզվի շահերն ու զարգացման հեռանկարները։ Առանձին դեպքերում, իհարկե, կայացվել են ոչ ճիշտ որոշումներ, որոնք հետագայում շտկվել են հենց իր՝ կոմիտեի կողմից։ Տերմինաբանական կոմիտեն բացի ընդհանուր սկզբունքներ մշակելուց, որոնք կիրառվել են գրական արևելահայերենում, բազմիցս անդրադարձել է ինչպես կոնկրետ գիտաճյուղերի, այնպես էլ առանձին բառերի ու տերմինների ճշգրտման, փոխառման, օտար և ազգային ձևերի զուգահեռ գործածությունների, նրանց իմաստային որոշակիացման և այլ հարցերի։

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Փոխառության հարցին անդրադարձել են նաև գրականագետներ, բժիշկներ, թարգմանիչներ, մամուլի և մշակույթի այլ բնագավառների ներկայացուցիչներ։ Անցնենք նրանց կարծիքների քննությանը։

Փոխառության հարցում միանգամայն սխալ տեսակետի վրա էր կանգնած Հովիկ Մելիքյանը։ «Հայոց լեզվի զարգացման հեռանկարների շուրջը»[59] հոդվածում նա դատապարտում էր սովետ, սովխոզ, կոլխոզ, կոնստիտուցիա, դեպուտատ, դելեգատ, կանդիդատ, ժուռնալ, ռայոն և այլ բառերի թարգմանությունը, գտնելով, որ դրանով ոչ միայն արդելակվում է լեզվի զարգացումը, այլև աղավաղվում է բառերի քաղաքական իմաստը։ Հ. Մելիքյանը անհրաժեշտ չի համարում նաև պրոսպեկտ, լեկտոր, լեկցիա, ինտելիգենտ և այլ բառերի թարգմանությունը։ Նրա կարծիքով ժողովուրդը միայն գործածում է պրոսպեկտ, իսկ պողոտայի նշանակությունը իբր անհասկանալի է նրան։ Հ. Մելիքյանի փաստարկը այն է, թե նշված բառերը սովետական բոլոր ժողովուրդների համար վաղուց դարձել են հարազատ, ուստի հայերենը չպետք է բացառություն կազմի։ Նկատենք, որ այդ բառերը երբեք էլ սովետական բոլոր ժողովուրդների լեզուների մեջ առանց թարգմանվելու չեն կիրառվել։ Այժմ ոչ մի գրագետ հայ դրանք չի օգտագործում դրավոր խոսքում։ Եթե նույնիսկ գործածվի էլ, ապա դա օրինաչափական չէ, ուստի աստիճանաբար պետք է տեղը զիջի հայերեն համարժեքներին։ Հ. Մելիքյանը պահանջում է վերանայել լեզվաշինարարության ճակատը, նկատի ունենալ մեր լեզվի զարգացման հեռանկարները և հարց է դնում՝ չթարգմանել այն բառերը, որոնք գործածական են ռուսերենում և հասկանալի հայ ժողովրդի լայն խավերին։ Տեղին է նկատել, որ լեզուն չի հանդուրժում անհատների քմահաճույքները։ Անհատական ամեն մի առաջարկություն, եթե չի համապատասխանում լեզվի զարգացման ընթացքին, երկար կյանք չի ունենում լեզվի մեջ։ Նշված բառերից միայն սովետը, իբրև պետական նոր կարգի անվանում, խոր արմատներ գցեց հայոց լեզվի մեջ, մյուսները փոխարինվեցին մայրենի լեզվի բառերով[60]։

Փոխառության հարցում միանգամայն սխալ սկզբունք էր պաշտպանում Պ. Նազարյանը, որը կանգնած էր հայերենը օտար բառերով հեղեղելու տեսակետի վրա և ամեն կերպ փորձում էր իր անհիմն սկզբունքները իրականացնել կյանքում։ Նա համառորեն պահանջում էր գործածության մեջ դնել նույնիսկ այն օտարազգի բառերն ու տերմինները, որոնց հայերեն համարժեքները վաղուց արմատավորված են ու

59 «Խորհրդային Հայաստան», 12. 2. 1940 թ.։

60 Նշենք, որ հոդվածում կան որոշ ճիշտ դիտողություններ մի քանի օտար բառերի անհաջող թարգմանությունների վերաբերյալ (ագիտացիա-խռովություն, սոցիալիզմ-ընկերավարություն, ավտոգարաժ—ինքնագարաժ և այլն), որոնք չտարածվեցին և դուրս եկան գործածությունից։

ակտիվ գործածություն ունեն մեր լեզվում կամ էլ որոնց նշանակությունը լիովին հնարավոր է դրսևորել մեր լեզվի սեփական միջոցներով՝ առանց նրանց իմաստների թուլացման ու աղճատման: Այսպես՝ նա դատապարտում է արխիտեկտոր, ալգեբրա, գիմնաստիկա, լոգիկա, կատաստրոֆա, կոմիսիա, անալոգիա, անտագոնիզմ, դոկումենտ, պասպորտ, կաբինետ, բանկետ, կամերա, պերոն, տելեֆոն, կասսա, պրեմիա, ցենզուրա, կոնսերվա և այլ բառերի ու տերմինների թարգմանությունները[61]: Դեռ ավելին, Պ. Նազարյանը սխալ է համարում ադմիրալը՝ ծովակալ, կաֆեդրան՝ ամբիոն, օպոնենտը՝ ընդդիմախոս, էսթետիկան՝ գեղագիտություն, թեորիան՝ տեսություն թարգմանելը, գտնելով, թե դրանք խեղաթյուրում են օտար տերմինների իմաստը: Ոտնահարելով լեզվական փաստերը՝ նա հայտարարում է, որ դելեգատ,դեկադա, կրիգիս, մագիստրալ, մարշրուտ, շոֆեր, բոհս, կարտոն, պարկ, պրոսպեկտ, պորտրետ, արիա և այլ օտարաղբի բառերը մինչև այժմ գործածվել են առանց թարգմանության[62], հետևաբար դրանց հայացումը իրր միանգամայն ավելորդ է ու չհիմնավորված:

Պ. Նազարյանը պահանջում է արգելել տերմինների թարգմանությունը, գտնելով, թե դրանով քաոս ու շփոթ է ստեղծվում լեզուների մեջ: Փոխառության Պ. Նազարյանը որոշ չափով անդրադառնում է նաև մի այլ հոդվածում՝ «Սահմանել տերմինային միօրինակություն»[63], որտեղ հեղինակը թեև քննում է տերմինների միօրինակացման հարցը, սակայն դրա հետ կապված կանգ է առնում փոխառության խնդրի վրա: Պ. Նազարյանը այս հոդվածում նշում է, որ չկա տեխնիկական միասնական տերմինաբանություն և պահանջում է ստեղծել այդպիսին: Նկատենք, որ այդ հարցը բարձրացվել էր դրանից մեկ տասնամյակ առաջ ինժեներ Վ. Հարությունյանի կողմից, և Պ. Նազարյանի հոդվածը որևէ նոր բան չի ավելացնում դրա վրա: Նշենք նաև, որ այնտեղ կան բազմաթիվ սխալներ, ոչ ճիշտ ձևակերպումներ և այլն: Պ. Նազարյանը մեղքը գցում է առանձին մարդկանց և բառարանների վրա, գտնելով, որ շփոթություն է առաջանում, երբ միևնույն տերմինը կիրառվում է մերթ թարգմանաբար, մերթ առանց թարգմանելու: Թեև վաղուց արմատավորված են սալօջախ, ինճեներություն, դատապաշտպան, հատույթ և այլ տերմինները օտար պլիտա, ավտոնոմիա, ադվոկատ, սեգմենտ բառերի դիմաց,

---

61 Պ. Նազարյան, *Բառային փոխառությունների և լեզվի մաքրության մասին* («Октябрь», 1956, № 10, стр. 186):

62 Նույն տեղում:

63 «Սովետական Հայաստան», 29. 8. 1967 թ.:

սակայն Պ. Նազարյանը կարծես չի ցանկանում հաշտվել այդ մտքի հետ և փորձում է շատ հաղվադեպ հանդիպող այդ օտար տերմինները և դրանց հայերեն համարժեքները դնել նույն մակարդակի վրա: Միևնույն հասկացության համար մեկից ավելի տերմիններից ժամանակի ընթացքում հաղթանակում է մեկը: Այսպես՝ Պ. Նազարյանի բերած հեռախոսի трубка-ի դիմաց եղած փողակ, ընկալուչ, խոսափող լսափող տերմիններից հաղթել է վերջինը: Մյուսները դրեթե չեն հանդիպում: Այդպես էլ пластинка-ի դիմաց ունեցած սկավառակ, ձայնասկավառակ, ձայնապնակ տերմիններից հաղթել է ձայնասկավառակը, ուստի ավելորդ է մյուսների մեջտեղ բերելը որպես пластинка-ի հոմանիշներ: Այն տերմինները, որոնք արդեն դուրս են եկել գործածությունից կամ էլ բառարաններից դուրս կյանք չեն ունեցել բանավոր ու գրավոր խոսքի մեջ, չպետք է քննվեն ժամանակակից գրական լեզվում իրենց տեղը գրաված, արմատավորված, կենսունակ ձևերի հետ, իբրև հավասարարժեք տերմիններ: Այդ տեսակետից մոտենալու դեպքում հասկանալի կդառնա Պ. Նազարյանի՝ վերը նշված հոդվածի մեջ բերված փաստերին տրվող ոչ ճիշտ բացատրությունը: Պ. Նազարյանը «օտարաբանությունների բնույթը հայերենում»[64] հոդվածում հիմնականում պաշտպանում է նախկինում որդեգրած տեսակետներն ու սկզբունքները: Այստեղ սխալ է համարվում տուրիստ, գաստրոլ, սեկցիա, սեկտոր, ֆիլիալ, կոբպուս բառերը հայերենով փոխարինելը: Հեղինակը առարկում է կենսաբանություն, տաղավար, մասնաճյուղ, բանաձև, դաշնամուր, արհմիություն և նման հայերեն դեղեցիկ ու հասկանալի բառերի ստեղծման դեմ:

Պ. Նազարյանը փոխառության հարցում կանգնած է հայոց լեզուն անհարկի փոխառություններով խճողելու, նրա դռները օտար բառերի առջև ազատորեն բացելու անհիմն ու սխալ տեսակետի վրա: Նա գերապատվություն տալիս է ոչ թե նորաստեղծ հայերեն բառերին, այլ նրանց օտար համարժեքներին: Դեռ ավելին, իր սկզբունքները հիմնավորելու համար անտեսում է լեզվական փաստերը, կեղծում դրանք:

Փոխառությանը նվիրված հոդվածներով հանդես եկավ նաև Արտաշես Ոսկերչյանը, որը առաջնորդվելով ոչ գիտական մոտեցմամբ, պաշտպանեց միանգամայն անընդունելի տեսակետ: Ա. Ոսկերչյանը կանգնած է «օտարաբանության» տեսակետի վրա և հենց այդ դիրքերից էլ քննության է առնում փոխառության խնդիրը: Ոսկերչյանը նույնպես անհիմն մեղադրանք է ներկայացնում մեր մամուլի մի շարք աշխատակիցների, Պ. Սևակի, Գ. Սևակի և այլոց նկատմամբ՝ գտնելով, թե վերջիններս իրր

64 «Լրաբեր», 1971, № 2, էջ 120—123:

մերժում են բոլոր տեսակի փոխառությունները և ճգնում՝ դրանք անպայման փոխարինել հայերենով: Նկատենք, որ արևելահայ իրականության մեջ այդպիսի ծայրահեղություն չի նկատվել: Ոչ ոք օտարաբեզվյան բոլոր բառերը հայացնելու պահանջ չի դրել և չէր էլ կարող դնել: Խոսքը միշտ էլ վերաբերել է անհարկի, ոչ տեղին կատարված փոխառություններին և ոչ թե փոխառությանը ընդհանրապես: Ա. Ոսկերչյանը գտնում է, թե հայոց լեզվի մաքրության համար տարվող պայքարի մեջ նկատվում են անընդունելի մեթոդներ: Դրանցից մեկը համարում է օտար բառերի ու տերմինների գործածությունից ընդհանրապես հրաժարվելը, դրանք անպայման թարգմանելու ձգտումը: Պահանջում է պայքար ծավալել միջազգային տերմինների արհեստական «հայացումների», անհաջող թարգմանությունների, մեռած, անկենդան լեզվաձևերի վերակենդանացման փորձերի դեմ: Պնդում է, թե մեր լեզուն աղաոտվում է միջազգային գործածության բառերի ու տերմինների անհաջող թարգմանություններից ու արհեստական «հայացումներից»: Ա. Ոսկերչյանը բերում է այնպիսի օրինակներ, որոնք բոլորովին չեն թարգմանվել արևելահայերենում: Դրանք թարգմանաբար են կիրառվում արևմտահայ գրական լեզվում, իհարկե, ինքնին հասկանալի պատճառներով: Այդպիսիք են՝ տանկ-հրասայլ, կինո-շարժապատկեր, մարշալ-մարաջախտ, ռեալիզմ-իրապաշտություն և այլն: Այս բառերը առանց թարգմանելու են կիրառվում արևելահայ գրական լեզվում: Փաստերի նման քննությունը հեռու է գիտականությունից: Դեռ ավելին, Ոսկերչյանը այնպիսի հայտարարություններ է անում, որոնք փաստերն ու իրողությունները խեղաթյուրված են ներկայացնում: Այսպես՝ նա գտնում է, որ թեև անցյալում գործածվել են նախարար, մեծամասնական և փոքրամասնական բառերը մինիստրի, բոլշևիկի և մենշևիկի փոխարեն, սակայն դա դեռևս հիմք չի տալիս այդ բառերը վերակենդանացնելու: Միանգամայն համամիտ ենք այն պնդմանը, որ անհրաժեշտություն չկա նշված բառերը վերակենդանացնելու: Բայց ո՞վ է այդպիսի պահանջ դնում. իհարկե, ոչ ոք: Ահա թե ինչու նման հայտարարությունները անհիմն են և կապ չունեն բուն իրողության հետ: Արևմտահայերենի մեջ նկատվող միտումները չպետք է վերագրվեն արևելահայերենին: Վերջին 50 տարում որևէ մեկը հաղիվ թե հանդիպած լինի այդ տերմինների կիրառություններին նշված իմաստներով: Ա. Ոսկերչյանը արհեստական թարգմանություն է համարում դափնեկիր-ը, ճյուրախաղ-ը, գբոսաշրջիկ-ը, սալօջախ-ը և այլն, որոնք լիովին արտահայտում են օտար բառերի իմաստները, ոչնչով չեն զիջում նրանց և նպաստում են հայերենի բառային կազմի հարստացմանը:

Ոսկերչյանը, անտեսելով փաստերը, նշում է, թե ինտելիգենցիա, էսթետիկա, լիրիկա և այլ բառերի հայերեն համարժեքները իրենց դիրքերը զիջել են օտար բառերին, և վերջիններս դարձել են հասկանալի ու դյուրըմբռնելի: Նկատենք, որ հատկապես վերջին տասնամյակում նշված հայերեն բառերը գործածության հաճախականությամբ ակնհայտորեն զիջում են իրենց առավելություններ փոխառյալ բառերի նկատմամբ: Գրավոր խոսքում հիմնականում իշխում են հայերեն համարժեքները, խոսակցական լեզվում երկուսն էլ կիրառվում են զուգահեռաբար, բայց դարձյալ մայրենի լեզվի ձևերի գերազանցությամբ: Ոսկերչյանը նշում է, որ միաժամանակ հավասարապես գործածվում էին պրոզա-արձակ, իդեոլոգիա-գաղափարաբանություն (գաղափարախոսություն Հ. Ծ.), էսթետիկա-գեղագիտություն զուգահեռ ձևերը, և ոչ ոք չէր անհանգստանում դրա համար, և զարմանում է, որ այժմ դա մտահոգում է մարդկանց: Ս. Աբրահամյանի տեսակետներին առարկելու կապակցությամբ Ոսկերչյանը նշում է, որ գաստրոլ, լաուրեատ, տրիլոգիա, դրամատուրգիա, ինտելիգենցիա, ինտերվյու, ֆիլիալ և շատ բառեր վաղուց մտել են մայրենի լեզվի ակտիվ բառապաշարի մեջ, սակայն դրանք հանկարծակի փոխարինվեցին կամ փոխարինվում են շինծու, արհեստական բառաձևերով կամ հնաբանություններով: Նկատենք, որ այստեղ զարմանալու ոչինչ չկա: Փոխառյալ որոշ բառեր աստիճանաբար դուրս են մղվում հայերենի բառային կազմից և փոխարինվում ազգային համարժեքներով, ընդ որում, վերջիններս բոլորովին էլ արհեստական կամ շինծու չեն, ոչ էլ հնաբանություններ, ինչպես Ոսկերչյանն է կարծում: Հյուրախաղ, դափնեկիր, եռերգություն, թատերգություն, մտավորականություն, հարցազրույց, լրատու, մասնաճյուղ և այլ բառերը ոչ միայն չեն զիջում օտար բառերին, այլև հանդես են բերում որոշակի առավելություններ նրանց նկատմամբ: Ոսկերչյանին անհանգստացնում է նաև մենյու, կուլտուրա, տուրիստ, ռեպերտուար, ֆորում և այլ բառերի հայերեն համարժեքների լայն կիրառություն ստանալը: Ըստ նրա, նշված փոխառյալ բառերը ավելի լայն ընդգրկում ունեն, ավելի ճիշտ են արտահայտում տվյալ հասկացությունը, և ավելի հասկանալի ու դյուրըմբռնելի են, քան դրանց ազգային համարժեքները՝ թարգմանություններ: Կարծում ենք, որ նման պնդումները հեռու են ճշմարիտ լինելուց:

Ոսկերչյանի հոդվածներում նշված դիտողությունները ընդհանուր առմամբ քննության չեն դիմանում: Նկատենք, սակայն, որ կատարվում են նաև արհեստական ու անճաշակ թարգմանություններ և դրանց վերաբերյալ տրված դիտողությունները ճիշտ են ու տեղին: Այսպես, ես-

կապես արհեստական ու անկենսունակ են շամփրած հոշածո, թակածո կողիկ, անխառն թակածո կողիկ, թափառ և այլ բառերը, որոնք ստեղծվել են ռեստորանների կամ ճաշարանների աշխատակիցների կողմից և դուրս չեն եկել այդ հիմնարկությունների սահմաններից ու չեն տարածվել, ուստի չեն կարող որևէ չափով աղդել գրական կամ խոսակցական լեզվի վրա։

Ա. Ոսկերչյանը իր սխալ տեսակետները հիմնավորելու համար դիմում է հեղինակավոր գործիչների ասույթներին՝ իհարկե, վերջիններս ծառայեցնելով իր նպատակին, այսինքն՝ հարմարեցնելով իր սկզբունքներին, հաճախ աղավաղելով նրանց մտքերը։ Այսպես՝ Հ. Թումանյանը, որին վկայակոչում է Ա. Ոսկերչյանը, կողմնակից էր անհրաժեշտորեն կատարվող փոխառություններին։ «Եվ միշտ ավելի լավ է չունեցած բառը փոխ առնել, քան ճգնել անպայման ստեղծել կամ թարգմանել ու ֆրակը շինել պռշազգեստ, կոտլետը՝ կողրիկ, ռահատլոխումը՝ հանգստապատառ։ Անճիշտ և անշնորհք թարգմանությունները ավելի շատ են վնասում լեզվին, քան ուղղակի փոխառությունները»,— գրում է Հ. Թումանյանը։ Այս մեջբերումից երևո՞ւմ է, արդյոք, թե Թումանյանը ընդհանրապես դեմ է եղել օտար բառերը թարգմանելուն և կողմնակից միայն փոխառություններին։ Իհարկե, ոչ։ Թումանյանը բողոքում է միայն անհաջող թարգմանությունների դեմ և իրավացիորեն պահանջում կատարել ճիշտ թարգմանություններ։ Այդ միտքը ավելի որոշակիորեն արտահայտված է Թումանյանից քաղված մեջբերման շարունակության մեջ, որը միտումնավոր կերպով անտեսվել է Ա. Ոսկերչյանի կողմից։ Ահա այն. «Հաճախ կտեսնեք, որ մեզանում՝ նույնիսկ просвещение, цивилизация, культура *թարգմանում են միևնույն բառով՝ լուսավորություն։ Եվ էսպեսով հաջող փոխառությունն ու ճիշտ թարգմանությունները մեծապես տաղանդի ու շնորհքի գործ են դառնում, բայց, դժբախտաբար, լեզվի վրա անշնորհք մարդիկ շատ են ազդում, և հասկացող ու կիրթ ճաշակի տեր մարդկանց միայն մնում է խոսելիս թե գրելիս, փոխ առնելիս թե թարգմանելիս զգույշ լինել ու բարեխիղճ, որովհետև ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է, մի ամբողջ աշխարհ»*[65]։

Այստեղ ակնհայտորեն օտար բառերի ճիշտ թարգմանության պահանջ է դրվում, այսինքն՝ շեշտվում է հաջող թարգմանության անհրաժեշտությունը։ Թումանյանը բողոքում է просвещение, цивилизация,

---

65 «Թումանյանը քննադատ», էջ 390։

культура բառերի անհաջող թարգմանության դեմ և ոչ թե պահանջում դրանք փոխառնել, գործածել առանց թարգմանելու։

Ոսկերչյանը վկայակոչում է Հր. Աճառյանին, որի տեսակետը, սակայն, ոչնչով չի համընկնում Ոսկերչյանի սկզբունքների հետ։ Ոսկերչյանը դիմում է նաև այլ հեղինակությունների (Վ. Տերյան, Ե. Չարենց, Շիրվանզադե և այլն)՝ դարձյալ աղավաղելով կամ իր նպատակին ծառայեցնելով նրանց մտքերը։ Նկատենք, որ վկայակոչված հեղինակներից ոչ մեկը այն տեսակետը չի պաշտպանել, ինչ հրամցվում է Ոսկերչյանի կողմից։

Ոսկերչյանը աղավաղում է ՍՄԿԿ ծրագիրը ազգային լեզուների զարգացման վերաբերյալ, հայտարարելով, թե օտար ծագում ունեցող բառերի դեմ պայքարելը հակասում է կուսակցության ծրագրային դրույթներին և վնասում լեզվի կատարելության, զարգացման ու հարստացման պահանջին։ Կուսակցության ծրագիրը պարզ է ու հստակ։ Այնտեղ նշվում է, որ ազգային լեզուները պետք է զարգանան իրավահավասարության պայմաններում, և նրանցից մեկը կախման մեջ չպետք է լինի մյուսից։ Ոսկերչյանի մտքերը բուն էության հակասում են տերմինաբանական կոմիտեի կողմից հաստատված որոշումներին։ Առաջնորդվել Ոսկերչյանի առաջարկած սկզբունքներով՝ նշանակում է դեմ գնալ տերմինաբանական կոմիտեի որոշումներին, անտեսել հայոց լեզվի մաքրությունն ու անաղարտությունը, ինքնահոսի մատնել նրա նորմավորումն ու զարգացման ընթացքը, շփոթ ու քաոսային վիճակ առեղծել նրա բառային կազմի համակարգում։

Ուշադրավ է բժիշկ Հ. Գևորգյանի «Լեզվի մաքրությունը սրբություն է»[66] խորագրով հոդվածը, ուր քննարկվող խնդրի կապակցությամբ, անդրադառնալով փոխառության հարցին՝ հեղինակը հիմնականում ճիշտ նկատառումներ է հանդես բերում։ Թեև հոդվածում կան որոշ անճշտություններ և չափազանցություններ, սակայն իր հիմնական կողմով՝ հարցադրմամբ և դրա լուծմամբ ճիշտ է և ընդունելի։ Հեղինակը պահանջում է բժշկական մի շարք օտարալեզվյան բառեր փոխարինել հայերենով, գտնելով, որ փոխառյալ շատ տերմիններ ոչ միայն չեն հարստացնում մեր լեզուն, այլև հաճախ այն դարձնում են խրթին ու անհասկանալի։ Այդպիսի բառերի շարքն են դասվում էպիդեմիոլոգիա, օնկոլոգիա, ինֆեկցիա, դեզինֆեկցիա, նեյրոխիրուրգիա և այլն, որոնց հայերեն համարժեքները, ըստ Հ. Գևորգյանի, առավելություն ունեն օտար բառերի

66 «Երևան», 22. 1. 1963 թ.։

նկատմամբ: Նա իրավացիորեն առաջարկում է դրանց փոխարեն կիրառել հայերեն համաձայնաբանություն, ուռուցքաբանություն, վարակ, ախտահանում, նյարդավիրաբուժություն և այլն: Պահանջվում է ազատվել նաև պրոգնոզ, դիագնոզ, սիմպտոմ, սիմպտոմոկոմպլեքս, աֆեկտ, էպիլեպսիա և այլ բառերից, դրանք փոխարինելով կանխագուշակում, ախտորոշում, ախտանիշ, ախտանիշների զուգակցում, հոգեկան հուզում, ընկճավորություն և այլ բառերով: Հոդվածագիրը նկատում է, որ օտար որոշ բառեր քանի որ դժվարությամբ են արտասանվում և անհասկանալի են, ուստի մարդիկ փորձում են հեշտացնել դրանց արտասանությունը՝ կրճատելով բառերը: Արդյունքը այն է լինում, որ ստացվում են անհասկանալի բառամասեր (օնկո, դեղ, օրթո, նեյրո, էպիդ և այլն): Օտար տերմինների տարածմանը, ըստ հեղինակի, նպաստում են մի կողմից մայրենի լեզվով բժշկական գրականության պակասը, մյուս կողմից՝ բժշկական թարգմանական գրականությունը, որը լի է օտարազգի բառերով: Հոդվածում առաջնություն է տրվում նաև դեղաբանություն, կենսաբանություն, մանկաբուժություն, հյուսվածաբանություն և այլ բառերին, որոնք իմաստային տեսակետից բոլորովին չեն զիջում օտար տերմիններին (ֆարմակալոգիա, բիոլոգիա, պեդիատրիա, հիստոլոգիա):

Հ. Գևորգյանը նշում է, որ հանդիպում են նաև այնպիսի տերմիններ, որոնք ունեն հայերեն համապատասխան համարժեքներ՝

տուբերկուլյոզ — պալարախտ
դոնոռեա — սուսանակ
ֆալուս — դոնջ
արխոֆիտիա — մկնատամ
ֆիստուլա — խուղակ (խլվակ)
պրոֆիլակտիկա — ախտականխիչ
լեյկոցիտ — ճերմիկ
պաթոլոգիա — ախտաբանություն
ինֆիլտրատ — ներսփռանք:

Այստեղից բնականաբար եզրակացվում է, որ օտար ոչ բոլոր բառերի գործածություններն են հիմնավորված:

Հիմնականում համաձայնվելով բժիշկ Գևորգյանի տեսակետին, ըստ որի լեզուն չպետք է խճողել օտար բառերով, քանի որ դրանով խաթարվում է լեզվի մաքրությունը, նշենք, որ նա երբեմն ընկնում է ծայրահեղությունների մեջ՝ ժխտողական վերաբերմունք ունենալով փոխառությունների նկատմամբ ընդհանրապես: Մեր լեզվում բավական շատ են տեղին ու անհրաժեշտաբար կատարված փոխառությունները, որոնք հաս-

կանալիությամբ չեն զիջում հայերեն բառերին: Բացի դրանից, հոդվածում նկատվում են անճշտություններ, անհաջող թարգմանություններ: Այսպես՝ ստոմատոլոգիական պոլիկլինիկա—ատամնաբուժարան, ինֆիլտրատ—ներսփռուք, լեյկոցիտ—ճերմիկ:

Հ. Գևորգյանի հոդվածը որոշ ծայրահեղություններով հանդերձ հիմնականում լեզվի մաքրությունը պահպանելու առողջ պահանջ է: Հեղինակը ճիշտ մոտեցում է ցուցաբերում օտար շատ բառերի թարգմանության հարցում:

Փոխառության և դրա հետ կապված մայրենի լեզվի մաքրության հարցին տարբեր առիթներով անդրադարձել է նաև Ա. Ոսկանյանը և հիմնականում կանգնել օտար բառերը նույնությամբ գործածելու տեսակետի վրա՝ իհարկե, որոշ վերապահությամբ: «Գիտական տերմինաբանության հարցի շուրջը»[67] հոդվածում Ա. Ոսկանյանը (հեղինակակից Լ. Հովհաննիսյան) ընդգծում է օտար լեզուներից եկող գիտական տերմինները անփոփոխ թողնելու անհրաժեշտությունը: Նա պահանջում է նույնությամբ կիրառել օտար տերմինները, եթե հայերենում համապատասխան բառ չկա, եթե թարգմանությունը չի տալիս իսկական իմաստը, վերջապես՝ եթե այն արդեն տարածվել է լեզվի մեջ և ոչ մի իմաստ չկա այն փոխելու: Սա նշանակում է, որ այն տերմինները, որոնք վերցվել են տարբեր շրջաններում, պետք է թողնել անփոփոխ՝ անկախ դրանք ազգային համարժեքներով փոխարինելու նպատակահարմարությունից:

Հետևելով այն սկզբունքին, ըստ որի առաջարկվում է չթարգմանել օտար բառը, եթե հայերենը այսօր չունի դրա համարժեքը, նշանակում է անտեսել լեզվի զարգացման ներքին օրինաչափությունն ու բառակազմական հնարավորությունները: Չէ որ լեզուն անընդհատ զարգանում է, և նրա բառաստեղծման բոլոր հնարավորությունները միանգամից չեն դրսևորվում ու գործադրվում: Եթե այդպես լիներ, ապա լեզուն կսպառեր դրանք, և այլևս ոչ մի նոր բառ չէր ստեղծվի: Մինչդեռ այդ այդպես չէ: Եթե այսօր լեզուն ի վիճակի չէ տվյալ իմաստը սեփական միջոցներով արտահայտելու, ապա չի բացառվում նման հնարավորության տեղծումը հետագայում:

Ա. Ոսկանյանը և Լ. Հովհաննիսյանը պահանջում են անփոփոխ թողնել օտար տերմինը, եթե հնարավոր է թարգմանել, բայց թարգմանությամբ չի դրսևորվում տվյալ նշանակությունը, այսինքն՝ աղճատվում է

---

67 «Երևան», 2. 6. 1963 թ.:

բառի իմաստը։ Եթե այսօրվա թարգմանությամբ աղճատվում է բառի իմաստը, ապա բացառվո՞ւմ են արդյոք դրանց հետագա ճիշտ թարգմանությունները. իհարկե, ոչ։ Վերջապես՝ պահանջվում է անփոփոխ թողնել օտարալեզվյան այն բառերը, որոնք արդեն տարածվել են լեզվի մեջ և ոչ մի իմաստ չկա դրանք փոխելու։ Հայերենում (և այլ լեզուներում) բավական շատ են այն դեպքերը, երբ փոխառյալ բառերը փոխարինվել կամ փոխարինվում են ազգային համարժեքներով։ Օտար բառերը կարող են տարածված լինել, լայն կիրառություն ստանալ, սակայն մայրենի լեզվի բառերին դիջել բարեհնչյունությամբ, հասկանալիությամբ, կարճությամբ և այլ հատկանիշներով։

Ա. Ոսկանյանի և Լ. Հովհաննիսյանի տեսակետը պարզորոշ է։ Ամեն կերպ ձգտել մեր լեզվի մեջ պահպանել փոխառյալ բառերը, և որքան շատ լինեն դրանք, այնքան մեծ չափով կնպաստեն լեզվի հարստացմանը և գիտության զարգացմանը։ Կարծում ենք, որ նման պնդումները այնքան էլ հիմնավոր չեն։ Լեզվի հարստացումը կատարվում է ինչպես փոխառությամբ, այնպես էլ սեփական բառակերտումներով։ Նշենք, որ գիտության զարգացումը բոլորովին էլ պայմանավորված չէ փոխառյալ բառերի քանակով։ Ա. Ոսկանյանը և Լ. Հովհաննիսյանը առարկում են Հ. Գևորգյանի «Լեզվի մաքրությունը սրբություն է» հոդվածում[68] կատարված թարգմանությունների դեմ։ Միաժամանակ նշում են, որ բժիշկ Հ. Գևորգյանի սկզբունքին հետևելու դեպքում իբր կստացվեն շատ խոցելի տերմիններ, որոնց գործածությունը ոչ թե կնպաստի մեր լեզվի զարգացմանն ու մաքրությանը, այլ միայն կփչացնի այն։ Մենք հակված չենք այդպես կարծելու։ Չի կարելի համաձայնել Ա. Ոսկանյանի և Լ. Հովհաննիսյանի կողմից ընդունելի համարվող այն տեսակետին, ըստ որի կարելի է գործածել և՛ հայերեն, և՛ օտար տերմինները, եթե դրանք նույնանիշ են։ Ի՞նչ կշահեր, ասենք, հայոց լեզուն, եթե զուգահեռաբար գործածվեին սպուտնիկը և արբանյակը, տիեզերագնացը և կոսմոնավտը, սեսիան և նստաշրջանը և նման նույնանիշ բառեր. ոչ մի բան։ Դրանով հայերենը ոչ միայն չէր հարստանա, այլև իմաստային շփոթություն առաջ կգար այդ բառազույգերի մեջ։

Իհարկե, սա չի նշանակում, թե մենք անտեսում ենք բժիշկ Հ. Գևորգյանի հոդվածում նկատվող անհաջող թարգմանությունների վերաբերյալ նրանց արած ճիշտ դիտողությունները, սակայն Ա. Ոսկանյանի և Լ. Հովհաննիսյանի դավանած սկզբունքով առաջնորդվելու դեպքում մեր

---

68 «Երևան», 22 I. 1963 թ.։

լեզվի դռները լայնորեն կբացվեն փոխառությունների առջև, և հայերենը կողողվի օտար բառերով։

Ա. Ոսկանյանը մեղադրում է Ռ. Իշխանյանին մաքրամոլության մեջ, գտնելով, որ նա իր տեսական սկզբունքներով մեր լեզուն «խորթ» տերմիններից անխնա բռնաթափելու պահանջ է դնում և ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում, որպեսզի հայերենի մեջ չսողոսկեն «օտար անվանումներ»[69]։

Ա. Ոսկանյանը թեև արտաքուստ դեմ չէ օտար բառերի թարգմանությանը, սակայն փոխառությունները գերադասում է մայրենի լեզվի բառերից, ուստի հաճախ դժգոհում է, երբ փոխառյալ տերմինները թարգմանելու փորձեր են արվում։

Որոշ հեղինակներ լեզվի մաքրությանը և դրա հետ սերտորեն առընչվող փոխառության հարցին անդրադարձել են մամուլում հրատարակված այս կամ այն հոդվածի կապակցությամբ, ոչ հատուկ նպատակադրմամբ։ Այսպես՝ Բ. Հովսեփյանի «Դպրոցը և դասագիրքը» հոդվածը առիթ հանդիսացավ Ա. Ճաղարյանի նամակ-հոդվածին՝ ուղղված «Գրական թերթի» խմբագրությանը, իսկ վերջինիս խմբագրականը պատճառ դարձավ, որ Ա. Բեկզադյանը և Հ. Հակոբյանը հանդես գան հոդվածով։ Եվ այսպիսով, սկիզբ է դրվում յուրահատուկ բանավեճի, ուր բացահայտվում են տվյալ հեղինակի ըմբռնումներն ու պատկերացումները, այլև տեսակետներն ու նկատառումները։

Ա. Ճաղարյանը դժգոհում է, որ Բ. Հովսեփյանը մերժում է օտար կամ ոչ բարեհնչյուն, անճաշակ մի քանի տերմիններ։ Թերթի խմբագրականում հերքվում են Ա. Ճաղարյանի բերած փաստարկները և ճիշտ ու ընդունելի համարվում Բ. Հովսեփյանի տեսակետն ու դիրքորոշումը։ Ըստ Ա. Ճաղարյանի՝ Բ. Հովսեփյանը տեղյակ չէ Ենայի միջազգային կոմիտեի հաստատած և հայ բժշկագիտության մեջ ընդունված անատոմիական անվանացանկին։ Խմբագրական հոդվածում տեղեկացվում է, որ ճիշտ է, Ենայում 1935 թ. հաստատվել է անատոմիական բառակարգը, բայց ոչ թե միջազգային կոմիտեի, այլ գերմանական անատոմիական համագումարի կողմից, որը միջազգային ճանաչման չի արժանացել։ Ա. Ճաղարյանը ըստ երևույթին նկատի ունի փարիզյան միջազգային անատոմիական անվանակարգը, որը իրոք գոյություն ունի և որի հայերեն տարբերակը լույս է տեսել 1962 թ.։ Նշվում է նաև, որ վերոհիշյալ անվանակարգը վերաբերում է բացառապես լատիներեն տերմիններին։ Այդ հանձնաժողովի մշակած որոշման մեջ ասվում է. յուրաքանչյուր երկրի

69 «Լրաբեր», 1969, № 9։

աղատություն է վերապահվում ուսուցման նպատակով թարգմանելու լատինական տերմինները մայրենի լեզվով: Բ. Հովսեփյանը խոսում է հենց այդ մասին, ցույց տալիս, որ աշակերտների համար օտարալեզվյան տերմինները անհասկանալի են, ուստի դրանց փոխարեն պետք է գործածել հայերեն համարժեքները:

Ա. Ճաղարյանը գտնում է, որ թարգմանիչը կոպիտ կերպով կսխալվեր, հրաժարվելով սիստեմ, ներվ, էպիթելային, ռեցեպտոր, պերիֆերիկ, ֆունկցիա, նեյրոն և այլ տերմիններից՝ դրանք փոխարինելով հայերեն նամակարգ, նյարդ, վերնաշերտային, ծայրամաս, դեր, նյարդաբջիջ բառերով: Ըստ Ա. Ճաղարյանի, Բ. Հովսեփյանը պարտադրում է այնպիսի տերմիններ, որոնք կիրառության մեջ չեն և շփոթության մեջ են գցում մասնագետ ընթերցողներին: Իբրև այդպիսիք բերում է արտախորշ, նախախորշ, վերնաշերտային, նյարդաբջիջ և այլն: Խմբագրական հոդվածում ցույց է տրվում, որ այդ տերմինները պարտադրում են ոչ թե Հովսեփյանը, այլ ինքը՝ հայոց լեզուն, սովորության ուժը, բառարանները, լեզվական ճաշակը, նախկին դասագրքերը, այլև փարիզյան անատոմիական բառակարգի հայերեն տարբերակը, որի վրա հիմնվում է Ա. Ճաղարյանը: «Անատոմիական միջազգային նոմենկլատուրայի 96 և 97 էջերում գրված է». «Atrium dextrum —«աջ նախախորշ», «Atrium sinjstrum— «ձախ նախախորշ»: Նշանակում է ճիշտ չէ Ա. Ճաղարյանի մեղադրանքը Բ. Հովսեփյանի հասցեին նաև այդ տերմինների հարցում: «Գրական թերթի» խմբագրականում ընդգծվում է, որ հայերեն համարժեքները հասկանալիությամբ առավելություն ունեն վերը նշված օտար տերմինների նկատմամբ: «վերնաշերտ», «նյարդաբջիջ», «ծայրամաս», «ընդունիչ» տերմինները անմիջապես ընկալվում և հասկանալի են դառնում ամեն մի մասնագետ ու ոչ մասնագետ, գրագետ ու ոչ գրագետ հայի համար, իսկ դրանց լատիներեն համարժեքները իրոք շփոթության մեջ են գցում ոչ մասնագետ ընթերցողներին: Թերթի խմբագրությունը մեղադրում է Ա. Բեկզադյանին և Հ. Հակոբյանին՝ այդ տերմինների հայերեն տարբերակը ստեղծողներին, որոնք մեր մասնագետների շրջանում դարձել են քարացած օրենք, որից շեղվելը համարվում է օրինազանցություն: Մինչդեռ այդ տարբերակում շատ են լեզվաբանորեն սխալ, հնացած, անճաշակ, տգեղ ու օտար տերմինները, որոնցից շեղվելը ոչ միայն օրինազանցություն չէ, այլև պարտադիր է ամեն մի ճաշակավոր, հայոց լեզվին լավ տիրապետող թարգմանչի համար: Խմբագրական հոդվածում անճաշակ են համարվում «սրտի փորոք», «գլխի փորոք», «արյան կարմիր մարմնիկ» տերմինները, որոնց փոխարեն հանձնարարվում են «սրտի խորշ», «սըր-

տախորշ», «գլխի խորշ», «գլխի խոռոչ», «կարմիր դնդիկ» տերմինները, որոնց գործածության համար էլ հենց հանդես էր եկել Բ. Հովսեփյանը:

«Գրական թերթի» նշված դիտողությունների դեմ հանդես եկան Ա. Բեկզադյանը և Հ. Հակոբյանը «Անատոմիական մի քանի տերմինների մասին»[70] խորագիրը կրող հոդվածում: Նրանք գտնում էին, որ թերթը չի հիմնավորում իր ասածները, ցույց չի տալիս ոչ մի հեղինակավոր աղբյուր ի հաստատումն իր տեսակետի: Ըստ Բեկզադյանի և Հ. Հակոբյանի, սխալ է «ներվը» «նյարդ»-ով փոխարինելը, քանի որ դրանով իբր կվերականգնվեր նյարդ, ջիղ, ջիլ, աճառ տերմինների կիրառման մեջ նախկինում եղած խառնաշփոթությունն ու անորոշությունը, որոնք արդեն վերացվել են: Օտար տերմինը ազգային համարժեքներով փոխարինել նշանակում է քաոսային վիճակ ստեղծել լեզվի մեջ, այս է հոդվածագրիների եզրակացությունը: Բեկզադյանը և Հակոբյանը սխալ են համարում նաև էպիթելը՝ վերնաշերտ, էպիթելայինը՝ վերնաշերտային թարգմանելը: Մի փոքր վերապահություն է արվում սխտեմ, ավտոնոմ տերմինների նկատմամբ, որոնց թարգմանությունը նպատակահարմար չի համարվում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանք վաղուց մերվել են մեր լեզվին: Դուրս է գալիս, որ չկա որևէ սկզբունք, որով կարելի լիներ առաջնորդվել փոխառյալ և ազգային տերմինների գործածության մեջ: Բեկզադյանի և Հակոբյանի եզրակացությունը մեկն է. պահպանել օտար տերմինները, անկախ հայոց լեզվի մեջ դրանց ազգային համարժեքների առկայությունից, որ չի կարող չմերժվել հայերենի մաքրության խնդրով շահագրգռված ցանկացած մարդու կողմից:

Այսպիսով, փոխառության հարցում Բ. Հովսեփյանը և «Գրական թերթի» խմբագրությունը պաշտպանում են ճիշտ ու առողջ տեսակետ, իսկ Ա. Ճաղարյանը, նաև Ա. Բեկզադյանը և Հ. Հակոբյանը ոչ ճիշտ մոտեցում են ցուցաբերում այդ խնդրի նկատմամբ:

«Գրական թերթը» լեզվի մաքրության ու փոխառության որոշ հարցեր քննության է առել նաև այլ հոդվածներում: Այսպես՝ լրագրի 1964 թ. փետրվարի 7-ի համարում տպագրվեց «Ջաղարտենք մեր սքանչելի լեզուն» խորագրով առաջնորդողը, որտեղ դատապարտվում էր այն մաքրամոլությունը, որը միտում է մեր լեզվի զարգացումը խցկել ինչ-որ կաղապարի մեջ և նրա հարստության միակ աղբյուրը որոնում է գրաբարի ու բարբառների մեջ, որոնք կարևորագույն ակունքներ են, որոնցից սնվել ու սնվում է մեր պետական լեզուն, որը, սակայն, չի կարող հրաժարվել այն

---

70 «Առողջապահություն», 1966, № 2, էջ 42—46:

«թարմ» աննդից, որ տալիս է կենդանի իրականությունը՝ իր նոր երևույթներով, դիտության ու տեխնիկայի նոր հայտնագործություններով։

Մեծ ու կարող է համարվում այն լեզուն, որ ի վիճակի է ընդունել նորամուծություններ, անել փոխառություններ և այդ բոլորը մարսել ու ենթարկել իր սեփական օրենքներին։ «Գրական թերթի» խմբագրությունը պահանջում է պահպանել լեզվի մաքրությունը, պայքարելով մի կողմից մաքրամոլական միտումների, մյուս կողմից՝ անհարկի փոխառությունների դեմ։ Նկատենք, միաժամանակ, որ խմբագրությունը լեզվի մաքրության ու անաղարտության վրա բացասաբար ազդող գործոն է համարում հայերեն անհաջող բառակազմություններր։

«Գրական թերթի» խմբագրությունը փոխառության հարցին անդրադարձել է նաև «Իրականում ինչի՞ մասին է բանավեճը»[71], հոդվածում, որը ուղղված է Ա. Ոսկերչյանի տեսակետների դեմ, որոնք նա արտահայտել է «Սովետական դրականություն» (1967, № 7) ամսագրում և «Գրական թերթում» (24. 1. 1969)։ Այստեղ ցույց է տրվում, որ Ա. Ոսկերչյանի տեսակետները չեն համընկնում տերմինաբանական կոմիտեի որոշման հետ, չնայած նա այդպես է հայտարարում։

«Գրական թերթի» խմբագրությունը, ելնելով հայերենի մաքրության շահերից և հաշվի առնելով նրա պատմականորեն կազմավորված ավանդույթները, պաշտպանում է միանգամայն ընդունելի տեսակետ, մերժելով անհարկի փոխառությունները և անհրաժեշտ համարելով դրանք սեփական լեզվի ներքին միջոցներով արտահայտելը։

«Լեզվական նոր պահանջներին համընթաց»[72] հոդվածում Գ. Մարտիրոսյանը մի շարք կարևոր ու նուրբ դիտողություններ է անում փոխառյալ բառերի օգտագործման վերաբերյալ։ Ի նպաստ հեղինակի, նշենք, որ նրա կարծիքները հիմնականում բխում են տերմինաբանական կոմիտեի որոշումներից և ելնում հայերենի մաքրության և բառերի հասկանալիության շահերից։ Գ. Մարտիրոսյանը խրախուսելի է համարում օտար մի շարք բառերի հայերեն թարգմանությունները, գտնելով, որ նրանք լիովին արտահայտում են փոխառյալ բառերի իմաստները։ Իրրև այդպիսիք բերվում են տիեզերանավ, տիեզերադաշտ, տիեզերակայան, հեռակետ, մերձակետ, ձևնակառավարում, տիեզերատեսություն, տեսադրանցում, լուսնագնաց, լուսաչափական և այլն։ Հոդվածագիրը անարդարացի է համարում տերմինաբանական կոմիտեի 1940 թվականի որոշումը՝ կուսակցություն, հեղափոխություն, հանրապետություն և այլ բա-

71 «Գրական թերթ», 31. 1. 1969 թ.։

72 «Լրաբեր», 1971, № 6, էջ 87—94։

ները գործածությունից հանելու և դրանք օտար համարժեքներով փոխարինելու վերաբերյալ, գտնելով, որ դրա ազդեցությամբ մամուլում և գրականության մեջ լայնորեն կիրառվում էին հարյուրավոր փոխառություններ, թեև կային դրանց հայերեն համարժեքները։ Ա. Մարտիրոսյանը նշում է, որ վերջին հինգ տարում սկսվեց օտար տերմինները հայերենով արտահայտելու մի առողջ շարժում, որի մեջ իր ավանդն ունի նաև Արմենպրեսի թարգմանությունների բաժինը։ Արմենպրեսը վերջին տարիներին թարգմանեց օտարալեզվյան մի շարք բառեր, որոնք այժմ լայն գործածություն ունեն և լիովին արտահայտում են փոխառյալ բառերի իմաստները։ Այդպիսիք են մտավորականություն, տեսություն, վերականգնում, գազափարախոսություն, առաջադիմություն, համայնապատկեր, վավերագրական, արտադրամաս, հաղորդավար, երթուղի, ցուցանմուշ, գափնեկիր, փառատոն, տպաքանակ, գիտաժողով, ուղերթ, ախտորոշում և այլն։ Գ. Մարտիրոսյանը հաջողված թարգմանություններ է համարում «Ավանգարդ», «Երեկոյան Երևան», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթերի ստեղծած սուպագյց, մակնիշ, հարկաշատ, բնակարանամուտ, մարզիկ, մրցավար, խաղավար, ցատկորդ և այլ բառերը՝ գտնելով, որ օտար տերմինների թարգմանության և հայերեն համարժեքների ստեղծման առողջ միտումը պետք է շարունակվի և խրախուսվի։ Գ. Մարտիրոսյանը միաժամանակ դատապարտում է այդ հարցում նկատվող որոշ ծայրահեղություններ, երբ կերտվում են այնպիսի բառեր, որոնք օտար բառերի համարժեքը չեն և չեն արտահայտում նրա իմաստային նրբերանգները։ Այսպես՝ ըստ նրա ճիշտ չէ կոմպոզիտորը՝ երգահան, գաստրոլը՝ հյուրախաղ, դիրիժորը՝ նվագավար, ստադիոնը՝ մարզադաշտ, ստարտը՝ մեկնարկ (ելագիծ), ֆինալը՝ եզրափակիչ և այլն թարգմանելը։ Անհաջող թարգմանություններ է դիտում նաև չեմպիոն, պոմիդոր, բադրիջան, կոմպլեքս, սեզոն, լյուկ բառերի հայերեն համարժեքները՝ ախոյանը, լոլիկը, սմբուկը, նամալիրը, դարձաշրջանը, դիսաիոը և այլն։ Գ. Մարտիրոսյանը նշում է, որ որոշ թարգմանություններ թեև ճիշտ են, բայց կիրառելի չեն բոլոր դեպքերի նկատմամբ, քանի որ մի դեպքում թարգմանությունը ճշտորեն արտահայտում է փոխառյալ բառի իմաստը և լիովին համարժեք է նրան, իսկ մի ուրիշ դեպքում լիովին չի դրսևորում այն։ Այսպես՝ կուլտուրա բառը, ըստ նրա, ոչ բոլոր դեպքերում կարելի է մշակույթով փոխարինել։ Չի կարելի տարածել կուլտուրական հեղափոխություն, ժողովրդի կուլտուրական մակարդակ կապակցության վրա (մշակութային հեղափոխություն, ժողովրդի մշակութային մակարդակ)։ Սխտեմը կարելի է փոխարինել համակարգով (նյարդային

համակարգություն, խոնարհման համակարգ, արեգակնային համակարգություն), բայց դա կիրառելի չէ կրթության սիստեմ, հասարակական-քաղաքական սիստեմ, սոցիալիստական սիստեմ, տիեզերանավի սիստեմ և այլ կապակցություններում թարգմանելիս։ Ճիշտ չի համարում անսամբլը՝ հավույթ, կոնկուրսը՝ մրցաճակաբաշխություն թարգմանելը և այլն։ Անարդարացի է դիտում մեր լեզվից փոխառյալ այնպիսի բառերի դուրս դցելը, որոնք հասկանալի են ժողովրդական լայն մասսաներին և վաղուց ի վեր արմատացած են առօրյա կյանքում և գրականության մեջ։ Պահանջում է պահել այդ կարգի բառերը, միաժամանակ խնդիր է դնում թարգմանելու անեքսիա, կոմունիկացիա, էքսպոզիցիա, ասոցիացիա, ասամբլեա, ալտերնատիվ, էսկալացիա և նման այլ բառեր, որոնք անհասկանալի են ընթերցողների լայն շրջանների համար։ Գ. Մարտիրոսյանը կարևոր է համարում օրգան-մարմին, կուլտուրա-մշակույթ, էկոնոմիկա-տնտեսություն, կոնցերտ-համերգ տերմինների իմաստային եբրանգների ճիշտ տարբերակման ապահովումը։ Հիմնականում ընդունելի համարելով Գ. Մարտիրոսյանի նկատառումները, նշենք մի երկու մասնակի անճշտություններ։

ա) Հեղինակի կարծիքով օտարալեզվյան տերմինները հայերենով փոխարինելու առողջ շարժումը սկսվել է վերջին հինգ տարում, այսինքն՝ 1966 թվականից, այնինչ այն որոշակիորեն զգացվում է դեռևս 1950-ական թվականներից։

բ) Նշում է, թե մի քանի տարի առաջ Արմենպրեսը թարգմանում էր օտար բառեր, որոնք այժմ փոխարինվել են հայերեն անթերի համարժեքներով։ Բերված ցանկում կան այնպիսի թարգմանություններ, որոնք ոչ միայն Արմենպրեսինը չեն, այլև բոլորովին նոր չեն (մտավորականություն, տեսություն, գաղափարախոսություն, առաջադիմություն, ինքնավար և այլն)։

գ) Դեմ է գաստրոլը՝ հյուրախաղ, ստադիոնը՝ մարզադաշտ, ստարտը՝ մեկնարկ կամ ելադիծ, ֆինալը՝ եղրափակիչ, կոմպլեքսը՝ համալիր և այլն թարգմանելուն, գտնելով, որ դրանով կա՛մ աղավաղվում է բառի իմաստը, կա՛մ էլ չի ընդգրկում օտար բառի բոլոր առումները։ Նկատենք, որ այդ և նման շատ բառեր անկախ որևէ մեկի կամքից ու ցանկությունից մտել են հայոց լեզվի բառային կազմի մեջ և լայն տարածում ու գործածություն ստացել։ Դրանք իմաստային տեսակետից բոլորովին չեն պիջում փոխառյալ ձևերին և ոչ էլ աղավաղվում է բառիմաստը։ Օտար բառերի բոլոր առումները նրա հայերեն համարժեքների մեջ չընդգրկվելը դեռևս բավարար հիմք չի կարող հանդիսանալ այդպիսիք

առանց թարգմանության գործածելու համար։ Նախ՝ հնարավոր է, որ ազգային համարժեքները գործածվեն օտարալեզվյան բառերի բոլոր առումներով, և իհարկե, դրանից ոչինչ չի տուժի. երկրորդ՝ բոլորովին էլ պարտադիր չէ, որ ներմուծված բառի բոլոր նրբերանգներն ու առումները դրսևորվեն նոր բառակերտումների մեջ։ Այնուամենայնիվ խնդրին այդ տեսանկյունից մոտենալու դեպքում հաջող համարված շատ ու շատ թարգմանություններ, որոնք ընդունում է Գ. Մարտիրոսյանը, քննության չեն դիմանա։

Փոխառության հարցում Գ. Մարտիրոսյանը հիմնականում ճիշտ տեսակետի վրա է կանգնած, սակայն առանձին բառերի վերաբերյալ արած նրա դիտողությունները հիմնավոր և ընդունելի չեն։

Փոխառության վերաբերյալ բացված բանավեճում հանդես եկավ մանկավարժ-թարգմանիչ Վ. Մանուկյանը «Տերմինաբանության մի քանի հարցեր»[73] հոդվածով։ Հեղինակը գտնում է, որ օտար տերմինների կարելի է դիմել միայն այն ժամանակ, երբ հայերենում համապատասխան բառեր չկան կամ էլ լեզուն ի վիճակի չէ առայժմ ստեղծելու դրանք։ Այդ սկզբունքը, որ բխում է տերմինաբանական կոմիտեի մշակած որոշումներից, համապատասխանում է հայոց լեզվի զարգացման ընթացքին և հաշվի առնում նրա մաքրության շահերը։ Վ. Մանուկյանը նկատում է, որ բավարար չափով չհիմնավորված, պատահականորեն մտած օտարալեզվյան բառերը ժամանակի ընթացքում դուրս են նետվում որպես անմարսելի, անհարիր տարրեր (մարկա, վիտրինա, կոմպլեքս, կորպուս, ցեխ, շտանգա, շտանգիստ, ունիվերմագ և այլն)։ Հիմնականում համամիտ լինելով հեղինակի արտահայտած մտքին, նշենք, որ կոմպլեքս, կորպուս և հատկապես ունիվերմագ բառերը դեռևս դուրս չեն մղվել գործածությունից։ Այժմ դրանք խոսակցական լեզվում օգտագործվում են հայերեն համարժեքներին զուգահեռ, իհարկե, վերջիններիս նկատելի ակտիվացմամբ։ Հոդվածում ճշտորեն գատապարտվում է միևնույն տերմինի համար մի քանի համարժեքների ստեղծումը։ Այդպիսի երևույթների առաջ գալու պատճառ են դառնում թարգմանական բառարանները, ուր հանդիպում են միևնույն բառի տարբեր թարգմանություններ (անալիզ-վերլուծում, տարրալուծում, տելեսկոպ—աստղադիտակ, հեռադիտակ և այլն), երբեմն էլ որոշ բառարաններ տվյալ տերմինը գործածում են առանց թարգմանության, իսկ ուրիշ բառարաններ էլ այն արտահայտում են հայերեն համարժեքներով, որով էլ հենց առաջ են գալիս փոխառյալ և ազգային ձևերի զուգահեռ գործածություններ (անալիտիկ

---

73 «Լրաբեր», 1971, № 8։

և վերլուծական, թեորիա և տեսություն և այլն)։ Վ. Մանուկյանը ճշտորեն գտնում է, որ եթե կա ներմուծված տերմինի իմաստային համարժեքը, ապա բոլորովին հարկ չկա դրա կողքին նորից դնելու օտար բառը, որպես նրան համարժեք։ Այսինքն՝ ավելորդ է համարում զուգահեռ ձևերի գործածությունները։ Հոդվածում բերում է օտարալեզվյան բառային միավորների ոչ մեծ մի ցանկ և յուրաքանչյուրի դիմաց՝ հայերեն համարժեքը, միաժամանակ նշում է չհանձնարարվող թարգմանական ձևը։ Ի նպաստ հեղինակի, նշենք, որ թարգմանությունները հիմնականում հաջող են կատարված, դրանցով ճշտորեն դրսևորվում են փոխառյալ բառերի իմաստները։

Վ. Մանուկյանի նկատառումները հիմնականում ընդունելի են, թեև կարելի է վիճարկել նրա առաջարկած որոշ թարգմանություններ։

Փոխառության հարցը արծարծված է նաև Հ. Հովհաննիսյանի «Ճիշտ օգտագործել տերմինները»[74] հոդվածում։ Հեղինակը իրավացիորեն նշում է, որ ժամանակակից բժշկության բուռն զարգացումը լուրջ պահանջներ է դնում բժշկական տերմինների ստեղծման և թարգմանության առջև, և չնայած զգալի ավանդ է ներդրվել այդ ասպարեզում Վ. Արծրունու, Մ. Աբեղյանի, Լ. Հովհաննիսյանի, Ա. Տեր-Պողոսյանի կողմից, իսկ 1973 թ. ստեղծվել է բժշկական տերմինաբանական խորհուրդ, սակայն մեր մասնագիտական և պարբերական մամուլում հանդիպող բժշկական տերմինների վերաբերյալ կարելի է անել լուրջ դիտողություններ։ Ընդգծվում է այն միտքը, թե մեր բժշկագիտությունը էապես կշահի, եթե ճիշտ իրականացվի տերմինների թարգմանության գործը։

Հեղինակը իրավացիորեն դժգոհում է «Առողջապահություն» հանդեսում օտարալեզվյան մի շարք տերմինների անտեղի գործածությունից, գտնելով, որ դրանք պետք է թարգմանաբար կիրառել, քանի որ հայերենը այդ հնարավորությունը ընձեռում է։ Այսպես՝ պահանջում է ցերեբրալը թարգմանել ուղեղային, ինտոքսիկացիան՝ ներթունավորում, ռեզուսֆակտորը՝ ռեզուսգործոն, պոստնատալը՝ ետծննդյան և այլն։ Առաջարկում է ասֆիկսիա, հեմոդինամիկա, ացիդոզ, տետրապարեզ, հեմիպլեգիկ, ֆլեբսոր, կոնտրակտուրներ, դեֆորմացիաներ, էքսպերիմենտալ, օպերաբիլություն և այլ բառերի փոխարեն գործածել շնչահեղձուկ, արյան դինամիկա, թթվագարություն, բառապարեզ, կիսապարալիզային, ծալիչ, կրծկանմ, այլաձևություններ (կամ տձևություններ), փորձաբարական, վիրահատելիություն և այլն։ Նկատենք, որ նշված տերմինների փոխարեն հեղինակի առաջարկած հայերեն համարժեքները ընդունելի են և ոչնչով

74 «Սովետական Հայաստան», 7. 10. 1976 թ.։

չեն դիջում փոխառություններին: Դրանք նպաստում են հայերենի բառային կազմի մաքրությանն ու անաղարտությանը:

Հ. Հովհաննիսյանը նշում է, որ երբեմն էլ սխալ թարգմանության պատճառով տերմինները հակառակ իմաստ են ստանում, բերում է տերմինների սխալ օգտագործման այլևայլ օրինակներ: Հ. Հովհաննիսյանը պահանջում է օտարալեզվյան տերմինները թարգմանաբար կիրառել, քանի որ հայերենը այդ հնարավորությունն ունի: Իհարկե, բերված օրինակների նկատմամբ կիրառելի է այդ տեսակետը, սակայն չի կարելի տարածել բոլոր դեպքերի վրա, քանի որ բացի լեզվի ընձեռած հնարավորություններից, գոյություն ունեն նաև այլ հանգամանքներ, որոնք ավելի կարևոր են:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՅՈՒՅԱԲԵՐՎՈՂ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Պետք է նկատել, որ արևելահայ և արևմտահայ գրական լեզուները զարգացման այլ ընթացք ստացան: Առաջինի զարգացումը ապահովվեց պետականորեն: Ստեղծվեցին հասարակական-քաղաքական անհրաժեշտ պայմաններ նրա հարստացման ու առաջընթացի համար, մի բան, որից զուրկ մնաց արևմտահայերենը: Ահա թե ինչու փոխառության հարցում տարբեր քաղաքականություն է վարվում արևելահայ և արևմտահայ լեզուների նկատմամբ:

Արևմտահայերենը խորշում է փոխառություններից, թարգմանելով միջազգային ճանաչում գտած գիտական ու տեխնիկական գրեթե բոլոր բառերն ու տերմինները, ստեղծելով «հայացի» տերմիններ, որոնք հաճախ թուլացնում կամ աղճատում են նրանց օտար համարժեքների իմաստն ու նշանակությունը: Դա, իհարկե, պայմանավորված էր արևմտահայերենի պատմական ճակատագրով, ստեղծված քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմաններով, ուրիշ ժողովուրդների հետ ձուլվելու վտանգի առկայությամբ և այլն: Իշխող ժողովուրդների հետ չձուլվելու համար անհրաժեշտ էր պաշտպանել մայրենի լեզուն՝ ժողովրդի ազգային կերպարանքի հիմնական հատկանիշը: Կորցնել այդ հատկանիշը նշանակում է կորցնել ազգային կերպարանքը և դադարել ինքնուրույն ժողովուրդ լինելուց: Այդ բանի գիտակցումն էր, անշուշտ, ստիպում արևմտահայերին խուսափել ամեն տեսակի փոխառություններից, լեզուն անջրպետել նրա անաղարտությանը վնասող ամեն ինչից: Այդ քաղաքականությունը, որ արևմտահայ գրական լեզվի նկատմամբ

վաղուց է կիրառվում, գրեթե նույնությամբ շարունակվում է նաև մեր օրերում[75]։

Օտարալեզվյան բառերը հայացնելու տեսակետ է պաշտպանում է. Բաբայանը, որը շատ արժեքավոր թարգմանությունների հետ բերում է ոչ ընդունելի թարգմանություններ։ Այսպես՝ ճիշտ թարգմանություններ են՝

աբոնենտ — բաժանորդ
ադմիրալ — ծովակալ
ալտերնատիվ — երկընտրանք
բիոլոգիա — կենսաբանություն
պարտիա — կուսակցություն
ռեկորդ — մրցանիշ
սպորտսմեն — մարզիկ
տուրիստ — զբոսաշրջիկ և այլն։

Հեղինակը իրավացիորեն պահանջում է գործածության մեջ դնել օտարաբղի բառերի հայերեն համարժեքները, որոնք չեն զիջում փոխառյալ ձևերին ո՛չ հատկանալիությամբ, ո՛չ կազմությամբ, ո՛չ ստուգաբանորեն և ո՛չ էլ ուրիշ հատկանիշներով։ է. Բաբայանը, սակայն, առաջնորդվելով հայերենը օտարալեզվյան բառերից իսպառ մաքրելու սկզբունքով, ընկնում է ծայրահեղության մեջ։ Նա վերոհիշյալ ընդունելի թարգմանությունների շարքում նշում է նաև այնպիսինները, որոնք լիովին չեն դրսևորում փոխառյալ բառերի իմաստները, թարգմանությամբ աղճատվում կամ թուլացվում են դրանց նշանակությունները.

Այդպիսիք են՝
ալիմենտ — սնունդ
ասպիրանտ — թեկնածու
դաստրոնոմ — որկրամոլ, որովայնասեր
դեկան — ուսուցչապետ
դիալեկտիկա — բանակռիվ
դոցենտ — ուսուցչապետ
ֆակուլտետ — ուսուցչանոց

---

75 Արևմտահայ մի երկու հեղինակների տեսակետներին անդրադառնում ենք սոսկ հաբևանցիորեն՝ ցույց տալու արևմտահայերի մոտ իշխող ըմբռնումներն ու մտայնությունը մի կողմից, արևելահայ և արևմտահայ լեզուների նկատմամբ կիրառվող քաղաքականության վանազանությունը՝ մյուս կողմից։

կոմունիզմ — համայնավարություն
չեմպիոն — ախոյան, առաջամարտիկ
պասսիվ — կրավորական
պրոֆեսոր — ուսուցչապետ
սենատ — ծերակույտ
տանկ — հրատայլ
ցեմենտ — կրաղյուս
ֆիզիոլոգիա — բնախոսություն և այլն[76]։

Միանգամայն պարզ է, որ հեղինակը կանգնած է ամեն ինչ հայացնելու, ազգային ձևը գերագնահատելու դիրքերի վրա։ Ըստ Բաբազյանի հիշյալ թարգմանության, դեկան, դոցենտ և պրոֆեսոր բառերի իմաստները նույնացվում են, հանգեցվելով ուսուցչապետ բառի նշանակությանը, մի բան, որ ճիշտ չէ, այնուհետև՝ տանկը թարգմանվում է հրատայլ, գաստրոնոմը՝ որկրամոլ և այլն։ Մինչդեռ դրանք իմաստով իրարից խրստորեն զանազանվում են։ Ջախտը է բառիմաստի աղավաղման կամ աղճատման գնով օտարաբեզվյան բոլոր կարգի բառերը հայացնել։

Օտար բառերը հայոց լեզվից դուրս մղելու տեսակետի վրա է կանգնած նաև Հակոբ Թորոսյանը, որը Բեյրութում հրապարակած իր «Լեզվաշինություն» գրքում գտնում է, որ հայոց լեզվի մեջ գործածվող օտար բառերի մեծ մասը կարելի է արտահայտել հայերեն բառակերտությամբ։ Նա բերում է բազմաթիվ օտար բառեր, որոնց հայերեն համարժեքները վաղուց գործածվում են մեր լեզվում և անշուշտ նախընտրելի են օտարազգի ձևերի նկատմամբ։ Հեղինակը իրավացիորեն պահանջում է դրանք փոխարինել հայերեն բառերով. դրանցից են՝

աբսոլյուտ — բացարձակ
աբստրակտ — վերացական
աբսուրդ — անհեթեթ
ինտերնացիոնալ — միջազգային
լիրիկա — քնարերգություն
կլասիկ — դասական
ագրոնոմ — գյուղատնտես
արգումենտ — փաստարկում
բրոշյուր — գրքույկ

---

76 «Օտարաբանություններ հայ լեզուին մէջ», Բ տպագրութիւն (Յաւելեալ և ճոխացեալ) անդրադարձում է. Բաբազեանէ, Գահիրե, 1959։

էքսպեդիցիա — արշավ
կրիզիս — ճգնաժամ
պավիլիոն — տաղավար և այլն։

Հ. Թորոսյանը, սակայն, այս բառերի միանգամայն ընդունելի թարգմանությունների կողքին առաջարկում է թարգմանել նաև հետևյալ բառերը.

ակադեմիա — կաճառ
գեներալ — զորավար
ինդուստրիա — ճարտարվեստ
ինժեներ — երկրաչափ, ճարտարապետ
կապիտալ — դրամագլուխ
դվարդիա — ջոկատ
դեմոկրատիա — ռամկավարություն
դիալեկտիկա — բանավեճ
դիվիզիա — զորաբաժին
ժյուրի — դատակազմ
սոցիալիզմ — ընկերավարություն
օբյեկտիվ — առարկայական
հեգեմոնիա — գերագահություն
մաթեմատիկա — ուսողություն
միլիցիա — ոստիկանություն
ունիվերսալ — համաշխարհային
չեմպիոն — ախոյան
ֆիզիկա — բնագիտություն
ֆիզիոլոգիա — բնախոսություն և այլն[77]։

Ինչպես տեսնում ենք, օտարաբանությունները մեր լեզվից իսպառ վերացնելու նպատակով, հեղինակը առաջարկում է նաև այնպիսի թարգմանություններ, որոնք համարժեք չեն փոխառյալ բառերին, և դրանց թարգմանությունը աղճատում է բառիմաստը։ Ակնհայտ է բոլոր տեսակի փոխառությունները «հայաշունչ» բառերով փոխարինելու միտումը։

---

77 Յակոբ Թորոսեան, *Լեզուաշինութիւն (Համազգային գրական լեզուի մը կերտումին խնդիր)*, Պէյրութ, 1964։

Փոխառության վերաբերյալ տեսակետների քննությունից կարելի է անել հետևյալ եզրակացությունները՝

1. Արևելահայ իրականության մեջ փոխառության հարցում միատեսակ մոտեցում չի ցուցաբերվել: Առաջ են քաշվել հիմնականում երկու տեսակետներ, որոնցից մեկը ճիշտ է և ընդունելի և համապատասխանում է տերմինաբանական կոմիտեի որոշումներին, իսկ մյուսը սխալ է ու չհիմնավորված և անտեսում է այդ որոշումները: Առաջին տեսակետը պաշտպանողները իրավացիորեն դեմ են անհարկի փոխառություններին, գտնելով, որ փոխառության պետք է դիմել միայն անհրաժեշտության դեպքում, երբ լեզվի ներքին միջոցներով հնարավոր չէ արտահայտել փոխառյալ բառի իմաստն ու նշանակությունը: Սա միանգամայն իրավացի պահանջ է, բխում է մեր լեզվի մաքրության շահերից և հաշվի է առնում հայերենի ավանդույթներն ու բառակազմական առանձնահատկությունները: Այդ սկզբունքները հիմնականում պաշտպանում են Ե. Զարենցը, Հ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, Պ. Սևակը, Բ. Հովսեփյանը, Մ. Աբեղյանը, Գր. Գափանցյանը, Հր. Աճառյանը, Գ. Սևակը, Ս. Գազարյանը, Է. Ազայանը, Գ. Ջահուկյանը, Ա. Աբրահամյանը, Ս. Աբրահամյանը, Գ. Մարտիրոսյանը, Վ. Մանուկյանը, Հ. Հովհաննիսյանը և ուրիշներ:

Մյուս տեսակետի կողմնակիցները ողջունում են բոլոր կարգի փոխառությունների մուտքը հայերենում: Նրանք ոտնահարում են մայրենի լեզվի մաքրության շահերը, նրա դարավոր ավանդույթներն ու բառաստեղծական հնարավորությունները և այլ հատկանիշներ, միաժամանակ անտեսում են տերմինաբանական կոմիտեի որոշումներն ու հրահանգները: Այդ տեսակետի վրա են կանգնած հիմնականում Հ. Մելիքյանը, Պ. Նազարյանը, Ա. Ոսկերչյանը և ուրիշներ, որոնք ամեն կերպ ճգնում են տեսականորեն հիմնավորել իրենց սկզբունքները և այդ բանին հասնելու համար հաճախ ազատազում կամ նենգափոխում են հեղինակավոր անձանց ասույթները, երբեմն էլ՝ խեղաթյուրում լեզվական փաստերը:

2. Լեզվի մաքրության որոշ ջատագովներ, հիմնականում պաշտպանելով ճիշտ և ընդունելի սկզբունքներ և առաջարկելով բազմաթիվ հաջող թարգմանություններ, երբեմն ընկնում են որոշ ծայրահեղության մեջ՝ պահանջելով նաև օտար այնպիսի բառերի թարգմանություններ, որոնք լիովին հասկանալի են հայի համար, վաղուց արմատավորվել են մեր լեզ-

վում, դարձել նրա հարազատ տարրը և ոչ մի իմաստ չունի դրանց հայերեն համարժեքով փոխարինումը։ Այդ ծայրահեղությունը նկատվում է Ռ. Իշխանյանի և Հ. Գևորգյանի հոդվածներում։

3. Փոխառության ու լեզվի մաքրության վերաբերյալ մի շարք հոդվածներ ու ելույթներ, առաջարկություններ ու նկատառումներ կարևոր դեր կատարեցին՝ տեսական ճիշտ կողմնորոշում տալով հրատարակչություննների, թերթերի, ամսագրերի և այլ խմբագրություններին, թարգմանիչներին, որոնց ջանքերով վերջին տարիներին կատարվեցին ոչ քիչ թվով բառերի հաջող թարգմանություններ, առաջ եկան նոր բառակերտումներ, որոնք փոխարինեցին օտար համարժեքներին՝ նպաստելով հայոց լեզվի հարստացմանը։ Նկատելի է, որ արհեստական, շինծու, ոչ ճիշտ բաղմաթիվ թարգմանություններ ժամանակի ընթացքում արտամղվում են լեզվի կողմից։ Այդպիսի ճակատագիր են ունենում նաև անհարկի, ոչ տեղին, ոչ անհրաժեշտաբար կատարված շատ փոխառություններ։

4. Արևմտահայ իրականության մեջ տարվում է լեզվի մաքրությունն ու անաղարտ վիճակը պահպանելու, օտար բոլոր բառերը լեզվից դուրս մղելու, դրանք հայացնելու, հայերեն համարժեքներով փոխարինելու քաղաքականություն։ Այդ նպատակով փորձ է արվում բոլոր կարգի փոխառությունները կիրառել թարգմանաբար, ստեղծելով մայրենի լեզվի համարժեքներ՝ հաճախ անտեսելով բառի իմաստային համապատասխանությունն ու լիարժեքությունը, հասկանալիությունն ու մատչելիությունը, բառակազմական ու այլ կարգի հատկանիշները և այլն։ Նկատենք, որ փոխառյալ բառերի դիմաց կերտված հայերեն բաղմաթիվ բառեր այլևայլ հատկանիշներով առավելություն ունեն, սակայն դրանց կողքին առաջ են գալիս նաև մի շարք բառակերտումներ, որոնց իմաստները աղճատված են, չեն համապատասխանում օտար բառերի նշանակություններին, խիստ արհեստական են ու շինծու։ Լեզվի նկատմամբ վարած այդ քաղաքականությունը պայմանավորված է արևմտահայերի հասարակական-քաղաքական կյանքի պայմաններով, ինքնուրույն պետականության բացակայությամբ, այլ ժողովուրդների հետ ձուլվելու վտանգի առկայությամբ և այլ հանգամանքներով։

Ռ. Խ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԲԱՌԱԲԱՐԴՄԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայերենի բառապաշարի գրալի մասը կազմող բարդ բառերը քննության առարկա են դարձել մի շարք լեզվաբանների աշխատություններում, որոնցում կատարված է բարդ բառերի բառակազմական, իմաստաբանական ուսումնասիրություն։

Հայ ականավոր լեզվաբան Ա. Այտընյանն իր նշանավոր քերականության մեջ, անդրադառնալով բարդ բառերին, խոսում է նրանց կառուցվածքային մի շարք առանձնահատկությունների՝ մեկից ավելի արմատներից բաղադրված լինելու, հոդակապով և անհոդակապ բարդ բառերի, ինչպես նաև շաղկապներով միացած բաղադրիչներ ունենալու մասին[1]։

Այնուհետև նա նշում է, որ բարդ բառերը կարող են բաղադրվել տարբեր խոսքի մասերից և դառնալ նոր գոյականներ, ածականներ, մակբայներ[2]։

Քննական քերականության հեղինակը յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում հարադրական բայերն ուսումնասիրելիս, դրանք համարում է ոճեր, առանց ընդգծելու հարադրական բայերի բայական արժեքը[3]։

Ստ. Պալասանյանը, բարդ բառերը քննելիս, հիմնական հարցերում հետևել է Ա. Այտընյանին։ Սակայն նա այլ մոտեցում է ցուցաբերել հարադրական բայերի հարցում, դրանք, համարելով բարդության մի տեսակ, դիտում է որպես ինքնուրույն բայեր։ Պալասանյանը գրում է. «Արեվելյան հայ լեզվին առանձին զարդ ու գեղեցկություն են տալիս գոյակա-

---

1 Ա. Այտընյան. *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի հանդերձ ներածությամբ և հավելվածով, Վիեննա, 1866, էջ 303—310։*

2 *Նույն տեղում, էջ 307—308։*

3 *Նույն տեղում, էջ 318։*

նով կամ բայի արմատով ու բայով կազմված բաղադրյալ բայերը և ոճերը, որոնցից ոմանք միայն բաղադրական ձևով կարող են վարվիլ, ուրիշները մեկ բառով էլ»: Այնուհետև, բերելով համապատասխան օրինակներ, ցույց է տալիս վերլուծական ու համադրական ձևերով արտահայտված բայերի իմաստային տարբերությունները (քարշ տալ—քաշել, թափ տալ—թափել)[4]:

Բարդ բառերի ուսումնասիրությունը նոր աստիճանի բարձրացրեց անվանի հայագետ Մ. Աբեղյանը: Նա «Հայոց լեզվի տեսություն» մեծարժեք աշխատության մեջ տվել է հայերենի բարդ բառերի բազմակողմանի ուսումնասիրությունը: Աբեղյանն իր ուսումնասիրությունը կատարել է հարուստ փաստական նյութի հիման վրա և քննել է բարդ բառերն իրենց տեսակներով, իմաստային-կառուցվածքային առանձնահատկություններով: Նա նշել է նաև տարբեր ձևաբանական կառուցվածք ունեցող բարդություններով զանազան խոսքի մասեր կազմելու հնարավորության մասին:

Այսպես, «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ Մ. Աբեղյանը գրում է, որ գոյականների, ածականների ու բայարմատների բաղադրությամբ գոյականների հետ՝ կազմվում են գոյականներ: «Երկրորդ բաղադրիչը, որ գոյական է, պահում է իր հիմնական նշանակությունը, իսկ առաջին բաղադրիչը, լինի գոյական, ածական, թե բայարմատ, ունի սեռական կամ ածական վերադրի նշանակություն»[5]:

Այնուհետև խոսվում է հետևյալ կաղապարների մասին. 1. գոյականների ու ածականների բաղադրություն ածականների հետ (կազմվում են ածականներ), 2. գոյականների ու ածականների բաղադրություն մի բայարմատի կամ բայաբնի հետ (կազմվում են գոյականներ և ածականներ)[6]:

Կրկնավորների մասին խոսելիս անվանի հայագետը նշում է, որ գոյականների կրկնությամբ կազմվում են որակական ածականներ, ածականների ու մակբայների կրկնությամբ նույնպես կազմվում են ածականներ, բայերի կրկնությամբ՝ բայեր[7]:

Հայոց լեզվի բառային կազմը, այդ թվում և բարդ բառերը, հանգամանորեն քննել է Ա. Մուրվալյանը «Հայոց լեզվի բառային կազմը» աշխատության մեջ:

---

4 Ս. Պալասանյան, *Ընդհանուր տեսություն նոր դրաված լեզվի հայոց*, Թիֆլիս, 1870, էջ 19:

5 Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965, էջ 202:

6 Նույն տեղում, էջ 202—205:

7 Նույն տեղում, էջ 180—183:

Ջեռքի տակ ունենալով հարուստ փաստական նյութ և օգտագործելով իր նախորդների գիտական ժառանգությունը՝ հեղինակն ուսումնասիրել է հայոց լեզվի բառապաշարը, նրա կրած իմաստային փոփոխությունները, բառակազմական միջոցները՝ հայոց լեզվի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում և արել է մի շարք արժեքավոր եզրակացություններ։

Աշխատության մեջ հատուկ քննության է ենթարկված հայ ազգային գրական լեզվի ու բարբառների փոխազդեցությունը, հայերենի բառակազմական տիպերը՝ բառաբարդումներն ու բառածանցումները, դրանց կենսունակ և ոչ կենսունակ ձևերը։

Բառաբարդմանը նվիրված բաժնում, բառակրկնություններն ուսումնասիրելիս, խոսելով նրանց բառակազմական, իմաստային, ձևական առանձնահատկությունների մասին, Ա. Մուրվալյանը նշում է, որ գոյականների, ածականների, մակբայների, թվականների, բայերի կրկնությամբ կազմվում են նոր գոյականներ, ածականներ, մակբայներ, թվականներ, բայեր[8]։

Հետագա շարադրանքում հեղինակն անդրադառնում է իսկական բարդությունների ձևաբանական կառուցվածքին և նշում է, որ գոյականները, ածականները, թվականները, բայերը, մակբայները, դերանունները, համադրվելով միմյանց հետ, կազմում են նոր գոյականներ, ածականներ, թվականներ, բայեր և այլն[9]։

Հայերենի բայական բարդությունները (հարադրական, զուգադրական բայերը) իրենց խոր և գիտական ուսումնասիրությունն են գտել Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» և Ա. Մարգարյանի, «Հայերենի հարադիր բայերը» աշխատություններում։

Ինչպես տեսնում ենք, բարդությունը, որպես բառակազմական տիպ ուսումնասիրվել է շատ լեզվաբանների կողմից։ Սակայն նրանք իրենց աշխատություններում հիմնականում ուսումնասիրել են բարդ բառերի բառակազմական, ձևաբանական ու իմաստային առանձնահատկությունները։ Հայ լեզվաբանները չեն անդրադարձել այն հարցին, թե ի՞նչ կշիռ ունեն հայերենի բարդ բառերը տարբեր խոսքի մասերի համակարգում, չեն քննել այն հարցը, թե բարդ բառերն ինչպե՞ս են մասնակցում առանձին խոսքի մասերի հարստացմանը և բառաբարդման ո՞ր կաղապարներն են ավելի հաճախադեպ։ Այս հարցի քննությունն ամբողջական ուսում-

8 Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի բառային կազմը*, Երևան, 1955, էջ 150—151։

9 Նույն տեղում, էջ 222, 226, 236—240։

նաեբրության նյութ չի դարձել և հանդիսանում է հայագիտության կողմից դեռևս բավարար չափով չլուսաբանված հարցերից մեկը: Հենց այս հարցի քննությանն էլ նվիրվում է ներկա աշխատությունը: Սույն աշխատության մեջ ուսումնասիրվում են հայերենի բառակազմության շատ կենսունակ միջոցներից մեկի՝ բառաբարդման դերը խոսքի մասերի հարստացման գործում:

Խոսքի մասերի սահմանազատման համար կարևոր են ածանցները, հատկապես վերջածանցները, որոնք, դրվելով որևէ հիմքի վրա, բավականին հստակ են դարձնում այս կամ այն բառի պատկանելությունը ձևավաբանական մակարդակի համապատասխան ոլորտին: Ուստի հասկանալի է, թե ինչու սույն աշխատանքում, բացի ածանցաղուրկ բարդություններից, տեղ են գրավում նաև բարդ ածանցավոր բառերը, որոնց քննությունը կնպաստի խոսքի մասերի բառաբարդման կաղապարների վերհանմանը: Յուրաքանչյուր խոսքի մասի հարստացմանը բարդ բառերի մասնակցությունն ավելի ցայտուն դարձնելու համար դրանք խմբավորվել են ըստ առանձին խոսքի մասերի և քննվել իրենց իմաստային, կառուցվածքային, ձևաբանական առանձնահատկություններով: Քանի որ բառերը լեզվում հանդես չեն գալիս մեկուսացած, այլ գտնվում են համակարգային հարաբերությունների մեջ, ուստի, առանձին խոսքի մասերի ոլորտներում հանդես եկող բարդությունների իմաստային առանձնահատկությունները քննելիս, դրանք խմբավորել ենք ըստ իմաստային դաշտերի, որոնց մեջ մտնող բառերն ունեն այս կամ այն իմաստային ընդհանրությունը:

Հայերենի խոսքի մասերը յուրահատուկ են իրենց բառակազմական առանձնահատկություններով ու միջոցներով: Դրանցից մենք կուսումնասիրենք բառաբարդումը, որը բավականին մեծ դեր ունի խոսքի մասերի, հետևաբար և հայերենի բառապաշարի հարստացման գործում: Քննության առարկա դարձնելով բառաբարդման, որպես բառակազմական տիպի, դերը տարբեր խոսքի մասերի հարստացման գործում, կարելի է նկատել, որ այս տեսակետից հայերենի բառաբարդման տեխնիկայի ընձեռած հնարավորությունները բավականին շատ են:

Յուրաքանչյուր խոսքի մասի քննությունը նպատակահարմար է կատարել, ելնելով այն բանից, թե բառաբարդման ի՞նչ տեսակներ են գործում տվյալ խոսքի մասի ընդգրկած բառապաշարի շրջանակներում, ինչպիսի ձևաբանական և իմաստային կաղապարներով են դրանք արտահայտվում և այդ կաղապարներից որո՞նք են ավելի գործուն առանձին խոսքի մասերի հարստացման համար:

Այս տեսակետից մոտենալով հարցին, կարելի է նկատել, որ տարբեր խոսքի մասերի ոլորտում տեղ են գրավում ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական կազմությամբ բարդ բառեր:

Ժամանակակից հայերենի բառապաշարի քննությունը հնարավորություն է տալիս նկատելու նաև, որ որոշ խոսքի մասերի (դոյական, ածականն, դերանուն, բայ) կազմության մեջ գերակշռում են համադրական կառուցվածք ունեցող բարդ բառերը, իսկ մյուսների (թվական, շաղկապ, մակբայ) կազմության մեջ ավելի արդյունավետ են վերլուծական կառուցվածքով բարդ բառերը:

Արդյունավետ լինելու գաղափարը կիրառվում է լեզվի տարբեր մակարդակների վերաբերյալ. խոսվում է հոլովման ու խոնարհման, շարահյուսական կառուցվածքների, նախադասությունների կաղապարների արդյունավետ և ոչ արդյունավետ լինելու մասին:

Ավելի կամ պակաս արդյունավետ կարող են լինել նաև բառակազմական կաղապարները: Արդյունավետ են համարվում այն բառակազմական կաղապարները որոնք լեզվի զարգացման այս կամ այն շրջանում օրինակ են ծառայում նոր բառեր, բառաձևեր կազմելու համար[10]:

Տեսնենք, թե ինչպես է հանդես գալիս արդյունավետությունը բառակազմության մեջ: Այն կարելի է կիրառել ինչպես բառակազմական տիպի[11], կաղապարի, այնպես էլ բառի բաղադրիչների նկատմամբ:

Ժամանակակից հայերենում բավականին կենսունակ են հատկանշային հարաբերություն, գործողություն և նրա հետ առնչվող առարկաների հարաբերություն արտահայտող բաղադրիչներ ունեցող բարդությունները: Ինչպես կտեսնենք հետագայում, նշված կաղապարներով կազմվում է հայերենի բարդ բառերի գերակշռող մասը:

Բացի բառաբարդման կաղապարներից, կենսունակ կարող են լինել առանձին բաղադրիչներ, որոնցով կազմված բարդ բառերը հանդես են գալիս տարբեր խոսքի մասերի համակարգում: Նշենք այդպիսի բաղադրիչներից մի քանիսը.

բազում — բառով կազմված բարդությունները հասնում են մի քանի տասնյակի. ինչպես՝ բազմաբնույթ, բազմաբաղձ, բազմաբևեռ, բազմաբողբոջ, բազմաբջիջ, բազմագագաթ, բազմազգ, բազմազավակ և այլն:

---

10 «Грамматика современного русского литературного языка», М., 1970, стр. 40.

11 Բառակազմական տիպը բառերի կազմության ձևաիմաստային սխեման է (նույն տեղում, էջ 39):

Թուղթ — թղթագործություն, թղթածրար, թղթակազմ, թղթակույտ, թղթամոլ, թղթափաթեթ *և այլն:*

Մանր — մանրաքյուրեղ, մանրաքջիջ, մանրադիտակ, մանրանկար, մանրակարկուտ, մանրադրամ, մանրախիճ, մանրահայլ, մանրածախ *և այլն:*

Մանուկ — մանկապարտեզ, մանկահասակ, մանկաժպիտ, մանկադեմ, մանկամտուր, մանկավարժ *և այլն:*

Հայերենի բառաբարդման մեջ բավականին արդյունավետ են նաև մի շարք փոխառյալ բառեր:

Նշենք դրանցից մի քանիսը.

Ֆոտո — ֆոտոհեռագրիչ, ֆոտոշարժիչ, ֆոտոթղթակից, ֆոտոդիմադրիչ, ֆոտոմեկնաբան, ֆոտոժապավեն *և այլն:*

Ավտո — ավտոդպրոց, ավտոկայան, ավտոշարասյուն, ավտոկանգառ, ավտոզբոսաշրջիկ, ավտոերթևեկություն, ավտոխճուղի *և այլն:*

Վերոհիշյալ բարդությունները մասնակի փոխառություններ են. դրանցում միայն առաջին բաղադրիչներն են փոխառյալ: Կան նաև փոխառված ամբողջական բարդություններ, որոնք նույնպես գործածական են ժամանակակից հայերենում, ինչպես, օրինակ՝ ավտոտրանսպորտ, ֆոտոսինթեզ, կիլովատ կիլոգրամ, կիլոմետր, ֆոտոալբոմ, ֆոտոէլեմենտ, ավտոռեֆերատ, ֆոտոլամպ *և այլն:*

Նման օրինակները ցույց են տալիս, թե հայոց լեզվի բառապաշարում որքան շատ են տարածված փոխառյալ բաղադրիչներով բարդ գոյականները: Սրանց ընդհանրացած բնույթը որոշ դեպքերում առաջացնում է հնարավորություն՝ այն է՝ առանձին դեպքերում հարկ է լինում դրանք փոխարինել սեփական (հայերենին բնորոշ) կազմություններով: Ինչպես՝ ակտինաֆիմիա–ճառագայթաֆիմիա, ակտինաբուժում–ճառագայթաբուժում, ակտինոսկոպ–ճառագայթացույց, ակտինոմետրիա–ճառագայթաչափություն *և այլն: Բայց երբեմն փոխառյալ բաղադրիչներով բարդ բառերի փոխարինումը տվյալ լեզվին հատուկ կազմություններով ոչ միշտ է հաջող և դրանք որպես տերմիններ ոչ միշտ են հանձնարարելի: Դրա պատճառն այն է, որ որոշ դեպքերում փոխառյալ, ինչպես նաև փոխառյալ բաղադրիչներով բարդ բառերը միջազգային գործածություն ունեցող բառեր են և դրանք հարմար չէ թարգմանել: Այս հանգամանքն էլ ամրացնում է այդպիսի բառերի տեղը այս կամ այն լեզվում: Ինչպես, օրինակ՝* ավտոռեֆերատ, ավտոտրանսպորտ, ֆոտոալբոմ, ֆոտոէլեմենտ, ֆոտոսինթեզ, ավտոդպրոց *և այլն:*

Սակայն հայերենին ավելի բնորոշ են սեփական բառերի ու բառար-

մատների զուգադրմամբ կազմված բարդությունները, վերջիններիս բաղադրիչների համադրման ժամանակ ի հայտ են գալիս մի շարք սահմանափակիչ հանգամանքներ, որոնք կքննվեն ստորև։

1. ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻՉ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, բառաբարդումը, որպես բառակազմական տիպ, բնորոշ է իր առնվազն երկարմատ կամ ավելի կազմությամբ. բարդության կազմում պետք է առկա լինեն ամենաքիչը երկու հիմնական ձևույթներ, որոնք, միմյանց նկատմամբ մտնելով իմաստային, շարահյուսական փոխհարաբերությունների մեջ, կազմում են նոր՝ բարդ բառ։ Բառաբարդումը զգալի դեր ունի խոսքի մասերի՝ բառաքերականական ամենաբնդհանուր խմբերի մեջ։ Սակայն որքան էլ այդ դերը մեծ լինի, այնուամենայնիվ պետք է ասել, որ այն անսահման չէ, քանի որ սահմանափակող հանգամանքներ կան հենց իրենց՝ բարդ բառերի կազմության ժամանակ[12]։ Ինքնին հասկանալի է, որ այդ սահմանափակիչ հանգամանքները գործում են նաև առանձին խոսքի մասերի համակարգում հանդես եկող բարդություններում։

Որո՞նք են այն հիմնական սահմանափակիչ հանգամանքները, որ գործում են բարդությունը հոդավորող ձևույթների միջև։

Դրանք հիմնականում չորսն են՝ իմաստային, ոճական, բառային և բառակազմական։

Այժմ քննենք դրանք առանձին-առանձին և տեսնենք, թե վերոհիշյալ սահմանափակիչ հատկանիշներն ինչպե՞ս են արտահայտվում բարդության բաղադրամասերի միջև։

Իմաստային սահմանափակում — խոսելով բարդությունների բաղադրիչների համադրելիության մասին, կարելի է նշել, որ բարդ բառի բաղադրիչների համադրելիության առաջին և հիմնական սահմանափակիչ հատկանիշը կրում է իմաստաբանական բնույթ։

Հայերենի բարդ բառերի քննությունը ցույց է տալիս, որ իրար հետ զուգադրվել և մեկ բարդ բառ կարող են կազմել միայն այն հիմնական ձևույթները, որոնք գոնե նվազագույն իմաստային համադրելիություն ունեն։ Սա բարդությունների առաջացման տրամաբանական հիմքն է։ Քանի որ բարդ բառերի բաղադրիչները բարդությունից դուրս առանձին բառեր են կամ էլ այնպիսի բառերի արմատներ, որոնք մեծ մասամբ արտահայտում են հասկացություններ, ապա բարդ բառերի, հետևաբար

---

12 *Е. А. Земская,* Современный русский язык, М., 1973, стр. 195.

դրանցով արտահայտված առանձին խոսքի մասերի, կազմության ժամանակ կարող են համադրվել որոշակի հասկացություններ միայն և նրանց համադրելիության սահմանափակիչ հանգամանքն առաջին հերթին կրում է իմաստաբանական բնույթ։ Եթե նկատի ունենանք, որ հասկացության բովանդակությունը բարդ է, այն առարկայի կամ երևույթի մասին արդեն ձեռք բերված ըմբռնումների, ընկալումների գումար է, ապա պարզ կդառնա, որ հասկացողությունների համադրումը, դրա հետ կապված բարդ բառերի առաջացումը, հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ կարելի կլինի թեկուզ նվազագույն չափով տրամաբանական կապ գտնել բարդության բաղադրիչներով արտահայտված հասկացությունների բովանդակության մեջ մտնող հատկանիշների միջև։

Բարդության կազմիչների իմաստային համադրելիությունը կարևոր նշանակություն ունի բարդ բառերի առաջացման համար։ Այսպես, հայերենում ընդունելի և միանգամայն օրինաչափ է ճովտաշուշան, ձնծաղիկ, մարգագետին, նորակառույց և այլ բարդ բառերի գոյությունը, քանի որ դրանցում առանձին բառարմատները, փոխհարմարվելով իրենց արտահայտած իմաստներով, կազմել են նոր բառեր։ Մինչդեռ նույնը չի կարելի ասել **ťar** և **արմատ**, **թուղթ** և **ոտք**, **սիրտ** ու **փայտ** և այլ զույգերի մասին։ Փաստորեն, եթե պատասխանելու լինենք այն հարցին, թե ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ, որպեսզի երկու անկախ բառեր կամ հիմնական ձևույթներ կարողանան միանալ մեկ բառային միավորի մեջ (կազմել բարդ բառ), ապա ամենից առաջ պետք է նշել, որ այդ բառերը պետք է կարողանան ներկայացնել շարահյուսական խումբ՝ դրանց արտահայտած հասկացությունների միջև պետք է լինի որոշակի ներքին (իմաստային) կապ, որը հնարավորություն կտա այդ բառերի մեկ շարահյուսական խմբի մեջ միանալը, օրինակ՝ **պահարան** և **գիրք** բառի մեջ կա այդպիսի իմաստային կապ, քանի որ գրապահարանը գրքի գտնվելու, եթե ոչ մշտական, գոնե հիմնական տեղն է։ Բայց նույնը չի կարելի ասել **ավտոմեքենա** և **գիրք** բառերի մասին, քանի որ գրքի ավտոմեքենայում գտնվելը միանգամայն պատահական է։ Բայց այս կապը առաձգական է և որոշվում է բազմազան պայմաններով. այնպես որ այս կամ այն բարդ բառի կազմվելը կայուն, անփոփոխ իրողություն չէ։ Այն՝ ինչ որոշ պայմաններում անհնար է, այլ պայմաններում կարող է միանգամայն հնարավոր լինել։ Այսպես՝ ատոմային էներգիայի հայտնաբերումից հետո **ատոմակայան**, **ատոմագետ**, **ատոմագնաց**, **ատոմազերծ**, **ատոմանավ**, **ատոմամոլ** և մի շարք այլ բարդություններ դարձան մեր լեզվի բառապաշարի անբաժանելի մասը։

Բարդության կազմում հանդես եկող հիմնական ձևույթների իմաստային համադրելիության հականիշն առնչվում է առանձին դեպքերում բառի և բառիմաստի միջև հանդես եկող պատճառաբանված կապի հետ։ Ակնհայտ է, որ անհրաժեշտ կապ չկա բառի և բառիմաստի միջև, լեզվական նշանները պայմանական են[13]։ Այս տեսակետից բացառություն են կազմում ձայնարկությունները և բարդ բառերը, որոնց արտահայտած իմաստի և ձևի միջև պատճառաբանված կապ կա, թեև տվյալ դեպքում էլ այդ պատճառաբանվածությունը միջնորդավորված է։ Այնքան, որքան բարդության բաղադրիչները ներկայացնող բառերն ու բառարմատները նույնպես պայմանական են, միայն բարդ բառի բաղադրիչների իմաստի և ամբողջ բարդության իմաստի մեջ է կապ ղգացվում, քանի որ բարդ բառի իմաստը բաղադրվում է նրա կազմիչների իմաստից։ Ստացվում է այնպես, որ բարդության բաղադրիչները ներկայացնող բառերը (բառարմատները) պայմանական են, իսկ ամբողջ բարդության իմաստը բաղադրվում է նրա կազմիչների իմաստից։ Այստեղից հետևում է, որ կապ գոյություն ունի բարդ բառի իմաստի և նրա բաղադրիչների իմաստի միջև, որը և վկայում է բարդ բառերի և դրանց իմաստների պատճառաբանվածության մասին։ Այսպես, օրինակ՝ փայտահատ բարդ բառի և փայտ և հատ (ել) բաղադրիչների արտահայտած իմաստի ու նրանց հընչյունական (ձևական) կողմի միջև որևէ կապ գոյություն չունի, բայց փայտահատ բառի իմաստը (անձնավորություն, որը փայտ է կոտրում) ունենալու համար անհրաժեշտ է, որ փայտ և հատ(ել) բաղադրիչներն արտահայտեն իրենց հիմնական իմաստները և, համադրվելով, կազմեն մեկ այլ բառ։ Նույնը կարելի է ասել նաև մյուս բարդ բառերի վերաբերյալ։ Լեզվական նշանը (բառը) ի տարբերություն այլ նշանների, ունի արդյունավորություն, այսինքն՝ լեզվական միևնույն նշանից կարող են կազմվել այլ նշաններ (տվյալ նշանը կարող է հիմք դառնալ այլ նշանների համար)։ Բարդ բառերի կազմության ժամանակ լեզվական նշանի արդյունավորությունն ակնհայտ է, քանի որ շատ բառեր և բառարմատներ միանալով կազմում են նոր բառեր։

Ոճական առումով — Բարդ բառերի բաղադրիչների համադրելիության մյուս սահմանափակիչ հանգամանքը կրում է ոճական բնույթ, քանի որ բարդությունների կազմում հանդես եկող բառերը կամ նրանց արմատները կարող են պատկանել բառապաշարի այս կամ այն ոճական շերտին՝ կարող են ունենալ բարձր, գրքային, չեզոք, կամ էլ

---

[13] *Ֆ. де Соссюр.* Курс общей лингвистики. М., 1933, стр. 160.

ցածր ոճի առանձնահատկություններ[14]: Բառապաշարի նման ոճական շերտերի առանձնացումը կրում է բավականին պայմանական բնույթ, քանի որ շատ դեպքերում դժվար է հստակ սահմանազատել չեզոք և գրքային ոճերին պատկանող բառերը կամ էլ գրքային ու բարձր ոճական շերտերը ներկայացնող բառապաշարը: Բառապաշարի նշված շերտերում անցումները շատ հնարավոր են և սովորական:

Նկատելի է, որ միևնույն բարդ բառի կազմում հանդես եկող բաղադրիչները ոճական առումով մեծ մասամբ միօրինակ են, եթե ոչ միշտ, ապա շատ դեպքերում որևէ ոճական շերտին պատկանող բաղադրիչը թելադրում է, որ մյուսն էլ ունենա համապատասխան ոճական երանգ: Ինչպես, օրինակ՝ արհայադուստր, արհայազն, դյուցազն, ժանտատեսիլ, ժանտաճար, դրամաշորթ, դրամապանակ և այլ բարդ բառերի բաղադրիչները պատկանում են բարձր ոճին, ավալ-թավալ, խենթ ու խելառ, աղաշաճաք-պաղատաճաք և այլն (խոսակցական ոճ), զուգվել-զարդարվել, թողնել-հեռանալ, գալ գնկուցել և այլն (չեզոք ոճ):

Բառաբարդման մեջ հնարավոր է, որ ամբողջ կառուցվածքն ունենա այլ ոճական երանգ, քան ունեն նրա բաղադրիչները: Այսպես՝ օրինակ՝ ուտել-խմել, ներս ու դուրս անել, սիրտ անել, աչքով տալ և այլ բարդություններում բաղադրիչները ներկայացնում են չեզոք ոճ, իսկ ամբողջ բարդությունը վերաբերում է բառապաշարի խոսակցական շերտին:

Բարդությունների կազմության ժամանակ շատ կենսունակ են ոճական տեսակետից չեզոք բառերը, որովհետև վերջիններս գերակշռում են բառապաշարի մյուս ոճական շերտերի համեմատությամբ և իրենց մեջ ընդգրկում են, բառապաշարի կորիզը կազմող, բառային հիմնական ֆոնդին պատկանող բառերը: Մյուս կողմից, նման ոճական առանձնահատկություն ունեցող բաղադրիչներով բարդությունները գերակշռում են նաև այն պատճառով, որ կարող են լայն կիրառություն ունենալ բառապաշարի տարբեր ոլորտներում, այլ կերպ ասած, նրանք կարող են համադրվել, ինչպես միմյանց, այնպես էլ ոճական այս կամ այն երանգավորումն ունեցող բառերով ներկայացված բաղադրիչների հետ: Չեզոք ոճին պատկանող բառերով, բառարմատներով կազմվում են համադրական և վերլուծական բարդություններ. այսպես, օրինակ՝ սպորտաձև, դասընկեր, մատիտանկար, սիրտ տալ, դուրս գալ և այլն:

Խոսակցական ոճին պատկանող բառերով մեծ մասամբ կազմվում

---

14 Ոճական շերտերի մասին ավելի մանրամասն տե՛ս О. С. Ахманова, очерки по общей и русской лексикологии, М., 1957, стр. 242—262.

են կրկնավորները. ինչպես՝ ալաս-փալաս, աման-չաման, ծուռ-մուռ, և այլն:

Հիմնական ձևույթների համադրելիության ոճական սահմանափակումը տարբերվում է մյուս՝ իմաստային սահմանափակիչ հանգամանքից: Եթե վերջինս պարտադիր է բարդ բառերի կազմության ժամանակ, ապա առաջինը (ոճական սահմանափակումը) այդպիսին չէ: Բարդությունների բաղադրիչների ոճական համադրելիությունը հանդես է գալիս որպես ավանդույթ և անխախտ օրինաչափություն չէ: Այն անհրաժեշտ է բարդ բառերի կազմության ժամանակ լեզվի արտահայտչական հնարավորությունները ճաշակով և հմտորեն օգտագործելու համար: Փաստորեն այն սահմանափակիչ ավանդույթ է և ոչ թե արգելակող օրենք:

Բառային սահմանափակում — Բարդությունների կազմության ժամանակ կարող են արգելքներ լինել նաև տվյալ լեզվի բառապաշարի կողմից: Բաղադրյալ բառի հայտնվելուն կարող է խանգարել նոր կազմությամբ արտահայտվելիք իմաստային տեղի արդեն զբաղված լինելը: Նման դեպքերում տվյալ լեզվի բառակազմական հնարավորություններով կազմվելիք բարդ բառերի իմաստն արտահայտվում է լեզվի բառապաշարում տեղ գտած այլ բառերի, նույնիսկ ոչ բաղադրյալ կազմությունների միջոցով: Այսպես, եթե աղվեսաձագ, գայլաձագ, գայլաձուտ, կատվաձագ և այլ բառերով անվանվում են բարդության առաջին բաղադրիչներով արտահայտված կենդանիների ձագերը, ապա ոչխարի, այծի, խոզի, ձիու, կովի և այլ կենդանիների ձագերը համապատասխանաբար անվանվում են գառ, ուլ, խոճկոր, մտրուկ, հորթ բառերով: Ժամանակակից հայերենում մի շարք (ոչխարաձագ, այծաձագ, խոզաձագ և այլ բարդ բառերի կարիքը չի զգացվում, քանի որ նման բաղադրությունների իմաստները բավականին հաջող կերպով արտահայտվում են վերոհիշյալ՝ կազմությամբ ոչ բարդ բառերով, չնայած ժամանակակից հայերենի համար օրինաչափ ու տիպական է ոչխարաձագ, կովաձագ, խոզաձուտ և նման այլ բարդ բառերի բառակազմական կաղապարը: Այնքան, որքան լեզուն խուսափում է ավելորդ ձևերի կազմությունից, այդ պատճառով նման կազմություններ չկան հայերենում: Այսպիսի դեպքերում բարդ բառերի փոխարեն անհրաժեշտ իմաստներն արտահայտվում են բոլորովին այլ արմատներից կազմված բառերով (մտրուկ, գառ, ուլ):

Բարդ բառերի կազմության բառային սահմանափակիչ հանգամանքը բացատրվում է լեզվի բառակազմական համակարգի հնարավորությունների և նորմայի, ինչպես նաև վերջինիս մասնավոր, իրական գործադրության՝ կիրառության, միջև եղած անհամապատասխանությամբ: Փաստո-

րեն բառակազմական համակարգի լայն հնարավորությունները նորման իրացնում է յուրովի՝ նեղացնում է։

Բառակազմական սահմանափակում — Բարդ բառերի բաղադրիչների զուգադրման բառակազմական սահմանափակումն այն է, երբ որևէ բառակազմական կաղապար արգելք է հանդիսանում տվյալ բաղադրյալ բառի կիրառվելուն որպես բարդության բաղադրիչ։

Այժմ տեսնենք, թե ժամանակակից հայերենում ինչպե՞ս է հանդես գալիս բառակազմական սահմանափակիչ հանգամանքը բարդ բառերի կազմության ժամանակ, և բառակազմական ի՞նչ միջոցներ են դեր կատարում այս հարցում։

Փաստական նյութի քննությունը ցույց է տալիս, որ բարդ բառերի կազմությանը, բացի պարզ հիմքերից, կարող են մասնակցել բաղադրյալ այդ թվում նաև ածանցված հիմքեր։

Այսպես՝ բառաբարդման ժամանակ հայերենում բավականին կենսունակ են -ական, -արան,-ում,-ություն և այլ ածանցներով կազմված բաղադրիչները։ Ինչպես, օրինակ՝ ազգային-ազատագրական, խրճիթ-ընթերցարան, գրադարան, թևաթխում, հետաքննություն, հարցաքննություն և այլն։

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բարդությունների բաղադրիչները ածանցված ձևերով են մտնում բառաբարդված կառուցվածքների մեջ և առանց վերոհիշյալ ածանցների չենք կարող բարդ բառ կազմել[15]։

Մինչդեռ մի շարք ածանցված կազմություններ չեն կարող մասնակցել բարդ բառերի կազմությանը, ընդ որում, դրան խանգարում է հենց այս կամ այն ածանցի առկայությունը, քանի որ այդ ածանցների բացակայությամբ նման բառերի ածանցազուրկ հիմքերը նույնիսկ շատ արգասավոր են բարդ բառերի կազմության ժամանակ։ Նշենք այդպիսի ածանցներից մի քանիսը.

-ենի ածանցով կազմված բարդությունները (խնձորենի, սալորենի, տանձենի, քաղցենի և այլն) չեն մասնակցում բարդ բառերի կազմությանը, մինչդեռ հիշյալ ածանցավոր բառերի տանձ, խնձոր, բալ, խաղող արմատներով կազմվում են բազմաթիվ բարդ բառեր. ինչպես, օրինակ՝ տանձակոթ, տանձաձև, տանձաչիր, աղամախնձոր, գետնախնձոր, խրթ-

---

15 Եթե այդպիսի դեպքերում բարդության որևէ բաղադրիչը ածանցված ձևով է հանդես գալիս որպես բարդ բառի բաղադրիչ, ապա կան շատ բարդ ածանցավոր բառեր, որոնցում ածանցը, ի տարբերություն վերոհիշյալի, վերաբերում է ամբողջ կառուցվածքին՝ նրբանկատություն, թերահավատություն, շատախոսություն, ճնճղատատակ և այլն։

ձորաշիր, ֆաղաֆաբնակ, ֆաղաֆատնտեսություն, մայրաֆաղաֆ, սալո-
րաշիր, դեղնասալոր և այլն:

–Ուստ ածանցով կազմված բառերը նույնպես չեն լինում բարդու-
թյան բաղադրիչ՝ արտաֆուստ, ներֆուստ, ելուստ, գալուստ և այլն:

Նույնը կարելի է ասել նաև –կան (թխսկան, մուրացկան, ոուսկան,
գուժկան և այլն), –եղ (մսեղ, հյութեղ, համեղ), –ուտ (ավազուտ, աղմուտ,
թփուտ, եղեգնուտ, մացառուտ և այլն), ածանցներով կազմված բառերի
մասին: Մինչդեռ այդ բառերի արմատները մասնակցում են բարդ բա-
ոերի կազմությանը. ինչպես՝ թխսամայր, թխսաճուտ, ոուսասար, ոուսա-
գող, շարագույժ, դառնահամ, անուշահոտ, գինետուն, մսավաճառ, մսա-
ղաց, ֆաղցրահամ, համտես, ավազաքլուր, ավազաշերտ, աղմաշատ,
եղեգնաշաֆար և այլն:

Վերը թվարկված փաստերը ցույց են տալիս, որ առանձին դեպքերում
բառակազմական համակարգը կարող է արգելք հանդիսանալ բարդ բա-
ոերի բաղադրիչների համադրելիությանը և սահմանափակել բարդ բա-
ոերի կազմության հնարավորությունները: Նշված դեպքերում որոշ ածանց-
ների առկայությունը հնարավորություն չի տալիս դրանցով բաղադրված
բառերին կամ հիմքերին հանդես գալ որպես բարդ բառերի հոդավորիչ-
ներ:

2. ԱԶԱՏ ԵՎ ԿԱՊԱՅԱԼ ԶԵՎՈՒՅԹՆԵՐՈՎ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Այժմ տեսնենք, թե ինքնուրույնության տեսակետից ինչպիսի՞ հիմ-
նական ձևույթներ կարող են լինել տարբեր խոսքի մասերի ոլորտում
հանդես եկող բարդությունների կազմում: Այս տեսակետից մոտենալով
հարցին կարելի է տարբերակել ձևույթների երկու տեսակ՝ ազատ և կախ-
յալ[16]: Բարդության բաղադրիչներ կարող են լինել այնպիսի արմատներ,
որոնք հանդես են գալիս միայն այլ (հիմնականում երկրորդական) ձև-
ույթների հետ միասին, նման դեպքերում գործ ունենք կախյալ արմա-
տական ձևույթների հետ: Ինչպես, օրինակ՝ մսավաճառ, մանրազնին,
գրախոսություն, հեռադիտակ, հիշարժան, հարցաքննություն և այ-
լն: Նշված օրինակներում ընդգծված արմատները կապված ձևույթ-
ներ են:

Մինչդեռ բարդության կազմում կարող են լինել այնպիսի բաղադրիչ-
ներ, որոնք անկախ, ինքնուրույն գործածություն ունեն, առանց երկրոր-

16 Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974,
էջ 150; Г. О. Винокур, Избранные работы по русскому языку, М., 1959, стр. 435.

պական ձևույթների հետ զուգադրվելու։ Իհարկե, չի բացառվում այն, որ նրանք կարող են հանդես գալ նաև երկրորդական ձևույթների հետ։ Բերենք մի քանի ազատ ձևույթների օրինակներ, ազատամիտ, հուշատախտակ, յուղաբլիթ, մայրաքաղաք, բարաբեկոր, շաքարավազ, մեղրամոմ և այլն։ Դժվար չէ նկատել, որ ընդգծվածները պարզ (արմատական) բառեր են և հանդես են գալիս որպես ազատ ձևույթներ։

Բառաբարդման դեպքում ժամանակակից հայերենում գործուն և կենսունակ են ինչպես ազատ, այնպես էլ կախյալ արմատական ձևույթները և, որպես այդպիսին, նրանք մասնակցում են համարյա բոլոր խոսքի մասերի կազմությանը։

Ինչ խոսք, ազատ ձևույթներով բաղադրված բարդությունները ավելի հեշտ են անդամատվում և նման բարդությունների բաղադրիչներն ավելի ցայտուն են լինում բառակազմական վերլուծությունների ժամանակ։ Բարդ բառերում հիմնական ձևույթները կարող են հանդես գալ ինչպես հնչյունափոխված ձևով, այնպես էլ հնչյունափոխված տարբերակներով՝ ենթաձևույթներով։ Բերենք ձևույթների և դրանց տարբերակների օրինակներ՝ ճեռագիր–գրաճանաչ, մանկապարտեզ–պարտիզպան, ուսանող–շնագայլ, մսաջուր–չրառատ։ Օրինակներից երևում է, որ բարդ բառերում հնչյունափոխվում են շեշտադուրկ ձայնավորներ ունեցող բաղադրիչները, որոնք հայերենում գործող օրինաչափության համաձայն վերջնավանկ լինել չեն կարող։ Միշտ բարդության վերջին բաղադրիչը կրում է բառի հիմնական շեշտը և վերջին բաղադրիչի ձայնավորները հնչյունափոխության չեն ենթարկվում։ Հետևաբար, բարդ բառերում վերջին բաղադրիչները որևէ հիմնական ձևույթի ենթաձևույթները լինել չեն կարող։

Ձևույթները և դրանց տարբերակները, ունենալով իմաստային ընդհանրություն, ցուցաբերում են որոշ ձևական տարբերություններ, որոնք պայմանավորվում են դրանց բարդ բառի մեջ գրաված դիրքով։

Դժվար չէ եզրակացնել, որ ձևույթներն ու նրանց տարբերակները չեն կարող բարդություններում հանդես գալ միևնույն դիրքերում, այլ կերպ ասած, միմյանց նկատմամբ գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ[17]։

Հայերենի փաստական նյութի քննությունը ցույց է տալիս, որ բարդ բառերով արտահայտված բոլոր խոսքի մասերն էլ կարող են ունենալ

---

17 Լրացուցիչ բաշխման մասին ավելի մանրամասն տե՛ս Г. Глиссон, Введение в дескриптивную лингвистику, М., 1959, стр. 122—126.

ազատ և կախյալ ձևույթներով բաղադրիչներ։ Սակայն որոշ խոսքի մասերի կազմության ժամանակ ավելի արդյունավետ են առաջինները, իսկ այլ դեպքերում՝ վերջինները։

Այսպես, ազատ ձևույթները (խոսքը հիմնական ձևույթների մասին է) ավելի գործուն մասնակցություն ունեն դերանունների (ես ու ես, ինձ ու ինձ, այսինչ, այդտեղ և այլն), մակբայների (ծանր-ծանր, քիչ-քիչ, դեմ ու դեմ, մեջընդմեջ, և այլն), շաղկապների (մինչդեռ, թեև, այսուհանդերձ, քանի որ, թե որ և այլն) կազմության ժամանակ։ Նշված խոսքի մասերի ոլորտներում հանդես եկող համարյա բոլոր բարդ բառերն ունեն ազատ ձևույթներ։

Թվականների մեծ մասը ևս կազմվում է ազատ ձևույթներով։ Ինչպես՝ տասնինգ, հարյուր հատ և այլն։

Ազատ ձևույթներն ավելի քիչ են հաճախադեպ դոյականների, ածականների կազմության ժամանակ։ Դրանցում հիշյալ ձևույթները հանդիպում են հատկապես բարհյուսական հարաբերություններում և կրկնավորություններում՝ ծառ ու ճյուղ, հայր ու որդի, տուն ու տեղ, սև-սև, դառը-դառը և այլն։

Համադրական կազմություններում ազատ ձևույթներով լինում են բաղադրիչների պարզ ղուգադրմամբ և, առանձին դեպքերում, հոդակապով միացած բարդությունները. ինչպես՝ երգաշխարհ, երկսեռ, ավտոկանգառ, պարզերես, հարսիրտ, ազատամիտ, բարձրահանդակ և այլն։

Դժվար չէ նկատել, որ ազատ ձևույթները հանդիպում են ավելի շատ վերլուծական կազմությամբ բարդ բառերում, քան թե համադրականներում։ Այդ ինքնին հասկանալի է, քանի որ վերլուծական կազմությամբ բարդ բառերի բաղադրիչների մեծ մասն արմատական բառեր են։

3. ԶԵՎԱՀՆՉՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԲԱՌԱԲԱՐԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բառաբարդման ժամանակ որոշակի դեր ունի ձևահնչույթաբանությունը։ Ձևահնչույթաբանությունը լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է ձևաբանության և հնչույթաբանության միջև եղած փոխհարաբերությունները, այն հնչույթաբանական միջոցները, որոնք կիրառվում են բառակազմության, ձևակազմության ժամանակ։ Ձևահնչույթաբանության խնդիրն է բացահայտել ձևույթների հնչյունական կազմը, ցույց տալ ձևույթների փոխհարմարվելու պայմանները[18]։ Ան-

[18] *Е. А. Земская*, նշվ. աշխ. էջ 77։

շուշտ, բարդ բառերի քննության ժամանակ անկարելի է անտեսել ձևահնչույթաբանության դերը, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է բարդության կազմում հանդես եկող ձևույթների փոխհարաբերության ձևային առանձնահատկություններին: Վերջինս ամենից առաջ վերաբերում է հիշյալ ձևույթների միացմանը (այն բանին, թե ինչ պայմաններում են ձևույթները դուգադրվում բարդության մեջ) և նրանց հաջորդականությանը: Պարզ է՝ նման դեպքերում տեղի են ունենում բառակազմության հետ կապված ձևական փոփոխություններ:

Բարդ բառերի կազմությանը բնորոշ են մի շարք ձևական փոփոխություններ, որոնք հայերենի բառակազմական կանոնների համաձայն հանդես են գալիս բարդությունների մեծ մասում: Դրանք քննվում են հատկապես այն առումով, որպեսզի պարզվի, թե ինչ միջոցներ է օգտագործում լեզուն, ձևահնչույթաբանության մեջ մերժված համադրություններից խուսափելու համար: Հնարավորություն է տալիս նաև պարզելու, թե ինչպե՞ս է կատարվում բարդության կազմում հանդես եկող ձևույթների փոխադարձ հարմարվածությունը ձևական տեսակետից:

Ձևական փոխհարմարվածության տարբեր տեսակներ կան, որոնց շարքում կարելի է դասել այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ներմասնիկավորումը (բարդության բաղադրիչների հոդակապով և հոդակապի դեր կատարող մյուս միջոցներով ձևավորվելը), բարդությունը բաղադրող հիմքերի հնչյունափոխությունը և այլն: Բառաբարդման համար այդ հնչյունական միջոցներից հատկապես կարևոր են՝

ա) բարդությունը բաղադրող ձևույթների միացման կանոնները:

բ) Ձևույթների փոխհարմարվածության պայմանները՝ նրանց մեկ բառի մեջ միավորելիս:

գ) Բարդությունը հոդավորող ձևույթների հաջորդականությունը:

Բառաբարդման ժամանակ կատարվող հնչյունական փոփոխություններն անհրաժեշտ են տվյալ լեզվին խորթ, անբարեհունչ կազմություններից խուսափելու համար: Այդ պատճառով բարդության կազմության ժամանակ կատարվում է այն հոդավորող ձևույթների փոխհարմարում՝ տվյալ լեզվում գործող հնարավորություններին համապատասխան: Հայերենում բարդությունը հոդավորող ձևույթների ոչ բոլոր համադրումներն են թույլատրելի: Շատ դեպքերում նրանց համադրումը հնարավոր է դառնում որոշակի փոփոխություններից (մեծ մասամբ հնչյունական) հետո միայն: Բարդությունը հոդավորող ձևույթների սահմաններում կատարվում է ա) Հնչյունափոխություն: բ) Ներմասնիկավորում: գ) Բաղադրող հիմքերի անդամատում (բաղադրող հիմքերի վերջին մասը կրճատվում է

և այլևս չի մտնում բարդության կազմի մեջ)։ դ) Բաղադրիչների պարզ դուգադրում (որի դեպքում մի ձևույթը դրվում է մյուսի կողքին՝ առանց փոփոխվելու)։

Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս են հանդես գալիս նշված ձևական փոփոխությունները բարդ բառերի սահմաններում։

Հնչյունափոխություն — Այս դեպքում բարդության մի ձևույթի հնչյունական կազմը փոխվում է՝ հարմարվելով իրեն հաջորդող ձևույթին։ Նման դեպքերում այդ փոփոխությունը պայմանավորվում է բարդության կազմի մեջ մտնող ձևույթների հնչյունական կառուցվածքով, այնպես որ մենք նորից գործ ունենք բարդության կազմի մեջ մտնող ձևույթների փոխհարմարվելու հետ։

Ինչպես՝ ծլարձակել, ջրավազան, գունեթաղց, տխրուրախ և այլն։

Ինչպես ձևաբանական երևույթները, այնպես էլ հնչյունափոխությունը կարող են լինել գործուն և ոչ գործուն։ Գործուն հնչյունափոխությունը լեզվի զարգացման տվյալ ժամանակաշրջանում կենսունակ է և ընդգրկում է բառերի մեծ քանակ։ Ոչ գործուն հնչյունափոխությունը պահպանված է հիմնականում հնագույն կազմություններում, դեռ ավելին, հին կազմություններում հանդես են գալիս ժամանակակից էտապի համար միանգամայն անկանոն դեպքեր, ինչպես՝ ձեն–ձուն, հայհոյել, բարձրաբերձ, բաղցր–մեղցր և այլն։

Կրկնավոր հարադրություններից և կրկնավորներից կազմված կցականների կազմության ժամանակ առանձնապես գործուն են բաղաձայնական փոփոխությունները (հնչյունների հավելում, անկում)։ Այսպես՝ աբան–շաբան, առոք–փառոք, գծմծել, նոտոտել, բաբախել և այլն։

Օրինակներից երևում է, որ հնչյունական փոփոխությունները տեղի են ունենում ինչպես բարդությունը հոդավորող ձևույթների սկզբում, այնպես էլ բառամիջում։

Հնչյունափոխության նշված դեպքերը բավականին գործուն են կրկնավորների կազմության ժամանակ։ Ինչպես նախորդ դեպքերում, այնպես էլ այստեղ կան նաև հնչյունափոխական ոչ այնքան գործուն կաղապարներ. ինչպես ա>ու, ա>ե, ո>ը փոփոխությունները՝ ծակուծուկ, հայհոյ, մաճր–մուճր, բարձրաբերձ, գոռգոռալ–գոռգոռալ, դողդողալ–դողդրդալ և այլն։

Բառաբարդման ժամանակ, հնարավոր են նաև հնչյունների սղման դեպքեր. ինչպես, օրինակ՝ գրչածայր, գրչակոթ, գարեհանամուտ, աշնահացան և այլն։

Փաստորեն հնչյունափոխության դերը նրանում է, որ այն օժանդա-

կում է բարդության բաղադրիչների փոխհարմարվելուն և ավելի բարեհնչուն է դարձնում բարդ բառը։

Բարդ բառերի կազմության և ընդհանրապես ձևակազմության ու բառակազմության ժամանակ կատարվող հնչյունական փոփոխությունները հնարավոր չէ ամբողջականորեն բացատրել միայն բառերը բաղադրող հիմքերի հնչյունական կառուցվածքի, այլ կերպ ասած, մակերեսային կառույցի ուսումնասիրությամբ, (որը, ի տարբերություն խորքայինի, մատչելի է անմիջական ուսումնասիրության համար)։ Հնչյունական փոփոխությունները հնարավոր է բացատրել միայն բարդ բառերի ձևույթային կառուցվածքի (խորքային կառույցի)[19] քննության միջոցով։ Եվ իսկապես, մինչև չառանձնացնենք ձևածակել բարդության անմիջական բաղադրիչները՝ ձիւ||ածակել, ապա ցայտուն չի դառնա այն, որ նրանում կատարվել է ի>ը հնչյունափոխությունը։ Նույնը կարելի է ասել նաև հրակայուն, մեղվաբուծություն, կաովախոտ և այլ բառերի հնչյունափոխված բաղադրիչների մասին, որոնցում համապատասխանաբար կատարվել են ու>ը, ու>վ, հնչյունական փոփոխությունները։

Ինչպես ցույց են տալիս վերը բերված օրինակները, բարդություններում կատարվող հնչյունական փոփոխությունները կապված են այն ձևույթների կառուցվածքի հետ, որոնք բաղադրում են բարդ բառը։ Այդ է պատճառը, որ բառի ձևույթաբանական (խորքային) քննությունն օգնում է բացահայտելու նրա հնչյունական (մակերեսային) կառուցվածքը։

Հայերենում բառաբարդման ժամանակ հանդես եկող հնչյունափոխությունը, որպես կանոն, չունի անկախ բառակազմական արժեք (բառակազմական միջոց չէ)։ Այն ուղղակի ուղեկցող դեր է կատարում բառաբարդման ժամանակ։

Բարդ բառերի կազմում հանդես եկող բաղադրիչներում կատարվող հնչյունափոխությունը որևէ իմաստաստարբերակիչ դեր չի կատարում. նրա առկայությունը կամ բացակայությունը չի փոխում բարդության իմաստը։

Այսպես, օրինակ՝ **առնաձեռկ–առյուծաձեռկ, բրգաձև–բուրգաձև, բրնձափոշի–բրինձափոշի** և այլ բարդ բառերի հնչյունափոխված և չհնչյունափոխված զուգաձևերը նույն իմաստային արժեքն ունեն։

Ներմասնիկավորում — Այսպես կոչվում է բարդության կազմում հանդես եկող ձևույթների միացման (համադրման) միջոցներից մեկ ուրի-

[19] *D. S. Worth.* „Surface Structure" and „Deep Structure" in Slavic Morfiology. „American Contribution the Sixth International Cengress of Slavists" vol 1 Linguistique Contributions, Mouton, 1968.

շը, երբ բարդ բառերի բաղադրիչները միանում են զանազան մասնիկների միջոցով։ Հայերենում այդպիսիք են ա հոդակապը և նման դերով հանդես եկող նախդիրները, շաղկապները։ Այս առումով բառաբարդման ժամանակ անգերագնահատելի է հոդակապի դերը։ Այն հիմնականում մասնակցում է բարդ բառերի կազմությանը և նրա դերը մաքուր բառակազմական է՝ առանց ունենալու իմաստային ծանրաբեռնվածություն։ Հոդակապն իր այս առանձնահատկությամբ տարբերվում է ածանցներից, որոնք ունեն բավականին ընդգծված իմաստային արժեք։ Մինչդեռ բառակազմական տեսակետից հոդակապի դերը բավականին ակնառու է, այն ցույց է տալիս բառի բարդ լինելը՝ հստակորեն սահմանազատելով նրա բաղադրիչները։ Միացնող ձայնավորներով բարդություններն այնքան կենսունակ են և ընդհանրացած, որ դրանք հանդես են գալիս նաև ինչպես լրիվ, այնպես էլ մասնակի փոխառություններում.

Ինչպես, օրինակ՝ ֆուտբոլասեր, էլեկտրաճաղոդիչ, ռենտգենագիր, ռենտգենաճկար, էլեկտրաէներգիա *և այլն։*

Հոդակապ դրվում է նաև բառապատճենման ժամանակ՝ շոգեքարշ, ճեռուստադիտող, ճեռուստակայան, ճեռուստաաշտարակ *և այլն*։*

Հայերենում հոդակապի տարածմանը նպաստել է նաև համաբանությունը, որը միշտ գործում է լեզվում։ Բացի բառակազմության մեջ լայն տարածում գտած ա հոդակապից, ժամանակակից հայերենում շատ քիչ դեպքերում հանդես է գալիս ե հոդակապը, որն ունի երկու դրսևորում։

ա) և հոդակապը ի+ա>ե *հնչյունափոխության արդյունք է, ինչպես՝* այգեգործ, գիհեգործ, բարեկամ *և այլն։*

բ) Վերհիշյալ ձևերի համաբանության արդյունք է. ինչպես, օրինակ՝ ճաշվենկչիու, ծաղկեփունջ, այցետոմս *և այլն։*

Որոշ դեպքերում բարդության բաղադրիչները միացնող միջոցները (դրաբարյան բացառական հոլովի վերջավորություն, նախդիր կամ երկուսը միասին) արտահայտում են տեղի՝ դռնեդուռ, տնետուն, գլխեգլուխ, *ինչպես նաև ժամանակի գաղափար. ինչպես, օրինակ՝* տարեցտարի, օրեցօր, ժամառժամ *և այլն։*

Այսպիսի դեպքերում, ինչպես տեսնում ենք, բարդության բաղադրիչները միացնող մասնիկները իմաստակիր են և դադարում են իմաստային տեսակետից բոլորովին չեզոք լինելուց, ինչպես վերը նշված դեպքերում։

---

* Ծանոթություն — Այնքան, որքան ձևույթը լեզվի իմաստակիր միավոր է, ապա միացնող ձայնավորի, այդ թվում նաև հայերենի հոդակապի համար ձևույթ տերմինը հանձնարարելի չէ, քանի որ հակառակ դեպքում խախտվում է ձևույթի սահմանը՝ դրանով ձևույթ են համարվում նաև լեզվի ոչ իմաստակիր միավորները։

ժամանակակից հայերենում հոդակապի դեր են կատարում նաև նախդիրներն ու շաղկապները: Ինչպես, օրինակ՝ ժամառժամ, հաղաթաղաթ, մերթընդմերթ, խոչընդոտ, առնառ, արդուզարդ, եռուզեռ և այլն:

Իհարկե նախդիրներով միացած բաղադրիչներ ունեցող բարդությունները շատ ավելի քիչ են, քան շաղկապներով միացած բաղադրիչներ ունեցող բարդությունները:

Շաղկապները նույնպես, ինչպես և նախդիրները, բարդության մեջ հանդես գալով իրենց սպասարկու (լեզվական միավորները միացնող) դերով, իմաստակիր են և այս առումով տարբերվում են հոդակապից:

Հայերենում ներմասնիկավորումը բառակազմության ժամանակ հանդես եկող ձևահնչութաբանական միջոցներից մեկն է, որը կիրառվում է բարդության կազմում հանդես եկող ձևույթների միացման համար: Իր այս դերով հայերենի հոդակապը որոշ չափով նմանվում է բառաբարդման հետ կապված հնչյունափոխությանը, որը բարդության բաղադրիչների կապակցման յուրահատուկ ձև է և չունի իմաստային արժեք: Այդ դժվար չէ նկատել, եթե համեմատելու լինենք մի շարք բարդությունների հոդակապով և անհոդակապ ձևերը, որոնք հայոց լեզվում կիրառվում են որպես ազատ տարբերակներ: Նշենք դրանցից մի քանիսը՝ բոցափետուր–բոցապետուր, սրտմաշուկ–սրտամաշուկ, թևլող–թևալող, վարդկակաչ–վարդակակաչ և այլն: Միայն խիստ սակավ դեպքերում հոդակապը կարող է իմաստազտիչ դեր կատարել, որը ինքնին հասկանալի է, օրինաչափություն լինել չի կարող: Ինչպես՝ ֆարտաշ (քար տաշող, ֆարատաշ) (քարից տաշված), հրձիգ (կրակ գցող, հրդեհող), հրաձիգ (հրազենից կրակող) և նման մի քանի բառեր:

Մյուս կողմից, ա հոդակապը շատ դեպքերում, հանդես է գալիս համաբանությամբ: Այսպես՝ որևէ տեսակետից (իմաստային, ոճական, բաղադրող հիմքերի բնույթով) նման մի բառ կարող է ներգործել բառին կամ բառերի խմբին՝ դրանք նմանեցնելով իրեն: Այսպես՝ պարահանդես, դիմակահանդես, բառերի նմանությամբ Պ. Սևակը ստեղծել է տրամահանդես բառը (ՊԱ, ԱՋ) կամ էլ սիրադրել՝ գործադրել-ի համաբանությամբ, անասուգ՝ անասիրտ-ի նմանությամբ և այլն (Ն. տ.):

Հայտնի է, որ հնչյունափոխության ժամանակ էլ համաբանությունը զգալի դեր է կատարում:

Սակայն հոդակապը և հնչյունափոխությունը, լինելով բարդ բառերի կազմում հանդես եկող ձևույթների փոխհարմարվածությունն ապահովող միջոցներ, միևնույն ժամանակ ունեն ակնհայտ տարբերություններ: Հընչյունափոխությունը օրինաչափ բնույթ է կրում. այն հանդես է գալիս որո-

շակի կառուցվածք ունեցող ձևույթների որոշակի դիրքերում: Այսպես, բարդության առաջին բաղադրիչի բաց վանկի ու-ն դառնում է վ (մեղվաբուծություն, կատվախոտ, լեզվակռիվ և այլն): Դրան հակառակ, հոդակապի առկայությունը ժխտող կամ հաստատող որևէ օրենք չկա հայերենում: Այն հանդես է գալիս ավանդաբար, սովորույթի ուժով: Հոդակապի գոյությունը հայերենի բառակազմությանը տիպական, բնորոշ երևույթ է, բայց կանոնավոր և օրինաչափ չէ:

Բաղադրող հիմքերի անդամատում — Այլ դեպքերում բարդությունների բաղադրիչները միանում են անդամատությամբ, այսինքն՝ բարդությունը հոդավորող ձևույթները մտնում են.բարդության կազմում ոչ ամբողջությամբ, այլ որոշ հնչյունների կրճատմամբ: Այստեղ գործ ունենք յուրահատուկ հնչյունափոխության հետ, քանի որ հնչյունափոխված բաղադրիչներ համարվում են այն բաղադրիչները, որոնք բարդության մեջ ենթարկվում են օրինաչափ հնչյունական փոփոխությունների (ու>ը, ի>ը, ա>ե և այլն): Իսկ այս դեպքում որևէ օրինաչափություն չի գործում, այլ ուղղակի բարդությունը բաղադրող հիմքերը, ելնելով տվյալ լեզվի հնարավորություններից, բարդության մեջ մտնում են որոշ հնչյունների կորուստով: Ընդ որում, այդ հնչյունները կարող են լինել և՛ ձայնավոր, և՛ բաղաձայն: Կրճատվել կարող են ինչպես առաջին, այնպես էլ վերջին բաղադրիչներում հանդես եկող հիմքերը:

Իհարկե, ավելի շատ կրճատվում են բարդության առաջին եզրում հանդես եկող բաղադրիչները որովհետև բարդության վերջին եզրում (ուր ընկնում է բառային հիմնական շեշտը), շեշտակիր բաղադրիչները համեմատաբար ավելի քիչ են կրճատվում: Այսպես՝ մրցասպարեզ, բնաշխարհ, երկիմաստ և այլն: Նման բարդությունների մեջ կարելի է դասել նաև ամփոփված հնչյունախմբերով բարդ բառերը՝ հասարակագիտություն, տավարած, աշխարհայացք և այլն: Բարդության բաղադրիչների անդամատումը հնարավորություն է տալիս խուսափել բաղաձայնների ու ձայնավորների կուտակումից հնչյունական շղթայում և ստանալ տվյալ լեզվի համար օրինաչափ ու բարհնչունչ կառուցվածք:

Բաղադրիչների պարզ զուգադրում — Լինում են դեպքեր, երբ բարդ բառերի կազմում հանդես եկող ձևույթների ձևական փոխհարմարումը վերը նշված միջոցներից (հնչյունափոխություն, ներմասնիկավորում, բաղադրիչների անդամատում) ոչ մեկով չի կատարվում, այլ բարդության կազմիչները ուղղակի կցվում կամ դրվում են իրար կողք (բայարմատ, պաղբոց, ֆոտոթղթակից և այլն): Մի շարք դեպքերում այդ բարդությունները կառուցվածքային տեսակետից բառային ամբողջություն չեն ներկա-

յացնում, այլ անջատվում են իրարից արտասանական փոքր դադարով, որը դրավոր խոսքում արտահայտվում է անջատ գրությամբ. ինչպես՝ դուր գալ, Պուխ տալ, սիրտ տալ և այլն: Բացի բերված օրինակներից, որոնք վերլուծական բարդություններ են, բաղադրիչների զուգադրում է կատարվում նաև համադրական բարդություններում. ինչպես՝ գաղթօջախ, երգաշխարհ, հարափ, ծովափ, պարզորոշ, վայրէջք, կիսոնկար, դրամարկղ, ծառուղի և այլն:

Բաղադրիչների յուրահատուկ զուգադրում է կատարվում նաև այն բարդ բառերում, որոնց բաղադրիչների միջև բնթևակի արտասանական դադար է զգացվում, որը դրավոր խոսքում արտահայտվում է միացման գծիկով. ինչպես, օրինակ՝ գիշեր-ցերեկ, առագ-առագ, խրնիք-ընթերցարան, համով-հոտով, ֆիլմ-օպերա և այլն:

Բարդության բաղադրիչների համադրելիության ձևահնչույթաբանական միջոց կարելի է համարել նաև այն հանգամանքը, որ բարդության ձայնավորով սկսվող երկրորդ բաղադրիչը հոդակապով չի միանում նախորդ բաղադրիչին. ինչպես, օրինակ՝ ծովափ, ժպտերես, ջրավազան, մշտուրախ, ծառուղի և այլն: Հնչյունական այս օրինաչափությունը ևս պահպանվում է հայերենի բարեհնչական առանձնահատկությունների պահանջով: Սակայն որոշ դեպքերում նույն բարեհնչունության թելադրանքով առանց հոդակապի են միանում նաև բարդ բառերի բաղաձայնով սկսվող բաղադրիչները: Ինչպես՝ հարսիրտ, պատշար, տանտիկին, հացթուխ և այլն, որոնցում կատարվում է բաղադրիչների պարզ զուգադրում:

Վերը շարադրված դեպքերում բարդության մեջ ընդգրկվող ձևույթները հնչյունական (ձևական) տեսակետից կրում են նշված փոփոխություններից մեկն ու մեկը: Իհարկե, իմաստային համադրելիության չափանիշը բոլոր դեպքերում մնում է, ոչ միայն մնում, այլև գերիշխում է:

Անհրաժեշտ է նկատել, որ բարդությունների բաղադրիչների համադրելիության ձևական միջոցները կարող են հանդես գալ ոչ միայն առանձին-առանձին, այլ նաև միասին: Միևնույն բարդ բառում շատ հաճախ են միասին հանդիպում հնչյունափոխությունն ու ներմասնիկավորումը (գծանկար, երկնակամար, պատժաչափ, հրակայուն, երաժշտասեր և այլն:

Ինչ վերաբերում է բաղադրիչների զուգադրմամբ կազմված բարդ բառերին, ապա ինքնին հասկանալի է, որ դրանցում ներմասնիկավորում, հնչյունափոխություն և բաղադրիչների անդամատում լինել չի կարող, քանի որ այս դեպքում իրար միանում են ամբողջական բառեր կամ

բառարմատներ։ Այսպես, օրինակ՝ պարզորոշ, դրամարկղ, երկաթուղի, ռադիոունկնդիր *և այլն։*

Բառաբարդման ժամանակ ձևույթային շղթայում հանդես եկող վերոհիշյալ երևույթները (ներմասնիկավորում, հնչյունափոխություն, բաղադրիչների անդամատում, պարզ դուգադրում) ծառայում են մի նպատակի՝ ձևական տեսակետից հարմարեցնել բաղադրող հիմքերը՝ բաղադրյալ բառ (տվյալ դեպքում բարդ բառ) կազմելու համար։ Այդ իսկ պատճառով նշված երևույթները արտացոլվում են ոչ թե բաղադրող հիմքերում, այլ բարդության մեջ, որովհետև բաղադրող հիմքերը առանձին, բարդությունից դուրս, փոխհարմարվելու կարիք չունեն։

Բարդ բառերի համադրման ժամանակ կատարվող ձևական փոփոխությունները կարելի է ամփոփել հետևյալ աղյուսակում (հիմնականում նկատի ունենք երկարմատ բարդ բառերը)։

Ձևույթային շղթայում կատարվող երևույթ	Բաղադրված բառ
Հնչյունափոխություն	$Ա. (հնչ.)+Ա_1$
Ներմասնիկավորում	$Ա.+(ն)+Ա_1$
Բաղադրող հիմքերի անդամատում	$Ա.—(×)+Ա_1$ $Ա.+Ա_1—(×)$
Բաղադրող հիմքերի պարզ դուգադրում	$Ա.+Ա_1$ $Ա.+մգ+Ա_1$

Ա., $Ա_1$ բաղադրող հիմքեր
Ն—Ներմասնիկավորում
X—անդամատվող մաս
Մգ—միացման գծիկ
Հնչ.—հնչյունափոխություն

4. ՀՆԱԻՆԱԿԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԲԱՌԵՐ

Ժամանակակից հայերենում կան նաև այնպիսի բառեր, որոնք կազմվում են կոնտեքստի պահանջով, և հաճախ անհասկանալի են դառնում տվյալ բառային միջավայրից դուրս։ Դրանք հիմնականում լինում են բաղադրյալ՝ մեծ մասամբ բարդ բառեր։

Իհարկե, այդպիսի բարդությունները սովորաբար նորակազմություններ են՝ ստեղծված որևէ հեղինակի կողմից։ Նման բարդությունները երբեմն կարող են յուրացվել տվյալ լեզվով խոսող հանրության կողմից և մտնել նրա բառապաշարի մեջ՝ յուրովի հարստացնելով համապատասխան լեզվի բառապաշարը։ Այդպիսի բառերը, որոնք կենդանի են հատկապես այն կոնտեքստում, որտեղից ծնվել են, ընդունված է անվանել հեղինակային[20], քանի որ դրանք ստեղծվում են առանձին հեղինակների կողմից։

Նման բառեր կարող են ստեղծվել նաև երեխաների կողմից, սակայն նրանք ի տարբերություն առանձին գրողների ստեղծած բառերի, կարող են չհամապատասխանել տվյալ լեզվի օրինաչափություններին և հետագայում տարածում չգտնել, մնալով որպես երեխայի մտավոր ու հոգևոր կարողությունների արդյասիք, որոնք, ի հակադրություն նախորդների, հնարավոր է, որ լինեն չտրամաբանված։

Իրավիճակի պահանջով կազմված բարդ բառեր՝ հեղինակային նորաբանություններ, հանդիպում են նաև թերթերում, ամսագրերում։ Հիշյալ բառերի և լեզվի փաստերի միջև անանցանելի սահման չկա։ Երբ այդպիսի բառերի իմաստը դառնում է հանրամատչելի տվյալ լեզվով խոսող ժողովրդի համար, ապա նրանք դառնում են համընդհանուր գործածության բառեր և վերածվում են լեզվի փաստերի։

Բառակազմության մեջ, այդ թվում նաև քննվող բառերի կազմության ժամանակ, դեր է կատարում նաև նմանակությունը։ Այսպիսի կազմությամբ բարդ բառեր կարող են ստեղծվել, ինչպես գործուն, այնպես էլ ոչ գործուն կաղապարների նմանակությամբ։ Համաբանությամբ կազմված բարդությունն այս դեպքում, որոշ առումով նմանվելով ընդօրինակվող կաղապարին, հանդես է բերում նաև զգալի տարբերություն նրանից։

Նմանակության մասին այն կարծիքը կա, թե այն հոգեբանական երևույթ է և բացատրվում է զուտ հոգեբանական գործոնով (խոսողների մոտ առաջանում է բառի ձևաբանական կողմի՝ ձևի անմիջական զգացումը), ընդ որում, այդ զգացումը հիմնվում է նման ձևերի ոչ գիտակցական ղուգորդման վրա[21]։

Այս տեսության թերությունն այն է, որ այն լեզուն կապում է ոչ թե

---

20 *Н. И. Фельдман,* Окказиональные слова и лексикография, ВЯ, 1957, №4, стр. 66.

21 *Ю. Р. Гепнер,* Некоторые проблемы словообразования в современном русском литературном языке, Русский язык в школе, 1956, 4, стр. 21.

մտածողության (մարդու բանական գործունեության), այլ ինտուիցիայի՝ որպես իմացության հիմնական աղբյուրի հետ:

Մինչդեռ, ինչպես մյուս դեպքերում, այնպես էլ բառաբարդման ժամանակ, չի կարելի անտեսել մտածողության դերը, այլապես ստեղծված բառերը չեն կարող տրամաբանական լինել, հետևաբար չեն կարող կենդանություն ստանալ և տարածվել լեզվում:

Ստեղծված լինելով առանձին անհատների կողմից՝ իրադրության պահանջով՝ հեղինակային նորաբանությունները տարբերվում են մյուս բառերից իրենց կիրառական խիստ սահմանափակ հաճախականությամբ: Եթե լեզվի որևէ սովորական բառ կարող է ունենալ բազմաթիվ կիրառություններ և հանդես գալ բազմազան ոլորտներում, ապա հեղինակային նորաբանությունը սովորաբար ավյալ տեքստից դուրս կիրառվել չի կարող: Մյուս կողմից՝ նշված կազմությունները շատ հաճախ հակադրվում են նորմային՝ իրենց հետ բերելով քերականական, բառակազմական, իմաստային «անճշտություններ», բայց դրանք այնպիսի անճշտություններ են, որոնք կապված են ոչ թե անուշադրության կամ չգիտենալու հետ, այլ պատճառաբանված են և ունեն նպատակադիր, կազմակերպված, ծրագրված բնույթ:

Նպատակ ունենալով բացառիկ թարմություն ու արտահայտչականություն հաղորդել տեքստին՝ այս կամ այն հեղինակը, բառն ստեղծելիս, թույլ է տալիս նորմայի որոշ խախտումներ: Անհրաժեշտ է նկատել, որ նման թույլատրելի շեղումները վերաբերում են լեզվում գոյություն ունեցող այնպիսի միավորներին, որոնք կարող են ունենալ տարբերականներ:

Քննվող բառերը հետաքրքիր են նաև նրանով, որ դրանցում կատարվում է համաժամանակյա և տարժամանակյա մոմենտների ներթափանցում, միաժեղում՝ բառն ստեղծվում է և անմիջապես գոնում իր կիրառությունը, ընդ որում, այն կարող է հետագայում այլ կիրառություն չունենալ կամ էլ շատ հազվադեպ կիրառվել, այդ պատճառով էլ նրանց խորթ են այնպիսի փոփոխությունները, որոնց ենթարկվում են բառապաշարի ավելի հաճախական բառերը՝ պարզեցումը, անդամատումը, վերաիմաստավորումը:

Այժմ տեսնենք, թե հեղինակային նորաբանություններն ինչպե՞ս են ոճականորեն հագեցնում տեքստը և ինչ դեր են կատարում գեղարվեստական պատկերի ձևավորման համար:

Առանձին հեղինակների ստեղծած բառերը շատ են հանդիպում բնապատկեր ստեղծելիս, ուր բնության այս կամ այն հատվածը նկարագրե-

վես կարիք է զգացվում ավելի խտացված ներկայացնել դույները և շոշափելի, տեսանելի դարձնել նկարագրվող առարկան, երևույթը։

Այսպես՝ Հ. Շիրազը Արագածի հավերժական ձյուներով պատված, ինչպես նաև նրա հնամենի լինելը բնութագրելու համար ստեղծել է ձյունամորուխ բառը.

Արագածը իմ վիթխարի
Ձյունամորուխ պապն է բարի (ՀՇ)։

Եվ իրոք, բանաստեղծական այս հատվածը նույն ազդեցությունն ու հնչեղությունը չէր ունենա, եթե ձյունամորուխ բառի իմաստն արտահայտված լիներ ավելի սպասելի, ավանդական տարբերակներով. ասենք՝ ձյունապատ, ձյունագագաթ և այլն։

Մի այլ բանաստեղծական պատկերում նա ձյունաբարբիշ բառով նկարագրել է Սիփան սարի ձնհալը։

Ձյունաբարբիշ թագ աչքերից աղբյուրներ է հանում նա,
Որ Վանա ծով իր թագուհին երբեք ծարավ չմնա(ՀՇ)։

Պատճառաբանված ու արդարացված է նաև աճեղալուռ բառի ստեղծումը, որով Հ. Շիրազը ցանկացել է մեկ բառի մեջ սեղմել, ամփոփել իր ժողովրդի համազգային ողբերգությունը, որից բանաստեղծի մեծ սիրտը կիսվել է, կուչ եկել ու դարձել մի բառ.

Էն ծովի պես իմ սիրտը մեծ,—
Հապա ինչու՞ մնաց մի բուռ՝
Հառաչելով աճեղալուռ (ՀՇ.)։

Նման բառաստեղծումը հատուկ է նաև Պ. Սևակի ստեղծագործություններին՝ «Անլռելի զանգակատուն» պոեմում հանդիպում ենք տրամահանդես, ամենահայ, ամենահայր, գիշեհարույց և մի շարք այլ բառերի։

Ամենամեծ դու նահատակ, ամենահայր, ամենահայ,
Գինու կարասն ուրիշներին, մեզ հերիք է քո մի թասը (ՊՍ)։
Ասրգածի, Արարատի հայացքի դեմ սգավոր,
Սև տուֆակերտ մի պալատի տրտմահանդես դահլիճում
Պառկած էր նա (ՊՍ)։

Մի դեպքում ամենահայ, ամենահայր ածականներով հեղինակը կոմիտասի մեծությունն ու մարդկայնությունն է ընդգծում, իսկ մյուս դեպ-

քում (տրտմահանդես բառով) արտահայտում է իր անդուլական զավակին կորցրած ժողովրդի ողբերգությունը:

Ինչպես տեսնում ենք, բառաստեղծումը հանդիսանում է բանաստեղծության անբաժանելի բաղադրամասը, և հաճախ պատկերը հնարավոր չէ ընկալել առանց նորակազմ բառի, իսկ եթե դրան էլ ավելացնենք, որ նման բառերն ապահովում են նաև բանաստեղծության հնչեղությունն ու մեղեդայնությունը, ապա դրանց անհրաժեշտությունն ավելի ակնհայտ կլինի:

Այժմ տեսնենք, թե նորմայի ինչպիսի՞ շեղումներ են կատարված հիշյալ նորաստեղծ բառերում:

Ամենաբ գերադրականի ցուցիչը ամենահայր բառում դրվել է գոյականի վրա, որը բնորոշ չէ ժամանակակից հայերենին, սովորաբար այն դրվում է որակական ածականի վրա և արտահայտում է որևէ հատկանիշի ամենաշատ լինելը[22]: Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, այն ստացել է միանգամայն անօրինաչափ կիրառություն՝ ստեղծելով ձևաբանական շեղում:

Իսկ սիրածում, թիավարդ, ձյունաբարբիշ, տրտմաճաճղես, աներազուն և այլ բառերում կատարված է բառակազմական խախտում: Այսպես՝ սիրածում բարդության սեր և ծում բաղադրիչներն իրենց իմաստներով չեն համադրվում, նույնը կարելի է ասել նաև տրտում և հանդես, աներ և լուռ, ձյուն և բարբիշ բաղադրիչների մասին:

Իսկ մարմնաներմակ մարմնաձյուն, երկնափիրուզ և այլ բառերում կատարված է բարդության բաղադրիչների դրափոխություն, քանի որ այս դեպքում ունենք որոշիչ-որոշյալի հարաբերությամբ բաղադրիչներ, որոնց որոշիչները ընկել են որշյալներից հետո (ժամանակակից հայերենին բնորոշ են ներմակամարմին, ձյունամարմին, փիրուզ երկինք ձևերը):

Դժվար չէ նկատել, որ նման նորակերտ բառերը ավելի շատ հանդիպում են բանաստեղծական խոսքում: Ընդհանրապես, գեղարվեստական, լրագրային, խոսակցական ոճերը հանդուրժում են անհատական լեզվական ձևեր, իսկ պաշտոնական, գիտական ոճերում ավելի քիչ են հանդիպում նման նորաբանություններ:

Ինչպես տեսանք, բառաբարդումը լավագույն միջոցներից մեկն է գեղարվեստական խոսքը ավելի արտահայտիչ դարձնելու համար: Գեղարվեստական խոսքի վարպետները հաճախ են դիմում դրան: Սակայն բառաբարդման չարաշահումը կարող է հակառակ ազդեցություն ունենալ: Այս-

---

22 Ս. Պապոյան. Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևան, 1970, էջ 101:

պես, երբեմն բարդության մեջ համադրվում են այնպիսի բառեր, որոնք առանձին-առանձին յուրովի են բնութագրում որևէ առարկա, երևույթ կամ այնպիսիները, որոնց համադրումը միանգամայն անտեղի է։ Այսպիսի դեպքերում ավելի նպատակահարմար է իմաստներն արտահայտել բազմակի անդամներով կամ էլ նկարագրական եղանակով, բայց ոչ՝ բարդ բառով։ Հարկավոր է խուսափել դրանցից, որպեսզի լեզվում չլինեն ոչ այնքան էլ հստակ, երկիմաստ կազմություններ։ Օրինակ՝ միանգամայն անտեղի է մարդ–անդաստան, մարդ–ոգի, հույս–բարդի բարդ բառերի բաղադրիչների համադրումը միևնույն բառի մեջ։ Ավելի ճիշտ կլիներ համապատասխան իմաստներն արտահայտել նկարագրական ձևով, քանի որ նշված բառերը գծիկով միացնելը նպատակահարմար չէ, և այդ բարդությունները խիստ արհեստական են։

Նշենք բնագրային օրինակներ.

Մարդ–անդաստանից փուշը քաղհանեմ,
Աշխարհից տատասկն հավիտյան հանեմ
Սնեմ մարդ–ոգու մանուշակները (ՀՇ)։
Վախենում եմ, թե վշտիս
Կես դարը երբ դար դառնա՝
Պատուղ չտա հույս–բարդիս
Էլ ավելի դառնանա (ՀՇ).

Երբեմն մամուլում, դիտական, գեղարվեստական գրականության մեջ հանդիպում են երկուսից ավելի հիմնական բաղադրիչներով բարդ բառեր, որոնք հաճախ ծանրացնում են ոճը։ Նման դեպքերում միտքն ավելի հստակ դարձնելու համար առանձին հեղինակների կազմած բազմաբարդ բառերը հակառակ արդյունքն են տալիս, և ստացվում են ավելորդ երկարաբան կազմություններ, որոնք ոչ միայն հստակություն չեն բերում, այլ ընդհակառակը՝ աղճատում են լեզուն, միտքը դարձնում անհասկանալի, ոչ ցայտուն։

Անշուշտ, բառաբարդման տեխնիկայի այսպիսի չարաշահումն անտեղի է, ոչ խրախուսելի։

Հնարավոր (պոտենցիալ) բառեր—Բացի հեղինակային նորաբանություններից, կան նաև այսպես կոչված պոտենցիալ[23] բառեր։ Այս բառերը կազմվում են միանգամայն օրինաչափ կերպով՝ լեզվում եղած արդյունավետ կազապարների ընդօրինակմամբ։ Սովորաբար նման բառերը

---

23 Г. О. Винокур, Маяковский новатор языка, М., 1943, стр. 15.

կազմվում են տվյալ լեզվի խիստ կենսունակ ձևույթների միջոցով և դուրս չեն գալիս այս կամ այն լեզվի բառակազմական հնարավորություններից։ Այսպիսի բառերը կարող են հանդես չգալ, եթե նրանց կարիքը չլինի, դրանք մի տեսակ պահեստային բառեր են, որոնք իրական են դառնում այն ժամանակ միայն, երբ խոսողը որևէ իմաստ արտահայտելու համար կրկնում է ոչ թե վաղուց հայտնի բառը, այլ իրեն հայտնի կաղապարով կազմում է նոր բառ. ինչպես, օրինակ՝ **մշտադալար** բառի նման՝ մշտաշարժ, մշտագեղ, մշտախոս, մշտագուսպ, մշտաեռ, մշտազբաղ, մշտաժխոր, մշտալուրջ, մշտաճոլով, մշտաճոս և այլն։ Հայտնի է, որ միշտ բառը բառակազմական մեծ կենսունակություն ունի և նրանով կազմվում է բառերի մի մեծ շարք։

Հնարավոր (պոտենցիալ) բառերի նոր լինելը այնքան էլ ցայտուն չէ, քանի որ դժվար է լինում որոշել, թե ե՞րբ է այն առաջին անգամ կիրառվել. բուն էության այն լեզվում գոյություն ունեցող բառակազմական հնարավորության իրականացում է։

Այսպիսով, պոտենցիալ կոչվում են այն բաղադրյալ բառերը, որոնք ստեղծվել են, բայց չեն կայունացել լեզվում կամ էլ կարող են կազմվել լեզվում գոյություն ունեցող կենսունակ կաղապարների նմանակությամբ[24]։

Պոտենցիալ բառերի իմաստը ամբողջությամբ կազմվում է նրա բաղադրիչների իմաստից՝ առանց իմաստային որևէ հավելումի, մինչդեռ լեզվում կայունացած բառերում հնարավոր է, որ բարդ բառն արտահայտի ավելի իմաստ, քան ունեն նրա բաղադրիչները։ Այդ է պատճառը, որ դարձվածաբանական իմաստ արտահայտող կամ իմաստափոխված բարդ բառերի կաղապարներով պոտենցիալ բառեր չեն կազմվում։ Այդպիսիք են դարձվածային իմաստ արտահայտող հարադրական բարդությունները։

Հիշյալ իմաստային առանձնահատկության պատճառով պոտենցիալ բարդ բառերը շատ մոտ են կանգնած իրենց համապատասխան բառակապակցություններ։ Դրան հակառակ, կան այնպիսի բառակազմական տիպեր, որոնցով կազմվում են և՛ սովորական, և՛ պոտենցիալ բառեր։ Ինչպես, օրինակ՝ –իչ ածանցով կազմված բայանունները՝ ատամփորիչ, ախտահանիչ, կրակմարիչ, *մյուս կողմից՝* ամպերչափիչ, ջրաչափիչ, կրկնահերկիչ և այլն։

Պոտենցիալ բարդ բառերը տարբերվում են հեղինակային նորաբա-

---

[24] *А. И. Смирницкий*, Лексикология, английского языка, М., 1956, стр. 17—18.

նություններից: Եթե վերջիններս կազմվում են պատահականորեն և տվյալ կոնտեքստից դուրս հաճախ անհասկանալի են, ապա պոտենցիալ բառերը լեզվի բառակազմական հնարավորությունների օրինաչափ իրականացումներ են: Բացի այդ, հեղինակային նորաբանություններում կարող է կատարվել լեզվում գոյություն ունեցող օրինաչափության խախտում, մինչդեռ պոտենցիալ բառերը միանգամայն օրինաչափ կազմություններ են, միայն քիչ գործածված, դեռևս չկայունացած:

Միաժամանակ, թե՛ մեկը և թե՛ մյուսը լեզվական համակարգի հնարավորություններ են. միայն մի դեպքում (պոտենցիալ բառեր) այդ հնարավորությունը դառնում է իրականություն, որն արդեն ուղի է հարթում իր համար, իսկ երկրորդ դեպքում՝ (հեղինակային նորաբանություններ) հնարավորությունը իրականություն կարող է դառնալ միայն բարեհաջող պայմաններում:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԲԱՌԱԲԱՐԴՄԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Բառաբարդումը կարևոր միջոց է լեզվի բառային կազմի՝ հետևաբար և առանձին խոսքի մասերի հարստացման համար: Այն որոշ չափով առնչվում է ձևաբանության և շարահյուսության հետ: Շարահյուսության հետ բառաբարդման կապն արտահայտվում է բարդության բաղադրիչների բազմազան շարահյուսական փոխհարաբերություններով և բարդությունների հարաբերակցությամբ բառակապակցություններին:

Մյուս կողմից, առանձին խոսքի մասերին պատկանող շատ բառեր արտահայտվում են բարդություններով: Քիչ չեն բարդ բառերով արտահայտված գոյականները, ածականները, բայերը, թվականները: Սակայն պետք է նշել, որ բառաբարդումը տարբեր չափով է մասնակցում առանձին խոսքի մասերի հարստացմանը: Անվանական խոսքի մասերից այն ավելի գործուն է գոյականի, ածականի ոլորտներում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեքվող խոսքի մասերն ավելի լայն բառաբարդման հնարավորություններ ունեն, քան երևույթին, նրանց քերականական կարգեր (թիվ, հոլով, դեմք) ունենալը օժանդակում է բարդ բառ կազմելուն, բարդության կազմի մեջ մտնող հիմքերի փոխհարմարվելուն:

1. ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Գոյականը մի խոսքի մաս է, որն արտահայտում է առարկա, առարկայական հասկացություն: Այդ նշանակում է, որ յուրաքանչյուր գոյա-

կան, անկախ իր կազմությունից և բառային յուրահատուկ իմաստից, պետք է անվանի առարկա, ինչպես նաև հատկանիշ, գործողություն, որոնք գիտակցվում են որպես առարկայական հասկացություններ, ինչպես՝ տեղ, գեղեցկություն, դասախոսություն և այլն։

Գոյականը, ինչպես և յուրաքանչյուր խոսքի մաս, բնորոշվում է ոչ միայն իմաստային հատկանիշներով, այլև քերականական՝ (նրան յուրահատուկ են թվի, հոլովի, առման քերականական կարգերը) ինչպես նաև՝ բառակազմական։

Բառակազմական տեսակետից գոյականները բավականին բազմազան են. նրանք կարող են լինել պարզ, ածանցավոր, բարդ։ Մեր քննության առարկան կլինեն բարդ և բարդ ածանցավոր գոյականները, որոնց նույնպես բնորոշ են վերոհիշյալ իմաստային ու քերականական առանձնահատկությունները։ Միայն թե բարդ գոյականները կազմված են լինում մեկից ավելի արմատներից և քերականական իմաստ արտահայտում է ամբողջ կառուցվածքը, քանի որ բարդության կազմի մեջ մտնող հիմքերը քերականորեն չեզոքանում են։ Այդ հատկապես վերաբերում է բարդության առաջին բաղադրիչին, որը չունի ձևաբանական ձևավորվածություն ի տարբերություն բարդության վերջին բաղադրիչի (ձևաբանական փոփոխությունների ենթարկվելիս քերականական իմաստ արտահայտող մասնիկներ ստանում է բարդության վերջին բաղադրիչը)։ Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ բարդության բաղադրիչները կառուցվածքային, իմաստային միասնություն են կազմում և վերջին բաղադրիչի ձևավորումը համընկնում է ամբողջ բարդ բառի ձևավորմանը։

Գոյականը այն խոսքի մասերից մեկն է, որում բավականին կշիռ ունեն բառաբարդված ձևերը, և որն ավելի գործածական ու շարունակ համալրվող դաս է ներկայացնում լեզվի զարգացման ամբողջ պատմության ընթացքում։

Բառաբարդումը գոյականների կազմության ամենահին միջոցներից մեկն է։ Այն եղել և մնում է շատ լայնորեն կիրառվող բառակազմական միջոց, ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում։ Շատ գոյական-նորաբանություններ կազմվել են բառաբարդմամբ. ինչպես լուսնագնաց, ռադիոկայմ, հեռակետ, հեռուստակենտրոն և այլն։

Հասկանալի է, որ հայերենի բառաբարդման տեխնիկան իր ամբողջ հկունությամբ հանդես է գալիս գոյականների համակարգում, ուր կարելի է գտնել բարդ բառերը բազմազան կաղապարներ իրենց բազմազան իմաստային ընդգրկումներով։

Ձևաբանական կառուցվածքի տեսակետից բավական բազմազան են

գոյականակերտ բառակազմական կաղապարները: Բարդ բառերով արտահայտված գոյականներ կարող են կազմվել հետևյալ կաղապարներով[25]:

ա) գոյական+գոյական՝ հատակագիծ, դիմագիծ, ծյուռնակույտ, լեռնաշղթա, հուշաքվեր, ավազահատիկ, տուն ու տեղ, վար ու ցանք և այլն. Այս կաղապարով կազմված գոյականների մեջ բավականին մեծ թիվ են կազմում անվանական հարադրություննները՝ տուն ու տեղ, օր ու գիշեր, աճ ու դող և այլն: Գոյական+գոյական կաղապարը բավականին արդյունավոր է բարդ բառերի կազմության մեջ: Այս կաղապարով կազմվում են նաև այլ խոսքի մասեր (մակբայներ, ածականներ):

բ) Գոյական+բայարմատ՝ մանկավարժ, գրաշար, փոստատար, գործակատար, մանրէասպան, մատենագիր, անասնաբույժ և այլն:

գ) Ածական+գոյական՝ լիալուսին, հարթավայր, վերնատուն, կիսագունդ, կիսաշրջան, սևահող և այլն:

դ) Թվական+գոյական. ինչպես՝ եռանկյունի, ենգամարտ և այլն: Այս կաղապարով ավելի շատ կազմվում են ածականներ, իսկ գոյականների մեծ մասը բարդ ածանցավոր բառեր են. ինչպես, օրինակ՝ եռոտանի, տասնամյակ, ենգամյակ, տասնօրյակ, եռամսյակ, հազարամյակ և այլն:

ե) Դերանուն+գոյական՝ ինքնամոռացում, ինքնաճանաչություն, ինքնամերկացում, իրարանցում և այլն:

զ) Դերանուն+բայարմատ. ինչպես, օրինակ՝ ինքնաեռ, ինքնահոս, ինքնաթիռ, ինքնագիր և այլն:

է) Բայարմատ+գոյական. ինչպես՝ գոռոզախտակ, դրդապատճառ, աշխատասենյակ, մարզադաշտ, հանգստավայր, գծապատկեր, մրցապարեզ և այլն:

ը) Մակբայ+գոյական. ինչպես՝ հետուստահեռություն, հետազգայություն, կանխորոշություն, կանխագուշակություն, հետզրություն, կանխավճար, կանխավճիռ և այլն:

թ) Բայ+բայ (բայարմատ). այս կաղապարով կազմված բարդ գոյականները չափազանց սակավադեպ են: Ինչպես, օրինակ՝ ելևէջ, առևտուր, ելումուտ, կերուխում և այլն: Նշված կաղապարով կազմված գոյականների հազվադեպ լինելը բացատրվում է նրանով, որ բայերի զուգադրությամբ հիմնականում արտահայտվում է գործողության, եղելության գաղափար և հաճախ թե դրանցով հնարավոր լինի արտահայտել առար-

25 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 202—204:

կայի կամ որպես այդպիսին մտածված երևույթների դաղափար։ Ուստի պարզ է, որ այս կաղապարով հիմնականում կազմվում են բայեր։

ժ) Զայնարկություն+ձայնարկություն, բնաձայնություն+բնաձայնություն. *այս կաղապարներով կազմված բարդ գոյականները, և ընդհանրապես բարդ բառերը, նույնպես սակավադեպ են։ Կարելի է նշել ընդամենը մի քանի բառ՝* վայ-վայ, հայհայ *(«Հայհայը գնացել, վայվայն է մնացել» դարձվածքի մեջ),* հոպոպ *(հոպ+հոպ),* կուկու, ախ ու վախ. *ինչպես նաև* -ոց *ածանցով կազմված մի շարք բառեր՝* խշխշոց, փսփսոց, սվսվոց *և այլն։*

Անհրաժեշտ է նկատել, որ վերոհիշյալ կաղապարները տարբեր կենսունակություն ունեն գոյականների կազմության մեջ։ Գոյականների համակարգում ավելի շատ հանդիպում են գոյական+գոյական, գոյական+բայարմատ, ածական+գոյական, բայարմատ+գոյական *ձևաբանական կառուցվածք ունեցող բարդությունները։*

Սրանցից ավելի պակաս կենսունակ են թվական+գոյական, դերանուն+գոյական, մակբայ+գոյական *կաղապարները։ Իսկ մյուս՝* բայ+բայ, ձայնարկություն+ձայնարկություն *կաղապարներով կազմված գոյականները չնչին տոկոս են կազմում հիշյալ խոսքի մասի համակարգում և ինքնին հասկանալի է, որ նրանց դերը գոյականների հարստացման մեջ չափազանց աննշան է։*

Վերոհիշյալ կաղապարներով կազմված գոյականակերտ բարդությունների բաղադրիչները շարահյուսական տեսակետից կարող են ունենալ ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական փոխհարաբերություն։ Համադասական փոխհարաբերության դեպքում բարդության բաղադրիչները համազոր են և միասին կերտում են նոր բառ։ Ինչպես. օրինակ՝ վար ու ցանք, տուն ու տեղ, գիշեր-ցերեկ, ախ ու վախ, նիստ ու կաց *և այլն։ Բաղադրիչների ստորադասական փոխհարաբերության դեպքում բարդ բառի կազմիչներից մեկը շարահյուսորեն գերադաս է մյուսի նկատմամբ։ Հայերենում այդպիսի բառերի իմաստային միջուկը երկրորդ՝ գերադաս բաղադրիչն է, իսկ առաջինը՝ նրա լրացումն է։ Ինչպես,* օրինակ՝ վերջալույս, առակագիր, երկնակամար, դռնշմահանդակ, դիմակահանդես *և այլն։*

Ընդհանրապես հայերենի բարդությունների մեջ ստորադաս բաղադրիչներով բարդությունները գերակշռող են համադաս բաղադրիչներով բարդությունների համեմատությամբ։ Նույնը կարելի է ասել նաև գոյականակերտ բարդ բառերի մասին. դրանցում էլ գերակշռում են շարահյուսական տեսակետից ստորադասական հարաբերությամբ կազմված

բաղադրիչներով բարդ բառերը։ Մյուս կողմից, պետք է նկատել, որ համադաս բաղադրիչներով բարդ բառերը բավականին գործուն մասնակցություն ունեն գոյականների կազմության ժամանակ՝ մյուս խոսքի մասերի համեմատությամբ։ Եթե նկատի չունենանք մակբայները, ապա կարելի է ասել, որ ամենից շատ համադաս բաղադրիչներ ունեն բարդ բառերով արտահայտված գոյականները (այս առումով գոյականներին մոտենում են բայերը)։

Իր իմաստային առաձգականության շնորհիվ գոյականը կարող է մասնակցել ինչպես ինքը իր, այնպես էլ մյուս խոսքի մասերի կազմությանը։ Համադաս բաղադրիչներ ունեցող բարդ գոյականների գերակըշռող մասն ունի գոյականով արտահայտված հոդավորիչներ։ Նշված բարդ բառերի մեծ մասը կազմվում է համազոր, կամ իմաստով մոտ գոյականներով, որոնք միանում են շաղկապներով (աղ ու հաց, հարց ու փորձ, այրուձի, ասուլիս և այլն), նախդիրներով (որոնք քիչ են). ինչպես՝ գույնզգույն օրըստօրե և այլն։ Առանձին դեպքերում նման բարդությունների բաղադրիչների կապն ապահովվում է միայն նրանց իմաստային մերձավորությամբ, որը գրավոր խոսքում արտահայտվում է միացման գծիկով. ինչպես, օրինակ՝ ձյուն-ձմեռ, գիշեր-ցերեկ, աղաչանք-պաղատանք, արմանք-զարմանք և այլն։

Կառուցվածքով բարդ գոյականների և, ընդհանրապես, բարդ բառերի իմաստային, բառակազմական առանձնահատկությունները պարզաբանելիս պետք է նշել, որ դրանցից յուրաքանչյուրի հիմքը շատ դեպքերում շարահյուսական կապակցություն է, որը բաղկացած է առանձին, ինքնուրույն միավորներից։

Այդ պատճառով նպատակահարմար է բարդ գոյականների քննությունը կատարել՝ ելնելով նրանց բաղադրիչների շարահյուսական փոխհարաբերություններից։ Այդ փոխհարաբերությունները լինում են համադասական և ստորադասական։

Համադաս բաղադրիչներով բարդ գոյականներ—Շարահյուսական տեսակետից համադաս բաղադրիչներով գոյականակերտ բարդությունները հիմնականում արտահայտվում են գոյական+գոյական կաղապարով և հանդես են բերում մի շարք իմաստային առանձնահատկություններ, որոնցից ամենատարածվածները կարելի է խմբավորել հետևյալ իմաստային դաշտերի մեջ.

ա) մարդկային դանազան հոգեվիճակներ արտահայտող բարդություններ։ Այս բարդությունների բաղադրիչները իմաստային մերձավորության ունեցող բառեր են և իրենց նշանակությամբ չեն հեռանում ամ-

բողջ բարդության արտահայտած իմաստից. միայն բարդության մեջ ավելի խտացված են հանդես գալիս առանձին բաղադրիչների իմաստները։ Ինչպես, օրինակ՝ աի ու դող, լաց ու կոծ, ծափ ու ծիծաղ, աի ու սարսափ և այլն։

բ) Մարդկային կյանքն ու կենցաղային որոշ հարաբերություններ արտահայտող բարդ բառեր՝ ասուլիս, կերուխում, թուխ ու մուր, ծեծ ու ջարդ, անց ու դարձ, ծաղր ու ծանակ և այլն։ Նման բարդությունների բաղադրիչներն իրենց իմաստով համազոր են և սերտ կապված միմյանց հետ, որոնք միանալով, ավելի ամբողջական են դարձնում բարդության արտահայտած իմաստը։

գ) Զանազան առարկաների և երևույթների հավաքականություն արտահայտող բարդություններ։ Այս բարդությունների բաղադրիչներն ունեն բազմազան իմաստային ընդգրկումներ և բարդ բառերի մեջ չեն պահպանում իրենց իմաստները, այլ միասին արտահայտում են մի ընդհանուր, հավաքական նշանակություն։ Ինչպես, օրինակ՝ տուն ու տեղ, վար ու ցանք, շենք ու շնորհք, հավ ու ճիվ, աման-չաման, մարդ-մուրդ, ոսկոր-մոսկոր, հաց-մաց և այլն։

դ) Բնության երևույթներ արտահայտող բարդություններ. ինչպես՝ ձյուն-ձմեռ, բուք ու բորան, գիշեր-ցերեկ, օր ու գիշեր, ամպ-զամպ և այլն։

Այս բարդությունների հոդավորիչների իմաստը չի հեռանում ամբողջ կառուցվածքի իմաստից։

Սակավաթիվ բարդ գոյականներ կազմվում են ձայնարկություններով և բնաձայնական բառերով։ Այս բարդություններում առկա է ձայնարկությամբ կամ բնաձայնությամբ արտահայտված բառիմաստի աստիճացում։ Նման բարդ բառերում փոխհարաբերության մեջ են մտնում ղգացական ու կամային վերաբերմունք արտահայտող բառեր և բնաձայնական բառեր։ Վերջիններս գոյականի են վերածվում -ոց գոյականակերտ ածանցի միջոցով։ Ինչպես, օրինակ՝ խշխշոց, փսփսոց, ավավոց, դրդրդոց, դխկդխկոց և այլն։ Ձայնարկություններով կազմվում են չափազանց սահմանափակ թվով բարդություններ. ինչպես՝ ախ ու վախ, ախ ու վիշ, վայ-վայ, հայ-հայ գոյականները։

Համադաս բաղադրիչներով բարդությունները շատ մոտ լինելով համապատասխան բառակապակցություններին, ունենում են նաև մի շարք տարբերություններ։ Նախ դրանց տարբերությունը կառուցվածքային է. և հնչյունական, քանի որ առանձին կառույցների կազմության ժամանակ լեզվական (հնչյունական) նյութը տարբեր ձևավորում է ստանում. մի

դեպքում դրանք ձևավորվում են որպես շարահյուսական առանձին միավորներ՝ իրենց համապատասխան ձևաբանական, հնչյունական առանձնահատկություններով (դադար, շեշտ), այս դեպքում գործ ունենք բառակապակցության հետ: Մյուս դեպքում կառուցվածքի բաղադրիչների կապն այնքան սերտ է, որ նրանք ձևավորվում են որպես մեկ բառ: Իսկ իմաստային տարբերությունները, կապված կառուցվածքայինի հետ, հատկապես այն ժամանակ են հանդես գալիս, երբ լեզվական երկու կառույցներն էլ (բառակապակցությունը և բարդ բառը կամ դրանցից որևէ մեկը) վերաիմաստավորված չեն: Նման դեպքերում այդպիսի բառակապակցությունները իրենց համապատասխան բարդությունների շարահյուսական փոխակերպերն են ներկայացնում:

Սառեդաս բաղադրիչներով բարդ գոյականներ—*Սառեդաս* բաղադրիչներով բարդ գոյականները զգալի տեղ են գրավում հայերենի բառապաշարում: Այսպիսի գոյականներ կազմվում են սառեդաս բաղադրիչներ ունեցող համարյա բոլոր կաղապարներով (որոշիչ+որոշյալ, հատկացուցիչ+հատկացյալ, գործողության օբյեկտ+գործողություն, գործողության հանգման առարկա+գործողություն, գործողության կատարման միջոց+գործողություն, գործողության կատարման ձև+գործողություն, գործողության կատարման տեղ, ժամանակ+գործողություն և այլն): Վերոհիշյալ բարդությունների մեջ, և ընդհանրապես, հայերենի բարդ բառերի գերակշռող մասում, հիմնական իմաստային կենտրոն հանդիսացող մասը վերջին բաղադրիչն է: Վերջինս արտահայտում է այնպիսի իմաստ, որը կոնկրետանում է առաջին բաղադրիչի միջոցով. հետևաբար, հիմնական բաղադրիչի արտահայտած իմաստն ավելի լայն է, քան նրան սառեդասվող բաղադրիչի իմաստը: Ինչպես, օրինակ՝ զարդաճաղակ, գգեստապահարան, գրասեղան, պարարվեստ, դիմակահանդես և այլն: Ընդ որում, գերադաս բաղադրիչը կարող է լինել անվանական կամ բայական: Առաջին դեպքում բարդության բաղադրիչների կապակցությունը հիշեցնում է անվանական բառակապակցություն՝ որոշիչ, հատկացուցիչ կախյալ բաղադրիչներով, իսկ երկրորդ դեպքում՝ բայական բառակապակցություն, ուր կախյալ բաղադրիչները խնդիրներն ու պարագաներն են: Նման բարդությունների գերադաս և կախյալ բաղադրիչները կապվում են շարահյուսական կապակցության համարյա բոլոր միջոցներով՝ շարադասությամբ, առդրմամբ, խնդրառությամբ, համաձայնությամբ:

Այժմ տեսնենք, թե շարահյուսական ինչպիսի փոխհարաբերություն-

ներ են հնարավոր գոյականակերտ բառաբարդման կաղապարներում և ինչպիսի՞ իմաստային առանձնահատկություններ ունեն դրանք:

Որոշիչ+որոշյալ—Հայերենի բառապաշարի հարստացումը բարդ գոյականներով կատարվում է հատկապես որոշիչ+որոշյալ կաղապարով կազմված բարդությունների հաշվին: Բաղադրիչների այսպիսի շարահյուսական փոխհարաբերությամբ կազմված կաղապարը համարյա ամենագործածուն է եղել հայոց լեզվի զարգացման ամբողջ պատմության ընթացքում:

Այս կաղապարով կազմված բարդությունների որոշիչ բաղադրիչն արտահայտում է այնպիսի հատկանիշ, որը բնորոշ է բարդության հիմնական բաղադրիչով արտահայտված առարկաներին, երևույթներին: Ձևաբանական տեսակետից հիշյալ կաղապարով կազմված բարդությունների երկրորդ բաղադրիչները միօրինակ են (արտահայտված են լինում գոյականով): Դրան հակառակ խիստ անմիօրինակ է առաջին բաղադրիչի խոսքի մասային պատկանելությունը:

Ձևաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշիչ-որոշյալ հարաբերությամբ բաղադրիչներով բարդությունների ստորադաս բաղադրիչը կարող է լինել գոյական, ածական, թվական, բայարմատ, մակբայ:

Մի շարք դեպքերում բարդ բառի որոշիչ բաղադրիչի և ածականի միջև կա ծագումնաբանական և իմաստային կապ, այնքան, որքան որոշիչ բաղադրիչը հանդես է գալիս որպես հատկանիշներ արտահայտող և շատ դեպքերում արտահայտվում է ածականով: Այն ցույց է տալիս գույն, ձև, ծավալ, նիւրին հատկանիշներ, մի բան, որը հատուկ է նաև ածականին: Բացի ածականներից, որոշիչի դեր կարող են կատարել նաև այլ խոսքի մասեր, որոնք նույնպես յուրովի հատկանիշ են արտահայտում:

Գոյականների բաղադրությամբ կազմված բարդ գոյականները կարող են ունենալ ինչպես իմաստափոխված բաղադրիչներ, այնպես էլ հակառակը: Իմաստափոխված բաղադրիչներով բարդություններում ավելի ցայտուն է դրսևորվում որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությունը, ինչպես՝ **ձյունաթարթիչ, ձյունագազաթ, լուսներես, արևահամ, ֆարասխրտ** և այլն:

Գոյականակերտ բարդությունների մյուս խմբում, որտեղում բաղադրիչները իմաստափոխված չեն, որոշիչ-որոշյալ հարաբերությունը շփման եզրեր ունի հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերության հետ, ինչպես, օրինակ՝ **զգեստապահարան, գանձատուփ, ծովացուլ, գետնասկյուռ, ավազանող** և այլն:

Ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, երկու գոյականների

դուգադրությամբ ավելի շատ կազմվում են ածականներ։ Որոշիչի դեր կատարող գոյականները, բարդության մեջ ցույց տալով զանազան հատկանիշներ և, միանալով բարդության կազմի մեջ մտնող մյուս գոյական բաղադրիչի հետ, անվանում են առարկաներ ու երևույթներ։ Այսպես, օրինակ՝ դրանք կարող են անվանել ա) սննդամթերքներ՝ թխվածքաբլիթ, շաքարավազ, մեղրաբլիթ, յուղաբլիթ և այլն։ բ) Քիմիական նյութերի անուններ՝ ծծմբաթթու, աղաթթու, պղնձարջասպ և այլն։ գ) Կենցաղային գործածության առարկաներ՝ աղաման, մեղրամոմ, մեղրամաղ, ցախավել, ծխախոտատուփ և այլն։ դ) Մաղիկների անուններ՝ վարդկակաչ, հովտաշուշան, բրաշուշան, լվածաղիկ և այլն։

Վերոհիշյալ դեպքերում համարյա բոլոր բարդությունների բաղադրիչների իմաստը մոտենում է ամբողջ կառուցվածքի իմաստին։ ե) Կենցաղի, արվեստի, մշակույթի հետ կապված երևույթներ։ Նույնպիսի իմաստ ունեն նաև բարդությունների բաղադրիչները. ինչպես, օրինակ՝ ցուցահանդես-վանահոր, ֆիլմ-օպերա, բժիշկ-բերապետ, կինոթատրոն, վագոն-ռեստորան և այլն։ Հիշյալ բարդությունները բառապատճենումներ են, առանձին դեպքերում՝ նաև փոխառություններ։ Ինչպես երևում է օրինակներից, վերոհիշյալ բարդ բառերի մեծ մասը զանազան տերմիններ են, առարկաների ու երևույթների անվանումներ, որոնցում դժվար է իմաստափոխություն փնտրելը։ Իմաստափոխված չեն նաև այդ բարդությունների բաղադրիչները։ Հետևաբար այսպիսի բարդ բառերի համապատասխանությունը համարժեք բառակապակցություններին ակնհայտ է։ Ինչպես՝ ածխահանք→ածխի հանք, կավաշերտ→կավի շերտ, ծխախոտատուփ→ծխախոտի տուփ և այլն։ Բարդությունների այս խմբում, բացի հատկանշային հարաբերությունից, առկա է նաև պատկանելության, վերաբերության հարաբերությունը, բայց ավելի գերակշռում է հատկանշային հարաբերությունը։ Ինչպես, օրինակ՝ աղյուսամայր→մայր աղյուս, աղյուսի մայր, կավաշերտ→կավային շերտ, կավի շերտ և այլն։

Գոյականներ են կազմվում նաև բայահիմք+գոյական և դերբայ+գոյական կաղապարներով, որոնց բաղադրիչները նույնպես ունեն որոշիչ-որոշյալի փոխհարաբերություն։ Այսպես, օրինակ՝ վաճառող, գրատախտակ, խաղահրապարակ, մարզասրահ, սալահատակ և այլն։ Նման բարդություններում գործ ունենք տարբեր բայահիմքերի և անորոշ դերբայի սեռական հոլովի իմաստների հետ, որոնք բարդության մեջ ամենատարբեր կողմերից բնութագրում են գոյականով արտահայտված գերադաս բաղադրիչներին։

Որոշիչ-որոշյալի փոխհարաբերությամբ կապված բաղադրիչներով

մի շարք բարդություններում առաջին բաղադրիչը բնութագրում է իր գերադաս բաղադրիչը գտնվելու տեղի տեսակետից. ինչպես օրինակ՝ վերնաշապիկ, ներքնահարկ, մեջտեղ, վերնահարկ, վերնաշերտ, վերնազգեստ, վերնախավ և այլն: Ինչպես երևում է օրինակներից, բարդությունների ստորադասված բաղադրիչները արտահայտված են ածականներով, իսկ գերադասները, ինչպես միշտ, գոյականներով: Այս դեպքում գործ ունենք ածական+գոյական կաղապարի հետ: Եթե խոսելու լինենք այս բարդությունների արտահայտած իմաստների մասին, ապա կարելի է ասել, որ դրանց մեծ մասն արտահայտում է մարդկային կյանքի, կենցաղի հետ կապված իրեր, երևույթներ: Բարդությունների այս խմբում նկատելի է, որ դերադաս բաղադրիչի իմաստը բավականին մոտենում է ամբողջ բարդության իմաստին: Այն կոնկրետանում, որոշակի է դառնում որոշիչ բաղադրիչի միջոցով, որը, ինչպես նշեցինք, բնութագրում է երկրորդ բաղադրիչով արտահայտված առարկան գտնվելու տեղի տեսակետից:

Ածական+գոյական կաղապարը չափազանց կենսունակ և արգասավոր է հայերենի բառաբարդման մեջ, հատկապես ածականների կազմության ժամանակ: Վերը նշեցինք միայն սահմանափակ թվով բարդություններ, որոնք կազմում են ածական+գոյական ձևաբանական կաղապարով կազմված բարդությունների չնչին մասը. այդ մասին ավելի մանրամասն կխոսվի ածականի բառաբարդման կաղապարները քննելիս:

Հետաքրքիր է նկատել, որ որոշիչ+որոշյալ կաղապարով կազմված մի շարք բարդություններ, որոնք ածականի իմաստ են արտահայտում իմաստափոխվելով, ձեռք են բերել առարկայական նշանակություն յուրովի վերածվելով գոյականների: Դրանք հատկապես մարդկանց, կենդանիներ անվանող բարդություններն են: Այդ անվանումները տրվում են նրանց այս կամ այն հատկանիշի (հագուստի, բնավորության, մարմնի որևէ մասի, գույնի հիման վրա և երբեմն ունենում են որոշակի սուբյեկտիվ երանգավորում: Թվենք դրանցից մի քանիսը՝ ծուռթաք, բացբերան, կարմրապոշիկ, երկարականջ, կարմրածծան, կարմրակատար, մկրատապոչ, երկարագի, ճերմակակուրծք և այլն:

Այս տիպի բարդ բառերը գործածական են խոսակցական լեզվում և ունեն ոճական նշանակություն: Ընդհանրապես բարդ բառերի ոճական կիրառությունը, որպես գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոց, ակնհայտ է և բավականին բազմազան:

Հատկացուցիչ+հատկացյալ—ժամանակակից հայերենում կենսու-

նակ են նաև հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական փոխհարաբերությամբ բաղադրիչներ ունեցող բարդ բառերը։

Բառակազմական այս կաղապարը հետաքրքիր է նրանով, որ այն կարելի է անվանել դոյականակերտ, որովհետև նրանով հիմնականում կազմվում են դոյականներ։ Եթե նախորդ՝ որոշիչ+որոշյալ կաղապարը համեմատաբար ավելի կենսունակ էր բարդ բառերի կազմության մեջ և նրանով կազմվում էին դոյականներ, ապա այն, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, շատ ավելի կենսունակ է ածականների կազմության մեջ։ Բացի դրանից, որոշիչ+որոշյալ կաղապարը մասնակցում է նաև մյուս խոսքի մասերի կազմությանը։ Հատկացուցիչ+հատկացյալ կաղապարի երկու եղրերում էլ հանդես են գալիս դոյականներ, որոնցից մեկը շարահյուսորեն դերադասը՝ հատկացյալը, արտահայտում է որևէ առարկա, իսկ մյուսը՝ հատկացուցիչը, ցույց է տալիս այդ առարկայի վերաբերումը, պատկանելությունը մի այլ առարկայի, որը ներկայացվում է հատկացուցչի միջոցով։ Ինչպես, օրինակ՝ հարսանեկարան, աղյուծամայր, սարալանջ, գրչածայր, ծաղկաբերքիկ և այլն։

Քանի որ ուսումնասիրվող կաղապարով կազմված դոյականակերտ բարդությունները իրենց քանակով զիջում են որոշիչ+որոշյալ կաղապարով կազմված բարդություններին, ուստի և ավելի պակաս թվով իմաստային խմբեր են ընդգրկում։ Ըստ իրենց արտահայտած իմաստի այս կաղապարով կազմված բարդությունները կարելի է խմբավորել մոտավորապես հետևյալ կերպ.

1 Բույսերի զանազան մասեր անվանող բարդ բառեր։ Ինչպես, օրինակ՝ դդմակորիզ, ծաղկաբերքիկ, ծաղկափոշի, ծառաբուն և այլն։

2 Հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերությամբ բաղադրիչներով կազմվում են նաև մի շարք բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները կենդանինների անուններ են, իսկ երկրորդ բաղադրիչները, ինչպես և ամբողջ բարդությունը, անվանում են այդ կենդանիներին վերաբերող զանազան առարկաներ, երևույթներ։ Այսպես, օրինակ՝ աղվեսաձագ, աղվեսագի, աղավնատուն, ագռավաձագ, թռչնաբույն և այլն։

3 Հատկացուցիչ+հատկացյալ կաղապարով կազմված այլ բարդություններ անվանում են մարդկանց և կենդանիների տարբեր օրգաններ և դրանց հետ կապված երևույթներ ու հասկացություններ։ Ինչպես, օրինակ՝ ականախոռոչ, ականջաբլթակ, սրտամկան, ակնաթաղանթ, գլխացավ, ատամնացավ և այլն։

4 Ուսումնասիրվող բառակազմական կաղապարով կազմված շատ

բարդ բառեր արտահայտում են ամբողջի և մասի հարաբերություն։ Նման բարդությունների առանձին բաղադրիչները կարող են արտահայտել բազմապիսի առարկաներ ու նրանց մասերը, ինչպես նաև բնության երևույթներ։ Այսպես, օրինակ՝ **ճարաբեկոր, ճողակտոր, կավակոշտ, կավաշերտ, ածխակտոր, բոնգափոշի, ձյունաշերտ, կարկտաճատիկ, անձրևակաթիլ** և այլն։

Ամբողջի և մասի հարաբերություն արտահայտող մի շարք այլ բարդ բառեր կարող են նշանակել զանազան սննդամթերքներ. ինչպես, օրինակ՝ **պանրակտոր, մսակտոր, բրնձաճատիկ, բրնձափոշի, ալրափոշի, գարեճատիկ** և այլն։

5 Բարդ բառերի մի այլ խմբում, ինչպես ամբողջ բարդություններ, այնպես էլ դրանց բաղադրիչներն արտահայտում են զանազան ազգակցական հարաբերություններ. ինչպես՝ **հորեղբայր, հորաքույր, մորաքույր, եղբորորդի, հարսնահույր, հարսնեղբայր** և այլն։

6 Մի շարք բարդություններ արտահայտում են.

ա) երկնային մարմինների տարբեր վիճակներ, փուլեր և դրանց հետ կապված հասկացություններ. նույն իմաստն են արտահայտում նաև այդ բարդությունների երկրորդ բաղադրիչները, իսկ առաջին բաղադրիչներն արտահայտում են երկնային մարմիններ։ Այսպես, օրինակ՝ **լուսնեղջյուր, արևապսակ, երկնակամար, արևաշող, աստղաբույլ** և այլն։

բ) Անկենդան բնության տարբեր հատվածներ. ինչպես՝ **ծովեզր, ծովափ, գետաբերան, գետաճովիտ, սարալանջ, լեռնալանջ, լեռնագագաթ** և այլն։ Նույն իմաստն են արտահայտում նաև նման բարդ բառերի առաջին բաղադրիչները. իսկ երկրորդ բաղադրիչներն այս դեպքում արտահայտում են տարածական իմաստ։

7 Բարդ բառերի մի այլ խմբի մեջ առաջին բաղադրիչներն արտահայտում են մարդկանց անմիջական գործածության առարկաներ. ամբողջ կառուցվածքը նույնպես կարող է ունենալ առաջին բաղադրիչի իմաստը կամ կարող է նշանակել այն առարկան, որին վերաբերում է կամ որն իր մեջ է պարունակում առաջին բաղադրիչով նշված առարկան։ Իմաստային տեսակետից երկրորդ բաղադրիչը մոտենում է ամբողջ բարդության իմաստին։ Օրինակ՝ **գրչածայր, բանճամաման, թղթապանակ, գրչակոթ, դրամապանակ** և այլն։

Հատակցուցիչ+հատկացյալ կաղապարով կազմված բարդություններն իրենց իմաստով որոշ դեպքերում մոտենում են որոշիչ+որոշյալ կաղապարով կազմված բարդություններին։ Ինչպես, օրինակ՝ **առյուծասիրտ, անձրևաջուր, գետաճովիտ, երկնակամար**։ Սակայն այս բարդու-

բյունների ավելի մանրամասն քննությունը պարզում է, որ հատկացուցիչ+հատկացյալ կազմությամբ բարդ բառերի բաղադրիչների միջև ավելի գերակշռում է պատկանելություն, վերաբերություն, քան թե՝ առարկայի որևէ հատկանիշ արտահայտելը: Այդ են ասում հիշյալ բարդ բառերի շարահյուսական փոխակերպները: Այսպես, օրինակ՝ ծովափ→ծովի ափ, ականջախեցի→ականջի խեցի, ճորտուլր→հոր քույր, ծաղկաբերբիկ→ծաղկի թերթիկ, արքայորդի→արքայի որդի, աղվեսաձագ→աղվեսի ձագ և այլն:

Բացի որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական կապակցություններից, հայերենին բնորոշ է նաև բացահայտիչ-բացահայտյալ շարահյուսական կապակցությունը, բայց այսպիսի կապակցությամբ բաղադրիչներով բարդ բառեր չկան ժամանակակից հայերենում: Պատճառն այն է, որ բացահայտիչը որոշվող լրացում է և մեծ մասամբ արտահայտվում է բառակապակցություններով՝ լրացուցիչ կերպով մեկնաբանելով բացահայտյալի իմաստը: Նման հանգամանքը դժվարացնում է բացահայտիչ-բացահայտյալ հարաբերությամբ կապակցությունները մեկ բառի մեջ միավորելը, ուստի հասկանալի է նշված փոխհարաբերությամբ բաղադրիչներով բարդ բառերի բացակայության պատճառը:

Մինչև հիմա մենք քննեցինք նախադասության գոյականով արտահայտված անդամին բնորոշ շարահյուսական փոխհարաբերություններով բարդ բառերի իմաստային առանձնահատկությունները, որոնք հանդես են գալիս գոյականների ոլորտում: Այժմ տեսնենք, թե ինչպիսի՞ իմաստային առանձնահատկություններ ունեն բայական գերադաս բաղադրիչներով բարդ գոյականները: Նման բարդությունների մեջ բայով արտահայտված գերադաս անդամը կարող է ունենալ ամենատարբեր նշանակությամբ լրացնող բաղադրիչներ: Վերջիններս մեծ մասամբ արտահայտված են լինում գոյականով, մակբայով, դերանունով:

Ժամանակակից հայերենում շատ տարածված են գոյական+բայ կազապարով կազմված բարդ բառերը, որոնցում գոյականը կարող է կատարել զանազան խնդիրների ու պարագաների պաշտոններ: Այն կարող է լինել կրող խնդիր, կողմնակի ներգործող, հանգման, մատուցման խնդիր, ներգործող խնդիր, անջատման անուղղակի խնդիր, տեղի պարագա: Բարդության կազմում հանդես եկող բայական անդամը իրեն ստորադասվող բաղադրիչի նկատմամբ ունենում է այնպիսի շարահյուսական հարաբերություններ, ինչպիսիք ունենում է սովորական բառակապակցություններում:

Ինչպես հայտնի է, նախադասության բայով արտահայտված անդա-

մին կարող են լրացնել խնդիրներն ու պարագաները: Բարդ բառերում էլ բայով արտահայտված գերադաս անդամը լրացվում է խնդիրներով և պարագաներով: Այստեղից հետևում է, որ, երբ բարդության երկրորդ բաղադրիչն արտահայտվում է բայով, ապա առաջին բաղադրիչը կարող է լինել որևէ խնդիր կամ պարագա: Իսկ ըե ինչպիսի՞ լրացում կընդունի երկրորդ բաղադրիչում հանդես եկող բայը, այդ արդեն կարող է պայմանավորվել վերջինիս բայիմաստով և սեռով: Այսպես եթե բարդության բայական բաղադրիչը ներգործական սեռի բայ է, ապա առաջին բաղադրիչը կլինի կրող խնդիր: Ինչպես, օրինակ՝ պատառաճաղ, սերմնացան, վիպասան, գերաձան, գրաճնաղատ, գրաղարանավար և այլն:

Իսկ երբ բարդ բառով արտահայտված գոյականի երկրորդ բաղադրիչն արտահայտված է չեզոք և կրավորական սեռի բայերով, ապա առաջին բաղադրիչները կարող են լինել անուղղակի խնդիրներ և պարագաներ: Ընդհանուր առմամբ բայական գերադաս բաղադրիչներով բարդությունները կարելի է արտահայտել գործողության հետ կապված առարկաներ+գործողություն և գործողության հետ կապված հանգամանքներ+գործողություն ընդհանուր կաղապարներով, որոնք իրենց մեջ կարող են ընդգրկել մի շարք ենթատեսակներ՝ մասնակաղապարներ:

Այժմ քննենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին.

Գործողության օբյեկտ+գործողություն—Այս կաղապարով կազմված բարդություններում երկրորդ բաղադրիչն արտահայտված է բայով, որը նշանակում է որևէ գործողություն, իսկ առաջին բաղադրիչը կարող է լինել տարբեր իմաստներ ունեցող գոյականներ, սակայն դեպքերում նաև դերանուններ, որոնք ծառայում են որպես երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողության օբյեկտ, ցույց տալով այնպիսի առարկաներ, անձեր կամ որպես այդպիսիք մտածված երևույթներ, որոնք անհրաժեշտ են տվյալ գործողության կատարման համար: Նման բարդություններում առաջադասվող բաղադրիչներն իրենց վրա են կրում գերադաս բաղադրիչներով արտահայտված գործողությունը:

Գործողության օբյեկտ+գործողություն կաղապարով հիմնականում կազմվում են նոր գոյականներ, որոնք անվանում են այս կամ այն գործողությունը կատարող առարկաներ, անձինք.

Ինչպես, օրինակ՝ ձկնորս, կրակմարիչ, կաթնավաճառ, անասնաբույժ, մեքենավար, գրադարանավար և այլն: Այսպիսի բարդ բառերում առաջին բաղադրիչներով արտահայտված գործողության օբյեկտը տարբեր կերպ կարող է ենթարկվել կատարվող գործողության ազդեցությանը: Այսպես՝

ա) առաջին բաղադրիչով արտահայտված առարկան կամ անձը անմիջապես ենթարկվում է տվյալ գործողության ազդեցությանը. ինչպես՝ հարտաշ, հրձիգ, մաճրէասպան, հումակեր, ձկնորս *և այլն:*

բ) Առաջին բաղադրիչով նշվում է այն առարկան, որը հանդիսանում է երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողության արդյունքը. ինչպես՝ հացթուխ, պատշար, բանաստեղծ, առակագիր, մատենագիր *և այլն:*

գ) Գործողության օբյեկտ հանդիսացող առարկան ֆիզիկապես ենթարկվում է տվյալ գործողությանը՝ առանց էական փոփոխություն կրելու. ինչպես, օրինակ՝ ճամակատար, լրաբեր, ժամացույց, փորձագետ *և այլն:*

Ըստ առաջին բաղադրիչի արտահայտած իմաստի՝ գործողության օբյեկտ+գործողություն կաղապարով բարդությունները կարելի է խմբավորել մի շարք իմաստային դաշտերի մեջ: Նշենք դրանցից մի քանիսը.

ա) բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները սննդամթերքների անուններ կամ առարկաներ են, որոնք անմիջականորեն անհրաժեշտ են երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողության կատարման համար: Ամբողջ բարդությունն ընդհանուր առմամբ նշանակում է անձի ու կենդանիների անուններ, որոնք սննդամթերքների, ինչպես նաև առարկաների սպառողները, կիրառողները, պատրաստողները կամ իրացնողներն են: Ինչպես, օրինակ՝ մսավաճառ, գարեջրավաճառ, փայտահատ, ածխահատ *և այլն:*

բ) Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչները զանազան կենդանիների անուններ են, իսկ երկրորդ բաղադրիչները արտահայտում են այդ կենդանիների հետ առնչվող գործողություններ: Ամբողջ բարդությունն այս դեպքում նշանակում է անձի անուններ, որոնք իրագործում են երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողությունը: Ինչպես՝ արջասպան, այծարած, կովկիթ, խոզաբույծ, ոչխարաբույծ *և այլն:*

գ) Բարդություններ, որոնց առաջին բաղադրիչներն ընդգրկվում են երկնային մարմինների և բնության երևույթների իմաստային դաշտերի մեջ, իսկ երկրորդ բաղադրիչները ցույց են տալիս դրանց համապատասխան գործողություններ: Ամբողջ կառուցվածքն այս դեպքում արտահայտում է երկնային մարմիններն ու բնության երևույթներն ուսումնասիրող անձեր, դրանք չափող կարգավորող գործիքներ ու սարքավորումներ և ընդհանրապես դրանց հետ կապված հասկացողություններ: Այսպես՝ աստղագետ, տիեզերագետ, լուսագնաց, անձրևաբեր, անձրևաչափ *և այլն:*

դ) Արվեստի տարբեր բնագավառների հետ կապված զանազան առարկաներ և որպես այդպիսիք մտածված հասկացողություններ են արտահայտում մի շարք բարդությունների առաջին բաղադրիչներ։ Նման բարդությունների երկրորդ բաղադրիչներն արտահայտում են դրանց հետ կապված գործողություններ, իսկ ամբողջ բարդությունը ցույց է տալիս տվյալ գործողությունը կատարողին։ Ինչպես, օրինակ՝ դերակատար, երաժըշտասեր, ջութակահար, դաշնակահար, փողհար, դերասան և այլն։

Գործողության հանգման առարկա+գործողություն կազապարով գոյականներ համարյա չեն կազմվում։ Որպես բացառություն կարելի է նշել հովնկ բարդ բառը։ Այս կազապարը բոլորովին արդյունավետ չէ բարդ գոյականների կազմության ժամանակ։ Այդպիսին է նաև գործողության կատարման միջոց+գործողություն կազապարը։

Դրա պատճառն այն է, որ հիշյալ կազապարներով կազմված բարդ բառերը հիմնականում արտահայտում են առարկաների, անձերի հատկանիշներ և հետևաբար ավելի կենսունակ են ածականներ կազմելիս։ Ինչպես, օրինակ՝ երկնահաս, երկնամերձ (*աշտարակ*), ցրտադիմացկուն (*բույս*) խավարասոված (*միջատ*), նկարազարդ (*գիրք*), ձյունածածկ (*լեռ*), մեքենագիր (*էջ*), աստղազարդ (*երկինք*) և այլն։

Գործողության անջատման առարկա+գործողություն—քիչ են նաև այս կազապարով կազմված բարդ գոյականները։ Այս կազապարով հիմնականում կազմվում են ածականներ։ Բացի ածականներից կան նաև մի շարք գոյականներ, որոնք արտահայտում են տարբեր անձերի, առարկաների անուններ, իսկ առանձին բաղադրիչներն արտահայտում են՝ ստորադաս բաղադրիչը՝ երկնային ու երկրային զանազան մարմիններ, իսկ գերադասը՝ այնպիսի մի գործողության գաղափար, որն ունի ծագելու, սերելու ինչպես նաև մի բանից զրկվելու, մի բանից հեռանալու իմաստներ։ Այսպես, օրինակ՝ հողածին, բրվածին, գործազուրկ և այլն։

Ենթակա+ստորոգյալ կազապարով բարդ գոյականներ—Այս կազապարով կազմվում են սահմանափակ թվով գոյականներ։

Ընդհանրապես, այս կազապարով շատ քիչ բարդություններ են կազմվում, քանի որ ստորոգման առկայությունն ինքնին վկայում է, որ մենք գործ ունենք լեզվական ավելի բարդ միավորի՝ նախադասության հետ։ Լեզվում գոյություն ունեցող այս փաստը հասկանալի է դարձնում, թե ինչու ենթակա+ստորոգյալ կազապարով կազմված բարդ գոյականները սակավաթիվ են։

Այս կազապարով է կազմված էջմիածին հատուկ գոյականը։ Համեմատաբար ավելի շատ են գործողության սուբյեկտ+գործողություն կա-

պապարով բարդ գոյականները։ Ինչպես, օրինակ՝ արևամուտ, լուսաբաց, արևածագ և այլն։

Քիչ թվով բարդ գոյականներ կազմվում են պարագայական հարաբերություն արտահայտող ստորադաս բաղադրիչներով։ Այսպես, բարդ գոյականներ են կազմվում գործողության տեղ+գործողություն կաղապարով։ Այս կաղապարով կազմված գոյականների ստորադաս բաղադրիչներն արտահայտում են տարածական հարաբերություններ, իսկ գերադաս բաղադրիչները՝ շարժման, ուղևորման գործողություն։ Ամբողջ բարդ բառը շատ դեպքերում արտահայտում է վերացական հասկացություն։ Ինչպես, օրինակ՝ առաջընթաց, առաջշարժում, վայրէջք, վերելք, երկրաբնակ և այլն։

Մյուս՝ գործողության ժամանակ+գործողություն, կաղապարով կազմված բարդ գոյականների մեծ մասը փոխանվանաբար ածականներից անցել է գոյականների համակարգը։ Ինչպես, օրինակ՝ գարնանացան (գարնանացան ցորեն), գարնանացանը սկսվեց, կանխավճար, նորակառույց, նորեկ, նորաբնակ, առաջնեկ և այլն։ Ինչպես երևում է օրինակներից, այս կաղապարով կազմված բարդ բառերի առաջին բաղադրիչներն արտահայտում են ժամանակի գաղափար։

Որոշ գոյականներ կազմվում են գործողության ձև+գործողություն կաղապարով, ինչպես՝ ականատես, թևալող, շարֆացան, բարձրախոս և այլն։ Նախորդ գոյականների նման, սրանք էլ փոխանունությամբ գոյականների համակարգն անցած երբեմնի ածականներ են, որոնցում դեռ այս կամ այն չափով զգացվում է առարկայի հատկանիշի իմաստը։ Ջնաջած դրան՝ այս և նախորդ կաղապարներով կազմված բարդ բառերում գերակշռում է առարկայական իմաստը, որը կարելի է որոշել ոչ միայն խոսքի մեջ, կոնտեքստում, այլ նաև այդ բառերի ցանկացած կիրառություններում, առանց համապատասխան խոսքային միջավայրի օգնության։ Բերենք մի քանի բնագրային օրինակներ։ Գարնանացան (ցորեն)։ Գարնանացանը ավարտվելու վրա էր, եղանակը լեռներում փոխվեց (Սխ)։ Կանխավճար ապահովագիրներ լինելու պետք կըլլան (ՀՊ)։ Իսկ ինքը... ձին նստում էր գնում կամ հարևան գյուղը ապառիկն առնելու մեկից, կամ բուրդի կանխավճար տալու (ԱԲ)։

Այլ խոսքի մասերի գոյականի վերածվելու ժամանակ զգալի դեր է կատարում փոխանունությունը։ Փոխանունության ենթարկվում է ցանկացած խոսքի մասը. բարդ բառերի մեջ ավելի տարածված է ածականների փոխանունությունը։ Փոխանունության էությունն այն է, որ այս կամ այն հատկանիշը, վիճակը, գործողությունը, հարաբերությունը և այլն

սկսում են ըմբռնվել առարկայական հարաբերությամբ՝ այս կամ այն առարկայի, երևույթի անվանման ձևով: Փոխելով իրենց իմաստները, փոխանունության ենթարկվող խոսքի մասերը միաժամանակ փոխում են իրենց քերականական կարգերը, այլ բառերի հետ համապրվելու բնույթը, նախադասության մեջ կատարած դերը, երբեմն նաև՝ խոսքի մասային պատկանելությունը: Փոխանուն ածականները կարող են արտահայտել հատկանիշ, որակ, հատկանշային հարբերություն՝ առարկայական ընկալմամբ: Ինչպես հայտնի է, փոխանցման միջոցով գոյականների հարբերատացումը կատարվում է առանց որևէ բառակազմական միջոցի կիրառման:

Հիշյալ փոխանցումների մեջ տարածված են հետևյալ ենթատեսակները.

1. մարդկանց, կենդանի էակների անուններ, որոնք օժտված են որոշակի հատկանիշներով՝ հրացանակիր, դրոշակակիր, առաջամարտիկ, հրաձիգ, մարմնամարզիկ, երիտասարդ և այլն:

2. Մարդկանց անուններ, որոնք ստացվել են որոշյալ գոյականի օգնությամբ՝ կոլտնտեսական (գյուղացի), կոմերիտական (երիտասարդ), կարմիրբանակային, (զինվոր), տիեզերագնաց (օդաչու) և այլն:

3. Առարկայի հատկանշի վերածվելը նրա անվանմանը: Ինչպես՝ մկրատապոչ, ճերմակակուրծք, երկարականջ, երկարապոչ, ծուռաթաթ, կարմրատոտիկ փայտփորիկ և այլն: Դժվար չէ նկատել, որ նման բարդությունների մեծ մասը թռչունների և կենդանիների անուններ են:

Փաստերը ցույց են տալիս, որ բայական գերադաս բաղադրիչներով բարդ բառերն առանձնապես արդյունավոր չեն բարդ գոյականներ կազմելիս, քանի որ այդպիսի կառուցվածք ունեցող բարդ բառերի մեծ մասն արտահայտում է հատկանշային հարաբերություն: Այսպես, խնդիր-խընդրառու փոխհարաբերությամբ բաղադրիչներով բառաբարդման կաղապարներից գոյականների կազմությանը մասնակցում են գործողության օբյեկտ+գործողություն և գործողության անջատման առարկա+գործողություն կաղապարները. ընդ որում, վերջինը ցուցաբերում է չնչին մասնակցություն, իսկ գործողության հանգման առարկա+գործողություն, գործողության կատարման միջոց+գործողություն կաղապարներով գոյականներ համարյա չեն կազմվում: Այս տեսակետից ավելի ակնառու են պարագայական հարաբերություններ արտահայտող ստորադաս բաղադրիչներ ունեցող բարդ բառերը: Գործողության հետ կապված հանգամանքներ+գործողություն կաղապարով նույնպես շատ քիչ թվով գոյականներ են կազմվում:

Նշված ընդհանուր կաղապարների մեջ մտնող միայն երկու մասնակաղապար կարելի է նշել, որոնցով կազմվում են գոյականներ. դրանք են՝ գործողության տեղ+գործողություն և գործողության ժամանակ+գործողություն, իսկ գործողության ձև, չափ, պատճառ+գործողություն կաղապարներով գոյականներ համարյա չեն կազմվում: Մինչդեռ, ինչպես տեսանք, անվանական գերադաս բաղադրիչներ ունեցող բարդ բառերը բավականին կենտունակ էին գոյականակերտ բառաբարդման կաղապարներում: Իսկ հատկացուցիչ+հատկացյալ կաղապարով հիմնականում կազմվում էին գոյականներ: Պատճառն այն է, որ բայական գերադաս բաղադրիչների առկայության դեպքում, թե՛ գերադաս և թե՛ ստորադաս բաղադրիչները մեծ մասամբ արտահայտում են հատկանշային հարաբերություն և հիմնականում ներկայացվում են համապատասխան իմաստ ունեցող խոսքի մասերով՝ բայերով, ածականներով, մակբայներով: Նման կազմություններում գերադաս բաղադրիչներն արտահայտում են գործողության գաղափար, իսկ ստորադաս բաղադրիչները բնութագրում են այդ գործողությունը ձևի, չափի. քանակի տեսակետից; ինչպես նաև ցույց են տալիս գործողության կատարման տեղը, ժամանակը, պատճառը: Ուստի և հատկանշային իմաստներ արտահայտող ձևույթների համադրումից չնչին բացառությամբ են միայն առարկայի իմաստ արտահայտող բառեր կազմվում:

Գոյականակերտ վերջածանցներով բարդություններ: Ինչպես տեսանք, բարդ բառերով արտահայտված գոյականների թիվը, բացի գոյականակերտ կաղապարներով առաջացած բարդություններից, համալրվում է նաև խոսքիմասային փոխանցումների միջոցով. այն հատկապես կատարվում է ածականների հաշվին: Երբեմնի շատ ածականներ դարձել են գոյականներ. ինչպես՝ գործազուրկ, լրտես, շարֆացան, բարձրախոս և այլն:

Գոյականների հարստացման մեջ առավել արդասավոր են գոյականակերտ վերջածանցներով կազմված բարդությունները:

Հայտնի է, որ վերջածանցները մեծ մասամբ կապվում են որոշակի խոսքի մասերի հետ: Հասկանալի է, որ այս դեպքում խոսքը վերաբերում է գոյականակերտ վերջածանցներին: Սրանք գոյականներից, ինչպես նաև այլ խոսքի մասերին պատկանող բառերից կազմում են նոր գոյականներ: Բարդ ածանցավոր գոյականների, և ընդհանրապես, բարդ ածանցավոր բառերի մեջ հնարավոր են երկու կարգի կազմություններ. մի դեպքում բարդության բաղադրիչը միայն ածանցավոր ձևով է կազմում բարդ բառ.

ինչպես, օրինակ՝ ավտովարորդ, ծափահարություն, կուսակցմակերպիչ–եզրափակում, մեջբերում, հանրակացարան, հանրակրթարան *և այլն:*

Մյուս դեպքերում բարդ բառերը կազմվում են համապատասխան հիմքերից ածանցման միջոցով (սրանց թիվն անհամեմատ ավելի է նախորդներից): Ինչպես, օրինակ՝ ինքնադատություն, բարեխղճություն, մարդասիրություն, բարձրացատկորդ, ծովանկարչություն, օդանավորդ *և այլն: Բարդ գոյականների կազմության մեջ հատկապես արդյունավետ են–*ություն, –ում, –որդ, –արան *վերջածանցները, որոնք կարելի է համարել գոյականակերտ կաղապարի ձևական ցուցիչ:*

Մի շարք բարդ գոյականներ են կերտվել բայաձևերից ածանցման ճանապարհով: Բայաձևերը գոյականացնող ամենից ավելի արդյունավետ ածանցներն են ում-ը *և* ությունը: *Ճիշտ է, այս ածանցներով գոյականներ են կազմվում ոչ բոլոր բայաձևերից, բայց և այնպես դրանց թիվը զգալի է. ինչպես,* ություն-մենագրություն, մենախոսություն, վարձատրություն, թույլատվություն, ծափահարություն, դիմադրություն *և այլն,* ում-հայթայթում, վարձատրում, հետապնդում, կանխատեսում, ոտնահարում իմիճակիզում *և այլն: Կան նաև մի շարք այլ ածանցներ, որոնք նույնպես բայերից կերտում են գոյականներ. սակայն նրանք իրենց արդյունավետությամբ զիջում են նախորդներին: Նշենք դրանցից մի քանիսը՝* աճ, ոց, յուն, ու:

Ածխաջրածնաճ, բամբասանք, գուրգուրանք, թոթովանք, գեղգեղանք *և այլն:*

Յուն, ոց *ածանցները բայանուններ են կազմում բնաձայնական հիմքերից:* Կարկաչյուն, խրխնջյուն, խոխոջյուն, բաբախյուն, խրխնջոց, դիդիկոց, դողոց, խշխշոց *և այլն:*

Ու– տաղերգու, կատակերգու, վաշխառու, բանսարկու *և այլն: Մի շարք բայահիմքերից կազմված բաղադրություններ գործածվում են որպես գոյականներ՝* առևտուր, ելևէջ, առուծախ, ասուլիս, ելումուտ *և այլն: Ընդհանրապես բայերը փոխակերպվում են նաև այլ խոսքի մասերի՝ ածականների, մակբայների, ինչպես ածանցների միջամտությամբ, այնպես էլ առանց դրանց՝ փոխանցման ճանապարհով: Այդ մասին կխոսվի համապատասխան բաժիններում:*

Բարդ բառերով արտահայտված գոյականներն ունեն գոյականին հատուկ բոլոր քերականական կարգերը. դրանք կարող են լինել.

ա) վերացական ու թանձրացական. ինչպես՝ գրախոսություն, ինքնադատություն, ճարավառություն, վերնազգեստ, վերնաշապիկ, գետնամորի *և այլն:*

բ) Հասարակ ու հատուկ անուններ՝ վերջիններիս մեջ մտնում են աշխարհագրական անուններն ու անձնանունները, ինչպես, օրինակ՝ Վոլգա–Դոն, Ստեփանավան, Նորաշեն, Սովետաշեն, Վանաձորփոխտ, Նորայր, Հրայր *և այլն։*

Բարդ գոյականները կարող են անվանել անձեր և առարկաներ։ Բացի անձնանուններից, անձ ցույց տվող գոյականները անվանում են անձեր.

ա) ըստ կատարած աշխատանքի՝ կոշկակար, հացթուխ, առևտրական, վիպասան, օդաչու *և այլն։*

բ) Ըստ զբաղեցրած պաշտոնի և կոչման. ինչպես՝ բնակկառավարիչ, գանձապահ, գնդապետ *և այլն։*

Գործող անձ ցույց տվող գոյականների մեծ մասը գոյականների վերածված ածականներ են, ինչպես՝ գործազուրկ, հանդիսատես, հիվանդապահ, վիրաբույժ *և այլն։*

Կազմությամբ բարդ գոյականների հոլովումը կատարվում է պարզ գոյականների նման, քանի որ բարդություն կազմող հենարան բառին նախորդող հիմքերի բերականական չեզոքացում է կատարվում, և ամբողջ բարդության ձևաբանական փոփոխություններն արտահայտվում են վերջին բաղադրիչի ձևավորմամբ։ Ինչպես՝ գետնամորի–գետնամորու, տիրամայր–տիրամոր, դիմախաղ–դիմախաղի *և այլն*[26]։

2. ԱԾԱԿԱՆԱԿԵՐՏ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Իրենց արդյունավետությամբ գոյականակերտ բառաբարդման կաղապարներին գերազանցում են ածականակերտ կաղապարները։ Այս կաղապարները բազմազան են ինչպես իրենց ձևաբանական, այնպես էլ շարահյուսական կազմի տեսակետից։

Ածականները կարող են կազմվել.

ա) երկու գոյականների բաղադրումից. ինչպես՝ կարապնավիզ, շուշանագգեստ, վարդաժպիտ, ձյունափայլ, ոսկեվարս, արևադեմ, ֆարսիրտ *և այլն։*

բ) Գոյականների և ածականների բաղադրումից. ինչպես, օրինակ՝ կարկտախառն, ձյունախառն, գլխաբաց, հոգեթովիչ, տեռևախիտ, արտաբաց *և այլն։*

---

26 *Բացառություն են կազմում հայր ու որդի, մայր ու աղջիկ և նման կազմություններ, որոնցում երկու բաղադրիչներն էլ սեռական հոլովաձևերում փոխվում են (Հոր ու որդու)։*

գ) Մեծ թվով ածականներ են կազմվում գոյականների ու բայարմատների, ինչպես նաև ածականների ու բայարմատների համադրությամբ. ինչպես՝ ակնարով, պղնձաձույլ, ոսկեզօծ, խոտակեր, մարդասեր, թաւերասեր, հարակերտ, պերճախոս, ստախոս, նորավարտ, նորընտիր, դյուրահավատ, երբանկատ և այլն:

դ) Գոյականների ու կապերի համադրությամբ նույնպես կարող են կազմվել ածականներ՝ սրտամոտ, մարդամոտ, բլրանման, մարդանման և այլն:

ե) Շատ են տարածված ածական+գոյական կաղապարով կազմված ածականները: Այսպես, օրինակ՝ մեծավաստակ, ճնճղաթև, տխրադեմ, բարեսես, բարձրահոն, թուլակազմ և այլն:

զ) Ածականներ են կազմվում նաև ածական+ածական կաղապարով. ինչպես՝ մեծապայծառ, վայելչագեղ, երբագեղ, ամրակուռ, տխրուրախ, և այլն: Այսպիսի ձևաբանական կազմությամբ կաղապարը կարելի է անվանել սոսկ ածականակերտ, քանի որ, եթե նախորդ կաղապարներով, բացի ածականներից, կազմվում էին նաև այլ խոսքի մասեր (գոյականներ, բայեր), ապա սրանով կազմվում են միայն ածականներ:

է) Ածականների կազմության մեջ արդյունավետ է թվականը. վերջինս, համադրվելով գոյականների, ածականների ու բայարմատների հետ, կազմում է նոր ածականներ, ինչպես՝ երկանիվ, երկսեռ, ճնգաթև, հառաջատոր, եռատամ, եռաբարդ, հառատրոփ և այլն:

Պետք է նկատել, որ թվականի ու ածականի, ինչպես նաև թվականի ու բայարմատի համադրությամբ կազմված բարդությունների կշիռը չընչին է բարդ բառերի համակարգում, քանի որ քիչ են հանդիպում նաև այդ խոսքի մասերի շարահյուսական կապակցությունները, որոնց սերտաճումը կտար բարդ բառ: Դրա պատճառն այն է, որ կարիք չի լինում գործողության կամ հատկանիշի գաղափարն արտահայտել որոշակի թվով (գործողության չափը սովորաբար արտահայտվում է մակբայներով, իսկ առարկայի հատկանիշի առավել կամ պակաս լինելը՝ ածականի համեմատության աստիճաններով):

ը) Ածականակերտ են նաև դերանուն+գոյական (ինճնաոիպ, այլաձև, այլադեմ և այլն) և դերանուն+ածական (ինճնավստահ, եսամոլ, յուրահատուկ և այլն) կաղապարները: Բացի սրանցից, ածականներ կարող են կազմվել նաև դերանվան և բայարմատի համադրումից: Ինչպես, օրինակ՝ ինճնահավան, իրարամերժ, ինճնամոռաց, ինճնասույզ և այլն:

թ) Որոշ ածականներ կազմված են մակբայ (կապ)+բայարմատ կա-

դապարներով .ինչպես՝ առաջադեմ, հետամնաց, առաջընթաց, միջանկյալ *և այլն:*

Հայերենի բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ կապերը, մակբայները, ինչպես նաև դերանունները առանձնապես արդյունավետ չեն ածականակերտ կաղապարներում: Այդ տեսակետից աչքի են ընկնում գոյականները, ածականները, բայերը: Այժմ տեսնենք, թե նշված կաղապարներով կազմված ածականները ինչպիսի՞ իմաստային առանձնահատկություններ են ցուցաբերում:

Անվանական գերադաս բաղադրիչներով ածականներ—*Ածականակերտ բառաբարդման կաղապարներում կարող են լինել գոյական և ածական գերադաս բաղադրիչներով բարդ բառեր, վերջիններս խնդրառու ածականով արտահայտված գերադաս բաղադրիչներ ունեցող բարդ բառեր են, որոնք այնքան էլ շատ չեն ածականների համակարգում: Անվանական գերադաս բաղադրիչներով ածականների մեջ հաճախադեպ են որոշիչ-որոշյալ շարահյուսական փոխհարաբերությամբ կազմված բարդ բառերը, որոնցում ստորադաս բաղադրիչները մեծ մասամբ արտահայտվում են ածականներով, իսկ գերադասները՝ հիմնականում գոյականով: Նման կազմությամբ բարդություններն ունեն բավականին լայն իմաստային ընդգրկում: Դրանցում ստորադասվող բաղադրիչները արտահայտում են առարկայի որևէ հատկանիշ, գերադասները՝ առարկա, որպես առարկա գիտակցվող հասկացություն, որին հնարավոր լինի վերագրել բարդության ստորադաս բաղադրիչով արտահայտված հատկանիշը: Քանի որ ածականակերտ բառաբարդման կաղապարներից ավելի արդյունավետ է ածական+գոյական կաղապարը, ապա նախ կքննենք այս կաղապարի իմաստային առանձնահատկությունները:*

Անվանական գերադաս բաղադրիչներով կազմված բարդ բառերը կարող են արտահայտել.

1. առարկաների արտաքին հատկանիշներ. ա) գունային հատկանիշ. ինչպես, օրինակ՝ դեղնավարս, կապուտաչյա, կարմրաթև, ճերմակաոտք *և այլն: բ) Ծավալային հատկանիշներ. ինչպես, օրինակ՝* լայնաթիկունք, խոշորադեմ, բարձրաճյուղ, վիթխարածավալ, լայնեզր *և այլն: գ) Առարկաների կամ երևույթների այլևայլ հատկանիշներ՝* սիրունադեմ, սիրունատես, գեղաժպիտ, սրածայր, ծուռթաթ, գանգրաճեր *և այլն:*

2. Առարկաների, անձերի, երևույթների ներքին հատկանիշներ. ա) մարդկանց հոգեկան, բարոյական հատկանիշներ, ինչպես, օրինակ՝ բարեսիրտ, բարեհոգի, բարեհամբույր, չարամիտ, տխմարյուն, ազնվասիրտ, պաղարյուն *և այլն: բ) Առարկաների համի հատկանիշ, ինչպես՝* անուշա-

ճամ, թթվահամ, դառնահամ, դառնակաթիլ, դառնակոճիզ, խաղցրահամ և այլն:

3. Քանակական հատկանիշ. նման բարդ բառերում ստորադաս բաղադրիչները թվականներ են. ինչպես՝ հնգաթև, եռանկյուն, վեցանիստ, երկկողմ, եռահատոր, երկսեռ և այլն:

4. Անվանական գերադաս բաղադրիչներով կազմված մի շարք ածականներ կարող են նշանակել հատկանիշ՝ անորոշ կերպով: Այս դեպքում բարդ բառերի ստորադաս բաղադրիչներն արտահայտված են լինում դերանուններով: Այսպես, օրինակ՝ այլանձև, այլակերպ, այլադեմ, այլասեռ, այլացեղ, այլազգի և այլն:

Անվանական գերադաս բաղադրիչներով ածականակերտ բարդություններից մեջ իրենց բաժինն ունեն ածական գերադաս բաղադրիչներով բարդ բառերը, որոնցում ստորադաս գոյականով արտահայտված բաղադրիչը դառնում է երկրորդ եղրում հանդես եկող խնդրառու ածականի լրացումը: Նման դեպքերում գործ ունենք ածականի խնդրառության յուրահատուկ դրսևորման հետ, որը հանդես է գալիս մեկ բառի սահմաններում: Ածականով արտահայտված գերադաս բաղադրիչը իր իմաստին համապատասխան ստանում է այս կամ այն խնդիրը: Խնդրառու ածականի պահանջով բարդության ստորադաս բաղադրիչը կարող է լինել միջոցի անուղղակի խնդիր (ճուսալի, հյութալի, աճձրևախառն, բուրումնալի և այլն) հանգման անուղղակի խնդիր (ակնահաճո, սիրաժան, հիշաժան, պատվաժան) և այլն:

Ածական գերադաս բաղադրիչներով բարդ բառերը հանդես են գալիս միայն ածականների համակարգում և արտահայտում են.

ա) մարդկանց արտաքին հատկանիշներ՝ աչագեղ, վարսագեղ, ոտաբորիկ, ճերարձակ և այլն:

բ) Մարդկային մտածողության ու բարոյական հատկանիշներ. ինչպես, օրինակ՝ սիրաժան, մտամոլոր, պատվաժան, հարգաժան և այլն:

գ) Բուսական աշխարհին վերաբերող հատկանիշներ՝ տերևախիտ, ծառախիտ սաղարթախիտ, արմատազուրկ և այլն:

Ածականակերտ բառաբարդման կաղապարներում հանդիպում են հայերենի բառակազմության ոչ բնորոշ երևույթներ: Ինչպես հայտնի է, հայերենի բառաբարդման առանձնահատկություններից մեկն է բարդության գերադաս բաղադրիչի երկրորդ եղրում հանդես գալը: Չնայած դրան, որոշ բարդ բառերով արտահայտված ածականներում գերադաս բաղադրիչն ընկնում է առաջին եղրում. ինչպես լիահույս, առատաձեռ, արձակաճիճ, լիաթոք, լիաբուրմունք և այլ բարդ բառերում: Դժվար չէ

նկատել, որ այս և նման այլ բարդ բառերի գերադաս բաղադրիչները խնդրառու ածականներ են։ Հիշյալ կազմությունները Մ. Աբեղյանը համարում է հունարենի ազդեցության հետևանք[27]։ Ինչպես երևում է վերը շարադրվածից, անվանական գերադաս բաղադրիչներով կազմված ածականակերտ բառաբարդման կաղապարներում բացի գոյականներից, գերադաս կարող են լինել նաև ածականները։

Անվանական գերադաս բաղադրիչներով ածականակերտ բառաբարդման կաղապարներից ոչ մեծ արդյունավետություն ունի գոյական+գոյական կաղապարը։ Այս կաղապարով կազմված բարդություններում գոյականով արտահայտված բաղադրիչները չնչին բացառությամբ արտահայտում են առարկաների պատկանելություն, վերաբերություն և գտնվում են հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական փոխհարաբերության մեջ. ինչպես՝ գնդաձև, մանուշակագույն, ագռավակերպ և այլն։ Նման կազմություն ունեցող ածականները հիմնականում արտահայտում են.

ա) առարկաների արտաքին հատկանիշներ՝ գնդաձև, բրգաձև, նշաձև, ծիրանագույն, նարնջագույն, կարապնավիզ, աղավնակերպ և այլն։

բ) Առարկաների ներքին հատկանիշներ՝ մեղրաճամ, աույուծասիրտ, աղավնասիրտ և այլն։

Ինչպես արդեն ասվել է, հատկացուցիչ+հատկացյալ կաղապարով հիմնականում կազմվում են գոյականներ և միայն չնչին քանակով՝ ածականներ, որոնց մի մասը միայն փոխաբերական իմաստով է գործածվում։ Այսպես, օրինակ՝ աույուծասիրտ, կարապնավիզ, աույուծաբաժին, աղավնասիրտ և այլն։

Փոխաբերական իմաստով գործածվելիս այս և նման բարդություններն արտահայտում են կենդանական աշխարհին բնորոշ տարբեր առանձնահատկություններ, որոնք վերագրվում են ուրիշ անձերի, առարկաների նրանց այս կամ այն հատկանիշն ընդգծելու համար։

Բայական գերադաս բաղադրիչներով ածականներ—Բավական մեծ թիվ են կազմում բայական գերադաս բաղադրիչներ ունեցող ածականները։ Նման ածականների ստորադաս անդամը հիմնականում որևէ գոյական է, որը համադրվելով բայական բաղադրիչին, կազմում է բարդ բառեր՝ անվանելով առարկաների տարբեր հատկանիշներ։ Բայական գերադաս բաղադրիչներով ածականակերտ կաղապարները ձևաբանորեն կարելի է արտահայտել գոյական+բայ կաղապարով։ Այս ընդհանուր կաղապարի մեջ մտնում են մի շարք մանրակաղապարներ, որոնց բաղադրիչ-

27 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 202։

ներն ունեն տարբեր շարահյուսական փոխհարաբերություններ։ Դրանցից նախ կքննենք խնդիր-խնդրառու հարաբերությամբ բաղադրիչներով բարդ ածականները։

Գործողության օբյեկտ+գործողություն—*Այս կազապարը առանձնապես արդյունավետ չէ որպես ածականակերտ կազապար և դրանով կազմված ածականները կարելի է խմբավորել հիմնականում մի քանի իմաստային խմբերում.*

ա) մարդու հոգեկան, մտավոր ու բարոյական հատկանիշներ արտահայտող բարդ բառեր. ինչպես՝ աշխատասեր, ճուտասիատ, խաղաղասեր, հանցագործ, նշտապահ, նշմարտախոս, ընթերցասեր *և այլն։*

բ) Բնության երևույթների հետ կապված հատկանիշներ արտահայտող բարդություններ՝ անձրևաբեր, անձրևաչափ, անձրևախափան, ամպապահված, ձմեռնագույժ *և այլն։*

գ) Կենդանիների ու բույսերի մի շարք հատկանիշներ արտահայտող բարդություններ՝ կաթնատու, խոտակեր, բդեշատու, բերքատու, պտղաբեր *և այլն։*

Մի շարք դեպքերում բարդ բառերն ունենում են երկակի իմաստային կիրառություն, այլ կերպ ասած, նրանք հանդես են գալիս և՛ գոյականների, և՛ ածականների համակարգերում։ Առաջին դեպքում նման բարդ բառերը ցույց են տալիս անձի անուններ, որոնք կատարում են այս կամ այն գործողությունը, երկրորդ դեպքում՝ առանձին անձերի դրսևորման տեսակ. Ինչպես, օրինակ՝ արջասպան, կովկիթ, ոչխարաբույծ, բանջարաբույծ *և այլն։*

Գործողության հանգման առարկա+գործողություն—*Այս կազապարով կազմված բարդություններն առանձնապես մեծ թիվ չեն կազմում. դրանով հիմնականում կազմվում են ածականներ, սակավ դեպքերում նաև՝ գոյականներ*[28]։ *Նշված կազմություն ունեցող ածականներն արտահայտում են. ա) բնության երևույթների ու երկնային մարմինների հետ կապված առարկաների հատկանիշներ. ինչպես՝* ցրտադիմացկուն, խավարասոված, երկնահաս, երկնամերձ, երկնահուպ *և այլն։ բ) Մարդու մտավոր ու ֆիզիկական զարգացմանը վերաբերող դանադան հատկանիշներ՝* չափահաս, ուսումնավարժ, գրավարժ *և այլն։ Ինչպես երևում է օրինակներից, այս բարդությունների իմաստային ընդգրկումներն այնքան էլ բազմազան չեն։*

---

[28] *Այս կազապարով կազմված գոյականներն արտահայտում են տարածական հարաբերություններ՝* տնամերձ, դպրոցամերձ *և այլն, անձի անուններ՝* գրչակից, հովիկ, կոդակից, ճեղինակակից *և այլն։*

Գործողության անձնաման առարկա+գործողություն—*Համեմատաբար ավելի շատ ածականներ են ներառնում գործողության անձնաման առարկայի և գործողության հարաբերություն արտահայտող կաղապարով կազմված բարդ բառերը։ Այս կաղապարով կազմված ածականներն արտահայտում են.*

ա) անձերի, առարկաների՝ իրենց վերաբերող մի այլ առարկայից զրկված լինելու, այն չունենալու հատկանիշ. ինչպես, օրինակ՝ արևազուրկ, տերևազուրկ, արմատազուրկ, գունազուրկ, ջրազուրկ, հողազուրկ, գործազուրկ և այլն *(վերջին բառը կարող է ունենալ նաև գոյականական կիրառություն)։ Այս բարդություններում սովորաբար առաջին բաղադրիչով արտահայտվում է այն առարկան, որից չունի տվյալ անձը կամ առարկան։ բ) Սերելու, ծագելու, սկիզբ առնելու հետանալու և նման այլ հասկացությունների հետ կապված հատկանիշներ։ Այսպես, օրինակ՝* կենդանածին, հրածին, լեռնաբուխ, արտաբուխ, ինքնաբուխ *և այլն։*

Քննվող կաղապարով կազմված բարդ բառերի մեծ մասը ածականներ են. դրանցից միայն մի փոքր մասն է հանդես գալիս գոյականների համակարգում (հողածին, ջրածին, թթվածին)։

Գործողության կատարման միջոց+գործողություն—*Բայական բաղադրիչներով կազմված նախորդ կաղապարների համեմատությամբ ավելի արդյունավետ է գործողության կատարման միջոց+գործողություն կաղապարը։ Հետևաբար, այս կաղապարն ավելի շատ իմաստային դաշտեր է ներառնում։ Նշված կաղապարի ընդհանուր նշանակությունն այն է, որ դրանով կազմված բարդ բառերի ստորադաս բաղադրիչներով ցույց է տրվում այն առարկան, որի միջոցով կատարվում է գերադաս բաղադրիչով արտահայտված գործողությունը։ Այն կարող է արտահայտել. ա) առարկաների ինչ նյութից պատրաստված լինելու գաղափար՝* ոսկեկուռ, ոսկեմանեակ, քարաշեն, թիթեղապատ, ապակեպատ, նիկելապատ *և այլն։ բ) Առարկաների ինչով (որպես գործիքով) պատրաստված լինելու հատկանիշ. ինչպես՝* ձեռագիր, ասեղնագործ, մեքենագիր դաշնամուր, վրձնաճերմակ *և այլն։ գ) Մարդկային տարբեր զգացումներ, ապրումներ՝* սիրասուն, հուզումնալից, հուսախաբ, սիրասոչոր, մտամոլոր *և այլն։*

Գործողության կատարման միջոց+գործողություն կաղապարով կազմված բարդություններում գերադաս (բայական) բաղադրիչն արտահայտում է այնպիսի գործողություն, որն իրագործվում է առաջին բաղադրիչով արտահայտված առարկայի միջոցով։ Այս կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ, սակավ դեպքերում՝ բայեր, որոնցում գերադաս բաղադրիչը մեծ մասամբ արտահայտում է պատելու

իմաստ (նիկելապատել, անագապատել, ոսկեզօծել, կաճաչապատել և այլն)։

Բայական գերադաս անդամով ածականակերտ բարդ բառերում, բացի խնդիր-խնդրառու հարաբերությունից, կարող են լինել նաև պարագայական հարաբերություններ։ Նման բարդ բառերում ստորադասվող բաղադրիչներն արտահայտում են գերադաս բաղադրիչով արտահայտված գործողության հետ կապված հանգամանքներ։

Այս դեպքում ածականակերտ կաղապարը ձևաբանորեն արտահայտվում է գոյական+բայ (բայահիմք), մակբայ+բայ (բայահիմք), ածական+բայ (բայահիմք) կաղապարներով։ Ինքնին հասկանալի է, որ գործողության հատկանիշներ և հանգամանքներ ցույց տվող բաղադրիչներն արտահայտվում են այնպիսի խոսքի մասերով, որոնք իրենց իմաստներով հնարավորություն ունեն ցույց տալու գործողության տեղը, ժամանակը, ձևը, պայմանը և այլն։ Այս առումով շատ գործածական են մակբայներն ու ածականները, ինչպես նաև տարածական, ժամանակի իմաստներ ունեցող գոյականները։ Ինչպես՝ գետնատարած, լեռնաբնակ, աջնանացան, գիշերաշրջիկ և այլն։

Այժմ քննենք պարագայական հարաբերություններ արտահայտող ածականակերտ կաղապարները։

Գործողության տեղ+գործողություն—Այս կաղապարով կազմված բարդ բառերի մեծ մասը ածականներ են. կարող են կազմվել նաև սակավաթիվ բայեր ու գոյականներ։

Ուսումնասիրվող կաղապարով կազմված բարդ բառերը հիմնականում արտահայտում են առարկաների, անձերի, երևույթների տարածական հարաբերություններին վերաբերող հատկանիշներ։ Նրանք կարող են ցույց տալ ա) առարկայի, անձի որևէ տեղում մնալու, բնակվելու, տվյալ տեղի հետ այս կամ այն ձևով առնչվելու հատկանիշ. ինչպես՝ ջրասույզ, երկնաբնակ, հետամնաց, անդնդակոծույս, լեռնաբնակ և այլն։ բ) Որևէ տեղից անջատվելու, հեռանալու հատկանիշ՝ երկնաճոռ, երկրաբուխ, լեռնաբուխ, արտաբուխ և այլն։ գ) Որևէ տեղով (վրայով, միջով, մոտով) անցնելու, շարժվելու հետ կապված հատկանիշ. ինչպես՝ ջրագնաց, օդագնաց, ջրաթափանց, գետնամարշ, գետնասող և այլն։

Գործողության տեղ+գործողություն կաղապարով կազմված բարդ բառերում տարածական հարաբերություն արտահայտում է ստորադաս բաղադրիչը, իսկ գերադաս բաղադրիչն արտահայտում է այնպիսի գործողության գաղափար, որը կատարվում է առաջին բաղադրիչով մատնա-

նշված վայրում. այդ է պատճառը, որ նրանցով կազմված ածականները ցույց են տալիս առարկաների տարածական հատկանիշներ:

Գործողության ժամանակ+գործողություն—*Այս կաղապարով կազմված ածականների բաղադրիչներից մեկն արտահայտում է ժամանակի դաղափար, իսկ մյուսը՝ այդ ժամանակի հետ առնչվող գործողություն. ինչպես՝* վաղահաս, ուշահաս, նորափթիթ, նորածիլ, նորակազմ *և այլն: Նման ածականները կարող են ունենալ որևէ ժամանակում (ուշ, շուտ) ստեղծվելու, աճելու, զարգանալու, կառուցվելու նշանակություն: Հիշյալ կաղապարով կազմված ածականների մեծ մասն աչքի է ընկնում իմաստային երկիմաստությամբ՝ դրանք շատ դեպքերում ունենում են ինչպես հատկանիշի, այնպես էլ առարկայի իմաստ: Իհարկե, այդպիսի բարդությունները սկզբնապես ունեցել են սոսկ ածականական կիրառություն, այնուհետև բառիմաստի զարգացումը հանգեցրել է առարկայի որևէ հատկանիշի առարկայական ըմբռնման, որի հետևանքով այս կամ այն ածականը փոխել է իր ձևաբանական պատկերը. ինչպես, օրինակ՝* գարնանացան, նորեկ, աշնանացան, նորաբնակ, նորակառույց *և այլն:*

Գործողության ձև+գործողություն—*Բայական գերադաս բաղադրիչ ունեցող այս կաղապարով նույնպես կազմվում են ածականներ, որոնք արտահայտում են. ա) մարդու մտավոր ու հոգեկան գործունեության հետ կապված հատկանիշներ՝* արդարադատ, դանդաղախոս, բարձրախոս, մեծախոս, դժվարահաճ, դժվարահաղորդ *և այլն: բ) Մարդկանց, առարկաների մեխանիկական շարժման հետ կապված հատկնիշներ՝* ծանրաշարժ, արագաշարժ, դանդաղաշարժ, երբահյուս, բոնցֆաիար *և այլն: գ) Կենդանի օրգանիզմների ֆիզիոլոգիական պրոցեսների հետ կապված հատկանիշներ՝* ականատես, դժվարամարս, դյուրամարս *և այլն:*

Այս կաղապարով կազմված բարդ բառերի մի մասը փոխանվանաբար անցել է գոյականների շարքը. ինչպես՝ շարֆացան, բարձրախոս, թևալող, ինֆնաիոս *և այլն:*

Գործողության չափ+գործողություն—Այս կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ, որոնք արտահայտում են ա) առարկաների, երևույթների վիճակի, գործողության տևողության հետ կապված հատկանիշներ՝ կիսակառույց, կիսախուփ, կիսաբաց, կարճատև, երկարատև *և այլն: բ) Մարդու մտավոր ու հոգեկան, ֆիզիոլոգիական գործունեության հետ կապված հատկանիշներ. ինչպես՝* բազմաչարչար, բազմատանջ, շատախոս, ֆչախոս, երկարակյաց *և այլն:*

Գործողության պատճառ+գործողություն—Այս կաղապարով կազմված բարդ բառերը սակավաթիվ են և հիմնականում արտահայտում են

մարդու հոգևոր ու մտավոր գործունեությանը վերաբերող հատկանիշներ. ինչպես՝ սիրասուշոր, վշտաբեկ, վշտամորմոք, սիրաբորբոք, հոգնատանջ և այլն: Ինչպես երևում է օրինակներից, այս բարդություններում գործողության պատճառը ցույց տվող բաղադրիչներն արտահայտում են մարդկային զգացումներ, ապրումներ, որոնք պատճառ են դառնում գերադաս բաղադրիչով արտահայտված տարբեր գործողությունների կատարման համար:

Համադաս բաղադրիչներով կազմված ածականներ--Համադաս բաղադրիչներով բարդ բառերն առանձնապես արդյունավետ չեն ածականների կազմության ժամանակ: Նրանք ավելի արդյունավետ են գոյականների, բայերի, մակբայների, թվականների կազմության մեջ: Ինչպես տեսանք, բարդ բառերով արտահայտված ածականների գերակշռող մասը կազմվում է ստորադաս բաղադրիչներ ունեցող բարդություններով:

Բարդություններով արտահայտված ածականները (որոնք ունեն համադաս բաղադրիչներ) կազմվում են կամ նույն արմատի կրկնությամբ, կամ էլ իմաստային մերձավորություն ունեցող բառերով, որոնք արտահայտում են՝

1) առարկաների արտաքին, հատկանիշներ՝ ա) ձևային նոր-նոր, մեծ-մեծ, բարձր-բարձր, բարակ-բարակ և այլն: բ) Գունային երանգներ ինչպես՝ կարմրաշագանակագույն, կապտականաչավուն, դեղնականաչավուն, կարմրադարչնագույն և այլն:

2. Մարդկանց հոգեկան, մտավոր-բարոյական և խառնվածքի հատկանիշներ՝ ուրախ-ուրախ, ուշիմ-ուշիմ, լուրջ-լուրջ և այլն: Նման բարդ բառերին հատուկ է նաև մակբայական կիրառությունը:

3. Առարկաների ներքին հատկանիշներ՝ հաղցրաթթվավուն, հաղցրմեղցր, դառնաղի, դառնահաղցրավուն, թթվադառնավուն և այլն:

Վերջին երկու դեպքերում բարդություններով արտահայտված ածականների բաղադրիչների իմաստները լրիվ համազոր չեն և կարող են մնկնաբանվել երկակի. այսպես՝ կապտականաչավուն→կապտավուն—կանաչավուն, կապույտ, որը կանաչին է տալիս, կարմրադարչնագույն→կարմրավուն–դարչնագույն, կարմիր, որը դարչնագույն երանգ ունի և այլն: Հասկանալի է, որ վերջին մեկնաբանությամբ բարդության բաղադրիչների իմաստային համազորությունը չքանում է և վեր է ածվում ստորադասական հարաբերության:

4) Լեզուների անունների միացություններ, ինչպես՝ անգլո–ֆրանսերեն, հայ–ռուսերեն, ռուս–հայերեն, հայերեն–ֆրանսերեն, գերմաներեն–հայերեն և այլն:

Համադաս բաղադրիչներով շատ ածականներ արտահայտում են պաշտոնական, քաղաքական, գիտատեխնիկական, գործնական և այլ հարաբերություններ:

1. Քաղաքական հարաբերություններ արտահայտող բարդ բառեր՝ սովետա-իրանական, ռուս-ճապոնական, մարքս-լենինյան, ժողովրդադեմոկրատական, բանվորագյուղացիական, ռազմաքաղաքական և այլն:

2. Պաշտոնական, գործնական հարաբերություններ արտահայտող բարդ բառեր՝ վարչատնտեսական, հսկիչ-դիսպետչերական, կոլտնտեսավորական և այլն:

3. Գիտատեխնիկական տերմիններ արտահայտող բարդ բառեր. ինչպես, օրինակ՝ մագնիսաէլեկտրական, ճանճապոդզոլային, պատմահամեմատական, պատմաաշխարհագրական, կրոնափիլիսոփայական, ատոմաչրածնային և այլն:

Համադաս բաղադրիչներ ունեցող ածականներով հնարավոր է ավելի վառ և արտահայտիչ բնութագրել այս կամ այն առարկան, քանի որ այսպիսի կառուցվածքներում մի բառի մեջ միանում են միևնույն իմաստը ունեցող, իմաստներով մոտ կամ էլ տարբեր իմաստներ, արտահայտող բառեր, որոնք ծառայում են միևնույն հատկանիշը բնորոշելու համար: Այս հանգամանքը այս կամ այն հատկանիշի բնութագրումը դարձնում է առավել արտահայտիչ: Ահա թե ինչու գեղարվեստական խոսքում հաճախ են հանդիպում վերոհիշյալ կառուցվածքով բարդ ածականները:

Ոճական նպատակներով այդպիսի ածականների որպես մակդիր կիրառվելն արտահայտիչ և հյութեղ է դարձնում խոսքը:

Ածականակերտ ածանցներով կազմված բարդություններ: Բարդ բառերով արտահայտված ածականների թիվը զգալի չափով ավելանում է ի հաշիվ ածականակերտ ածանցների, որոնք միանալով բայահիմքերին, կերտում են նոր ածականներ: Եթե գոյականների ոլորտում նոր գոյականներ կազմվում էին միայն վերջածանցներով, ապա ածականների դեպքում վիճակը մի քիչ այլ է: Ինչպես հայտնի է, սովորաբար գոյականացող դեր կատարում են վերջածանցները՝ շատ դեպքերում, նրանք միանալով այս կամ այն հիմքին, փոխում են վերջինիս խոսքիմաստային պատկանելությունը: Բայց մի շարք դեպքերում նախածանցները (ժխտական) նույնպես կարող են փոխել որևէ բառի ձևաբանական ոլորտը: Այս առումով աչքի է ընկնում -ան ածանցը, որը, միանալով մի շարք բայահիմքերի, գոյականների, դրանք փոխակերպում է ածականի: Ինչ-

պես՝ անմեղադիր, անմեկնաբան, անշաղկապ, անբթվածիճ, անվերնագիր և այլն։

Բացի ժխտական –ան նախածանցից, բայերից (բայահիմքերից) ածականներ են կերտում նաև –իչ, –իկ, ական, արար, ոտ, կոտ, ու, ածո վերջածանցները։ Բերենք օրինակներ՝ –իչ –գրգռիչ, ջախջախիչ, ոմբակոծիչ, ախտահանիչ, առաջմղիչ և այլն։ Իկ –զբոսաշրջիկ, բարեկեցիկ, ատամփորիկ, փայտփորիկ և այլն։ Ուն –գեղգեղուն, դայլայլուն, կարկաչուն, խոխոջուն, փայլփլուն և այլն։ Ան վերջածանցը ածականներ է կազմում հիմնականում բնաձայնություններից՝ խշխշան, թշթշան, տզտզան, ճուռճռան, գոռգոռան և այլն։

Իհարկե, կան բայահիմքերից ածականներ կերտող այլ ածանցներ ևս, բայց բարդ բառերի հետ դուգադրվողներից ամենաարդյունավետները վերոհիշյալ ածանցներն են։

3. ԴԵՐԱՆՎԱՆԱԿԵՐՏ ԿԱՊԱՊԱՐՆԵՐ

Բարդ բառերով արտահայտված դերանունները կազմվում են հիմնականում դերանվանական բաղադրիչներով։ Ընդհանրապես, դերանունների համակարգում հանդես եկող բարդությունների կշիռը մեծ չէ հայերենի բարդ բառերի մեջ։ Ինքնին հասկանալի է, որ քիչ են նաև այն իմաստային խմբերը, որոնցում ընդգրկվում են բարդ բառերով արտահայտված դերանունները։

Բարդ բառերով արտահայտված դերանուններն արտահայտում են՝ ա) առանձնության դաղափար. ինչպես՝ ես ու ես, ինձ ու ինձ, մենք ու մենք ձեզ ու ձեզ և այլն[29]։

Ինչպես երևում է օրինակներից, այս դեպքում բարդ բառերը կազմվում են հիմնականում առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններով, որոնք բարդության մեջ անձ են ցույց տալիս դիմային հարաբերությամբ. երրորդ դեմքի անձնական դերանուններով կազմված բարդությունները գործածական չեն ժամանակակից հայերենում։

Առաջին դեմքի հզակի թվով արտահայտված դերանուններով կազմված բարդ բառերը ցույց են տալիս, որ խոսողն ինքն իր հետ է առանձնանում (ես ու ես. ինձ ու ինձ) իսկ հոգնակի թվով արտահայտված դերանվանական բաղադրիչներ ունեցող բարդ բառերը ցույց են տալիս, որ խոսողն առանձնանում է խոսելու պահին իր մոտ գտնվող անձանց հետ՝ (մենք ու մենք)։

---

29 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 181։

Երկրորդ դեմքի անձնական դերանուններով արտահայտված բազադրիչներ ունենալիս բարդ բառերը ցույց են տալիս խոսակցի կամ խոսելու պահին նրա մոտ գտնվողների առանձնության գաղափար fեզ ու fեզ, ձեզ ու ձեզ:

բ) Հոգնակիություն, բազմակիություն. ինչպես՝ ինչ-ինչ, սա ու նա, այս ու այն, այս ու այդ, այլևայլ, fանի-fանի, ուրիշ-ուրիշ և այլն:

Դժվար չէ նկատել, որ վերոհիշյալ իմաստն արտահայտող դերանվանական բարդությունների կազմությանը մասնակցում են ցուցական, հարաբերական և անորոշ դերանունները:

գ) Տարածական ու ժամանակային հարաբերություն. ինչպես՝ այստեղ, այդտեղ, այնտեղ, այնժամ, այդժամ և այլն:

դ) Հատկանիշի չափը՝ այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ և այլն:

Դերանվանական բառաբարդման կաղապարները քննելիս նկատելի է, որ դերանունները հիմնականում կազմվում են շարահյուսորեն համադասական հարաբերությամբ կազմված բաղադրիչներից (որոնք մեծ մասամբ դերանվանական արտահայտություն ունեն). բացառություն են կազմում այսինչ, այսժամ, այդտեղ, նույնչափ և նման այլ ձևերը, որոնց երկրորդ եզրում հանդես են գալիս ժամանակի, տարածական, չափի իմաստներ արտահայտող գոյականներ: Նման բարդությունների բաղադրիչները կապված են ստորադասական (որոշիչ-որոշյալ) հարաբերությամբ:

4. ԹՎԱԿԱՆԱԿԵՐՏ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Բարդ բառերով արտահայտված թվականները, ի հակադրություն ածականների, գոյականների, կազմվում են թվականների բաղադրությամբ. Թե ինչո՞ւ է թվականը ինքնակերտ, ինքնին հասկանալի է, որովհետև կազմությամբ բարդ թվականներն այս կամ այն կերպ արտահայտում են թվի գաղափար, իսկ այն հիմնականում արտահայտվում է թվականներով:

Կազմությամբ բարդ թվականներն արտահայտում են. ա) առարկայի թիվ, քանակ՝ fասնիհինգ, երեսունմեկ, վաթսունհինգ, հազար ինն հարյուր fասն և այլն: բ) Առարկաների բաշխում թվային հավասար քանակով. ինչպես՝ մեկ-մեկ, երկու-երկու, հինգ-հինգ, տասը-տասը, հարյուր-հարյուր և այլն: գ) Առարկաների մերձավոր թիվ. ինչպես՝ մեկ-երկու, երկու-երեք, չորս-հինգ, հինգ-վեց, հիսուն-վաթսուն և այլն:

Կառուցվածքով բարդ թվականներն առանձնանում են այն բառա-

կազմական+թվական կաղապարով և ունեն համադաս բաղադրիչներ։ Բացի այդ, ինչպես երևում է օրինակներից, վերևում արտահայտված բոլոր իմաստները հատուկ են միայն թվականին։ Թվականների բաղադրությամբ կերտվում են նոր թվականներ, միայն առարկաների բաշխում ցույց տվող բարդություններն են հանդես գալիս մակբայի համակարգում։ Թվականակերտ բոլոր կաղապարները կենսունակ են ժամանակակից հայերենում։ Թվականակերտ բարդություններն աչքի են ընկնում իրենց բազմազան կազմությամբ. այդ մասին կխոսվի հետագա շարադրանքում։

5. ՄԱԿԲԱՅԱԿԵՐՏ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Մակբայներ հիմնականում կազմվում են գոյականների, ածականների, թվականների, մակբայների ու կապերի բաղադրությամբ։ Ինչպես՝ փողոց առ փողոց, գիշեր–ցերեկ, ուրախ–ուրախ, արագ–արագ, վեր ու վար և այլն։ *Ի տարբերություն մյուս խոսքի մասերի, բարդ բառերով արտահայտված մակբայներին յուրահատուկ է համադասական հարաբերությամբ կապված բաղադրիչներ ունենալը (ստորադասական հարաբերությամբ բաղադրիչներ ունեցող բարդ բառերը փոքր թիվ են կազմում մակբայների շարքում)։*

Կազմությամբ բարդ մակբայներն արտահայտում են. ա) գործողության կատարման ձևը՝ խումբ–խումբ, շարք–շարք, պատառ–պատառ, ուրախ–ուրախ, հպարտ–հպարտ *և այլն։ բ) Գործողության ժամանակային ու տարածական հատկանիշ. ինչպես՝* ժամ առ ժամ, րոպե առ րոպե, օր ու գիշեր, փողոց առ փողոց, դեմհանդիման *և այլն։ գ) Գործողության կամ այլ հատկանիշի չափը՝* շատ–շատ, փիչ–փիչ, մեկ–մեկ, երեք–երեք, սակավ–սակավ, հազիվ–հազ *և այլն։*

Ինչպես արդեն ասել ենք, շատ հազվադեպ են ստորադասությամբ կապված բաղադրիչներով մակբայները։ Նման դեպքերում դերբադաս բաղադրիչը կապն է (կապական բառ), որի խնդրառությունը յուրահատուկ ձևով դրսևորվում է բարդության սահմաններում, իսկ կախյալ բաղադրիչը դերանուն է կամ գոյական՝ այսուհետև, այնուհետև, գյուղամեջ *և այլն։*

Ինչպես ցույց են տալիս օրինակները, այս կաղապարը կենսունակ չէ ժամանակակից հայերենի համար։ Դրան հակառակ, մակբայների կազմության ժամանակ խիստ կենսունակ է և արդյունավետ կրկնավոր

հարադրություններ կազմող բառաբարդման կաղապարը, որը, կարելի է ասել, գերիշխում է մակբայակերտ բարդություններում:

Նշվեց, որ բաղադրիչ բառերը մեծ մասամբ կրկնվում են ուղիղ ձևերով: Սակայն որոշ դեպքերում (հատկապես տեղ ցույց տվող մակբայակերտ կաղապարներում) հանդիպում են այնպիսիները, որոնց առաջին բաղադրիչը գրաբարյան բացառական հոլովի ձևն է կամ կազմված է նրա նմանությամբ: Նման բարդություններ կազմվում են նաև ժամանակակից հայերենի բացառականից:

Նշենք դրանցից մի քանիսը՝ պատեպատ, դռնեդուռ, տնետուն, բերնեբերան, երկրեերկիր և այլն:

Ինչպես տեսանք վերը շարադրվածից, բարդ մակբայների կազմությանը, բացի մակբայներից, մասնակցում էին գոյականները, ածականները, դերանունները, թվականները կապերը: Ուրեմն մակբայն այն խոսքի մասերից է, որոնք կազմավորվում, հարստանում են այլ խոսքի մասերի հաշվին և նրանցում քիչ չեն իմաստային տեսակետից ոչ միատարը՝ երկփեղկված իմաստ ունեցող բառերը: Հետևաբար նման բառերը խոսքիմաստային մի բնորոշ իմաստի կողքին ունենում են նաև մեկ ուրիշը, որի հետևանքով տվյալ բառը կարող է պատկանել միաժամանակ տարբեր խոսքի մասերի: Այս տեսակետից մակբայները մոտենում են ածականներին:

Քիչ չեն բարդություններով արտահայտված այն մակբայները, որոնք կազմվել են ածականակերտ կաղապարներով և համապատասխանում են գալիս ածականների ու մակբայների համակարգերում: Ինչպես՝ բոցեղեայ, ոսկեայ, լիաթոք, նոգեպատանջ, մտամոլոր և այլն:

Այս երևույթը վկայում է լեզվի պատմական զարգացման ընթացքում առաջացած խոսքիմաստային փոխանցումների մասին:

6. ԲԱՅԱԿԵՐՏ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Բառաբարդումը որպես բառակազմական միջոց շատ արդյունավետ է բայ խոսքի մասի կազմության ժամանակ: Կառուցվածքային տեսակետից բառաբարդված բայերը հակվում են ավելի շատ դեպի վերլուծական ձևերը (հարադրական, զուգադրական բայեր), սակայն համադրական կազմությամբ բայերը նույնպես պատկառելի թիվ են կազմում բարդություններով արտահայտված բայերի շարքում:

Մինչև հիմա քննված անվանական բառաբարդման կաղապարներն արտահայտում էին առարկայի, նրա հատկանիշի, հատկանիշի հատկա-

նիշի կամ դրանք որևէ հարաբերությամբ ցույց տալու իմաստներ։ Եթե անվանական բառաբարդման կազապարներն անմիջականորեն էին իրենց արտահայտած հիմնական իմաստներով և խոսքիմասային պատկանելությամբ, ապա բայական կազապարներն ունեն մեկ ընդհանուր նշանակություն՝ նրանք արտահայտում են գործողության կամ եղելության ադապտեր։ Գործողության կամ եղելության ամենաընդհանուր արտահայտումը՝ կապված օբյեկտիվ աշխարհի բազմազան հարաբերությունների՝ շարժման, որևէ երևույթի, հատկանիշի առաջացման, վիճակի, դրության և այլնի հետ, հանդիսանում է բայակերտ բառաբարդման կազապարի ընդհանուր նշանակությունը, քանի որ այն, կերտելով բայեր, պետք է անպայման ունենա բայիմաստ, որն ամփոփվում է վերոհիշյալում։

Բայակերտ բառաբարդման կազապարներն ունեն յուրահատուկ կառուցվածք, դրանցում անհրաժեշտություն է բայական բաղադրիչի առկայությունը, այլապես անհնար է արտահայտել բայիմաստ, գործողության կամ եղելության դադափար։

Եթե համեմատելու լինենք գոյականակերտ, ածականակերտ և բայակերտ կազապարները, ապա կարելի է նկատել, որ գոյականները, ածականները ինքնակերտ լինելով հանդերձ նաև այլակերտ են (գոյականներ կազմվում են գոյական+գոյական, գոյական+բայ (բայարմատ), ածական+գոյական, դերանուն+բայարմատ, բայ+բայ և այլ կազապարներով), իսկ բայական բարդությունը կա՛մ ամբողջովին է ինքնակերտ, կա՛մ մասամբ. այլ կերպ ասած, այն կա՛մ ամբողջությամբ է բայական՝ կազմվում է բայ+բայ կազապարով (գծմծել, ադաչել-պադատել, քաշքշել և այլն), կա՛մ էլ մասամբ՝ միայն վերջին բաղադրիչն է բայական. ինչպես, օրինակ՝ վիրահատել, ներարկել, ներաստիրել և այլն։

Բայակերտ բառաբարդման կազապարները բազմազան են ինչպես իրենց ձևաբանական, այնպես էլ շարահյուսական կազմով։

Դրանք ձևաբանորեն արտահայտվում են հետևյալ կազապարներով՝ բայ+բայ (թռչել-գնալ, հալվել-մաշվել և այլն), գոյական+բայ (գլուխ տալ, վիրահատել և այլն) ածական+բայ (կարմրին տալ, կանաչ կապել և այլն), դերանուն+բայ (իրարով ընկնել, իրար անցնել և այլն), մակբայ+բայ (վեր ելնել, ներս գալ և այլն), թվական+բայ (մեկ անել, չորս անել և այլն), ձայնարկություն+բայ (օֆ անել, ախ քաշել և այլն), բնաձայնություն+բայ (դրիկ անել, միաու անել և այլն)։ Նշված բայական կազապարներից ամենաարդյունավետներն են գոյական+բայ, բայ+բայ կազապարները։ Ընդ որում, բայ+բայ կազապարում բարդության բաղադրիչներն ունեն համազոտական փոխհարաբերություն, դրանք հիմ-

նականում դուգադրական բայեր են. ինչպես՝ գոռալ–գոչել, աղաչել–պաղատել, բոչել–հասնել, առնել–փախչել և այլն:

Բացի համադասական հարաբերությունից, բայակերտ բարդություններում, գերակշռում են նաև ստորադաս բաղադրիչներով բարդությունները, որոնցից ամենաարդյունավետն է գործողության օբյեկտ+գործողություն կաղապարը, ուր ստորադաս բաղադրիչը հիմնականում արտահայտված է լինում գոյականով: Ինչպես, օրինակ՝ գլուխ տալ, վիրահատել, դասավանդել և այլն:

Բացի գործողության օբյեկտ+գործողություն բայակերտ կաղապարից, գոյական+բայ ընդհանուր կաղապարի մեջ են մտնում նաև այլ մանրակազապարներ, որոնք արտահայտում են գործողության և նրա հետ առնչվող առարկաների ու հանդամանքների հարաբերություններ: Այսպես՝ զգալի թվով բայական բարդություններ են կազմվում գործողության կատարման միջոց+գործողություն (ապակեպատել, ոսկեզօծել, ծաղկապատել, կանաչապատել և այլն), գործողության հանգման առարկա+գործողություն (ձեռք ձեռքի տալ, խելք խելքի տալ, գլուխ գլխի տալ), գործողության անջատման առարկա+գործողություն (ձեռքից գնալ, աչքից ցցել, խելքից հանել, գահավիժել և այլն) կաղապարներով: Համեմատաբար ավելի պակաս արդյունավոր են գործողության կատարման տեղ+գործողություն (տեղափոխվել, մոտ գալ, ետ դալ և այլն) գործողության կատարման ձև+գործողություն (ոտնահարել, բռնցքահարել, ֆերակշռել, հավասարակշռել և այլն), գործողության կատարման չափ+գործողություն (շատախոսել, չորս անել, հազար անել և այլն) կաղապարները:

Բայական բարդություններն արտահայտում են բազմապիսի իմաստներ, որոնցից մի քանիսին կանդրադառնանք ստորև.

1. Բայական բարդություններ, որոնք արտահայտում են շարժման գործողություն. դրանց մեջ, ըստ շարժման բնույթի, կարելի է տարբերակել. ա) մեխանիկական շարժում արտահայտող բայեր բոչել–հասնել, գնալ–բերել, տեղափոխել, տեղաշարժել, fարկոծել, ռմբակոծել և այլն: բ) Հասարակական շարժում արտահայտող բայեր. ազատագրել, բռնագրավել, տիրապետել, ներաշրջել, թագադրել, պայfար մղել, ճակատամարտ տալ և այլն: գ) Ֆիզիոլոգիական շարժում արտահայտող բայեր՝ արյունաճոռել, ներազգալ տերևակալել, ծլարձակել, արմատակալել և այլն:

Այս խմբերն էլ ունեն իրենց ենթատեսակները: Այսպես՝ մեխանիկական շարժում արտահայտող բայական բարդությունները կարող են

ցույց տալ՝ ա) շարժման, ուղևորման գործողություն. ինչպես՝ երթևեկել, անցուդարձ անել, թռչել-գնալ, ճամփա ընկնել, ելումուտ անել *և այլն։*

Որոշ իմաստային երկփեղկվածություն է նկատվում շարժման, ուղևորման գործողություն արտահայտող դուգադրական բայերում. նման բայական բարդություններում առաջին բաղադրիչը ցույց է տալիս շարժման, ուղևորման գործողություն, իսկ երկրորդը՝ երբեմն այդ գործողության հետևանքը՝ թռչել-հասնել, անցնել-ընկնել, գնալ-կորչել, գալ-ընկնել *և այլն, իսկ երբեմն էլ՝ նպատակը*[30]*. ինչպես* գնալ-բերել, գալ-գնուցել, վեր կենալ, տեսնել *և այլն։ բ) Տեղափոխության գործողություն. ինչպես՝* տեղաշարժել, դուրս մղել, փախցնել-տանել, բռնել-բերել *և այլն։*

Ֆիզիոլոգիական շարժում արտահայտող բայերի մեջ հիմնականում կարելի է տարբերակել՝ ա) Բուսական ու կենդանական օրգանիզմների զարգացման ու գոյության հետ կապված տարբեր գործողություններ արտահայտող բայեր. ինչպես՝ թիակալել, բեղարտադրել, ուռկնդրել, տերեվազրկվել, ծաղկաթափվել, ծաղկազարդվել, սիրտը խփել, ուշագնաց լինել, դողդղալ *և այլն։ բ) Մարդկանց մտավոր գործունեությանը վերաբերող գործողություններ. ինչպես՝* մտատանջվել, մտատուզվել, մտապատկերել, մտապահել, խորհրդակցել, մեճախոսել *և այլն։*

գ) Մարդկային տարբեր զգացումներ, ապրումներ, ընկալումներ արտահայտող գործողություններ՝ երկյոտ կրել, ալաչաճ անել, սիրահարվել, սիրաշահել, հուսալքվել, հուսադրել, հույս ունենալ *և այլն։*

Հասարակական շարժում արտահայտող բայական բարդությունները համեմատաբար ավելի սակավաթիվ են, հետևաբար մեծ չեն նաև նրանց իմաստային ընդգրկման ոլորտները։ Բացի վերոհիշյալ իմաստներից, բայական բարդությունները կարող են արտահայտել՝

1 Հաղորդակցման գործողություն. ինչպես, օրինակ՝ հեռախոսել, հեռագրել ասել-խոսել *և այլն։*

2 Մարդկանց աշխատանքային գործունեություն արտահայտող գործողություններ՝ լուսանկարել, փորագրել, եռակցել, թերակշռել, հաճոռոշել, վիրահատել, դասախոսել, ծեփանկարել, լվացք անել *և այլն։*

3 Կենցաղային հարաբերություններ արտահայտող գործողություններ. ինչպես՝ հարսնախոսել, ծախծխել, եփել-թափել, ուտել-խմել, հյուրընկալել, հյուրասիրել, հարսնախոսել, ժառանգազրկվել *և այլն։*

4 Բայիմաստի աստակացում. նման իմաստ հիմնականում արտահայտում են դուգադրական բայերը, որոնց բաղադրիչները համանիշ գործողու-

---

30 Ա. Աբրահամյան. *Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 192։*

թյուններ են արտահայտում, իսկ ամբողջ կառուցվածքն արտահայտում է բաղադրիչների բայիմաստի սաստկացում[31]: *Ինչպես, օրինակ՝* գերվել-տարվել, հալվել-մաշվել, հիանալ-սքանչանալ, ապշել-զարմանալ *և այլն:*

5. Գործողության բազմակիություն, տևականություն, ուժգնություն է արտահայտվում մի շարք զուգադրական բայերով ու բայակրկնավորներով. ինչպես՝ խաբել-խաբխբել, շափել-շափշփել, ճվալ-ճվճվալ, գծմրծել, փորփրել, խշխշալ *և այլն*[32]:

6. Երևույթների աստիճանական զարգացում արտահայտող գործողություն. յուրահատուկ իմաստային կապ կա նման բայական բարդությունների բաղադրիչների միջև: Ստացվում է այնպես, որ երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողությունը հանդիսանում է առաջին բաղադրիչի ցույց տված գործողության հաջորդ էտապը. ինչպես՝ ծնվել-մեծանալ, շափել-ձևել, վարել-ցանել, լցվել-բախվել, փնտրել-գտնել, ծլել-ծաղկել *և այլն:*

7. Մի շարք բայական բարդություններ արտահայտում են գործողություն վախճանականություն: Սրանց առաջին բաղադրիչն արտահայտում է որևէ գործողություն, երկրորդ բղադրիչը՝ այդ գործողության վախճանը[33]: *Ոչ մեծ տարածում գտած այսպիսի բայական զուգադրությունների երկրորդ նդրում հանդես են գալիս* պրծնել, վերջացնել, ավարտել *բայերը: Ինչպես՝* ուտել-պրծնել, խմել-վերջացնել, կարդալ-ավարտել, գրել-պրծնել, սովորել ավարտել *և այլն:*

Պետք է նկատել, որ բայական բարդությունների նշված իմաստային խմբերի մեջ անանցանելի սահմաններ չկան: Երբեմն որոշ բայական բարդություններ ունենում են նաև այլ բայերի առանձնահատկությունները: Այսպես՝ դասախոսել *բայը նշված է մարդկանց աշխատանքային գործունեություն արտահայտող բայերի իմաստային խմբի մեջ, բայց նրանում կա նաև հաղորդակցական գործողության իմաստ,* հեռախոսել, ասել-խոսել *և նման այլ բարդություններում ավելի ընդգծված է հաղորդակցական գործողության նշանակությունը, բայց նրանցում կա նաև մարդկային մտավոր գործունեության իմաստը, քանի որ բացառված է այն փաստը, որ մարդ կարող է առանց մտածելու խոսել: Այնպես որ, վերոհիշյալ իմաստային խմբավորումները կատարված են ըստ բայիմաստներում գերակշռող հատկանիշի: Իսկ միևնույն բայի իմաստային*

---

31 *Նույն տեղում, էջ 195:*

32 *Նույն տեղում, էջ 196:*

33 *Նույն տեղում, էջ 193:*

տարբեր ոլորտների առանձնահատկություններ ունենալը բացատրվում է նրա իմաստային ճկունությամբ:

8. Պաշտամունք, հավատալիքներ, սովորություններ նշանակող բարդություններ. ինչպես, օրինակ՝ երդում տալ, աղոթք անել, խաչակնքել, ուխտադրժել, ուխտադրել, երդում-հավատ անել (ուտել) և այլն:

9. Զվարճալիքներ ու խաղեր արտահայտող բայեր. ինչպես՝ ֆեֆ անել, խրախճանք անել, կատակ անել, սրախոսել, ֆուտբոլ խաղալ, շախմատ խաղալ, սուսերամարտել և այլն:

10. Բնաձայնական իմաստ արտահայտող գործողություն. ինչպես՝ հաֆ անել, փիշտ անել, միաու անել, խշխշալ, թշթշալ, խզխզալ և այլն:

11. Երկնային լուսատուներին, մթնոլորտին վերաբերող գործողություններ՝ անձրև գալ, շոգ անել, կարկտահարվել, արևահարվել, աստղազարդել և այլն:

Սրանք են հիմնականում այն իմաստները, որոնք արտահայտվում են բայակերտ կաղապարներով:

Ինչպես տեսնում ենք, բայական բառաբարդման կաղապարներն աչքի են ընկնում իմաստային բազմազանությամբ և բավականին մեծ թիվ են կազմում:

ՍՊԱՍԱՐԿՈՒ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԲԱՌԱԲԱՐԴՄԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

1. ՇԱՂԿԱՊ

Սպասարկու խոսքի մասերից (կապեր, շաղկապներ, եղանակավորող բառեր, ձայնարկություններ) ոչ բոլորն են արտահայտվում բարդ բառերով: Սրանցից կապերն ընդհանրապես չեն արտահայտվում բարդություններով, իսկ ձայնարկությունների մեջ դրանք խիստ սակավաթիվ են:

Ընդհանուր առմամբ, սպասարկու խոսքի մասերի մասին կարելի է ասել, որ դրանք չունեն հայերենի բառաբարդման բազմազանությունները և այդ խոսքի մասերի ոլորտում հիմնականում հանդես են գալիս հարադրական ու կցական բարդությունները:

Կցական բարդություններով կազմված շաղկապներից են այնինչ, այսինքն, այնուամենայնիվ, այնուհանդերձ, միևնույն և այլն:

Բարդ շաղկապների մի տեսակն են հարադրական կազմությամբ շաղկապները, ինչպես՝ կամ թե, միայն թե, կարծես թե, ճանի որ, նենց որ, ինչպես և, բայց և և այլն:

Նկատելի է, որ հարադրական շաղկապների կազմության մեջ ար-

դյունավետ են և, nr, pե շաղկապները. ընդ որում, դրանք կարող են հաբաղդվել ինչպես շաղկապների, այնպես էլ այլ խոսքի մասերի հետ և կազմել բարդ շաղկապներ:

Այսպես՝ հարաբերական դերանունների, ինչպես նաև այլ բառերի հետ գործածական է nr շաղկապը. ինչպես՝ **ճանի nr, այնճան nr, pե nr, այնպես nr, չնայած nr, մանավանդ nr** և այլն:

Զգալի թվով բարդ շաղկապներ են կազմվում նաև pե, և շաղկապների և այլ բառերի հարադրությամբ՝ կամ pե, միայն pե, pե nr, ասես pե, ինչպես և. ուստի և, nւրեմն և այլն: Ինչպես երևում է օրինակներից, բարդ շաղկապների բաղադրիչներից մեկը մեծ մասամբ պարզ շաղկապ է լինում: Բայց կան նաև հարադրյալ շաղկապներ, որոնց ոչ մի բաղադրիչն առանձին վերցրած շաղկապ չէ, դրանց թիվը, իհարկե, շատ չէ. այդպիսիք են՝ նամենայնդեպս, այն է, ըստ որում, ընդ որում և այլ շաղկապները:

Նկատելի է, որ որոշ բարդ շաղկապների բաղադրիչները դրաբարյան հոլովաձևեր կամ նախդիրներ են. ինչպես՝ այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այնուհանդերձ, նամենայնդեպս, ըստ որում, ընդ որում և այլն:

Շաղկապները լինում են երկու տեսակ համադասական և ստորադասական. նրանք համապատասխանաբար ցույց են տալիս նախադասության անդամների, բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների, ինչպես նաև միևնույն խոսքը կազմող նախադասությունների ու նրա մասերի հարաբերություններ: Ինչ խոսք, նույն նշանակություն ունեն նաև բարդություններով արտահայտված շաղկապները: Վերոհիշյալ ընդհանուր հարաբերություններն արտահայտելիս շաղկապներն ի հայտ են բերում մի շարք իմաստային յուրահատկություններ: Այս տեսակետից առանձնապես աչքի են ընկնում բարդ շաղկապները: Նման շաղկապները, հատկապես հարադրական կազմությամբ շաղկապները, իմաստային ու կիրառական տեսակետից յուրահատուկ տեղ են գրավում շաղկապների շարքում: Դրանք ցույց են տալիս այնպիսի հարաբերություններ, որոնք մյուս շաղկապներով չեն արտահայտվում կամ էլ արտահայտում են իմաստային նրբերանգներ: Կազմությամբ պարզ շաղկապների նկատմամբ բարդ շաղկապների այս իմաստային առավելությունը բացատրվում է նրանով, որ բարդ շաղկապների յուրաքանչյուր բաղադրիչ ամբողջ կառուցվածքի մեջ ունի իր էական դերը թե՛ բառակազմական, թե՛ իմաստային տեսակետից:

Այսպես, եթե պարզ շաղկապը հանդես է գալիս հղանակավորող բառի հետ, ապա վերջինս շաղկապի արտահայտած իմաստին համապա-

տասխան երանգ է տալիս, դրանով իսկ ստեղծելով յուրահատուկ հարաբերություն: Այդպես են նաև այլ խոսքի մասերի զուգադրությամբ կազմված շաղկապները:

Այդ պարզ կլինի, եթե համեմատելու լինենք (իմաստային մերձավորություն) ունեցող մի քանի պարզ և բաղադրյալ շաղկապներ ինչպիսիք են՝ որ–մանավանդ որ, սակայն–և սակայն, կամ–կամ թե և այլն[34]:

Պատճառի և հիմունքի հարաբերություն է արտահայտվում որ, մանավանդ որ շաղկապներով, սակայն այդ հարաբերությունը առաջին դեպքում արտահայտվում է սովորական ձևով, իսկ երկրորդ դեպքում պատճառի և հիմունքի հարաբերության իմաստն արտահայտվում է՝ հատուկ կերպով ընդգծելով որևէ տեսակետից կարևոր այս կամ այն անդամը: Բերենք բնագրային օրինակներ. «Լավ, որ հետաքրքրվում ես, պատմեմ» (Ս. Այվազյան): «Եվ նա, որ յուր ուրախությունը քո իղձերը կատարելու մեջ էր տեսնում, անուշադիր չպիտի թողներ քո զգացումները, մանավանդ որ նրանք չէին հակառակում յուր փառասիրական նպատակներին» (ՄԳՄ): Առաջին օրինակում կա նաև պայմանի իմաստի թույլ արտահայտություն: Իսկ երկրորդ օրինակում մանավանդ որ շաղկապը կապում է գլխավոր նախադասությանը այնպիսի նախադասություն, որով արտահայտված պատճառով գլխավոր նախադասության արտահայտած գործողության կատարումը դառնում է լիովին անխուսափելի և ավելի է ընդգծում տվյալ գործողության իրականացման անհրաժեշտությունը:

Եթե համեմատելու լինենք սակայն, և սակայն շաղկապների իմաստները, ապա կտեսնենք, որ սրանցից առաջինը արտահայտում է հակասման հարաբերություն, իսկ և սակայն բարդ շաղկապն արտահայտում է այդ հարաբերության ամրապնդում: Բերենք բնագրային օրինակներ՝ «Քադավորի դեմքի վրա փայլեց գոհության մի ժպիտ, որը, սակայն, զարմանք պատճառեց վիրաբույժին» (ՄԳՄ): «Յոթ օր անցավ, և սակայն Բեշիրը չկարողացավ Բյուրականն առնել» (Ն. տ.):

Վերջին օրինակում և շաղկապը և սակայն բարդ շաղկապին ավելացնում է նաև միավորման հարաբերության իմաստ[35]:

Նույն ձևով կամ բաժանական շաղկապը թե բաղադրիչի հետ երբեմն արտահայտում է տարակուսանք, կասկած, երկընտրանք: Օրինակ՝ «Հայաստանի... իշխանապետ կամ արքայից-արքա հչռակվեցավ Աբասը» (ՄԳՄ):

---

34 Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 397:

35 Նույն տեղում, էջ 440:

«Հետաքրքրությամբ հարցրեց, թե արդյոք կարողացավ անծանոթ մնալ Սևադային, կամ թե տեղեկացա՞վ ցանկացած գաղտնիքներին» (Ն. տ.):

Շաղկապները, այդ թվում և բարդություններով արտահայտված շաղկապներն ունեն բազմաթիվ իմաստային խմբեր: Այսպես, Ս. Աբրահամյանը համադասական շաղկապներն ըստ իմաստի բաժանում է երեք խմբի՝ միավորիչ շաղկապներ, ներհակական շաղկապներ, բաժանական շաղկապներ, որոնք ունեն իրենց ենթախմբերը. ստորադասականների մեջ ըստ իմաստի առանձնանում են մեկնական, ժամանակի, պայմանի, պատճառի ու հիմունքի, զիջական, նպատակի, համեմատության, մակբայական, բացահայտման տեսակները[36]:

2. ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

Բարդ բառերով արտահայտված եղանակավորող բառերն առանձնապես շատ չեն, և նրանց մեծ մասն ունի վերլուծական կազմություն. համադրական կազմություն ունեն ահավասիկ, թերևս, միգուցե, միթե, նույնիսկ, իսկապես, նամենայնդեպս, այնուամենայնիվ եղանակավորող բառերը:

Ինչպես նախորդ դեպքում շաղկապների, այնպես էլ եղանակավորող բառերի կազմության ժամանակ արդյունավետ է թե շաղկապը, դրանով կազմվում են մի շարք հարադրական բարդություններ՝ կարծես թե, կարծեմ թե, ճագիվ թե, ինչպես թե, դժվար թե, իբր թե, երանի թե, երևակ թե, իրև թե և այլն: Եղանակավորող բառերի կազմության համար զգալի դեր ունեն նաև ինչ դերանունը և միևնույն կապը: Դրանք հանդես են գալիս հետևյալ կազմություններում՝ ինչևէ, ինչևիցե, ինչ որ է, ինչ խոսք, ինչպես չէ, միևնույն իսկ, միևնույն անգամ և այլն:

Բարդ բառերով արտահայտված եղանակավորող բառերը պարզների համեմատությամբ ավելի շատ իմաստային նրբերանգներ արտահայտելու հնարավորություն ունեն և ավելի ճշգրիտ են ներկայացնում խոսողի վերաբերմունքը: Իսկ խոսքի ճշգրտությունը և դրա համար լեզվական միջոցների հայթայթումը միշտ ուղեկցել են լեզվի զարգացմանը և ազդակ հանդիսացել դրա համար:

Պարզ և բարդ եղանակավորող բառերի իմաստային տարբերությունը ցույց տալու համար համեմատենք իմաստով իրար մոտ ինչ խոսք և իրոք եղանակավորող բառերը բնագրային տեքստում. «Ինչ խոսք, որ խոշոր

36 Այդ մասին մանրամասն տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 408—497:

նշանակություն է ունեցել այն, որ այդ ներկայացման մեջ Սիրանույշին շրջապատել էին հմուտ արվեստագետներ» (Ռ.Զ.)։ «Իրոք, նա շարունակում էր իր մտքի թելը» (Շիրվ.)։ Ընդգծված եղանակավորող բառերը արտահայտում են խոսողի հաստատական վերաբերմունքը, բայց նկատելի է, որ առաջին դեպքում այդ վերաբերմունքն ավելի ցայտուն է և ընդգծված։

Նույնը կարելի է ասել նաև այլ զույգերի համար. ասենք՝ միայն–միմիայն, անգամ–մինչև անգամ և այլն։ Միմիայն բառով ավելի է ընդգծված սահմանափակման, իսկ մինչև անգամ-ով՝ աստիճական իմաստները, իմաստով դրանց մերձավոր միայն, անգամ բառերի համեմատությամբ։

Եղանակավոր բառերն իմաստային տեսակետից բազմազան են, նրանք լինում են հաստատական, ցուցական, երկբայական, աստիճական, սահմանափակման, կամային, դիջական, ժխտական, բաղձանքի[37]։

Անշուշտ, այս իմաստներն արտահայտվում են նաև կազմությամբ բարդ եղանակավորող բառերով։

Բարդ բառերով արտահայտված եղանակավորող բառերն ավելի հաճախ արտահայտում են խոսողի երկբայական կամ հաստատական վերաբերմունքը։

Եվ իրոք, նման իմաստներ ունեցող եղանակավորող բառերը զգալի թիվ են կազմում կազմությամբ բարդ եղանակավորող բառերի մեջ։ Բարդություններով արտահայտված հաստատական եղանակավորող բառերն են՝ իսկապես, իսկապես որ, ինչ խոսք, իսկ և իսկ, իրավ որ, ինչպես. երկբայականները՝ կարծես թե, իբր թե, իբրև թե, միգուցե, չլինի թե, մի՞թե, կա–չկա և այլն։

Բարդ բառերով արտահայտված դիջական, աստիճական, բաղձանքի, ցուցական իմաստ ունեցողները համեմատաբար ավելի սակավաթիվ են։ Ինչպես տեսանք, բարդ բառերով արտահայտված եղանակավորող բառերը բավականին սակավաթիվ էին, և բառաբարդումը, որպես բառակազմական տիպ, առանձնապես արդյունավետ չէ եղանակավորող բառերի կազմության ժամանակ։

Ինչ վերաբերում է ձայնարկություններին, ապա դրանք իրենց հատուկ հուզաարտահայտչական իմաստով յուրահատուկ շերտ են ներկայացնում բառապաշարում։ Զուրկ լինելով առարկայական-տրամաբանական իմաստ, ձայնարկությունները շարահյուսական կապի մեջ չեն մտնում այլ բառերի հետ, շարահյուսական խումբ չեն կազմում, հետևաբար չեն կարող կազմել նաև բարդ բառ։ Մյուս կողմից՝ բարդ բառերով արտա-

37 Նույն տեղում, էջ 515։

հայտված ձայնարկություններ չկան ժամանակակից հայերենում, քանի որ ձայնարկությունների հատկանիշներից մեկն է նրանց սակավահնչյուն լինելը։ Այս փաստն արդեն խոսում է այն մասին, որ ձայնարկությունները չեն կարող լինել ածանցավոր, բարդ, այլ կերպ ասած՝ նրանք չեն բաղադրվում ձևույթներից։ Ձայնարկությունները ոչ միայն չեն բաղադրվում ձևույթներից, այլև չեն մտնում բաղադրությունների մեջ։ Հասկանալի է, որ նրանք չեն կարող հանդիսանալ բարդությունների կազմիչներ։ Այս տեսակետից կան միայն չնչին բացառություններ։ Ձայնարկությունները մասնակցում են մի քանի հարադրական ու կցական բարդությունների կազմությանը։ Դրանք են՝ **ախ ճաշել, վայ տալ, ախ ու վախ անել, ջան ասել, հայհայ, վայվայ**։

Որոշ դեպքերում ձայնարկությունների կրկնությունը (**օֆ–օֆ, այ–այ, վայ–վայ և այլն**) բառային արժեք չունի դրանով միայն արտահայտվում է տվյալ ձայնարկություններով արտահայտված իմաստի սաստկացում, առանց բարդության արժեք ստանալու։ Նույնը կարելի է ասել նաև բնաձայնությունների կրկնության մասին, դրանց կրկնությունն արտահայտում է բնության երևույթների, առարկաների, կենդանիների արձակած ձայների բազմակիությունն։ Երկու դեպքում էլ՝ թե՛ ձայնարկությունների, թե՛ եղանակավորող բառերի կրկնությունը կարող է ունենալ ոճական արժեք։

Բնաձայնությունների մեջ չկան բարդ բառերով արտահայտված կազապարներ։ Դրանք էլ ձայնարկությունների նման հիմնականում միաձևույթ են, իսկ բնաձայնական բառի կրկնությունն, ինչպես տեսանք, բառային արժեք չունի։ Չնայած բնաձայնությունները բարդ բառերով չեն արտահայտվում, բայց կարող են մասնակցել որոշ բարդ բառերի կազմությանը։ Ընդ որում, այս դեպքում բնաձայնական հիմքը որևէ բարդություն է կազմում միայն այս կամ այն ածանցի միջոցով։ Այսպես՝ **-ոց** ածանցով կազմվում են գոյականներ՝ **ոզոզոց, սվսվոց, խշխշոց, շրվշրվոց, փսփսոց** և այլն։

Ալ -ով կազմվում են բայեր՝ **խշխշալ, թրթրալ, ոզոզալ, սվսվալ, փսփսալ, մկմկալ** և այլն։

Ան ածանցով բայահիմքերից կազմվում են ածականներ, ինչպես՝ **սվսվան, խշխշան, ոզոզան, մկմկան, դռդռան** և այլն։

Ինչպես տեսանք, բնաձայնությունները ձայնարկությունների համեմատությամբ շատ ավելի կենսունակ են բարդ բառեր կազմելիս, դրանցով կազմվում են այլ խոսքի մասեր՝ գոյականներ, ածականներ, բայեր, բայց ոչ բնաձայնական՝ բառեր։

Բառաբարդման ձևեր ունեցող մյուս ածասարկու խոսքի մասերից շաղկապներն ու եղանակավորող բառերը համադրվում էին՝ ինչպես միմյանց, այնպես էլ այլ խոսքի մասերի հետ և կազմում էին նոր շաղկապներ ու եղանակավորող բառեր:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, բնաձայնական բառերը միակողմանի են մասնակցում բարդ բառերի կազմությանը, քանի որ դրանցով կերտվում են այլ խոսքի մասեր, բայց ինքնակերտությունը միանգամայն բացակայում է: Մինչդեռ մյուս խոսքի մասերը՝ գոյականները, ածականները, թվականները, բայերը, մակբայները, շաղկապները եղանակավորող բառերը, այլակերտ լինելով հանդերձ, նաև ինքնակերտ էին:

Այսպիսով, անվանական, բայական բառաբարդման կաղապարների, ինչպես նաև ածասարկու խոսքի մասերի բառաբարդման կաղապարների քննությունը ցույց տվեց, որ տարբեր խոսքի մասերի ոլորտներում բառաբարդումը միատեսակ հանդես չի գալիս: Այն շատ գործուն և կենսունակ է գոյականների, ածականների, բայերի կազմության ժամանակ: Դերանունները, թվականները, մակբայները բառաբարդման կաղապարների հաճախականությամբ միջին դիրք են գրավում խոսքի մասերի համակարգում, իսկ շաղկապների, եղանակավորող բառերի մեջ բարդ բառերը շատ քիչ են: Դրանց կողքին կապերը, ձայնարկությունները, բնաձայնությունները բարդ բառերով ընդհանրապես չեն արտահայտվում. դրանցից ձայնարկություններն ու բնաձայնությունները հիմնականում միաձևույթ են և ինքնին հասկանալի է, որ չեն կարող բառաբարդված ձևեր ունենալ, իսկ կապերը, չնայած միաձևույթ չեն, ունեն նաև ածանցված ձևեր, բայց չեն արտահայտվում բարդ բառերով:

ԲԱՌԱԲԱՐԴՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Դժվար չէ նկատել, որ անվանական և բայական բառաբարդման կաղապարներն ընդգրկում են հայերենի բարդ բառերի մեծ մասը: Դրանց քննությունը ցույց է տալիս, որ առանձին խոսքի մասեր տարբեր մասնակցություն ունեն բառաբարդման ժամանակ: Հայերենի խոսքի մասերն այս առումով քննելիս հայտնի է դառնում, որ դրանց արդյունավետությունը կարող է լինել մեծ և փոքր: Վերջին դեպքում որևէ խոսքի մաս կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բարդությունների կազմությանը, մյուս դեպքում այս կամ այն ձևաբանական միավորը համադրվում է համարյա բոլոր խոսքի մասերի հետ (որը, իհարկե, առավելագույն արդյունավետությունն է և ոչ միշտ է հնարավոր): Այս տեսակետից աչքի են ընկնում գոյականները, բայերը, ածականները:

Դրան հակառակ, ցածր արդյունավետություն ունեն ձայնարկությունները. վերջիններս մասնակցում են ընդամենը մի քանի բարդ բառերի կազմությանը (ճայճայ, վայվայ, ախուվախ, ախուվիշ):

Բառաբարդման ժամանակ որևէ բառի (ինչ խոսքի մասի էլ պատկանելիս լինի այդ բառը) բառակազմական կենսունակությունը կախված է տվյալ բառի կապակցելիության հնարավորություններից, իսկ վերջինս, իր հերթին, կախման մեջ է գտնվում տվյալ բառի իմաստային ընդգրկման ծավալից, նրա բազմիմաստությունից: Որքան բազմիմաստ է բառը, այնքան բազմազան է նրա շարահյուսական կապակցելիությունը այլ բառերի հետ, որը և նախապայման կարող է հանդիսանալ բարդ բառի առաջացման համար: Հետևաբար, որևէ բառի բառաբարդման մեջ ունեցած հաճախականությունը կապված է նրա բազմիմաստության հետ: Այստեղից էլ հետևում է, որ բազմիմաստությամբ աչքի չընկնող խոսքի մասերը՝ դերանունները, մակբայները, թվականները, ձայնարկությունները, բնաձայնությունները, կապերը, շաղկապները (հատկապես վերջին երեքը) առանձնապես կենսունակ չեն բառաբարդման ժամանակ:

Գոյականը, ածականը, բայը իրենց լայն իմաստային ընդգրկման շնորհիվ, արտացոլելով օբյեկտիվ իրականության երևույթներն ու հատկանիշները, բազմապիսի փոխհարաբերությունների մեջ են մտնում ինչպես միմյանց, այնպես էլ այլ խոսքի մասերի հետ. այդ է պատճառը, որ դրանցով կազմվում են հայերենի բարդ բառերի ճնշող մասը: Ձևաբանական առումով ժամանակակից հայերենի ամենաարդյունավետ բառաբարդման կաղապարները հետևյալներն են Գ+Գ, Գ+Ա, Գ+Բ, Ա+Գ, Ա+Ա: Այսպես՝ Գ+Ա (սրտաբաց, աղազուրկ, ձեռնունայն, շնորհագեղ և այլն): Ա+Գ (խստագեմ, սևահող, հարթապատակեր, սակավաջուր, կիսաժպիտ և այլն): Ժամանակակից հայերենում ավելի կենսունակ է վերջին կաղապարը:

Գոյականի բառակազմական արդյունավետությունը ցույց տալու համար նշենք մի շարք բառաբարդման կաղապարներ, որոնցում որպես բաղադրիչ հանդես է գալիս գոյականը: Ամենաընդհանուր կերպով կարելի է տարբերակել գոյականների չորս իմաստային խմբեր, որոնք կարելի է համառոտագրել այսպես՝ անձի անուն-ա, իրի անուն-ի, վերացական -վ, թանձրացական -ք: Գոյականը համառոտ կերպով կնշենք Գ տառով, ածականը Ա, թվականը՝ Թ, բայը՝ Բ տառերով:

Գթի+Գթի (առյուծասիրտ, լուսնախոցիկ, ականջախեցի և այլն):

Գթի+Գվի (դարչնագույն, գլխացավ, ծաղկաբույր և այլն):

Գվի+Գվի (գունեղանգ, խաղաթուրձ, լողառճ):

Գթա+Գթա—(տղամարդ, երեխամայր, հարսնաքույր)։

Գթա+Գթի—(երեխայադեմ, մարդագայլ, արքայաճուկ, արքայախնձոր)։

Գթա+Գվի—(երեխայամիտ, մարդահամար, արքայակերպ)։

Գթի+Ա—(աղազուրկ, արմատազուրկ, հերարձակ)։

Ա+Գթի—(թիսադեմ, չարասիրտ, թթվասեր)։

Ա+Գվի—(բարձրահասակ, լայնախոհ, սրամիտ)։

Գթի+Բ (բայարմատ)—(տերևաթափ, գարեջրաժամառ, կաթնահունց)։

Գվի+Բ(բայարմատ)—(տեղաշարժ, արվեստագետ, նպատակասլաց և այլն)։

Գթա+(բայարմատ)—(մարդատյաց, մարդասեր, աղջիկուես և այլն)։

Թ+Գվի—(հնգամարտ, երկսեռ, երկընտրանք, և այլն)։

Թ+Գթի—(հնդաթև, երկատոհման, վեցնիստ, եռահատոր և այլն)։

Ինչպես երևում է օրինակներից, գոյականը բավականին ակտիվ կերպով դուգադրվում է ինչպես գոյականների, այնպես էլ այլ խոսքի մասերի հետ։

Նույն ձևով, եթե խոսելու լինենք բայի բառակազմական արդյունավետության մասին, ապա կարելի է ասել, որ բացի գոյականից, ածականից, բայից, թվականից, բայը փոխհարաբերության մեջ է մտնում նաև դերանունների (ինքնահավան, ինքնասեր, ինքնահեռ և այլն), ձայնարկությունների (ախ քաշել, վայվայ անել, օֆ անել և այլն) հետ։ Գոյականի հետ բայը մտնում է հետևյալ փոխհարաբերությունների մեջ. գործող անձ, առարկա+գործողություն (հողմահալած, գայլասատակ, արեվակեզ և այլն), գործողության օբյեկտ+գործողության (կոշկակար, որսագող, ուսումնասեր և այլն, գործողության տեղ+գործողություն (երկնաբնակ, տիեզերագնաց, գետնատող և այլն), գործողության ժամանակ+գործողություն (գիշերագնաց, գիշերախոս, գարնանացան և այլն), գործողության պատճառ+գործողություն (սիրաբորբոք, վշտամորմոք, վշտաբեկ և այլն), գործողության նպատակ առարկա+գործողություն (երկնահաս, հովիկ, ցրտադիմացկուն), գործողության անջատման առարկա+գործողություն (մարդախույս, աղբյուրարուխ, սրտաբուխ և այլն), գործողության կատարման միջոց+գործողություն (թիթեղապատ, նկատաղարդ, ջրաբույժ և այլն), գործողության ձև+գործողություն (բունդքահար, շարքացան, թևալող և այլն)։ Ածականի հետ բայը հիմնականում մտնում է գործողության ձև+գործողություն (նրբահյուս, դյուրաշարժ,

գժվարամարս և այլն),դերանվան հետ՝ գործողության օբյեկտ+գործողություն *(ինքնահավան, ինքնասեր) փոխհարաբերությունների հետ:*

Ածականը, լինելով իմաստային լայն ընդգրկում ունեցող խոսքի մաս, բազմապիսի փոխհարաբերությունների մեջ է մտնում տարբեր խոսքի մասերի հետ: Մեծ թվով բարդություններ են կազմվում ածական+գոյական (տխրադեմ, բարետես, բարձրահասակ և այլն), ածական+ածական (նրբագեղ , տխրուրախ, լայնարձակ և այլն), ածական+բայահիմք) (նորընտիր, նրբանկատ, դյուրահալ և այլն), դերանուն+ածական (ինքնավստահ, եսամոլ, յուրահատուկ և այլն):

Ինչպես ցույց են տալիս փաստերը, գոյականը, ածականը բայը զուգադրվում են մի քանի խոսքի մասերի հետ և իրենց բառակազմական արդյունավետությամբ գերազանցում են մյուս խոսքի մասերին: Ուրեմն ժամանակակից հայերենում նրանք բառակազմական մեծ արդյունավետություն ունեցող խոսքի մասեր են: Մակբայները, դերանունները, թվականները համեմատաբար փոքր բառակազմական արդյունավետություն ունեն և այդ տեսակետից միջին տեղ են գրավում խոսքի մասերի համակարգում, իսկ շաղկապների, կապերի, ձայնարկությունների բառակազմական արդյունավետությունը շատ սահմանափակ է, կարելի է ասել՝ ամենափոքրն է:

ԲԱԶՄԱՐՄԱՏ ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԿԶԻՈՒՐ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ակնհայտ է, որ ժամանակակից հայերենի բարդ բառերի գերակշռող մասը երկարմատ բարդություններ են: Բայց դրանց կողքին, չնայած ոչ մեծ թվով, կան նաև եռարմատ, քառարմատ երբեմն էլ հնգարմատ բարդ բառեր: Ավելի շատ արմատներ ունեցող բարդություններ հիմնականում հանդիպում են թվականների մեջ: Հիշյալ բարդ բառերը տարբեր խոսքի մասերի ոլորտում տարբեր քանակով են հանդես գալիս:

Երկուսից ավելի արմատներ ունեցող խոսքի մասերից կարելի է նշել գոյականները, բայերը, թվականները, շաղկապները, եղանակավորող բառերը:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ բարդ բառերով արտահայտված գոյականների, բայերի ածականների կշիռը շատ ավելի մեծ է խոսքի մասերի համակարգում, քան թվականներինը, շաղկապներինն ու եղանակավորող բառերինը, ապա կարելի է ասել, որ բազմարմատ (նկատի ունենք երկուսից ավելի արմատներ ունեցողը) գոյականները, ածականները, բայերը իրենց ընդհանուր քանակի համեմատ շատ ավելի քիչ

են, քան եռարմատ, քառարմատ, թվականները, շաղկապները, եղանակավորող բառերը: Քանի որ բարդություններով արտահայտված շաղկապներն ու եղանակավորող բառերը հիշյալ խոսքի մասերի համեմատությամբ շատ սակավաթիվ են, մինչդեռ թվականների և նշված սպառարկու խոսքի մասերի ոլորտում հանդես եկող բաղմարմատ բարդությունները շատ ավելի հաճախադեպ են գոյականների, բայերի, ածականների համեմատությամբ: Երկուսից ավելի արմատներով բարդությունները համեմատաբար շատ են թվականների ոլորտում, որը բացատրվում է թվականների իմաստային առանձնահատկությամբ՝ նրանք ցույց են տալիս թվերի շարունակ աճող քանակը, կարգը, բաշխումը, որոնք հիմնականում արտահայտվում են բարդություններով:

Ինչպես հայտնի է, պարզ բառերով արտահայտվում են մեկից մինչև տասը և քսան, հարյուր, հազար, միլիոն, միլիարդ թվականները. մյուսները բարդ են կամ ածանցավոր, իսկ բարդ թվականների մեջ գերակշռում են բաղմարմատները:

Այժմ մի քանի խոսք գոյականների ոլորտում հանդես եկող բաղմարմատ բարդությունների մասին: Նման գոյականների մեջ գերակշռում են եռարմատ կազմությունները: Եռարմատ բարդ գոյականների բաղադրիչները հիմնականում միանում են հոդակապով. ինչպես, օրինակ՝ լուսանկարչատուն, գունալուսանկար, ածխաջրածին, ատոմաջրածին, գարեջրավաճառ, ջրաղացքար, հեռախոսակայան, գրադարանավար, ավտոպահեստամաս և այլն:

Նշված բառերն ունեն տերմինի արժեք, որոնք ստեղծված են գիտության, տեխնիկայի, կենցաղի հետ կապված մի շարք հասկացություններ անվանելու համար:

Արդեն նշվեց, որ բարդ գոյականների մեջ հանդիպող քառարմատ կազմությունները սակավաթիվ են: Դրանցից կարելի է, նշել հեռագրասյունաշար, առևտրագործակալ և այլ բառերը: Նկատելի է, որ բաղմարմատ բարդ գոյականների կազմության ժամանակ հաճախադեպ խոսքի մասերն են գոյականները, բայերը (բայարմատները), ածականները: Այսպես, գունալուսանկար բարդության ձևաբանական կազմատարն է ածական+գոյական+գոյական, ածխաջրածին (գոյական+գոյական+բայարմատ), ավտոպահեստամաս (գոյական+ածական+գոյական) և այլն:

Եռարմատ բարդ բառեր հանդիպում են նաև ածականակերտ կազմատարներում: Ինչպես՝ պատմաբանասիրական, աստղանշանակիր, գիտամանկավարժական, լեզվաաշխարհագրական, գունավիմագիր, պտղաբան-

չարաբուծական, գիտահանրամատչելի, ատոմաջրածնային, առևտրավաշխատական և այլն։

Ինչպես տեսնում ենք, բազմարմատ ածականները բնութագրում են գիտության, արվեստի, ժողովրդական տնտեսության հետ կապված առարկաներ, երևույթներ (լեզվաաշխարհագրական մեթոդ, գիտահանրամատչելի կինոնկար, պողպատանջարարուծական սովխոզ և այլն)։ *Այս դեպքում ևս գոյականների նման, բարդության բաղադրիչները միանում են ա հոդակապով և միմյանց հետ փոխհարմարվում բառաբարդման հետ կապված հնչյունական փոփոխությունների միջոցով։*

Անվանական խոսքի մասերի մեջ բազմարմատությամբ աչքի են ընկնում թվականները։ Եթե նախորդ խոսքի մասերի մեջ քիչ էին քառարմատ կազմությունները, ապա թվականների համար դրանք սովորական են. դեռ ավելին, դրանցում չորսից ավելի արմատներից կազմված բարդությունները մեծ տեղ են գրավում։ Ինչպես, օրինակ՝ **fաան հազար երկու հարյուր տասնվեց** *(վեց արմատ),* **տասնմեկ հազար յոթ հարյուր երեսունչորս** *(յոթ արմատ),* **հարյուր fառասունհինգ հազար վեց հարյուր տասնյոթ** *(ութ արմատ) և այլն։*

Բազմարմատ թվականների ընդհանուր կառուցվածքային հատկանիշն է վերլուծական բարդություններով արտահայտվելը, մյուս կողմից, բազմարմատ թվականները կարելի է անվանել բազմաբարդ, քանի որ բարդությամբ արտահայտված ընդհանուր կառուցվածքում առկա են լինում մի քանի բարդություններ։ Այսպես, օրինակ՝ **fաանհինգ հազար հարյուր վաթսունչորս** *վերլուծական բարդության մեջ մտնում են* **fաանհինգ** *և* **վաթսունչորս** *կցական բարդությունները։ Նման երևույթ (բարդության մեջ բարդություն) նկատվում է նաև երկուսից ավելի արմատներ ունեցող ածականների ու գոյականների մեջ, բայց դրանք, ինչպես տեսանք, հիմնականում եռարմատ էին, հետևաբար մեկ բազմարմատ բարդության մեջ հնարավոր էր ընդամենը մեկ բարդ բաղադրիչի առկայություն։ Այսպես՝* **ավտոխեուղի** *բարդության երկրորդ բաղադրիչն է* **խեուղի** *բարդ բառը.* **լեզվաաշխարհագրական** *բարդ բառի կազմում հանդես է գալիս* **աշխարհագրական** *բարդ բառը և այլն։*

Բարդություններով արտահայտված դերանուններն ու մակբայները *հիմնականում ունեն երկարմատ կազմություն, եթե նկատի չունենանք մի քանի մակբայներ. ինչպես* **դեմճանդիման, այսօրևեք, վաղնևեք, իսկույնևեր, տեղնուտեղը**։ *Այն էլ, եթե ընդունենք, որ և, ու շաղկապները հոդակապի դեր են կատարում և հիմնական ձևույթի արժեք չունեն, ապա կարելի է ասել, որ նշված բարդությունները երկարմատ են։*

Այսպիսով, անվանական խոսքի մասերից բաղմարմատությամբ աչքի են ընկնում թվականները, որոնք մեծ մասամբ արտահայտվում են վերլուծական կազմությամբ բարդություններով։

Ժամանակակից հայերենի բայական բարդությունների մեջ նույնպես հանդիպում են երկուսից ավելի հիմնական բաղադրիչներից կազմված բարդ բառեր։ Այսպիսի բարդությունները շատ չեն, եղածներն էլ հիմնականում ունեն վերլուծական կառուցվածք։ Կառուցվածքային այս հատկանիշը նկատելի է նաև մյուս խոսքի մասերին պատկանող բաղմարմատ բարդ բառերում, որը իհարկե ունի իր բացատրությունը։ Համադրական կառուցվածք ունեցող բաղմարմատ բառերի սակավությունը վերլուծականների համեմատությամբ բացատրվում է նրանով, որ ժամանակակից հայերենին ընդհանրապես խորթ են երկարաբան կազմությունները, առավել ևս մեկ անջատ կառուցվածքում երկուսից ավելի հիմնական ձևույթների համատեղելը, իսկ հարկ եղած դեպքում երեք և ավելի արմատների մեկ բառի մեջ համատեղումը կատարվում է մեծ մասամբ վերլուծական կառուցվածք ունեցող բարդություններում։ Այդ մյուս կողմից էլ նպաստում է արտասանական բարեհնչության ինչպես նաև ընկալման ու արտասանության հեշտացմանը։

Բաղմարմատ բայական բարդությունները մեծ մասամբ զուգադրական բայեր են. շափել–շափչփել, դողալ–դողդողալ, գոռալ–գոռգոռալ, ծախել–ծախծխել և այլն կամ էլ հարադրական բայեր. ինչպես՝ բաց ու խուփ անել, շուռ ու մուռ գալ, պատառ–պատառ անել, առաստուր անել, դուրս ու ներս անել, հարց ու փորձ անել, վեր ու վար անել և այլն։

Ինչպես երևում է օրինակներից, նշված բարդությունների կազմում որպես բաղադրիչ հանդես են գալիս կրկնավորներից կազմված կցականներ և բաղհյուսական հարադրություններ. ինչպես՝ ծախել–ծախծխել, դողալ–դողդողալ, բաց ու խուփ անել, դուրս ու ներս անել և այլն։

Սպասարկու խոսքի մասերի մեջ ևս կան երկուսից ավելի արմատներից կազմված բարդ բառեր։

Ինչպես արդեն ասվել է, սպասարկու խոսքի մասերի մեջ գերակշռում են վերլուծական կազմությունները, բաղմարմատների մեջ՝ առավել ևս։ Բերենք մի քանի բաղմարմատ շաղկապների և եղանակավորող բառերի օրինակներ՝ որպես թե, ինչպես որ, այնպես որ, նույնպես և, բայց և այնպես, ոչ միայն... այլ նաև, ինչ է թե, միևնույն իսկ, ինչպես որ և այլն։

Եղանակավորող բառերի մեջ բաղմարմատ կազմություններն ավելի քիչ են շաղկապների համեմատությամբ։

Ինչպես երևում է օրինակներից, բազմարմատ շաղկապները կազմվում են շաղկապների և այլ խոսքի մասերի զուգադրությամբ, եղանակավորող բառերը նույնպես զուգադրվում են այլ խոսքի մասերի հետ (նշված օրինակներում կապերի հետ՝ միևնույն, դերանունների՝ ինչպես չէ, շաղկապների՝ իսկապես որ): Բազմարմատ կազմություններով հնարավոր է լինում արտահայտել իմաստային որոշ նրբերանգներ:

Ժամանակակից լեզվաբանության մեջ խոսվում է բառի երկարության ու խորության մասին. ընդ որում, բառի խորությունը որոշվում է բառի կազմում եղած ձևույթների քանակով, իսկ երկարությունը՝ բառի կազմում եղած վանկերի քանակով[38]: Եթե այդ տեսակետից դիտելու լինենք բազմարմատ բարդ բառերը, ապա կարելի է ասել, որ այդպիսի բարդությունները ժամանակակից հայերենում իրենց խորությամբ ու երկարությամբ աչքի ընկնող բառերից են: Եվ իսկապես, եթե ժամանակակից հայերենի համար բառի միջին խորությունը չի անցնում երկուսից, ապա բազմարմատ բարդություններում այն առնվազն երեք է, էլ չենք խոսում քառարմատ, հնգարմատ, բարդությունների մասին, որոնք իրենց կազմում կարող են ունենալ, նաև այլ ձևույթներ (ածանցներ, վերջածանցներ), բացի հիմնական ձևույթներից: Ինչպես լեզվաաշխարհագրական բառի խորությունն է 4, ակումբագրադարանային բառիը՝ 4, հազար յոթ հարյուր երեսունչորսերորդ բառիը՝ 7, ոչ միայն... այլ նաև բառինը 6 և այլն:

Համապատասխանաբար լեզվաաշխարհագրական բառի երկարությունը կլինի 8, ակումբագրադարանային բառինը՝ 9, հազար յոթ հարյուր երեսունչորսերորդ բառինը՝ 11 և այլն:

Բազմարմատ բարդությունները և ընդհանրապես երկարաշունչ բառերը, ինչ խոսքի մասի էլ պատկանելիս լինեն, ունեն սահմանափակ կիրառական ոլորտ, դրանք հաճախ հանդիպում են գիտական, հրապարակախոսական տեքստերում:

Խոսքի մասերի բառաբարդման կաղապարների քննությունը ցույց տվեց, որ բառաբարդումը ժամանակակից հայերենում ունի մեծ կենսունակություն, այն նղել ու մնում է որպես բառապաշարի (ինչպես նաև խոսքի մասերի) հարստացման կարևորագույն միջոցներից մեկը: Մյուս կողմից, ժամանակակից հայերենի խոսքի մասերից բառաբարդման կաղապարներով հարուստ են գոյականը, ածականը, բայը. բացի այդ, նըշ-

---

38 *В. А. Москович*, Глубина и длина слов в естественных языках, ВЯ, 1967, №6 стр. 18.

ված նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը բառաբարդման ժամանակ որպես բաղադրող հիմքեր ավելի արդյունավետ են, քան մյուս խոսքի մասերը։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ—Ակսել Բակունց
ՀՇ—Հովհաննես Շիրազ
ՀՊ—Հակոբ Պարոնյան
ՄԳՄ—Մուրացան, Գևորգ Մարզպետունի
Շիրվ.—Շիրվանզադե
ՊՍ—Պարույր Սևակ
ՌՋ—Ռուբեն Զարյան
ՍԽ—Սերո Խանզադյան
ВЯ—«Вопросы языкознания»

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ս. Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Երկու խոսք

Յուրաքանչյուր գիտության պատմություն անխուսափելիորեն ներառում է նաև տվյալ բնագավառի հասկացությունների և տերմինների պատմական զարգացումը։ Տերմինաբանության բնագավառում ավելի հստակ և ակնառու է լեզվի, հատկապես նրա բառային համակարգի կապը տվյալ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի պատմության հետ։

Մյուս կողմից, գիտության, տեխնիկայի, արտադրական գործունեության և ընդհանրապես մշակույթի այս կամ այն բնագավառի տերմինաբանության պատմությունը վերջին հաշվով ներկայացնում է նաև բնության ճանաչողության և հասարակության զարգացման պատմություն։ Իսկ դա նշանակում է, որ «տերմինաբանության պատմությունը ոչ միայն ազգային պատմական պրոբլեմ է, այլև համաշխարհային գիտության ինտերնացիոնալ պրոբլեմ, և մարդկային քաղաքակրթությունների և ժողովուրդների մշակութային փոխազդեցությունների պատմության պրոբլեմ»[1]։

Հատկապես այժմ, գիտության և տեխնիկայի աննախընթաց վերելքի պարում գիտատեխնիկական տերմինաբանությունը մեծ զարգացում է ապրում։ Հատկանշական է նաև այն, որ գիտական տերմինաբանությունը ավելի և ավելի լայն չափերով է մուտք գործում մասսայական իրազեկման (ինֆորմացիայի) ոլորտները, ամենօրյա խոսակցական լեզվի մեջ։

Ժամանակակից հայոց լեզուն սովետական իշխանության տարիներին սոցիալիստական ազգերի համագործակցության և սերտական մշա-

[1] «Вопросы терминологии» М., 1961, стр. 7.

կույթի, գիտության, տեխնիկայի, արտադրության ու հասարակական-տնտեսական կյանքի բուռն ծաղկման պայմաններում անընդհատ հարըստանում է նորանոր տերմիններով ու բառերով: Այդ կապակցությամբ էլ հրատապ է դառնում գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառներին վերաբերող կարգավորված և միօրինակացված տերմինաբանության ստեղծումը, այնպիսի տերմինաբանության, որն ի վիճակի լինի արտացոլելու լեզվի բառաիմաստային հարստությունները, հնչյունական և այլ առանձնահատկությունները:

Սույն աշխատության մեջ մենք նպատակ ենք դրել 1920-ական թվականների հայերեն տերմինաբանական բառարանների ընձեռած փաստական նյութի հիման վրա ներկայացնել Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տասնամյակի հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական հայ տերմինաբանության վիճակը, նրա կազմման, մշակման ներքին և արտաքին աղբյուրները, տերմինների կարգավորման սկզբունքները և հետագա զարգացման հիմնական ուղիները, հիշյալ հարցերի քննարկումը կապելով նախորդ և հաջորդ շրջանների լեզվական-տերմինաբանական համանման իրողությունների հետ: Համառոտակի ներկայացնելով նախասովետական շրջանի հայ տերմինաբանության պատմությունը՝ մենք այնուհետև անդրադառնում ենք այդ շրջանի տերմինաշինության սկզբունքներին, ապա բառագիտական, ոճագիտական և ձևաբանական քննության ենթարկում մեզ հետաքրքրող շրջանի հայերեն տերմինաբանությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հայ գրերի գյուտից անմիջապես հետո, V դարից սկսած, ինչպես հայտնի է, գիտությունն ու գրականությունը և ընդհանրապես հոգևոր մշակույթը Հայաստանում բուռն վերելք ապրեցին: Դեռևս այդ հեռավոր ժամանակներում հայ գիտական մտքի ներկայացուցիչները ոչ միայն սկսեցին հունարենից, ասորերենից և այլ լեզուներից հայերեն թարգմանել աստվածաբանական, փիլիսոփայական-տրամաբանական, քերականական, պատմագրական և այլ ստեղծագործություններ, այլև կարճ ժամանակամիջոցում ստեղծեցին սեփական դպրություն, հարուստ պատմա-

դրություն, դեղարվեստական և գիտական գրականություն։ Դեռևս V դարում Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակ հայ թարգմանիչներն ստիպված էին կերտելու մի շարք մասնագիտական բառեր և տերմիններ։ Նոր հասկացությունների համար անհրաժեշտ նորանոր բառեր ու տերմիններ կազմելու այս ավանդույթը ավելի մեծ չափերով ծավալվեց հետագայում՝ պատմագրական, փիլիսոփայական, տրամաբանական, քերականագիտական, ճարտասանական, աստվածաբանական և այլ աշխատությունների ստեղծման կամ թարգմանության ընթացքում։ Այդ դարերում հունարենի նմանողությամբ, ավելի ճիշտ՝ համաբանությամբ, այսպես կոչված հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից ստեղծվեցին բազմաթիվ բառեր ու տերմիններ[2]։ Չափազանց մեծ է այդ դպրոցի ներկայացուցիչների վաստակը գիտական, փիլիսոփայական, այդ թվում նաև լեզվաբանական տերմինների ստեղծման ուղղությամբ[3]։ Անհրաժեշտ է նշել, որ այդ ժամանակաշրջանում ստեղծված լեզվաբանական տերմինների զգալի մասը մինչև օրս էլ գործածվում և հաջողությամբ ծառայում է լեզվին։

Հունաբան դպրոցի ներկայացուցիչների ինչպես լեզվաբանական, այնպես էլ մշակութային և լուսավորական գործունեությունը ծրագրային, սկզբունքային բնույթ ուներ։ Հայ մշակույթի առաջավոր այդ ներկայացուցիչները իրենց արգասավոր գործունեությամբ հայ հասարակությանը ոչ միայն ծանոթացրին հին հունական գիտության և փիլիսոփայության նվաճումներին, այլև միջնադարյան Հայաստանում դրեցին գիտության մի շարք բնագավառների զարգացման հիմքերը։

Հին շրջանի հայ գիտական տերմինաբանության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում բժշկական և բուսաբանական տերմինաբանությունը։ Այդ են վկայում Մատենադարանի ձեռագրերի ֆոնդում պահպանված տասնյակ բժշկական բառարանները և նույնքան էլ բուսանունների ու դեղագործական տերմինների ցուցակները և այլն[4]։

---

2 Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, 2-րդ մաս, Երևան, 1951, Գ. Սևակ, *Ժամանակակից Հայոց լեզվի դասընթաց*, Երևան, 1955, Գ. Ջահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Երևան, 1954, Ա. Մուրադյան, *Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում*, Երևան, 1971։

3 Ա. Մուրադյան, *Նշվ. աշխատ.*։

4 Մ. Աբեղյան, Լ. Հովհաննիսյան, Ա. Պողոսյան, *Լատին-ռուս.հայերեն բժշկական բառարան*, Երևան, 1951, Հ. Ամալյան, *Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, (V—XV դդ.)*, Երևան, 1966։ Նույնի, *Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI—XVII դդ.)*, Երևան, 1971։

Միջնադարյան հայ բժշկական և բուսաբանական տերմինաբանության ստեղծման գործում նշանակալի դեր են կատարել հայ բժշկության խոշոր ներկայացուցիչներ Մխիթար Հերացու և Ամիրդովլաթ Ամասիացու աշխատությունները («Օգուտ բժշկության», «Անգիտաց անպետ» և այլն):

Հետագայում, XII—XIII դարերի ընթացքում կազմվում են բազմաթիվ բժշկական բառարաններ, որոնց նկարագրությունն ու ուսումնասիրությունը հեռու է մեր նպատակներից: Անհրաժեշտ ենք համարում միայն նշել, որ միջնադարում տասնյակ ձեռագիր բառարանների կազմումը խոշոր մշակութային իրադարձություն է հայկական կյանքում, և որ հիշյալ բառարաններն ու բառացանկերը հսկայական դեր են կատարել բժշկական ու բուսաբանական հայերեն տերմինների ստեղծման գործում:

Բարձր գնահատելով միջնադարի այդ ձեռագիր բառարանները, այնուամենայնիվ պետք է ընդունենք, որ բառիս բուն իմաստով վերոհիշյալ բնագավառների հայերեն տերմինաբանություն ստեղծվում է միայն XIX դարի առաջին կեսերին:

XIX դարի 20—30-ական թվականներին լույս է տեսնում Մխքայել Ռեստենի բժշկական մասնագիտական բառարանը[5], որը պարունակում է 2500-ից ավելի բժշկական տերմիններ՝ դրանց բացատրությամբ, երբեմն էլ անգլերեն, արաբերեն, հունարեն, պարսկերեն և թուրքերեն զուգահեռներով: Այդ բառարանը կարևոր դեր է խաղում հայ բժշկական տերմինաբանության ձևավորման գործում: Մ. Ռեստենի ստեղծած շատ տերմիններ ամուր հիմքեր են դրել հայ բժշկական տերմինաբանության մեջ:

Բժշկական, մասնավորապես անատոմիական (կազմախոսական), տերմինաբանության զարգացման գործում աչքի ընկնող դեր է կատարել Լ. Տիգրանյանը[6]: Նրա անատոմիական (կազմախոսական) բառարանը կազմված է երկու մասից՝ լատիներեն-հայերեն և ռուս-հայերեն, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է մոտ 900 բառահոդված: Նույն հեղինակի ռուս-հայերեն բժշկական բառարանը ընդգրկում է մոտ 3500 բառահոդված և իրենից ներկայացնում է թարգմանական-տերմինաբանական և մասնագիտական խառը տիպի բառարան: Լ. Տիգրանյանի երրորդ աշխատությունը լատիներեն-հայերեն-ռուսերեն դեղաբույսերի փոքրիկ բառարանն է, որ պարունակում է ընդամենը 200 բառահոդված: Ինչպես նշում

---

5 Մ. Ռեստենն, *Բժշկականություն կամ բժշկական բառգիրք*, Վենետիկ, 1822 և 1832:

6 Լ. Տիգրանյան, *ա) Մարմնամարզական կամ անատոմիական բառարան, Թիֆլիս, 1859, բ) Բառարան բժշկական բույսերի, Երևան, 1883, գ) Բժշկական բառարան, Թիֆլիս, 1892:*

է ակադ. Լ. Հովհաննիսյանը[7], Լ. Տիգրանյանը խուսափել է օտար տերմիններ մտցնել հայ բժշկական լեզվի բառապաշարի մեջ և աշխատել տերմինները կազմել միայն հայերեն արմատներից:

XX դարի սկզբներին արևմտահայ բառարանագրության մեջ իր ֆրանսերեն-հայերեն բժշկական բառարանով և բառացանկերով աչքի է ընկնում Ն. Տաղավարյանը[8], որի դերը մեծ է արևմտահայ գրական լեզվում բժշկական տերմինների ստեղծման ու մշակման գործում:

Չնայած իրենց որոշ թերություններին, բժշկական այդ բառարանները ժամանակին գիտական և գործնական տեսակետից մեծ արժեք են ներկայացրել և կարևոր դեր կատարել գիտական հիմունքներով հայ բժշկական տերմինաբանության ստեղծման ու մշակման ուղղությամբ:

Այդ շրջանում բացի բժշկական տերմինաբանությունից, զարգացում էր ապրում առանձնապես բուսաբանական, ինչպես նաև կենդանաբանական և ընդհանրապես կենսաբանության այլևայլ ճյուղերի տերմինաբանությունը:

Ուշադրության արժանի է հատկապես Ղ. Ալիշանի բուսաբանական բառարանը[9]: Առաջաբանում հեղինակը նշում է, որ բառարանը կազմելիս, որպես սկզբնաղբյուր օգտագործել է Մխիթար Հերացու, Ամիրդովլաթ Ամասիացու աշխատությունները, ինչպես նաև միջնադարյան և հետագա շրջանի ձեռագիր բառարանները: Աշխատությունն ընդգրկում է բույսերի 3400 անուն: Բառարանի հիմնական բաժնին կցված են նաև լատիներեն և ֆրանսերեն, ինչպես նաև արաբերեն և թուրքերեն բուսանունների առանձին ցանկեր: Ղ. Ալիշանի «Հայբուսակը», այսպիսով, իրենից ներկայացնում է բուսաբանական տերմինների մասնագիտական-բացատրական, մասամբ նաև թարգմանական-տերմինաբանական բազմալեզվյան բառարան:

Հիշատակության արժանի է նաև Հ. Արթինյանի[10] աշխատությունը: Գ. Գասպարյանը իր «Հայ բառարանագրության պատմության» մեջ նշում է, որ «Արթինյանը ոչ միայն մանրամասն տալիս է բույսերի նկարագիրը, հատկությունները, այլև բննության է առնում նախորդ բառարանները և ցույց տալիս քննադատական վերաբերմունք, միաժամանակ բացատրում,

---

7 Մ. Աբեղյան, Լ. Հովհաննիսյան, Ա. Պողոսյան, նշվ. աշխ., Լատին-ռուս-հայ բժշկական բառարան, էջ 7:

8 Ն. Տաղավարյան, Բառացանկ ախտանվանց ֆրանսերեն-հայերեն, 1-ին հրատ., Կ. Պոլիս, 1900:

9 Ղ. Ալիշան, Հայբուսակ կամ Հայկական բուսաբառություն, Վենետիկ, 1895:

10 Հ. Արթինյան, Տունկերը և անոնց հայերեն անունները, Փարիզ, 1906:

բարգմանում և ստուգաբանում է բազմաթիվ բառեր»[11]։ Հ. Արբինյանի աշխատությունը մեծ արժեք է ներկայացնում հայերեն բուսանունների ճշտման տեսակետից։ Այդ աշխատանքը բարձր գնահատականի է արժանացել Հ. Աճառյանի կողմից[12]։

Այս շրջանում կազմվել են նաև բուսաբանական և ընդհանրապես կենսաբանական տերմինների այլ բառարաններ (ինչպես Ռ. Պատկանյանի բառարանները), որոնք ձեռագիր լինելով, դուրս են մնում մեր ուսումնասիրության շրջանակներից։

Գիտատեխնիկական և արվեստի ու գրականության հայերեն տերմինների մշակման ուղղությամբ մեծ արժեք է ներկայացնում Մ. Քաջունու մասնագիտական-հանրագիտական և բարգմանական-տերմինաբանական բառարանը[13]։ Աշխատության առաջին և երկրորդ հատորները հիմնականում ֆրանսերեն-հայերեն բառարաններ են, իսկ երրորդը՝ հայերեն-ֆրանսերեն բառարան։ Սխալ կլինի այս բառարանը միայն երկլեզվյան համարել, այն իրականում բազմալեզվյան բառարան է, որովհետև բացի ֆրանսերեն և հայերեն համարժեքներից, հաճախ տրվում են նաև լատիներեն, իտալերեն, հունարեն և անգամ թուրքերեն բարգմանությունները։ Բառարանն ընդգրկում է գրականության, հունական դիցաբանության, արվեստի, գիտության և հատկապես բուսաբանության, քիմիայի, կենդանաբանության և այլ բնագավառների տերմիններն ու բառերը։ Տրվում է ընդգրկված տերմինների ու բառերի ոչ միայն բարգմանությունը, այլև մասնագիտական բացատրությունը կամ նկարագրությունը գրաբար լեզվով։ Մեզ համար տվյալ դեպքում կարևորը ոչ թե տերմինների բացատրությունն է, այլ դրանց հայերեն համարժեքները, հայերեն տերմինների ստեղծման և մշակման սկզբունքները։ Հատկանշական է, որ Մ. Քաջունին բոլոր հնարավոր դեպքերում աշխատել է բարգմանաբար ներկայացնել ֆրանսերեն այս կամ այն գիտական հասկացությունը։ Հայերեն համարժեքների համար հեղինակը լայն չափերով օգտագործել է ոչ միայն գրաբարից ժառանգած, այլև միջին հայերենի և բարբառների բառերը։ Նոր հասկացությունների համար հեղինակը հաճախ ներկայացնում է իր կազմած հայերեն բառերը։ Մ. Քաջունու բառարանի բազմաթիվ բառեր հետագայում հաստատուն տեղ գրավեցին ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում։

---

11 Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 320։

12 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 32։

13 Մ. Քաջունի, Բառգիրք արուեստից և գիտութեան և դեղեցիկ դպրութեան, Վենետիկ, 1891, 1892։

Եթե Մ. Քաջունու բառարանը իր գրաբար բացատրություններով անմատչելի մնաց լայն հասարակությանը, ապա իր աշխարհաբար (արևմտահայերեն) բացատրություններով հասարակության լայն զանգվածներին միանգամայն մատչելի էր Ս. Երեմյանի բառարանը[14]: Այս բառարանը նույնպես, ինչպես նախորդը, ֆրանսերեն-հայերեն է, այսինքն թարգմանական և միաժամանակ վերաբերում է մի շարք մասնագիտությունների՝ աստղաբաշխության, մաթեմատիկայի, երկրաբանության, ֆիզիկայի, քիմիայի, բժշկության, դեղագործության, բուսաբանության, կենդանաբանության և այլն: Բառարանին կցված են նաև հայերեն և թուրքերեն բառացանկեր:

Բառարանի հիմնական արժանիքն այն է, որ հեղինակը բերել է գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառներին վերաբերող հայերեն համապատասխան տերմիններն ու բառերը և ավել դրանց մասնագիտական մանրամասն բացատրություններ: Այս բառարանում Ս. Երեմյանը հավաքել, մշակել, ճշտել և կարգավորել է մի քանի հազար հայերեն տերմիններ ու բառեր, որոնցից շատերն այժմ քաղաքացիության իրավունք ձեռք բերելով, հաստատապես մուտք են գործել գրական լեզվի բառապաշարը:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ թե՛ Մ. Քաջունու, թե՛ Ս. Երեմյանի մասնագիտական-տերմինաբանական և թարգմանական-բազմալեզվյան բառարանները պատկերազարդ են, մի առավելություն, որից զուրկ են նույն տիպի հետագա գրեթե բոլոր բառարանները: Ցավոք, պետք է նշել, որ այդ գովելի սկզբունքը ավանդույթ չդարձավ հայ բառարանագրության պրակտիկայում:

Այսպիսով, մասնագիտական-տերմինաբանական բառարանների այս համառոտ թվարկումից անգամ երևում է, որ XIX դարում հսկայական ջանքեր են թափվել և գործնական աշխատանքներ տարվել հայ գիտատեխնիկական տերմինաբանության մշակման ուղղությամբ:

Այդ շրջանի հայ գիտական տերմինաբանության մշակման և կարգավորման գործում առանձնահատուկ դեր են խաղացել արևմտահայ մտավորականության ներկայացուցիչները և մխիթարյանները: Առանձնապես XIX դարի կեսերից սկսած արևմտահայ մամուլի էջերում, ինչպես նաև առանձին գրքերով նրանք հրատարակում էին գիտական և տեխնիկական աշխատություններ: Հայերեն տերմինաբանությունը գործնականորեն մշակվում էր նաև դպրոցական-ուսումնական կարիքների համար լույս տեսնող բազմաթիվ ձեռնարկների և դասագրքերի շնորհիվ:

14 Ս. Երեմյան, Պատկերազարդ բառգիրք գործնական գիտութենանց, Վենետիկ, 1900:

Ինչպես մասնագիտական և բարդմանական բառարաններում, այնպես էլ դպրոցական դասագրքերում և ձեռնարկներում, փաստորեն, լայն գործունեություն ծավալվեց հայ գիտատեխնիկական տերմինաբանության մշակման ուղղությամբ:

Հայ գիտական տերմինաբանության մշակման տեսական և գործնական հարցերում այդ շրջանում նկատվում է երկու տարբեր մոտեցում: Տերմինաշինարարների մի մասը, գլխավորապես արևմտահայ դրական լեզվի ներկայացուցիչները (մխիթարյանները), գտնում էին, որ հայերեն գիտատեխնիկական տերմինաբանություն պետք է ստեղծել բացառապես լեզվի սեփական հնարավորություններով ու միջոցներով և խուսափել բոլոր տիպի փոխառություններից: Մյուս կողմը՝ արևելահայ դրական լեզվի ներկայացուցիչները, սեփական հնարավորությունների օգտագործման հետ, ընդունում էին նաև փոխառությունները, որպես հայ գիտատեխնիկական տերմինաբանության կարևոր աղբյուրներից մեկը: Իհարկե, այդ երկու թևերի ներկայացուցիչների մեջ կային նաև միջին դիրք զբաղողներ:

Արևմտահայ տերմինաշինարարների մեծ մասը հիմնականում դեմ էր տերմինաբանության հարցում օտարազգի փոխառություններին: Աշխատելով հայոց լեզուն մաքրել օտարազգի (ֆրանսերեն, լատիներեն, անգլերեն, հունարեն, թուրքերեն) բառերից ու տերմիններից, նրանք սկսեցին կերտել բազմաթիվ հայերեն նոր բառեր: Այդ եղանակով կազմված շատ բառեր իմաստով և ձևով հաջող լինելով, հետագայում, որպես այս կամ այն բնագավառի տերմիններ, մուտք գործեցին մեր լեզվի գանձարանը: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Մխիթարյանները, չնայած իրենց բարի նպատակներին, երբեմն ընկնում էին նաև ծայրահեղությունների մեջ, աշխատելով բոլոր դեպքերում և ամեն գնով թարգմանել կամ «հայացնել» օտարազգի բոլոր բառերն ու տերմինները:

Ինչպես հայտնի է, այդ եղանակով ստեղծված որոշ տերմիններ և բառեր, ձևով և իմաստով անհաջող լինելով, մուտք չգործեցին մեր լեզվի բառապաշարը, թեև մինչև օրս էլ դրանք բառարանից բառարան են փոխանցվում, ինչպես օրինակ՝ ֆիմիա–տարերաբանություն, ֆիմիկոս–տարերաբան, մաթեմատիկա–համարողություն, իմպերիալիստ–կայսերապաշտ, իմպերիալիզմ–կայսերապաշտություն, սոցիոլոգիա– ընկերաբանություն, սոցիոլոգ–ընկերաբան, կոմունիստ–համայնավար, կոմունիզմ–համայնավարություն, դիալեկտիկա–տրամախոսություն, դիալեկտիկ–տրամախոս, տերմին–եզր, յոդ–մանիշ և այլն:

Հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական հայ տերմինաբանության հետագա զարգացման ընթացքը ցույց տվեց, որ հայոց լեզվի

լիարժեք, կայուն և մատչելի տերմինաբանություն ստեղծելու և մշակելու համար անհրաժեշտ է ղեկավարվել հայոց լեզվի բառակազմական, ձևվաբանական և հնչյունաբանական օրինաչափություններով: Մյուս կողմից, անհրաժեշտության դեպքում, երբ լեզվի սեփական միջոցները այլևս ի վիճակի չեն տվյալ հասկացության համար իմաստով և ձևով համապատասխան հարմար բառ առաջարկելու կամ կազմելու, տերմինաշինարարները, որպես օրենք, դիմում են փոխառության, ըստ որում, փոխառյալ բառը, ըստ հնարավորին ենթարկելով հայերենի հնչյունաբանական և ձևաբանական օրինաչափություններին:

Արևելյան Հայաստանը՝ Ռուսաստանին միացնելուց հետո, քաղաքական-տնտեսական և կուլտուրական բարենպաստ պայմաններ ստեղծվեցին հայ ժողովրդի արևելյան հատվածի համար: Այդ պայմանները իրենց արտահայտությունը գտան նաև հայ ժողովրդի մշակույթի, գրականության և հատկապես լեզվական բաղաքականության առանցքային հարցերի մեջ:

Եվ իսկապես, արևելահայերը լեզվական քաղաքականության և առանձնապես տերմինաշինարարության հարցերում ընթացան այլ ուղիով:

Արևելահայերեն գրական լեզվի՝ աշխարհաբարի մշակման հենց սկզբնական շրջանից Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանցը մեծ նշանակություն էին տալիս հայերեն գիտական լեզվի հարցերին:

Մ. Նալբանդյանը գտնում էր, որ հայոց լեզուն ունի հարստացման երեք աղբյուր՝ գրաբարը, բարբառները և օտար ազդեցությունը: Նախապատվությունը չտալով դրանցից և ոչ մեկին, Մ. Նալբանդյանը իրավացիորեն նշում էր, որ նոր գրական լեզուն՝ աշխարհաբարը, չպետք է «սարկանա» ոչ գրաբարի և ոչ էլ բարբառների առաջ: Այն պետք է զարգանա ինքնուրույնաբար, իր սեփական, ներքին օրենքներով: Միևնույն ժամանակ աշխարհաբարը պետք է օգտագործի և գրաբարի, և բարբառների տարրերը, բայց ոչ մեխանիկորեն[15]: Այդ խնդրի մասին Գ. Սևակը գրում է. «Նոր լեզուն պետք է մշակվեր գիտակցաբար և դրվեր որոշ համակարգի (սխեմայի) տակ՝ հավատարիմ մնալով լեզվի ժողովրդականությանը»[16]:

Մ. Նալբանդյանը կողմնակից էր գիտական և գիտատեխնիկական տերմինների այն փոխառություններին, որոնք կատարվում էին ավելի

---

15 Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 65—66.

16 Նույն տեղում, էջ 66:

զարգացած լեզուներից։ Ինքը՝ Մ. Նալբանդյանը, իր գրական և հրապարակախոսական գործունեության ընթացքում գործնականորեն հաստատում էր իր լեզվական հայացքների ճշմարտացիությունը։ Կարելի է բավականին ընդարձակ ցուցակ բերել փոխառյալ այն բառերի ու տերմինների, որ Մ. Նալբանդյանը գործածել է իր գրական, գիտական և հրապարակախոսական երկերում։ Այդ բառերի և տերմինների որոշ մասը այժմ էլ գործածական են ժամանակակից հայոց լեզվում։ Սահմանափակվենք միայն մի քանի օրինակներով, որոնք կարող են վերևում ասվածի վկայությունը լինել։

Օրինակ՝ ինկվիզիցիա, կրիտիկա, լոգիկա, ատմոսֆերա, ալֆաւոյ, լավա, ֆիզիկա, սխոլաստիկա, սխոլաստիկ, ռեֆորմ, ֆերմեր, մինիստր, մոնոպոլիա, մոնոպոլիստ, գլադիատոր, ֆակուլտետ, էնցիկլոպեդիա, կոմետ, վուլկան և այլն[17]։

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ արևելահայ գրական լեզվի հետագա զարգացման ընթացքում թվարկված բառերից մի քանիսը փոխարինվեցին բավականին հաջող բուն հայերեն բառերով։

Այնուամենայնիվ իր ժամանակի համար այդ կարգի փոխառությունները պետք է տեղին և առաջադիմական երևույթ համարել, եթե նկատի ունենանք համաշխարհային մշակույթից և գիտությունից հետ չմնալու անհրաժեշտությունը։ Մ. Նալբանդյանը շատ լավ հասկանում էր, որ ոչ մի լեզու էլ հնարավոր չէ մեկուսացնել կամ անջատել օտար որևէ ազդեցությունից։ Նա հակառակ էր միայն այն փոխառություններին, որոնք ազատում են լեզուն, առաջին հերթին բարբառներից եկող թուրք-թաթարական բառերին և այլ լեզուներից կատարվող անհարկի փոխառություններին, որոնց համազորները կային հայերենում կամ էլ հնարավոր էր հեշտությամբ կազմել։

Հայ գրական լեզվի մշակման և զարգացման հարցերում մեծ է Հ. Թումանյանի դերը։ Մ. Նալբանդյանի նման, նա իր գրական, հրապարակախոսական-քաղաքական գործունեության ընթացքում ուշադրության կենտրոնում էր պահում ժամանակակից հայոց լեզվի զարգացման հարցերը։ Այդ կապակցությամբ Թումանյանը ոչ միայն հանդես էր գալիս մամուլում, կրքոտ կերպով բանավիճում հայ մտավորականների, գրողների, լրագրողների հետ, այլև իր ստեղծագործություններում կիրառում էր հայոց լեզվի զարգացման, լեզվի ժողովրդականության իր տեսական սկզբունքները։

---

17 Ա. Սուքիասյան, *Ռուս-հայերեն բառարանագրությունը սովետական իշխանության տարիներին (թեկնածուական դիսերտացիա)*, Երևան, 1954, էջ 43։

Նա հայոց լեզվի և հատկապես բառապաշարի զարգացման գործում շեշտը դնում էր սեփական հնարավորությունների, ինչպես նաև բարբառային, այսինքն՝ գավառական բառերի ավելի լայն չափերով օգտագործման վրա։

Ժամանակակից հայերեն գրական լեզվի և հատկապես բառապաշարի մշակման և զարգացման գործում մեծ էր նախասովետական մամուլի դերը։

Հայկական մամուլում առաջ քաշվող զանազան բնույթի հարցերի և խնդիրների հետ մշակվում և հարստանում էր նաև գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներին վերաբերող հայերեն տերմինաբանությունը։

Այսպիսով, նախասովետական շրջանում արդեն դրվել էր գիտության ու տեխնիկայի մի շարք բնագավառներում հայերեն տերմինաբանության հիմքը։ Տերմինաշինության գործնական և տեսական հարցերը այդ շրջանում գտնվում էին հայ մտավորականության ուշադրության կենտրոնում։ Այդ հարցերում որոշակիորեն առանձնացել էին երկու ուղղություններ։ Սակայն ինքնուրույն պետականությունից զուրկ լինելը, տնտեսական-քաղաքական կյանքի աննպաստ պայմանները, մայրենի լեզվով ուսուցման, բարձրագույն կրթության, ինչպես նաև վարչական, գրագրության, գործավարության և այլ ֆունկցիաների բացակայությունը արգելակում էին հայ տերմինաբանության լիածավալ զարգացմանը։ Այդ պայմաններում հայերեն գիտատեխնիկական տերմինաբանությունը փաստորեն զարգանում և մշակվում էր տարերայնորեն, նրանում բացակայում էր միասնականությունն ու միօրինականությունը։ Գիտության և տեխնիկայի շատ բնագավառների տերմիններ դեռևս անմշակ էին։ Առանձին անհատ էնտուզիաստները իր վիճակի չէին լուծելու այդ դժվարին խնդիրը։

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ, ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ

1920 թ. Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո հայերենը դարձավ պետական լեզու, այսինքն՝ հայոց լեզվի հասարակական ֆունկցիաներին ավելացավ նաև պետական լեզվի կարևոր ֆունկցիան, որպիսին նա վերստին ձեռք էր բերում հայկական պետականության վերականգնման շնորհիվ։

Այդ շրջանից սկսած հայերեն հասարակական, քաղաքական ու գի-

տատեխնիկական տերմինաբանության հիմնական և սկզբունքային հարցերը նոր բովանդակություն են ստանում:

Սովետական իշխանության տարիներին ամբողջ հասարակական կյանքի, պետական կարգի, գիտության և արտադրության, կրթության և ուսուցման բոլորովին նոր կառուցվածքի հետևանքով առաջացած փոփոխությունները իրենց արտացոլումը գտան նաև տերմինաբանության հարցերի ըմբռնման և մշակման մեջ:

Տերմինաբանության հարցերը առանձին անհատների նախաձեռնությունից դարձան պետական, ավելի ճիշտ, համապետական գործ[18]: Իսկ այդ շատ կարևոր հանգամանք էր: Դրանով վերջ էր դրվում տերմինաբանության մշակման, այսպես կոչված, «տնայնագործական» եղանակին և մեթոդներին և դրանից բխող առանձին այն կամայականություններին, որոնք անխուսափելի էին դարձել նախորդ տարիների ընթացքում: Մյուս կողմից՝ պետական ղեկավարությունը և հսկողությունը, ինչպես նաև պետության կողմից նյութական աջակցությունը լայն հնարավորություններ և մեծ հեռանկարներ էին բացում հայերեն տերմինաբանության մշակման, հետագա զարգացման և կարգավորման ասպարեզում:

Հետագայում, 30-ական թվականներին արդեն, հայ հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական տերմինաբանության կարգավորման հիմնական ֆունկցիան իր վրա վերցրեց տերմինաբանական կոմիտեն[19], որը հետևելով հայոց լեզվի զարգացմանը, օրինականացնում է հայ տերմինաբանության նորույթները, ինչպես նաև տերմինների մշակման ու կարգավորման հարցերին վերաբերող զանազան հարցերը:

Տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշումների համաձայն հայերեն տերմինների մշակման հիմնական սկզբունքները հանգում են հետևյալին[20]:

Հայերեն մասնագիտական տերմինների մշակման ընթացքում առաջին հերթին պետք է հաշվի առնել հայոց լեզվի և ՍՍՀՄ ժողովուրդների այլ լեզուների տերմինաշինության երկարամյա փորձը:

Ելնելով այն բանից, որ հայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում, հաղորդակից լինելով հին և նոր աշխարհների ամենաառաջավոր մշակույթներին, իր լեզվի մեջ արտացոլել է այդ մշակույթների հարստությունը, այնուհետև դարերի ընթացքում իր լեզվի սեփական մի-

18 Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 53:

19 Ս. Ղազարյան, Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների, Երևան, 1945, հմմտ. նաև Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 60—63:

20 Հ. Բառսեղյան, Տերմինաբանական ուղեցույց, Երևան, 1964, էջ 8:

ջոցներով ստեղծել է սեփականը, տերմինաբանական կոմիտեն անհրաժեշտ է համարում՝ պահպանել անցյալից եկող բազմաթիվ գիտական և տեխնիկական տերմինները, որոնք ճիշտ արտահայտելով միջազգային տերմինների իմաստը՝ միաժամանակ մատչելի և հասկանալի են ժողովրդին։ Օրինակ՝ երկրաբանություն-геология, բուսաբանություն-ботаника, ջերմաչափ-термометр և այլն։

Մյուս կողմից, հայերենում տերմինների փոխառություն կատարելիս՝ տերմինաբանական կոմիտեն առաջարկում է ղեկավարվել ՍՍՀՄ-ում և առաջին հերթին ռուսաց լեզվում պաշտոնապես ընդունված իմաստներով։ Այստեղ պետք է ավելացնել նաև, որ ինն տերմինաբանական կոմիտեն չի նշում, բայց իրականում փոխառյալ տերմինների ոչ միայն իմաստը, այլև բառաձևն է համապատասխանում ռուսերենին։ Ժամանակակից հայոց լեզվի նորագույն փոխառությունների համար սկզբնաղբյուր լեզու է դառնում ռուսերենը։

Վերոհիշյալ սկզբունքներից ելնելով՝ տերմինաբանական կոմիտեն ընդունել է նաև հայերեն տերմիններ մշակելու, ինչպես նաև փոխառյալ տերմինների ստուգաբանության կոնկրետ նորմաները։

Հայոց լեզվի գիտատեխնիկական տերմինաբանությունը սովետական շրջանում հիմնվում է անցյալի ժառանգության, իր սեփական բառակազմական հնարավորությունների, որոշ չափով նաև փոխառությունների վրա, որոնք անխուսափելի են գիտության և տեխնիկայի աննախընթաց զարգացման ժամանակակից պայմաններում։

Հայ տերմինաբանության մշակման և կարգավորման պատասխանատու աշխատանքին 20-ական թվականներին ձեռնամուխ եղան գիտության ու տեխնիկայի բազմաթիվ գործիչներ, ինչպես՝ Վ. Արծրունին, Ա. Տոնյանը, Լ. Տեր-Միքայելյանը և ուրիշներ և առաջին հերթին հայոց լեզվի ու հայ բառարանագրության խոշոր ներկայացուցիչները՝ Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ստ. Մալխասյանցը, Գ. Ղափանցյանը և ուրիշներ։

1920-ական թվականներից սկսած հրատարակվում են գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառներին վերաբերող տարբեր ծավալի երկլեզվյան և բազմալեզվյան առաջին տերմինաբանական բառարանները։

1924 թ. լույս է տեսնում սովետական շրջանի տերմինաբանական առաջին աշխատանքը՝ «Ռուս-հայերեն իրավաբանական բառարանը»։ Այս բառարանում իրենց արտահայտությունն են գտել սովետական կարգերի հաղթանակից հետո իրավաբանական գործում և այդ բնագավառի տերմինաբանության մեջ կատարված փոփոխությունները։

Այնուհետև լույս են տեսնում «Ռուս-հայերեն» և «Հայ-ռուսերեն երկաթուղային տերմինների բառարանները» (1925 թ.), որոնցից յուրաքանչյուրը պարունակում է մոտ 6 հազար տերմին և բառ, «Շինարարական կառուցվածքների ռուս-հայերեն բառարանը» (1928 թ.), որ ընդգրկում է ավելի քան 10 հազար տերմին և տերմինային կապակցություն, «Առևտրահաշվապահական տերմինների ռուս-հայերեն բառարանը» (1927 թ.), «Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարանը» (1924 թ.), որ պարունակում է մոտ 20 հազար տերմին և բառ:

1920-ական թվականներին և ընդհանրապես ողջ սովետական շրջանի հայերեն տերմինաբանական բառարանների կազմության բնագավառում սկզբունքային դեր է կատարել Մ. Աբեղյանը: Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը» (1925—1927 թթ.) պարունակում է ավելի քան 25 հազար տերմին և բառ: Բառացանկի ընտրության, հայերեն համապատասխան տերմինների կազմության Մ. Աբեղյանի ընդունած սկզբունքները լայն կիրառություն են գտնում հետագայում կազմված հայերեն տերմինաբանական բառարանների, այնպես էլ հայերեն տերմինաբանության տեսության մշակման համար:

Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ 20-ական թվականներին առաջին տերմինաբանական-թարգմանական բառարաններ կազմողների առջև ծառացան մի շարք դժվարություններ:

ա) Առաջին անգամ էին մշակվում գիտական և մասնագիտական հայ տերմինաբանության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են՝ ռազմական և երկաթուղային գործը, շինարարական կառուցվածքները, իրավաբանությունը և այլն: Եթե բժշկության կամ առևտրահաշվապահական բնագավառներին վերաբերող որոշ տերմիններ արդեն մուտք էին գործել լեզվի բառապաշարը, ապա նույնը չի կարելի ասել մյուս ճյուղերի վերաբերյալ: Այս բոլորին պետք է ավելացնել նաև այն, որ եղած տերմիններն էլ մեծ մասամբ գտնվում էին ընդհանուր համակարգի չենթարկված և չմիօրինակացված վիճակում, որում դժվարությամբ կարող էր կողմնորոշվել որևէ մասնագետ:

բ) Արևելահայ գրական լեզվում տերմինների կերտման համար, ինչպես նշեցինք, որպես ուղեցույց և աղբյուր լեզու այդ ժամանակ դարձել էր ռուսերենը, որն իր դերը կատարում էր մասամբ նաև նախասովետական շրջանում: Մյուս կողմից, հայ ժողովրդի արևմտյան հատվածի գրական լեզուն՝ արևմտահայերենը, իր տերմինաբանության աղբյուրը արդեն ընդունել էր եվրոպական լեզուները և առաջին հերթին ֆրանսերենը: Ֆրանսերենի հիման վրա էին կազմվել և հրատարակվել հայերեն

առաջին տերմինաբանական բառարանները (ինչպես օրինակ՝ Մ. Քաջունու[21] հայերեն-ֆրանսերեն և ֆրանսերեն-հայերեն բառարանները և այլն)։ Սրան պետք է ավելացնել այն հանրահայտ իրողությունը, որ արևմտահայերենում օտարազգի տերմինները մեծ մասամբ թարգմանում և խիստ սակավ են դիմում փոխառության։

գ) Տերմինաշինության համար որպես ուղեցույց լեզու ընտրված ռուսերենում նույնպես տերմինաբանության և տերմինաշինության շատ հարցեր դեռ չէին լուծված։ Ռազմական, իրավաբանական, երկաթուղային, շինարարական, բժշկական և այլ տերմինների համար դեռևս լիարժեք բառացանկեր չկային նաև ռուսերենում։ Հայ տերմինաշինարարները հաճախ ստիպված էին համապատասխան բնագավառների բառացանկեր կազմել նախ ռուսերենի համար (ինչպես Մ. Աբեղյանը՝ ռազմական գործի), նոր միայն ձեռնամուխ լինել հայերեն տերմինների մշակման կամ կարգավորման գործին։ Այդ, ինչպես հայտնի է, կրկնակի աշխատանք է պահանջում մասնագետից և բառարանագրից։

դ) Տերմինաշինական ծավալուն աշխատանքը պահանջում էր լուծել նաև դրարարի, միջին հայերենի և բարբառների օգտագործման հնարավորության, չափերի ու սահմանների, այլև դրա հետ կապված իմաստաբանական, ուղղագրական և այլ խնդիրներ։

ե) Վերոհիշյալ տեսական ու գործնական հարցերը լուծելու համար ղեկավարում էր համապատասխան մասնագետների՝ լեզվաբան-հայագետների և ռուսագետների, բազմաթիվ լեզվաբան-բառարանագիրների կարծիք։ Գաղտնիք չէ, որ խիստ սակավ էին այնպիսի մասնագետները, որոնք ի վիճակի էին լուծելու 20-ական թվականների հայ բառարանագրության և առաջին հերթին տերմինաշինության վերոհիշյալ խնդիրները։ Այդ տեսակետից էլ պետք է գնահատել 20-ական թվականների հայ տերմինաբանական բառարանագրության բնագավառում կատարված ծանր ու դժվարին աշխատանքը։ Այդ գործը իսկապես համապատասխան էր սխրանքի՝ այն առումով, որ ամբողջ աշխատանքը փաստորեն հարկավոր էր հիմնավորապես նորից սկսել, իհարկե, հենվելով հայ բառարանագրության և տերմինաբանության դարավոր փորձի, ավանդույթների և բավականին պատկառելի ժառանգության վրա։

Այսպիսով, 20-ական թվականներին, սովետականացման առաջին իսկ տարիներին տերմինաշինական աշխատանքները հիմնականում ծավալվեցին գիտության ու տեխնիկայի մի շարք բնագավառների տերմի-

---

21 Մ. Քաջունի, *Բառգիրք արուեստից, գիտութեան և գեղեցիկ գպրութեանց*։

նաբանական բառարանների կազմման ուղղությամբ։ Առաջին հերթին մշակվեց և կարգավորվեց՝ իրավաբանական, ռազմական, բժշկագիտական և տեխնիկական (երկաթուղային և շինարարական) տերմինաբանությունը, իհարկե, այդ ժամանակահատվածի մակարդակին համապատասխան։

Իրավաբանական, ռազմական, երկաթուղային և շինարարական ռուս-հայերեն տերմինաբանական բառարանների դերը չափազանց մեծ է ոչ միայն հիշյալ բնագավառների տերմինների մշակման ու կարգավորման, այլև հայերեն տերմինաշինության ուղիների և սկզբունքների որոշման և ուղենշման տեսակետից։ Հիշյալ բառարանները փաստորեն իրենց տեսական սկզբունքներով դարձան այն անկյունաքարը, որի վրա բարձրացավ սովետահայ տերմինաբանությունը։

Արդ, ընդհանուր գծերով որո՞նք էին այն տեսական ու գործնական սկզբունքները, որոնցով կազմվեցին 20-ական թվականների տերմինաբանական բառարանները։

ա) Բառիմաստի և բառաձևի փոխառության համար որպես ուղեցույց և սկզբնաղբյուր լեզու ընդունվում է ռուսերենը։ Հաղվադեպ միայն տուրք է տրվում արևմտահայ գրական լեզվի ավանդույթներին, որոնց տերմինաշինության սկզբունքների համաձայն, ինչպես նշել ենք, ուղեցույց լեզու էր ընդունվում ֆրանսերենը (Համմտ. վ. Արծրունու ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարանը), սրա հետևանքով էլ մի շարք փոխառյալ բառերի տառադարձությունը (գրադարձությունը) չի համապատասխանում ռուսերենին։ Ռուսերենից այս կարգի շեղումները եղակի են և ամենևին էլ բնորոշ չեն 20-ական թվականների հայերեն տերմինաբանական բառարանների համար։

բ) Այս շրջանի հայերեն տերմինաբանական բառարանների ռուսական (թարգմանվող) մասի բառացանկի համար հիմնականում աղբյուր են ծառայել ռուսերեն երկլեզվյան կամ բազմալեզվյան գիտատեխնիկական բառարանները։ Սակայն որոշ դեպքերում հայ հեղինակները ինքնուրույնաբար են կազմել տվյալ գիտության համար անհրաժեշտ բառացանկը (ինչպես իրավաբանական, ռազմական, առևտրահաշվապահական և այլն), դրանով փաստորեն կատարելով կրկնակի աշխատանք։

գ) Տերմինաբանական բառարաններում ամփոփված 20-ական թվականների հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական հայերեն տերմինները երեք շերտի են բաժանվում՝ գրական լեզվի նախասովետական շրջանից եկող տերմիններ, նորակազմություններ և նորագույն փո-

խառուվյուններ: Բառերի և տերմինների վերջին երկու շերտերը փաստորեն այդ շրջանի հայերենի նորաբանություններն են:

1) Քսանական թվականներին տերմինաբանական բառարաններում արձանագրված իրավաբանական, ռազմական, բժշկական, երկաթուղային, շինարարական, առևտրահաշվապահական և սրանց հարակից գիտություններին և տեխնիկայի զանազան ճյուղերին վերաբերող տերմինների ու բառերի հիմնական զանգվածը, այնուամենայնիվ, պատկանում է ժամանակակից հայոց գրական լեզվի նախասովետական փուլին: Դրանք հիմնականում ժամանակակից հայոց գրական լեզվի բառային կազմի մեջ մտնող այն բառերն են, որոնք կայուն բաղա ծառայեցին հայ տերմինաբանության մշակման համար: Ըստ ծագման, դրանք բուն-հայերեն բառեր են կամ հնագույն ժամանակներում տարբեր լեզուներից փոխառնված բառեր, որոնք մերվել են բուն հայերեն բառերի հետ և հավասարապես տեղ գտել արդի հայերենի բառապաշարի մեջ: Իմաստի մասնավորմամբ տերմինային արժեք ստացած այս բառերին զուգընթաց բառակազմական (ածանցման և բառաբարդման) տարբեր միջոցներով այդ շրջանում կազմվեցին կամ որդեգրվեցին գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառներին վերաբերող բազմաթիվ հայերեն բառեր ու տերմիններ:

Այդ կարգի տերմիններից ու բառերից կարելի է բերել մի քանի օրինակ, ինչպես՝ զարկան, հրանան, ձիակապարան, շամփրափող, գազանց, հրապատիճ, ատրացան, պահակատուն, պահականոց, ռազմավար, ռազմավարական, անտառահարտեզ, ծովահարտեզ, թաղեմույկ, ջրեռոց, փամփշտաման, իշոտնուկ, խաչմերուկ, զորասյուն, գնդասյուն, գումակասյուն, վաշտասյուն, զուգաշար, եռաշար, ապաշարային, շարային, փոխարկիչ, ուղեկցորդ, կաթսայիկ, փոսորակ, կալունակ, ուղղյակ, սայլաթափիճ, ելագիծ, գծանավ, հածանավ, ագուստ, փակաղակ, բեղաձի, զորաշարժ, ուղեցուցակ, ընթացուղի, երթուղի, ականահատ, ականագույճ, ականաձագար, ականափակոց, ականածիգ, ականակիր, ականանավ, ծովամարտ, բաժնյակ, լաստակամուրջ, սայլակամուրջ, տակառակամուրջ, նավակամուրջ, շղթայակամուրջ, խցկան, լծանակ, սայլագումակ, հրանետ, հրանյութ, հրապաշար, սավառնակ, ռմբանետ, ռմբարկու, ռմբաձիգ *(ռազմական բառարան)*: Տաժանագիր, գրավագիր, հարցափորձ, պահանջագիր, տիրազուրկ, հաշվակցություն, կաշառառու, կրկնապահանջ, կրկնաճուրդ, կրկնասնանկություն, դրոշմատուգանիճ, կտակավանդություն, կտակագիր, կտակարար, պահանջատեր, հայցատեր, դատակիր, հրաժարագիր, ծանուցագիր, կոչնագիր, ցուցադաշտ, հանցափորձ, իրավաժառանգ, իրավահաջորդ, իրավազանց, իրավազանցություն, իրավունակ, իրավունակություն,

վաճառացուցակ *(իրավաբանական բառարան)*։ Հաշվեփակ, երկայնորդ, նախաթվագրել, առկոչ, ճմուշանիշ, փոխանակագիր, դրոշմատուրֆ, դրոշմատուգանճ, պիտառ, ավանդատեր, ավանդատու, շահաբաժին, բեռնատաց, հավատգիր, հավատտար, հավատտու, հարկամատյան, ապրանքանիշ, կրկնահաշվառճ, հատավճար, հարգաթաշ, փորձակշիռ, խոստմնագիր, տոկոսաթիվ, տոկոսաչափ, հաշվեգրույկ, հաշվեմատյան, հաշվեվճար, մուրհակատու *(առևտրահաշվապահական բառարան)*։

Այդ ցուցակը կարելի էր շարունակել և համապատասխան օրինակներ կարելի էր բերել քսանական թվականներին լույս տեսած մնացած բառարաններից։ Բայց այս էլ բավական է գաղափար կազմելու համար հայերենի լեզվական միջոցներով կազմված տերմինների և բառերի մասին։

2) Վերոհիշյալ բառարաններում ընդգրկված հայերեն տերմինների մեջ առանձնակի տեղ են գրավում գրաբարյան կամ միջին հայերենի, ինչպես նաև բարբառային այն բառերը, որոնք իմաստային կոնկրետացման կամ իմաստների փոփոխման շնորհիվ քննարկվող բառարաններում հանդես են գալիս արդեն որպես տերմիններ կամ տերմինաբանական նշանակություն ունեցող բառեր։ Օրինակ՝ ասպատակ, ական, այրուձի *(հեծելազոր)*, բաբան, գեղարդ, կապարճ, բանբեր, զամբիկ, կափույր, նաշիճ, պարույր, պարետ *և այլն։ Կամ բարբառային՝* բիւր, գլդոն, թոխր, ձիավոր, մառան, կարժառ, շիլա, ֆաշովի, ֆելֆ *և այլ բառերը։*

3) Վերոհիշյալ բառարաններում բիչ չեն նաև արևմտահայերեն գրական լեզվից վերցրած բառերը։ Դրանց մեծ մասը սեփականացվել և մերվել է ժամանակակից հայերենին։ Սակայն կան նաև արևմտահայերեն բառեր, որոնք թարգմանվող տերմինի համազորը չլինելով, փաստորեն դուրս են մնացել լեզվից, ինչպես՝ ամբոխավար, համայնավար, ընկերավարություն, կնդրուկ *և այլն։*

4) Քսանական թվականների տերմինաբանական բառարաններում որոշակի տեղ են գրավում նորագույն փոխառությունները, որոնք ճնշող մեծամասնությամբ կատարվում են ռուսերենի միջոցով։

Այդ շրջանի տերմինաբանական բառարաններում մուտք գործած նորագույն փոխառյալ բառերը կարելի է բաժանել երկու մասի։

ա) Փոխառյալ տերմիններ կամ բառեր, որոնց հայերեն համազորները դեռևս չկան, կամ եղածները չեն կարող մրցել փոխառության հետ։ Օրինակ՝ ամնիստիա, ագիտատոր, ագիտացիա, ապարատ, արտել, բրիգադ(ա), բուֆետ, դեմպինգ, դիկտատուրա, դուալիզմ, լաբորանտ, կաբել, կոնգրես, կոնկրետ, կոմիսար, կոմունա, մանիֆեստ, մասսա, միլիցիա, մոբիլիզացիա, սեզոն, սինդիկատ, վագոն, տրեստ, ֆոնդ *և այլն։*

բ) Փոխառյալ տերմիններ ու բառեր, որոնց հայերեն համազորները կան և շատ դեպքերում փոխարինում են կամ կարող են փոխարինել տերմինաբանական բառարաններ մուտք գործած այդ կարգի փոխառություններին։ Օրինակ՝ ազբեստ–կտավաբար, ակսելբանտ–ուսադիր, բագաժ–ծանրոց, բիոնկլ–երկդիտակ, ամբուլատորիա–բուժարան, դեդուկցիա–արտածություն, դեպոզիտ–ավանդ, դիլեմմա–երկայրաբանություն, կոմպետենցիա–ձեռնհասություն, ունիա–միություն, ստաբիլիզացիա–կայունացում, կոնֆիսկացիա–բռնագրավում *և այլն*[22]։

Միաժամանակ պետք է նշել, որ ռուսերենի միջոցով կատարված փոխառյալ տերմինների և բառերի ուղղագրությունը այդ շրջանում դեռևս վերջնականապես ճշտված չէր, և այդ կարգի բառերը հայերենում տարբեր ձևերով էին տառադարձվում։ Օրինակ՝ բյուջե–բյուջետ, բյուդժետ *և այլն։*

Պետք է հիշատակել նաև, որ այդ շրջանում որոշ փոխառյալ բառերի վերջավորությունների կրճատման փորձեր են եղել, որով հիմնովին աղճատվել է ոչ միայն այդ բառերի հնչյունական պատկերը, այլև՝ իմաստը։ Օրինակ՝ математика-*մաթեմատիկ,* физика-*ֆիզիկ,* акустика-*ակուստիկ,* механика-*մեխանիկ,* кинетика-*կինետիկ և այլն։*

ՏԵՐՄԻՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎՈՒՄ

Լեզվի բառային կազմը անմիջականորեն կապված լինելով մարդկանց գործունեության բոլոր ոլորտների հետ, անընդհատ փոփոխվում է, և դրանով էլ առաջին հերթին պայմանավորված է նոր տերմինների երևան գալը լեզվում։ Գիտատեխնիկական այն տերմինները, որոնք արտահայտում են գիտության և արդյունաբերության զարգացման հետ կապված հասկացություններ, ամրանում են լեզվում սովորական բառերի նման և հարստացնում լեզվի բառապաշարը։ Սովորաբար գիտության որևէ ճյուղի զարգացումը ուղեկցվում է այդ ճյուղին անհրաժեշտ տերմինաբանության ստեղծմամբ և կարգավորմամբ։ Մատչելի և ճշգրիտ տերմինները օգնում են գիտական դրույթների հասկանալիությանը, նպաստում նրանց տարածմանը և դրականապես ազդում գիտության հետագա զարգացման վրա։ Այդ պատճառով գիտության և տեխնիկայի բոլոր բնագավառներում նրանց զարգացման տարբեր փուլերում տերմինաշինարարների մտահոգության

---

22 *Տե՛ս «Ռուս-հայերեն բառարան», 1954—58։*

առարկան գիտական տերմինաբանության ստեղծման, կատարելագործման, կարգավորման և միօրինակացման հարցերն են:

Գիտատեխնիկական հասկացությունների փոփոխումը, նրանց ընդլայնումը և խորացումը, որպես գիտության և տեխնիկայի տվյալ բնագավառի զարգացման արդյունք, անպայման իր հետ բերում է օգտագործվող տերմինաբանության վերանայման և կարգավորման պահանջ: Շատ դեպքերում գիտատեխնիկական տարբեր հասկացություններ նշանակող տերմինները փոխարինվում են նորերով, որ հիմնականում պայմանավորված է նրանց բովանդակության փոփոխմամբ:

Յուրաքանչյուր զարգացող գիտություն պետք է ժամանակ առ ժամանակ վերանայի իր տերմինաբանությունը: Նոր տերմիններ են պետք ոչ միայն նոր հայտնաբերված առարկաների և երևույթների համար, այլև այն նոր դաղափարների համար, որոնք ստեղծվում են հին փաստերի քննման նոր նշանակների հիման վրա: Ամանդական տերմինները հաճախ կաշկանդում են հետազոտողների միտքը և կարող են արգելք հանդիսանալ արդյունավետ եղրակացությունների համար: Իհարկե, կայունացած այն տերմինաբանությունը, որի մեջ յուրաքանչյուր տերմինի նշանակությունը, իմաստը լիովին համապատասխանում է գիտական հասկացությանը, առավելություն է մասնագետի համար: Բայց եթե տերմինաբանության կայունությունը կապված է միայն տերմինների անփոփոխության հետ, այն դեպքում, երբ գիտության զարգացման հետևանքով համապատասխան հասկացությունները փոփոխվում են, անհրաժեշտ է դառնում որոշել հին տերմինի օգտագործման նպատակահարմարությունը: Տարբեր գիտություններին վերաբերող տերմինների ոչ քննադատական օգտագործումը, գիտատեխնիկական տերմինաբանության կատարելագործման և կարգավորման ուղղությամբ տարվող աշխատանքի թերագնահատումը, կարող է հանգեցնել լուրջ սխալների: Եվ պատահական չէ, որ տերմինների օգտագործման ժամանակակից պրակտիկայում հաճախ **նկատվում են հնացած տերմինների և սխալ գործածման բազմաթիվ** դեպքեր:

Նոր բառերը, մասնավորապես տերմինները, լեզվում ստեղծվում են տարբեր ուղիներով, որոնք մասնագիտական գրականության մեջ դեռևս հանդամանորեն ուսումնասիրված չեն:

Բառարմատների ստեղծումը, ինչպես հայտնի է, շատ հազվադեպ է պատահում: Դա մեկ անգամ ևս հաստատում է լեզվի և նրա բառակազմական տարրերի կայունությունը: Բառաստեղծման, բառակազմության դեպքում էլ բաղադրյալ բառերը, բնականաբար, չեն կազմվում լեզվին

անհայտ բառերով կամ ածանցներով, կամ բառակազմական անհայտ ձևերով ու միջոցներով, այլ լեզվում գործող բառակազմական կաղապարների օրինակով:

Այսպիսով, նոր տերմինների կամ բառերի ստեղծումը հիմնականում կատարվում է լեզվում եղած բառերի բազայի վրա՝ տվյալ լեզվի բառակազմական օրինաչափություններով:

Լեզվում տերմինակազմությունը, լինելով բառակազմության դրսևորումներից մեկը, որոշ չափով տարբերվում է նրանից: Տերմինաստեղծումը լեզվի մեջ պայմանավորված է նրա երևան գալու բնույթով: Բանն այն է, որ լեզվում ընդհանուր գործածական բառերի ստեղծողը մեծ մասամբ անհայտ է մնում: Մենք չենք կարող որոշել, թե ո՞վ և ե՞րբ է ստեղծել այս կամ այն բառը: Տերմինները երևան չեն գալիս, չեն հայտնվում, ինչպես լեզվի սովորական բառերը, այլ նրանք ստեղծվում և ներմուծվում են այս կամ այն մասնագետի, մասնագետների խմբի կամ անգամ կազմակերպությունների կողմից: Այդ պատճառով տերմինի ստեղծման եղանակը նաև նրա գործածության մեջ մտցնելու ուղին է: Որևէ տերմին գործածության մեջ մտցնելիս, մասնագետը փաստորեն ներկայացնում է իր հեղինակությունը: «Տերմինները չեն հայտնվում, այլ հորինվում են, ստեղծագործվում են իրենց անհրաժեշտության գիտակցման աստիճանով»[24]:

Այսպիսով, նոր տերմինները առաջանում են գիտության, տեխնիկայի, արվեստի, մշակույթի և այլ բնագավառների զարգացման հետևանքով և հիմնականում մասնագետների գիտակցական գործունեության արդյունք են, գործունեություն, որը հետևողականորեն իրագործում է տերմինաբանության ստեղծումը, մշակումը և կարգավորումը: Սովորաբար տերմինի նոր նշանակությունը բավականին արագ է դուրս մղում հինը: Սակայն հաճախ այդ երկու տերմինն էլ գործածվում են միաժամանակ նոր և հին նշանակությամբ:

Եթե խոսակցական լեզվում նոր բառի ընդունումը մեծ մասամբ տարերային, պատահական պրոցես է, ապա տերմինաբանության մեջ գիտատեխնիկական նոր տերմինի ընդունումը կատարվում է ավելի կազմակերպված ճանապարհով: Շատ հաճախ տվյալ մասնագիտության ներկայացուցիչները, ընդհանուր համաձայնության գալով, կարող են վերջ տալ այս կամ այն սխալ տերմինի օգտագործման վերաբերյալ վեճերին և

---

24 *Г. О. Винокур,* О некоторых явлениях словообразования русской технической терминологии, стр. 9.

առաջադրել կամ ընդունել ավելի ճիշտ տերմիններ։ Այդ տեսակետից գործունեության ազատ ասպարեզ է բացվում այս կամ այն մասնագետի համար տնօրինելու տերմինաբանության կարգավորման գործը, ընդունելու կամ մերժելու նոր տերմիններ, հրաժարվելու հներից, սահմանափակելու կամ ընդհանրապես հրաժարվելու տերմինաբանական հոմանիշներից, համանուններից և այլն։

Անդրադառնալով 20-ական թվականների հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական տերմինների անմիօրինակության և կազմության որոշ թերություններին, պետք է նշել, որ դրանք պայմանավորված են Հայաստանի գիտության ու տեխնիկայի այն ժամանակվա վիճակով, 20-ական թվականների հայերեն տերմինաբանությունը արտացոլում էր հայոց գրական լեզվի այն ժամանակվա վիճակը, ինչպես նաև նրա զարգացման ուղիների վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր հայացքների առկայությունը։

Անուրանալի է, որ ժամանակակից հայոց լեզուն գրաբարից ժառանգություն է ստացել որոշակի քանակությամբ հայկական տերմիններ։ Սակայն պետք է անմիջապես նշել, որ գրաբարից ժառանգություն ստացած տերմինները և բառերը վերաբերում են միայն մի քանի մասնագիտություններին՝ փիլիսոփայությանը, աստվածաբանությանը, քերականությանը և այլն, որոնք համապատասխանում են գրաբարյան շրջանի գիտության մակարդակին, և որոնց արժեքը մեր ժամանակների համար շատ չնչին է թե որակական և թե քանակական տեսակետից, էլ չենք խոսում այն մասին, որ մեր ժամանակների տատնյակ գիտությունների և գիտաճյուղերի տատնյակ հազարավոր հասկացությունների համար անհրաժեշտ էին նոր տերմիններ և բառեր, որոնք հայտնի պատճառներով չէին կարող ժառանգվել գրաբարից։

Իրականում մի շարք գիտությունների և գիտաճյուղերի հայերեն տերմինաբանության հիմքերը դրվեցին սովետական իշխանության առաջին տասնամյակին՝ ռուս-հայերեն տերմինաբանական բառարանների շնորհիվ։

Յուրաքանչյուր լեզու ունի տերմինաբանության իր աղբյուրները՝ կապված տվյալ լեզվի պատմության և գիտության ու արդյունաբերության զարգացման հետ։ Հայոց լեզվի հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական տերմինների վերլուծությունը ցույց է տալիս, որ հայոց լեզուն ունի տերմինաշինության ներքին և արտաքին աղբյուրները։

Տերմինաշինության ներքին աղբյուրներն են.

1) ժամանակակից հայոց լեզուն (այսինքն՝ տերմինների ստեղծումը

Հայոց լեզվի բառակազմության օրենքներով)։

2) արևմտահայերենը. 3) գրաբարը. 4) բարբառները։

Արտաքին աղբյուրների թվին են պատկանում.

1) օտար տերմինների փոխառությունը. 2) իմաստային բառապատճենումները։

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայոց լեզվի հարստացման հիմնական աղբյուրը նրա ներքին հնարավորություններն են, որոնք դրսևորվում են բառաստեղծման և բառակազմական տարբեր ձևերով ու եղանակներով, դրանց օգտագործման և կենսունակության տարբեր աստիճաններով։ Եվ հենց այն պատճառով, որ նոր տերմինների ստեղծումը վերաբերում է բառակազմությանը, յուրաքանչյուր լեզվում այն հիմնվում է լեզվի զարգացման և առաջին հերթին՝ բառակազմական օրինաչափությունների վրա։ Լեզվի զարգացման ներքին միջոցներով բառեր ստեղծելու եղանակը հատուկ է հայերենին, նրա զարգացման բոլոր փուլերում։ Ինչպես հայտնի է, արդի հայերենում բարդության ոչ բոլոր տեսակները կամ հայերենի ոչ բոլոր ածանցներն են կենսունակ։ Ածանցների կամ բարդությունների այս կամ այն տեսակների կենսունակությունը ըստ երևույթին, կախված է որոշ չափով տերմինները կազմողների նախասիրություններից և գլխավորապես այն ընդհանուր միտումներից, որոնք գործում են լեզվի տվյալ փուլում բառակազմության բնագավառում։ Այսպիսով, լեզվի ներքին միջոցներով նոր տերմինների ստեղծումը Հայոց լեզվի բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից մեկն է։ Այն իրագործվում է տարբեր եղանակներով, որոնք պայմանավորված են լեզվի քերականական համակարգի առանձնահատկություններով։

1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ժամանակակից Հայոց լեզվում գոյություն ունեն բառակազմական ներքին միջոցներով տերմիններ ստեղծելու մի շարք եղանակներ, որոնցից պետք է նշել.

1) բառի նշանակության կամ իմաստի տերմինացում, այսինքն՝ բառաիմաստաբանական եղանակ.

2) ածանցում, այսինքն՝ ձևաբանական եղանակ։

3) բարդ տերմինների ստեղծում. այստեղ մտնում են բարդությունները, բառակապակցությունները և հապավումները, այսինքն՝ բառաշարահյուսական եղանակ։

Բառաիմաստաբանական եղանակին են պատկանում լեզվական տարբեր ոլորտների բառերի իմաստափոխության հետևանքով որպես տերմին գործածելը, ինչպես նաև կենցաղային, գրաբարյան, բարբառային բառերի տերմինականացումը։

Ածանցման եղանակին են պատկանում նախածանցումը և վերջածանցումը։

Բառաշարահյուսական եղանակին են պատկանում բառաբարդությունները, հապավումները և բառակապակցությունները, իրենց բոլոր տարատեսակներով։

1. ԲԱՌԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԻՄԱՍՏԻ ՏԵՐՄԻՆԱՑՈՒՄ

Տերմինների ստեղծման եղանակները լեզվում նույնն են, ինչ որ բառակազմության եղանակները։ Գոյություն ունի տերմինակազմության երկու սկզբունք՝ առաջնային կազմություն և երկրորդային կազմություն։ Առաջինը տեղի է ունենում այն դեպքում, երբ տերմինը ստեղծվում է սովորական բառը որպես տերմին օգտագործելու կամ սովորական բառերից բարդություններ և բառակապակցություններ կազմելու եղանակով։ Երկրորդ տեղի է ունենում այն դեպքում, երբ նոր տերմին ստեղծվում է արդեն գոյություն ունեցող տերմիններից՝ բառակազմության, իմաստափոխության կամ էլ բառակապակցության միջոցով։

Ինչպես վերևում նշեցինք ըստ իրենց բնույթի տերմինները բաժանվում են երկու խմբի.

ա) տերմիններ, որոնք ստեղծվել են ոչ տերմինաբանական բնույթի բառերի հիման վրա.

բ) տերմիններ, որոնք հայոց լեզվի բառակազմական միջոցների օգնությամբ ստեղծվել են հատկապես որպես տերմիններ։

Ոչ տերմինաբանական բառերը որպես տերմին օգտագործելու պրոբլեմը կապված է մի շարք բարդ և դեռևս շատ թույլ լուսաբանված հարցերի հետ։ Խոսքը վերաբերում է հատկապես բառի նույնության պրոբլեմին, որն իր հերթին կապված է բազմիմաստության հետ։ Ամեն մի առանձին դեպքում հարկավոր է պարզել արդյո՞ք գործ ունենք հատուկ նշանակություն ունեցող, առանձին գործածությամբ օժտված միևնույն

բառի, թե երկու տարբեր բառերի հետ։ Սրա հետ կապվում է նաև կենցաղային բառը որպես տերմին օգտագործելու հարցը և այլն։

Ժամանակակից հայոց լեզվի տերմինարանական համակարգում տերմինների կազմման հիմնական եղանակը լեզվի սովորական, ինչպես նաև գրաբարյան, բարբառային, կենցաղային և այլ բառերի տերմինացումն է։ Այդ նշանակում է՝ ժամանակակից հայերենի լեզվական տարբեր շերտերին պատկանող այդ կարգի բառերը կոնկրետանում և վեր են ածվում միաժամանակ այս կամ այն բնագավառի հատուկ տերմինների։ Օրինակ՝ գրական լեզվի այնպիսի բառեր, ինչպես՝ աճուրդ, հաճցաճի, հաճցագործ, զինվոր, զորք, բանակ, պատերազմ, գրոհ, հաճաճք, հերոս, հրաման և հազարավոր այլ բառեր իմաստի կոնկրետացմամբ դարձել են նաև իրավաբանական և ռազմական տերմիններ։ Նույն կարգի օրինակներ կարելի է բերել նաև ռուս-հայերեն և հայ-ռուսերեն երկաթուղային տերմինների, ռուս-հայերեն ռազմական և ռուս-հայերեն առևտրահաշվապահական տերմինների բառարաններից, ինչպես՝ ամբարձիչ-подъемник, *ամբարձում*—подъёмка, *դատիկոն*—ярус[25], *կնգուղ*—башлык, *խրամատ*—окоп, *խոտան*—брак, *խոտանել*—браковать, *խոտանիչ*—браковщик, *խուց*—камера, *խծուծ*—пакля, *տապատ*—подстилка, *մատույց*—подступ, *առաջարկ*—предложение, *հնակի*—обмотка, *խանձ*—запал, *խից*—затычка, *պարեկ*—патруль, *հավատչնք*—задаток, *ողճիկ*—жалованье[26], *կոտորակ*—дробь, *զսպանակ*—пружина, *տարում*—монтаж, *եռ*—сварка, *եռել*—сварить, *ցուռկ*—штевень, *տասնապետ*—десятник, *կարկառ*—выступ, *ապույց*—шпунт[27], *գործակալ*—агент, *գործակալություն*—агентура, *լուծարք*—ликвидация, *առաքում*—экспедиция[28] և այլն։

Այս ձևով նաև 20-ական թվականների ռուս-հայերեն մյուս տերմինաբանական բառարաններում հայոց լեզվի ընդհանուր բառապաշարի բառերը տերմինանալով՝ ձևոք են բերել տվյալ մասնագիտության կամ մասնաճյուղի հասկացություններ համապատասխան իմաստներ։

---

25 «Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների», Թիֆլիս, 1925, «Հայ-ռուսերեն բառարան երկաթուղային տերմինների», Թիֆլիս 1925։

26 «Ռուս-հայերեն ռազմական բառարան», Երևան, 1925։

27 «Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների», Երևան, 1925 թ.։

28 «Ռուս-հայերեն բառարան առևտրահաշվապահական տերմինների», Երևան, 1927։

ա) Կենցաղային բառերի օգտագործումը որպես տերմին

Բառի տերմինացման միջոցներից մեկն էլ կենցաղային բառերի որպես տերմին օգտագործումն է։

Տերմինաբանության հիմնական միջուկը, ինչպես նշվեց, պատմականորեն առաջացել է ընդհանուր գործածություն ունեցող բառերը որպես տերմիններ օգտագործելու հետևանքով։

Մի կողմից տերմինաբանական բառապաշարի և մյուս կողմից կենցաղային բառապաշարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնագիտական տերմինաբանությունը շատ հաճախ ստեղծվում է կենցաղային բառապաշարի հիմքի վրա։ Վ. Ն. Պրոխորովան[29] նշում է, որ այդ պրոցեսի օրինաչափությունը ելնում է կենցաղային և տերմինային բառապաշարների ընդհանրությունից, որ կայանում է հետևյալում։

Նախ, և՛ կենցաղային բառերը, և՛ տերմինները ամենից հաճախ հանդես են գալիս անվանման ֆունկցիայով։

Երկրորդ, և՛ կենցաղային բառերը, և՛ տերմինները համարժեք ու համազոր են իրենց արտահայտած հասկացությանը և հարաբերակցությունն էլ մենիմաստ են։

Երրորդ, կենցաղային բառերը մտնում են բառերի որոշ խմբի մեջ այնպես, ինչպես տերմինները պատկանում են որոշ տերմինաբանական շարքի։

Սակայն կենցաղային և տերմինային բառերի միջև կան նաև տարբերություններ։ Տերմինը միայն այն դեպքում է տերմին, երբ գտնվում է միատեսակ, միասեռ տերմինների շարքում։ Կենցաղային բառապաշարին պատկանող բառը ավելի ինքնուրույն է այդ իմաստով։ Բացի այդ, մասնագիտական տերմինաբանությունը օգտագործվում է մարդկանց որոշակի խմբի կողմից, իսկ կենցաղային բառապաշարը օգտագործվում է բոլոր մարդկանց կողմից և ավելի հաճախ։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տերմինային և կենցաղային բառերը ոչ միայն փոխադարձաբար կապակցված, այլև փոխադարձաբար թափանցելի են։ Այս բառախմբերի փոխազդեցությունը և փոխադարձ ներթափանցումը հետաքրքրական պրոցես է յուրաքանչյուր լեզվում, այդ թվում նաև հայերենում։ Լինելով շատ բարդ պրոցես՝ այն իր մեջ պարունակում է երկու հակադիր պահեր։ Մի կողմից նկատվում է բառի տերմինացում, մյուս կողմից՝ տերմինի ապատերմինացում։ Այ-

---

29 *В. Н. Прохорова*, Бытовая лексика в языке московских памятников II половины XVII в., (Автореферат канд. диссертации), М., 1953, стр. 7.

սինքն՝ մի կողմից կենցաղային բառը դառնում է տերմին, նեղացնելով իր գործածության ոլորտը և մյուս կողմից տերմինը դառնում է կենցաղային բառապաշարի սեփականություն՝ ընդլայնելով իր գործողության և գործունեության ոլորտը: Այսպիսով, կենցաղային բառը դառնում է տերմին, չդադարելով գործածվել որպես կենցաղային բառ: Այսինքն՝ նույն բառը կարող է հանդես գալ և որպես տերմին, և որպես ոչ տերմին, լեզվի սովորական բառ:

Պետք է նշել, որ վերոհիշյալ պրոցեսներում որոշակի դեր են խաղում արտալեզվաբանական գործոնները, այսինքն՝ այդ բառերով նշանակված որակումների և երևույթների հրատապությունը և հասարակական նշանակությունը: Լեզվի ընդհանուր բառապաշարի մեջ սովորաբար մտնում են այն տերմինները, որոնք տվյալ պատմական փուլում առավել նշանակալից դեր են խաղում և արագորեն զարգանում են: Այդ տեսակետից և՛ կենցաղային բառերը, և՛ մասնագիտական տերմինները նպաստում են լեզվի բառային կազմի հարստացմանը և զարգացմանը:

Գիտական բառապաշարի և կենցաղային բառապաշարի միջև ուղղակի և սերտ կապ կա: Յուրաքանչյուր գիտություն իր հետագա զարգացման մեջ չի կտրվում ժողովրդական լեզվից[30]:

Այսպիսով, տերմինակազմության եղանակներից մեկը լեզվի սովորական բառի օգտագործումն է որպես տերմին: Տերմինաստեղծման այս եղանակը ունի այն արժանիքը, որ այս դեպքում լեզվի բառային կազմը պահպանվում է մաքուր վիճակում, լեզուն չի ողողվում օտարազգի անհարկի փոխառյալ բառերով, և այդ բառը մնում է հասկանալի տրվյալ լեզուն գործածող յուրաքանչյուր անհատի համար: Ընդհանրապես պետք է նշել, որ հայերենում տերմինների մեծամասնությունը կազմված է ընդհանուր բառապաշարի նյութի վրա՝ նշված եղանակներից որևէ մեկով:

Տերմինի և ոչ տերմինի (լեզվի ընդհանուր գործածական բառի) միջև հաճախ սահմանազատում դժվար է անցկացնել: Ինչպես նշել ենք, կան շատ դեպքեր, երբ լեզվի սովորական բառերը դառնում են տերմիններ: Օրինակ, այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ օդ, ջուր, երկաթ, պղինձ, թթու և այլն, քիմիայում հանդես են գալիս որպես տերմիններ, այն դեպքում, երբ առօրյա լեզվում այդ նույն բառերը հանդես են գալիս որպես սովորական, ընդհանուր գործածության բառեր: Նույնն է տեղի ունենում նաև

---

30 *В. В. Виноградов.* Основные типы лексических значений слова, ВЯ, 1953, № 5, стр. 5.

շորսու, գերան, ճաղ, խաչմերուկ *կամ* անանուխ, դաղձ, կաղնի, թղկի, բարդի, սոսի, աղամախնձոր *կամ* արքանյակ, տիեզերանավ, ինտուատեսություն *և այլ բառերի հետ:*

Այսպիսով ոչ տերմինաբանական բնույթի բառերի օգտագործումը որպես տերմին, ավելի բարդ երևույթ է, քան կարող է թվալ առաջին հայացքից: Այս պրոբլեմի հետ կապված են մի շարք այլ, նույնչափ բույլ լուսաբանված և մշակված գանազան հարցեր, մասնավորապես բառի նույնության խնդիրը, որն իր հերթին անբակտելիորեն կապված է համանունության և բառի բազմիմաստության պրոբլեմների հետ[31]:

բ) Տերմինների առաջացումը իմաստափոխությամբ

Բառիմաստի տերմինացման միջոցներից մեկն է նաև իմաստափոխությունը: Լեզվում լայն տարածում ունի բառիմաստի փոփոխմամբ նոր տերմինների ստեղծումը:

Ըստ Ա. Մ. Տերպիգորևի[32] *վկայության, տերմինների ստեղծման հիշյալ եղանակը այլ եղանակների նկատմամբ ունի մի շարք առավելություններ: Որպես լեզվում արդեն գործածված բառեր, այդ տերմինները ավելի մատչելի են, ավելի կարճ, այսինքն՝ կազմությամբ ավելի հարմար են և, որ կարևորն է, դրանք հեշտությամբ են հիշվում: Մի խոսքով դրանք օժտված են իդեալական տերմինի բոլոր առանձնահատկություններով:*

Իմաստափոխության նյութ շատ հաճախ կարող է ծառայել այնպիսի մի բառ, որը որպես տերմին արդեն օգտագործվել է մի այլ տերմինաբանական համակարգում: Օրինակ՝ խմորիչ—фермент, *տեսակավորել*—сортировать, *տեսակ*—сорт, *խլուրդ*—хижа, *թակ*—колотушка, трепало, трепалка, *թավալել*—катать, *թավալիչ*—каток, *և այլն:*

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այն բառերի իմաստների փոփոխությունները, որոնք կապված են մարմնի մասերի նշանակության հետ: Այդ կարգի տերմիններ կազմվում են տարբեր լեզուներում, և հետաքրքրականն այն է, որ մեքենայի նույն մասը տարբեր լեզուներում կարող է համեմատվել մարմնի տարբեր մասերի հետ: Այսպես, ռուսերենում կարելի է հանդիպել մեխանիզմների անունների՝

---

31 *А. Н. Смирницкий,* К вопросу о слове (проблема «тождества слова»), Труды института языкознания АН СССР, т. IV, М., 1954, стр. 53.

32 *А. М. Терпигорев,* Об упорядочении технической терминологии, ВЯ, 1953, № 1, стр. 75.

որոնք կազմված են մարմնի մասերի անվանումներից: Օրինակ՝ лапа, головка, глаз, глазок, спинка և այլն:

Նույնպիսի բաղադրիչով օրինակներ կարելի է բերել հայերենից: Օրինակ՝ *ականջ*—ушко, *ճանկ*—крюк, скоба, лапа, *ճանկիկ*—скобочка, *շարժաթև*—шатун, *ժանանիվ*—зубчатое колесо, *ժանեվոր*—зубчатка, *ոտնակ*—педаль, *գլխիկ*—головка և այլն:

Երբ սովորական բառը դառնում է դիտատեխնիկական տերմին, տերմինների համակարգում ստանում է որոշակի բովանդակություն, և այդ բառի նախորդ նշանակությանը ավելանում է մի նոր նշանակություն՝ տերմինաբանական նշանակություն: Օրինակ՝ խոնարհում բառն ունի հետևյալ իմաստները.

1. Գեպի ներքև թեքվելը, կռանալը, ընկճվելը, հպատակվելը:

2. Բայի քերականական կարգերի ամբողջությունը[33]:

Այստեղ, երկրորդ նշանակությունը տերմինաբանական է և այդ իմաստով ավելի նեղացված: Սակայն իմաստի նեղացումը դեռևս մասնագիտական տարբերակում չէ: Իմաստափոխությամբ այս կամ այն տերմինը կապվում է բառի նշանակության՝ իմաստի նեղացման կամ մասնագիտական սահմանազատման միջոցով, երբ այդ բառը կորցնում է իր լայն նշանակությունը. օրինակ՝ հոլով բառը սկզբում նշանակել է թավալում, հոլով գալը, գլորվելը, իսկ այժմ այդ բառը իմաստի նեղացման շնորհիվ դարձել է քերականական տերմին:

Այսպիսով, տերմինների առաջացումը ժամանակակից հայերենում կատարվում է ոչ միայն լեզվի ընդհանուր բառապաշարի բառերի տերմինացման, տերմինային իմաստներ ձեռք բերելու միջոցով, այլ նաև այդ կարգի բառերի իմաստափոխմամբ: Ըստ որում լեզվի սովորական բառերը տերմինանում են իմաստափոխության զանազան տեսակներով՝ իմաստների լայնացմամբ, նեղացմամբ, ըստ ֆունկցիայի, ձևի և այլն: Բառապաշարի մասնագիտական տարբերակումը գլխավորապես կատարվում է բառիմաստի ընդլայնմամբ կամ նեղացմամբ:

Բառիմաստի ընդլայնումը իմաստափոխական այն երևույթն է, երբ բառը կորցնում է իր էական հատկանիշների մի մասը և դրանով ընդարձակում է իր ծավալը: Օրինակ՝ բառիմաստի ընդլայնմամբ անձնանունները, տեղանունները և այլն հաճախ հասարակ անուն են դառնում: Օրինակ՝ ամպեր, վոլտ, վոլգա, մեսերշմիդտ, յունկերս և այլն: Մյուս կողմից տեղի է ունենում նաև բառիմաստի նեղացում, բառի ավելի լայն իմաստի կամ իմաստների մասնավորմամբ:

33 *О. С. Ахманова*, Словарь лингвистических терминов, М., 1966, стр. 449.

Այսպես, ըստ իմաստային ֆունկցիայի լեզվի ընդհանուր բառապաշարի՝ ոտ բառը վեր է ածվել ռազմական տերմինի՝ «հրացանի ոտք» հասկացության համար, պտուղը՝ բժշկական տերմինի «սաղմ» նշանակությամբ և այլն:

Բառիմաստի ընդլայնմամբ կամ նեղացմամբ լեզվի սովորական՝ ճոճակ, ձագար, ճակատ, շամփուր և այլն բառերը դարձել են ռազմական տերմիններ, որպես ռուսերենի՝ граната, воронка, фронт, шомпол բառերի համարժեքներ:

Նույն ձևով՝ կռունկ, ցոուկ, սայր և բազմաթիվ այլ բառեր վեր են ածվել շինարարական տերմինների, որպես ռուսերեն՝ кран, штевень, штиль հասկացությունների համազորներ:

Անհրաժեշտ է արձանագրել, որ լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի մեջ մտնող բառերի տերմինացումը ժամանակակից հայերենում տերմինների կազմության գործուն միջոցներից է և լայն չափերով կիրառվում է գիտության ու տեխնիկայի նորանոր բնագավառների տերմինների ստեղծման գործում:

2. ԱՅԱՆՈՒՄ, ԱՅԱՆՅԱՎՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Նախածանցներով և վերջածանցներով կազմված բառերը գիտատեխնիկական տերմինաբանության մեջ լայն տարածում ունեն: Հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական տերմինաբանությունը, այսինքն՝ գիտության լեզուն կազմելով գրական լեզվի ընդհանուր բառապաշարի ենթահամակարգը, բնականաբար տերմինաստեղծման ժամանակ օգտագործում է ածանցման և բառաբարդման (ձևույթակապակցման) նույն միջոցներն ու հնարավորությունները, ինչ որ լեզվի ընդհանուր գործածական բառապաշարը: Այդ պատճառով, մի կողմից՝ գրեթե բոլոր տերմինաբանական կազմություններն արդեն պայմանավորված են ընդհանուր գործածական բառապաշարի օրինաչափություններով, մյուս կողմից՝ կենսունակ ածանցները յուրաքանչյուր կոնկրետ նորանոր կիրառություն են ստանում: Այսպիսով, ածանցման միջոցով ստեղծված հայերեն տերմինների տարբերությունը լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի սովորական բառերից հիմնականում կոնկրետ ածանցների գործածականության մեջ է:

Այս տիպի տերմինների համակարգայնությունը պայմանավորված է, մի կողմից՝ գիտական համապատասխան հասկացությունների համար արմատական ձևույթների ճիշտ ընտրության և, մյուս կողմից՝ նույն կար-

դի հասկացությունների համար միևնույն կամ հոմանիշ ածանցների օգտագործման հնարավորությամբ։ Այսպիսով, տերմինաբանության համակարգայնությունն ապահովելու համար նպատակահարմար է, որպեսզի ածանցյալ բառերը հնարավորության սահմաններում հանդես գան նույնածանց կազմությամբ։

ա) Նախածանցներով կազմված տերմիններ

Նախածանցումը վերջածանցումից տարբերող հիմնական յուրահատկություններից մեկն այն է, որ նախածանցները ի հակադրություն վերջածանցների որոշ դեպքերում չունեն դասակարգող նշանակություն, որոշակի խոսքիմասային փոփոխություն չեն մտցնում ելյալ հիմքի վերաբերմամբ։

Նախածանցները հիմնականում կապված չեն բառափոխության որոշակի հարացույցի հետ, կցվում են տարբեր խոսքի մասերի հիմքերին և այսպես ասած, «ճշտող» դեր են կատարում։

Նախածանցը որպես բառակազմական ձևույթ, վերջածանցների համեմատությամբ հնչյունական, ձևաբանական և իմաստային առումով սովորաբար ավելի ինքնուրույն է։ Նախորդելով արմատին կամ հիմքին՝ նա չի միաձուլվում ձևակազմական վերջածանցների և վերջավորությունների հետ հնչյունաձևաբանական մեկ ամբողջության մեջ։ Ածանցյալ հիմքի նշանակությունը, որին միանում է նախածանցը, սովորաբար ինչ-որ աստիճանով պահպանվում է՝ չլուծվելով նախածանցի նշանակության հետ և չլուծվելով ամբողջ նախածանցային կազմության նշանակության մեջ[34]։

Ինչպես հայտնի է, հայերենը համեմատաբար այնքան էլ հարուստ չէ նախածանցներով։ Այդ է եղել պատճառը, որ դեռևս V դարում Հունաբան դպրոցի ներկայացուցիչները գրաբարի համար ստեղծել են երկու տասնյակից ավելի նախածանցներ, որոնցից շատերն այժմ էլ ակտիվ դեր են կատարում հայերեն բազմաթիվ նոր բառերի կերտման գործում։

Նախածանցմամբ կերտվող գիտատեխնիկական հայերեն տերմինների համար հիմնականում աղբյուր են ծառայում Հունաբան դպրոցի ներկայացուցիչների ստեղծած նախածանցները, ինչպես նաև գրաբարյան առ, բաս, ընդ, ի, ց նախդիրները։

---

34 *К. А. Левковская,* Именное словообразование в современной немецкой общественно-политической терминологии и примыкающей к ней лексике, М., 1960, стр. 86.

Հատկանշական է, որ դրաբարյան շրջանից եկող վերոհիշյալ նախածանցներից շատերը և հատկապես դրաբարյան նախդիրները տերմինացման շնորհիվ վերակենդանանում, ընդհանրություն են ստանում, ընդարձակում են իրենց ֆունկցիաները և գործածության ոլորտները: Նախածանցներով կազմված տերմինները շատ մեծ տարածում ունեն վերոհիշյալ բառարաններում: Հանդիպում են ոչ միայն ժամանակակից հայերենում տարածված կենսունակ նախածանցները, այլև լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի լրացման տեսակետից ոչ կենսունակները, ավելի սակավ տարածվածները:

Այդ բնույթի նախածանցները, հատկապես մեծ չափով կիրառվում են հայ բժշկական տերմինաբանության մեջ, վ. Արծրունու բժշկագիտական տերմինների բառարանում: Նախածանցներով կազմվող տերմիններն համեմատաբար շատ են նաև ռազմական և երկաթուղային տերմինների բառարաններում:

Նախածանցներով կազմվող տերմինների առատությունը, ըստ երևույթին, պայմանավորված է ոչ միայն գիտության ու տեխնիկայի այս կամ այն ճյուղի կամ մասնաճյուղի առանձնահատկություններով, այլև այդ բնագավառի հայերեն տերմինները լատիներենի, հունարենի և հատկապես ռուսերենի հիման վրա պատճենելու հանգամանքով:

Բերենք նախածանցներով կազմված հայերեն տերմինների մի շարք՝ *(ան)* **անռիթմիկ** (аритмический), **աննախական** (асептический), **անափնութիւն** (анофальмия), **անտեսութիւն** (анопсия), *(ապ)* **ապատճական** (атрофический), **ապադիեցում** (аблектация), **ապաքարգութիւն** (атаксия), *(արտ)* **արտամուսնական** (внебрачный), **արտափորային** (внебрюшной), **արտանոթային** (внесосудистый), **արտասրտային** (внесердечный), **արտատրովայնային** (внеутробный), **արտակրծքային** (внегрудной), *(գեր)* **գերլարվածութիւն** (гипертензия), **գերատում** (гипертрофия), *(ենթա)* **ենթատատծանիական** (поддиафрагмальный), **ենթակարծրենային** (субдуральный), **ենթալեզվային** (подъязычный), *(հակա)* **հակաթույն** (антитоксин) **հակահորմոն** (антигормон), **հակամարմիններ** (антитела), *(համ/ա)* **համագործիչներ, համազդիչներ** (агонисты), (հար) **հարակցական** (агнезивный), *(ներ)* **ներառում, ներփակում** (включение), **ներլցնել, ներարկել** (вливать), **ներերակային** (внутривенный), **ներբջիջային** (внутриклеточный), **ներմաշկային** (внутрикожный), **ներհոդային** (внутрисуставный) *(վեր)* **վերհանչական** (анамнестический), **վերատուգիչ** (контролер), **վերարեկութիւն** (кассация), *(տար/ա)* **տարաիոսութիւն** (аллолация), **տարա-**

ճաշակութիյուն (аллотригенезия), *տարակերութիյուն* (аллотрифазия) *և այլն:*

բ) Վերջածանցներով կազմված տերմիններ

Վերջածանցման համար բնորոշն այն է, որ դրանով ածանցյալ բառը կարող է փոխել իր խոսքիմասային պատկանելությունը: Վերջածանցները միշտ կապված են որոշակի խոսքի մասի հետ և կարող են բառ կազմել այլ խոսքի մասներից: Վերջածանցի իմաստը հիմնաբառի նշանակության հետ իմաստաբանական սերտ միություն է կազմում: Որոշ դեպքերում էլ վերջածանցները խաղում են բառիմաստի ճշգրտման դեր: Օրինակ՝ փոքրացուցիչ, նվազական ածանցները՝ -իկ, -ակ, -ուկ և այլն: Վերջածանցները նախածանցներից տարբերվում են նաև նրանով, որ առաջիններն անմիջականորեն կապված են բառի հարացուցային ձևավորման հետ, այն դեպքում, երբ նախածանցները շատ դեպքերում բոլորովին չեզոք են:

Քանի որ վերջածանցների մեծամասնությունը կազմում է իմաստով միաձույլ բառեր, տերմինաբանության մեջ վերջածանցային կազմությունները զգալի տեղ են գրավում: Վերջածանցների դերը չափազանց մեծ է հատկապես միասեռ առարկաների կամ երևույթների շարքերի կազմության, տերմինաբանության համակարգայնության գործում:

Գիտատեխնիկական հայ տերմինների կազմությանը մասնակցում են 150-ից ավելի հայերեն ածանցներ, ըստ որում շատ վերջածանցների գործածության չափանիշը, այսինքն՝ նրանց կենսականությունը տերմինների կազմության մեջ լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի համեմատությամբ որոշ չափով տարբեր է, որ պայմանավորված է տերմիններին յուրահատկություններով:

Հատկանշական է նաև այն, որ տերմինների վերջածանցման դեպքում նկատվում է գրաբարյան կամ բարբառային ծագում ունեցող, կամ էլ գրաբարում ու բարբառներում գործածվող վերջածանցների լայն կիրառություն, և այն զգուշությունը, որ ցուցաբերվում է այդ կարգի վերջածանցներով լեզվի սովորական բառերը կերտելիս, այս դեպքում, այնքան էլ հանդես չի գալիս:

Ստորև բերում ենք վերջածանցմամբ կազմված մի շարք տերմիններ, որ քաղել ենք քննարկվող բառարաններից: Օրինակ՝ (որդ), միջնորդ (медиатор, маклер), պակասորդ (недостача), մրցորդ (соискатель), գնորդ (покупатель), վերլուծորդ (аналитик), (իչ), աարիչ (монтер), հղկիչ (полировщик), սակագրիչ (таксировщик), կուտակիչ (акку-

мулятор), առաքիչ (экспедитор), (ուկ) բերուկ (наносный), կրկնեփուկ (сухари), (ոն) թափոն (отвал), կտրոն (талон), ճարպոն (сальник), մաներոն (сдачи), ձյութոն (пластырь), (ուն) կոթուն (стебель), կպչուն (вязкий), (ան) պտտան (вертушка), (ակ) գունակ (пигмент) նմանակ (иммитация), պտուտակ (винт), կրկնակ (дубликат), հարթակ (площадка), դրոշմակ (штемпель), (իկ) ագուցիկ (вставной), պայթուցիկ (взрывчатый), (ույթ) հասույթ (доход), ձուլույթ (литье), արժույթ (валюта), առաքույթ (посылка), դրույթ (положение), (անի) երկձեռանի (двурукий), երկկողմանի (двусторонний), երկաչքանի (двуглазый), նմուշանի (ассортимент), (ուտ) պարզուտ (фильтрат), (ուրդ) կացուրդ (остановка), կցուրդ (стык), (ոց) փուռց (подстилка), ձգոց (подтяжка), (ովի) բարձրացնովի (подъемный), (ավոր) պտուտակավոր (винтовой), (ք) լուծարք (ликвидация), քաղվածք (выписка), (ուք) քսուք (смазка), ծալուք (фальц) *և այլն:*

3. ԲԱՐԴ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Բառաբարդում — *բարդ տերմինները հայերենում մի քանի տեսակ են՝ բարդ և բարդ ածանցավոր բառեր, բառակապակցություններ և նորագույն հապավումներ:*

Հայերեն տերմինների և հատուկ արտահայտությունների ստեղծման միջոցները բազմազան են: Դրա ձևերից մեկն էլ ժամանակակից հայերեն տերմինակազմության մեջ բառաբարդումն է:

Բարդ բառեր կազմելու անհրաժեշտությունը առաջին հերթին զգացվում է մի բառով երկու և ավելի հասկացությունների, գաղափարների արտահայտման համար: Մյուս կողմից, բարդությունների շնորհիվ ընդլայնվում են լեզվում առկա բառապաշարային նյութի հիման վրա նոր բառեր կազմելու հնարավորությունները[35]:

Բարդ բառերը միաժամանակ անհրաժեշտ են նաև տերմինաբանության համակարգման համար: Տվյալ դեպքում տերմինների համակարգման էությունն այն է, որ նման, մոտ հասկացություններ արտահայտող բառերը մի շարք տերմինաբանական համակարգերում ձևավորվում են բառակազմական նույն եղանակով:

Մյուս կողմից, բարդ տերմինները նպաստում են գիտատեխնիկական տերմինաբանության ճշգրտմանը, գիտական հասկացությունը բա-

35 *Г. О. Винокур,* О некоторых явлениях словообразования в русской технической терминологии, Труды МИФИ, т. 5, М., 1939, стр. 47.

ռային ձևին առավելագույն համապատասխանեցման շնորհիվ: Բարդ բառերը պայմաններ են ստեղծում ավելի ճշտորեն սահմանազատելու գիտական տարբեր բառերը և խուսափելու բազմիմաստությունից, որը, ինչպես հայտնի է, տերմինաբանական համակարգում տերմինների դրժվար յուրացման պատճառներից մեկն է: Բարդ տերմինները բնորոշ են գրեթե բոլոր լեզուների համար, սակայն յուրաքանչյուր լեզվում նրանք ձևավորվում են այդ լեզվի օրինաչափությունների համապատասխան և տարբեր տեսակարար կշիռ ունեն: Բարդ տերմինները կազմվում են տվյալ լեզվին հարազատ լեզվական միջոցներով, որոնք պատմականորեն արդարացվել են այդ լեզվում: Օրինակ, ռուսաց լեզվի համար հատկապես բնորոշ են ածականական որոշիչ բառակապակցությունները, այն դեպքում, երբ հայոց լեզվին հատուկ են ավելի բառաբարդումները: Առաջինների կենսունակությունը ռուսերենում բացատրվում է ածականների արդյունավետ բառակազմական դեպքերի իմաստային ճկունությամբ:

Բառաբարդումը հայերենում, ինչպես հայտնի է, արտահայտվում է վերլուծական և համադրական բարդությունների ձևով[36]:

Բառաբարդումը հայոց լեզվում բառակազմական ամենատարածված ձևն է՝ կապված նրա կառուցվածքի յուրահատկությունների հետ. որոշակի դեր է կատարում նաև բարդ տերմինների բաղադրիչների թիվը: Այսպես, հայերեն երկբաղադրիչ տերմինները ձգտում են միաձևավորվածության:

Բառաբարդությամբ տերմիններ կազմելու տեսակետից ժամանակակից հայերենը որոշակիորեն տարբերվում է ռուսերենից: Բառաբարդումը հայերենի բառակազմական տեխնիկայում որոշիչ դեր է խաղում, և շատ դեպքերում, երբ ռուսերենը նոր տերմինների կազմության համար դիմում է բառակապակցությանը, հայերենը կազմում է դրանք բառաբարդման շնորհիվ: Այսպես, օրինակ՝ հաշվեդրքույկ (расчетная книжка), հաշվեմատյան (расчетная книга), հաշվեվճար (расчетная плата), փորձակշիռ (пробный баланс)[37], կայարանապետ (начальник станции), դրոշմատուրք (гербовый сбор)[38], ցամաքազոր (армия сухопутная), ճակատագրոհ (атака лобовая), թևագրոհ (атака фланговая), թիկնագրոհ (атака тыловая), շղթայագրոհ (атака цепью)[39], գամերկաթ

36 Գ. Ջահուկյան, է. Աղայան, վ. Առաքելյան, վ. Քոսյան, *Հայոց լեզու, I մաս, Ա. պրակ, Երևան, 1980, էջ 384—443:*

37 «Ռուս-հայերեն բառարան առևտրահաշվապահական տերմիններից»:

38 «Հայ-ռուսերեն բառարան երկաթուղային տերմիններից»:

39 «Ռուս-հայերեն ռազմական բառարան»:

(железо замковое), թերթերկար (железо листовое), երբաղոց (пила долевая), երիզաղոց (пила ленточная), աղեղնաղոց (пила луковая), ձեռնաղոց (пила ручная), պորտաքար, փականաքար (камень замковый), եզրաքար (камень бордюрный), ուսաքար (камень консольный), հենաքար (камень опорный), սալաքար (камень плитный), խցանաքար (камень пробковый), կրնկաքար (камень пятковый), անկյունաքար (камень угловой), խարամաքար (камень шлаковый) *և այլն*[40]:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ բառարարդմամբ կազմված հայերեն տերմիններին համապատասխանում են ռուսերեն կապակցությունները, որ ռուսերենի համար շատ բնական և օրինաչափ երևույթ է: Այս դեպքում բառարարդմամբ կազմվող տերմինների բնագավառում հայերենի բառակազմական ճկունությունն է դրսևորում:

Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ ռուսերենի պարզ կամ ածանցավոր բառերի դիմաց են հայերենում կազմվում բարդ բառեր, որ նույնպես վկայում է բառարարդման կենսունակության մասին ժամանակակից հայերենի: Օրինակ՝ թեյարկղ (цибик), վիճակախաղ (лоторея), ճավախորշ (трюм), պայմանագիր (договор), զեկուցագիր (рапорт), արտոնագիր (патент), հուշագիր (меморандум)[41], ավազակախումբ (банда), տակառագործ (бондарь), հիմնադիր (учредитель), դրամատուն (банк), վաճառացուցակ (фактура), սննդադրամ (алимент), փաստաբան (адвокат), դրամարկղ, գանձարկղ (сберкасса), զինանշան (герб), հանձնարարագիր (мандат), դրամագլուխ (капитал), գրավատուն (ломбард), օրենսգիրք (кодекс), հարցաքննություն (допрос), *և այլն*[42]:

Ռուսական տերմինների իմաստային և ձևաբանական յուրահատուկ պատճենման ապացույց պետք է համարել այն դեպքերը, երբ ռուսերեն բարդ բառերին համապատասխանում են հայերեն համարժեք բարդությունները: Այս դեպքում արդեն տերմինի իմաստային պատճենումը լրացվում է կառուցվածքներով: Օրինակ՝ ինքնավարություն (самоуправление), երկկողմանի (двусторонний), միօրինակ (единообразный), նպատակահարմար (целесообразный), ինքնագործունեություն (самодеятельность), ինքնապաշտպանություն (самооборона), ինքնակոչություն (самозванство), սակավահող (малоземельный)[43], ալիքա-

40 «Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների»:

41 «Ռուս-հայերեն բառարան առևտրահաշվապահական տերմինների»:

42 «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան», Երևան 1924:

43 Նույն տեղում:

ներ (волнорез), ջրաչափ (водомер), ջրաչափ (пирометр) և այլն[44]։

Բաղադրիչների քանակի տեսակետից քննարկվող բառարաններում արձանագրված հայերեն բարդ տերմինների մեծ մասը երկանդամ է, այսինքն՝ բարդ բառերը կազմված են երկու հիմնական ձևույթներից կամ բառերից. օրինակ՝ ագուցորմ (стена шпунтовая), վանդակորմ (стена решетчатая), բրեներմ (брандмауер), շեղմույթ (раскос), շքադուռ (дверь парадная), երկաթբետոն (железобетон), ծայրակալ (башмак), ատամնագուբ (зубчатка), ատիանագուռ (ворота шлюзные), ջրմուղ (водопровод), շինափայտ (строительный лес)[45], գեղձուռուցք (аденома), ցավաչափ (алгезинометр), կրծքագեղձ (грудная жаба), կազմախոտ (анатом), դեղագործ (фармацевт), դեղատուն (аптека) և այլն[46]։

Հանդիպում ենք նաև երեք բաղադրիչներից՝ հիմնական ձևույթներից կամ բառերից կազմված բարդություններ, որ նույնպես վկայում է հայոց լեզվի բառակազմական հնարավորությունների հարստության և ճկունության մասին։ Օրինակ՝ անոթմկանախտություն (ангиомиопатия), ճանճաջրաբուժություն (бальнеотерапия), ախտորոշագետ (диагностик), ախտորոշագիտություն (диагностика), շողասնկախտ (актиномикоз), գունաշաքարաչափ (хромосахариметр) և այլն[47]։

Հատկանշական է, որ այս կարգի բարդությունները հայերենում կազմվում են ոչ թե բուն ռուսական, այլ ռուսերենի օտարազգի փոխառությունների դիմաց։

Ըստ բարդ բառերի բաղադրիչների խոսքիմասային պատկանելության՝ բառաբարդմամբ կազմված հայերեն տերմինները ներկայացնում են խոսքիմասային զանազան հարաբերությամբ կազմված հետևյալ կաղապարները։

1. Գոյական+գոյականով *կազմված բարդություններ։ Օրինակ՝* ժանանիվ, դրամագլուխ, փոռձադաշտ, կենսաթոշակ, գրավատուն, դիվանատուն, դեղատուն, առողգլուխ, վարկագիր, ավանդագիր, հավատագիր, հուշագիր, հուշատետր, գլանախտիմք, բեռնախտիմք, թերթերկաթ, գամերկաթ, նավակամուրջ, գետակամուրջ և այլն։

2. Գոյական+բայարմատով *կազմված բարդություններ։ Օրինակ՝*

---

44 «Հայ-ռուսերեն բառարան երկաթուղային տերմիններից»։

45 «Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքներից»։

46 «Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարան», եր. 1924։

47 Նույն տեղում։

մուրհակատու, ջրցան, ջրմուղ, հավատտար, էլեկտրաշարժ, ջրարգել, զործակալ, ալիքահիերձ, աճրդախոս, իրավարար, դրոշմահատ, հողմաղաց, կավախառնիչ, բետոնախառնիչ *և այլն*:

3. Բայարմատ+գոյականով *կազմված բարդություններ*: *Օրինակ՝* գրոսանավ, հիծաքիվ, շարժաթև, շարժաոիք, հեճաճար, ցայտապոմպ, տաշճար *և այլն*:

4. Ածական-+գոյականով *կազմված բարդություններ*: *Օրինակ՝* կորանկյունաձև, շեղմույք, նրբաստոց, փոքրահատակ, երկարագլուխ, սրագլուխ *և այլն*:

5. Ածական+բայարմատով *կազմված բարդություններ*: *Օրինակ՝* դյուրակիր, դյուրաառար, մեծածախ, մանրածախ *և այլն*:

6. Գերանուն+գոյականով *կամ* բայարմատով *կազմված բարդություններ*: *Օրինակ՝* ինքնակոչ, ինքնագործունեություն, ինքնապաշտպանություն, ինքնեկ *և այլն*:

7. Թվական+գոյականով *կազմված բարդություններ*: *Օրինակ՝* երկբնատրահ, երկաչքանի, երկկողմանի, միօրինակ *և այլն*:

Բարդ բառերին սերտորեն առնչվում են բարդ ածանցավոր բառերը: Բարդ ածանցավոր տերմինները նույնպես լայն տարածում ունեն քննարկվող ժամանակահատվածի տերմինաբանական բառարաններում: Այստեղ մենք տեսնում ենք ինչպես նախածանցավոր և վերջածանցավոր, այնպես էլ միաժամանակ, և՛ նախածանցներով, և՛ վերջածանցներով կազմված բարդ ածանցավոր տերմիններ: Օրինակ՝ անհավասարակողմ, անջրաթափանց, անկանոնակազմ, անջրանցիկ, անջրանցիկություն, անկենսականություն, անթերունակություն, ջրաբուժություն, կրծքահեղձուկ, ախտորոշագիտություն, կավախառնիչ, բարամածիկ, արտահայտչականորեն, ազոտաթթվային, կորանկյունաձև, օդանավորդ, երկկողմանի *և այլն*:

Ի վերջո պետք է նշել, որ նախածանցներով կազմված բարդածանցավոր բառերին հատուկ չեն ածանցների բազմազանությունը, և խիստ սակավաթիվ ածանցներ են հանդես գալիս այդ կարգի տերմինների կազմության ժամանակ: Այստեղ վճռորոշ դեր է խաղում, անկասկած, նախածանցների աղբատության փաստը ժամանակակից հայերենում:

4. ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տերմինային կապակցությունները կազմվում են խոսողների կողմից ըստ անհրաժեշտության, կամ էլ լեզվի պատրաստի միավորներ են:

Տերմինաբանական նշանակություն ունեցող կայուն բառակապակ-

ցությունների բառային իմաստը կախված է բաղադրիչների իմաստներից, ինչպես նաև նրանց միացման ձևից և կապակցման նշանակությունից: Միայն մեկ իմաստով այս կամ այն կայուն կապակցության մեջ մտնող բառի նշանակության սահմանաղատումը կատարվում է այդ բառերի մասնագիտացման գծով:

Բառակապակցության մեջ գրեթե յուրաքանչյուր տերմին օգտագործվում է որպես նոր բաղադրյալ մաս (բաղադրիչ): Այդ տեսակետից էլ յուրաքանչյուր տերմին պետք է օգտակար լինի կայուն բառակապակցություն կազմելու համար:

Կայուն բառակապակցությունները, որպես լեզվի պատրաստի միավորներ, ունենալով հիմնական իմաստ և համապատասխանելով գիտական այս կամ այն հասկացությանը, մտնում են դարձվածաբանության մեջ, կազմում ոչ իդիոմատիկ դարձվածաբանական միավորների խումբ: Իդիոմատիկ դարձվածաբանական միավորներից վերջիններս տարբերվում են նրանով, որ սրանց իմաստը անմիջական կախում ունի և բխում է կապակցությունը կազմող բառերի՝ բաղադրիչների իմաստից. այնինչ իդիոմատիկ դարձվածաբանական միավորների իմաստը չի բխում դարձվածը կազմող բաղադրիչների բառային իմաստից. այստեղ բառերը փաստորեն կորցնում են իրենց բառային ինքնուրույնությունը:

Տերմինաբանական բառակապակցությունների տեղը լեզվի համակարգում մինչև այժմ վերջնականորեն չի որոշված: Հենց այստեղից էլ ծագում է վերջիններիս անվանման խայտաբղետությունը: Նրանց անվանում են դարձվածաբանական տերմիններ, տերմինաբանական դարձվածքներ, բաղադրյալ տերմիններ, տերմին-բառակապակցություններ, տերմինային կապակցություններ, տերմինաբանական նշանակությամբ ազատ բառակապակցություններ և այլն:

Տարբեր անվանումները ըստ երևույթին հարցի ոչ բավարար ուսումնասիրության հետևանք են: Բանն այն է, որ ինչպես չի կարելի հավասարության նշան դնել տարբեր տերմինաբանական համակարգերի միջև, այնպես էլ չի կարելի հավասարեցնել այդ համակարգերի բառակապակցությունները:

Տերմինաբանության համակարգայնության համար անհրաժեշտ է, որ տերմին-բառակապակցությունները, որոնք մի կարգի հասկացություններ են նշանակում, ունենան միատիպ կառուցվածք:

Տերմինաբանական որոշակի համակարգում բառակապակցությունները ստանում են կայուն բնույթ և դրանով իսկ մոտենում դարձվածա-

բանական միավորներին, այլ դեպքերում նրանք ունենում են ավելի ազատ բնույթ և պատկանում են լեզվի շարահյուսական միավորներին:

Տերմինաբանական կապակցությունների բաղադրիչներ կարող են լինել այնպիսի բառեր, որոնք նույնպես իրենց հերթին օգտագործվում են որպես տերմիններ: Այս առումով կարելի է կատարել հետևյալ տարբաժանումը:

ա) Տերմինային կապակցություններ, որոնց երկու բաղադրիչներն էլ տերմինաբանական բնույթ են կրում, այսինքն՝ տերմիններ են:

Օրինակ՝ իրավագետ խորհրդատու, դատական պաշտպան, ռազմական երկաթուղի, առողջապահական արգելան, անգուտ եկամուտ, արձանագրական տուրք, արձանագրական մատյան, վերադիր վնաս, վերադիր ծախս, մաճրածախ առևտուր, մեծածախ առևտուր, գրավի վկայագիր, առևտրական իրավունք, հրետանային գումակ, հրետանային զինանոց, գնդի հրետանի, խրամատի պատոց, մարտական հրաձգություն, մարտական հրթիռ, մարտական դասակ, առաջապահական մարտ, կարտեչավոր ռումբ, զարկանի պտուտակ, զինվորական բժիշկ, ռազմական մինիստր, հրձիգ ռումբ, հրձիգ նռնակ, հրձիգ արկ և այլն:

բ) Տերմինային բառակապակցություններ, որոնց մեջ բաղադրիչներից մեկը տերմին է, իսկ մյուսը՝ ընդհանուր լեզվի բառ:

Օրինակ՝ շրջիկ գործակատար, շարժական գույք, անվնաս գործարք, անջատ հաշիվ, խառն եկամուտ, խառն հասույթ, ներգործական իրավունք, մասնավոր օրենսդրություն, սուտ վկա, ժապավինյալ մատյան, ներգործական իրավունք, ընդհանուր ներում, փոխադրական առևտուր, պարզ լծակ, մասնավոր օրենսդրություն, ծովափնյա հրետանի, լեռնային հրետանի, թեթև հրետանի, դաշտային հրետանի, ծանր հրետանի, բաց հրակնատ, փակ հրակնատ, անշարժ լծանակ, վարժական հրացան, հարկադրված ենթադրություն և այլն:

գ) Տերմինային կապակցություններ, որոնց մեջ որոշիչը տերմին է, իսկ որոշյալը լեզվի սովորական բառ: Օրինակ՝ պետական գաղտնիք, մեղադրանքի բանաձևում, սահմանադիր ժողով, գեներատիչ հանձնաժողով, ապառիկների գրքույկ, բան գործունյա վնաս, ակտիվ գործունեություն, բազմոցի տոմս, մարտկոցի վարժություն, մարտական շարժում, մարտական արժանիք, զորքի վարում, պայթուցիկ թուղթ, պայթուցիկ խառնուրդ, ռազմական շրջան, ռազմական սովորույթ, զորական միավոր, հրանոթի բոց և այլն:

դ) Տերմինային կապակցություններ, որոնց բաղադրիչներից և ոչ մեկը տերմին չէ: Օրինակ՝ ազատ պաշտոն, գուտ կշիռ, գուտ հաշ, կողմա-

կան համի, ճաճճային գետին, ճաճճային տեղանք, կոշտերով ճանիճ, բիլերով ճանիճ, իրերի տոպրակ, ծովափնյա համի, փոփոխական համի, պարբերական համի, ուղեկցող համի, անտեսանելի տարածություն, խմելու ջուր, անուշ ջուր, հոսող ջուր, թարմ ջուր, եռված ջուր, ջրի դույլ, խոտի պաշար, վարսակի պաշար և այլն։

Ինչպես տեսնում ենք, բոլոր բարդություններում տերմինների բաղադրիչները գտնվում են որոշիչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի հարաբերություններում։ Որոշող մասը կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերով.

1. Ածականով։ *Օրինակ՝* շրջիկ գործակատար, երկաթե ճեմուղի, փայտե ճեմուղի, գապանակավոր կշեռք, խառն հասույթ, աճվճար գործարք, ռազմական երկաթուղի, ընդհանուր ներում, պարզ յծակ, առևտրական իրավունք, մասնավոր օրենսդրություն, ազատ պաշտոն, գնահատիչ հանձնաժողով, անջատ հաշիվ, շարժական գույք և այլն։

2. Ենթականով՝ *նրա ուղիղ ձևով և որևէ թեք հոլովաձևով։ Օրինակ՝* իրավագետ խորհրդատու, բազաժի տոմս, գրավի վկայագիր, զննության արձանագրություն, սուտ վկա, ապառիկների գրքույկ, մեղադրանքի բանաձևում, գործի վերաքննություն, ցերեկվա գրոհ, շղթայով գրոհ և այլն։

3. Դերբայով կամ դերբայի բարացած ձևով։ Օրինակ՝ ժապավինյալ մատյան, հնծյալ հրետանի, հոսող ջուր, հնծյալ մարտկոց և այլն։

5. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Գիտության և տեխնիկայի բնագավառների անվանակարգային տերմինաբանության մեջ լայն տարածում են գտել զանազան տիպի Հապավումները[48]։ *Օրինակ՝ ՍՍՀՄ, ՍՄԿԿ, բուհ տիպի Հապավումները տարբերվում են սովորական բառերից նրանով, որ ներկայացնում են միասին կամ առանձին ձևավորված տերմինների կրճատումը, այսինքն՝ նրանք արհեստականորեն կրճատված բառային միավորների կցմամբ առաջացած բարդություններ են, որոնց բաղադրիչները գոյություն ունեն միայն համապատասխան միարժեք անվանումների հիման վրա։ Ռուսերենի և հայերենի Հապավումների համեմատությունը ցույց է տալիս, որ նրանք մի շարք ընդհանրությունների հետ միասին ունեն նաև տարբերություններ։ Հայերենի նորագույն Հապավումները հիմնականում կազմվում են ռուսերենի պատճենմամբ կամ նմանողությամբ, ինչպես օրինակ՝* ՀամԼԿԵՄ *(Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասար-*

---

48 Գ. Սևակ. *Նշված աշխ., Երևան, էջ 185։*

դության միություն) ВЛКСМ (Всесоюзный Ленинский Коммунистический Союз Молодежи), կոլտնտեսություն *(կոլեկտիվ տնտեսություն)* колхоз (коллективное хозяйство), խնայդրամարկղ *(խնայողական դրամարկղ)* сберкасса (сберегательная касса), քաղբյուրո *(քաղաքական բյուրո)* политбюро (политическое бюро) *և այլն:*

Սակայն շատ են նաև այն դեպքերը, երբ հայերենի կազմության համար ռուսերենը սկզբնաղբյուր չի ծառայել, ինչպես օրինակ՝ կենտկոմ-կենտրոնական կոմիտե, աշխօր-աշխատանքային օր, ժողկրթբաժին-ժողովրդական կրթության բաժին և այլն: Հայերենում ռուսերենի ընդօրինակությամբ կազմվող նորագույն հապավումների զարգացման նոր փուլ սկսվեց 20-ական թվականներից՝ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո: Այդ տեսակետից մեր քննության նյութ հանդիսացող 20-ական թվականների ռուս-հայերեն և հայ-ռուսերեն տերմինաբանական բառարանների ընձեռած փաստերը չափազանց քիչ են: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ նախ՝ նորագույն հապավումների տեխնիկան դեռևս նոր էր արմատավորվում և ծավալվում ռուսերենում և, երկրորդ՝ քննարկվող վերոհիշյալ տերմինաբանական բառարանների ռուսերեն բառացանկերը, ինչպես հայտնի է, կազմվելով Հայաստանում, հայ մասնագետների կողմից, որոշ ուշացումով էին արձագանքում ռուսերենի բառապաշարային տեղաշարժերին և հատկապես բառակազմական նորույթներին: Բառակազմական այս եղանակը ինչպես ռուսերենում, այնպես էլ հայերենում լայն ծավալ ստացավ 30-ական թվականներից սկսած: Այդ և հետագա տասնամյակներում հիշյալ եղանակով կազմված տերմիններն ու բառերը այնպիսի չափերի հասան, որ մի շարք լեզուների համար (անգլերեն, ռուսերեն և այլն) կազմվել և հրատարակվել են նորագույն հապավումների հատուկ բառարաններ, ավելի քան 10 հազար բառ պարունակությամբ:

II. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ժամանակակից հայոց լեզվի տերմինաբանության հարստացման աղբյուրներից են նաև արևմտահայ գրական լեզվի տերմինները: Արևմտահայերեն տերմինները մուտք են գործում որպես պատրաստի միավորներ, իսկ բարբառային և գրաբարյան ձևերը իմաստների կոնկրետացմամբ կամ իմաստափոխությամբ վեր են ածվում տերմինների:

Հայերեն տերմինների հիմնական զանգվածը հավասարապես պատկանում է և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն գրական լեզուներին:

Հայերեն տերմինների ճնշող մեծամասնությունը, մանավանդ գիտատեխնիկական այն տերմինները, որոնք հրապարակ են եկել XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, հնարավոր չէ վերագրել այդ երկու լեզուներից որևէ մեկին և համարել միայն այս կամ այն լեզվի սեփականություն։ Անուրանալի է և այն հանրահայտ իրողությունը, որ հիշյալ տերմինների կազմության, մշակման ու տարածման գործում մեծ դեր են խաղացել առաջին հերթին Ս. Քաջունու, Ս. Երեմյանի մասնագիտական բառարանները, ինչպես նաև Վենետիկում, Վիեննայում, ինչպես և Կ. Պոլսում հրատարակված տարբեր մասնագիտություններին վերաբերող դասագրքերն ու ձեռնարկները։ Տվյալ դեպքում, խոսքը արևելահայ և արևմտահայ գրական լեզուների ընդհանուր տերմինաբանական բառապաշարի մասին չէ։ Խոսքը վերաբերում է այն տերմիններին միայն, որոնք չեն մերվել ժամանակակից հայերենի՝ արևելահայ գրական լեզվի բառապաշարին և գործածվել են միայն արևմտահայերենում։

20-ական թվականների գիտատեխնիկական տերմինների բառարանների հեղինակները օգտագործել են նաև այնպիսի տերմիններ և բառեր, որոնք մուտք չգործեցին ժամանակակից հայերենի բառային կազմը, խորթ մնացին արդի հայերենին և այժմ էլ գիտակցվում են որպես արևմտահայերենին հատուկ բառեր և լայն գործածություն ունեն արևմտահայերենում։ Այդ կարգի տերմիններից և բառերից հիշատակության արժանի են՝ իմֆնաշարժ–ավտոմեխենա, ավտոմոբիլ, գործանոց–լաբորատոռիա, իմֆնեկ–ավտոմատ, հյուլե–ատոմ, ժահիճ–բոմ, մանիշ–յոդ, գործողություն–վիրահատություն, հոպնակ–ձեռնասայլակ, եզր–տերմին, հուզարկու–ագիտատոռ, հուզարկություն–ագիտացիա, գրգռիչ–պրովոկատոռ, գրգռություն–պրովոկացիա, բնկերավար–սոցիալիստ, բնկերավարություն–սոցիալիզմ, համայնավար–կոմունիստ, համայնավարություն–կոմունիզմ և այլն։

Արևմտահայ այս կարգի տերմինների և բառերի փոխարեն արևելահայերենը ստեղծել և գործածում է հայերեն մեկ այլ համանշանակ. ինչպես՝ ձեռնասայլակ–հոպնակ, կամ էլ՝ մեծ մասամբ գործածվում են օտարարդի փոխառությունները. ինչպես՝ տերմին, ավտոմատ, ատոմ, բոմ, յոդ, կամ՝ ագիտատոռ, ագիտացիա, պրովոկատոռ, պրովոկացիա, սոցիալիզմ, կոմունիզմ, սոցիալիստ, կոմունիստ և այլն։

Վերոհիշյալից բնավ էլ չի հետևում, թե արևմտահայերենը դադարել է արևելահայ գրական լեզվին տերմիններ և բառեր մատակարարելուց կամ այլ կերպ ասած՝ ժամանակակից արևելահայ գրական լեզուն դադարել է յուրացնել արևմտահայերեն տերմիններն ու բառերը։ Այս կա-

պակցությամբ անհրաժեշտ է նշել, որ արևելահայերին գրական լեզուն միշտ էլ պատրաստակամորեն գործածել և գործածում է արևմտահայ այն հաջող տերմիններն ու բառերը, որոնց համարժեքները կամ համանշանակները չկան ժամանակակից արևելահայ գրական լեզվում:

Անհրաժեշտ է միաժամանակ ընդգծել, որ բառագործածության բնագավառում այդ երկու հայերեն գրական լեզուների մի շարք տարբերություններ աստիճանաբար վերանում և համահարթվում են վերջին տասնամյակներին մշակութային, գրական և գիտական փոխադարձ սերտ շփումների շնորհիվ:

Վերջին շրջանում դժվար է անգամ որոշել, թե այս կամ այն հայերեն նոր տերմինը արևմտահայերենում է ստեղծվել, թե արևելահայերենում, առաջին անգամ որ լեզվում է գործածվել, որն է փոխառու կամ փոխառու կողմը:

Հայոց լեզվի տերմինաբանության ընդհանուր շահերն էլ պահանջում են, որպեսզի վերանան այդ երկու գրական լեզուների միջև դեռևս գոյություն ունեցող տերմինաստեղծման և տերմինագործածության սկզբունքային որոշ տարբերությունները:

Իսկ ինչ վերաբերում է այն բոլոր հայերեն հաջող տերմիններին ու բառերին, որոնք կազմվում և գործածվում են արևմտահայերենում, արևելահայերենը՝ ինչպես միշտ, անհրաժեշտության դեպքում պատրաստ է դրանք նույնպես յուրացնելու:

III. ԳՐԱԲԱՐՅԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Տերմինաշինության հաջորդ ոլորտը գրաբարն է: Գրաբարյան ծագում ունեցող տերմինները բաժանվում են երկու խմբի՝

ա) տերմիններ, որոնք հունաբան գրողների ներկայացուցիչները ստեղծել են հունական տերմինների նմանությամբ՝ օգտագործելով գրաբարի բառերը, արմատները, ածանցները և այլն:

Գրաբարյան մի շարք բառերի վերակենդանացման փորձեր են նկատվում հատկապես Մ. Աբեղյանի ռազմական բառարանում, ինչպես, օրինակ՝ конница—այրուձի, городок—ղակիշ, և այլն:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի համակարգում այդ կարգի բառերը այնպես չեն գիտակցվում կամ ընկալվում իբրև գրաբարյան, ինչպես գրաբարի ամբողջ բառապաշարի այն մասը, որ ժառանգել է աշխարհաբարը:

Գրաբարյան փոխառության հարցերի մոտեցման միանգամայն ճիշտ

սկզբունքով է դեկավարվում, մեր կարծիքով Գ. Սևակը: Այդ հարցի կապակցությամբ ահա ինչ է գրում նա.

Գրաբարյան փոխառություն ասելով, այսպիսով մենք նկատի ունենք աշխարհաբարի ոչ թե այն բոլոր բառերը կամ բառաձևերը, որ գրաբարյան են և բարբառներում չկան (առաստաղ, աթոռ, ֆեոդալականություն և այլն), կամ կան այլ հնչյունակազմով (ինր, ձիճ, ալուր և այլն), այլ այն գրաբարյան բառերը, որոնք իրենց ստուգաբանությամբ կամ ձևաբանությամբ կապված են գրաբարի ձևաբանության ու բառակազմության օրենքների հետ և իրենք իսկ ակնարկում են իրենց գրաբարյան լինելը և կամ ակնառու կերպով տարբերվում են ժողովրդական խոսվածքի ու գրական աշխարհաբարի համապատասխան նույնանիշներից ու հոմանիշներից[49]»:

Ժամանակակից հայերենում գրաբարյան փոխառությունների տարբերակման հիշյալ տեսակետով առաջնորդվելով 20-ական թվականների քննարկվող բառարաններում նկատում են հետևյալ փաստերը.

ա) Գրաբարյան առ, ըստ, ընդ, ի, ց *նախդիրներով կազմված տերմիններ: Օրինակ՝* առձեռն (подручный), առկցում (аннексия), առհոսում (приток), առկախում (взвесь), առդիր (приложение) առանձին (домовой), *առիոչ* (аппеляция), ընդոստյուն (рикошет), ընդհատել (прервать), ընդփորվածք (подкоп), *ընդկախ* (подвесной), *ընդգետնյա* (почвенный), *ըստօրինություն* (закономерность), *ըստգործյա* (сдельный), *ըստժամյա* (почасовой), *ըստօրյա* (поденный), *ի սվին (հրամ.)* (в штыки!): *ի՛մուրն ի պատյան (հրամ.)* (шашки в ножны!), ի հրացան (հրամ.) (к ружью!), ի *ժիր (հրամ.)* (живо!), ի *ծնե կույր* (слепо рожденный), ի հաշիվ (аконто), ի *ցույց վճարիչի մուրհակ* (вексель по предъявлению), ցպահանջ (до востребования):

բ) Գրաբարյան ք *հոգնակիով կազմված տերմիններ ու բառեր: Օրինակ՝ սպասք, պարագայք* (прибор), *խնդիրք* (просьба), *ելք* (расход) *մուտք* (приход), *նստիք* (сиденье), *ճանապարհակիցք* (распутье), *գետնափորք* (галерея), *առաջք* (перед), *պահք, աննգապահք* (диета), *հորձք* (столбняк), *փորձառք* (эксперимент), *տացք* (выдача), *նմանշառք* (визировка):

գ) Գրաբարյան հոլովական, խոնարհման, դերբայական և այլ բարդացած ձևերով կազմված բառեր ու տերմիններ:

Գրաբարի սեռական հոլովաձևերով: Օրինակ՝ մսից հաշվեկշիռ

---

49 Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 124:

(вступительный) *կամ* (входящий баланс), մասից *մատյան* (входящий журнал) *և այլն:*

Անցյալ դերբայի ձևով. օրինակ՝ երկմիացյալ (двусводный), հավելյալ (добавочный), հեծյալ (конный, кавалерийский), մեռյալ (мертвый), ներառյալ (включительно), անկյալ (инвалид), ժապավինյալ *մատյան* (шнуровая книжка), կախյալ (зависимый), փոխատուրդյալ (доверитель).

Դրաբարյան բայական և այլ ածանցներով կազմված ձևեր: Օրինակ՝ ազուցք (вставка), կափուցք (погашение), մածուցք (желатин):

Բերված օրինակներից երևում է, որ դրաբարյան ոչ բոլոր ձևերն են կենսունակ գիտատեխնիկական հայերեն տերմիններ ստեղծելու գործում: Այդ տեսակետից համեմատաբար հաջող պետք է համարել դրաբարյան նախդիրներով, ինչպես նաև անցյալ դերբայի ձևերով ու ք հոգնակիով կազմվող տերմինները, այն էլ՝ որոշ վերապահությամբ: Համենայն դեպս ժամանակակից հայերենի գիտատեխնիկական տերմինաշինության մեջ դրաբարյան տարածված ձևերը հիմնականում դրանք են:

IV. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ուղղակի փոխառությունների ոլորտում Լ. Բլումֆիլդը տարբերում է բարբառային փոխառություններ, երբ փոխառյալ երևույթները անցնում են նույն լեզվական տարածքից, և մշակութային փոխառություններ, երբ փոխառյալ երևույթները գալիս են որոշ լեզուներից[50]: Առաջին դեպքում փոխառությունները կատարվում են մեկ լեզվի ներսում, երբ գրական լեզուն բառեր է փոխ առնում բարբառներից:

Հայերենում, այդ հարցում պարզություն է մտցնում Սևակը: «Բարբառային-ժողովրդական փոխառությունները մեր գրական լեզվի մեջ ժամանակակից հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 233:

52 Նույն տեղում:

Հասկանալի է, որ բարբառներից գրական լեզվին անցած բառերը, կամ բառաձևերի մեծագույն մասը, օրինակ՝ էլ–էլի, առջև, վրա, նրա, մենք, ենք, դաս, ընկնել, ծնվել և այլն, Գ. Սևակը փոխառություն չի համարում, որովհետև դրանք հանդիսանում են գրական աշխարհաբարի էությունը որոշող բաղկացուցիչ տարր: Դրանք ծնիչ տարրեր են, ծնողից ժառանգին անցած բնածին հատկանիշ[53]:

Հայերեն բարբառային բառապաշարը նույնպես տերմինակազմության աղբյուր է: Եթե որևէ հասկացության համար ժամանակակից հայոց գրական լեզվում չկա անհրաժեշտ բառ, ապա ընտրվում է այնպիսի բարբառային բառ, որը ամբողջությամբ և ճշտորեն է արտահայտում համապատասխան գրական հասկացությունը, ընդ որում իր հնչյունական ձևով էլ այն պետք է մոտ լինի գրական լեզվին:

Տերմինաբանական բառապաշարում բարբառային բառերի օգտագործման մասին շատ է խոսվել: Մասնագետները մեծ մասամբ խրախուսում են բարբառային բառերի մուտքը տերմինաբանական բառապաշարը: Այդ տեսակետից ուշագրավ է այն փաստը, որ բարբառներում կան դարերով փորձված շատ բառեր, որոնք կարելի է օգտագործել որպես տերմիններ, արհեստական բառեր ստեղծելու փոխարեն, սակայն ժամանակակից փուլում բարբառային տերմինների մուտքը գրական տերմինաբանության մեջ համեմատաբար աննշան է: Այդ երևույթը բացատրվում է նրանով, որ ինդուստրացման պրոցեսում տեղի է ունենում հին բարբառային-ֆոլկլորային և արհեստներին վերաբերող բառապաշարի աստիճանական մոռացման, արտամղման պրոցես:

Ժամանակակից հայերենի տերմինաբանական բառապաշարում և հատկապես մեր քննության նյութ հանդիսացող 20-ական թվականների ռուս-հայերեն և հայ-ռուսերեն տերմինաբանական բառարաններում որոշակի տեղ են գրավում տարբեր կարգի բարբառային բառերն ու բառաձևերը, որպես գիտական տարբեր հասկացությունների համապատասխան անվանումներ:

Այդ կարգի բառերից առաջին հերթին պետք է հիշատակել բույսերի, ինչպես նաև կենդանիների բարբառային-ժողովրդական ծագում ունեցող անունները: Դրանք տեղ են գտել հատկապես Վ. Արծրունու բժշկական բառարանում, մասամբ էլ երկաթուղային տերմինների ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարաններում:

ա) Բուսանուններ: Օրինակ՝ նվիկ—հայոց բանջար, կաճար. աբրա-

---

53 Նույն տեղում:

ճամյան ծառ, գոթից ճանկ. ծուռ խոտ–ջրհորի գինձ. բաղշտակ–ալպուճ. լախուր–կարոս. ոչխարախոտ–փոնշուկ, բոխ. չարխոտ, գազ–խազիրան. ջրիմուռ–լոռ, խաճին. խլոպուզ–շնդեղ, սորնջան. ձնծաղիկ–սապատուկ, նավրոս, չիկտեմ. բանգ–խողի բակլա. չիտամ–ջոկ. եղբորոս–մրտիտակ; վրացական կոճ. բոգ–նկատեղ, օձի դեղ. գետնաբուր–իծամորի. կարմիր պղպեղ–ծիծակ. անանուխ–դաղձ. կմշտուուկ–վայրի ուհան, պատկառուկ–հապտուկ, ամոթխած միմոզա. սկեղուկ–կաղին. աշոռախոտ–ոչլախոտ. ֆարկտուուկ–փրփրիճակ, վիմահերձ. վիշապարյուն–աղբրաց արյուն. ծոբոր–թյում, դաշտի ուրց և այլն:

Հատկանշական է, որ այդպիսի դեպքերում որպես լատինական և ռուսական տերմինների համարժեքների համանշանակ բերվում են մեկից ավելի հայերեն հոմանիշ բառեր, որոնք մեծ մասամբ բարբառային-ժողովրդական ծագում ունեն: Հաճախ էլ բարբառային բառերը տրվում են որպես դրական բառերի հոմանիշներ:

բ) Կենդանիների անուններ. Օրինակ՝ մլակ–մոծակ. պիտուկ–սրատուտ–ճիճու. և այլն:

Բուսանունների և կենդանական անունների հոմանիշների առկայությունը հիշյալ բառարաններում վկայում է, որ այդ բառերի տերմինացման պրոցեսը դեռ չի ավարտվել: Միաժամանակ քննարկվող շրջանի տերմինաբանական բառարանների փաստերը խոսում են այն մասին, որ գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառների հայերեն տերմինաբանության ստեղծման գործում ավելի լայն չափերով է ներգրավվում բարբառային-գավառական բառապաշարը:

Բուսանունների և բարբառային բառապաշարի օգտագործումը հայ տերմինաշինության մեջ կատարվում է, բուն երևույթին, երկու ուղղությամբ:

ա) Բարբառային-գավառական բառերի տերմինացում և

բ) տերմինակազմության բնագավառում բարբառային քերականական միջոցների և ձևերի օգտագործում:

Կարելի է շատ օրինակներ բերել 20-ական թվականներին հրատարակված ռազմական, երկաթուղային, շինարարական և հատկապես բժշկական բառարաններից, որտեղ որպես նշված և հարակից բնագավառների գիտական հասկացությունների համապատասխան անվանումներ բերվում են բարբառներում և ժողովրդական-խոսակցական լեզվում գործածվող լեզվի բառապաշարի սովորական բառերը:

Հետաքրքրական է, որ հիշյալ բառարաններում բարբառային շատ

բառեր՝ իմաստային փոփոխությամբ գործածվում են որպես պատրաստի տերմիններ։

Այսպես, օրինակ, որպես բժշկական համապատասխան տերմիններ գործածվում են հիվանդությունների այնպիսի անուններ. ինչպես՝ կարմրուկ, դեղնուկ, կապույտ հազ, ճարպուխ, ջրջրուկ, ջրծաղիկ, ջրգողություն, զորանուկ, կոծիծ, գարի, գարեկ, աղվեսացավ, անցուցք *և այլն։ Որոշ դեպքերում բառարանում տվյալ տերմինի համար բերվում են մեկից ավելի բառեր, որպես հոմանիշներ. ինչպես՝* կնեպ-փոճոկ, պատիճ. զոլշերտագիծ. շեշ-ծաղկատոպի. խլիճ–ծլուլ. շղթան–խախաց. ճաթան–կտավ. ժաժիկ–շոռ. լեշ–դիակ. փոնք–ծալ. գկռտոց–դխտոց. նոի–պատճառավոր, երևխոռվ. մռմնջուկ–թրմոր, որքին. գարի–գարեկ. թլվատ–կակազ. խիպիլլիկ–մղձավանջ *և այլն։*

Այս և նման դեպքերում, երբ միևնույն հասկացության համար բերվում են մեկից ավելի բառեր, դրանցից միայն մեկն է լեզվում հանդես գալիս որպես տերմին, իսկ մյուսները դիտվում են իբրև լեզվի սովորական բառեր։

Նույն ձևով նաև ռազմական, երկաթուղային և շինարարական կառուցվածքների բառարաններում բարբառների և ժողովրդական-խոսակցական լեզվի շատ բառեր ուղղակի իմաստներով կամ էլ որոշ դեպքերում իմաստների կոնկրետացմամբ վեր են ածվել տերմինների։ Դրանց մի զգալի մասը այժմ, ճիշտ է, հաստատուն տեղ չի գրավել հայոց լեզվի տերմինաբանական համակարգում, բայց երևույթը ինքնին շատ հետաքրքրական է։

ա) Ռուս-հայերեն ռազմական բառարանում *տեղ գտած* բարբառային ծագում ունեցող տերմիններ։

Օրինակ՝ քեյք (аллюр), կոմբաճ (барабанная палка), ձիծեռնյակ, ճոճիկ (блок), սեռնյակ (болт), մանկեռ (борона), խզատակ (затылок), ճեծվոր (всадник), ճիար (голенище), իծաշարուկ (гуськом), ճավդան, շռնոբակ (желоб дождевой), քեբբ (зазубрина), ակռկել (зацепить), ափլակ (застежка), գլդոն (каток), իշուկ, իշուռնուկ (козлы), բճիր (кол), կոլոլել (скатать), խորխոլ (трещина), կարճատ, վիլալար (катушка), պռունկ (закраина), երեսաճց (поверхностный), փորքաշ (подпруга), խեչակ, խեչմար (сошка), օձաշարուկ (строй змейкой)

բ) Ռուս-հայերեն երկաթուղային տերմինների բառարան

Օրինակ՝ արրա (тара), բխով (кандалы), բուրդու (бурав, бу-

равчик), գլեպ (осколок), թոմառի (оптом), թրաշ (гранение, шлиф), ճիլոպ (мочалка), ճիմ (дёрн) *և այլն:*

գ) Ռուս-հայերեն շինարարական կառուցվածքների բառարան

ճաղ (балясина), փուշտա (горбина), ալաճոր (колодец отстойный), չորսու (брус), քոնճ (хрящ) *և այլն:*

Բարբառային բառերի տերմինացման այս պրոցեսը, որ տեսնում ենք 20-ական թվականներին, հետագայում դանդաղում է:

Այս շրջանում նկատվում է հատկապես բարբառային բնիկ ածանցներով, բարբառային ածանցներով կազմված բառերի տերմինացման շատ օրինակներ: Այդ տեսակետից առանձնապես կենսունակ են դառնում՝ ուկ, ովի, չեֆ *և այլ ածանցները:*

Օրինակ՝ մեռուկ, կախուկ, կաթնուկ, կպուկ, կցուկ, ֆայլուկ, *կամ՝* ճզմուկ (выжимка), ճանուկ (экстракт), կրծքաճեղձուկ (грудная жаба), կապտուկ (синюха), թրվուկ (закись), պառկելաճարուկ (пролежень), թանձրուկ (гуща) *և այլն: (Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարան):*

Դնովի (вставной), քանդովի (разъемный), ծալովի (складной), վճարովի (платный), քարշովի (тяговый), կիսովի, խփովի, ածովի *և այլն: (Երկաթուղային տերմինների ռուս-հայերեն բառարան):*

Կրողչեք (провозная плата), ճանճաոողչեք (провизия), *մթերոողչեք* (магазинат) *և այլն: (Առևտրահաշվապահական տերմինների ռուս-հայերեն բառարան):*

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

I. ՕՏԱՐԱԶԳԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ըստ ծագման լեզվի բառապաշարը բաժանվում է «բնիկ» և «փոխառյալ» բառերի, ընդ որում բառերի այդ երկու կարգերն էլ իրենց հերթին ունեն ենթաբաժանումներ: Լեզվի բառապաշարի միջուկը կազմում են առաջին հերթին «բնիկ» բառերը, այսինքն՝ այն բառերը, որոնք տվյալ լեզվում եղել են հնագույն ժամանակներում և, երկրորդ, այն փոխառյալ բառերը, որոնք փոխ են առնվել այլ լեզուներից տվյալ լեզվի զարգացման նախնական շրջանում և ուշ շրջանի փոխառություններից տարբերվում են ոչ այնքան ծագումով, որքան փոխառու լեզվի մեջ հնչյունա-

կան տեսակետից մերձենալու կամ մերվելու աստիճանով: Այնինչ ուշ շրջանի փոխառությունները փոխառու լեզվում ենթարկվում են հնչյունական ավելի աննշան փոփոխությունների, իսկ գրային ձևով նրանք գրեթե բոլորովին չեն փոխվում:

Օտար լեզուներից կատարվող փոխառությունների ուսումնասիրությունը բավականին մեծ ավանդույթ ունի ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան լեզվաբանության մեջ: Փոխառությունների հետ կապված հարցերը պետք է քննել ժողովուրդների և երկրների սոցիալ-տնտեսական և մշակութային փոխհարաբերության հարցի ամբողջության մեջ: Դրանք բարդ են և բազմաբնույթ՝ ընդգրկելով տարբեր, առաջին հերթին լեզվաբանական հարցերի մի բարդ համալիր: Այդ հարցերից առավել հրատապ են և սույն աշխատանքում ուսումնասիրվում են հետևյալները:

1. Փոխառության հասկացությունը:
2. Փոխառության պատճառները:
3. Փոխառության տեսակները կամ տիպերը:
4. Փոխառության աղբյուրները:
5. Փոխառյալ տերմինների բնույթը փոխառնող լեզվում:
6. Փոխառության դրական և բացասական կողմերը:
7. Փոխառյալ տերմինների յուրացումը:

1. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած փոխառության հարցերին նվիրված լեզվաբանական գրականության առատությանը, դեռևս չկա միասնական կարծիք այն մասին, թե ինչ է փոխառությունը, որ լեզվական երևույթն է կոչվում փոխառություն, ինչպիսիք են փոխառությունների տիպերը: Քանի որ սույն աշխատանքի նպատակը չէ մասնագիտական գրականության տեսություն տալը, մենք սահմանափակվում ենք միայն մեր կարծիքը ներկայացնելով այդ հարցի մասին:

Փոխառություն է կոչվում լեզվական տարբեր տարրերի փոխառումը մեկ լեզվից մյուսը: Տարբեր տարրեր ասելով պետք է հասկանալ լեզվի կառուցվածքի տարբեր մակարդակների միավորները, այսինքն՝ հնչյունական, ձևաբանական, շարահյուսական, բառային (լեքսիկական), իմաստաբանական միավորները: Հենց այդ պատճառով «փոխառություն» տերմինը օգտագործելիս, պետք է անպայման նշել, թե որ մակարդակի վրա կատարված փոխառությունների մասին է խոսքը, այսինքն՝ անհրաժեշտ

է սահմանազատել՝ հնչյունական, ձևաբանական, շարահյուսական, բառային և իմաստաբանական (սեմանտիկական) փոխառությունները։ Փոխառությունների այդ բոլոր տեսակները գտնվում են որոշ ստորակարգական (հիերարխիական) կապի մեջ։ Առավել հաճախ և բնորոշ են բառային փոխառությունները, այսինքն՝ բառերի փոխառությունները, իսկ ամենահազվադեպը հնչյունական փոխառություններն են, այսինքն՝ հնչյունների (հնչույթների) փոխառությունները։ Շատ տարածված են իմաստաբանական փոխառությունները, այսինքն՝ բառապատճենումները։

Ձևաբանական և շարահյուսական փոխառությունները միջանկյալ տեղ են գրաղեցնում և շատ դեպքերում կախված են երկու լեզուների շփման աստիճանից։ Բառային փոխառությունը օտարազգի ազդեցության առաջին աստիճանն է[54]։ Մյուս մակարդակների փոխառությունները, օրինակ՝ ձևաբանական կամ հնչյունաբանական, անհնարին են առանց բառային փոխառությունների առկայության։ Որպեսզի լեզուն կատարի ձևույթի կամ հնչույթի փոխառություն, ըստ երևույթին պետք է ունենա բառային փոխառությունների հարուստ ավանդույթներ։ Այս առթիվ Հ. Պաուլը գրում է. «Բառերը միշտ փոխառվում են ամբողջովին. բառակազմական առանձին վերջածանցներ և վերջավորություններ երբեք չեն փոխառվում։ Սակայն միևնույն վերջածանց ունեցող բառերի մեծ շերտի փոխառության դեպքում, այդ բառերը ճիշտ այնպես, ինչպես հարազատ լեզվի բառերը նույնանման ածանցով կարող են կազմել մի խումբ, որը ժամանակի ընթացքում կարող է գործուն դառնալ[55]։

Իմաստաբանական և շարահյուսական փոխառությունները նույնպես փոխառու լեզվի բառաիմաստային համակարգի և շարահյուսական կարգի հետ լավ ծանոթություն են պահանջում։

Սույն աշխատանքի խնդիրներից և նպատակներից ելնելով, մենք կխոսենք միայն բառային և իմաստային փոխառությունների մասին։ Այդ պատճառով փոխառություն տերմինը մենք օգտագործում ենք բառային և իմաստային փոխառությունների իմաստով։

2. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Լեզվական փոխառություններն ունեն արտաքին և ներքին, այսինքն՝ արտալեզվաբանական և լեզվաբանական պատճառներ։ Փոխառու-

54 *Л. П. Крысин*, Иноязычные заимствования в современном русском языке, М., 1968, стр. 19.

55 *Г. Пауль*, Принципы истории языка, М., 1960, стр. 469.

թյունների արտաքին՝ արտալեզվաբանական պատճառները ժողովուրդների միջև գոյություն ունեցող քաղաքական, տնտեսական, արդյունաբերական և մշակութային կապերն են: Քանի որ լեզվի բառային կազմը լեզվի առավել փոփոխուն մասն է, և, այսպես ասած, «բաց է» արտաքին ազդեցությունների համար, ապա հասարակության սոցիալական կյանքում կատարվող փոփոխությունները առաջին հերթին արտահայտվում են բառային կազմի մեջ: Քաղաքական, մշակութային և այլ կապերի ակտիվացումը ազդում է լեզվական փոխառությունների ակտիվության վրա և հակառակը:

Ինչ վերաբերում է փոխառությունների ներքին՝ լեզվաբանական պատճառներին, ապա պետք է նշել, որ նրանց հայտնաբերումը և պարզաբանումը բավականին բարդ և հաճախ դժվարին հարց է, մանավանդ, որ այն համարյա չի լուսաբանված մասնագիտական գրականության մեջ: Փոխառությունների ամենահիմնական պատճառը լեզվում որևէ գաղափարի, հետևաբար նրա անվանման բացակայությունն է: Այս դեպքում լեզուն անպայման դիմում է փոխառության, ընդ որում այդ փոխառությունը կատարվում է կամ բառային, կամ էլ իմաստային մակարդակներով, այսինքն՝ բառը կամ փոխ է առնվում, կամ էլ՝ պատճենվում: Այն հարցը, թե դրանցից որն է նախընտրում լեզուն, կախված է տվյալ լեզվի ավանդույթներից, լեզվի պատմական զարգացման ընթացքից և կոնկրետ բառի բնույթից, ինչպես նաև նրանից, թե այդ բառը փոխառու լեզվում պատճառաբանված է, թե ոչ, գործածական է, թե ոչ և այլն:

Փոխառության երկրորդ պատճառը բազմիմաստության վերացման ձգտումն է լեզվի բառային կազմում, նամանավանդ, տերմինաբանական բառապաշարում:

Փոխառության երրորդ պատճառը համապատասխան հասկացության ճշտման և մասնավորման պահանջն է:

3. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԿԱՄ ՏԻՊԵՐԸ

Փոխառված տերմինները լեզվում ներկայացվում են երկու հիմնական խմբով՝

1. Տերմին-պատճեններ, որոնք օտար բառի իրային-առարկայական նշանակության վերարտադրումներն են սեփական լեզվական նյութի միջոցով. ինչպես՝ պարգևադրամ (наградные деньги), պարգևաթերթ (наградный лист), ճակագազ (противогаз), պահպանագիր (охранный лист), ծխածածկույթ (завеса дымовая), ճրածածկույթ (завеса

огневая), լուսածածկույթ (завеса световая), *և այլն։ (Ռուս-հայերեն ռազմական բառարան)։*

2. Տերմիններ, որոնք պահպանում են իրենց իմաստը (նշանակությունը), ձևաբանական կառուցվածքը կրում է միայն որոշ հնչյունական փոփոխություններ, այսինքն՝ լրիվ (լիակատար) փոխառություններ են։ ***Օրինակ՝*** աբստրակտ (абстрактный), աբստրակցիա (абстракция), ագենտ (агент), աբզաց (абзац), ազարտ (азарт), աբսենտ (абсент), ազբեստ (азбест), ագրեգատ (агрегат), ազիմուտ (азимут), ազոտ (азот), ալբոմ (альбом), ալյումին (алюминий), ամբուլատորիա (амбулатория), ամպլիտուդ (амплитуда), աերոպլան (аэроплан), ավիատոր (авиатор), ավիացիա (авиация), դոտացիա (дотация), կաբինետ (кабинет), կաբել (кабель), կոմունա (коммуна), կոմունիզմ (коммунизм), կոմունիստ (коммунист) *և այլն։*

Փոխառությունների մեջ տարբերում են հետևյալ երկու տիպերը՝ ուղղակի փոխառություններ և իմաստային պատճենումներ։ Ուղղակի են կոչվում այն փոխառությունները, որոնք կառուցվածքով չեն տարբերվում իրենց օտարալեզու նախատիպից։ Իմաստային պատճենումները այն բառերն են, որոնք միայն փոխ են առնում օտար բառի նշանակությունը, բայց կազմվում են մայրենի լեզվի միջոցներով[56]*։ Այս դեպքում փոխառնվում են ոչ թե բառերը, այլ հասկացությունները, ընդ որում օտար բառերը թարգմանվում են բառացի։ Պատճենումը օտար բառի թարգմանություն է կամ նրա արտահայտությունը առանձին մասերով՝ այդ մասերի անպայման հետագա մեխանիկական միացմամբ՝ փոխառու լեզվի բառակազմական օրինաչափությունների համաձայն։*

Փոխառությունների հաջորդ ենթաբաժանումը՝ բանավոր և գրքային փոխառությունների տարբերումն է։ Բանավոր փոխառությունը տեղի է ունենում խոսակցական շփման միջոցով, և այդ պատճառով փոխառյալ բառերը հեշտությամբ են յուրացվում լեզվում, բայց շատ հաճախ նրանք ժողովրդական ստուգաբանմամբ ենթարկվում են աղավաղման կամ աղճատման։ Նրանք համակարգային բնույթ չեն կրում և հաճախ ազատում են լեզուն։

Գրքային փոխառությունները տեղի են ունենում գրային ճանապարհով և երկար ժամանակ մնում են ավյալ լեզվի բանավոր խոսքում չյուրացված։ Եվ այդ իսկ պատճառով նրանք իրենց հնչյունական տեսքով և

---

56 *Г. П. Пядусова,* О заимствованиях английских спортивных терминов во французском языке. Вестник ЛГУ, № 20, 1968, вып. 4, стр. 157.

նշանակությամբ մոտ են լինում փոխառու աղբյուրին և պահպանում են փոխառվող լեզվի բերականության և հնչյունական կառուցվածքներին խորթ տարրեր:

Անհրաժեշտ է նշել, որ տերմինաբանության մեջ ավելի տարածված են գրքային փոխառությունները, որոնք ըստ երևույթին մասնագիտական բազմազան և բազմաբանակ դրականության արդյունք են:

Տերմինաբանական գրքային փոխառությունների արժեք ունեն 1920-ական թվականների ռուս-հայերեն տերմինաբանական բառարաններում առատորեն դետեղված մի քանի հազարի հասնող տերմինները, որոնց մի ստվար մասը այդ ժամանակաշրջանում հայերեն համանշանակների բացակայության կամ անհաջող լինելու պատճառով, լայնորեն գործածական էր մասնագիտական գրականության մեջ: Այդ կարգի տերմինների տարածման աղբյուրը փաստորեն գրականությունը եղավ: Օրինակ՝ թեոդոլիտ (теодолит), թեոֆազերիտ (теофазерит), ինդեքս (индекс), ինդիկատոր (индикатор), իներտ (инертный), իներցիա (инерция) և այլն:

Փոխառությունները լինում են՝ անմիջական և միջնորդավորված: Անմիջական փոխառությունները այն փոխառյալ բառերը կամ տերմիններն են, որոնք կատարվում են տվյալ բառերի սկզբնաղբյուրը հանդիսացող լեզվից:

Միջնորդավորված են համարվում այն փոխառությունները, որոնք փոխառու լեզվի մեջ մուտք են գործում ոչ թե բառի սկզբնաղբյուր հանդիսացող լեզվից, այլ որևէ այլ լեզվի միջնորդությամբ:

Հայերեն նորագույն փոխառյալ տերմինների ճնշող մեծամասնությունը կատարվել է ռուսերենի միջոցով և այդպիսով պատկանում է միջնորդավորված փոխառությունների թվին: Վերոհիշյալ կարգի փոխառյալ տերմինները, ինչպես հայտնի է, իրենց հնչյունական կազմով, այսինքն՝ արտաքին տեսքով, ինչպես նաև արտահայտած իմաստով համընկնում են ոչ թե ծագումով սկզբնաղբյուր հանդիսացող լեզվի, այլ անմիջապես ռուսերենի համապատասխան տերմինների հետ:

Այժմ մի քանի խոսք փոխառությունների կառուցվածքային տարբերակման մասին: Լեզվական փոխառությունների կառուցվածքային տարբերակման դաղափարը պատկանում է Ե. Հաուգենին, որն այն առաջարկել է 1950 թվականին: Նա տարբերակում է երեք տիպի օտարազգի բառեր:

1. Բուն փոխառություններ (loan-words)՝ բառեր առանց ձևաբանական փոխարկման սուբստիտուցիայի, այսինքն՝ բառեր, որոնք աղ-

բյուր լեզվում ամբողջապես համապատասխանում են իրենց նախատիպին:

2. Փոխառություն-հիբրիդներ (loan-blends)՝ բառեր մասնակի ձևվաբանական փոխարկմամբ, այսինքն՝ բառեր, որոնք միայն մասամբ են բաղկացած օտար տարրերից:

3. Բառապատճեններ (loan-shifts)՝ բառեր լրիվ ձևաբանական սուբստիտուցիայով կամ իմաստային փոխառություններ (semantic loans)[57]:

Հայոց լեզվում և հատկապես 1920-ական թվականների ռուս-հայերեն տերմինաբանական բառարաններում դեռևս առաջին տիպի փոխառությունների թվին են պատկանում միայն անունները, գլխավորապես դոյականները, ինչպես՝ աբստրակտ, աբստրակցիա, ագրեգատ, տրակտոր, մելիորացիա, մանուֆակտուրա, կոնֆլիկտ, կոնցեռն, դիվիդենտ, դիրեկտոր, դիրեկցիա և այլն:

Երկրորդ տիպին կարող են պատկանել համարյա բոլոր խոսքի մասերը, որովհետև այդ դասերին վերաբերող բառերի փոխառությունը կապված է անհրաժեշտ քերականական ձևավորման հետ, այսինքն՝ օտարազգի ածանցները սեփականներով փոխարինումով:

ա) Բայերի փոխառության դեպքում՝ мобилизовать—մոբիլիզացնել эвакуировать—էվակուացնել, комбинировать—կոմբինացնել, оккупировать—օկուպացնել, нормализовать—նորմալացնել կամ նորմավորել և այլն:

բ) Դոյականների փոխառության դեպքում: Օրինակ՝ դարվինականություն (дарвинизм), մագնիսականություն (магнетизм), պրովոկատորություն (провокация), պրոֆեսորություն (профессура), կոնկրետություն (конкретность) և այլն:

գ) Ածականների փոխառության դեպքում: Օրինակ՝ ազոտային, ազոտական (азотный), ալյումինե (алюминевый), ալկոհոլային (алкогольный), կոլխոզային (колхозный), սովխոզային (совхозный), կոմպոզիտորական (композиторский) և այլն:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բայական փոխառությունները վերաբերում են երկրորդ տիպի փոխառություններին: Ընդհանրապես գործնականորեն երկրորդ տիպի փոխառությունները կարող են պատկանել բառերի քերականական բոլոր դասերին: Նույնը կարելի է ասել երրորդ

[57] *E. Haugen*, The analisis of linguistic borrowing, „Language", 1950, vol. 26, № 2.

տիպի մասին: Օրինակ, դժոխամեքենա (адская машина), հարցաթերթիկ (анкетный лист), յուղաներկ (краска масляная), բետոնախառնիչ (бетономешалка), ջրապարկ (мешок водяной), ենթաճեծան (подбалка) և այլն:

4. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Օտարազգի փոխառությունների վերլուծության ժամանակ նախ և առաջ պետք է պարզել յուրաքանչյուր բառի աղբյուրը և նրա օտարազգի նախատիպը: Օտարազգի բառերի աղբյուրները պարզելու համար սովորաբար բերվում են հետևյալ փաստարկները[58]:

1. Բառի հնչյունական, ձևաբանական և ընդհանրապես կառուցվածքային հատկանիշները՝ որպես լեզվական որոշակի համակարգի պատկանող տարրեր: Օրինակ՝ սովետ, բոլշևիկ, մենշևիկ և այլ բառեր հաստատ կարող ենք ասել, որ ռուսերենից են փոխառված, որովհետև նրանք իրենց հնչյունաբանական հատկանիշներով ավելի մոտ են ռուսական ձևերին, քեև ռուսերենում էլ դրանք շատ դեպքերում կարող են փոփոխված լինել:

2. Պակաս դեր չունեն նաև ոչ լեզվական տվյալները, մանավանդ, երբ խոսքը այնպիսի բառերի ծագման մասին է, որոնք նշանակում են որևէ երևույթ: Հաճախ առարկայի կամ իրի մասին լեզվական տվյալները հաստատվում են տվյալ իրերի և առարկաների անվանման վերաբերյալ պատմական տվյալներով կամ ընդհակառակը:

3. Հաշվի առնելով լեզվական և պատմական տվյալները այս կամ այն առարկայի կամ իրի մասին, պետք է նկատի ունենալ նաև այն, որ երբեմն լեզուն փոխ է առնում որևէ թեմատիկական խմբի ոչ թե մեկ, այլ մի քանի բառ: Եվ եթե այդ խմբի մի բառի աղբյուրը հայտնի է, ապա հասկանալի է, որ մյուս բառերը ևս պատկանում են այդ աղբյուրին[59]:

Որոշ մասնագետներ ժամանակակից զարգացած լեզուների և ընդհանրապես ողջ քաղաքակիրթ աշխարհի սեփականությունն են համարում անտիկ շրջանի տերմինաբանական ֆոնդը, որպես որևէ «աղգային» հրահանգավորումից զուրկ և «չեզոք» տերմինաբանություն: «Տերմիննե-

---

58 Л. П. Крысин. Иноязычные слова в современном русском языке, М., 1968. стр. 53.

59 Այդ մասին տե՛ս նաև Н. С. Авилова. Слова интернационального происхождения нового времени в русском литературном языке (с заимствованной основой глаголов), М., 1967.

րի կազմավորման համար, սկսած վերածննդի ժամանակաշրջանից, գոյություն ունի և երկրորդ ճանապարհը, այսինքն՝ հունարեն և լատիներեն լեզուների բառերն ու բառակազմական կաղապարներն ու տարրերը: Այդ բացատրվում է նրանով, որ, նախ՝ անտիկ շրջանում արդեն ստեղծվել էին բազմաթիվ գիտական, տեխնիկական և քաղաքական տերմիններ (պատմական, փիլիսոփայական, գրականագիտական, բժշկական, երկրաչափական, աստվածաբանական և այլն). երկրորդ՝ հունական ու լատինական ուղղակի նշանակության բառերը կարելի է օգտագործել այլ լեզուներում փոխառերական իմաստով, որպես տերմիններ (համմտ. հունական dekan «տասնապետ», լատինական seminaria «մանկարան, բուծարան»). երրորդ՝ հին հունարեն և լատիներեն արմատներից նրանց բարդացմամբ ու ածանցմամբ կարելի է ցանկացած լեզվում ստեղծել բազմաթիվ արհեստական տերմիններ: Քանի որ անտիկ ժառանգությունը գոյություն ունի թե բառերի և թե բառակազմական տարրերի տեսքով և այժմ, ըստ այդ մասնագետների, ոչ մեկին արդեն չի «պատկանում», ուստի և այն կարող են օգտագործել բոլոր ժողովուրդները, դրանք հարմարեցնելով իրենց լեզվին, այսինքն՝ յուրացնելով այդ բառերը և բառակազմական տարրերը իրենց քերականության և հնչյունաբանության օրենքների համապատասխան[60]:

Սկզբնաղբյուր լեզվի ընտրությունը պայմանավորված է ոչ պատմական պրակտիկայով և ժողովուրդների մշակութային շփումով: Օրինակ՝ քննարկվող բառարաններում, որոնք հիմնականում ռուս-հայերեն են, կազմողները որպես փոխառության աղբյուր ընտրել են ռուսերեն լեզուն, թեև շատ դեպքերում այդ տերմինները ոչ թե բնիկ ռուսերեն բառեր են, այլ փոխառյալ, այսինքն՝ ռուսերենն էլ իր հերթին փոխ է առել այլ լեզուներից:

Փոխառյալ տերմինների մեջ, սակայն, իրենց առանձնահատկություններով, իրենց ազգային, ավելի ճիշտ՝ տեղային հատկանիշներով առաջին հերթին առանձնանում են տեղայնաբանությունները:

5. ՏԵՂԱՅՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարբեր լեզուների բառային նյութի քննությունը ի հայտ է բերում մի շատ հետաքրքիր երևույթ: Լեզվական զուգահեռ փոխառությունները շատ հաճախ տարածված են տարբեր, ազգակից և ոչ ազգակից լեզուներում, որոնք վերաբերում են որոշակի տարածքի: Այս դեպքում նրանք

60 *А. А. Реформатский*, Введение в языкознание, М., 1961, стр. 86.

ընդհանուր են միայն այն լեզուների համար, որոնց կրողները սովորաբար մոտ են տնտեսական, մշակութային հարաբերություններով և բնորոշ չեն այն լեզուների համար, որոնք գտնվում են այլ տարածքներում (արեալներում)։ Փոխառված այս բառերը յուրաքանչյուր լեզվում կարող են ունենալ տարբեր հնչում, իմաստ և գրություն, որը անհրաժեշտ է ընդգծել այսպես կոչված «միջազգայնության» ավանդական հասկացության կապակցությամբ։ Այսպիսի բառային միավորները ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված է անվանել տեղայնաբանություններ (ռեգիոնալիզմներ)։

Տեղայնաբանությունները դժվար են թարգմանվում և եթե թարգմանվում են, ապա դժվար են մտնում լեզվի մեջ։ Օրինակ, բալալայկա՝ ռուսական ժողովրդական լարային երաժշտական գործիք. բայան՝ բարդ կառուցվածքով մեծ հարմոն. ակին՝ միջինասիական ժողովրդական երգիչ, կորզար՝ ուկրաինական ժողովրդական երգիչ, գուսան. կարմանյոլա՝ ֆրանսիական հեղափոխական երգ. աուլ-հյուսիսային կովկասյան լեռնցիների բնակավայր. խուտոր՝ կազակային բնակավայր. կադետ՝ ցարական ռազմական միջնակարգ դպրոցի սան, նույն ձևով նաև՝ ոլան, յունկեր և այլն։ Այդպիսի բառերը բավականին շատ են և մեծ մասամբ չեն թարգմանվում։

Տերիտորիապես սերձավոր (նույն տարածքին պատկանող) մի շարք լեզուներում (ինչպես ազգակից, այնպես էլ ոչ ազգակից) կարելի է բացահայտել փոխառյալ բառերի ընդհանուր բառային ֆոնդ. մի բան, որ բնորոշ չէ տարբեր տարածքների պատկանող լեզուների համար։ Այս բառերի հնչյունական, իմաստային և գրային ձևը նկատելի տարբերություններ է տալիս։ Այս պատճառով գրային և իմաստային առումները չեն կարող տեղայնաբանությունների որոշման հուսալի չափանիշներ ծառայել։

Մի քանի խոսք տեղայնաբանությունների գրային կողմի մասին։ Ամենից առաջ պետք է նկատել, որ, մի կողմից, իրենց բառային կազմում տեղայնաբանություններ ունեցող լեզուները կարող են օգտվել գրության տարբեր համակարգերից, մյուս կողմից՝ տարբեր տարածքների մեջ մրցող լեզուները կարող են ունենալ գրության միատեսակ համակարգ։ Գրության միատեսակ համակարգ ունեցող լեզուներում տեղայնաբանությունների մերձեցման հնարավորությունը նկատելիորեն սահմանափակվում է առաջին հերթին պատմականորեն պայմանավորված այն յուրահատուկ հնչյունական փոխակերպումներով, որոնք բնորոշ են տարբեր լեզուների համար և չեն կարող չարտահայտվել նրանց գրության մեջ։ Այս կամ այն տերիտորիաներում տարածված բազմաթիվ լեզուներում տեղայնաբանու-

թյունների իմաստները կարող են տարբերվել մեծ բազմազանությամբ։ Անհրաժեշտ է ընդգծել տարբեր լեզուներում տեղայնաքանությունների ոճական կիրառության և դարձվածաբանական կապակցությունների ոչ միանման հնարավորությունները։

6. ՓՈԽԱՌՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎՈՒՄ

Հայոց լեզվի բառապաշարի զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ հայերենը հազարամյակների ընթացքում, իր մեջ ներառնելով տարբեր լեզվաընտանիներին պատկանող լեզուներից բազմաթիվ բառեր[61], չի կորցրել իր ինքնատիպությունը, այլ ավելի է հզորացել և ձեռք բերել բազմակողմանի լեզվական հնարավորություններ։ Գրավոր բազմաթիվ հուշարձանները ցույց են տալիս, որ հայոց լեզուն ոչ միայն ընդունակ է փոխառություններ կատարելու, այլև առանց դժվարության (հնչյունական և ձևաբանական) ներառում է ցանկացած թվով բառեր ու տերմիններ, առանց ձուլման վտանգի։

Հայոց լեզուն օտար լեզուներից բազմաթիվ փոխառություններ է կատարել իր պատմության բոլոր շրջաններում, հայոց լեզվի գոյության ամենավաղ շրջաններից սկսած։ Ամենավաղ փոխառությունների թվին են պատկանում խեթական, ուրարտական, կովկասյան և հնագույն շրջանի փոխառությունները, որոնք կատարվել են նախքան հայ գրերի ակզբնավորումը, հայ ժողովրդի կազմավորման ընթացքում։

Գերազանցապես գրային շրջանին են վերաբերում հունարենից կատարված փոխառությունները[62], որոնց թիվը հասնում է հարյուրների։ Սրանք մեծ մասամբ կատարվել են գրքային ձևով, դեռևս մնացել հունարենից կատարված թարգմանական գրականության մեջ V—XII դարերում և ներկայումս գործածական չեն։ Ժամանակակից հայերենում գործածական են նրանից միայն որոշ բառեր. ինչպես, օրինակ՝ **բարբառոս, բյուրեղ, կաղապար, կանոն, մարմար, մղոն, ճակիճք,** *ինչպես նաև ամիսների անուններ (որոնք առնված են լատիներենից հունարենի միջոցով) և այլն[63]։*

Հետագայում, միջին դարերում, նկատվում են լեզվական այլ փոխ-

---

61 *Ըստ Հ. Աճառյանի «Արմատական բառարանի» գրաբարի 10772 արմատներից 4016-ը փոխառություններ են, որոնցից 1405-ը պարսկերենից, 209-ը ասորերենից, 775-ը հունարենից, 800-ը արաբերենից և այլն։*

62 *Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա և Բ մասեր, 1940, 1951։*

63 *Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 10—11։*

ազդեցություններ, որոնք իրենց հերթին պատճառ են դառնում նոր փոխառությունների առաջացման՝ արաբերինից, թուրքական, թաթարական, եվրոպական և այլ լեզուներից: Փոխառությունների մի զգալի մասը վերաբերում է արաբական և թուրքական տիրապետության շրջանին. արաբերենը՝ շուրջ 250 տարի՝ սկսած VII դարից և թուրքերենը՝ շուրջ 300 տարի՝ սկսած XI դարից, բայց, ինչպես վկայում է Հ. Աճառյանը, այսօր հայերենը պահպանել է դրանցից շատ քչերը: Օրինակ՝ արաբերենից՝ ատլաս, բակլա, թաս, լորի, կլայեկ, նունաբ, ճարիճք, բադրիջան և այլն. թուրքերենից՝ բուխարի, շոմել, տոպրակ, յոլա գնալ, դաղել, օջախ և այլն, որոնք մուտք են գործել հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդը:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո հայ ժողովուրդը սկսեց ավելի շատ բառեր ու տերմիններ փոխ առնել անմիջապես ռուսաց լեզվից և սրանով հարստացրեց հայոց լեզուն, նրա հասարակական-քաղաքական բառապաշարն ու տերմինաբանությունը: Հարկ ենք համարում նշել, որ նախահեղափոխական շրջանում էլ հայերենը ռուսերենից կատարվող փոխառությունների հարուստ ավանդույթներ ուներ: Այդ կապակցությամբ բավական է բերել այն փաստը, որ հեղափոխական մամուլի կողմից պրոպագանդվում էին (հատկապես 1905—1907 թթ. հեղափոխության շրջանում) նոր հասարակական-քաղաքական այնպիսի տերմիններ, որոնք այժմ հաստատապես մտել են հայոց լեզվի մեջ, ինչպես՝ պրոլետար, պրոլետարիատ, կոմունիստ, կոմունիզմ, սոցիալիստ, սոցիալիզմ, միտինգ, ագիտացիա, ագիտատոր, շարեկրեյխեր, բուրժուա, բուրժուազիա, կապիտալիզմ, կապիտալիստ, իմպերիալիզմ, բոլշևիկ, օպորտունիստ և այլն:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո հայոց լեզուն դարձավ պետական լեզու, և անհրաժեշտություն առաջացավ լեզուն հարստացնել նոր բառերով ու տերմիններով, որոնք պետք է համապատասխանեին նոր հասարակական-քաղաքական հարաբերություններին: Այսպիսով, փոխառությունների հարցը, որպես նոր տերմինների կազմավորման ձև, դառնում է հայկական տերմինաշինության ամենահրատապ հարցերից մեկը: Այս պատճառով էլ արդի հայերենի լեզվաշինարարության գործում հարկավոր էր ցուցաբերել զգուշություն: Յուրաքանչյուր օտար տերմինի հարցը լուծելիս պետք է հաշվի առնվեր տերմինի ծագումը, նրա առույգությունը, հասկանալիությունը, հեշտ արտասանելիությունը և ողջ համակարգի ճշտությունը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ժամանակից հայոց լեզվի բառապաշարը զգալի փոփոխություններ կրեց: Բա-

ռապաշարային այդ փոփոխությունները արտահայտվեցին նորաբանությունների՝ նոր բառերի երևան գալու մեջ, որոնք բնորոշ են նոր հասարակական կառուցվածքին, սովետական նոր կենցաղին ու մշակույթին։ Որպես հետևանք կյանքում կատարված քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունների, այդ շրջանում ռուսերենի միջոցով ժամանակակից հայոց լեզվի բառային կազմը մուտք գործեցին բազմաթիվ օտար բառեր ու տերմիններ։

Սովորաբար նոր տերմինների կամ բառերի փոխառություններ կատարվում են, երբ.

ա) Նոր հասարակական հարաբերությունների ծագմամբ առաջանում են նոր հասկացություններ, որոնք արտացոլվում են նոր տերմիններում։

բ) Ուրիշ ժողովուրդների հետ կուլտուրական կապերի ամրապնդման հետևանքով առաջանում է նոր տերմինների օգտագործման անհրաժեշտություն.

գ) Երբ լեզվում հին հասկացություններ նշանակող բառերը փոխարինվում են նոր բառերով[64]։

Հայաստանի խորհրդայնացման տարիներին հայոց լեզվի մեջ մտան ինդուստրացման և կոլեկտիվացման հետևանքով ստեղծված մասնագիտական նոր բառեր, կազմվեցին նոր տերմիններ, կատարելագործվեց գիտության լեզուն, որն արդեն հնարավորություն ունի արտահայտելու ամենաբարդ և ամենանուրբ հասկացությունները։

Սովետական իշխանության տարիներին ռուսերենի միջոցով օտարազգի տերմինների փոխառությունը հայերենում անընդհատ աճում է։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ կարգի փոխառյալ տերմինների թիվը ժամանակակից հայերենում արդեն հազարների է հասնում։ Միաժամանակ պետք է նշել, որ այդ տերմինների որոշ մասի համար ստեղծվել են նաև հայերեն համարժեքներ, որոնք լեզվում զուգահեռ գործածություն ունեն։

Առանձին խումբ են կազմում այն տերմինները, որոնք փոխ են առնվել ոչ ամբողջովին, այլ կազմված են ռուսական հիմքին հայկական համապատասխան ածանցների հավելմամբ։ Օրինակ՝ ստախանովական, կաբելագործ և այլն։ Դրա լավագույն ապացույցն է 1920-ական թվականների բառարանագրությունը։ Այդ թվականների տերմինաբանական բառարանների մեջ բազմաթիվ են այն դեպքերը, երբ յուրաքանչյուր օտար

---

64 Տե՛ս Ս. Ղազարյան, *Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարըստացման ու զարգացման մեջ*, Երևան, 1955։

բառի դիմաց տրվում է նախ՝ նրա փոխառության համապատասխան լեզվից և ապա նույն բառի թարգմանությունը հայերեն: Կամ ընդհակառակը, սկզբում տրվում է թարգմանությունը և հետո՝ օտար բառը:

Մեր ասածը հիմնավորելու համար օրինակներ բերենք ռուս-հայերեն իրավաբանական և առևտրահաշվապահական տերմինների բառարաններից: Օրինակ՝ акт—ակտ, գործողություն, արարք, արձանագրություն, активный—ակտիվ, ներգործական, գործոն, бюджет—բյուջետ, եկամտացույց *(այժմ՝* բյուջե), бюро—գրասենյակ, բյուրո, капитал—կապիտալ, դրամագլուխ, карантин—կարանտին, առողջապահական արգելանք, конфликт—կոնֆլիկտ, ընդհարում, мандат—մանդատ, ճանձնարարագիր, масса—մասսա, բազմություն, милитаризм—միլիտարիզմ, զորապաշտություն, шантаж—շանտաժ, շորթում(ն), агитатор—ագիտատոր, գրգռիչ, агитация—ագիտացիա, գրգռում, амнистия—ամնիստիա, ընդհանուր ներում, аналогия—անալոգիա, նմանմանություն *(այժմ՝* նմանություն), багаж—բագաժ, բեռ, база—հիմք, բազա, банда—ավազակախումբ, բանդա, бандит—ավազակ, բանդիտ, банк—դրամատուն, բանկ, фактура—ֆակտուրա, վաճառացուցակ, орган—օրգան, մարմին, ордер—օրդեր, հրամանագիր, нормальный—նորմալ, բնական, օրինակելի, саботаж—սաբոտաժ, ներգործություն, нетто—զուտ բաշ, զուտ կշիռ, եհատո, манифест—մանիֆեստ, հրովարտակ[65], аккредитив—ակրեդիտիվ, վարկագիր, абонемент—աբոնեմենտ, բաժանորդություն, абзац—աբզաց, տողագլուխ, альтернатива—ալտերնատիվ, երկընտրանք, депрессия—դեպրեսիա, ճնշվածություն, дефицит—դեֆիցիտ, ընդհանուր վնաս, բաց, дивидент—շահաբաժին, դիվիդենտ, динамика—շարժում, ընթացք, դինամիկա, безмен—բեզմեն, զապանակավոր կշեռք, валюта—արժույթ, վալյուտա, компактный—կոմպակտ, սեղմ, ամփոփ, комбинация—կոմբինացիա, համադրություն, мотив—մոտիվ, պատճառ, դրդում, ապացույց, вариация—վարիացիա, փոփոխանք, валоризация—վալորիզացիա, արժեքավորում, аванс—կանխավարձ, կանխավճար, ավանս, аналитик—անալիտիկ, վերլուծորդ, кадр—կադր, բնակազմ[66]:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ փոխառյալ և սեփական (նորակազմ) տերմինների միջև առկա են տարբեր կարգի հարաբերու-

---

65 «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան»:

66 «Առևտրահաշվապահական տերմինների ռուս-հայերեն բառարան»:

թյուններ։ Նախ՝ մի շարք օտարազգի տերմիններ ակնհայտորեն դերազանցելի են իրենց հայերեն համազորներից, որոնց հայկական ձևը ներկայումս չի օգտագործվում, այսինքն՝ լեզուն չի ընդունել այդ նորակազմությունները։ Այդպիսի օտարազգի տերմինների թվին են պատկանում հետևյալները. կապիտալ, բյուրո, ակտիվ, ակտ, միլիտարիզմ, մինիմում, կոնֆլիկտ, սաբոտաժ, շանտաժ, կադր, մանդատ, մասսա, ագիտացիա, ամնիստիա, բազա, պլենում, մանիֆեստ *և այլն։ Մյուս կողմից՝ այդ կարգի օտարազգի տերմինների հայերեն համանշանակները, որպես իմաստով և ձևով անհաջող բառեր, այժմ փաստորեն դուրս են մնացել լեզվից, թեև վերոհիշյալ բառարանների հեղինակները դրանք բարեխղճորեն գետեղել են այդ բառարանների հայկական բառացանկերում, ինչպես, օրինակ՝* դրամագլուխ *(կապիտալ),* գրասենյակ (բյուրո), ներգործական, գործոն (ակտիվ), ընդհարում (կոնֆլիկտ), հանձնարարագիր (մանդատ), զորապաշտություն (միլիտարիզմ), շորթում (շանտաժ), գրգռիչ (ագիտատոր), գրգռում (ագիտացիա), նենգագործ (սաբոտաժ), մանիֆեստ (հռովարտակ), բազմություն (մասսա) *և այլն։*

Հիշյալ օրինակներում կարելի է հանդիպել նաև օտարազգի տերմինների նկարագրական թարգմանության, ինչպես՝ амнистия—ընդհանուր ներում, дефицит—ընդհանուր վնաս, карантин—առողջապահական արգելան *և այլն։*

Այս դեպքում նույնպես նախապատվությունը պետք է տալ փոխառյալ տերմիններին։ Բազմաթիվ են այն տերմինները, որոնք անհաջող են թե իմաստային և թե կառուցվածքային տեսակետից և չեն բավարարում տերմինի պահանջներից և ոչ մեկը[67]*։*

Հայոց լեզվում օտարազգի տերմիններին օբյեկտիվորեն ճանապարհ են հարթում նաև տերմինների համանշության այն դեպքերը, երբ օտարազգի մեկ տերմինի համար կազմվում են հայերեն մեկից ավելի բառեր ու տերմիններ. ինչպես օրինակ՝ «Ռուս-հայերեն իրավաբանական բառարանում»՝ активный—ակտիվ, ներգործական, գործոն[68]*։ Բառարանում բերված է այս ածականի հետ կապված երեք բառակապակցություն և երեքն էլ կազմված են այդ ածականի տարբեր համանիշներով՝* активное право—ընտրության ներգործական իրավունք *(ընտրե-*

---

67 *Ըստ Լոտտեի, յուրաքանչյուր տերմին պետք է բավարարի հետևյալ պահանջները՝ ճշգրտություն, անդմունություն, մենիմաստություն, սիստեմատիկություն։*

Տե՛ս Д. С. Лотте, Как работать над терминологией, М., 1968, стр. 38.

68 *Վերոհիշյալ բառարանում չի պահպանված փոխառյալ բառերի միասնական ուղղագրությունը, տառադարձությունը և այլն։*

լու իրավունք), активное действие—ակտիվ գործողություն, активное участие—գործոն մասնակցություն: *Ահավասիկ մի քանի այլ օրինակներ՝* մետրոնոմ-ամանակաչափ, ամանակացույց. մանոմետր-անգայտաչափ, ճնշաչափ. բարոմետր-ճնշաչափ, ծանրաչափ *(ֆիզիկա)*:

Ագլոմերատ-շեղջաքար, կուտակաքար. ալեքաստր-ջրակուճ, լուսնակուճ. ամերիստ-ակնվանի, վանակն, բյուրեղ, պաղակն, մեղեքիկ. բազալտ-սևակուճ, երկաթակուճ, բասանեքար և *այլն (երկրաբանության և հանքաբանության)*:

Տուբերկուլյոզ-բարակախտ, պալարախտ, ծյուրախտ, ճյուծախտ, բարակացավ և *այլն (բժշկություն)*:

Աբստրակցիա-վերացարկում, վերացում, վերացություն. լիբերալ-ազատամիտ, ազատական. ակցիա-բաժնետոմս, բաժնեթուղթ. ակցիոներ-բաժնետեր, փայատեր, մասնատեր, բազորդ, բաժնորդ. սոցիոլոգիա-հասարակագիտություն, ընկերաբանություն և *այլն) (հասարակական-քաղաքական տերմինաբանություն)*:

Այս դեպքում խախտվում է տերմինի համակարգայնությունը, որը քիչ կարևոր չէ տերմինաբանության համար:

1920-ական թվականների ռուս-հայերեն տերմինաբանական բառարաններում բազմաթիվ են դեպքերը նաև օտարաշրջի և սեփական տերմինի զուգահեռ գործածության, որը վկայում է այդ տերմինների հավասարազորության մասին, ինչպես՝ արգաց-տողագլուխ, ալտերնատիվ-երկընտրանք, ակրեդիտիվ-վարկագիր, վալյուտա-արժույթ *(տնտեսագիտական)*, ակուստիկա-ձայնաբանություն, պրոգրեսիա-առաջատվություն *(մաթեմատիկա)*. *կամ՝* աբսոլյուտ-բացարձակ, կոնվենցիա-համաձայնագիր, իմունիտետ-անձեռնմխելիություն *(իրավաբանական)*. ֆուգաակաճառումբ, կոմոր-ադմիրալ-փոխծովակալ, դիվիզիոն-բաժնյակ *(ռազմական)* և *այլն*:

Ամբողջ սրությամբ առաջ է գալիս նոր տերմինների կազմման, և սրա հետ կապված ռուսերենի միջոցով որոշ հասարակական-քաղաքական տերմինների փոխառության հարցը: Այսպիսի բառերի թվին են պատկանում՝ ագիտացիա, ագիտատոր, ավանգարդ, բոյկոտ, բրիգադ, դեկրետ, դեմոնստրացիա, դեմոկրատ, դեսպոտ, դեսպոտիզմ, էկոնոմիկա, էկոնոմիստ, էվոլյուցիա, լեգալ, լիկվիդացիա, լիկվիդատոր, կոմիսար, կոմունա, կոմիտե, մանիֆեստ, մինիմում, ռեակցիա, սոցիալիստ, ցենտրալիզմ, օտզովիստ, օրթոդոքս, օպորտունիստ, օպտիմալ, օպոզիցիա, օպերացիա, ֆորմացիա, ֆորմալ, ֆունկցիա և *այլն: Այս բոլոր բառերը մեծ մասամբ եվրոպական ծագում ունեն, բայց արդեն դուրս են*

եկել «եվրոպականության» շրջանակներից և ռուսերենի միջոցով սովետական ազգային լեզուների համար փաստորեն դարձել «միջազգային»՝ իրենց նոր նշանակությամբ և բովանդակությամբ։ Այսպիսով, բառային փոխառությունների հիմնական օրինաչափությունը պետք է համարել համանման տերմինների նվազագույն տարբերությունների սկզբունքը ՍՍՀՄ ժողովուրդների գրական լեզուների միջև։ Անհրաժեշտ է նշել նաև, որ այդ բառերի մի մասը մտել է աշխարհի շատ լեզուները, որպես նոր բառանշություններ։ Օրինակ՝ կոլխոզ, սովխոզ, կոմսոմոլ, կոմունիզմ, կոմունիստ և այլն։ Ընդ որում այդ բառերից շատերը, որպես նոր փոխառություններ, կրկին «վերադարձել» են այն լեզուները, որտեղից փոխառվել են։ Օրինակ՝ կոմունա բառը, եվրոպական ոչ մի լեզվում չի օգտագործվում իր սկզբնական համայնք նշանակությամբ։

7. ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Ինչպես յուրաքանչյուր երևույթ, լեզվական փոխառությունները նույնպես ունեն իրենց դրական և բացասական կողմերը։ Նախ խոսենք փոխառությունների դրական կողմի մասին։ Որոշ մասնագետներ գրում են, որ օտարազգի բառերի օգտագործումը տերմինաբանական համակարգում ունի իր առավելությունները։ Վերջիններս իբր ավելի լրիվ են պատասխանում «իդեալական» տերմինների պահանջներին։ Նրանք գրեթե ավտոմատ անվանումներ են[69] և մենիմաստ են, անգամ այն դեպքում, երբ աղբյուր լեզվում ունեն մի քանի նշանակություն։

Փոխառությունները, ինչպես ընդունում են մասնագետները, մտնում են լեզվի մեջ, որպես իրերի և երևույթների անվանումներ, գործածության ժամանակ նրանք անվանական արժեք ունեն և իմաստաբանական ֆունկցիա են ստանում միայն ածանցական տերմինների կազմավորումից հետո, երբ հասկացության ընդհանրությունը հանդես է գալիս որպես տարբեր բառերի տարբեր անվանումներ։ Փոխառյալ տերմինները չեն խառնվում սովորական բառերի հետ, լեզվի բառապաշարի համակարգում դրանք հանդես են գալիս որպես ինքնուրույն միավորներ և զուրկ են հուզաարտահայտչական որևէ գունավորումից կամ ոճական-կիրառական առանձնահատկություններից։ Այդ մասին Ա. Ս. Ռևֆորմատսկին գրում է. «Նրանք (փոխառյալ տերմինները) մտնում են լեզվի մեջ ինչպես մականուն, պիտակ, համարյա ինչպես հատուկ անուններ (կոմբայն, կոնտեյներ, բուլդոզեր), որպես իրերի և երևույթների անվանումներ։ Նրանք

---

69 *А. А. Реформатский*, Введение в языкознание, М., 1967, стр. 115.

մեկուսացված օգտագործման ժամանակ դուռ անվանական են և իմաստաբանական ֆունկցիա ստանում են միայն ածանցյալ տերմիններ կազմելուց հետո, երբ հասկացությունների ընդհանրությունը հանդես է գալիս որպես կապակցող տարբեր բառերի տարբեր անվանումներ: Այդպիսի փոխառյալ տերմինները օտարազգի բառեր են և չեն խառնվում սովորական բառերի հետ, նրանք ինքնուրույն են, միանշանակ, գտնվում են արտահայտչականությունից դուրս»[70]:

Սակայն, ինչպես ասացինք, օտար տերմիններն ունեն նաև իրենց բացասական կողմերը. ա) դժվար են հասկացվում, դժվար են յուրացվում ու հիշվում, բ) խանգարում են լեզվի մաքրությանը:

Երկրորդ դեպքում օտար բառերի հակառակորդները նկատի ունեն ամենից առաջ լեզվի հնչյունական համակարգը, որի ամբողջականությունը չի կարող չխախտվել, եթե օտարլեզվյան հնչյունական ձևերը մտնելով ազգային լեզվի մեջ՝ չեն համապատասխանում նրա հնչյունական ձևերին: Օտար բառերը շեղվում են նաև ազգային ձևաբանությունից և շարահյուսությունից, քանի որ այս առումով նրանք միշտ չէ, որ ենթարկվում են ընդունող լեզվի օրենքներին: Վերջապես նրանք խախտում են ազգային լեզվի ուղղագրության համակարգը, քանի որ հաճախ հնչյունի և տառի միջև եղած համապատասխանությունը երկու լեզուներում նույնական չեն:

Գիտատեխնիկական տերմինաբանության վերլուծությունը ցույց է տալիս, որ օտար տերմինները հաճախ փոխառվում են առանց անհրաժեշտության և համակարգից դուրս, որի հետևանքով խախտվում է տերմինաբանության համակարգայնությունը: Մասսայական փոխառությունները ոչ թե հարստացնում են լեզուն տերմիններով, այլ աղտոտում են այն: Մինչհեղափոխական շրջանում մասսայական փոխառությունների հիմքը տեխնիկական հետամնացությունն էր, որի պայմաններում օտարլեզվյան ծագում ունեցող տերմինները նևրմուծվում էին տեխնիկական հասկացությունների հետ մեկտեղ կամ նույնիսկ դրանցից առաջ:

Լեզվի աղտոտումը օտարաբանություններով ամենից առաջ արտահայտվում է տերմինաբանության միասեռության և միջազգային կապերի խզման մեջ, քանի որ ժողովուրդները կարող են փոխառնել միևնույն բնագավառի տերմիններ՝ տարբեր լեզուներից: Օտար տերմինները խանգարում են տերմինաբանական ընդհանուր համակարգի պարզությանը և հասկանալիությանը:

---

70 Նույն տեղում, էջ 115:

Օտար լեզուներից տերմիններ փոխառնելիս պետք է հաշվի առնել տվյալ լեզվում եղած ավանդույթները: Փոխառնելիք նյութ կարող է լինել միայն տերմինի հնչյունական կազմը և այն իրական նշանակությունը, որը բնորոշ է տերմինների կայունացած կիրառությանը: Եթե օտարազգի բառին բնորոշ է բազմիմաստությունը, ապա փոխ է առնվում այդ բառի միայն մի նշանակությունը և ոչ թե նրա ամբողջ իմաստային համակարգը: Դրա հետ միասին երբեմն հաշվի են առնվում լեզվի մեջ միաժամանակ կամ տարբեր ժամանակներում բառի ունեցած մեկ, երկու կամ ավելի նշանակությունները: Այսպես, օրինակ, ռուսերենում «тираж» բառն ունի երկու նշանակություն, որոնք իմաստային ոչ մի կապ չունեն: Սակայն այդ երկու նշանակություններն էլ ծագում են ֆրանսիական «tirage» բառի տարբեր իմաստներից[71]:

Փոխառված բառական «նյութը» փոխառնող լեզուն չի կարող մեքենայաբար ընդունել որպես իր լեզվի բառ: Բառային փոխառությունը կապված է արտաքին աղբյուրից. փոխառվող բառի վրա լեզվի ակտիվ ազդեցության հետ: Այսինքն՝ տեղի է ունենում այդ բառի այսպես կոչված «վերանորոգում», նախ՝ հնչյունական և հետո՝ քերականական տեսակետից: Օտար բառի պատճառաբանվածությունը չի յուրացվում փոխառված նյութի հետ: Վերջինս որևէ կապ չունի լեզվի բառակազմության հետ և հենց այդ պատճառով է, որ հաճախ մի բառակազմական բնի մեջ միացած օտարազգի բառերի ընդհանրությունը դադարում է զգալի լինելուց: Այդ է վկայում վերը բերված ռուսերեն «тираж» բառի օրինակը:

Լեզվի մեջ մուտք գործելիս փոխառված բառերը դեռևս վերջնականորեն յուրացված չեն: Սկզբնական շրջանում նրանք յուրացվում են միայն այնքանով, որքանով կարող են օգտագործվել որպես այս կամ այն հասկացության անվանում: Փոխառված բառի իսկական յուրացումը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ այն մտնում է մշտական, կայուն գործածության մեջ: Օտարազգի բառերի յուրացումը բազմակողմանի երևույթ է, այն ընդգրկում է լեզվում փոխառյալ բառերի գործածության ամբողջ պատմությունը, հնչյունական, քերականական և իմաստային այն բոլոր փոփոխությունները, որոնք տեղի են ունենում այդ պրոցեսում: Իրականում այն սկսվում է բառապաշարի մեջ նոր բառի մուտքից: Դրանով իսկ փոխառության հարցը առաջին հերթին առնչվում

---

71 *Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Л. П. Крысин.* Иноязычные слова в современном русском языке. М., 1968.

է նորաբանությունների հարցի հետ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է տարբերել լեզվի բառային միավոր դարձած իսկական փոխառված բառերը այն օտարաբղի բառերից, որոնք արտաքուստ պատկանում են լեզվին, բայց փաստորեն դուրս են մնացել նրա բառային կազմի սրտեն յուրացված բառապաշարից:

Այսպիսով, լեզվական փոխառությունների համար ընդհանուր սկզբունքն այն է, որ նրանք ենթարկվում են փոխառնող լեզվի կողմից յուրացման պրոցեսին: Այսինքն՝ փոխառված բառը հարմարվում է այն լեզվի նորմաներին և օրինաչափություններին, որի մեջ մուտք է գործում:

Լեզվաբանական գրականության մեջ սովորաբար գտնում են, որ բառի՝ փոխառնող լեզվի համակարգի մեջ մտնելու համար պետք է առկա լինեն հետևյալ պայմանները.

1. Օտար բառի արտահայտումը փոխառնող լեզվի հնչյունաբանական և քերականական միջոցներով:

2. Օտար բառի համատեղումը փոխառնող լեզվի քերականական դասերի և կարգերի հետ:

3. Օտար բառի հնչյունական յուրացում:

4. Օտար բառի քերականական յուրացում:

5. Օտար բառի բառակազմական ակտիվություն:

6. Օտար բառի իմաստային յուրացում:

7. Օտար բառի սիստեմատիկ օգտագործում խոսքի մեջ[72]:

Որոշ լեզվաբաններ գտնում են, որ տվյալ լեզվի մեջ օտար բառի փոխառության և նրա գործածության համար վերոհիշյալ ոչ բոլոր հատկանիշներն են պարտադիր[73]:

Մենք գտնում ենք, որ թվարկած հատկանիշներից պարտադիր են հետևյալները.

1. Օտարաղբի բառի գրությա-հնչյունաբանական արտահայտում փոխառնող լեզվի միջոցներով:

2. Նրա համատեղումը փոխառնող լեզվի քերականական դասերի և կարգերի հետ:

3. Բառի իմաստային ինքնուրույնություն, համանիշային զուգադիր հարաբերությունների բացակայում:

4. Գրական լեզվի բառերի համար ոչ պակաս, քան խոսքային երկու ժանրերում, իսկ տերմինի համար որոշ տերմինաբանության մեջ սիստեմատիկ օգտագործում:

---

72 *А. А. Реформатский*, Что такое термин и терминология, М., 1959.

73 *Л. П. Крысин*, Иноязычные слова в современном русском языке.

Այսպիսով, տերմինների յուրացում փոխառու լեզվում կատարվում է երեք հիմնական կողմով։

ա) Փոխառված տերմինի հնչյունաբանական յուրացում։

բ) Փոխառված տերմինի ձևաբանական յուրացում։

գ) Փոխառված տերմինի իմաստային (սեմանտիկական) յուրացում։

ա) Փոխառյալ տերմինի հնչյունաբանական յուրացումը

Փոխառյալ տերմինները լեզվում ենթարկվում են որոշ հնչյունական փոփոխությունների։ Հանրահայտ է, որ մեկ լեզվի հնչյունական կառուցվածքը երբեք ամբողջությամբ չի համընկնում մեկ այլ լեզվի հնչյունական կառուցվածքին։ Հնչյունական փոփոխությունը ամենից առաջ նրանով է արտահայտվում, որ տվյալ լեզվում բացակայող օտար հնչյունները փոխարինվում են փոխառյալ լեզվին ավելի մոտ հնչյուններով։ Այդ փոխարինումը հիմնվում է երկու լեզուների մեջ եղած հնչյունական համապատասխանությունների վրա։ Փոխառված նյութի հնչյունական կողմի փոփոխումը, սակայն միշտ չէ, որ կապված է լեզվի հնչյունական կազմի պահանջների հետ։ Փոխառված նյութի հնչյունական փոփոխման որոշ կոնկրետ դեպքեր ընդհանրապես դժվար են բացատրվում։ Այդ բանը արդարացիորեն նկատել է ակադեմիկոս Ի. Գ. Գրոտը. «Օտար բառերը ընդգրկելով իր սեփական բառապաշարի մեջ, լեզուն շատ կամայականորեն է վարվում, մերթ իբր թե հետևելով հնչյունների ձևափոխման որոշ կանոնների, մերթ էլ ներկայացնում է իր ոչ հեշտ ըմբռնելի պահանջները»[74]։

Մյուս կողմից, ինչպես ցույց է տալիս փաստական նյութի վերլուծությունը, ոչ բոլոր փոխառված տերմիններն են ենթարկվում միանման հնչյունաբանական յուրացման։ Ավելին, տերմինների մեծամասնությունը նոր լեզվում համարյա չի ենթարկվում հնչյունական փոփոխությունների։ Դրանք այնպիսի բառեր են, որոնք լեզվի մեջ են մտնում գերազանցապես գրական ճանապարհով, և գրեթե չեն ենթարկվում հնչյունական փոփոխությունների։

Ժամանակակից հայոց լեզուն նույնպես հետևում է այս ընդհանուր կանոնին, և, իսկապես, վերջին շրջանում կատարած նորագույն փոխառությունների ճնշող մեծամասնությունը հայերենին են անցել հնչյունա-

---

74 Труды *Я. К. Грота*, т. II, Филологические разыскания, СПб., 1899, стр. 245.

նական աննշան փոփոխություններով: Ինչպես՝ тезис—թեզիս, астма—ասթմա, алюминий—ալյումին, альдегид—ալդեհիդ, алкоголь—ալկոհոլ, аннексия—անեքսիա, антрацит—անթրացիտ, аппарат—ապարատ, хлорамин—քլորամին *և այլն: Մնացած բոլոր դեպքերում ժամանակակից հայերենում փոխառյալ բառերը գրավոր լեզվում հնչյունական ոչ մի փոփոխության չեն ենթարկվում, ինչպես՝* агрегат—ագրեգատ, акт—ակտ, актив—ակտիվ, акционер=ակցիոներ, ажиотаж—աժիոտաժ, ампер—ամպեր, астероид—աստերոիդ, аспирин—ասպիրին, анахронизм—անախրոնիզմ *և այլն:*

բ) Փոխառյալ տերմինների ձևաբանական յուրացումը

Փոխառված տերմինները լեզվում պարտադիր կերպով ենթարկվում են ձևաբանական յուրացման: Խոսելով տերմինների ձևաբանական յուրացման մասին, պետք է նկատի ունենալ ձևաբանության մեջ բառերի հետադոտության երկու կողմերը՝ նրանց ձևաբանական կառուցվածքը և քերականական կարգերը: Փոխառված տերմինների ձևաբանական յուրացման ժամանակ փոփոխության են ենթարկվում տերմինների և՛ ձևաբանական կառուցվածքը, և՛ քերականական կարգերը:

Նախ՝ խոսենք փոխառությունների ձևաբանական կառուցվածքի յուրացման մասին: Այս դեպքում, պետք է նկատի ունենալ ձևաբանական կառուցվածքի յուրացման մի քանի ընդհանուր օրինաչափություններ: Ածանցյալ տերմինը մտնելով ուրիշ լեզվի մեջ, կորցնում է իր ածանցյալությունը, այսինքն՝ լեզվական նոր միջավայրում տեղի է ունենում փոխառված բառի հիմքի ձևաբանական պարզեցման պրոցես: Հայոց լեզվում փոխառված տերմինի հիմքի ձևաբանական պարզեցման իրողություններից մեկն էլ այն է, որ չեն դիտակցվում ռուսերենի փոխառված գոյականների սեռը և նրանց սեռային վերջավորությունները, ինչպես фактура—ֆակտուրա, масса—մասսա, абсцисса—աբսցիս, *երբեմն էլ հայերենը հրաժարվում է ռուսերենի սեռային վերջավորություններից, ինչպես՝* бригада—բրիգադ, соната—սոնատա, баллада—բալլադ, поэма—պոեմ *և այլն:*

Հաջորդ օրինաչափությունն այն է, որ փոխառված տերմինը ձևաբանական յուրացման ընթացքում ստանում է այնպիսի մի հատկություն, ինչպիսին օտար ձևույթներին հայերենի ձևաբանական-բառակազմական մասնիկների միացումն է: Այնպիսի փոխառյալ բառեր, ինչպիսիք են՝ կոմունիզմ, կոմունիստ, սոցիալիզմ, սոցիալիստ, կապիտալ, պասսիվ,

բազիս և այլն, հայերենում արտաքին փոփոխություններ չեն կրել, սակայն նրանք կարողանում են կապակցվել հայկական վերջավորությունների և ածանցների հետ: Կոմունիզմ–կոմունիզմի. կոմունիստ–կոմունիստներ, կոմունիստի, կոմունիստ–կոմունիստական. սոցիալիզմ–սոցիալիզմի. սոցիալիստ–սոցիալիստական–սոցիալիստներ–սոցիալիստի. պասսիվ–պասսիվություն. բազիս–բազիսային և այլն: Սրանից կարելի է հանգել այն եզրակացության, որ փոխառված տերմինների ձևաբանական յուրացման ժամանակ այդ տերմիններն ստանում են այնպիսի ձևույթային կապեր, որոնք համապատասխանում են փոխառու լեզվի՝ ավյալ դեպքում հայոց լեզվի ձևաբանությանը և բառակազմությանը:

Այս հարցի հետ սերտորեն կապված է փոխառված տերմինների քերականական կարգերի յուրացումը: Բառերի ձևաբանական յուրացման ժամանակ առավել մեծ փոփոխությունների է ենթարկվում քերականական կարգերի ձևը: Փոխառված տերմինների քերականական կարգերի փոփոխությունը տեղի է ունենում մի քանի ուղղությամբ:

Նախ՝ քերականական որոշ կարգեր փոխառված տերմինների յուրացման պրոցեսում վերանում են. օրինակ՝ շնչավոր և անշունչի կարգը, սեռի կարգը:

Երկրորդ՝ քերականական որոշ կարգեր, ձևաբանական յուրացման ընթացքում են ձեռք բերվում. օրինակ՝ որոշյալի և անորոշի կարգը, դիմորոշ՝ ստացական և ցուցական հոդերը, որոնք ռուսերենում բացակայում են:

Երրորդ՝ քերականական այն կարգերը, որոնք փոխառնող և փոխառու լեզուների համար ընդհանուր են (ինչպես ռուսերենի և հայերենի համար՝ թվի, հոլովի կարգերը), յուրացման պրոցեսում տեղի են ունենում որոշ փոփոխություններ քանի որ այդ կարգերի միջև բացարձակ միանմանություն չի լինում:

Այսպիսով, փոխառյալ նյութի քերականական յուրացումը լեզվում հնարավորություն է ընձեռում օգտագործել այդ բառերը գրավոր և բանավոր խոսքում ըստ փոխառնող լեզվի քերականության օրենքների:

գ) Փոխառյալ տերմինների իմաստային յուրացումը

Տերմինաբանության վերլուծությունը ցույց է տալիս, որ փոխառված տերմինների հիմնական մասը ինչպես փոխառու, այնպես էլ փոխառնող լեզվում հանդես է գալիս միևնույն նշանակությամբ: Այն դեպքում, երբ

փոխառված բառի նշանակությունը երկու լեզվում համընկնում է, այդ բառի իմաստային յուրացում տեղի չի ունենում:

Երբեմն օտար տերմինների փոխառությունը ուղեկցվում է փոխառնող լեզվի հիման վրա համապատասխան տերմինների ստեղծման պրոցեսով: Այսպիսով, մի հասկացության անվանման համար կարող է ներկայանալ երկու տերմին՝ փոխառյալ և սեփական, որ բոլորովին էլ օրինաչափ և ցանկալի չէ: Եթե երկու տերմինն էլ լեզվում օգտագործվում են նույն նշանակությամբ, այսինքն՝ ստեղծվում են իմաստաբանական կրկնակներ, դրանցից մեկը դառնում է ավելորդ: Տերմինաբանության կարգավորման պրոցեսում հոմանիշ տերմինների մրցության մեջ մեկնումեկը անպայման հաղթանակ է տանում: 20-ական թվականների հայ տերմինաբանական բառարանների նյութը հիմնավորում է այս դրույթը: Բերենք մի քանի օրինակ՝ депрессия—դեպրեսիա, ճնշվածություն, альтернатива—ալտերնատիվ, երկընտրանք, абонемент—աբոնեմենտ, բաժանորդություն, нетто—զուտ քաշ, զուտ կշիռ, նետտո, трюм—տրյում, ճախարակ, компактный—կոմպակտ, սեղմ, ամփոփ, валюта—արժույթ, վալյուտա, безмен—բեզմեն, զսպանակավոր կշեռք, валоризация—վալորիզացիա, արժեքավորում, дефицит—դեֆիցիտ, ընդհանուր վնաս, բաց, дивидент—շահաբաժին, դիվիդենտ, динамика—շարժում, ընթացք, դինամիկա, орган—օրգան, մարմին, ордер—օրդեր, հրամանագիրք, аккредитив—ակրեդիտիվ, վարկագիր, фактура—ֆակտուրա, վաճառացուցակ, базис—հիմք, բազիս, багаж—բագաժ, բեռ, ուղեբեռ և այլն:

Ինչպես նշվեց, տերմինաբանության կարգավորման ընթացքում այս տերմիններից մեկը հետագայում իր տեղը զիջում է մյուսին: Սակայն այս պրոցեսը ոչ միշտ է արագ տեղի ունենում, և ոչ միշտ է այս կամ այն տերմինը հեշտությամբ գործածությունից դուրս գալիս: Այլևայլ պատճառներից բացի, պրոցեսի արագությունը կախված է նաև տերմինի գործածականության աստիճանից: Բերված օրինակներում տերմինների մեծ մասը մասնագիտական գրականության մեջ այժմ գործածվում է իր հայկական ձևով, սակայն խոսակցական լեզվում շատ դեպքերում գործածվում է օտար ձևը:

Հնարավոր է նաև այլ ելք, եթե տերմինը ունի երկու ձև, ապա տեղի է ունենում նրա նշանակությունների, այսպես ասած, արոհում: Այսպես, ռուսերենի «МИНИМУМ» բառը քննարկված բառարաններում թարգմանվում է հայերեն երեք բառով՝ մինիմում, նվազագույն, առնվազն: Ներկայումս մինիմում ձևը օգտագործվում է միայն մեկ նշանակությամբ՝

ապիրանոական միևիմում. *մյուս բոլոր դեպքերում գործածվում են հայերեն ձևերը՝* նվազագույն գումար, գիտելիքների նվազագույնը, առնվազն հինգ հազար ռուբլի *և այլն:*

Ռուսերեն «базис» *բառը թարգմանվել է հայերեն երկու բառով՝* հիմք, բազա: *Ներկայումս հայերենում* բազա *ձևը օգտագործվում է* «առևտրական, ապրանքային բազա», «ռազմական բազա», կաճույքի բազա *և այլն, իսկ* հիմք *բառը գործածվում է մյուս նշանակություններով: Բազմիմաստ տերմինի իմաստների բաշխումը հնչյունական տարբեր կազմ ունեցող բառերի միջև շատ հետաքրքիր և տարածված երևույթ է: Այդ դեպքում, փաստորեն, տեղի է ունենում նույն տերմինի իմաստների ճեղքում և նոր բառերի (տերմինների) ձևավորում: Այսպիսով, բազմիմաստ տերմինը բաժանվում է մի քանի մենիմաստ, միանշանակ տերմինների, որոնք ավելի են համապատասխանում տերմինի կոչմանը տրվյալ լեզվում: Հետևաբար տեղի է ունենում բազմիմաստ տերմինի նեղացում և վերածում մենիմաստ տերմինի, ընդ որում միաժամանակ ստեղծվում է նոր տերմին՝ անջատված տերմինի նշանակությունը արտահայտելու համար:*

Հետևաբար, փոխառված բազմիմաստ տերմինի իմաստային յուրացման ժամանակ տեղի է ունենում երկու պրոցես: Նախ՝ բազմիմաստ տերմինի իմաստի նեղացում և նրա վերածումը մենիմաստ տերմինի: Երկրորդ՝ նոր բովանդակության համար փոխառնող լեզվի նյութի հիման վրա նոր տերմինների ստեղծում:

9. ՏԵՐՄԻՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԸ

Տերմինի միջազգայնության հարցը վաղուց ի վեր դարձել է բանավեճի առարկա: Սակայն մինչև այսօր էլ տերմինի միջազգայնության նույնիսկ այնպիսի մի մասնավոր հարցի վերաբերյալ, ինչպիսին նրա իմաստային միօրինակության հարցն է, որևէ հստակ միջազգային պայմանավորվածություն դեռևս ձևոք չի բերվել: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ, չնայած տերմինի միջազգայնացման ակտիվացող միտումին, վ. վ. Ակուլենկոյի վկայությամբ տերմինը գրեթե միաժամանակ մի շարք լեզուներում փոխարինվել է ազգային ձևով:

Ռուսերեն՝ аэроплан—самолёт
Ուկրաիներեն՝ аероплан—літак
Բուլղարերեն՝ аероплан—самолет
Իտալերեն՝ aeroplan—samolot

Չեխերեն՝ aeroplan—letodlo
Գերմաներեն՝ Aeroplan—Fengzeug
Անգլերենում՝ aeroplan—aivplane *կամ* plaue.[75]

Եվ վերջապես հայերենում՝ աերոպլան՝ օդանավ, սավառնակ, ինքնաթիռ։

Մի շարք հետազոտողներ ընդհանրապես չեն ընդունում բառերի այս կարգի գոյությունը։ Ոմանք էլ ընդունում են բառի միջազգայնության տարբեր չափանիշներ։ Այդ պատճառով գիտական գրականության մեջ միջազգային բառապաշարի մեկնաբանման հարցում միասնական կարծիք գոյություն չունի։

Կասկածի տակ չառնելով բառային տվյալ կարգի օբյեկտիվ գոյությունը[76], մեր կարծիքով նպատակահարմար է փորձել հետագայում ճշտելու, այսպես կոչված «միջազգային բառապաշար» հասկացությունը։

Բառերի միջազգայնության որոշումը գիտական կենսական և առաջնակարգ խնդիր է։ «Միջազգային բառեր» հասկացությունը հարաբերական է, հետևաբար, միշտ պետք է խոսել բառերի միջազգայնության տարբեր աստիճանների կամ դրսևորումների մասին։ Հատկանշական է, որ ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ բառապաշարի միջազգայնության խնդրին ավելի ու ավելի մեծ ուշադրություն է հատկացվում։ Դա ամենից առաջ բացատրվում է այն նշանակալի դերով և աննախընթաց աճով, որ կատարում են օտար բառերն ու տերմինները լեզվական գործունեության մեջ, կապված լեզուների փոխադարձ շփման և ներթափանցման պրոցեսների հետ։

Բառերի «միջազգայնության» պրոբլեմը, պատմականորեն կապված է փոխառության պրոբլեմի հետ[77]։ Բառագիտական տեսակետից միջազ-

---

75 *В. В. Акуленко,* Существует ли интернациональная лексика, ВЯ, № 3, 1961, стр. 87.

76 *Գիտական գրականության մեջ փորձ է արվում հաշվելու (գեթ մոտավոր) միջազգային բառերի քանակը առանձին լեզուներում։ Այսպես, վ. վ. Վինոգրադովը նշում է, որ ռուսաց լեզուն հիմնականում յուրացնելով եվրոպական լեզուների միջազգային բառապաշարը XX դարի սկզբին, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ արդեն ուներ ավելի քան 100.000 միջազգային բառ В. В. Виноградов,* Основные этапы истории русского языка (статья третья), РЯШ, № 1, 1968.

Ըստ վ. Գեորգիևի և Ի. Դուրիդանովի քննության, բուլղարերեն լեզվի և տառով սկսվող բառերի մոտ 30 տոկոսը պատկանում է միջազգային բառապաշարին В. Георгиев, И. Дуриданов, Езикознания, София, 1968, стр. 153—154).

77 *М. Маковский,* К проблеме так называемой «интернациональной» лексике, ВЯ, № 1, 1960, стр. 41—50.

գային բառերը ոչ այլ ինչ են, եթե ոչ փոխառություններ։ Այդ երկու հասկացությունները իրարից տարբերվում են ըստ երևույթին նրանով, թե ինչ տեսանկյունով ենք մոտենում հարցի քննությանը։ Երբ փոխառյալ բառերը ուսումնասիրում ենք որևէ որոշակի լեզվում, մենք գործ ունենք սոսկ փոխառությունների հետ։ Եթե հետազոտման նպատակը փոխառությունների միջև եղած կապի որոշումն է, երբ վերջիններս բացահայտվում են միաժամանակ տարբեր լեզուներում, ապա այդ դեպքում արդեն գործ ունենք, այսպես կոչված, «միջազգային բառերի» հետ։

Պետք է նշել, որ բառերի տվյալ կարգը մինչև այժմ քննվել է բացառապես եվրոպական լեզուների նյութի հիման վրա։ Այդ իսկ պատճառով, ներկայումս, բառերի միջազգայնությունը բնութագրելիս չափազանց կարևոր է հրաժարվել արդեն սովորույթ դարձած այն տեսակետից, թե բառերի միջազգայնությունը հատուկ է սոսկ եվրոպական լեզուներին, և նկատի ունենալ, որ ուրիշ մշակութային ոլորտներին պատկանող լեզուներում նույնպես կան միջազգային բառեր։ Այսպես, եվրոպական ոլորտին, որը հարուստ է լատինական և հունական բառերով ու տերմիններով, կարող են հակադրվել այն ոլորտները, որտեղ նմանօրինակ դեր են խաղում արաբերենը և այլ լեզուները։

Աշխարհի տարբեր լեզուների համաժամանակյա-համադրական քննությունը ցույց է տալիս, որ ներկայումս գոյություն ունեն միջազգայնության մի քանի հիմնական ոլորտներ, որոնք համախմբված են մարդկային քաղաքակրթության առավել տարածված լեզուների շուրջը։ Չի կարելի միջազգային կոչել այն երևույթները, որոնք առանձնահատուկ են միայն ազգակից լեզուներին։ Այսպես՝ միայն գերմանական կամ միայն Բյուրքական լեզուների առանձնահատկությունները դեռևս միջազգայնության երևույթ չեն։ Այստեղից պարզ է, որ իսկապես միջազգայնական ուսումնասիրություններ պետք է հանդիսանան ոչ միայն մեկ ազգակից, այլև հեռավոր ազգակից և նույնիսկ ոչ ազգակից լեզուներում։ Միջազգայնության բնորոշման բոլոր չափանիշները ելնում են բառերի տարածվածության աստիճանից, այն բանից, որ այդ բառերը կան բոլոր կամ

---

78 Սակայն պետք է նշել, որ ոչ միայն ոչ բոլոր փոխառություններն են դառնում միջազգային բառեր, այլև ոչ բոլոր միջազգային բառերն են փոխառություններ։ Առաջին դրույթը ապացույցի կարիք չի ունենում։ Ինչ վերաբերում է երկրորդին, ապա պետք է նշել, քանի որ յուրաքանչյուր, քեկուզև միջազգային բնույթ ունեցող բառ կամ տերմին փոխ է առնված որևէ լեզվից, ապա վերջինիս համար այդ բառը, բնականաբար, փոխառյալ չի կարող լինել։

գոնե մի շարք ժողովուրդների լեզուներում և չեն սահմանափակվում մեկ լեզվի շրջանակներում։

«Միջազգայնությունը» ընկալվում է լեզվաբանների կողմից որպես բառերի և տերմինների որոշակի բնութագիր, նկատի են առնվում այն բառույթները, որոնք մինչև նույնության աստիճան մոտ են գրությամբ և լրիվ կամ մասնակի իմաստով արտահայտում են ազգային շրջանակներից վաղուց դուրս եկած հասկացություններ՝ գոյություն ունենալով մի քանի (գործնականորեն 3-ից ոչ պակաս) համաժամանակյա զուգահեռ այդ թվում հեռավոր ազգակից և ոչ ազգակից լեզուներում[79]։

Այդ պատճառով հասկանալի է, որ նորագույն գրականության մեջ առաջ են քաշվում երեք լեզուներ որպես բառի միջազգայնության նվազագույն զուգաբանության չափանիշ[80]։

Որոշ մասնագետներ գտնում են, որ բառը միջազգային կարելի է համարել լոկ այն դեպքում, երբ նրա զուգաբանությունը անցնում է երեք ոչ ազգակից լեզվաընտանիքների միջով, թեև նրա անցումը լեզվաընտանիքների միջով արդեն միջազգայնության առաջին փուլն է[81]։

Ինչպես տեսնում ենք, հետազոտողները խոսելով «միջազգայնության» մասին, փաստորեն նկատի են ունենում բառերի տարածվածությունը ցեղակից և ոչ ցեղակից մի քանի լեզուներում։

«Միջազգայնության» հասկացության վերը նշված մեկնաբանությունը ունի նաև իր սահմանափակումները, որոնք կապված են «միջազգային բառ» հասկացության արտահայտած բնույթի հետ։ Այն բառերն ու արտահայտություններն են կոչվում միջազգային, որոնք հասկանալի են տվյալ լեզվական շրջանի սահմաններից դուրս։ Այսպիսով, բառի և արտահայտության միջազգային լինելու չափանիշը դրանց ծանոթ մարդկանց քանակությունն է։ Իրականում «տեխնիկական տերմինների» «միջազգայնության» աստիճանը չի կարող որոշվել լեզվական տվյալ շրջանի բնակչության ընդհանուր թվով, քանի որ այն համեմատական է ոչ թե այդ շրջանների բնակչության թվին, այլ այն բանին, թե որքանով է այդ շրջաններում տարածված և զարգացած տվյալ մասնագիտությունը։ Ըստ երևույթին, միջազգային պետք է համարվեն բառեր բոլոր իմաստով միայն այն բառերն ու արտահայտությունները, որոնք միջազգային են և ըստ

79 *В. В. Акуленко*, նշվ. աշխ., էջ 61։
80 *А. А. Белецкий*, նշվ. աշխ., էջ 79։
81 *В. В. Акуленко*, նշվ. աշխ., էջ 61։

նշանակության։ Հենց այդ իմաստով միջազգային հնչյունական ձև են ներկայացնում, օրինակ՝ motor, rotor բառերը»[82]։

Այսպիսով, մեր կարծիքով, միջազգային կարող են համարվել այն տերմինները, որոնք միաժամանակ գոյություն ունեն ոչ պակաս, քան երեք ոչ մերձավոր ցեղակից լեզուներում նույն նշանակությամբ։ Այդ դեպքում հաշվի չեն առնվում նրանց գրության և արտասանության որոշ տարբերություններ, որոնք կապված են լեզուների այբուբենների, հնչյունաբանության և ուղղագրության հետ։ Սակայն այդ ամենը պետք է լինի որոշ սահմաններում, քանի որ շատ դեպքերում բառը փոխառու լեզվում կարող է բոլորովին անճանաչելի դառնալ։

Այսպիսով, «միջազգային բառերի» քննության ժամանակ հատկապես կարևոր է նկատի ունենալ հետևյալ սահմանափակումը. որքան լրիվ է փոխառյալ բառերի ձուլվածությունը լեզվի արմատական բառերի հետ, այնքանով նրանց միջազգայնության աստիճանը թույլ է։

Մինչև անգամ «ստանդարտ» հասկացության հնչյունային ձևը դեռ միջազգայնորեն ստանդարտացված չէ։ Շատ արտահայտություններ իրենց գրային ձևով ավելի միջազգային են, քան հնչման ձևով, օրինակ՝ ամեն մեկի համար, ում հայտնի է ռուսերեն-горизонт-ը, գերմաներեն-horizont-ը, ֆրանսերեն horizon-ը, հասկանալի է և անգլիական-horizon գրային ձևը, սակայն անգլիական ուղղագրության չկարգավորվածության պատճառով անգլերեն horizon բառը հնչման ձևով կարող է մնալ անճանաչելի։ Այսպիսով, եվրոպական բառերի նմանությունը ավելի հաղվադեպ է արտացոլվում բանավոր խոսքում, որտեղ այն միշտ հարաբերական է։ Մենք խոսում ենք, իհարկե, բառի միայն ձևա-հնչյունական կազապարի զուտ նմանության մասին։ Լեզուների այս կամ այն հնչյունների գրությունը ոչ մի նշանակություն չունի տարբեր լեզուների բառերի գործնական նույնացման համար։ Առանձին բառերի նմանության իդեալական դեպքերը խոսքի ընդհանուր ձևերում հնարավոր են միայն առանձին ազգակից լեզուներում, որոնք ընդգրկում են միայն գիտության մի մասը[83]։

Ըստ Վյուստերի՝ «միջազգային» են բառիս բուն իմաստով միայն այն արտահայտությունները, որոնք միջազգային են և ըստ նշանակության[84]։ Այս իմաստով մեր երկրում սովետական կարգերի հաստատումից հետո

---

82 *Е. Вюстер,* Международная стандартизация в технике, М., 1935.

83 Կարելի է համեմատել նաև ընդհանուր հիերոգլիֆների դեպքը ոչ եվրոպական լեզուներում գաղափարագրական գրության հետ։

84 *Е. Вюстер,* Международная стандартизация языка в технике, М., 1935.

միջազգային բառերի օգտագործումը դարձավ լեզվի հարստացման հիմնական աղբյուրներից մեկը։ Այս միջազգային բառերը և՛ իրենց որակով, և՛ նշանակությամբ տարբերվում են մինչսովետական փոխառություններից։ Սրանք կապված են տնտեսական ու քաղաքական այն փոփոխությունների հետ, որոնք տեղի են ունեցել մեր երկրում սոցիալիստական շինարարության ու մշակույթի բուռն վերելքի պայմաններում։ Այս բառերը դասակարգվում են հետևյալ կերպ.

1. *Միջազգային բառեր կապված մարքս-լենինյան ուսմունքի հետ։* Օրինակ՝ **դիալեկտիկա, մատերիալիստ, ինտերնացիոնալ, սոցիալիստ, էկոնոմիկա, թեորիա, մեթոդ, ուտոպիական սոցիալիզմ, մարքսիզմ-լենինիզմ, պրոլետարիատ, դիկտատուրա:**

2. *Հեղափոխական շարժման հետ կապված բառեր. դրանց մի մասը մեր լեզվի մեջ մուտք է գործել մինչև սովետական կարգերի հաստատումը։* Օրինակ, սոցիալիզմ, կոմունիզմ, պրոլետար և այլն։

20-ական թվականներին միջազգային տերմինների ներմուծումը կատարվում էր շատ ղգույշ ու պանդազորեն։ Առանձին դեպքերում օգտագործվում էին զուգահեռ նշանակության բառեր՝ նստաշրջան և սեսիա, հեղափոխություն և ռևոլյուցիա, խորհուրդ և սովետ և այլն։

Տարբեր տիպի միջազգային բառերի նկատմամբ վերաբերմունքը տարբեր ժողովուրդների մոտ տարբեր է։ Ընդհանուր առմամբ արհեստական լատինական բառերի նկատմամբ մի շարք գիտությունների (բժշկություն, կենսաբանություն, քիմիա) վերաբերմունքը ավելի պիջողական է, քան լատինատիպ[85] *բառերի նկատմամբ։* Թեև լատիներենը կորցրել է կենդանի լեզվի բնույթը և որպես «մասնավոր լեզու» ընդունակություն չունի նախադասություններ կազմելու, այսինքն՝ կենդանի լեզու չէ այժմ, սակայն այն պահպանվել է որոշ անվանումների լատինական համակարգում։ Մինչև այժմ բժշկությունը, բուսաբանությունը և կենդանաբանությունը օգտվում են անվանումների լատինական համակարգից, ընդ որում անվանումների այս համակարգերը վերաբերում են այն ժամանակներին, երբ լատիներենը գիտության միակ լեզուն էր։ Վերջինս բացատրվում է հավանորեն նրանով, որ այդ բառերը պահպանելով իրենց հնագույն վերջավորությունները, ընկալվելով որպես լեզվից դուրս գտնվող միավորներ, ազգային լեզվի բառարանում առանձնահատուկ տեղ գրավելու հավակնություն չունեն։

---

85 Լատինատիպ բառեր հասկացության տակ մենք հասկանում ենք այն բառերը, որոնց հիմքը լատինական է, իսկ թեքման ձևերը և հաճախ նաև ածանցները՝ ազգային։

Միջազգային բառերը գիտությունների որոշ բնագավառներում կազմում են իմաստների (նշանակությունների) ավարտուն համակարգեր և այդ բնագավառներում ներառվում են նշանակումների ազգային համակարգերի մեջ։ Այսպես, 1949 թ. ընդունված բուսաբանական անվանացանկի միջազգային կանոններում գրված է. «Երբ տարբեր բուսաբաններ սկսեին օգտագործել տարբեր անվանումներ միևնույն բույսի համար, ապա նրանք միմյանց չէին հասկանա։ Եվ բուսաբանության մեջ կարիքը լիակատար քաոս, ինչպես այդ տեղի կունենար նաև բնական գիտությունների տարբեր բնագավառներում, օրինակ՝ քիմիայում քիմիական տարրերի պայմանական նշանակումների կամային փոփոխումների, մաթեմատիկայում՝ բանաձևերում օգտագործվող նշանակումների և նշաններին, աստղագիտության մեջ՝ աստղերի անունների վերափոխման դեպքում և այլն[86]։

Այսպիսի համակարգերը անկասկած հեշտացնում են միջազգային հաղորդակցման հնարավորությունը։ Բառի միջազգայնության համար պարտադիր են բառերի միայն հիմքերը, կամ նույնիսկ հիմքի մասերը[87]։

Մյուս կողմից՝ համապատասխան բառանյութերի ազգային հայտնի տարբերությունները ապահովում են նրանց համակարգայնությունը և ինքնատիպությունը յուրաքանչյուր լեզվում, այն ժամանակ, երբ նրանց միջլեզվային ընդհանրությունը կարևոր օժանդակ միջոց է ինֆորմացիայի միջազգային փոխանակման գործում[88]։

Էական է նաև այն, որ միջազգային բառերը օգտագործվում են միջազգային հաղորդակցման ընթացքում օտար լեզուների հետ այս կամ այն չափով ծանոթ մարդկանց կողմից։ Մեծ նշանակություն ունի միջազգային բառապաշարը գեղարվեստական գրականության թարգմանության համար, իսկ առանձնապես մեծ է նրա նշանակությունը մասնագիտական գրականության ընթերցման և թարգմանության գործում, որտեղ միջազգայնությունը օտար տեքստի ամենից ավելի հեշտ ըմբռնվող տարրերն են։ Շատ ավելի կարևոր է այս հարցը այն լեզուների համար, որոնց գիտական տերմինաբանությունը նոր է միայն սկզբնավորվում։ Օրինակ, ՍՍՀՄ ժողովուրդների բազմաթիվ նորագիր լեզուներ լայնորեն հաղորդակից են դարձել միջազգային տերմինաբանության բառապաշարին ռուսաց լեզվի միջոցով։ Այս պրոցեսը, որը սկսվել էր դեռևս մինչհոկ-

---

86 Международные правила ботанической номенклатуры, М., 1949.

87 *А. А. Реформатский*, Введение в языковедение, М., 1967, стр. 93.

88 *Ю. Д. Дешериев*, Развитие младописьменных языков народов СССР, М., 1958, стр. 216—218.

տեմբերյան շրջանում, բնորոշ է հատկապես սովետական ժամանակաշրջանին[89]։

Հատուկ անունների մեծ մասը արդեն իրենց նշանակության բնույթով միջազգային է։ Այս պատճառով այնպիսի արտահայտությունները, որոնցում բաղադրիչներից մեկը ներկայացված է հատուկ անունով, միջազգայնորեն ավելի հասկանալի և ավելի միանշանակ են, քան այն արտահայտությունները, որոնցում որոշող անդամը արտահայտում է որոշվողի մի ինչ-որ հատկանիշը, մինչև իսկ այն դեպքում, երբ հատկացության ձևը տարբեր լեզուներում նույնն է։ Օրինակ, այնպիսի տերմիններ, ինչպիսին են վոլտ, ամպեր, օմ[90] և այլն, անկասկած միջազգային են, քանի որ նրանք անթարգմանելի են։ Նույնը կարելի է ասել նրանցից կազմված բարդ կամ երբեմն էլ բաղադրյալ տերմինների մասին, իհարկե, այն դեպքում, երբ այդ տերմինների երկրորդ բաղադրիչը նույնպես միջազգային է, բնև կարելի է թարգմանել. Համմ. վոլտմետր, ամպերմետր և վոլտաչափ, ամպերաչափ և այլն։

Իսկական միջազգային արտահայտություններից պետք է տարբերել այնպիսիները, որոնք թեև մտնում են տարբեր լեզուների մեջ (մեծ մասամբ որպես փոխառություններ), բայց ըստ նշանակության նույն ձևով չեն օգտագործվում առանձին լեզուներում։ Օրինակ вокзал բառը ռուսերենում և գերմաներենում ունի «կառամատույց» նշանակությունը, բայց ֆրանսերենում այն նշանակում է «սանդուղք» կամ «սանդուղքի աստիճաններ»։ Այսպիսի արտահայտությունները կարելի է անվանել կեղծմիջազգային[91]։ Դրանց ազդեցությունը լեզվի դյուրըմբռնելիության վրա խիստ բացասական է, քանի որ դրանք հեշտությամբ կարող են թյուրիմացության տեղիք տալ։ Դրա փայլուն օրինակը բերում է Հելմհոլցը, որն իր իսկ խոստովանությամբ միայն մի քանի տարի աշխատելուց հետո հայտնաբերել է, որ իր կողմից օգտագործվող weber[92] կոչված միավորը, Անգլիայում ուներ 10 անգամ ավելի մեծ արժեք, քան Գերմանիայում։ Հատկապես վտանգավոր են այն կեղծ-միջազգային ձևերը, որոնք ունեն տարբեր, բայց իրար մոտ նշանակություններ։ Օրինակ՝ անգլերենում, գերմաներենում, ռուսերենում, իսպաներենում transformator նշանակում է միայն անշարժ մեքենան, իսկ իտալերենում trans-

89 Նույն տեղում։

90 Գիտական գրականության մեջ այդ բառերը անվանում են թարգմանչի կեղծ բարեկամներ (ложные друзья переводчика).

91 Այս բառերը նույն նշանակությամբ գործածվում են անգլերենում։

92 1881 թ. Փարիզի էլեկտրատեխնիկական կոնգրեսի որոշմամբ weber-ը փոխարինված է amper-ով։

formator-ը՝ նաև պատվող մեքենա է նշանակում։ Այսպիսի բառերի օրինակները շատ են, սակայն բավարարվենք այսքանով։ Հասկացության ձևի կեղծ-միջազգայնության հիման վրա առաջացած թյուրիմացությունները հեշտությամբ կարող են շտկվել, եթե արտահայտության ձևը ծանոթ է օտարերկրացուն։ Նա, բնականաբար, այդ արտահայտությունը կապում է իրեն հայտնի մայրենի լեզվի իմաստի հետ։ Սակայն եթե այդ երկու արտահայտությունների իմաստներն մասամբ են մոտ իրար, նա կարող է երկար ժամանակ մնալ մոլորության մեջ, չնկատելով սխալը։

10. ՏԵՐՄԻՆԸ ԵՎ ԼԵԶՎԻ ՄԱՔՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Խոսելով փոխառության խնդրի մասին, չի կարելի կանգ չառնել մաքրամոլության հարցի վրա։ Մաքրամոլության ձգտումը ժամանակ առ ժամանակ հանդես է գալիս որպես գրական լեզուների զարգացման բնորոշ միտումներից մեկը, միտումներ, որոնք առավել կամ պակաս չափով որդեգրել են համարյա բոլոր զարգացած լեզուները։ Ինչպես վերը նշվեց, ամեն մի զարգացող լեզու իր մեջ ներառում է նաև ուրիշ լեզուների տարրեր։ Լեզուներում օտար ազդեցության արտաքին արտահայտությունն այն օտար բառերի փոխառություններն են, որոնք գլխավորապես կապված են փոխառյալ առարկաների՝ իրերի և հասկացությունների հետ։

Ժամանակակից մի շարք լեզուների բառապաշարի զարգացման մեջ բախվում են երկու հակադիր միտումներ. մի կողմից հակում դեպի փոխառությունները և դրանով մերձեցում այսպես կոչված միջազգային բառապաշարի ու տերմինաբանության հետ, մյուս կողմից, մաքրամոլության ձգտում, որ կապված է իր հերթին սոցիալ-տնտեսական որոշակի գործոնների հետ։ Այս հարցի լուծումը լուրջ նշանակություն ունի նույնիսկ կուլտուրական խոշոր ազգերի լեզուների համար, քանի որ, ոմանց կարծիքով, մաքրամոլության խրախուսումը ի վերջո կարող է առնղծել «միայնակության մեջ մնալու վտանգ»[93]։

Մաքրամոլության պատճառները տարբեր են։ Ըստ Գ. Օ. Վինոկուրի՝ դրանք երկու կարգի են՝ զգացմունքային և գաղափարական[94]։ Մի փոքր այլ առորաբաժանում է տալիս Վ. Պ. Գրիգորևը[95]։ Ըստ նրա՝ մաք-

---

93 *Г. О. Винокур,* О пуризме, В сборнике статей «Культура языка», Издание 2-ое, Из-во Федерация, М., 1929, стр. 87—88.

94 Նույն տեղում, էջ 87—88։

95 *В. И. Григорьев,* Культура языка и языковая политика, Вопросы культуры речи», вып. 4, АН СССР, 1963, стр. 11.

բամոլները գիտակից «լեզվական քաղաքագետներ» են, որոնք սխալ են պատկերացնում լեզվի զարգացման ընթացքը:

Իհարկե, անվերապահորեն չի կարելի ընդունել հիշյալ հեղինակների տեսակետները և առանձնապես, այսպես կոչված, մաքրամոլության պատճառների վերաբերյալ նրանց մեկնաբանությունները: Բոլոր ժողովուրդների և բոլոր ժամանակների համար այդ հարցին չի կարելի նույնությամբ մոտենալ, միանման վերաբերմունք ցույց տալ, այսինքն՝ մեկ «արշինով չափել» այդ կենսական հարցը բոլոր լեզուների համար:

Մաքրամոլության ընդհանուր բնորոշումից անցնենք մաքրամոլության հարցերին տերմինաբանության մեջ: Մեր կարծիքով, մաքրամոլության հարցերը քննելիս յուրաքանչյուր մասնավոր դեպքում պետք է կոնկրետ վերաբերմունք ցուցաբերել: Ազգային ինքնագիտակցության բարձրացման հետ մեծանում է հետաքրքրությունը ազգային լեզվի նկատմամբ, որ երբեմն արտահայտվում է արտաքինից, փոխառյալ տարրերից այդ լեզվի մաքրման առավել կամ պակաս պահանջկոտություն: Այդ պահանջկոտությունը տարբեր ժամանակաշրջաններում, և տարբեր ժողովուրդների տարբեր ներկայացուցիչների մոտ միանման չէ: Ճնշված ժողովուրդների մաքրամոլական ձգտումներում կա իր որոշակի իմաստը, ժողովուրդներ, որոնց սպառնում է ապազգայնացման և լեզվի կորուստի վտանգը: Այդ տեսակետից, որոշ չափով արդարացված է նաև արևմտահայերենի մաքրամոլությունը:

Ինչպես նշել ենք, արևմտահայերի մոտ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին մեծ թափ են ստացել մաքրամոլության միտումները: Արևմտահայ տերմինաշինարարները ձգտում էին թարգմանել բոլոր գիտական տերմինները, ներառյալ նույնիսկ այնպիսի բառեր, որոնք փոխառվել են հունարան դպրոցի ներկայացուցիչների կողմից հնագույն ժամանակներում: Այժմ էլ արևմտահայերենը ծայրահեղորեն պաշտպանվում է նորագույն փոխառություններից: Սրա լավագույն վկայությունն են հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական այնպիսի տերմինների թարգմանությունը, ինչպիսիք են՝ տանկ–հրասայլ, ռադիո–ձայնասփյուռ, ավտոմեքենա–ինքնաշարժ, ռեալիզմ–իրապաշտություն, մատերիալիզմ–նյութապաշտություն, մատերիալիստ–նյութապաշտ, կոմունիզմ–համայնավարություն, կոմունիստ–համայնավար, սոցիալիզմ–ընկերավարություն, սոցիալիստ–ընկերավար և այլն: Այս կարգի բառերի որոշ մասը մուտք է գործել նույնիսկ Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը», ինչպես, օրինակ՝ հուզարկու–ագիտատոր, հուզարկություն–ագիտացիա, հուզարկել–ագիտացիա մղել և այլն: Սակայն,

ճշմարտությունը պահանջում է նշել, որ արևմտահայերենում շատ դիպուկ թարգմանված բազմաթիվ բառեր ու տերմիններ որդեգրվել են ժամանակակից հայերենի կողմից և հաջողությամբ ծառայում են նրան:

Օտարազգի բառերի և տերմինների անհարկի թարգմանության և հատկապես հայ տերմինաշինության մեջ մարքսամոլության ծայրահեղ միտումներին կողմնակից չէր նաև Հայագիտության մեծ երախտավոր Հ. Աճառյանը[96]:

Այսպիսով, չպետք է ընկնել ծայրահեղության մեջ, ձգտելով ամեն կերպ լեզվից դուրս մղել բոլոր փոխառյալ տերմինային տարրերը, որոնց թվում այնպիսինները, որոնք հաստատապես մտել են հայոց լեզվի բառապաշարը:

Լեզուների պատմությունը ցույց է տալիս, որ արհեստական և անճաշակ բառերը բառարանից այն կողմ չեն անցնում: Փոխառյալ տերմինների բռնի արտամղումը, առանց հայերեն համապատասխան հաջող տերմինների առկայության, հայոց լեզուն կարող է կտրել ժողովրդական կենդանի խոսքից, ժամանակակից դիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ընթացքից: Խոսքը ոչ միայն հայերեն լեզվի կողմից դժվարությամբ յուրացվող առանձին տերմինների մասին է, որոնցից շատերը փոխ են առնվել դեռևս նախահեղափոխական շրջանում:

II. ԲԱՌԱՊԱՏՃԵՆՈՒՄ

Բառապատճենումը օտար բառերի յուրացման հատուկ ձև է: Ժամանակակից լեզվաբանության մեջ բառապատճենում ասելով հասկանում ենք որևէ բառի կամ բառակապակցության թարգմանությունը օտար լեզվից մայրենի լեզվի:

Ա. Ա. Բելեցկին նշում է, որ «բառապատճենում» տերմինը լեզվաբանության մեջ ճիշտ կամ հարմար չէ և առաջարկում է դրա փոխարեն նոր տերմին՝ մետաֆիոզ, այսինքն՝ ղգեստափոխում[97]: Դա, ըստ Ա. Ա. Բելեցկու, ավելի ճշգրիտ է արտահայտում այս պրոցեսի էությունը, քանի որ լեզվից լեզու անցնելիս բառը կամ բառակապակցությունը կարծես թե փոխում է «ղգեստը»՝ պահպանելով իր նշանակությունը: Սակայն,

---

96 Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, 1951, էջ 588—589:*

97 *А. А. Белецкий.* Об интернационализмах. «Збірник філологічного факультету Київского держ. ун-ту», вып. 8, Київ, 1955, стр. 74.

մեր կարծիքով, հարկ չկա շատ լեզուներում ընդունված և քաղաքացիության իրավունք ձեռք բերած տերմինը փոխարինել նորով:

Պատճենումը, սովորաբար, թարգմանիչների ու բառարան կազմողների ձեռքի գործն է և, հետևաբար, ծագում է գրային ճանապարհով: Այն բավական արդյունավետ է մանավանդ հայերենում, որ առաջնակարգ տեղ է գրավում նոր տերմինների և բառերի ստեղծման մեջ:

Նոր տերմինների և բառերի կազմման այս եղանակը հայտնի է և կիրառվում է հայերենում դեռևս V դարից, հունաբան դպրոցի ժամանակներից: Դեռևս այդ շրջանում հունարենից գիտական գրականության թարգմանության ժամանակ թարգմանիչների համար պարզ դարձավ, որ հայոց լեզուն որոշ դեպքերում հնարավորություն չունի հաղորդելու բնագրի ուղղակի իմաստը: Ջրավարարվելով մայրենի լեզվով, թարգմանիչները հունարենի օրինակով սկսեցին ստեղծել նոր հայերեն բառեր՝ վերջիններս պատճենելով հունարենից: Փաստորեն այդ դպրոցի ներկայացուցիչները հայերենում դրեցին բառապատճենման հիմքերը, որը, ինչպես ասվեց, լեզվի բառապաշարի հարստացման կարևորագույն միջոցներից մեկն է:

Անգնահատելի է հունաբան դպրոցի դերը հայերեն գիտական տերմինաշինության բնագավառում, փիլիսոփայական, ճարտասանական և քերականական տերմինաբանության ստեղծման գործում: Հունաբան դպրոցի ներկայացուցիչների ստեղծած տերմինները չեն կորցրել իրենց արժեքը և ներկայումս: Հունաբան դպրոցի քերականական տերմինաբանությունը ստեղծվել է հիմնականում հայերենի լեզվական միջոցների, իմաստների, երբեմն նաև բառի կառուցվածքի պատճենման միջոցով[98]: Այս վերջինում էլ կայանում է հունաբան դպրոցի ներկայացուցիչների սխալը: Հետևելով հունարենին, նրանք շատ դեպքերում խախտել են հայերեն բառաբարդման կառուցվածքը: Նրանց կողմից կազմված մի շարք բարդ բառերում երկրորդ բաղադրիչը բացատրում է առաջինը. օրինակ՝ **Տաղամամայր**[99], **ստեղծաբան**, **սիրաբան** և այլն:

Հունաբան դպրոցի ներկայացուցիչների դերը և նշանակությունը գնահատելիս պետք է նշել, որ նրանց ստեղծած տերմինների զգալի մասը դարերի ընթացքում պահպանվել է անփոփոխ և այժմ էլ հաջողությամբ օգտագործվում է գիտության մեջ:

---

98 Ս. Մուրադյան, *Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում*, Երևան, 1971:

99 Հետաքրքրական է, որ ժամանակակից հայերենում **Տաղամամայր** բառը օգտագործվում է հատկապես բանաստեղծական լեզվում:

Ինչպես ասվեց վերևում, պատճենումը հայերենում ամենից արդյունավետ և պատմականորեն արդարացված բառակազմական եղանակներից մեկն է, որով լեզվի սեփական միջոցներով թարգմանվում են օտար բառերը, ավելի ճիշտ՝ հասկացությունները։ Երբ Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո նոր տերմինների կազմության անհրաժեշտություն առաջացավ, հայերեն բառապաշարը մի կողմից լրացվեց ի հաշիվ ռուսերենի միջոցով կատարված փոխառությունների, մյուս կողմից՝ ռուսաց լեզվից կատարվեցին շատ պատճենումներ, որոնք հաստատապես մուտք գործեցին հայոց լեզվի մեջ և իրենց հերթին հիմք հանդիսացան մի շարք բառերի կազմման համար։

Անդրադառնալով ռուսերենից կատարած բառապատճենումների հարցին, Հ. Աճառյանը գրում է.

«Փոխառություններից շատ ավելի հետաքրքրական են այն բառերը, որ հայ հեղինակները թարգմանել ու թարգմանում են շարունակ ռուսերենից (երբեմն ուղղակի և անփոփոխ, երբեմն էլ բարելավելով ու գեղեցկացնելով) և մտցրել են մեր լեզվի մեջ»[100]։

Գ. Սևակը իր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացում» բերում է սովետական շրջանի պատճենումների հետևյալ ցանկը[101]. ударник—հարվածային, пятилетка—հնգամյակ, колхоз—կոլտնտեսություն, колхозник—կոլտնտեսական, единоличник—մենատնտես, железная дорога—երկաթուղի, пулемет—գնդացիր, поезд—գնացք, совпадать—համընկնել, порядок дня—օրակարգ, опытное поле—փորձադաշտ, одновременный—միաժամանակյա, самокритика—ինքնաքննադատություն, вредительство—վնասարարություն, чистка—զտում, самотек—ինքնահոս, паровоз—շոգեքարշ, самолет—ինքնաթիռ, поле зрения—տեսադաշտ, поле ледяное—սառցադաշտ, целесообразно—նպատակահարմար, подпольный—ընդհատակյա, трудодень—աշխօր, политрук—քաղղեկ, противогаз—հակագազ, поденщик—օրամշակ։

Բառապատճենումները ըստ կառուցվածքային-իմաստային հատկանիշների կարող են լինել երկու տեսակի՝ իմաստային և կառուցվածքա-իմաստային։

1. Իմաստային պատճենումները արտահայտում են միայն տվյալ տերմինի նշանակությունը և ոչ թե նրա բառացի թարգմանությունն են։

---

100 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 589—590։

101 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 24։

Քննարկվող բառարաններում այս կարգի բառերը բավականին լայն չափերով են ներկայացված։

Բերենք մի քանի օրինակ՝ аукционист—աճրդավաճառ[102], арбитр—իրավարար, анкета—հարցաթերթ, альтернатива—երկընտրանք, альтернативный—երկընտրելի, кодекс—օրենսգիրք, кассация—վճռաբեկություն, коммивояжер—շրջիկ գործակատար, монополия—մենաշնորհ, патент—արտոնագիր, рапорт—զեկուցագիր[103], шатун—շարժաթև, педаль—ոտնակ, мензурка—չափանոթ, лобзик—նրբասղոց, душ—ջրցան, водокачка—ջրհանոց, вертушка—պտուտաճ, маховик—թափանիվ, яхта—զբոսանավ, портативный—դյուրակիր[104] *և այլն։*

2. Կառուցվածքային-իմաստային պատճենումները արտահայտում են ոչ միայն բառի իմաստը, այլև երբեմն նաև բառի կառուցվածքային կաղապարը։ Դրանք բառերի տառացի թարգմանություններն են։ Այս տիպի բառապատճենումները նույնպես բավականին լայն տարածում ունեն հայոց լեզվի տերմինաշինության մեջ։ Դիմենք բառարանագրական նյութին։

Безбрачие—անամուսնություն, двусторонний—երկկողմանի, единообразный—միօրինակ, иммиграция—ներգաղթ, целесообразно—նպատակահարմար, эквивалент—համարժեք, юриспруденция—իրավաբանություն, абстракция—վերացականություն, абстрактный—վերացական, авиация—օդագնացություն, антитезис—հակադրույթ, платежеспособность—վճարունակություն, перезалог—կրկնագրավ, перевыборы—վերընտրություն, компенсация—փոխհատուցում, самозащита—ինքնապաշտպանություն, самозванство—ինքնակոչություն, самодеятельность—ինքնագործունեություն։

Պատճենվել կարող են ոչ միայն առանձին տերմիններ, այլև տերմինաբանական բառակապակցություններ։ Օրինակ՝ чистая прибыль—զուտ վաստակ, формулировка обвинения—մեղադրանքի բանաձևումը, разделение голосов—ձայների բաժանվելը, разделение власти—իշխանության բաժանումը, наложенный платеж—վերադիր վճար, пересмотр дела—գործի վերաքննություն, партикулярное за-

---

102 «Համառոտ ռուս-հայերեն բառարան առևտրահաշվապահական տերմիններից»։

103 «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան»։

104 «Երկաթուղային տերմինների ռուս-հայերեն բառարան»։

конодательство—մասնավոր օրենսդրություն[105], заборная книжка—ապառքների գրքույկ, задельная плата—ըստգործնյա վճար:

Պատճենվել կարող են նույնիսկ դարձվածաբանական միավորները: Օրինակ՝ найти общий язык—ընդհանուր լեզու գտնել, принятя меры—միջոցներ ձեռք առնել, целиком и полностью—լրիվ և ամբողջությամբ *և այլն:*

Լրիվ պատճենումների հետ մեկտեղ լեզուներում հանդիպում են և կիսապատճենումներ: Կիսապատճենումը փոխառու լեզվով կիրով չափ կատարված թարգմանություն է: Օրինակ՝ бетон с гравием—խճաբետոն, бетон известковый—կրաբետոն, бетон каменный—քարաբետոն *և այլն*[106]:

Ինչպես նշել ենք, սովետական շրջանում հայերենը ուղղակի փոխառություններ և բառապատճենումներ կատարում է հատկապես առներենից կամ ռուսերենի միջոցով: Վերևում բերված բառային և դարձվածքային պատճենումների մեծ մասը կատարված է ռուսերենից: Բայց 20-ական թվականների տերմինաբանական բառարաններում քիչ չեն նաև հայերեն այն բառերն ու տերմինները, որոնք պատճենվել են ոչ թե ռուսերենից, այլ եվրոպական ուրիշ լեզուներից՝ այդ բառերի սկզբնաղբյուրային իմաստների հիման վրա. ինչպես, օրինակ՝ авангард—առաջապահ, арьергард—վերջապահ, антагонизм—հակամարտություն барометр—ծանրաչափ, бинокль—երկդիտակ *և այլն*[107]:

Գիտության ու արվեստի ազգային տերմինաբանությունը եվրոպական ժողովուրդների մոտ հաճախ ներկայացված է եթե ոչ ուղղակի փոխառությունների, այլ պատճենումների ձևով, որոնք համապատասխանում են հունական և լատինական տերմիններին: Նույնը կարելի է ասել և հայկական տերմինային բառապաշարի վերաբերյալ. ընդ որում անհրաժեշտ է նշել, որ հայոց լեզուն ավելի հակված է դեպի պատճենումները, քան ուղղակի փոխառությունները:

Այսպիսով, թեև բառապատճենումները լեզվական փոխառությունների ձևերից մեկն են հանդիսանում, բայց վերջիններիս հետ ունեն ընդհանուր միայն մեկ բան՝ երկուսն էլ ունեն օտար ծագում: Սակայն տարբերությունը այդ երկու հասկացությունների միջև ավելի մեծ է, քան նմանությունը: Նախ՝ օտարազգի փոխառությունները փոխառյալ նյութի

105 «Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների»:

106 «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան»:

107 «Ռուս-հայերեն ռազմական բառարան»:

քերականական և հնչյունական մշակման արդյունք են, մինչդեռ բառապատճենումների մեջ չկա ոչ մի օտարաոդի տարր, և նրանք միայն իրենց ստեղծման եղանակով են կապված իրենց նախորդող օտարաոդի բառի հետ: Բառապատճենման ելակետը օտար բառի մեջ նրա ստեղծման պատճառաբանվածության առկայությունն է, որի վրա հենվելով, կարելի է ստեղծել նոր բառ՝ սեփական միջոցներով: Հենց այդ պատճառով է, որ բուն, տուն, մուկ, ձուկ և այլ արմատական բառերից իրենց ուղղակի նշանակությամբ անհնարին է բառապատճենումներ կատարել: Այդ բառերը կարելի է միայն թարգմանել, բայց բառապատճենել՝ երբեք: Ջեն պատճենվում նաև այն բառերը, որոնք փոխառվել են լեզվի վաղ շրջանում: Ջեն պատճենվում նաև տեղական և պատմական բնույթի բառերը, որոնք բնորոշում են ժողովրդի պատմական անցյալը, մշակույթը, կենցաղը, հասարակական կառուցվածքը: Այդպիսի բառերի յուրացումը լեզվում կատարվում է միայն ուղղակի փոխառության միջոցով:

Այսպիսով, հայոց լեզուն ավելի հակված է բառապատճենումներին, քան ուղղակի փոխառություններին: Հայերենի մասնագիտական տերմինների հիմնական մասը կազմում են հունարենից և լատիներենից, իսկ սովետական շրջանում՝ ռուսերենից կատարված բառապատճենումները:

Ս. Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկու խոսք

Հայերեն ռազմական տերմինաբանությունը հայերենի տերմինաբանական համակարգի առանձին ճյուղն է: Հետևաբար, հայերեն տերմինաբանության ստեղծման կարգավորման և միօրինակացման պատմական ամբողջ պրոցեսի լուսաբանման և տերմինաբանական տեսական խնդիրների քննման ու մեկնաբանման տեսակետից հիշյալ բնագավառի տերմինաբանության համակարգային-իմաստային և կառուցվածքային համակողմանի ուսումնասիրությունը գիտական և գործնական որոշակի արժեք է ներկայացնում:

Այդ հարցերի մեկնաբանման համար հարուստ նյութ են ընձեռում ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից ռազմական տերմինները: Վերջիններս առանձնապես հետաքրքրության արժանի են գիտության ու տեխնիկայի և հատկապես ռազմական գործի մեջ հետպատերազմյան շրջանում տեղի ունեցած տեղաշարժերի հետևանքով այդ բնագավառի տերմինաբանական համակարգում կատարված զգալի փոփոխությունների պատճառով:

Հաշվի առնելով հայ տերմինաբանության այլ բնագավառների՝ հատկապես հայ լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային քննության ուղղությամբ կատարված փորձերը և ձեռք բերված արդյունքները[1], նման քննության ենք ենթարկում հայ ռազմական տերմինաբանությունը:

Ավանդական և ժամանակակից տերմինների ընձեռած փաստական նյութի հիման վրա, հնարավորության սահմաններում, կատարել ենք հայերեն ռազմական տերմինների համակարգային-իմաստային և կառուց-

---

[1] Լ. Ղազանչյան, *Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, ավելվի և ոճի հարցեր» ժողովածու, հ. 4, Երևան, 1977:*

վածքային քննություն, աշխատել ենք որոշել ռազմական տերմինաբանության ենթահամակարգերը, պարզել այդ տերմինների աղբյուրները և կազմության միջոցները, տվել ենք նրանց ձևաբանական ու տերմինաբանական կաղապարները:

Աշխատանքը գործնական և տեսական առումով օգտակար դարձնելու նպատակով Հայերենի ռազմական տերմինաբանության ուսումնասիրությունը կատարել ենք նրա պատմական զարգացման ընթացքում:

Աշխատանքը չի հավակնում սպառիչ կերպով քննելու կամ լուծելու Հայ ռազմական տերմինաբանության բոլոր հարցերը: Մեր նպատակն է եղել մասամբ լրացնել այն բացը, որ նկատվում է այդ բնագավառում:

ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ժամանակակից Հայերեն ռազմական տերմինաբանության համակարգային-կառուցվածքային ուսումնասիրություն և քննություն կատարելուց առաջ անհրաժեշտ է ընդհանուր գծերով ներկայացնել նրա ստեղծման և զարգացման հիմնական փուլերը, ուս-Հայերեն ռազմական բառարանների և այլ աղբյուրների քննության հիման վրա ցույց տալ Հայերեն ռազմական տերմինաբանության վիճակը, կազմավորման ուղիները:

Ժամանակակից Հայերենը հին Հայերենից՝ գրաբարից չի ժառանգել ռազմական այնպիսի տերմիններ, ինչպիսի տերմիններ գրաբարյան շրջանից սրդի Հայերենին փոխանցվել են քերականության, ինչպես նաև փիլիսոփայության, բուսաբանության և այլ բնագավառներից: Ինչպես Հայտնի է բանասիրական, փիլիսոփայական, աստվածաբանական-կրոնական Հայերեն տերմինաբանության առաջացմանը նպաստել են, անշուշտ, այդ շրջանում հիշյալ գիտությունների զարգացումը, այդ բնագավառներին վերաբերող սեփական և թարգմանական Հարուստ գրականության ստեղծումը, ուսումնական կենտրոնների գոյությունը և այլն: Մի խոսքով, կյանքի Հրամայական պահանջները ստիպել են ստեղծելու, մշակելու ժամանակի գիտական մակարդակին Համապատասխան կենսական անհրաժեշտություն ներկայացնող այնպիսի բնագավառների տերմիններ և բառեր, որոնք, ըստ երևույթին, խիստ անհրաժեշտ են եղել գիտության այդ ճյուղերին վերաբերող սեփական և թարգմանական գրականություն ստեղծելու, ինչպես նաև ուսուցման գործը առաջ տանելու Համար: Այլ է պատկերը ռազմական տերմինաբանության բնագավա-

ռում: Այստեղ գրական լեզվի համար չկա հատուկ կազմված տերմինների համակարգ, դրանք առաջացել են խոսակցական լեզվում և անցել դրաբարին: Գրաբարյան շրջանից մեզ հասած միայն ռազմական կյանքին վերաբերող ոչ այնքան մեծաթիվ տերմինները ամբողջական գաղափար չեն տալիս ժամանակի ռազմական արվեստի բոլոր կողմերի մասին:

Այնուամենայնիվ, հայերեն ռազմական հին բառերը և տերմինները, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Բացի պատմամշակութային արժեքներից այդ բառերը հետաքրքրական են նաև նրանով, որ որոշ մասով, և հաճախ փոփոխված իմաստներով, մուտք են գործել ժամանակակից ռազմական տերմինաբանության մեջ:

Փորձենք Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության»[2] առաջին և երկրորդ հատորների նյութի հիման վրա, ներկայացնել ռազմական տերմինները՝ ըստ հեղինակի ստուգաբանության, իմաստների բացատրության և ստորաբաժանումների: Ինչպես հայտնի է, Հ. Աճառյանը իր այս աշխատության մեջ քննելով հայերենի բառարմատները՝ ըստ ծագման ստորաբաժանում է հնդեվրոպական ծագում ունեցող կամ, իր իսկ տերմինով, բնիկ հայերեն և փոխառյալ: Հ. Աճառյանը քննվող բոլոր արմատները խմբավորում է նաև ըստ գործածության ոլորտների:

Այդ տվյալներով[3] ռազմական կյանքին վերաբերող հնդեվրոպական ծագում ունեցող, այսինքն՝ բնիկ հայերեն բառերն են՝ մարտ, աղմուկ, («կռիվ»), թուր, նետ, սլաք, կռմբ, գերի: Այսպիսով, ընդամենը բնիկ հայերեն 7 արմատ է մնացել, որ այս կամ այն չափով վերաբերվել է ռազմական կյանքին: Դրանցից այժմ նույն իմաստներով գործածվում են՝ մարտ, թուր, նետ, գերի բառերը: Ժամանակակից հայերենում իրենց ռազմական տերմինի իմաստը կորցրել և այլ իմաստներ են ստացել աղմուկ, սլաք բառերը, իսկ կռմբ-ը դուրս է եկել գործածությունից: Առաջին չորս բառարմատներից նետ-ը պատմական արժեք ունի. մնում են՝ մարտ, թուր, գերի արմատները, որոնց հիման վրա հետագայում կազմվել են ռազմական կյանքին վերաբերող զգալի թվով բառեր[4]: Այսպես, օրինակ, մարտ արմատից արձանագրված են՝ մարտագիծ, մարտագրկիչ, մարտադաշտ, մարտադաղար, մարտական, մարտակառք, մարտակարգ, մարտանետնեղես, մարտամբեքնա, մարտամբերք, մարտանավ,

---

2 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, 1940, Բ մաս, 1951:

3 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, էջ 111:

4 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երևան, հ. I, 1969, հ. II, 1972, հ. III, 1974, Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Երևան, 1973:

մարտաճավակ, մարտաշարք, մարտապաշար, մարտապատնեշ, մարտասայլ, մարտավար, մարտավարական, մարտավարել, մարտավարություն, մարտափիղ, մարտափոռ, մարտիկ, աշխարհամարտ, ճակատամարտ, ճակատամարտել, ճակատամարտիկ և այլն[5]:

Շատ բառեր են կազմվել նաև գերի և թուր արմատներով: Ինչպես երևում է բերված օրինակներից, ռազմական կյանքին վերաբերող բնիկ հայերեն այս կամ այն չափով կենսունակ մարտ, թուր, գերի արմատներն են միայն «շինանյութ» ծառայել հետագայում կազմված հայերեն բառերի համար: Ռազմական բնույթի բառերի գերակշիռ մասը ըստ մեր քննության կազմել են կամ փոխառյալ արմատները, կամ էլ դրանցով կազմված բաղադրությունները:

Ռազմական բնագավառին վերաբերող փոխառյալ բառարմատները կամ դրանցով կազմված հետագա բաղադրությունները հետևյալ պատկերն են ներկայացնում:

Ասորերենից հայերենին են անցել «պատերազմական արվեստին» վերաբերող երեք բառ բերդ, մահառել, գագաթն (ամրության վայր)[6]: Միայն բերդ արմատն է պահպանել իր ռազմական իմաստը: Կարելի է հիշատակել մի շարք բառեր, որոնք բաղադրված են այդ բառարմատով[7]: Օրինակ՝ բերդաքնակ, բերդագյուղ, բերդաթումբ, բերդակ, բերդակալ, բերդամարտ, բերդամոց, բերդանավ, բերդապան, բերդապատնեշ, բերդապարիսպ, բերդատեր, բերդաֆաղաք և այլն:

Հայերենում առանձին արժեք և հետաքրքրություն են ներկայացնում իրանյան (պարսկական) այն փոխառությունները, որոնք վերաբերում են ռազմական գործին ու զենքերին: Խոսելով հայ պետական կյանքի, ինչպես նաև ռազմական գործի վրա պարսկական քաղաքակրթության և հատկապես լեզվի ազդեցության մասին, Հ. Աճառյանը գրում է: «Պարսկական քաղաքակրթության և լեզվի ազդեցությունը իր մեծագույն աստիճանին է հասնում պետական կազմի վերաբերմամբ. այստեղ բնիկ հայ բառ գրեթե չկա (8 բառ միայն), իսկ պարսկերենից փոխառությունները 166 հատ են: Այս բառերի մի մասը իրոք որ պատկանում են զուտ

---

5 Այս բոլոր բառերը և տերմինները մենք քաղել ենք նշված բառարաններից, որպեսզի բառացանկը լիակատար լինի, քանի որ ռազմական տերմինների երկու բառարաններն էլ թերի և հնացած են, մի կողմից, իսկ, մյուս կողմից, ռազմական տերմինների բառարաններում տեղ չեն գտել այնպիսի «արխաիկ» բառեր, ինչպես մարտափիղ և այլն:

6 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, էջ 195, 200:

7 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ.:

պարսից պետական կյանքին, ամենամեծ մասը այնպիսի բառեր են մեր լեզվի համար, որ այսօր էլ շարունակում են իրենց գոյությունը և առանց նրանց մենք չգիտենք թե ինչպես պիտի բացատրվենք (օրինակ՝ զրահ, դրօշ, հրովարտակ, պահակ): Այս բոլորը ցույց է տալիս, որ հին հայոց վարչական ձևը, դիվանական գործողությունները, հարկային սիստեմը (համակարգը), ռազմագիտությունը, դեներները, մի խոսքով ամբողջ պետական կազմը պարսկական ձևով էր»[8]: Ռազմական կյանքին վերաբերող պարսկական փոխառությունները Հ. Աճառյանի նշված աշխատության մեջ բերվում են «երկիր և պետություն» խմբավորման տակ: Ռազմական նշանակությամբ ժամանակին գործածվել են՝

ա) Պետական–ռազմական պաշտոններ.

Ասպետ, բդեշխ, իշխան, հազարապետ, համհարզ, հրամանատար, մարզպան, մարզպետ, սեպուհ, սպասալար, սպարապետ, ասպահապետ:

բ) Պատերազմին վերաբերող բառեր.

Ապշոպ, ապուռ, ապստամբ, ասպատակ, արշավ, աւար գումարտակ, գունդ, դարան, դժպարտ, դրօշ, զինուոր, զօրք, թիրախ, թշնամի, լաշկար, հաշտութիւն, հէն, ճամբար, մարզել, մարզիկ, նախճիր, նահանջ, պայքար, պատերազմ, պարաւանդ, պարկէն, պէշոպայ, ռազմ, սպայ, վաշտ, վկանդել[9]:

գ) Զենքի տեսակներ.

Աշտեայ, ասպար, բանլիկ, դաշնակ, դաստապան, զէնք, զրահ, լախտ, խիշտ, նիզակ, պատկան, պատկանդարան, պարս, սաղավարտ, վահան, վարապան, վարգ, վիրգ, տապար, տէգ[10]:

Այսպիսով, պարսիկներից փոխառյալ ռազմական կյանքին վերաբերող արմատական բառերի ընդհանուր թիվը հասնում է 64-ի, որը մոտ 10 անգամ գերազանցում է հնդեվրոպական ծագում ունեցող բնիկ հայերեն բառարմատներին: Հարցն այստեղ միայն թվական կողմը չէ, այլ նաև այդ կարգի բառերի ընդհանուր կշիռն ու արժեքը հայոց լեզվի ռազմական տերմինաբանության համակարգում:

Նշված բառերից պահպանվել և ժամանակակից հայերենում ավել կամ պակաս չափով տարածված է մոտավորապես կեսը:

---

8 Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ա. մաս, էջ 305:

9 *Բերված տերմինները մասամբ բուն ռազմական են, իսկ մյուսները հիմնականում ունենալով պետական-վարչական արժեք, իրենց մեջ զուգորդել են նաև ռազմական իմաստներ, բուն այդ կոչումները կրող անձերի գործառության:*

10 Հ. Աճառյան, *նշվ. աշխ.*, էջ 296:

Այդ կարգի բառերը ժամանակակից հայերենի բառապաշարում իրենց գործածությամբ և դրված տեղով նույնպես միատարր չեն։ Դրանց որոշ մասը արդեն հնացած է և լեզվի զարգացման արդի փուլի համար տոկ պատմական արժեք է ներկայացնում. ինչպես, օրինակ՝ ասպետ, բղեշխ, իշխան, հազարապետ, մարզպան, մարզպետ, սեպուհ, սպարապետ, աշոյա, ասպար, դաստապան, լախտ, նիզակ, պարս, վահան, տեգ և այլն։

Ժամանակակից հայերենում բոլորովին չեն գործածվում գրաբարյան շրջանում պարսկերենից փոխառյալ այնպիսի բառեր, ինչպես, ասպահապետ, ապշոպ, ապուռ, լաշկար, մարձիկ, պարավանդ, պարկեն, պեշոպայ, վկանդել, բանիլիկ, խիշտ, պատկան, պատկանդարան, վարապան, վարզ, վիրզ և այլն, որոնք Հ. Աճառյանը Հայոց լեզվի պատմության մեջ բերում է իբրև պատերազմին և զենքի տեսակներին վերաբերող բառեր։

Ժամանակակից հայերենի բառապաշարի համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հին շրջանում պարսկերենից փոխառյալ այն բառարմատները, որոնք նույն իմաստով կամ որոշ իմաստափոխությամբ լայն գործածություն ունեն, ցուցաբերում են բառակազմական մեծ ակտիվություն, տերմինացման ենթարկվելով մտել են հայերենի ռազմական տերմինաբանության համակարգը։ Այդ տեսակետից առաջին հերթին հիշատակության են արժանի պարսկերենից փոխառյալ այն բառերը, որոնք վերաբերում են ռազմական կյանքին և այժմ էլ տարածված են հայերենում՝ նամուարզ, հրամանատար, արշավ, ավար, գումարտակ, գունդ, դաբաղ, դրոշ, զինվոր, զորք, թիրախ, բշնամի, հաշտություն, նամբար, նահանջ, պայքար, պատերազմ, ռազմ, սպա, վաշտ, զենք, զրահ և այլն։

Այդ բառերի մեծ մասը կենսունակություն է դրսևորում նաև ժամանակակից հայերենի բառակազմության բնագավառում։ Դրանց շնորհիվ հայերենի բառապաշարը համալրվել է բազմաթիվ նոր բառերով և տերմիններով։ Այսպես, միայն ռազմ հիմքով «Հայերին ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանում»[11] հիշատակվում է 136 բառ։ Թերենք դրանցից մի քանիսը. ռազմավար, ռազմարդյունաբերություն, ռազմաբեմ, ռազմագետ, ռազմագերի, ռազմագիտություն, ռազմադաշտ, ռազմադաշտային, ռազմախաղ, ռազմածովային, ռազմակայան, ռազմական, ռազմականացնել, ռազմակարգ, ռազ-

11 Տե՛ս Հ. Բարսեղյանի նշված բառարանը։

մաճաճդեռձաճք, ռազմաճեճադաշտ, ռազմաճակատ, ռազմաճամբար, ռազմամբեռք, ռազմամոլ, ռազմանավ, ռազմանավատոռմ, ռազմավարական, ռազմավարություն, ռազմատուգանք, ռազմարշավ, ռազմափոռձ և այլն:

Պատերազմ բառարմատը հիմք է ծառայել շուրջ 50 բառերի համար, որոնք լայնորեն կիրառվում են ժամանակակից հայերենում: Ինչպես, օրինակ, պատերազմաբեմ, պատերազմագետ, պատերազմագիտություն, պատերազմադադար, պատերազմազերծ, պատերազմական, պատերազմամոլ, պատերազմասեր և այլն:

Շատ բառեր են կազմվել նաև՝ արշավ, ավար, գունդ, գումարտակ, զինվոր, զարկ, զենք, սպա, վաշտ և այլ բառարմատներով:

Այսպես, գունդ և նրանից ածանցված գնդակ բառով կազմվում են գնդակաձիմացկուն, գնդակաձիար, գնդակաձիարել, գնդակաձիարություն, գնդակոծել, գնդակոծություն, գնդակոծում, գնդապետ, գնդացիր, գրնդացրադասակ, գնդացրակոշտ, գնդացրակիր, գնդացրային, գնդացրավաշտ, գնդացրավոր, գնդացրորդ և այլն:

Զինվոր բառով արձանագրված է ավելի քան 40 բառ, ինչպես՝ զինվորագրել, զինվորական, զինվորականություն, զինվորաձիավաք և այլն:

Պատերազմական կյանքին վերաբերող հայերենի կատարած հին փոխառություններից ուշադրության են արժանի նաև ասորերենից անցած բառերը: Հ. Աճառյանը ասորերենից փոխառյալ է համարում ռազմական բնույթի հետևյալ բառերը՝ տաֆսաա (վաշտ), խարբ, մանգանայ, շեղբ, սակուր, սուին, սուսէր[12]: Դրանցից ժամանակակից հայերենում ինքնուրույն գործածություն ունեն կամ բառերի կազմությանը մասնակցում են վերջին չորս բառերը՝ շեղբ, սակուր, սվին, սուսեր: Այսպես, օրինակ, սակուր արմատով կազմվել է սակրավոր տերմինը: Մնացած բառերն ինքնուրույն գործածություն ունեն:

Հ. Աճառյանը, անդրադառնալով հունական և լատինական փոխառություններին, իր «Հայոց լեզվի պատմության»[13] 2-րդ հատորում բերում է «պատերազմ» և «զենքեր» նշանակող համապատասխան ցանկեր: Հունարենից հայերենին են անցել ռազմական կյանքին վերաբերող հետևյալ բառերը.

ա) Պատերազմ.—ակառն, ստրատ, ստրատելատ, ստրատիգին, տաֆսիոտ, փաղանգ, փրուրիտիոսիկ:

---

12 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 344:

13 Հ. Աճառյան, նշվ. աշխ., Բ մաս, էջ 46:

բ) Զենքեր.—ասպիս, բաղխատր, բողեայ, գայիսոն, կոնդակ, կոբրան, մանգղիոն, մեհենայ, ոպղոն, սատմ[14]:

Լատիներենից հայերենին են անցել նույն կարգի հետևյալ բառերը.

ա) Պատերազմ.—դուկենարիոս, դրունգար, լաբարոն, լեգեովն, կենդիզիոն, կոմենտարիոս, նումէր, սիգնայ, սիգնոն, տիւրոն:

բ) Զենքեր.—բեկղ, դալապր, մանկլաւ, պղեմբատ[15]:

Նշված աշխատության մեջ Հ. Աճառյանի կողմից բերված 17 հունական և 14 լատինական՝ ռազմական գործին վերաբերող բառերից և ոչ մեկը չի գործածվում ժամանակակից հայերեն ռազմական տերմինաբանության մեջ, բացառությամբ թերևս մեհենա *հունական փոխառության, որի ժամանակակից իմաստներն ավելի շատ ընդհանուր գործածական են, և որը մեծ վերապահությամբ միայն կարելի է ռազմական տերմին համարել. ռազմական տերմինաբանության մեջ այն հանդես է գալիս որպես տերմինաբանական բառակապակցության անդամ, օրինակ՝* զրահահար մեհենա (бронебойная машина)[16]:

Խոսելով արաբերենից և թուրքերենից հայերենի կատարած փոխառությունների մասին՝ Հ. Աճառյանը[17] բերում է 29 արաբական և 4 թուրքական բառեր, որոնք վերաբերում են ռազմական կյանքին և զենքերին:

Արաբերենից կատարված փոխառություններ են համարվում հետևյալ բառերը.

ա) Պատերազմին վերաբերող.

ալամ կամ յալամ (դրոշ), ալափ, բահադուր, զախմել, թալան, խանդակ, խուխայ, խասար, համլայ, հարամի, ղազա, ճունդիկ, մճնեհ, չարխաւոր, ջանդար, ռայ, սրահանգ, քմին:

բ) Զենքեր նշանակող.

բալաթիկին, դմիշկ, խալաչուրի, ճաւշանիոու, նօշան, շիմշիր, շրխբայ, սատիր, սլեհ, փիլիկոն, քէշ[18]:

Հետաքրքրական է, որ ռազմական իմաստներ ունեցող արաբական փոխառություններից ոչ մեկը չի արմատացել և այդ իմաստներով գործածական չէ ժամանակակից հայերենում: Հ. Աճառյանի[19] *բերած հիշյալ*

---

14 Հ. Աճառյան, *նշվ. աշխ., էջ 40:*

15 Հ. Աճառյան, *նշվ. աշխ., էջ 46:*

16 Ա. Ղարիբյան, *Ռուս-հայերեն բառարան, եր. 1969:*

17 Հ. Աճառյան, *նշվ. աշխ., էջ 212, 281:*

18 *Բոլոր բառերը տալիս ենք Հ. Աճառյանի համապատասխան նշումներով:*

19 Հ. Աճառյան, *նշվ. աշխ., էջ 281:*

բնագավառի թուրքերեն չորս բառից հայերենում որոշ չափով գործածություն ունեն՝ բաբան և բարուք (վառոդ) բառերը։ Առաջինը՝ բաբան (որպես պատերազմական գործիք) այժմ պատմական նշանակություն ունի, իսկ բարութ-ը, որը գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում, ավելի շատ պատկանում է բարբառային բառապաշարին։

Ռազմական իմաստներ ունեցող հայերեն բառարմատների քննությունից երևում է, որ՝

ա) հայերենը աղքատ է եղել ռազմական կյանքին, պատերազմին և զենքերին վերաբերող բառերով։ Այդ շրջանում խոսք անգամ չէր կարող լինել ռազմական տերմինաբանության մասին.

բ) ռազմական կյանքին վերաբերող սակավաթիվ բառերը կամ ավելի ճիշտ՝ բառարմատները մասամբ հնդեվրոպական ծագում ունեցող բնիկ հայերեն բառեր են, հիմնականում փոխառություններ՝ կատարված պարսկերենից.

գ) մյուս աղբյուրներից, որոնցից հայերենը մեկ-երկու կենսունակ փոխառություն է կատարել, հիշատակության արժանի են՝ ասորերենը և հունարենը.

դ) մնացած լեզուներից (ռազմական իմաստ ունեցող բառերից) ժամանակակից հայերենը համարյա ոչինչ չի ժառանգել։

Այսպիսով, հայերեն ռազմական տերմինաբանության կազմավորման-ձևավորման պրոցեսը և նրա հետագա մշակումը նոր ժամանակներին է վերաբերում։ Այն հիմնականում սկսել է կազմվել սեփական և թարգմանական գրականության, մամուլի և հրապարակախոսության շնորհիվ։ Հայերեն ռազմական բառապաշարը իր արտահայտությունն է գտել միալեզվյան-բացատրական և հատկապես՝ թարգմանական (ռուս-հայերեն, ֆրանսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն և այլ բառարաններում։

Պետք է անմիջապես ավելացնել, որ հիշյալ աղբյուրներում ռազմական կյանքին վերաբերող բառերը համակարգման ենթարկված չեն, բացակայում է միօրինակությունը։

Գիտական, բուն իմաստով հայերեն ռազմական տերմինաբանություն ստեղծելու գործին Հայաստանի սովետականացման առաջին իսկ տարիներին ձեռնամուխ է լինում խոշոր հայագետ Մ. Աբեղյանը, որի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը»[20] ընդգրկում է ավելի քան 17 հազար բառ և կապակցություն։

---

20 Մ. Աբեղյան. *Ռուս-հայերեն ռազմական բառարան, 1927։*

Բառարանի համառոտ առաջաբանում հեղինակն անդրադառնում է այն կազմելու հանգամանքներին, խոսում է ռուսական բառացանկի և համապատասխան հայերեն բառերի ընտրության մասին, շարադրում հիմնական սկզբունքները:

«Ռուս-հայերեն ռազմական բառարանը» կազմելիս Մ. Աբեղյանը բառերի ընտրությունը և դրանց իմաստները որոշելու համար դիմել է ռազմական գործին նվիրված աշխատությունների: Այդ նպատակի համար օգտվել է ավելի քան 35 ռազմական կանոնագրքերից ու ձեռնարկներից:

Այս ծանր աշխատանքի հաջողությանը նպաստել է, անշուշտ, այն հանգամանքը, որ 20-ական թվականներին լինելով ռազմական կանոնագրքերը ռուսերենից հայերեն թարգմանող հանձնաժողովի անդամ, Աբեղյանը միաժամանակ կատարել է 14 ռազմական գրքերի, ինչպես նաև ռազմական գործավարության վերաբերյալ գրվածքների թարգմանության խմբագրությունը, և առիթ է ունեցել մշակելու դրանց ռազմական տերմինաբանությունը:

Այնուհետև, 1924 թ. Կովկասյան Կարմրադրոշ բանակի ռազմահեղափոխական խորհրդին կից կազմվում է հայկական խմբագրական-հրատարակչական կոլեգիա՝ նոր ռազմական գրքերի թարգմանության և խմբագրության համար: Այդ գործերի թարգմանությունների տերմինաբանությունը ևս խմբագրվում է Մ. Աբեղյանի կողմից[21]: Իր բառարանը կազմելու ժամանակ Մ. Աբեղյանը ձեռքի տակ չի ունեցել ոչ միայն հայերեն, այլև ռազմական տերմինների ռուսական բառացանկ: Այսպիսով, ռազմական տերմիններն ռուսական բառացանկի կազմության պատասխանատվությունը նույնպես ընկնում է հեղինակի վրա: Ռուսական բառացանկի համար, բացի վերոհիշյալ ռազմական կանոնագրքերից ու ձեռնարկներից, աղբյուր են ծառայել Ա. Ֆլինտի «Ֆրանսերեն-ռուսերեն ռազմական տերմինների բառարանը»[22] և Գ. Ա. Լեերի խմբագրությամբ լույս տեսած «Ռազմական և ծովային գիտությունների հանրագիտարանի» հատորները[23]:

Մ. Աբեղյանը հավաքում, ի մի է բերում ռուսական ռազմական տերմինաբանությունը, կազմում է այդ տերմինների ցանկը, հասցնելով այն մոտ 17 հազարի: Այդ առումով Մ. Աբեղյանին պետք է համարել ռուսա-

---

21 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 3—6:

22 *A. Flint*, Dictionnaire Franco-Russe des principaux termes militaire.

23 Энциклопедия военных и морских наук, сост. и ред. *Г. А. Леер.*

կան ռազմական տերմինների առաջին բնդարձակ ցանկը կազմող և սովետական շրջանում ռուսերենից մեկ այլ լեզվի ռազմական տերմինների առաջին բառարանի հեղինակ: Բառարանը կազմելով 20-ական թվականների կեսերին՝ հեղինակն առաջին հերթին ներկայացրել է ռազմական գործի և ռազմական գիտության այն վիճակը, որ բնորոշ էր այդ ժամանակաշրջանին:

Մյուս կողմից, ձեռքի տակ չունենալով ռազմական ռուսական պատրաստի բառացանկ, որ գիտականորեն արտացոլեր ռազմական տերմինաբանական ամբողջ համակարգը, Մ. Աբեղյանը բառացանկում տեղ է տվել հարակից գիտությունների ու բնագավառների, երբեմն նաև ռազմական գործին և գիտությանը քիչ առնչվող որոշ տերմինների ու բառերի:

Բառարանի ռուսական բառացանկի քննությունը ցույց է տալիս, որ այն բաղկացած է՝ բուն ռազմական տերմիններից, հարակից գիտությունների տերմիններից և բառերից, ռազմական կյանքին ուղղակի չվերաբերող տերմիններից ու բառերից:

Այսպիսով, բուն ռազմական տերմինների կողքին բառացանկում բերվում են իրավաբանական, ֆինանսական-հաշվապահական, բժշկական, տեխնիկական, քաղաքական, դիվանագիտական, ընդհանուր գիտական տերմիններ և ամենօրյա գործածական, նույնիսկ ժողովրդակենցաղային սովորական բառեր:

1. **Քաղաքական, դիվանագիտական, վարչական տերմիններ.** агент дипломатический, агент полицейский, агитатор, агитация, агитировать, администратор, администрация, администрация гражданская, амнистия, амнистировать, анархия, антагонизм, антагонист, верховная власть, верховный суд, дипломат, дипломатический агент, дипломатический корпус, дипломатическая миссия *և այլն:*

2. **Ֆինանսական-հաշվապահական, բժշկական, մարզական, գիտական-տեխնիկական տերմիններ.**

аванс, авансировать, авансовые деньги, авансовый счет, авансовая уплата, аренда, арендатор, артель, артель трудовая, артельный, артельная сумма, артельщик, ассигновать, ассигновка, аукцион, багаж, бандероль, брутто, бухгалтер, бюджет, бюджет государственный, вакансия *և այլն:*

азбест, азбестовый, акведук, амбаркадер, архитектура, архи-

тектор, белила, цинковые белила, свинцовые белила, бетон, бронза, бронзировать, бронзовать *և այլն:*

атлет, атлетика, атлетика легкая, атлетика тяжёлая, ампутация, ампутировать, аптекарский магазин, аптечный магазин, аптечная лаборатория, близорукий, вазелин *և այլն:*

3. Ռազմական գործի հետ ուղղակի կապ չունեցող բառեր.

башлык, буфетчик, бдительность, беготня, бегун, беда, беженец, безвыходный, безвыходное положение, безотлагательно, безотлагательность, безотлагательный, беспечность, беспрерывность, бесспорный, бесстрашный, бесчестие, быть, благоприятный, благоприятный случай, благоприятные условия, бодрый, бодрость, брак, бракование, браковка, бросать, буйный, буйность, быстрота, великодушие, верность, верховенство, вес, весы, ветошь *և այլն:*

Ռուսական բառացանկի թերությունները բառարանի կազմության ընթացքում նկատել է նաև հեղինակը, որը գրում է՝ «Առնված են բառերի միայն կարևոր նշանակությունները, երբեմն նաև այնպիսի բառեր, որոնք թեպետ այժմ հնացած են, բայց կարող են այս կամ այն կերպ պետք լինել այս բառարանին դիմողների համար: Բացի այդ՝ գուցե ոմանց կթվա, թե այս բառարանի մեջ տեղ են գտել բառեր, որոնք ըստ երևույթին ռազմական բառեր չեն, բայց ռազմական գործն այնպիսի ընդարձակ շփում ունի կյանքի, արվեստի և գիտության բազմաթիվ կողմերի հետ, որ շատ այդպիսի բառեր նույնքան անհրաժեշտ են համարվում, որքան և բուն ռազմական բառերը: Ջնայելով դրան՝ այս բառարանը, հարկավ, դարձյալ բավարար չափով լիակատար և անթերի չէ, թերևս նույնիսկ շատ անհրաժեշտ բառեր կամ անհրաժեշտ կիրառություններ պակասում են: Ապագան, անշուշտ, կլրացնի պակասորդը»[24]:

Իհարկե հեղինակին չի կարելի մեղադրել ռուսական բառացանկի նշված թերությունների, հատկապես ռազմական գործին, ռազմական գիտությանը անմիջականորեն չառնչվող կամ քիչ առնչվող, երբեմն նույնիսկ կապ չունեցող տերմիններ ու բառեր ռազմական տերմինաբանության կազմում ներգրավելու համար, եթե նկատի ունենանք բառարանի կազմության ժամանակաշրջանը, նաև այն պայմաններն ու հանգամանքները, որոնցում գործել է հեղինակը:

Մ. Աբեղյանի ծառայությունը, առաջին հերթին այն է, որ նա փառատորեն համակարգել և կազմել է ռազմական տերմինների առաջին ռու-

---

24 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 4—5:

սական բառացանկը, որը, բնական է, չէր կարող անթերի լինել։ Մյուս կողմից, կազմվելով 20-ական թվականներին, բառարանը բնականաբար արտացոլել է ռազմական գործի և գիտության այն վիճակը, որը բնորոշ էր այդ շրջանին։ Նշված թերություններով և պակասություններով հանդերձ՝ իր ժամանակի համար ռուսական բառացանկը միանգամայն գոհացուցիչ պետք է համարել։

Բառարանի հրատարակությունից հետո անցած մոտ հինգ տասնամյակում ռազմական կյանքի, ռազմական գործի և տեխնիկայի մեջ կատարված զգալի տեղաշարժը որոշակի փոփոխություններ է առաջ բերել նաև ռազմական տերմինաբանության մեջ։ Հաստատապես կարելի է պնդել, որ հնդպատերազմյան շրջանում արդեն վերջնականորեն մշակվել, հղկվել և համակարգայնորեն ամբողջական տեսք է ընդունել ռազմական տերմինաբանությունը, որոշվել են նրա և հարակից գիտությունների ու բնագավառների սահմանները։ Այս կապակցությամբ Մ. Աբեղյանի կազմած բառացանկը զգալիորեն թարմացել է ռազմական գործին, գիտությանը և տեխնիկային վերաբերող նոր տերմինների հաշվին. բառացանկից դուրս են մնացել արդեն հնացած և իրենց դարն ապրած ոչ քիչ թվով ռազմական տերմիններ ու բառեր։

Մ. Աբեղյանի ռազմական բառարանի ռուսական բառացանկը համեմատելով 1971 թ. լույս տեսած բառարանի[25] բառացանկի հետ, նկատում ենք հետևյալ փոփոխությունները։

1. Մոտավորապես կիսով չափ նվազել է ռուսական բառացանկի ծավալը։ Մ. Աբեղյանի բառարանում ընդգծված մոտ 17 հազար բառերի և բառակապակցությունների դիմաց, նշված բառարանը պարունակում է մոտ 8 հազար ռազմական տերմին և տերմինակապակցություն։

2. Հիշյալ բառարանի բառացանկից դուրս են մնացել ռազմական կյանքին, գիտությանն ու տեխնիկային մասամբ կամ բոլոր առնչվող, ինչպես նաև որևէ կապ չունեցող տերմինները, բառերը և բառակապակցությունները, որ լայն չափով տեղ էին գտել Մ. Աբեղյանի ռազմական բառարանի ռուսական բառացանկում։

3. Նոր բառարանում տեղ չեն գտել նախասովետական ռազմական գործին և կյանքին վերաբերող տերմիններ ու բառեր, որոնք ժամանակակից ռուսաց լեզվի բառապաշարային համակարգի համար արդեն պատմական արժեք ունեցող բառերի և հնաբանությունների շարքն են

---

25 «Семиязычный военный словарь», М., 1971.

անցել։ Օրինակ՝ аксельбант—*ակսելբանտ, ուսկապ,* атаман—*ատաման, հետման,* баба—*վարսանդ, ջղհար,* бастион—*բաստիոն,* берданка—*բերդան, բերդանի հրացան,* берма—*բերմ, պատոց,* блокгауз—*բլոկհաուզ, կոճղամատր,* бонет—*բոնետ, փքին,* брантарель—*հրկիզագունդ,* бризура—*բրիզուր, բնկվածք,* бруствер—*պատվար,* вагенбург—*գումակամրոց* || *գումակաւլան,* валанг—*թմբապատ, պատնեշուղի,* вахмистр—*հեծելական, վերակա,* вешняк—*ահանձափակ, ահանձադուռ,* взводный унтер офицер—*դասակավոր ենթասպա,* воевода—*զորավար,* военно-цензурный отдел—*ռազմա-դրաքննական բաժին,* драгун—*դրագոն,* драгуны—*դրագունագոր, վիշապագոր,* есаул—*նասավուլ,* жандарм—*ժանդարմ,* жандармерия—*ժանդարմերիա,* казак—*կազակ,* казачьи войска—*կազակ զորքեր,* казачьи винтовки—*կազակի հրացան,* каземат—*կազեմատ, ստորմիք,* капрал—*կապրալ,* корнет—*կորնետ և այլն։*

4. *Ռազմական գործի, գիտության և ռազմական տեխնիկայի բնագավառներում վերջին տասնամյակներին կատարված տեղաշարժերի շնորհիվ որոշակի փոփոխություններ են կատարվել նաև ռազմական տերմինաբանության ամբողջ համակարգում։ Այդ տեսակետից ուշագրավ է այն փաստը, որ 20-ական թվականներին և նույնիսկ Հայրենական պատերազմի առաջին շրջանում ռազմական կյանքում լայն գործածություն ունեցող շատ տերմիններ հետագայում համապատասխան հասկացությունների հետ միասին դուրս են մղվել լեզվից և լրացրել հնաբանությունների կազմը։ Միայն ձիուն և ձիու հետ կապված արդեն հնացած ռազմական տերմիններից Աբեղյանի բառարանից կարելի է բերել հետևյալ օրինակները.* конник—*ձիավոր,* конница—*այրուձի, հեծելազոր,* конница армейская—*բանակային այրուձի,* конница войсковая—*զորական այրուձի,* конница дивизионная—*դիվիզիական այրուձի,* конница корпусная *կորպուսային այրուձի,* конница полковая—*գնդի այրուձի,* конница стратегическая—*ռազմավարական այրուձի,* конно-горная батарея—*հեծյալ լեռնային մարտկոց,* конно-гренадерский полк—*հեծյալ գրենադերային նռնաձիգ գունդ,* конно-пионеры—*հեծյալ ականիրաններ,* конный—*հեծյալ, ձիավոր,* конная артиллерия—*հեծյալ հրետանի,* конная батарея—*հեծյալ մարտկոց,* конный ординарец—*ձիավոր սուրհանդակ,* конное оружие—*հեծյալ հրանոթ,* конный отряд—*հեծյալ ջոկատ,* конный полк—*հեծյալ գունդ, հեծելագունդ,* конный пост—*ձիավոր պոստ,* конный разведчик—*ձիավոր՝*

հեծյալ հետախուզ, конный род войск (оружия)—*ձիավոր զորք, զորքերի ձիավոր տեսակ*, конный строй—*հեծյալ շարք*, конный транспорт—*հեծյալ տրանսպորտ՝ փոխակրանք*, конная часть—*հեծյալ զորամաս*, конный ящечный вожатый—*հեծյալ արկղավար*, коновал—*ձիաբուժ*, коновод—*ձիապան*, конь лобовой—*ճակատի ձի*, коновязь—*ձիակապարան*, коновязные колышки—*ձիակապարանի ցցեր*, коновязный канат—*ձիակապարանի ճոպան*, конский—*ձիու, ձիական*, конский завод—*ձիաբուծարան*, конский запас—*ձիապահեստ*, конская повинность—*ձիական պարհակ, ձիապարտություն*, конское снаряжение—*ձիու սարք, ձիասարք*, конский состав—*ձիական կազմ, ձիակազմ*, кавалерия—*հեծելազոր*, кавалерия легкая—*թևթև՝ թևթևազեն հեծելազոր*, кавалерия тяжелая—*ծանր հեծելազոր*, кавалерийский—*հեծելազորի, հեծյալ, հեծելական*, кавалерийкая винтовка,-ое ружье—*հեծելակի հրացան*, винтовка кавалерийского образца—*հեծելական տիպի հրացան*, кавалерийский дивизион—*հեծյալ՝ հեծելական բաժնյակ*, кавалерийская дивизия—*հեծյալ՝ հեծելական դիվիզիա*, кавалерийская лошадь—*հեծելական ձի, հեծելաձի*, кавалерийский начальник—*հեծելազորի պետ, հեծելապետ*, кавалерийский полк—*հեծելապետնդ*, кавалерийское седло—*հեծելական թամք, հեծելաթամք*, кавалерийская часть—*հեծյալ՝ հեծելական մաս*, кавалерийская школа, училища—*հեծելական դպրոց*, кавалерийский эскадрон—*հեծելավաշտ*, эскадрон летучий—*թռուցիկ հեծելավաշտ*, эскадрон пулеметный—*գնդացրավոր հեծելավաշտ*, эскадрон разведовательный—*հետախուզ հեծելավաշտ*, эскадрон сабельный—*թրավոր հեծելավաշտ*, эскадрон фланговый—*թևային հեծելավաշտ*, эскадронная колона—*հեծելավաշտի սյուն* և այլն։

Այսպիսով, 60-ից ավելի տերմիններ և տերմինային կապակցություններ, որոնք կապված են ձիու հետ, ժամանակակից ռազմական տերմինաբանության համար արդեն հնացած են և կազմում են պատմիլ բառապաշարի բաղադրիչ տարրերը։

Մ. Աբեղյանի պատմական մեծ ծառայությունը հայ տերմինաբանությանը և հատկապես հայերենի ռազմական տերմինաշինությանը արտացոլված է նրա «Ռուս-հայերեն ռազմական բառարանի» հայկական բառացանկում։

Բառարանի հայերեն տերմիններին ու բառերի համար աղբյուր են ծառայել Գ. Ու. Լուսինյանի, Մ. Քաջունու, Նուպարյանի «Ֆրանսերեն-հայերեն» և Դաղբաշյանի «Ռուս-հայերեն և հայ-ռուսերեն» ընդհանուր

թարգմանական բառարանները։ Այդ բաժնում Մ. Աբեղյանն ընդգրկել է բազմաթիվ ռազմական գրքերի, ձեռնարկների, հրահանգների ու իր կողմից խմբագրված թարգմանություններում տեղ գտած նոր բառերն ու տերմինները։

Այսպիսով, Մ. Աբեղյանի այս բառարանի շնորհիվ հայերենի՝ ռազմական գործին վերաբերող ոչ այնքան մեծ բառապաշարը հարստանում է հայերեն հաղարավոր տերմիններով ու բառերով, որոնց մի մասը կերտվել է հենց իր՝ հեղինակի կողմից։

Մ. Աբեղյանն առաջինը եղավ, որ ոչ միայն բառ առ բառ հավաքեց, ի մի բերեց տարբեր աղբյուրներում ծվարած հայերեն ռազմական բառերը, այլև ստեղծեց ու մշակեց նորերը և մացրեց հիշյալ բառարանի հայկական բառացանկի մեջ։

Մ. Աբեղյանը, այսպիսով, ժամանակակից հայերեն ռազմական տերմինաբանության ոչ միայն կարգավորողն ու նորմավորողն է, այլև որոշ իմաստով նաև հիմնադիրը։

Գիտական սկզբունքներով մշակված հայերեն ռազմական տերմինաբանության հիմք են ծառայել, նախ, հին հայկական ռազմական բառերը, այնուհետև, համապատասխան հայերեն բառերի բացակայության դեպքում, ռուսերենից առնված բառերը և, վերջապես, նոր կազմված բազմաթիվ բառերն ու տերմինները։ Այլ կերպ ասած՝ Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանում» ներկայացված հայերեն ռազմական տերմինաբանությունը կազմված է հետևյալ բաղադրամասերից.

ա) Տերմինացման ենթարկված կամ նոր իմաստներ ձեռք բերած հայերեն բառեր։

բ) Թարգմանված կամ պատճենված հայերեն տերմիններ։

գ) Նորաշուն փոխառություններ։

Տերմինացման ենթարկված կամ նոր իմաստներ ձեռք բերած հայերեն բառերը, հայերեն ռազմական տերմինաբանության համակարգում այնքան էլ մեծ թիվ չեն կազմում։ Դրանք ռազմական նշանակություն ունեցող հին հայերեն բառերն են, որոնք, նոր իմաստներ ձեռք բերելով, տերմինացման են ենթարկվել, ինչպես, օրինակ՝ *համհարզ* (адъютант), *ծովակալ* (адмирал), *ջոկ* (отделение), *բանակ* (армия), *մանկնա* (борона), *գումարտակ* (батальон), *պարկուճ* (гильза), *սկավառակ* (диск), *կամավոր* (доброволец), *դնաք* (дозор), *փակաղակ* (затвор), *ոաք* (взвод) և այլն։

Հայերեն ռազմական տերմինաբանության ստեղծման և մշակման ընթացքում Մ. Աբեղյանը դիմում է նաև գրաբարի և բարբառների օգ-

նությանը, հաճախ օգտագործում է ժողովրդական-խոսակցական, կենցաղային բառապաշարը: Մի քանի օրինակ այս բնագավառից: Պահանգ (арматура), *տապճակ* (вальтрап), *բանդեր* (вестник), *տույժ* (взыскание), *ապուռ, կնռիք* (зацеп), *խզատակ* (затылок), *խորոփի* (вогнутый), *մտից մատյան* (входящий журнал), *արտնէք* (вылазка), *նրես (անց)* (мелкий), *ծառայել պրծնել* (выслужиться), *ելոյթ* (выступление), *գորագլխյան* (генералитет), *ընդհանուր սպարապետ* (генералиссимус), *դյուցազն* (герой), *անկարուրդ, ճիտք* (голенище), *սառառնակ* (гололедица), *ֆծաշարուկ* (гуськом), *պարիկ* (дозор), *ծեծուփետ, ծեծկվուք* (драка), *գունդ* (дружина), *մատակախազ* (жеребец), *բաւօրէնի* (закономерный), *ի զէն կոչել* (вызов к оружию) *և այլն:*

Ինչպես նշվել է, Մ. Աբեղյանի «Ռուս-Հայերեն ռազմական բառարանի» հիմնական արժանիքն այն է, որ նա ռազմական հայերեն տերմինաբանությունը հարստացրել է հազարավոր նոր բառերով ու տերմիններով: Դրանց գերակշիռ մասը ռուսական ռազմական տերմինների հայերեն հաջող թարգմանություններն են, մեծ ճաշակով և հմտությամբ կազմված հայերեն բառեր: Մ. Աբեղյանն առավելագույն չափերով օգտագործել է հայերենի բառակազմության հարուստ միջոցները, անհրաժեշտության դեպքում դիմել ռուսական ռազմական բառերի և տերմինների բառապատճենման եղանակին: Շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ նորաստեղծ բառեր ու տերմիններ, և այդ տերմինների ու բառերի մեծ մասը հաստատապես կարելի է ասել, ոչ միայն մուտք է գործել ռազմական տերմինաբանության մեջ, այլև կազմել է նրա համակարգի հիմնական զանգվածը և դարձել է ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի բաղադրամասը, նրա անկապտելի սեփականությունը: Մ. Աբեղյանի բառարանի շնորհիվ լայն գործածություն ձեռք բերած տերմիններից և բառերից հիշենք մի քանիսը. ականակիր, ականանետ, ականաձիգ, սալառնակ, սավառնուդ, նշանառու, ռմբակոծիչ, նախակռվիկ, զորակռվիկ, զարկաև, զրահանաւ, զինապարտ, շարային, շարքային, ոչ շարային, լցապարկ, լցատուփ, լցափող, ռմբարկղ, պահեստատուփ, զատիչ-անդրադարձիկ, խարշակ, դարձյակ, զորապուն, հրապատիճ, հրետակոծություն, հրակէտ, հրակնատ, հրածածկույթ, լուսածածկույթ, հետանաւ, ձգալար, ձողացանկ, շարժանակ *և այլն:*

Բառարանի հայկական բառացանկում տեղ գտած կառուցվածքային պատճենումներից և կիսապատճենումներից հիշատակության արժանի են հատկապես հետևյալները.

ա) Կառուցվածքային պատճենումներ. *հակագազ* (противогаз), *առորաբաժանում* (подразделение), *ականանետ* (миномет), *հակագրոհ* контратака), *հակամարտկոց* (контрбатарея) և այլն:

բ) Կիսապատճենումներ. *ավտոդասակ* (автовзвод), *ավտոմաս* (авточасть), *գազանետ* (газомет), *գազորոշիչ* (газоопределитель), *անգազաթափանց, անգազանցիկ* (газонепроницаемый), *նռնակարտեչ* (гранатная картечь) և այլն:

Հաճախ ռուսերեն բառակապակցությունների կամ տերմինակապակցությունների դիմաց Մ. Աբեղյանը տալիս է հայերեն մեկ բառ՝ երևան հանելով հայերենի բառակազմական միջոցների հարստությունը և բառակազմության ճկունությունը: Տերմինի կազմության գիտական սկզբունքների տեսակետից, անշուշտ, գերադասելի է մեկ բառը բառակապակցության կամ տերմինակապակցության նկատմամբ, եթե, իհարկե, այդ բառը կարող է հաջողությամբ փոխարինել վերջիններիս: Անմիջապես պետք է արձանագրել, որ Մ. Աբեղյանի բառարանում բերված այդ կարգի բառերը հիմնականում հաջողությամբ են փոխարինում ռուսերեն բառակապակցություններին և մեծ մասով վաղուց քաղաքացիություն իրավունք են ձեռք բերել ժամանակակից հայերենում: Ինչպես, օրինակ, крючок спусковой—*ձգան,* минное заграждение—*ականափակոց,* бой кулачный—*կռփամարտ,* бой морской—*ծովամարտ, ծովամարտություն,* бой ночной—*գիշերամարտ,* бой огневой *հրամարտ,* бой рукопашный—*ձեռնամարտ,* боковой дозор—*կողմնադիտք,* вид на жительство—*կացագիր,* вид на проезд—*անցաթուղթ* և այլն:

Կան դեպքեր, երբ ռուսերեն մեկ բառի դիմաց բերվում է հայերեն բառակապակցություն կամ հարադրություն, բայց դրանք խիստ սահմանափակ են և որակ չեն կազմում: Օրինակ՝ амнистировать—*ամնիստիա շնորհել, ամնիստիա տալ,* атаковать—*կռիվ սկսել,* барабанить—*թմբուկ զարկել, թմբուկ ածել,* беспогодица—*եկալին եղանակ,* ветеран—*հին զինվոր,* вольнонаемный—*կամովին վարձված, վարձու ծառայող* և այլն:

Բառարանում ներկայացված հայերեն ռազմական տերմինաբանության երրորդ շերտը կազմող փոխառյալ բառերի կամ տերմինների անմիջական աղբյուրը ռուսերենն է, և դրանք, որպես կանոն, բերվում են ռուսական քերականական-կառուցվածքային ձևավորվածությամբ և ռուսերենում ձեռք բերած իմաստներով:

Բառարանում ռուսերենից վերցված ռուսերենի միջոցով փոխառյալ

բառերն ու տերմինները երկու կարգի են բաժանվում: Առաջինի մեջ մտնում են ոչ մեծաթիվ այն փոխառությունները, որոնց հետ չեն տրվում հայերեն համանիշները: Երկրորդ կարգին պատկանում են փոխառյալ այն բառերը, որոնք բերվում են իրենց հայերեն նույնանիշների հետ, սրանք համեմատաբար մեծ թիվ են կազմում: Բերենք երկու խմբից էլ օրինակներ:

1. ազիմուտ (азимут), *բալիստր* (балистр), *բաստիոն* (бастион), *բետոն* (бетон), *բլինդ* (блинда), *բրիգադ* (бригада), *դիվիզիա* (дивизия), *եսաուլ* (есаул) *և այլն:*

2. автомат—*ավտոմատ, ինքնակ,* автомобилист—*ավտոմոբիլիստ, ինքնաշարժորդ,* автомобиль—*ավտոմոբիլ, ինքնաշարժ,* агитатор—*ագիտատոր, հուզարկու,* агитация—*ագիտացիա, հուզարկություն,* аксельбант—*ակսելբանտ, ուսկապ,* ангар—*անգար, ծածկ,* аэродром—*աերոդրոմ, օդանավատեղ,* баррикада—*բարիկադ, անցկալ,* бинокль—*բինոկլ, երկդիտակ,* блиндаж—*բլինդաժ, շերտափակ,* буфер—*բուֆեր, թափարգել,* генерал—*գեներալ, զորավար,* генералиссимус—*գեներալիսիմուս, ընդհանուր սպարապետ,* дивизион—*դիվիզիոն, բաժնյակ,* радио—*ռադիո, անթել հեռագիր և այլն:*

Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանի» հրատարակությունից անցել է մոտ հինգ տասնամյակ, բայց բառարանը չի կորցրել իր թարմությունը և հիմնական արժանիքները: Անցած տասնամյակները միաժամանակ չափանիշ կարող են լինել Մ. Աբեղյանի ռազմական տերմինաբանության ստեղծման և մշակման ինչպես սկզբունքների կենսունակ կողմերի, այնպես էլ մասնակի թերությունները վեր հանելու համար: Կյանքը ցույց տվեց, որ Մ. Աբեղյանի տերմինաբանական սկզբունքները մշտանգամայն գիտական են, կենսունակ և առաջադիմական, միայն որոշ հարցեր ենթակա են վերանայման:

Խոսքը վերաբերում է միայն հասարակական-քաղաքական, մասամբ նաև տեխնիկական այն տերմիններին, որոնց համար տրված հայերեն համարժեքները այլևայլ պատճառներով չեն արդարացրել իրենց և չեն գործածվում. օրինակ՝ ինքնակ (автомат), *ինքնաշարժ* (автомобиль), *ինքնաշարժորդ* (автомобилист), *ինքնակաձիգ* (автоматчик), *հուզարկու* (агитатор), *հուզարկություն* (агитация), *զորավար* (генерал), *ապառազմում* (демобилизация), *զորամարմին* (корпус). *մեհենագեն* (партизан), *գրգռություն* (провокация), *ընկերավարություն* (социализм), *արվեստաբանություն* (технология) *և այլն:*

Բացի հաջող ու լայն գործածություն ունեցող բառերից բառարանում տեղ են գտել նաև այնպիսի նորակազմ բառեր, որոնք արդեն դուրս են մնացել ռազմական տերմինաբանությունից, ինչպես, օրինակ՝ բաժնյակ (дивизион), պահնորդ (гвардия), պահնորդական (гвардеец), թևլանի (ефрейтор), համբարակ (интендант), տեղակալ (лейтенант), դոսյթ (штурм), դոսյթասյուն (колонна) և այլն:

Հայոց լեզվում ընդունելության չգտած մի շարք բառերի ու տերմինների փոխարեն ժամանակի ընթացքում կազմվել են նորերը, որոնք, ավելի հաջող են գուրս եկել և արդեն տարածվել ու գործածվում են լեզվի մեջ. ինչպես, օրինակ՝ ավտոմատանիգ, ինքնեկանիգ, այժմ՝ ավտոմատավոր (автоматчик), ռազմական կոմիսար (ռազմկոմ), այժմ՝ զինվորական կոմիսար (զինկոմ), (военный комиссар, военком), ուսբանդ, ուսնոց, այժմ՝ ուսադիր (погон), պատվի պահակ, այժմ պատվո պահակ (почетный караул), ինքն իր համար խրամատ փորելը, ինքնախրամատացում, այժմ՝ ինքնախրամատավորում (самоокапывание) և այլն:

Նշված մասնակի թերությունները չեն նսեմացնում Մ. Աբեղյանի «Ռուս-Հայերեն ռազմական բառարանի» գործնական և պատմական ընդհանուր արժեքը, այն դերը, որ կատարել է հայ տերմինաշինության և մասնավորապես հայ ռազմական տերմինաբանության ստեղծման, մշակման ու կարգավորման գործում:

Հայ ռազմական տերմինաբանության հաջորդ աղբյուրը «Ռուս-Հայերեն ռազմական համառոտ բառարանն» է[26], որ պարունակում է 7 հազար բառահոդված: Առաջաբանում նշված է բառարանի հեղինակների, աղբյուրների, կազմության սկզբունքների և նպատակի մասին: Բառարանի կազմության աշխատանքներին մասնակցել են՝ Պ. Աթայանը, Վ. Գրիգորյանը, Վ. Թերզիբաշյանը, Հ. Մազմանյանը և Մ. Գևորգյանը՝ Ար. Ղարիբյանի ղեկավարությամբ:

Բառարանը կազմելիս օգտագործվել է Մ. Աբեղյանի «Ռուս-Հայերեն ռազմական բառարանը», իսկ հիշյալ բառարանից տարբերվող բառերը, հավաքել ու թարգմանել է Պ. Աթայանը: Ըստ առաջաբանի, բառարանը հրատարակվում է հայ կարմիր բանակայիններին օժանդակելու համար: «Համառոտ բառարանը» գիտական հատուկ նպատակներ չի հետապնդում: Սկզբունք ունենալով հասկանալիությունը և շտապ օգնությունը, հեղինակները բառարանում զետեղել են առանձին անհրաժեշտության

26 «Ռուս-Հայերեն ռազմական համառոտ բառարան», Երևան, 1941:

ներկայացնող բառերը։ Ըստ հնարավորին բացատրությունները տրված են մասսաներին ծանոթ և ընդունված բառերով։ Այդ նույն նպատակով որոշ դեպքերում նույնիսկ խախտված են բառարանագիտական և կամ, նույնիսկ, գրական լեզվի ընդունված նորմաները»։

Մի կողմ թողնելով հայ գրական լեզվի նորմաների պահպանության կարևորության հարցը, կանգ առնենք բառարանի ռուսական բառացանկի ընտրության և տերմինների տեղադրման սկզբունքների վրա։ Բառարանը կազմողների համար ռուսական բառացանկի և հայերեն ռազմական բառերի ու տերմինների լայն ընտրության հնարավորություն է տեղծվել Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանի» շնորհիվ։

Բառարանի հեղինակները թեև առաջաբանում խոստանում են ռուսական բառացանկում դետեղել առանձին անհրաժեշտություն ներկայացնող բառեր, բայց իրականում այնտեղ տեղ չեն գտել ռազմական գործի համար, այնպիսի անհրաժեշտ տերմիններ ու տերմինային կապակցություններ, որոնք առանց որևէ դժվարության հեղինակները կարող էին բաղել Մ. Աբեղյանի բառարանից։ Բառարանի ռուսական բառացանկում տեղ չեն գրավել ռազմական այնպիսի տերմիններ և բառեր, ինչպես՝

авиабаза, азимут, антенна, база, блиндаж, бомбовоз, гвардия, иприт, калибр, каска, код, маяк, номер, погон, плацдарм, танкер, солдат, транспортер, училище *և այլն։*

Տերմինային կապակցություններ՝

авиация береговая, атака воздушная, верховный главнокомандующий, винтовка автоматическая, винтовка с автоматическим прицелом, война гражданская, война отечественная, война позиционная, война тотальная, дежурный по караулам, дежурный по кухне, дежурный по полку, дежурный по части, командующий войсками, концентрация огня, подготовка артиллерийская, подготовка огневая *և այլն։*

Բառարանի ծավալը և նպատակները պահանջում էին նաև ռուսական բառացանկում դետեղել զինվորական հրամաններ, որոնք, սակայն բառարանում տեղ չեն գտել, ինչպես՝

В атаку, вперед!, Да здравствует!, Заводи!, К бою!, К ноге!, На караул!, На ремень!, Налево ровняйсь!, Наводи!, Сомкнись!, Стой!, Стой, кто идёт! *և այլն։*

Բառարանում հանդիպում ենք ոչ կարևոր ռազմական տերմինների, նույնիսկ ռազմական գործին չվերաբերող կամ մասամբ վերաբերող բա-

ներ և բառակապակցություններ, ինչպես, օրինակ՝ акустика, безграмотность, безрельсовая дорога, бесстрашный, болото, введение, вероятно, вентилятор, интрига, цемент, перекрещивание путей железной дороги, электрическая станция, экстренный поезд, ветряная мельница *և այլն:*

Բառարանում չի մշակված համանունների տարբերակման որևէ համակարգ, ավելի ճիշտ՝ ընդհանրապես դրանք չեն տարբերակված: Շատ դեպքերում չեն տարբերակված նաև բառերի տարբեր իմաստները: Դրանք ցվանշաններով հատակորեն չեն առանձնացված, որի հետևանքով ընթերցողի համար դժվարանում է ինչպես հոմանիշների, այնպես էլ համանուն բառերն իրարից տարբերելը: Օրինակ՝ дисциплина—*դիսցիպլինա, կարգապահություն, դիսցիպլին, առարկա,* команда—*զորախումբ, խումբ, հրաման,* магазин—*պահեստարան, մթերանոց, մագազին,* масса—*մասսա, բազմություն, զանգված,* мир—*խաղաղություն, հաշտություն,* обход—*շրջում, պտույտ, շրջագայություն, շրջանցում, թիկունքն անցնելը, կողքով անցնելը,* орудия—*գործիք, հրանոթ, թնդանոթ,* охотник—*որսորդ, որսկան, ցանկացող,* очко—*ակ, ծաթ, աչկո,* прием—*ընդունում, ձև, եղանակ,* пункт—*կետ, կայան, տեղ, վայր,* расчёт—*հաշիվ, հաշվարկ, անձնակազմ:*

Բառարանի հեղինակները չեն կարողացել խուսափել նախորդ բառարանի թերություններից և վրիպակներից, հաշվի առնելով անշուշտ ռազմական տերմինաբանության մեջ կատարված որոշակի փոփոխությունները, ինչպես նաև տերմինաբանության զարգացման միտումները: Հեղինակների կողմից Աբեղյանի բառարանի հայկական մասի, հայ ռազմական տերմինաբանության մեջ կատարած որոշ փոփոխումները և շտկումները իրականում սկզբունքային կամ էական արժեք չունեն, որովհետև նրանք, ըստ երևույթին չեն կարողացել որոշակի չափանիշներ գըտնել այդ ժամանակաշրջանում հայոց լեզվի զարգացման ոգուն հատուկ կենսունակ ու առաջադիմական և լեզվից դուրս մղված խորթ ու անհարատատ տարրերի միջև: Շատ դեպքերում հայկական բառացանկի փոփոխությունները կատարվել են Մ. Աբեղյանի բառարանի համապատասխան բաժնի՝ հայերեն հոմանիշների կրճատման միջոցով, որ երբեմն արդարացրել է իրեն հայ ռազմական տերմինաբանության կարգավորման և միօրինակացման տեսակետից:

Ի տարբերություն Մ. Աբեղյանի ռազմական բառարանի, «Ռուս-հայերեն ռազմական համառոտ բառարանում», սակայն նկատվում է օտար բառերի գործածության ավելի մեծ հակում. նույնիսկ այն դեպքում, երբ

նրանց հայերեն համապատասխանները լեզվում տարածված և գործածական են եղել։

Այսպես օրինակ՝

аэропорт—*աերոպորտ, օդանավակայան, օդակայան,* борт—*բորտ, կող, եզր,* вездеход—*ամենընթաց, վեզդեխոդ,* взятие... штурмом—*առում.... շտուրմով,* выдержать... штурм—*դիմանալ..... շտուրմին,* вышка—*վիշկա, դիտանոց, դիտակ,* гауптвахта—*հաուպտվախտա, կալանատուն,* гидропульт—*հիդրոպուլտ, ջրացան, հեղուկացան,* гильза—*գիլզա, պարկուճ,* депеша—*դեպեշ, հեռագիր, ճեպագիր,* дисциплина—*դիսցիպլինա, կարգապահություն,* зенитчик—*զենիթավոր, զենիթչիկ,* комбриг—*կոմբրիգ, բրիգադի հրամանատար, բրիգադրամ,* комдив—*կոմդիվ, դիվիզիայի հրամանատար,* комендант—*պարետ, կոմենդանտ,* комкор—*կոմկոր, կորպուսի հրամանատար,* лагерь—*ճամբար, լագեր, բանակ,* лафет—*հրետասայլ, լաֆետ,* мотор—*մոտոր, շարժիչ,* моторист—*մոտորիստ, մոտորավար,* наряд—*կարգում, վերակարգում, վերակարգ, կարդադիր, նալյադ,* пилот—*պիլոտ, օդաչու,* пистон—*պիստոն, հրապատիճ,* покрышка—*ծածկոց, խուփ, պոկրիշկա,* пропеллер, винт—*պրոպելլեր, պտուտակ,* рикошет—*ռիկոշետ, ոսոռատյուն,* сапер—*սապյոր,* сирена—*սիրենա,* тачанка—*տաչանկա, զնդացրահաստոցավոր սայլակ,* телескоп—*տելեսկոպ, հեռադիտակ,* траверс—*տրավերս, միջնաթմբ,* траншея—*տրանշեյ, խրամ,* указ—*հրամանագիր, ուկազ,* фонарь—*լապտեր, ֆանար,* фураж—*ֆուրաժ, կեր,* шкала—*շկալա, սանդղակ, ցուցնակ,* шофер—*շոֆեր,* штурмовик—*գրոհային, գրոհորդ-շտուրմովիկ,* шебень—*խիճ, շիբրին,* экипаж—*էկիպաժ, կառք, նավակազմ, օդանավակազմ,* эсминец—*էսմինց (էսկադրային ականակիր)* և այլն։

Նշված և այլ բերություններով հանդերձ «Ռուս հայերեն ռազմական համառոտ բառարանը», այնուամենայնիվ, պատմական որոշ դեր կատարել է հայերեն ռազմական տերմինաբանության զարգացման գործում։

Հայ ռազմական տերմինաբանությունը հիմնականում մշակվել և որոշ չափով կարգավորվել է հատկապես ռուս-հայերեն ռազմական բառարանների շնորհիվ։ Չնայած այդ բնագավառի տերմինաբանության մեջ կյանքի թելադրանքով կատարված պարբերական փոփոխություններին՝ Մ. Աբեղյանի բառարանը երկար ժամանակ շարունակում էր մնալ հայերեն ռազմական տերմինների հիմնական աղբյուրը, առանց իր նշանակությունը կորցնելու նույնիսկ Հայրենական պատերազմի տարիներին,

երբ հասկանալի պատճառներով մեծացավ ռազմական տերմինների և բառերի գործածության հաճախականությունը։

Թեև ռուս-հայերեն ռազմական բառարանների շնորհիվ մշակված հայերեն տերմինաբանությունը հիմնականում բավարարում է այդ բնագավառի պահանջները, սակայն Հայրենական պատերազմի տարիներին հարկ եղավ զբաղվելու ռազմական տերմինաբանության հարցերով։ Ռազմական գործում տարիների ընթացքում կատարված տեղաշարժերը որոշ փոփոխություններ էին առաջացրել ռազմական տերմինաբանության ընդհանուր համակարգի մեջ։ Կյանքի էին կոչվել նորանոր հասկացություններ, որոնց համար կենսական անհրաժեշտություն էր դարձել անմիջապես լուծելու դրանց հայերեն համազորները կազմելու կամ օտար անվանումները յուրացնելու հարցը։ Մյուս կողմից, հայերենում առկա ռազմական տերմինների ինտենսիվ գործածությունը հրամայական պահանջ էր առաջադրում վերակարդավորելու, լրացնելու և ճշտելու հայերեն ռազմական տերմինաբանությունը։ Այդ դժվար և, միաժամանակ, շնորհակալ գործը կատարվում էր հիմնականում մամուլի և համապատասխան գրականության միջոցով։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայերեն ռազմական տերմինների համակարգում կատարված տեղաշարժերը, որոնք արտացոլվել են հիշյալ ժամանակաշրջանի մամուլի էջերում։ Այդ հետաքրքրական հարցերի քննությունը առանձին ուսումնասիրության նյութ է և մեր նպատակից դուրս։ Այդ շրջանի բազմաթիվ նորաստեղծ տերմիններից մենք հատկապես կանգ ենք առնում արդեն քաղաքացիության իրավունք ձեռք բերած հայերեն ռազմական տերմինների վրա։

Պատերազմական շրջանի հայ մամուլը, փաստորեն, ստանձնել էր հայերեն ռազմական տերմինաբանության հետագա մշակման, հղկման, միօրինակացման և կարգավորման աշխատանքները։ Եվ պատահական չէ, որ 1943 թ. Տերմինաբանական կոմիտեն իր միայն մեկ նիստում հաստատել և հանձնարարել է հետագա գործածման «Սովետական Հայաստան» թերթի որդեգրած 60 ռազմական տերմին և տերմինակապակցություն[27]։

Դրանք են՝ ականանետ, ականաձիգ, ականատրս, առաջակալ, ավտոմատատվոր, արգելիչ ջոկատ, բնագիծ, գետանց, գնդակոծություն, դի-

27 Ս. Ղազարյան, *Ուղեցույց Տերմինաբանական կոմիտեի որոշումների*, եր. 1945, էջ 53—54։

պում, դիտանոք, զորաթիկունք, զորասյուն, զրահահար, թևանցել, թիկնանցել, ինքնագնաց, ինքնաշարժ, խորասույզ, կանոնավոր (զորք), կոմբինացված, կործանվել, կրակահերթ, կրակամարտ, հակագործել, հեռաձգություն, հիդրոինքնաթիռ, մատույց, մարտակարգ, մեքենայացված, մոտորացված, մոտոգունդ, ներխուժել, շարասյուն, շրջանցել, պատժիչ ջոկատ, վայրասլաց, վարժվածություն, տարանել, տորպեդակիր, փակոցային կրակ, փոխհրաձգություն:

Հետպատերազմյան շրջանում սկզբունքային տեղաշարժեր կատարվեցին ռազմական տերմինաբանության ընդհանուր համակարգի մեջ: Դրա հիմնական պատճառները, նախ, պատերազմի մատրած ճշտումներն էին, և, ապա՝ հետպատերազմյան շրջանում գիտության և տեխնիկայի բուռն զարգացման շնորհիվ կյանքում, ռազմական արդյունաբերության մեջ և ռազմական գործում կատարված որակական փոփոխությունները: Բավական է նշել, որ պատերազմի վերջին շրջանում և հատկապես հետպատերազմյան տարիներին ձիու և հեծելազորի հետ կապված բոլոր հասկացությունները և դրանց համապատասխան տերմիններն ու տերմինային կապակցությունները դուրս մղվեցին ռազմական տերմինաբանության համակարգից: 70-ական թվականներին հրատարակված[28] ռուսերեն յոթլեզվյան ռազմական բառարանում ձիուն և հեծելազորին վերաբերող ոչ մի տերմին չի մտել: Ռազմական գործից դուրս մնացած նման կարգի շատ տերմինների փոխարեն ռազմական տերմինաբանությունը հարստացել է հարյուրավոր նոր տերմիններով, բառերով և տերմինային կապակցություններով, որոնք արտահայտում են ռազմական գործի արդի մակարդակին համապատասխանող հասկացություններ և ըմբռնումներ: Ռազմական գործում կատարված տեղաշարժերի մասին որոշ գաղափար տալու համար բերում ենք ռազմական բառերի, տերմինների և տերմինային կապակցությունների օրինակներ, որոնք տերմինաբանության մեջ մուտք են գործել հետպատերազմյան շրջանում[29]:

ա) Տերմիններ և բառեր՝

Автопилот, альфа лучи, альфа-излучение, альфа-частица, антибиотик, антиракета, бета-активность, бета-лучи, бета-частица, вертолет, гамма-активность, гамма-лучи, дозвуковой, дозиметр, индикатор, индикация, сверхзвуковой, конструктор, контейнер, координометр, космодром, космонавт, космонавтика, лётчик-космо-

28 «Семиязычный военный словарь», М., 1971.

29 Տվյալները բերվում են ըստ նշված բառարանի:

навт, лазер, мегатонна, мотопехота, мотострелковый, напалм, нитроглицирин, нитропорох, нитроцеллюлоза, орбита, пеленг, пеленгатор, пеленгование, пистолет-пулемёт, пламегаситель, пламеотражатель, плащ-накидка, плащ-палатка, противоракета, радиация, радиоактивность, радиовысотометр, радиолокатор, радиолокация, радиолуч, радиомаскировка, радиомаяк, радиомолчание, радиообмен, радиопеленг, радиопеленгатор, радиоперехват, радиопротиводействие, радиорелейный, радиотелетайп, ракета, реактор, самоликвидатор, самонаведение, скафандр, стандартизация, тренажёр, тринитротолуол, фотодонесение, фотопулемет, шлемофон, шумопеленгатор, электроника *և այլն:*

բ) Տերմինային կապակցություններ՝

реактивная авиация, радиолокационная антенна, космический металлический аппарат, атомная артиллерия, реактивная артиллерия, баллистический снаряд, ядерный барьер, радиорелейный батальон, ракетная батарея, реактивная батарея, атомная бомба, бактереологическая бомба, водородная бомба, термоядерная бомба, радиоактивное вещество, атомный взрыв, ядерный взрыв, ядерная ракета, ядерная война, ракетные войска, ракетные войска стратегического назначения, ракетное вооружение, выпадение радиоактивных осадков, лазерный дальномер, радиолокационный дальномер, дальность радиолокационного обнаружения, атомный двигатель, жидкостный ракетный двигатель, ракетный двигатель, реактивный двигатель, ядерный двигатель, ракетный дивизион, бактериальное заражение, радиоактивное заражение, ядерный заряд, радиоактивное измерение *և այլն:*

Ռուսական ռազմական տերմինաբանության մեջ եռապատերազմյան վերջին տասնամյակներում կատարված տեղաշարժերը, բնականաբար իրենց ներգործությունն են ունեցել նաև հայերեն ռազմական տերմինաբանության վրա:

Հայերենում հիմնականում կազմվել և գործածության մեջ են մտել ռուսական այդ նոր տերմինների համարժեքները, որոնք միայն մասամբ են տեղ գտել, ռուս-հայերեն բառգրքերում[30], իհար-

30 *Հայերեն ռազմական բառարաններում տեղ չգտած ռազմական ռուսական նոր տերմինների և տերմինային կապակցությունների հայերեն համազորները հավաքելու կամ նորերը կազմելու աշխատանքները կատարվում են մեր կողմից:*

կն այն ծավալով, որ թույլ են տալիս այդ տիպի աշխատանքների բնույթը ու նպատակները։

Հայերեն ռազմական այդ նոր տերմիններն ու տերմինակապակցությունները կազմվել են նույն սկզբունքներով և կանոններով, ինչպես որ նախկին տերմինները։ Դրանք հիմնականում ռուսերեն տերմինների հայերեն թարգմանություններն են։ Դրանց մեջ կան նաև ռուսերենի միջոցով կատարված փոխառություններ, որոնց թիվը այնքան էլ մեծ չէ։ Ռուսական տերմինների հայերեն թարգմանությունների մի զգալի մասը պատճեններ և կիսապատճեններ են։

Մեր ձեռքի տակ գտնվող հայերեն ռազմական նոր տերմիններն ու տերմինակապակցությունները կարելի է բաժանել չորս խմբի՝ ռուսերեն ռազմական տերմինների իմաստների հայերեն թարգմանություններ, կառուցվածքային պատճեններ, կիսապատճեններ և փոխառություններ։

ա) Ռուսերեն ռազմական նոր տերմինների իմաստների թարգմանությամբ կազմված հայերեն համազորներ.

Հրթիռային հրետանի—(ракетная артиллерия), *հրթիռային մարտկոց*—(ракетная батарея), *հրթիռային զորքեր*—(ракетные войска), *հրթիռային սպառազինություն*—(ракетное вооружение), *ճառագայթային հիվանդություն*—(лучевая болезнь), *մանրէաբանական ռումբ*—(бактериологическая бомба), *ջրածնային ռումբ*—(водородная бомба), *միջուկային ռումբ*—(ядерная бомба), *ջերմամիջուկային ռումբ*—(термоядерная бомба) *և այլն։*

բ) Ռուսերեն ռազմական նոր տերմինների հայերեն պատճեններ.

Հակահրթիռ (антиракета), *ուղղաթիռ* (вертолет), *զրահաթափանցելիություն* (бронепроницаемость), *պայթածրար* (взрывпакет), *գազասիգնալիզատոր* (газосигнализатор), *ապակողմնորոշում* (дезориентация), *նախահետախուզություն* (доразведка), *տիեզերակայան* (космодром), *տիեզերագնաց* (космонавт), *տիեզերագնացություն* (космонавтика), *միջմայրցամաքային* (межконтинентальный), *հրթիռախաղ* (ракета-приманка), *գերձայնային ինքնաթիռ* (сверхзвуковой самолет), *ինքնաթիռ-արկ* (самолетснаряд), *ինքնաթիռ-թիրախ* (самолет-мишень) *և այլն։*

գ) Կիսապատճեններ.

Բարոխցիկ (барокамера), *բենզինատար* (бензиновоз), *զրահակատեր* (бронекатер), *զրահատրանսպորտյոր* (бронетраспортер),

ռադիոակտիվ նյութ (радоиактивное вещество), *կոորդինատաչափ* координатометр), *ական-դետոնատոր* (мина-детонатор), *նիտրովառոդ* (нитропорох), *ռադիոհեռուստակառավարում* (радиотелеуправление), *ինքնաթիռ-ամֆիբիա* (самолет-амфибия), *ֆոտոգնդացիր* (фотопулемет), *ֆոտոհետախուզություն* (фоторазведка) *և այլն:*

դ) **Ռուսերենի միջոցով կատարված փոխառություններ.**

Հիդրոլոկատոր (гидролокатор), *հիդրոլոկացիա* (гидролокация), *դեզինֆորմացիա* (дезинформация), *ինդիկատոր* (индикатор), *ինդիկացիա* (индикация), *լազեր* (лазер), *մեգատոննա* (мегатонна), *նապալմ* (напалм), *պելենգ* (пеленг), *պելենգատոր* (пеленгатор), *ռադիոպելենգ* (радиопеленг), *ռադիոլոկատոր* (радиолокатор), *ռադիոլոկացիա* (радиолокация), *ռադիոպելենգատոր* (радиопеленгатор), *սկաֆանդր* (скафандр), *տրենաժոր* (тренажер), *էլեկտրոնիկա* (электроника) *և այլն:*

Հայերեն ռազմական տերմինաբանության պատմության համառոտ ակնարկը ցույց է տալիս հետևյալը.

ա) Գրաբարյան և հետագա շրջաններում չի եղել հատուկ ծրագրով մշակված և բառիս բուն իմաստով համակարգման ենթարկված հայերեն ռազմական տերմինաբանություն: Հայոց լեզվի բառային կազմում եղել են ժամանակի պահանջներին խիստ համապատասխան ոչ մեծաթիվ բառեր ու կայուն կապակցություններ, որոնք արտահայտել են ժամանակի ռազմական որոշ հասկացություններ:

բ) Գիտական առումով հայերեն ռազմական տերմինաբանության ստեղծման մշակման և կարգավորման հիմնական աշխատանքներն սկսվում և տարվում են սովետական իշխանության տարիներին՝ 20-ական թվականներից սկսած: Հայերեն ռազմական տերմինաբանությունն ամփոփված է հիմնականում Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանում», մասամբ նաև «Ռուս-հայերեն ռազմական համառոտ բառարանում»: Մեծ է հատկապես Մ. Աբեղյանի ռազմական բառարանի դերն ու պատմական նշանակությունը:

գ) Հայերեն ռազմական տերմինաբանության ստեղծման և մշակման գործում ուղեցույց լեզվի դեր է կատարում ռուսաց լեզուն: Հայերեն ռազմական տերմինաբանությունը կազմվել և կազմվում է ռուսական ռազմական տերմինաբանական բառացանկի հիման վրա: Հայերեն տերմինները կազմվում են գերազանցապես ռուսերենում ընդունված իմաստների թարգմանության կամ պատճենման միջոցով: Սովետական

շրջանի ռազմական բառերի փոխառությունները նույնպես կատարվել են ռուսերենից և ռուսերենի միջոցով:

դ) Պատերազմի և հետպատերազմյան տարիներին ռազմական գործի հետագա զարգացման կապակցությամբ կյանքը որոշակի շտկումներ և ճշգրտումներ է մտցրել հայերեն ռազմական տերմինների գործածության և ռազմական տերմինաբանական համակարգի մեջ:

ե) Ռուս-հայերեն ռազմական բառարաններն իրենց կատարած պատմական խոշոր դերով հանդերձ՝ ինչպես տերմինային ցանկերի, այնպես էլ հայերեն տերմինների գործածության մեջ կատարված փոփոխությունների և ընդհանրապես հայերեն ռազմական տերմինաբանության համակարգի միօրինակացման և կարգավորման կապակցությամբ այլևս չեն կարող լիովին բավարարել արդի պահանջները: Հայերեն ռազմական նոր բառարանի կազմության պահանջն այժմ օրակարգի հարց է դարձել:

ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում և հատկապես վերջին տասնամյակներում ռազմական գործում տեղի ունեցած խոշոր տեղաշարժերի հետևանքով հայերեն ռազմական տերմինաբանության համակարգում զգալի փոփոխություններ են կատարվել:

Առաջին հերթին համալրվել և փոփոխություն են կրել տերմինային բոլոր ենթահամակարգերը և տերմինների շերտերը: Այսպես, պատմա-ավանդական մոտավորապես 20 հազար տերմինից ժամանակակից ռազմական տերմինաբանության մեջ կայուն արժեք են ձեռք բերել 8—9 հազարը:

Ռուսական ռազմական տերմինների վերջին բառարանը[31], որ լույս է տեսել 1971 թ. Մոսկվայում, պարունակում է շուրջ 8 հազար տերմին և տերմինային կապակցություն: Ռազմական արդյունաբերության բուռն զարգացումը՝ կապված նորագույն տեխնիկայի և ընդհանրապես գիտության զարգացման հետ ոչ միայն իր հետ բերում է հարյուրավոր, անգամ հազարավոր նորագույն տերմիններ, այլև գործածությունից դուրս է բերում բազմաթիվ հնացած տերմիններ, հանգեցնում տերմինաբանության հետագա մշակմանը և միօրինակացմանը: Կարելի է ասել, որ ժամանա-

31 Семиязычный военный словарь, М., 1971 г.

կակից տերմինաբանական համակարգից ոչ միայն ամբողջապես դուրս են եկել ռազմական տերմինների առանձին ենթահամակարգեր, այլև բոլոր ենթահամակարգերը այնքան փոփոխության են ենթարկվել թե՛ քանակապես և թե՛ որակապես, որ փաստորեն ստեղծվել է ռազմական տերմինների նոր համակարգ։ Ժամանակակից ռազմական բառարաններից հանվել են այն տերմինները, որոնք կապված են ռազմական գործում հնացած և իրենց դարն ապրած այնպիսի տեսակների հետ, ինչպես՝ հեծելազորը և հեծելազորային ծառայությունը, որոնք միայն պատմական իրողություն են դարձել։

Ահավասիկ, ռազմական գործին չառնչվող կամ մասամբ առնչվող մի շարք տերմիններ, տերմինային կապակցություններ և բառեր, որոնք դուրս են մնացել ժամանակակից ռազմական տերմինաբանության համակարգից, օրինակ՝ կանխույթ, կանխավճար, կանխադրամ, կանխաճաշիվ, կանխուրել, արկածախնդրություն, բախտախնդրություն, արկածախնդիր, բախտախնդիր, գործակալ, դիվանագիտական գործակալ, երկրորդային գործակալ, ոստիկանական գործակալ, գործակալություն, հուզարկու, հուզարկություն, վարիչ‖վարչագետ, բաղաքացիական վարչություն, հասցե, հասցեատեր, հասցեմատյան, հասցեագրել, ազբեստ, կտավաբար, կարճատես, սպանդանոց, կող, կողմ, բազկաթոռ *(մտով կամ առանց մտի)*, կոշիկ, տակատ, տակատակ, գերան, հուն, կտրոնիկ *(գետի)*, ապուայով բաշ, անդրավարտիք, տաբատ, առնոց, վարտիք, բլուր, բլրակ, դար, շեղջ ‖ կույտ, տոնիկ ‖ տաղավար, մոլեգին, վայրագ, մոլեգնություն, վայրագություն, կոպիճ, բուղբ ‖ գրություն, խազմ, տառատող և այլն։

Բերենք նաև ռազմական գործում արդեն հնացած և գործածությունից դուրս եկած հասկացություններ արտահայտող տերմիններ և տերմինային կապակցություններ. դժոխային մեքենա, ռազմա-իրավաբանական ակադեմիա, ակսելբանտ, ուսկապ, բելք *(ձիու)*, արագ բելք, աշխույժ բելք, ձիասարք, ձիասարքանոց, զառէջ, բամբաղեղ, բաստիոն, հողալից բաստիոն, բերմ, պատոց, բիկֆորդային պատուգ, բիկֆորդային կաշեփող, բիկֆորդային ֆուղ, բրիզուր, բեկվածք, գումակամրոց, տապճակ, ձիու ծածկոց, հեծելական վեսկա, հեծելապահակ, ձիավոր, հեծելազոր, բեբևագեն հեծելազոր, ծանր հեծելազոր, հեծելակ, հեծելական գրոհ, հեծելակի հրացան, հեծյալ, հեծելական բաժնյակ, հեծյալ, հեծելական դիվիզիա, հեծելածի, հեծելազորի պետ, հեծելապետ, հեծելագունդ, հեծելական բամբ, հեծելաթամբ, հեծյալ, հեծելական մաս, հեծելական դպրոց, հեծելավաշտ, ձիավոր, կարմիր բանակայինի գր-

ֆույկ, կարմրադրոշավոր, կարմրադրոշ բանակ, կարմրադրոշ գունդ, կարմիր բանակ, կարմիր պահանոցդ, սուր, երկայն սուր, կարճ սուր, թուր, կեռ թուր, թրավոր, թրի պատյան, թրավոր չոկ, թրի հարված, թրավոր հեծելավաշտ և այլն[32]:

Ժամանակակից ռազմական տերմինաբանությունն իր մեջ ամփոփում է միայն ռազմական գործի, ռազմական տեխնիկայի արդի պահանջները բավարարող հասկացությունների անվանումները, այդ հասկացություններն արտահայտող տերմինները, տերմինային կապակցությունները ու բառերը:

Այդ հասկացություններն առաջին հերթին, բնորոշում են գիտատեխնիկական հեղաշրջման արդի մակարդակը, գիտության և տեխնիկայի վերջին նվաճումների վրա հարաբերված արդի ռազմական գործը, ռազմական գիտությունը ու տեխնիկան՝ օժտված մեքենայացման և ավտոմատացման ամենանորագույն միջոցներով, ռադիոյի և էլեկտրոնիկայի սարքերով, համակարգերով և այլն:

Ժամանակակից ռազմական տերմինաբանության համակարգի մեջ արդեն հիմնավորապես մուտք են գործել ֆիզիկայի, մեխանիկայի, մաթեմատիկայի, կիբեռնետիկայի, էլեկտրոնիկայի տարբեր բնագավառներին վերաբերող բազմաթիվ հասկացություններ և դրանք արտահայտող տերմիններ ու տերմինային կապակցություններ: Հիշյալ տերմինների և տերմինային կապակցությունների մուտքը փաստորեն որակական փոփոխության է ենթարկել ժամանակակից ռազմական տերմինաբանական դրեթե ողջ համակարգը, հետևաբար նաև առանձին ենթահամակարգերը և ռազմական տերմինների տարբեր շերտերը:

Միայն վերջին տասնամյակներին առաջ եկած նոր և նորագույն հասկացությունների հետևանքով հայերեն ռազմական տերմինաբանության մեջ մուտք են գործել ռազմական գործին, գիտությանը և տեխնիկային վերաբերող հարյուրավոր նոր տերմիններ և տերմինային կապակցություններ, որոնց մեծ մասը դեռևս բառարանագրական մշակման չի ենթարկվել:

Վերջիններիս բնույթի մասին գաղափար տալու նպատակով նպատակահարմար ենք գտնում բերել դրանց մի քանի ենթաշերտերը: Այդ տերմինները հիմնականում վերաբերում են հրթիռային տեխնիկային, ժամանակակից ավիացիային, ռազմածովային նավատորմին, հարձակողական և պաշտպանական արդի համակարգերին, միջուկային և ջեր-

---

32 Մ. Աբեղյան, *«Ռուս-հայերեն ռազմական բառարան»:*

մամիջուկային զենքին և դրանց հետ կապված ֆիզիկական և քիմիական երևույթներին, զենքի նորագույն տեսակներին և այլն[33]։

1. Ռումբերի, ականների նոր տեսակներ, պատերազմի նոր ձևեր.

Ատոմային ռումբ, ջրածնային ռումբ, ջերմամիջուկային ռումբ, միջուկային ռումբ, խորհային ռումբ, լուսավորող ռումբ, մանրէաբանական ռումբ, լոկալ (տեղային) պատերազմ, ատոմային պատերազմ, ջերմամիջուկային պատերազմ, մանրէաբանական պատերազմ, գլոբալ պատերազմ, ջրածնային զենիթ, տիեզերական զենիթ, ջերմամիջուկային զենիթ, մանրէաբանական զենիթ, դանդաղեցված գործողության ական, ակնթարթային գործողության ական, ձգովի գործողության ական, ճրկիզող ական, բեկորային ական, լողացող ական, ատոռջյա ական, հակասուզանավակային ական, հակաինեևակային ական, կառավարվող ական, ական-բակարդ, ական-անակնկալ, լուսածրային արկ, միջուկային արկ:

2. Հրթռային միջոցներ, զենիթեր.

Հակաիրթիռ, հրթռային զորեր, հրթռային մարտկոց, հրթռային շարժիչ, հրթռային նավ, հրթռաիրեռանային հեռախուզություն, մոտակա գործողության հրթիռ, հեռավոր գործողության հրթիռ, օդային մարտի հրթիռ, «օդ-օդ» կարգի հրթիռ, «օդ-նավ» կարգի հրթիռ, «երկիր-օդ» կարգի հրթիռ, «երկիր-երկիր» կարգի հրթիռ, միջին հեռավորության հրթիռ, ինքնաճշտառու համակարգով հրթիռ, միջուկային մարտամասով հրթիռ, բևավոր հրթիռ, բազմաստիճան հրթիռ, հեղուկ վառելիքով հրթիռ, կարծր վառելիքով հրթիռ, կրող հրթիռ, կառավարվող հրթիռ, խայծ-հրթիռ:

3. Ինքնաթիռների և նավերի նոր տեսակներ, ավիացիային, ռազմական նավատորմիղին վերաբերող նոր տերմիններ և տերմինային կապակցություններ.

Ուղղաիայաց թռիչքի և վայրէջքի ինքնաթիռ, նշանառու ինքնաթիռ, անօդաչու ինքնաթիռ, ուղեծրային ինքնաթիռ, պարեկային ինքնաթիռ, օդաչվավոր ինքնաթիռ, հրթռային ինքնաթիռ, հակասուզանավակային ինքնաթիռ, գերձայնային ինքնաթիռ, լցավորող ինքնաթիռ, նշտոռդ ինքնաթիռ, ինքնաթիռ-բիրախ, հետախույզ ինքնաթիռ, հրթռակիր ինքնաթիռ, ինքնաթիռ-արկ, ինքնաթիռ-նպատակ, վերջրանավ, հետևակադեսանտային նավ, հակասուզանավակային նավ, հրթռային նավ, տանկադեսանտային նավ:

---

33. Հայերեն տերմիններն ու տերմինային կապակցությունները կազմել ենք նշված յոթլեզվյան բառարանի հիման վրա:

4. Հարակից գիտություններին վերաբերող տերմիններ, տերմինային կապակցություններ, որոնք մուտք են գործել ռազմական տերմինաբանության մեջ.

Ալֆա-ճառագայթում, ալֆա-մասնիկ, բետա-ճառագայթներ, գամմա-ճառագայթներ, լուսային ճառագայթում, ջերմային ճառագայթում, ճառագայթման աղբյուր, ճառագայթահարում, մինչճայնային արագություն, գերձայնային արագություն, տիեզերագնաց օդալու, լուսազդանշանում, հետատիպ, հետուստակառավարում, հեղուկ վառելանյութ, էլեկտրոնիկա, ինդիկատոր, ինդիկացիա, լազեր, կիբեռնետիկա, մեգատոննա, նիտրոտոլուոլ, նիտրոգլյուզոզա, ռադիոլոկացիա և այլն:

Ավանդական-պատմական և ժամանակակից ռազմական տերմինների համակարգերի համեմատությունը ցույց է տալիս հետևյալը.

ա) ժամանակակից ռազմական տերմինաբանությունը որդեգրել է ավանդական-պատմական տերմինաբանական համակարգի տերմինների զգալի մասը: Այդ տերմինները համապատասխանում են և հաջողությամբ ծառայում ռազմական լեզվին, թեև մասամբ դրկվել են իրենց նախկին պատճառաբանվածությունից:

բ) Ավանդական-պատմական զգալի թվով ռազմական տերմիններ դուրս են մնացել ժամանակակից ռազմական տերմինաբանական համակարգից՝ համապատասխան հասկացությունների հնանալու և շրջանառությունից դուրս գալու պատճառով:

գ) ժամանակակից հայերեն ռազմական տերմինաբանության բնորոշ առանձնահատկություններն են տերմինների մասնագիտացումը, գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներից տերմինների ներթափանցումը (ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա), ինչպես նաև ռազմական գործին և ռազմական գիտությանն ու տեխնիկային չառնչվող տերմինների արտամղումը:

ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ-ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Վերջին տասնամյակներում գիտության ու տեխնիկայի և նրանց հետ կապված ռազմական գործի ու ռազմական տեխնիկայի բուռն զարգացումը հանգեցնում է այն բանին, որ գիտատեխնիկական տերմինաբանությունը հասկանալի է դառնում միայն որոշ առարկայական համակարգում: Ռազմական տերմինաբանությունը փաստորեն դառնում է

տերմինների և հասկացությունների «համակարգերի համակարգ», որ բաժանվում է համակարգերի և ենթահամակարգերի:

Տերմինների դասակարգման սկզբունքները բնականաբար բխում են տերմինաբանության տվյալ բնագավառի առանձնահատկություններից:

Ինչպես յուրաքանչյուր բնագավառում, այնպես էլ ռազմական բառապաշարի մեջ ամենից առաջ պետք է տարբերակել և առանձնացնել ռազմական տերմինաբանությունը ռազմական անվանակարգից՝ հաշվի առնելով նրանց դերը լեզվի ընդհանուր համակարգում:

Ռազմական անվանակարգը որպես այդ բնագավառի զանազան օբյեկտների անվանումների ամբողջություն, փաստորեն, դուրս է մնում հայոց լեզվի ընդհանուր բառապաշարի սահմաններից և այդ պատճառով չի կարող դառնալ հիշյալ բնագավառի տերմինաբանության ուսումնասիրության օբյեկտ: Մյուս կողմից, ռազմական անվանակարգային նշանների, ավելի ճիշտ՝ ռազմական անվանակարգի ուսումնասիրությունը կապված է որոշակի դժվարությունների հետ՝ ռազմական գործի շատ բնագավառների՝ ոչ մասնագիտական և հանրության մեծ մասին անմատչելի լինելու պատճառով:

Հայերեն ռազմական տերմինաբանությունը (գիտության և տեխնիկայի, հասարակական և քաղաքական մյուս բնագավառների տերմիններին նման) կազմում է մի առանձին համակարգ, որ որոշակիորեն տարբերվում է տերմինաբանության մյուս համակարգերից: Այն, իր հերթին բաժանվում է առանձին ենթահամակարգերի, որոնք հանդես գալով իբրև միկրոհամակարգեր, իրենց որոշ թեմատիկ-առարկայական տարբերություններով հանդերձ՝ ընդհանուր համակարգի (մակրոհամակարգ) բաղկացուցիչ մասերն են կազմում:

Ռազմական տերմինների ընդհանուր համակարգը ըստ թեմատիկ-առարկայական սկզբունքի ենթահամակարգերի առորաբաժանելու դեպքում պետք է առանձնացնել առաջին հերթին համազորային այն տերմինները, որոնք ընդհանուր են զորքերի բոլոր տեսակներին: Ընդհանուր համազորային ենթահամակարգի մեջ պետք է դասել, այնպիսի ռազմական տերմիններ, ինչպես, օրինակ՝ բանակ, ռազմաճակատ, պատերազմ, մարտ, ճակատամարտ, հրաման, հրամանատար, զոհ, հաճանջ, հետախուզություն, առաջապահ, վերջապահ, զորավար, զինծառայություն, զինվոր, զորք և այլն:

Հաշվի առնելով վերջին տասնամյակներում և հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ռազմական գործում կատարված խոշոր փոփոխությունները ու տեղաշարժերը, հայերեն ռազմական տեր-

մինաբանությունը արդի փուլում կարելի է բաժանել՝ պատմաավանդական[35] *և ժամանակակից (արդիական) տերմինաբանության*[36]*։*

Հայերեն պատմաավանդական տերմինաբանական ընդհանուր համակարգի ենթահամակարգերը և՛ քանակապես, և՛ որակապես տարբերվում են ժամանակակից տերմինաբանության ենթահամակարգերից։ Այն կարելի է բաժանել հետևյալ հիմնական ենթահամակարգերին՝ հիմք ընդունելով զորքերի տեսակները նախապատերազմյան, մասամբ էլ՝ պատերազմի շրջանում։

1. Հետևակազորային տերմինների ենթահամակարգ։ *Այս ենթահամակարգին պատկանում են այն պարզ ու բարդ տերմինները, որոնք վերաբերում են հետևակին, հետևակային զորքերի զենքի տեսակներին, ռազմական հանդերձանքին, հրամաններին, շարքային, կրտսեր, միջին և բարձր հրամանատարական կազմին և այլն։ Օրինակ՝* հետևազոր, հետևակ, հետևակի գրոհ, հետևակային դիվիզիա, հրաձգային դիվիզիա, հետևակային մկավոր, հետևակային հրաձոր, հետևակային գունդ, հետևակային զորամաս, ձեռնամարտ, ձեռնաձոռնակ *և այլն։*

2. Հեծելազորային տերմինների ենթահամակարգ։ *Այս ենթահամակարգին պատկանում են հեծելազորին, նրա անձնակազմին, զենքի տեսակներին, հեծելազորի հետ կապված զանազան ծառայություններին վերաբերող պարզ և բարդ (բազադրյալ) տերմինները։ Օրինակ՝* հեծելազոր, հեծելական դիվիզիոն, հեծելազորի պետ, հեծելավաշտ, այրուձի, բանակային այրուձի, զորական այրուձի, հեծյալ ջոկատ, հեծյալ կարգ, հեծյալ զորամաս *և այլն։*

3. Հրետանազորային տերմինների ենթահամակարգ։ *Այս ենթահամակարգին պատկանում են հրետանուն, հրետանային զորքին, հրետանու տեսակներին, հրետանային ծառայության վերաբերող պարզ և բազադրյալ (բառակապակցական) տերմինները։ Օրինակ՝* հրետանի, ծովափնյա հրետանի, հաուբիցային հրետանի, լեռնային հրետանի, հետևակային հրետանի, թեթև հրետանի, պաշարողական հրետանի, հատուկ նշանակության հրետանի, դաշտային հրետանի, գնդի հրետանի, ծանր հրետանի, պահեստի հրետանի *և այլն։*

4. Օդազորային տերմինների ենթահամակարգ։ *Այս ենթահամակարգի մեջ են մտնում օդային ուժերին պատկանող այն պարզ և բազադրյալ*

---

35 *Պատմաավանդական տերմինաբանության համար սկզբնաղբյուր է ծառայել Ա. Արեղյանի նշված բառարանը։*

36 *Ժամանակակից ռազմական հայերեն տերմինաբանության տվյալները կազմվել են յոթլեզվյան բառարանի հիման վրա։*

յայլ տերմիններըը, որոնք վերաբերում են ռազմաօդային նավատորմին, նրա անձնակազմին, սպասարկմանը և այլն։ Օրինակ՝ ավիացիա, ինքնաթիռ, ռմբակիր ինքնաթիռ, կործանիչ ինքնաթիռ, օդանավակայան, ռազմական օդանավակայան, ժամանակավոր օդանավակայան, հաղթացիական օդանավակայան, պահեստի օդանավակայան, հիմնական օդանավակայան, առաջապահ օդանավակայան, դաշտային օդանավակայան, թշնամու ինքնաթիռ, ռադիոլոկացիոն դետի ինքնաթիռ, կապի ինքնաթիռ, աճօդաչու ինքնաթիռ, ռազմատրանսպորտային ինքնաթիռ, հաղթացիական ինքնաթիռ, ուղեծրային ինքնաթիռ, պարետային ինքնաթիռ, հետախուզական ինքնաթիռ, հրթռային ինքնաթիռ, ռեակտիվ ինքնաթիռ, գերձայնային ինքնաթիռ, տրանսպորտային ինքնաթիռ, ուսումնամարտական ինքնաթիռ, ուսումնամարզական ինքնաթիռ, ավիացիա, հատուկ նշանակման ավիացիա, ավիակիր ավիացիա, բազային ավիացիա, մարտական ավիացիա, ռմբակոծիչ ավիացիա, ռազմական ավիացիա, ռազմատրանսպորտային ավիացիա, զորային ավիացիա, օժանդակ ավիացիա, հաղթացիական ավիացիա, կործանիչ ավիացիա, հետախուզական ավիացիա, ռեակտիվ ավիացիա, տակտիկական ավիացիա, տորպեդակիր ավիացիա, տրանսպորտային ավիացիա, ռազմանավատային ավիացիա, գրոհային ավիացիա:

5. Նավազորային տերմինների ենթահամակարգ: *Այս ենթահամակարգին են պատկանում ծովային նավատորմիղին պատկանող այն պարզ և բաղադրյալ տերմինները, որոնք վերաբերում են ռազմածովային նավատորմին, նրա անձնակազմին, սպասարկմանը և այլն։ Օրինակ՝* նավատորմ, *ռազմածովային նավատորմ, քաղաքացիական նավատորմ, տորպեդային նավատորմ, ռազմական նավատորմ, զրահակիր նավատորմ, ծովամարտ, նավակ, հերթապահ նավակ, դեսանտային նավակ, հրթիռային նավակ, փրկիչ նավակ, պահպանական նավակ, տորպեդային նավակ, նավ, վերջրյա նավ, սուզանավ, հականավակային նավ, հետախուզային նավ, հրթիռային նավ, տանկադեսանտային նավ, դրոշակակիր նավ:*

6. Տանկային զորքերի, սակրավորների, կապի և այլ ծառայությունների վերաբերող տերմինների ենթահամակարգեր: *Որպես ռազմական տերմինների առանձին ենթահամակարգեր կարելի է առանձնացնել տանկային զորքերի, սակրավորների, կապի, քիմիական և այլ ծառայություններին վերաբերող բոլոր պարզ և բաղադրյալ տերմինները. ինչպես՝* սակրավոր, սակրավոր վաշտ, սակրավոր գորախումբ, սակրավոր գորամաս,

սակրավոր գումարտակ, սակրավոր զորքեր, կապի պետ, կապի վաշտ, ֆիմիական ճարձակում, ֆիմիական պաշտպանություն և այլն:

Պատմաավանդական հայերեն ռազմական տերմինաբանության ընդհանուր համակարգի մեջ են մտնում նաև տերմինների այլ ենթահամակարգեր և ռազմական գործում գործածական բառերի շերտեր:

Այստեղ պետք է հատկապես առանձնացնել գիտության տարբեր բնագավառներին վերաբերող այն տերմինները և տերմինների շարքերը, որոնք ռազմական տերմինաբանության բաղկացուցիչ մասն են կազմում: Այդ կարգի տերմինները հիմնականում պատկանում են մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, բժշկության, իրավաբանական, քաղաքական, տնտեսագիտական տերմինաբանական համակարգերին, բայց անհրաժեշտաբար մուտք են գործել նաև ռազմական գործի մեջ:

Օրինակ՝ կանխույր, կանխավճար, կանխադրամ, կանխահաշիվ, առկցում, հաճրահաշվական գումար, կալանք, կալանավոր, կալանավորել, կալանատուն, ամնիստիա:

Պատմաավանդական ռազմական տերմինաբանության համակարգային քննությունը ի հայտ է բերում հետևյալ առանձնահատկությունները:

ա) Պատմաավանդական ռազմական տերմինների կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանց հիմնական դանգվածը արդի փուլում էլ համապատասխանում է ռազմական հասկացությունների բովանդակությանը, չնայած այդ բնագավառում կատարված աշքի ընկնող տեղաշարժերին:

բ) Հիշյալ տերմինաբանությունը որոշ կողմերով հակասում է տերմինի էական հատկանիշներից մեկին՝ հոմանիշների առկայությանը:

Ռազմական տերմինների հոմանիշություն:

ա) Փոխառյալ և ոչխարական տերմիններ. անգար, ծածկ (ангар), ապարատ, գործիք, *անոթ* (аппарат), կորպուս, զորամարմին (корпус), հրետաթումբ, բանկետ (банкет), բարիկադ, անցկալ (баррикада), բերմ, պատոց (берма), բրոկհաուզ, կոնդամուր (брокгауз), *բոննետ, փքին* (боннет).

բ) Ոչխարական տերմիններ. բանակ, զորաբանակ (армия), մարտամթերք, մարտապաշար (боеприпасы), մարտունակություն, ռազմունակություն (боеспособность), ձեռնամարտ, բռնամարտ, բռնամարտություն (рукопашный бой), ռազմիկ, զինվոր (воин), դիտանոց, դիտարան (вышка сторожевая) *և այլն:*

ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գիտության և տեխնիկայի բուռն զարգացման հետ միասին վերջին տասնամյակների ընթացքում բուռն զարգացում են ապրում նաև ռազմական տեխնիկան և ռազմական գործը՝ իրենց հետ բերելով նոր հասկացություններ ու տերմիններ: Մեծ քանակությամբ նոր տերմինների մուտքը լեզվի մեջ պահանջում է ամենօրյա աշխատանք՝ դրանք հայերեն թարգմանելու և հայերեն համազոր տերմիններ ստեղծելու ուղղությամբ: Կարելի է առանց չափազանցության ասել, որ գրեթե չկա օտարաշխի կամ ռուսերեն ռազմական տերմին կամ բառ, որը չունենա հայերենի բառակազմական միջոցներով կազմված համազոր: Այդ նորաստեղծ տերմինների որոշ մասը դուրս է մնում լեզվից, իսկ մյուս մասը հաստատուն կերպով մուտք է գործում ռազմական տերմինաբանության մեջ: Այս տեսակետից ավելորդ չենք համարում մատնել տերմինաբանական «հաստունության» գաղափարը: Յուրաքանչյուր տերմինաբանություն իր մեջ պարունակում է տարբեր աստիճանի «հաստունության» և գիտական տարբեր արժեք ունեցող տերմիններ: Կան կայուն տերմիններ, որոնք արդեն ընդունված են ու կայունացած տվյալ բնագավառի տերմինաբանության զարգացման որոշակի փուլում: Կան նաև պայմանական տերմիններ, որոնք դեռևս գտնվում են զարգացման և ձևավորման պրոցեսում: Դրանք լեզվում հանդես են գալիս որպես տերմին-փոխարինողներ՝ ռազմական հասկացությունների նշանակումներ, որոնք դեռևս չեն ստացել համընդհանուր ճանաչում կամ էլ չունեն բավականաչափ ճշգրտություն: Այսպես օրինակ՝ ինքնաթիռ տերմինը նախապատերազմյան շրջանում ունեցել է մի քանի հոմանիշ՝ **սավառնակ, օդանավ, աերոպլան:** *Մ. Աբեղյանի բառարանում* самолёт[37] *բառը թարգմանված է* **սավառնակ,** *իսկ Ա. Ղարիբյանի բառարանում՝* **ինքնաթիռ:**

Յուրաքանչյուր տերմինաբանական համակարգի զարգացման սկզբնական շրջանին բնորոշ է հոմանիշությունը:

Դարասկզբի ռազմական բառարանները, մամուլը, ամսագրերը լեցուն են հոմանիշներով, որոնք երևան բերելով լեզվի բառակազմական

---

37 *Ի դեպ, ռուսերեն «самолет» բառը նույնպես ունեցել է аэроплан իսկ վերջին շրջանում, կապված տեխնիկայի զարգացման հետ,* лайнер *հոմանիշը: Վերջինս, սակայն, կարող է վերաբերել նաև նավերին: Օրինակ՝* серебристый лайнер ТУ. 154, *воздушный* лайнер *նաև,* океанский лайнер *և այլն:*

հնարավորությունները, հիմք են տալիս հետագա համեմատության, համադրության և ընտրության համար:

Ազգային գրական լեզվի կազմավորման պրոցեսը ուղեկցվում է տերմիններիի ոճաբանական տարբերակումով:

Մեկ հասկացության համար երբեմն հանդիպում են մինչև տասը տարբեր բառեր և բառակապակցություններ, օտարաղբի, ռուսերեն և հայերեն հոմանիշներ, որոնք սկզբնական շրջանում, ինչպես ասացինք, «պայմանական» տերմիններ են: Դրանք դեռևս պահպանում են իրենց բոլոր հոմանիշային կապերը և շատ հեշտությամբ փոխարինվում են մեկը մյուսով: Սակայն աստիճանաբար հաստատվելով տերմինների դերում, կայունանում են, անցնում «կայուն» տերմինների շարքը: Թուլանում և կտրվում են նրանց հոմանիշային կապերը, բառ-տերմինները մեկուսանում են լեզվի այլ բառերից (ոչ տերմիններից), մոտենում իդեալական տերմիններին առաջադրվող պահանջներին, այսինքն՝ դառնում են միանշանակ: Հոմանիշությունը տերմինաբանության տահմաններում նույնպիսի բացասական փաստ է, ինչպես և բազմիմաստությունը: Ժամանակակից տերմինաբանական համակարգի զարգացման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ իր կազմավորման, զարգացման, հղկման, կարգավորման և միօրինակացման ընթացքում նա աստիճանաբար հրաժարվում է հոմանիշությունից, համանունությունից և բազմիմաստությունից:

Ռազմական տերմինների աղբյուրները հայերենում երկուսն են՝ լեզվի սեփական հնարավորությունները և փոխառությունները: Լեզվի սեփական հնարավորություններ ասելով պետք է հասկանալ ընդհանուր գործածական բառերի տերմինացումը և բառակազմական միջոցներով նոր տերմինների ու բառերի կերտումը:

ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

Հայերեն ռազմական տերմիններն ըստ ծագման՝ բաժանվում են բնիկ և փոխառյալ տերմինների:

I. ԲՆԻԿ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Տերմինների այս խմբի մեջ են մտնում բոլոր այն հայերեն ռազմական տերմինները, որոնք պատկանում են հայերենի զարգացման նախորդ փուլերին կամ կազմված են հայերենի բառակազմական օրինաչափություններով: Սրանց թվին են պատկանում.

ա) Համաժողովրդական լեզվի տերմինացման ենթարկված բնիկ բառերը և գրաբարյան շրջանի փոխառությունները։

Օրինակ՝ բանակ, գումարտակ, գունդ, զրոհ, մարտ, մարտիկ, պատերազմ, զենիթ, բշնամի, նամնարզ, կողմնապահ, բեյիֆ, կալանիֆ, այրուձի, հեծյալ, սուրհանդակ *և այլն։*

բ) Հայերենի բառակազմական միջոցներով կազմված տերմիններ և բառեր. ծովակալ, ծովակալություն, նրակնատ, զինանոց, կայազոր, օրապահ, օրապահություն, դասալիք *և այլն։*

Հայերեն ռազմական տերմինաբանության դերակշիռ մասը, հիմնական զանգվածը կազմում են այս կարգի տերմիններն ու բառերը։

II. ՓՈԽԱՌՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Տերմինաբանությունը, որը գտնվում է հիմնական բառակազմից դուրս, էլ ավելի դյուրաթափանց է օտարազգի փոխառությունների համար։ Դա հասկանալի , որոշ իմաստով օրինաչափ երևույթ է, որովհետև ներկայումս լեզուները հարստանում են հիմնականում տերմինաբանական և մասնագիտական բառակազմի հաշվին։ Մյուս կողմից, տերմինաբանական բառապաշարը կազմում է լեզվի ընդհանուր բառապաշարի զգալի մասը և զարգանալով՝ դառնում վերջինիս հետագա հարստացման աղբյուր։ Հաշված է, որ ժամանակակից յուրաքանչյուր գրական լեզվի նոր բառերի 90 տոկոսը կազմում է գիտական և տեխնիկական տերմինաբանությունը։

Քանի որ տերմինաբանության զարգացումը կապված է գիտության զարգացման հետ, իսկ գիտությունը չի կարող զարգանալ առանց միջազգային լայն կապերի, ուստի և այդ պրոցեսը անխուսափելիորեն իր հետ բերում է փոխառություններ։ Առանց շոշափելու օտարազգի տերմինների կարևորության, տարածվածության, գրական կամ բացասական ազդեցության հարցերը, պարզապես վերլուծության կենթարկենք ռազմական տերմինաբանության համակարգում եղած փոխառյալ տերմինները։

Օտարազգի տերմինը և օտարազգի բառը լեզվում համարժեք չեն։ Օտարազգի բառը իր «մեկուսացածության» և այլազգիության լեզվի այլ բառերից ավելի շատ կողային հատկություններ ունի և միշտ գիտակցվում է որպես օտար տարր։

Փոխառյալ տերմինն առանձնապես զորեղ է, եթե այն լեզվի բառային կազմի մեջ զբաղեցնում է այսպես կոչված «դատարկ տեղ», եթե տերմինաբանական համակարգում պահանջվող հասկացության համար

համապատասխան սեփական բառ չկա: Ինչպես հայտնի է, տերմինների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանք հաճախ դուրս են գալիս մեկ լեզվի տերմինաբանական համակարգից: Տերմինների միջազգային բնույթը արտահերվական դրծոն է, որը ազդում է նրանց ձևավորման վրա: Ի տարբերություն բառերի, տերմիններըը կարող են միանական լինել գիտության և տեխնիկայի համապատասխան բնագավառում ոչ միայն մի քանի լեզուների համար, այլև միջազգային մասշտաբով: Համմա., օրինակ, վիտամին, ատոմ, կիբեռնետիկա, էլեկտրոնիկա, ռետենա և այլն:

Հայոց լեզուն, ինչպես յուրաքանչյուր այլ լեզու, ունենալով իր ուրույն պատմությունը, զարգացման իր սեփական ուղիներն ու աղբյուրները, որոշակի առանձնահատկություն է դրսևորում տերմինաբանության բնագավառում: Օտարաբանությունների[38] դեմ մղվող հետևողական պայքարը չի կարող չազդել տերմինաբանության զարգացման ընթացքի վրա: Այսպես, օրինակ, այս աշխատության մեջ քննարկվող ռազմական տերմինաբանության պատմությունը ցույց է տալիս, որ այստեղ գրեթե չկան այնպիսի օտարազգի տերմիններ, որոնց համար ժամանակին ստեղծված չլինեն համապատասխան հայերեն ձևեր (համանշանակներ), եթե նույնիսկ կատարվել է փոխառության փաստ, ապա այն հաճախ ուղեկցվել է դուրգահեռ ձևերի ստեղծումով:

Արդարացի լինելու համար պետք է նշել, որ մասնագիտական հասկացությունների և դաղափարների հայերեն բառային արտահայտությունները որպես կանոն չեն դիջում իրենց օտարալեզու համարժեքներին: Օտարազգի տերմինների հայերեն համարժեքները, ըստ իրենց առանձնահատկությունների, ժամանակի ընթացքում կամ դուրս են մղում օտար տերմիններըը, կամ իրենք են դուրս գալիս տվյալ տերմինաբանության համակարգից: Որոշ դեպքերում էլ տեղի է ունենում օտար և սեփական տերմինների օգտագործման ոլորտների բաժանում:

Օտարազգի տերմինի օգտին է խոսում նրա միջազգային բնույթը: Այդ տեսակետից ոչ պակաս կարևոր փաստարկ է նաև այն հանդամանքը, որ չնայած իր մեկուսացածությանը տվյալ լեզվի համակարգում, երբեմն էլ բառակազմական ոչ բարձր ունակություններին, այն արդեն հանդես է գալիս որպես պատրաստի տերմին, մինչդեռ լեզվի սեփական բառը դեռևս պետք է դառնա տերմին, այսինքն՝ ենթարկվի տերմինացման

38 Պետք է, սակայն, նշել, որ մաքրամոլական միտումները գիտական լեզվի ոլորտում ավելի քիչ են խրախուսելի, քան ընդհանուր լեզվի ոլորտում:

Այս տեսակետից լեզվի բառապաշարի համակարգային կազմակերպության մեջ մեծ դեր են խաղում բառակազմական կապերը, բառակազմության համակարգայնությունը։ Օրինակ, մի կողմից՝ ավիաբեռնիչ և ավիահանձակ, մյուս կողմից՝ ինֆնաթիռ, սավառնուրդ, օդաչու, այս օրինակներում որոշ չափով խախտված է բառակազմական միասնությունը, բայց դա արդեն հետագա կարգավորման հարց է։

Փոխառյալ տերմինները բաժանվում են բուն փոխառությունների և իմաստային պատճենումների։

1. ԲՈՒՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերեն ռազմական փոխառյալ տերմինների աղբյուրը ռուսերենն է։ Այդ կարգի տերմինների փոխառությունը կատարվում է բացառապես ռուսերենից և ռուսերենի միջոցով, թեև դրանց զգալի մասը իրենց ծագումով ռուսերեն չեն։

Հատկանշականն այն է, որ հայերենը այդ տերմինները ռուսերենից փոխ է առնում ռուսերենում ընդունված իմաստով և հիմնականում ռուսերենին հատուկ հնչյունական կազմով։ Սակավ դեպքերում միայն ռուսերենից փոխառյալ տերմինի հնչյունական ձևը մասնակի փոփոխման է ենթարկվում՝ համակերպվելով ժամանակակից հայերենի ուղղագրության և տառադարձության օրինաչափություններին[39]։

Այդ առումով փոխառությունները կարելի է բաժանել հայերենում հնչյունական փոփոխման չենթարկված և հնչյունական մասնակի փոփոխման ենթարկված տերմինների։

ա) Հնչյունական փոփոխության չենթարկված ռազմական տերմիններ. *ավիացիա*—авиация, *ավտոմատ*—автомат, *լազեր*—лазер, *տանկ*—танк, *մեխանիկ*—механик, *մեգատոննա*—мегатонна, *պելենգ*—пеленг, *պելենգատոր*—пеленгатор, *ռադիո*—радио, *ռենտգեն*—рентген, *սկաֆանդր*—скафандр, *կապիտան*—капитан, *գեներալ*—генерал, *մարշալ*—маршал, *մայոր*—майор.

բ) Հնչյունական մասնակի փոփոխության ենթարկված ռազմական տերմիններ. *բարիկադ*—баррикада, *բլինդ*—блинда, *բրիգադ*—бригада, *հիգիենա*—гигиена։

---

39 Ավելի մանրամասն տե՛ս Ս. Ա. Ասլանյան, Փոխառյալ տերմինների յուրացումը լեզվում, Բանբեր Երևանի համալսարանի, 1972, № 3, էջ 233։

Տերմին-պատճենումը օտար բառի իրային-առարկայական նշանակության վերարտադրումն է սեփական լեզվական նյութի միջոցով: Համմտ. հակագազ (противогаз), ծխածածկույր (завеса дымовая), հրածածկույր (завеса огневая), *լուսածածկույթ* (завеса световая) *և այլն:*

Հայոց լեզուն դարեր ի վեր դիմել է բառապատճենման: Հունաբան դպրոցի ժամանակաշրջանից սկսած այն ծառայում է իբրև լեզվի բառային կազմի զարգացման և համալրման մշտական աղբյուր:

Ռազմական տերմինաբանության մեջ բառապատճենման եղանակով ստեղծված տերմինները մեծ թիվ են կազմում: Դրանք կարելի է բաժանել երկու ենթախմբի՝ իմաստային պատճենումներ և իմաստա-կառուցվածքային պատճենումներ:

Իմաստային պատճենումներ: *Այս կարգի պատճենումների դեպքում փոխառության է ենթարկվում ոչ թե օտար բառը, այլ նրա իմաստը՝ հասկացությունը, գաղափարը, ընդ որում, բառը կերտվում է բացառապես հայերենի բառակազմական օրենքներով ու կանոններով: Նորաստեղծ տերմինը, փաստորեն, օտար բառի հայերեն թարգմանություն է:* гауптвахта — *կալանատուն,* двухпроводная телефонная линия — *երկլարանի հեռախոսագիծ,* балансировать — *հավասարակշռել,* интернировать — *ներկալել,* капитуляция — *անձնատրություն,* дезертир — *դասալիք,* дистанция — *հեռավորություն,* изоляция — *զատում, մեկուսացում,* блокада — *պաշարում,* ампутация — *անդամահատություն,* арсенал — *զինանոց, զինապահեստ,* амуниция, *ռազմական պիտույք, ձիասարք,* баллистика — *ձգաբանություն,* бруствер — *պատվար, խրամատի հողաթումբ,* дистанционная трубка — *հեռակայական փողակ,* демаркационная линия — *սահմանագիծ:*

Իմաստակառուցվածքային պատճենումներ: *Այս կարգի պատճենումների դեպքում, ի տարբերություն իմաստային պատճենումների, փոխ է առնվում ոչ միայն օտար բառի իմաստը (նրա հիմքում ընկած հասկացությունը), այլև բառակազմական կաղապարը. հայերենի լեզվական հիմքի վրա, օտարազգի տերմինի բառակազմական կառուցվածքի նմանությամբ, կազմվում է տերմինի հայերեն համազորը:*

Այս դեպքում արդեն հաշվի է առնվում ռուսերենի բառակազմական-կառուցվածքային կաղապարը, և բաղադրությունը թարգմանվում է հայերեն՝ ըստ այդ կառուցվածքի: Ինչպես՝ гранатомет — *նռնանետ,* допризывник — *նախակոչիկ,* подразделение — *ստորաբաժանում,* проти-

водолочная мина—*հականավակալին ական*, антиракета—*հակահրթիռ*, противоракетный—*հակահրթիռային*, ватерлиния—*ջրագիծ*, термоядерная бомба, оружие—*ջերմամիջուկային ռումբ, զենք*. антиобледенитель—*հակասառցակալիչ*, водородная бомба—*ջրածնային ռումբ*, бронебойная бомба—*զրահահար ռումբ*, глубинная бомба—*խորքային ռումբ*, светящаяся бомба, *լուսավորող ռումբ*, ядерная бомба—*միջուկային ռումբ*, бронепроницаемость—*զրահաթափանցելիություն*, вертолет—*ուղղաթիռ*, самолет—*ինքնաթիռ*, газопроницаемый—*գազաթափանց*, сверхзвуковой—*գերձայնային*, дозвуковой—*մինչձայնային*, доразведка—*նախահետախուզություն*, межконтинентный—*միջմայրցամաքային*. мина-ловушка—*ական-թակարդ*, пулемет—*գնդացիր*, самолет-мишень—*ինքնաթիռ-թիրախ*, самолет-снаряд—*ինքնաթիռ-արկ*, самолет-цель—*ինքնաթիռ-նպատակ և այլն:*

Ուշադրություն: *Կիսապատճենումը պատճենման այն տեսակն է, որ կազմվում է փոխադրյալ և սեփական բաղադրիչներով: Օրինակ՝* автопогрузчик—*ավտոբեռնիչ*, альфа-лучи—*ալֆաճառագայթներ*, бета-лучи—*բետա ճառագայթներ*, барокамера—*բարոխցիկ*, воздушно-десантный—*օդադեսանտային*, гидролокатор—*ջրալոկատոր*, десантоопасный—*դեսանտավտանգավոր*, мотострелковый—*մոտոհրաձգային*, дозиметр—*դոզաչափ*, нитропорох—*նիտրովառոդ*, автомобильный двигатель—*ավտոմոբիլային շարժիչ*, броненосный автомобиль—*զրահապատ ավտոմոբիլ*, бетонобойный снаряд—*բետոնահար արկ*, картечная граната—*կարտեչավոր նռնակ*, авиадесантные войсковые части—*ավիադեսանտային զորամասեր*, авиазенитные средства—*ավիազենիթային միջոցներ*, авиаремонтный завод—*ավիանորոգման գործարան*, двухмоторный бомбардировщик—*երկմոտոր ռմբակոծիչ*, гидросамолет—*հիդրոինքնաթիռ:*

Վերջին 20 տարիների ընթացքում նկատվում է օտար տերմինները հայերեն համարժեքներով արտահայտելու միտում ոչ միայն ռազմական տերմինաբանության մեջ, այլև տերմինաբանության այլ բնագավառներում: Այդ պրոցեսը բացատրվում է, նախ՝ նրանով, որ տերմինաբանությունը ավելի ու ավելի է դառնում մասսաների սեփականությունը և հայ ընթերցողի համար ավելի հասկանալի ու հարազատ է, ասենք, ծանրաշափր քան բարոմետրը, և երկրորդ, այն հսկայական աշխատանքով, որ վերջին տարիների ընթացքում արվում է տերմինաբանության կարգավորման համար:

ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրենց կառուցվածքով տերմինները որևէ էական տարբերություն չեն դրսևորում լեզվի սովորական, ընդհանուր գործածական բառերից։ Հետևաբար տերմինների կառուցվածքային քննությունը այդ տեսակետից նույնանում է սովորական բառերի նմանատիպ քննության հետ։ Տերմինների կամ բառերի կառուցվածքային քննությունը սովորաբար հանգում է նրանց ձևաբանական կազմատարրերի բացահայտմանը։ Ձևաբանական կազմատարրերը ընդհանուր են թե լեզվի ընդհանուր գործածական, սովորական բառերին և թե այս կամ այն բնագավառի տերմիններին։ Այս միավորների տերմինների և բառերի միջև եղած կազմատարային տարբերությունները մասնավոր բնույթ ունեն և վերաբերում են ոչ թե բովանդակությանը, այլ դրսևորման քանակական-վիճակագրական կողմին։

Վերջին ժամանակներս մասնագետների կողմից ավելի մեծ ուշադրություն է դարձվում տերմինի՝ որպես լեզվի իմաստային միավորի այն առանձնահատկություններին, որոնցով նա տարբերվում է լեզվի սովորական բառերից[40]։

ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶԱՊԱՐՆԵՐԸ

Ըստ կառուցվածքային-իմաստաբանական հատկանիշների, հայերեն ռազմական տերմինները ստորաբաժանվում են՝ միաբառ *կամ* պարզ, բարդ *և* բառակապակցական *տեսակների։*

1. ՄԻԱԲԱՌ ԿԱՄ ՊԱՐԶ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Միաբառ տերմինների մեջ մտնում են արմատական տերմինները կամ պարզ հիմքերը։

ա) Արմատական տերմիններ

Ինչպես տերմինաբանական մյուս բնագավառներում, այնպես էլ հայերեն ռազմական տերմինաբանության մեջ վերոհիշյալ կարգի տերմինների քանակը մեծ չէ։ Իմաստային-գործառական տեսակետից արմատական տերմինների առավելությունը մյուս կարգի տերմիններից այն

---

40 Ղազանչյան Լ., *նշված աշխատությունը։*

է, որ դրանք համեմատաբար ավելի կարճ են, ընդգրկում են հասկացության բովանդակությունը, և «շինանյութ» են ծառայում կազմությամբ ավելի բարդ տերմիններին համար։ Արմատական տերմինների հիմնական զանգվածը կազմում են հայերեն պարզ (արմատական) բառերը։ Այդ կարգի տերմինների շարքին են դասվում նաև նորագույն այն բոլոր փոխառությունները, որոնք անկախ փոխառու լեզվում այդ բառերի կառուցվածքից, ժամանակակից հայերենում դիտակցվում են իբրև պարզ բառեր (հիմքեր)։ Ի դեպ, հայերեն արմատական տերմինների մի մասը նույնպես պատմականորեն և ծագումով կարող է ամենևին էլ պարզ չինել։ Այս հարցում որոշիչը ժամանակակից հայերենի լեզվագիտակցությունն է։ Այդ կարգի բառերը արդի հայերենի լեզվական ըմբռնողությամբ դիտակցվում են իբրև պարզ (արմատական) կառուցվածք ունեցող բառեր։

Բուն հայերեն ռազմական արմատական տերմիններ. *Այս խմբի մեջ մտնում են բնիկ հայերեն, ինչպես նաև հայերենի հին (նախաաշխարհաբարյան) փոխառությունները, օրինակ՝* ական, ամրոց, աշտարակ, ասպանդակ, ասպատակ, ատրճանակ, արկ, արշավ, բանակ, բեկոր, բերդ, գերի, գրոհ, գրոհել, դումարտակ, դունդ, դավաճան, դետք, դիրք, դրոշ, զենք, զրահ, զորք, լիցք, թիրախ, թմբուկ, թշնամի, թուր, խրամատ, խուճապ, խուփ, կրակ, կրակել, համհարզ, հրահանգ, հրաման, ճամբար, մարտ, նահանջ, նահանջել, նավ, պահակ, պատերազմ, պարկուճ, պատիճ, պաշտպան, պատյան, պատգարակ, պարեկ, պարետ, պետ, պատանդ, ջոկ, ջոկատ, ռումբ, սաղավարտ, սահման, սկավառակ, սվին, սուր, սուսեր, վաշտ, վառոդ, տեգ, տագնապ, տույժ, փամփուշտ, փոկ, փող և այլն։

Նորագույն փոխառյալ արմատական տերմիններ.—*Սրանք ժամանակակից հայերենում գիտակցվում են իբրև պարզ (արմատական) կազմությամբ բառեր։*

Ադեներա, ադյարատ, ավիացիա, ավտոմատ, ատոմ, բազա, բազիս, բենզին, գազ, գեներալ, գեներալիտետ, գեներալիսիմուս, դեսանտ, դիվերսիա, դիվիզիա, դիվիզիոն, դոզա, էսկորտ, էսկադրիլյա, ինդիկատոր, ինդիկացիա, ինդուկցիա, լազեր, լեյտենանտ, լոկատոր, կամպանիա, կապիտան, կատեր, կարաբին, կարտեչ, կոմիսար, կոնտինգենտ, կոնֆլիկտ, կոորդինատ, կորպուս, մասշտաբ, մարշալ, նապալմ, շտաբ, պարաշյուտ, պարտիզան, պելենգ, պիստոլետ, պլացդարմ, պոստ, ռադիո, ռեակցիա, սերժանտ, սկաֆանդր, ստրատեգ, ստրատեգիա, վե-

տերան, տակտիկա, տանկ, տեխնիկ, տորպեդա, օբյեկտ, օկուպանտ, ֆուգաս և այլն:

Արմատական համարվող հին տերմինների զգալի մասը հին հայերենում հունական, պարսկական, արաբական փոխառություններ են. ինչպես՝ ասպանդակ, ասպատակ, ատրճանակ, արշավ, բժիշկ, գունդ, գումարտակ, դրոշ, զեն(ք), զրահ, զոր(ք), թմբուկ, թիրախ, թշնամի, պատերազմ և այլն:

Հայերեն արմատական հին տերմինների գերակշիռ մասը ժամանակակից հայերեն ռազմական տերմինաբանության համակարգն է մուտք գործել հին տերմինների հասկացության բովանդակության փոփոխման հետևանքով, որի շնորհիվ փոփոխվել են նաև դրանց բառային իմաստները: Այդ կարգի բառերի մի չնչին մասն է, որ իր բառային իմաստով տերմինացել, վեր է ածվել ժամանակակից տերմինի: Այդ տեսակետից փոխառյալ արմատական նորագույն տերմինների առանձնահատկությունն այն է, որ դրանք ժամանակակից հայերենը ռուսերենի միջոցով ընդունել է որպես պատրաստի ռազմական տերմիններ՝ ռուսերենում ընդունված իմաստներով:

Իմաստների պատճառաբանվածության տեսակետից այս երկու կարգի՝ հին և նորագույն փոխառյալ տերմինները պատճառաբանված չեն: Հին տերմինների որոշ առավելությունն այն է, որ դրանք համեմատաբար ավելի հասկանալի են (իրենց նախնական ընդհանուր իմաստի պատճառով): Նորագույն փոխառյալ տերմինների իմաստները լեզվում ննթակա են յուրացման: Այս վերջին հանգամանքն, անշուշտ, ունի նաև իր առավելությունը: Այդ կարգի տերմինների իմաստները յուրացումից հետո այլևս կիրառական որևէ շփոթություն չեն կարող առաջ բերել: Մինչդեռ նախորդ տերմինները կարող են այդպիսի շփոթության տեղիք տալ ոչ տերմինային իմաստների առկայության պատճառով:

Իրենց կապակցական ունակությունների, բարդ և բառակապակցական համապատասխան տերմինի կազմության մեջ ցուցաբերած մասնակցության տեսակետից որոշ առավելություն պետք է տալ հայերեն արմատական հին տերմիններին: Այդ բնագավառում վերջիններիս ակտիվությունը ակնհայտ է, որը անշուշտ լեզվական համակարգերի, բառադրության, բառակապակցության ընդհանուր միտումների արդյունք է:

Մյուս կողմից, փոխառյալ արմատական նորագույն տերմինները ժամանակի ընթացքում աստիճանաբար ձեռք են բերում այն հատկանիշները, որոնք հատուկ են հայերեն արմատական հին տերմիններին: Նո-

բառույն փոխառյալ այն տերմինները, որոնք, իրենց հայերեն համազորներից (նույնանիշներից) ավելի հարմար և դիպուկ լինելով, վերջնականապես ամրանում են լեզվում, ձեռք են բերում բառակազմական, բառագործածական, բառակազմական այն բոլոր հատկանիշները, որոնցով օժտված են հայերեն արմատական հին տերմինները:

բ) Ածանցավոր տերմիններ

Հայերեն ռազմական տերմինաբանության համակարգում լայնորեն օգտագործվում են և՛ նախածանցները, և՛ վերջածանցները: Բնորոշ է, որ տերմինաստեղծման համար օգտագործվում են լեզվում եղած ածանցները և ոչ թե ստեղծվում նորերը: Հաճախ օգտագործվում են հնացած և ոչ կենսունակ ածանցներ: Տվյալ դեպքում ընտրվում են այն ածանցները, որոնք այս կամ այն պատճառով հարմար են տերմին կերտելու համար:

Ի տարբերություն տերմինաբանության մի շարք այլ բնագավառների՝ ռազմական տերմինաբանության համակարգում ածանցների իմաստների որոշակի մասնագիտացում չի կատարվում[41]: Այստեղ ածանցներն ունեն ավելի լայն նշանակություն, որը ցույց է տալիս միայն տերմինի պատկանելությունը այս կամ այն կարգին: Որոշ տարբերակում նկատվում է ածանցների օգտագործման մեջ: Այսպես՝ մարդ, մասնագետ ցույց տալու համար օգտագործվում է մի տեսակի վերջածանց, մեքենաներ, մեխանիզմներ ցույց տալու համար՝ մի այլ տիպի ածանց: Կոնկրետ նշանակություն ունեցող գոյականներն ունեն իրենց բնորոշ ածանցները, վերացականները՝ իրենցը: Այսպիսով, ածանցումը լայն հնարավորություն է տալիս տերմինաբանությանը: Ածանցման միջոցով ստեղծված հայերեն տերմինների տարբերությունը լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի սովորական բառերից հիմնականում կոնկրետ ածանցների օգտագործման մեջ է: Այս տիպի տերմինների համակարգայնությունը պայմանավորված է մի կողմից՝ ռազմական համապատասխան հասկացությունների համար արմատական ձևույթների ճիշտ ընտրությամբ և, մյուս կողմից, նույն կարգի հասկացությունների համար միև-

41 Որոշ բնագավառների տերմինաբանական համակարգերի համար բնորոշ է այս կամ այն վերջածանցին որոշակի տերմինաբանական նշանակություն տալը: Դա առավել ևս բնորոշ է քիմիական (օր. -ում, -ին salicin, calium) երկրաբանության, բժշկության, կենսաբանության տերմիններին, որոնք կազմվում են հիմնականում լատինական և հունական արմատներից:

նույն կամ հոմանիշ ածանցների օգտագործման հնարավորությամբ։ Այսպիսով, տերմինաբանության համակարգայնությունն ապահովելու համար նպատակահարմար է, որպեսզի ածանցյալ բառերը հնարավորության սահմաններում հանդես գան նույնածանց կազմությամբ։

Նախածանցավոր տերմիններ։ Ինչպես հայտնի է, հայերենը համեմատաբար այնքան էլ հարուստ չէ նախածանցներով։ Նախածանցմամբ կերտվող հայերեն ռազմական տերմինների համար հիմնական աղբյուրը հունաբան դպրոցի ներկայացուցիչների ստեղծած նախածանցներն են, ինչպես նաև դրաբարյան առ, ըստ, ընդ, ի, ց նախդիրները։ Կան նաև ամբ ժխտական ածանցով կազմված տերմիններ։ Նախածանցներով կազմվող տերմինների քանակը մեծ չէ։ Այդ տիպի տերմինների առկայությունը, ըստ երևույթին, պայմանավորված է ոչ միայն տերմինաբանության ավյալ բնագավառի, այդ թվում նաև ռազմական տերմինաբանության առանձնահատկություններով, այլև այդ բնագավառի հայերեն տերմինները լատիներենից, հունարենից և հատկապես ռուսերենից պատճենելու հանգամանքով։

Բերենք նախածանցներով կազմված հայերեն ռազմական տերմինների մի շարք։

Ամ ժխտական նախածանցով կազմված. անզեն, անմատչելի բարձունք, անպաշտպան տեղամաս, անփոփոխ կանոն, անվտանգ, անկատարելի, անապատելի գրոհ, անապատելի հարձակում, անորոշ ժամկետ, անդուլ հսկողություն, անդուլ դիտողություն, անհաղթ, անհնազանդություն, անշարժ կրակ, անշարժ թև, անշարժ նպատակ և այլն։

Դրաբարյան նախդիրներով կազմված տերմիններ.—առ, ընդ, ըստ առկա, առ ի կող[42], զառ ի կող ափ, ընդհատել, ընդմիջել։

Հունաբան դպրոցի ստեղծած նախածանցներով կազմված տերմիններ.—Ապատուիճանավորել, ապատազմել, ապակենտրոնացնել, տպաշար, դերագույն, արտելք, արտաթռիչք, ենթաբաժին, ենթատպա, համադգեստ, համալրել, պարագծել, տրամաչափ, տրամագիծ և այլն։

Որոշ նախածանցներ ավելի կենսունակ են, երբ հանդես են գալիս վերջածանցների հետ միաժամանակ և՛ նախածանցներով, և՛ վերջածանցներով կազմվող տերմինների դեպքում։

Վերջածանցավոր տերմիններ. Վերջածանցման համար բնորոշ է այն, որ վերջածանցով կազմված ածանցյալ բառը կամ տերմինը կարող

---

42 Առիկող և զառիկող բառերը կազմված են համապատասխանաբար երկու և երեք նախածանցներով։

է փոխել իր խոսքիմասային պատկանելությունը: Վերջածանցները միշտ կապված են որոշակի խոսքի մասի հետ և կարող են բառ կազմել այլ խոսքի մասերից: Վերջածանցի իմաստը հիմնաբառի նշանակության հետ իմաստաբանական սերտ միություն է կազմում: Որոշ դեպքերում էլ վերջածանցները խաղում են բառիմաստը ճշգրտողների դեր: Օրինակ, փոքրացուցիչ-նվազական ածանցները՝ -իկ-ակ, ուկ և այլն: Վերջածանցները տարբերվում են նախածանցներից նաև նրանով, որ առաջինները անմիջականորեն կապված են բառի հարացուցային ձևավորման հետ, մինչդեռ նախածանցները այս տեսակետից շատ դեպքերում բոլորովին չեզոք են:

Քանի որ վերջածանցների մեծամասնությունը կազմում է իմաստով միաձույլ բառեր, տերմինաբանության մեջ վերջածանցային կազմությունները դժալի տեղ են գրավում:

Հատկանշական է, նաև այն, որ վերջածանցման միջոցով տերմիններ ստեղծելու դեպքում նկատվում է գրաբարյան կամ բարբառային ծագում ունեցող վերջածանցների լայն կիրառություն, մինչդեռ այդ վերջածանցները լեզվի սովորական բառեր կերտելիս, քիչ են հանդես գալիս: Ստորև բերում ենք վերջածանցներով կազմված մի շարք տերմիններ: Այս վերջածանցով կազմվում են գոյականներ՝ վերացական և հավաքական ընդհանուր նշանակությամբ. -ություն աստղություն, զորություն, դավաճանություն, պաշտպանություն, բարձրություն, տոկունություն, տեսողություն, գործողություն, հերոսություն, հեռավորություն, դաժանություն, հավատարմություն, իշխանություն, վարչություն, պարեռություն, ամրություն, քաղաքացիություն, հավանականություն, հանկարծակիություն, տեսականություն, հասանելիություն, պատժելիություն, թափանցելիություն, խոցելիություն, շարժականություն, սահունություն և այլն:

Նկատելի է -ություն վերջածանցով կազմվող ռազմական տերմինների և բառերի մի կարևոր առանձնահատկություն: -ություն վերջածանցը շատ դեպքերում հանդես է գալիս նախորդող մեկ այլ վերջածանցից հետո՝ կազմելով կրկնակի վերջածանցներով բազադրություններ: Ինչպես, օրինակ՝

բազաբ-ացի-ություն, հավան-ական-ություն, հանկարծ-ակի-ություն, հասկան-ալի-ություն, պատժ-ելի-ություն, շարժ-ուն-ություն, սահ-ուն-ություն և այլն:

Ջինվորականություն տերմինը կազմված է նույնիսկ երեք ածանցից դին-վոր-ական-ություն:

–ում վերջածանցով կազմվում են բայանվանական գոյականներ.

փակում, հավասարում, հավասարեցում, շտկում, գինում, առում, *գրավում, վարում, վարակում, խեղում, ոչնչացում, մթնեցում, բաժանում, ճնշում, շարժում, զատում, մեկուսացում, պաշարում, շրջափակում, փոխանակում, հատում, բռնկում, փրկում, ազատում, իջեցում, վարժնցում, մարզում, պարենավորում, կանոնավորում և այլն:*

–իչ վերջածանցով կազմվում են հիմնականում գոյականներ (մասամբ նաև ածականներ) և ցույց են տալիս գործիք, գործող անձ, գործողության հետ կապված որևէ նյութ: Օրինակ՝

զատիչ, ճայթիչ, թորիչ, կործանիչ, կազմակերպիչ, պայթուցիչ, բոցավառիչ, մատնիչ, շարժիչ, ցուցիչ, ուղղիչ, փակիչ, մաքրիչ (հրանոթի մաքրիչ խոզանակ) և այլն:

–ուրդ վերջածանցով տարբեր խոսքի մասերից կազմվում են տերմիններ, որոնք ցույց են տալիս ղբաղմունք, պարապմունք, գործող, մասնագիտություն, մասնագիտացում, մասնակցություն և այլն: Այդ նշանակություններով ուրդ-ը մրցում է ող վերջածանցով կազմված տերմինների հետ և շատ դեպքերում աստիճանաբար փոխարինում դրանց: Օրինակ՝ սավառնուրդ, կցորդ, առաջնորդ, պահնորդ, դիտորդ, ճշտորդ, գնդացրորդ, վարորդ և այլն:

–ակ, –յակ –ական վերջածանցներով գոյականներից և ածականներից կազմվում են տարբեր նշանակությամբ գոյականներ, բայարմատներից՝ գործող անձերի գործիքների, զենքերի անուններ և այլն. բացակ, լծանակ, դիտակ, գնդակ, գլանակ, անվակ, թիակ, պտուտակ, պահպանակ, նռնակ, քարշակ, փորակ, սյունակ, շրջանակ, հարթակ, բաժնյակ, հեծելակ, հեռուկակ, օղակ և այլն:

ֆ-ն գրաբարի հոգնակերտն է, որը ժամանակակից հայերենում գիտակցվում է իբրև վերջածանց: Ավելանալով գոյականների վրա, ֆ-ն փոխում է նրանց իմաստը, իսկ բայահիմքերից և ածականներից կազմում է գոյական. քելֆ, տեսֆ, ելֆ, վազֆ, դորֆ, լիցֆ և այլն:

–ող-ը ենթակայական դերբայի ածանցն է, միաժամանակ որպես վերջածանց՝ կազմում է տերմիններ, որոնք ցույց են տալիս գործողի անուն, ղբաղմունք, մասնագիտություն. հոմանիշ է –ուրդ վերջածանցին, և որպես այդպիսին ավելի քիչ է գործածվում: Նվաճող, ծառայող, զեկուցող և այլն:

իկ–ը *կազմում է գոյական տերմիններ՝ նվազագույն, փոքրացուցիչ նշանակությամբ: Կաթսայիկ, քաշիկ, ձողիկ և այլն:*

Սրանից պետք է տարբերել այն -իկ ածանցը, որ կազմում է ածականներ՝ պայթուցիկ, ուռուցիկ, շրջիկ, ագուցիկ և այլն:

-վոր-ավոր վերջածանցով կազմվում են ինչպես գոյականներ, այնպես էլ ածականներ, որոնք ցույց են տալիս՝ մի բան ունեցող, վրան կրող, գործող, մի բան անող մի բանով զբաղվող, մի բանի մասնագետ և այլն:

Գոյականներ՝ ձիավոր, հեծելավոր, կամավոր, հրետանավոր, զենիթավոր, զինվոր, սակրավոր, կալանավոր, նռնակավոր և այլն:

Ածականներ՝ գնդակավոր, կարտեչավոր, զրահավոր, թրթուռավոր, ատամնավոր, վտանգավոր, ակոսավոր, նշանոցավոր, գլխավոր, ժամանակավոր, փականավոր և այլն:

-ենց, -անց, -ոց վերջածանցով գոյականներից կազմվում են գոյական տերմիններ[43], որոնք ցույց են տալիս (որևէ տեղ, շենք, շինություն, կառույց), երբեմն էլ գործիք, անոթ, զանազան պիտույք, օրինակ՝ ծածկոց, թևնոց, ձեռնոց, թիկնոց, ղորանոց, փամփշտանոց, դիտանոց, պահականոց, վառոդանոց, պատոց, փակոց, ականոց, թաքստոց և այլն:

-ական (-կան) վերջածանցով կազմվում են ածականներ, և երկրորդաբար գոյականներ, որոնք ցույց են տալիս որևէ զբաղմունք, մասնագիտություն, ուսմունքի հետևորդ: Որպես ածականակերտ ածանց, ժամանակակից, հայերենի կենսունակ վերջածանցներից է.

-ական վերջածանցով կազմված բառերը ռազմական տերմինաբանության մեջ հանդես են գալիս իբրև բառակապակցությունների բաղադրիչներ:

Ածականներ՝ անվանական, զինվորական, հեծելական, պաշտպանողական, մարտական, ռազմական, հարձակողական, պաշտոնական, իմպերիալիստական, քաղաքացիական և այլն:

Գոյականներ՝ զինվորական, զորական, փախստական:

-ային-ը կենսունակ ածականակերտ վերջածանց է՝ հոմանիշ նախորդ -ական ածանցին (հաճախ գրավում է նրա տեղը, որոշ դեպքերում միայն տարբերվելով նրանից): Այս վերջածանցով կազմված ռազմական գոյական տերմինների քանակը մեծ չէ: Ավելի հաճախ կազմում են ռազմական բառակապակցական տերմինների ածական բաղադրիչները: Ինչպես, օրինակ, շարֆային, միջուկային, բանակային, հրետանային, ծովային, օդային, կադրային, սահմանային, շտաբային, հրաձգային, օկրուգային, գնդային, գազային, զենիթային, ինդանոթային, դասակային,

---

43 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 263—264:

վաշտային, գումարտակային, տանկային, հրթիռային, ճամաշխարհային, տեղային, նպատակային, ատոմային, կրակային, կայծակային, ֆուգասային, ականային, դեսանտային և այլն։

Այստեղ բանակային և շարքային *ածականները ունեն գոյական կիրառություններ. օրինակ՝*

Բանակայինը *դուրս եկավ։*

Շարքային *Աբրահամյանը։*

–անք-ը տարբեր խոսքի մասերից կազմում է ռազմական տերմիններ, որոնք ցույց են տալիս գործողություն, գործիք, տեղի ընդհանուր գաղափար և այլն։ Օրինակ՝

արշավանք, տեղանք, կցվանք կալանք, փականք, մարդանք, հանդերձանք և այլն։

–ան-ը բայական հիմքերից հիմնականում կազմում է գործիքների, նրանց զանազան մասերի անուններ, ինչպես նաև ընդհանուր հավաքական իմաստ ունեցող տերմիններ։ Օրինակ՝

շարան, տողան, խթան, խցան։

–ուրդ-ը կազմում է հիմնականում հավաքական իմաստ ունեցող սակավաթիվ գոյականներ. օր.՝ խառնուրդ։

–յուն-ը գերազանցապես բնաձայնական բնույթի բառերից կազմում է գոյականներ, որոնք արտահայտում են գործողության ընդհանուր գաղափար։ Ոչ կենսունակ վերջածանց է ռազմական տերմինաբանության մեջ՝ ընդոստյուն, բախյուն, պայթյուն, ճայթյուն և այլն։

–ույթ-ը բայերից կազմում է սակավաթիվ գոյականներ՝ թանձրացական, կոնկրետ իմաստով։ Օր.՝ ծածկույթ, ծխածածկույթ, հրածածկույթ։

–ուխ, –ուճ, մուճ–ածխ, ուխ, վերջածանցները կազմում են գոյականներ, որոնք հավաքական իմաստ ունեն, ինչպես նաև ցույց են տալիս գործողության արդյունք։ Ռազմական տերմինաբանության մեջ կենսունակ չեն։ Օրինակ՝

ցուցմունք, փլվածք, բացվածք, ճեղքվածք։

–ատ-ը կազմում է սակավաթիվ գոյականներ, որոնք ցույց են տալիս գործողության հետևանք։ Օր.՝

խրամատ, փորատ, ականատ։

–ոն-ը կազմում է գոյականներ՝ զանազան իմաստներով։ Ռազմական տերմինաբանության մեջ կենսունակ վերջածանց չէ։ Բերվող բառերի օրինակները չեն մտնում ռազմական ակտիվ տերմինաբանության մեջ։ Զյուրոն, ծեփոն, գործոն, կարոն և այլն։

–ուսա, –եսա վերջածանցները կազմում են վերացական և թանձրացական, կոնկրետ իմաստ ունեցող սակավաթիվ գոյականներ: Օր.՝ Փախուսա, ագուսա, ելուսա, կորուսա, պահեսա և այլն:

–յալ-ը կազմում է մի քանի ռազմական տերմիններ՝ հեծյալ:

–ուն-ը կազմում է գործողի անվան հետ կապված մի քանի բառեր, որոնք ռազմական ակտիվ տերմինաբանության մեջ չեն մտնում՝ ցայտուն, շարժուն:

Նախածանցով և վերջածանցով կազմվող տերմիններ. Ռազմական տերմինաբանության մեջ սովորական են նաև միաժամանակ նախածանցով և վերջածանցով կազմվող տերմինները. դրանք հիմնականում պարունակում են ընդհանուր, վերացական իմաստներ:

ան–ություն.

անհնազանդություն:

ան–ելի.

անխոցելի, անտեսանելի.

ան–ելի–ություն.

անխոցելիություն, անտեսանելիություն.

տար(ա)–ում.

տարհետում.

տար–ություն

տարապիտություն.

գեր–ություն

գերակշռություն.

ապա(ա)–ություն—

ապօրինություն, ապատարբություն.

ապ–ում

ապատազմում, ապատազգայնացում, ապահենտրոնացում.

վեր–ող. վերծանող.

առա–ություն. առաերկրություն.

առա(ա)—ք. առաաթռիչք, արտաելք.

նախ(ա)–յան. նախապատերազմյան:

նախ(ա)–իկ. նախակռվիկ.

նամ(ա)–ում նամալրում:

Ընդ–ում ընդհատում, ընդմիջում:

Ըստ բաղադրիչների բնույթի՝ տերմինների և ոչ տերմինների պատկանելության՝ ածանցավոր ռազմական տերմինների կառուցվածքի քննությունը ցույց է տալիս, որ այդ կարգի տերմինների զգալի մասը կազ-

մրվում է ոչ թե ռազմական տերմիններից, այլ լեզվի ընդհանուր գործածական, սովորական, ոչ տերմինային բառերից:

Այս կարգի տերմինների տերմինաբանական կազապարները դրսևորվում են երկու կարգի դուգորդումներով:

Նախածանց+ոչ տերմին (ո̄տ̄).

Նախածանց+տերմին (տ).

ոչ տերմին (ո̄տ̄)+վերջածանց.

տերմին (տ)+վերջածանց.

Նախածանց+ոչ տերմին (ո̄տ̄)+վերջածանց.

Նախածանց+տերմին (տ)+վերջածանց.

ա) նախածանց+ո̄տ̄ (ոչ տերմին).

վերծանել,

ապաշար:

բ) Նախածանց+տ (տերմին).

ապառազմել,

ենթաբաժին:

գ) Ոչ տերմին (ո̄տ̄)+վերջածանց.

շնիկ,

ճշտորդ:

դ) Տերմին (տ)+վերջածանց.

գինվոր, գինվորական,

բանակային:

ե) Նախածանց+ոչ տերմին (ո̄տ̄)+վերջածանց.

անհնազանդություն,

անտեսանելիություն:

զ) Նախածանց+տերմին (տ̄)+վերջածանց.

ապառազմում,

ապօրինություն և այլն:

2. ԲԱՐԴ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Բարդ տերմիններ կազմելու անհրաժեշտությունը առաջին հերթին ղդացվում է մեկ բառով երկու կամ ավելի հասկացությունների, գաղափարների արտահայտման համար: Բարդությունների շնորհիվ ընդլայնվում են լեզվում առկա բառապաշարային նյութի հիման վրա նոր բառեր կազմելու հնարավորությունները:

Բարդ բառերը միաժամանակ անհրաժեշտ են նաև տերմինաբանության սիստեմավորման՝ համակարգման համար։ Տվյալ դեպքում տերմինների համակարգման էությունն այն է, որ մերձավոր հասկացություններ արտահայտող բառերը մի շարք տերմինաբանական համակարգերում ձևավորվում են բառակազմական միևնույն եղանակով։

Մյուս կողմից, բարդ տերմինները նպաստում են տերմինաբանության ճշգրտմանը, առավելագույն չափով համապատասխանեցնելով գիտական հասկացությունները բառային ձևերին։ Բարդ տերմինները կազմվում են տվյալ լեզվի համար բնորոշ լեզվական միջոցներով, որոնք պատմականորեն արդարացվել են այդ լեզվում։

Բառաբարդումը հայերենի բառակազմության հիմնական, տարածված և արդյաստավոր միջոցներից մեկն է։ Տերմինաբանությունը բնականաբար լայնորեն օգտվում է բառակազմության տեխնիկական այդ հնարավորություններից։ Բառաբարդման միջոցով է կազմվել հայերեն ռազմական տերմինների մի զգալի մասը։

Հայերեն ռազմական բարդ տերմինների քննությունը կատարվելու է ըստ նրանց բաղադրիչների քանակի և միավորման եղանակի, բաղադրիչների ձևաբանական կառուցվածքի, խոսքիմաստային արտահայտության, ինչպես նաև նրանց՝ տերմինի և ոչ տերմինի պատկանելության տեսակետից։ Փաստական նյութի ընձեռած հնարավորությունների հիման վրա տրվել են ռազմական տերմինների կազապարները։

Բաղադրիչների քանակական կազմի տեսակետից բացարձակ գերակշռություն ունեն երկբաղադրիչ բարդությունները։ Սակավ են երեք բաղադրիչներով բարդությունները։

Բարդ տերմինների առավելությունն այն է, որ դրանք իմաստային տեսակետից հարաբերականորեն պատճառաբանված են, որովհետև կազմված են երկու և երբեմն էլ երեք բաղադրիչ-հիմքերից, որոնցից յուրաքանչյուրը իրենից մեկ հասկացություն է ներկայացնում։

Հայերեն ռազմական տերմինաբանությանը առնչվող բառաբարդմամբ կազմված տերմինները հիմնականում իսկական և կցական բարդություններ են։ Այդ կարգի տերմինների ձևաբանական կառուցվածքի ուսումնասիրությունը դյուրացնելու նպատակով նպատակահարմար է դրանք ստորաբաժանել հոդակապով և անհոդակապ բարդությունների։

Ակնհայտ է հոդակապով կազմված բարդ տերմինների քանակական գերակշռությունը, որը միանգամայն համապատասխանում է լեզվի սովորական ընդհանուր գործածություն ունեցող բարդ բառերի համամասնությանը։

ա) Հոդակապով բարդություններ

ականատեսել, ականանկատ, գծանկար, դասակարգում, դիմշակակիր, զրահապատ, զրահահար, զինապահեստ, զրահադիմիդիոն, զրահանկար, զորամաս, զորագունդ, զորակոչ, զորաշրջան, զինագործարան, զինաթափել, ինքնաթիռ, կրակադիծ, կրակակետ, հրամանատար, հրաձիգ, ճակատամարտ, ճակատագրոհ, նռնականետ, նավատորմ, պահակատուն, պահակապետ, ռազմագետ, ռազմավար, ռազմատուգանք, ռազմագործարան, ռմբանետ, սուզանավ, տանկակործան, ուղղաթիռ, փոզահար, փոզաբերան:

Հետաքրքրական է նշել, որ հոդակապով բարդություններում իբրև բաղադրիչ հանդես են գալիս ոչ միայն հայերեն բնիկ բառերն ու հին փոխառությունները, այլև միայն վերջերս ռազմական տերմինաբանության բնագավառն անցած նորագույն փոխառյալ տերմիններն ու բառերը:

Ինչպես, օրինակ՝

ավտոմատաձիգ, *առաջապոստ*, բենզինատար, *բենզինագործարան*, բեռնահար, կալիբրաչափ, տուրբինառեակտիվ *և այլն:*

բ) Անհոդակապ բարդություններ

Այս կարգի բարդություններն ինչպես իսկական, այնպես էլ կցական բարդություններ են: Բացակայում են կրկնավոր բարդությունները: Հատկանշական է, սակայն, որ այդ կարգի բարդությունների կազմում որոշ դեպքերում հանդես են գալիս օտարազգի փոխառյալ այնպիսի բաղադրիչներ, որոնք լեզվում ինքնուրույն գործածություն համարյա չունեն: Օրինակ՝ ավիահրիգոն, ավիակիր, ավիահրահանգիչ, ավտոմեքենա, աերոփարոս, աերոսահնակ, ավիագնացք, ավիապահեստ:

Այս կարգի հայերեն տերմինները կազմվել են ռուսական համապատասխան տերմինի բաղադրիչներից մեկի թարգմանությամբ, մյուս բաղադրիչը առանց թարգմանության մտել է հայերեն բառակազմի մեջ: Կան նաև միայն հայերեն բաղադրիչներով կազմված անհոդակապ բարդություններ. ինչպես՝ առաջշարժում, բանբեր, ժամկետ, հրթիռ, թնդանոթ, ռմբարկղ, ռմբապաստարան, ջրամբար, ջրհան *և այլն:*

գ) Երեք և ավելի բաղադրիչներով կազմված տերմիններ

Ինչպես նշվեց, երկուսից ավելի բաղադրիչներով կազմված տերմինների քանակը մեծ չէ: Նշանակում է, երկուսից ավելի բաղադրիչներով տերմինները օրինաչափ չեն հայերեն ռազմական տերմինաբանության համա-

կարգում։ Օր.՝ հիդրոխինճաթիո, ավտոջրահան, ավիատորպեդակիր, իմֆնաճաշանաոու, լուսագդանշան, հրթիռակիր, հեռախոսակայան, դասակազոբասյուն, ռադիոագդանշան, ռադիոհեռատիպ, ռադիոհեռախոս, օդալուսանկար, օդանավակայան, վաղաժամկետ և այլն։

Բազմաբաղադրիչ տիպի կազմութիյունները հայերենում առաջացել են հիմնականում ռուսերեն համապատասխան տերմինների թարգմանութիյամբ։ Ակներևաբար դրանք ռուսական տերմինների իմաստային պատճեններ են։ Դրանով պետք է բացատրել այն, որ շատ դեպքերում միևնույն տերմինի ռուսերենը և հայերեն համազորների բաղադրիչների քանակային կազմը նույնանում է։

ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԴ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

1. ԲԱՐԴ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Տերմինների (խոսքիմաստային) կաղապարները որոշելու համար ստորև խմբավորման ենք ենթարկում բարդ տերմինները ըստ բաղադրիչների խոսքիմաստային պատկանելութիյան։

ա) **Գոյական+գոյական** *(Գ+Գ). ականատեսություն, բնագիծ, գծանավ, գազաբալոն, դասակասյուն, զորագլուխ, զորապետ, զինապահեստ, զրահադիվիզիոն, զրահանավ, զորամաս, զորագունդ, զորասյուն, կրակագիծ, կրակակետ, կրակահերթ, հողապատվար, հրագիծ, հրանոթ, ձեռնառումբ, ճակատամարտ, ճակատագրոհ, մարտալար, նավատորմ, նավահանգիստ, պայմանագիր, պահակատուն, պահակապետ, ջրագիծ, ջրալոկատոր, ռազմադաշտ, տանկակայան, տիեզերակայան, տիեզերանավ, ուղեսյուն, փոդաբերան, ռադիոփարոս, ռադիոկենտրոն, ռմբարկղ, ռմբապաստարան, քայլերգ։*

բ) **Գոյական+բայահիմք** *(Գ+Բ). ականանետ, ավիակիր, ավտոմատաձիգ, առաջակալ, բեռնաբարձ, բեռնահար, բենզինատար, գաղաձին, զրոշակիր, զրահապատ, զորակոչ, զորահավաք, զորաշարք, ինդանոթաձիգ, հրետաձիգ, հերթապահ, հետահար, հետաձիգ, հրամանատար, հրթիռ, մարտավար, նռնակաձիգ, նռնականետ, պաշտոնաթող, պաշտոնատար, ջրասույզ, ռազմագետ, ռազմավար, ռմբաձիգ, ռմբանետ, տիեզերագնաց, ուժաչափ, ուղեկալ, օրապահ, օձաշար, ջրհան։*

գ) **Ածական+գոյական** *(Ա+Գ) բազմականաչ։*

դ) Բայահիմք+գոյական (Բ+Գ) կալանատուն, հավաքակայան, հածանավ, վառելանյութ, սուզանավ։

ե) Ածական+բայահիմք (Ա+Բ) հեռատիպ, շեղահար, ուղղաթիռ։

զ) Գոյական+ածական (Գ+Ա) տուրբինառեակտիվ։

է) Դերանուն+բայահիմք (Դ+Բ) ինքնագնաց, ինքնաթիռ։

ը) Թվական+գոյական կամ ածական (Թ+Գ կամ Ա) երկկողմանի, միօրինակ։

Բերված օրինակներից երևում է, որ՝ ա) հայերեն ռազմական բարդ տերմինների մեջ տարածված և կենսունակ են գոյական+գոյական և գոյական+բայահիմք կազապարները. բ) ժամանակակից հայերենի խոսքիմասային կազապարների ողջ հարստությունը չի դրսևորվում ռազմական տերմինների նույնատիպ կազապարներում։ Ռազմական տերմինների ձևավաբանական կազապարներն այդ տեսակետից աղքատիկ են։

2. ԲԱՐԴ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶԱՊԱՐՆԵՐ

Բարդ տերմինների այդ կազապարները կարող են լինել չորս տիպի՝ տերմին+տերմին, տերմին+ոչ տերմին, ոչ տերմին+տերմին և ոչ տերմին+ոչ տերմին։

ա) Տերմին+տերմին (տ+տ) զազաբալոն, զորապետ, զինապահեստ, զրահադիվիզիոն, զրահանավ, զորագունդ, ճակատամարտ, ճակատագրոհ, թևագրոհ, մարտալար, նավատորմ, պահակապոստ, տիեզերանավ, տուրբինառեակտիվ, ռադիոփարոս, ավիագունդ, տանկակայան։

բ) Տերմին+ոչ տերմին (տ+$\overline{\text{տ}}$) ականազաշտ, ականանետ, ավտոմատաձիգ, բետոնահար, բենզինատար, զազածին, զրոշակիր, զորագլուխ, զրահապատ, զրահահար, զորամաս, զորակոչ, զորաշարժ, զինազադար, կրակակետ, կրակահերթ, կալիբրաչափ, հրետաձիգ, նռնականետ, նավահանգիստ, պաշտոնաթող, պահակատուն, պաշտոնակատար, ռազմագետ, ռազմավար, ռազմազաշտ, ռմբաձիգ, ռմբանետ, փողաբերան, փողահար։

գ) Ոչ տերմին+տերմին ($\overline{\text{տ}}$+տ)

առաջապոստ, դծանավ, սուզանավ, հածանավ, ձևնաոումբ, մենամարտ, ջրալոկատոր, բազմականոց, հեռատիպ։

դ) Ոչ տերմին+ոչ տերմին ($\overline{\text{տ}}$+$\overline{\text{տ}}$)

առաջակալ, աչքաչափ, բետոնարարձ, զանձապահ, թմբաոատափ, գայլափոս, զայլաթումբ, լցափորք, հետահար, հետաձիգ, հետաչափ, հետախոս, հետագիր, ձորահատ, միջաթումբ, շեղահար, ջրասույզ, ջրագիծ, վառելա-

նյութ, տեղապտույտ, տեղեկագիր, ցցաթումբ, ուղղաթիռ, ուժաչափ, ուղեսյուն, ուղեկալ, փաստաթուղթ, քանակակազմ, օրապահ, օրահանգիստ, օձաշար, բանբեր, հրթիռ, ջրամբար, ջրհան և այլն:

Բերված օրինակներից երևում է, որ ավելի տարածված և կենսունակ են ոչ տերմին+ոչ տերմին (տ̄+տ̄) և տերմին+ոչ տերմին (տ+տ̄) կազապարները:

3. ԲԱՐԴ ԱԾԱՆՑԱՎՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ածանցավոր պարզ տերմինների նման՝ բարդածանցավոր տերմինները լինում են նախածանցավոր, վերջածանցավոր և նախածանցով ու վերջածանցով կազմված տերմիններ:

ա) **նախածանցավոր բարդ տերմիններ**—

նախ(ա), նախապինակոչ,

բ) **վերջածանցավոր բարդ տերմիններ**

–ակ, ջրասուզակ, հրագնդակ, նախախմբակ:

–ական, մանրէաբանական, կենսաբանական, օդերևութաբանական, նավագնացական, հետախուզական, ջրասուզական:

–ային, լեռնադահուկային, ավտոճանապարհային, ջերմամիջուկային, բազմավառելիքային, ջրածնային, լուսազդանշանային, օդադեսանտային, պարաշյուտադեսանտային, հետևակադեսանտային, տանկադեսանտային, մոտոհրաձգային:

իչ–ուցիչ, ռմբահանիչ, ռմբակոծիչ, ձայնախլացուցիչ, գազահանիչ, բոցամարիչ, բոցաանդրադարձիչ, ղրահաայրիչ, խրամատափորիչ, ավտոբեռնիչ, ռադիոպայթուցիչ:

–ու, նշանառու, ռմբարկու, ինքնանշանառու:

–ույթ, ծխածածկույթ, հրածածկույթ:

–ություն, մարտունակություն, բեռնունակություն, հեռահարություն, հեռաձգություն, հետաքննություն, ջրատարողություն, մենամարտություն, տիեզերագնացություն, ինքնանշանառություն, ռադիոակտիվություն, ծովակալություն:

–ում, գազահանում, գազազերծում, բարոյալքում, կազմալուծում, զրաբացրում, ռմբաձգում, ռմբանետում, ծխարձակում, դինաթափում, ճառագայթահարում, լուսաքողարկում, լուսազդանշանում, ռադիոքողարկում, ռադիոփոխանակում, ռադիոհեռուստակառավարում:

–արան նավագործարան, էվակոընդունարան:

–ոց, *ծառափակոց, թիկնոցածածկոց:*

–ող, *յուղալցավորող, ռադիոկառավարվող:*

–ավոր, *կիսաթրթուրավոր, տանկավտանգավոր, տուրբապտուտակավոր:*

–ան, *օդանավակայան:*

–f, *վայրէջք:*

Նախածանցավերջածանցավոր տերմիններ

փոխհրաձգություն, նախապինակոշիկ:

Բարդածանցավոր ռազմական տերմինների ձևաբանական (խոսքիմասային) և տերմինաբանական կաղապարները հիմնականում չեն տարբերվում բարդ տերմինների նշված կաղապարներից, ուստի և հարկ չկա դրանք հատուկ քննության ենթարկել:

Ածանցավոր, բարդ և բարդածանցավոր տերմիններում կատարվող հնչյունական փոփոխությունները

Ածանցավոր, բարդ և բարդածանցավոր տերմիններում կատարվում են հնչյունափոխական նույն երևույթները, ինչ՝ նույն կազմությունն ունեցող հայոց լեզվի ընդհանուր գործածության սովորական բառերում, այսինքն՝ հնչյունափոխության են ենթարկվում միայն ձայնավորները: Հընչյունափոխման հիմնական պատճառը շեշտի տեղափոխումն է:

ա) Հնչյունափոխություն ածանցավոր տերմիններում ե(է)>ի օրինաչափություն, ընդօրինություն *(օրէն>օրին).*

ու> (ը) թափառող *(թաքուստ>թաքստ(ող),* փախստական *(փախուստ>փախստ-),* թմբիկ *(թումբ>թմբ-),* նռնակ *(նուռն>նռն-),* խմբակ, *խմբական (խումբ>խմբ-),* գնդակ *(գունդ>գնդ-),* ծնկաճոց *(ծունկ>ծնկ-),* կամրջակ *(կամուրջ>կամրջ-),* փամփշտաճոց *(փամփուշտ<փամփշտ.).*

ի>(ը) պատժական *(պատիժ<պատժ.),* ձգարան *(ձիգ>ձգ-),* կցվածք, կցուրդ *(կից<կց-),* ընդգրկել *(գիրկ>ըրկ-),* ճշտուրդ *(ճիշտ>ճշտ.).*

ույ<ու պտուտակ *(պտույտ>պտուտ-),* ցուցանակ, ցուցադ, ցուցիչ *(ցույց>ցուց-),* ագուցարան *(ագույց>ագուց.).*

ու<զրո ամրություն, ամրոց *(ամուր>ամր).*

ի>ը կամ զրո, անվակ *(անիվ>անվակ),* ուղղաձ, ուղղյակ *(ուղիղ<ուղղ-),* համալրել, համալրում *(-լիր<լր.),* պատժելի, պատժելիություն *(պատիժ>պատժ-),* պարագծել *(-գիծ>գծ-):*

բ) Հնչյունափոխություն բարդ և բարդածանցավոր տերմիններում

ի>զրո. աղավնագիր (աղավնի+ա+գիր, ի>զրո) ուղղաթիռ (ուղիղ>ուղղ-).

ու>զրո. բազմականալ (բազում>բազմ-).

ի>(ը) գծանավ (գիծ>գծ-), ցցաթումբ (ցից<ցց-), ջրածնային (ծին>ծն-), մոտոնրանգային (ձիգ>ձգ-), հետաքննություն (քնին<քնն-).

ՈՒ>(ը) թմբաոտալի (թումբ>թմբ-), հրաբաժակ (հուր<հր.), ընթնակաճեռ, նոճակաձիգ (նուռն<նռն-), ջրասույզ, ջրագիծ, ջրալոկատոր, ջրամբար, ջրհան, ջրաման, ավտոջրհան (ջուր>ջր-), ռմբարկղ, ռմբապաստարան, ռմբարկու (ռումբ>ռմբ-), սրարշավ (սուր>սր-), հրանոթ, հրթիռ (հուր>հր-), բնդանոթ (թունդ>թնդ-), հրագնդակ (հուր>հբ, գունդ>գնդ-), նավախմբակ (խումբ>խմբ), ծխածածկույթ, ծխարձակում (ծուխ>ծխ-), ձայնախլացուցիչ (խուլ>խլ-).

ա>է ուղեկալ, ուղեսյուն (ուղի+ա+կալ, ուղի+ա+սյուն, իա>է).

ույ>ու օդալուսանկար (լույս>լուս-), հրացուցակ (ցույց>ցուց-), ջրասուզական (սույզ>սուզ-), ճեռախուզական (խույզ>խուզ-), լուսագղանշան, լուսաֆողարկում (>լույս>լուս-):

4. ԲԱՐԴ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Հայ տերմինաբանության և, մասնավորապես, ռազմական նոր տերմինաբանության մեջ բանակական տեսակետից աչքի են ընկնում բարդ-բաղադրյալ տերմինները, որոնք, փաստորեն, ռուսական համապատասխան տերմինների իմաստային և կառուցվածքային պատճենումներն են: Դրանք միջանկյալ տեղ են դրավում բարդ տերմինների և տերմինային կապակցությունների միջև: Այդ կարգի տերմինները թեև նոր են կազմությամբ և բովանդակությամբ, բայց կենսունակ են: Բարդ-բաղադրյալ տերմինների տարածումը հայերենում զգալի չափով կախված է այն բանից, թե դրանք հետագայում ռուսերենում ինչ ծավալ կընդունեն և ինչպիսի զարգացում կստանան: Օր.՝ ալֆա-ճառագայթներ, ալֆա-ճառագայթում, ալֆա-մասնիկ, ական-բակարդ, ական-անակնկալ, ատրճանակ-գրնդացիր, բետա-ակտիվություն, բետա-ճառագայթներ, բետա-մասնիկ, հրթիռ-խայծ, իմֆնաթիռ-ամֆիբիա, իմֆնաթիռ-բիրախ, իմֆնաթիռ-արկ, իմֆնաթիռ-նպատակ, տանկ-տրալորդ, տանկ-ճարշակ, փարոս-պատասխանող, փոս-բակարդ:

Բարդ-բաղադրյալ տերմինների ձևաբանական կաղապարը, ի տարբերություն բարդերի, ածանցավորների, ըստ երևույթին, միատիպ է, գ+գ: Դրանք կազմվում են գոյականներից կամ գոյականաբար դործածվող խոսքի մյուս մասերից:

Բարդ-բաղադրյալ տերմինների տերմինաբանական կաղապարներն են՝

ա) տ+տ (տերմին+տերմին)
ալֆա-ճառագայթներ, ալֆա-ճառագայթում, բետա-ճառագայթներ, ինքնաթիռ-արկ, ինքնաթիռ-թիրախ, ինքնաթիռ-ամֆիբիա, ատրճանակ-գնդացիր, տանկ-տրալորդ,

բ) տ+$\overline{\text{տ}}$ (տերմին+ոչ տերմին)
ինքնաթիռ-նպատակ, հրթիռ-խայծ,
փարոս-պատասխանող.

գ) $\overline{\text{տ}}$+$\overline{\text{տ}}$ (ոչ տերմին+ոչ տերմին)
փոս-թակարդ:

ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

Տերմինային կապակցություն ասելով սովորաբար հասկանում են քերականական որոշակի հարաբերության մեջ գտնվող բառերի շարք:

Ի տարբերություն տերմին-բարդ բառերից՝ տերմինային կապակցությունների բաղադրիչների քերականական ձևերը պարզորեն արտահայտում են տերմինի բաղադրիչների միջև եղած իմաստային կապերը: Վերջիններս, ինչպես և տերմին-բարդ բառերը իմաստի տեսակետից միասնական բառային միավորներ են:

Այս պատճառով էլ տերմինային կապակցության իմաստը հավասար չէ նրա առանձին միավորների իմաստների գումարին: Տերմինային կապակցությունների առանձին բաղադրիչների իմաստները միշտ այս կամ այն չափով ենթարկվում են ամբողջ բառակապակցության իմաստին՝ նշանակությանը: Տերմինային նշանակություն ունեցող կայուն բառակապակցությունների բառային իմաստը կախված է ոչ միայն բաղադրիչների իմաստներից, այլև նրանց միացման ձևից և կապակցական արժեքից: Միայն մեկ իմաստով այս կամ այն կայուն կապակցության մեջ մտնող բառի նշանակության սահմանազատումը կատարվում է այդ բառերի մասնագիտացման գծով:

Բառակապակցության մեջ գրեթե յուրաքանչյուր տերմին կարող է օգտագործվել որպես նոր բաղադրիչ:

Տերմինաբանության համակարգայնության համար անհրաժեշտ է, որ տերմին-բառակապակցությունները, որոնք միևնույն կարգի հասկացություններ են նշանակում, ունենան միատիպ կառուցվածք:

Տերմինային որոշակի կառուցվածքում բառակապակցությունները ստանում են կայուն բնույթ:

Տերմինաբանական բառակապակցությունների տեղը լեզվի համակարգում մինչև այժմ վերջնականապես չի որոշված: Պարզ է, սակայն, այն իրողությունը, որ իմաստի տեսակետից տերմինային կապակցությունները բարդ տերմինների նման՝ ինքնուրույն, ամբողջական, բառային (լեքսիկական) միավորներ են: Բարդ տերմին կամ տերմինային կապակցություն ստեղծելիս սովորաբար դժվար է լինում բավարարել «իդեալական տերմինի» կարճության և ճշգրտության հիմնական պահանջները: Տերմինային բառակապակցությունը թերևս կարող է բավարարել միայն ճշգրտության պահանջը, այսինքն՝ լինել այնպիսի տերմին, որը իմաստային կողմով լիովին արտահայտի հասկացության անհրաժեշտ հատկանիշները: Վերջինս կատարվում է շատ դեպքերում տերմինի «կարճության» պահանջի ոտնահարմամբ: Տերմինային կապակցության մեջ որոշող բաղադրիչը այն հիմնական տերմինը կամ բառն է, որն արտահայտում է ընդհանուր հասկացություն, երևան է հանում տերմինացման ենթարկված առարկայի, երևույթի էական հատկանիշները, առանձնահատկությունները, ձևը, որակը և այլն: Իբրև վերլուծական կառուցներ, տերմինային կապակցությունները հայ ռազմական տերմինաբանության հիմնական զանգվածի գերակշիռ մասն են կազմում:

Ըստ բաղադրիչների քանակական կազմի՝ տերմինային կապակցությունները կամ բառակապակցական տերմինները լինում են՝ երկանդամ, եռանդամ և բազմանդամ:

ԵՐԿԱՆԴԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկանդամ ռազմական տերմինային կապակցությունները թվապես գերազանցում են եռանդամ և բազմանդամ կապակցություններին: Այս կարգի տերմինները աչքի են ընկնում իրենց ձևաբանական և տերմինաբանական կազապարների բազմազանությամբ: Դրանց բաղադրիչների շարահյուսական կառուցվածքը հիմնականում որոշիչ-որոշյալի հարա-

բերություն է արտահայտում: Նույնատիպ կառուցվածք ունեցող տերմինների մեջ երկանդամ կառույցները ամենակենսունակն են և ամենից ավելի են օժտված համակարգայնացող հատկանիշներով: Վերջիններս ամբողջապես իրենց արտահայտությունն են գտնում այդ կարգի տերմինների խոսքիմաստային և տերմինաբանական կազապարներում:

1. ԵՐԿԱՆԴԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱԶԱՊԱՐՆԵՐԸ

ա) **Ա+Գ Ամենատարածված և կենսունակ կազապարը ածական+գոյական կառույցն է:** *Այն մեծ տարածում ունի ինչպես հին, այնպես էլ հայերեն ռազմական նոր տերմինների մեջ.*

Օրինակ՝ հրթիռային մարտկոց, ճառագայթային հրվանդություն, մանրէաբանական ռումբ, ջրածնային ռումբ, միջուկային ռումբ, հրթիռային զորքեր, հրթիռային հրաձգարան, հրթիռային նավ, հրթիռային հածանավ, հրթիռային շարժիչ, միջուկային շարժիչ, գերձայնային կործանիչ, բեկորային ական, ատորջրյա ական, հականավակային ական, հակահետևակային ական, կեղծ ականադաշտ, հակահետևակային ականադաշտ, բազմափողանի ականանետ, անկաձև ամպ, հակատիեզերական պաշտպանություն, հակահրթիռային պաշտպանություն, մանրէաբանական զենք, քիմիաբանական զենք, բազմանպատակ տուգանավ, հականավակային տուգանավ, մնացուկային ճառագայթահարում, տիեզերական հրթիռ, թևավոր հրթիռ, բազմաստիճան հրթիռ, միաստիճան հրթիռ, տուգանային վաշտ, անօդաչու ինքնաթիռ, ուղեծրային ինքնաթիռ, տախտակամածային ինքնաթիռ, պարեկային ինքնաթիռ, միջոցավոր ինքնաթիռ, օդաչվավոր ինքնաթիռ, հականավակային ինքնաթիռ, հրթիռային ինքնաթիռ, գերձայնային ինքնաթիռ, հրթիռակիր ինքնաթիռ, լուսահնոդրական կապ, մինչձայնային արագություն, գերձայնային արագություն, նշանափորձային արկ, լուսածրային արկ, միջուկային արկ, հետախուզական արբանյակ, կարծր վառելանյութ, ջերմամիջուկային վառելանյութ, հրթիռային հարված, հրթիռային զորամաս, բազային ավիացիա, տակտիկական ավիացիա, թրթուրավոր ափոոմեքենա, անվավոր ավտոմեքենա, կիսաթրթուրավոր ավտոմեքենա, շարային ավտոմեքենա, զուգորդական անտենա, ատոմային հրետանի, օդալուսանկարչական ապարատ, ռադիոռելեական դումարտակ, հակատանկային հրետանի, հակատանկային թնդանոթ, հակատանկային հրթիռ, հակատանկային մարտկոց, բեռնահար ռումբ, նապալմային ռումբ, օդադեսանտային

դասակ, ատոմային պայթյուն, ռադիոտեխնիկական զորքեր, լազերային հեռաչափ, պարաշյուտային դեսանտ, վայրէջքային դեսանտ, հրթիռային դիվիզիոն, ատոմային սուզանավ, տորպեդային սուզանավ, տորպեդային կատեր, հետևակադեսանտային նավ, տանկադեսանտային նավ, լազերային ճառագայթ, կոնտակտային ական, մագնիսային ական, հակադեսանտային ական, հակադեսանտային ականադաշտ, հակատանկային ականադաշտ, ստրատեգիական իրադրություն, տակտիկական իրադրություն, օդադեսանտային գործողություն, օդադեսանտային գունդ, զենիթային գունդ, զենիթային ինդանոթ, ռադիոակտիվ ինդանոթ, զենիթային հրթիռ, ստրատեգիական հրթիռ, տակտիկական հրթիռ, ավտոսանիտարական վաշտ, օդադեսանտային վաշտ, մոտոհրաձգային վաշտ, պարաշյուտադեսանտային վաշտ, բաղմականալ կապ, ռադիոռելեական կապ, ռադիոհեռախոսային կապ, աղմկապելենդատորային կայան, դեսանտային տանկ, զենիթային տանկ, ինժեներական տանկ, կեղծ տանկ, կամրջային տանկ, միջին տանկ, ծանր տանկ, հրթիռային տեխնիկա, բարձրակտիվ վառելանյութ, պայթուցիկ նյութ, պայթուցիկ խառնուրդ, պայթուցիկ բաղադրություն, ռազմական ուսումնարան, զինվորական կանոնադրություն, օդային մարտ, օդային թշնամի, օդային հետախուզ, օդային կապ, տեսական մարտ, դետքային ծառայություն, պահակային ծառայություն, երկտրամագիծ փողանցք, ժամանակավոր աշրություն, ժամանակավոր ճամբար, երկշերտ կրակ, երկփողանի հրացան, հեռավոր կրակ, զենիթային գնդացիր, օդային հարձակում, զորական հետախուզություն, հրետանային գնդակոծում, մարտական գործողություն, մարտական տեխնիկա, մարտական հրաձգություն, մարտական խնդիր, մարտական միավոր, մարտական ոտք (հրացանի), մարտական կրակոց, մարտական լիցք, մարտական կարգ, մարտական ինքնաթիռ, մարտական տեղամաս, մարտական պատրաստություն, մարտական գիծ, մարտական զսպանակ, ամբային համապարկ, մոտակա կրակ, մոտակա հետախուզություն, զրահապատ ավտոմեքենա, երկաթե ցցահ, գլխավոր հրամանատար, զինվորական կոմիսար, լեռնահրաձգային դիվիզիա, բնական բողարկում, հնչյունական ազդանշան, զրահատանկային զորամաս, ավանգարդային մարտ, կադրային բանակ, հեռահար հրետանի, հեռահար հրանոթ, ծխատու վառոդ, ծխատու արկ, բնական խոչընդոտ, բնական արգելք, երկաթուղային զորքեր, երկաթուղային դումարտակ, ծածկային կրակ, ստատիկ կրակ, նավահովական պատերազմ, ռազմական խորհուրդ, ռազմական ծառայություն, ռազմական դրություն, զինվորական գործ, ռազմական գաղտնիք, անծուխ վառոդ,

կործանիչ ավիացիա, կործանիչ գումարտակ, արտահերթ վերակարգ, արտաքին թշնամի, ներքին թշնամի, զինհիմային մարտկոց, պատժիչ ջոկատ, պահակային գումարտակ, ռազմական քարտեզ, հրետանային դեպք, հրետանային հետախուզություն, հրետանային դպրոց, ճակատային գրոհ, օդային հարձակում, գազային գրոհ, զորական միավոր, զորամասի ավիացիա, ծովափնյա պաշտպանություն, ծովափնյա ամրություն, անկանոն կրակ, հանդիպական մարտ, օժանդակ զորքեր, օժանդակ գործողություն, ընդհանուր զորահավաք, օդային նպատակ, օդային դեսանտ, ակտիվ պաշտպանություն, ավիառմբակոծիչ միջոցներ և այլն։

բ) Դ+Դ *ձևական ճոլով+գոյական ուղղական ճոլով կապադարով կառուցված երկանդամ տերմինակապակցությունները պատկանում են հայերեն ռազմական հին, նախապատերազմյան տերմինաբանությանը և կազմվել են Մ. Աբեղյանի կողմից։ Ռազմական այդ տիպի նոր տերմիններ համարյա չեն կազմվում, հետևաբար այդ կաղապարը այժմ կենսունակ չէ։ Սակայն ռազմական տերմինաբանական համակարգում այդ կաղապարներով կազմված տերմինները որոշակի թիվ են կազմում. օրինակ՝ հրանոթի փողանցք, նռվների քարավան, լցարանի օղ։ ատրճանակի լցամաս, հրացանի լցամաս, գլխի դնտք, գլխի դասակ, նշանոցի բույն, մարտակարգի խորություն, հնծելազորի վաշտ, հնծելազորի դպրոց, հնծելազորի բրիգադ, հնծելազորի գունդ, շարժիչի ծածկոց, կարանտինի պահապան, կրակի կարգապահություն, փողանցքի տրամաչափ, պահեստի հրետասայլ, Մորզեի այբուբեն, փողաբերանի ծածկոց, փողաբերանի պահպանակ, պահեստի գունդ, պահեստի դեպք, պահեստի զորք, պահեստի սպա, պահեստի հրանոթ, պահեստի արկեր, պատվարի կատար, հրացենի լիցք, զենքի պահեստապետ, երթի մատյան, հրետանու տեսուչ, զորքերի խմբավորում, կրակի ճկունություն, արկի արտաթռիչք, փողանցքի երկարություն, հրացանակոթի խզատակ, զարկանի պսակ, զարկանի պտուտակ, գնդացրի ծածրակալ, փողի մաշվածություն, բանակի գեներալ, դիվիզիայի հրամանատար, կոմիսարի տեղակալ, զորամասի օրապահ, վաշտի հերթապահ, հրետանու պետ, ատրճանակի թմբուկ, հարթաչափի հաստոց, հրահանի կատար, զորքերի խումբ, փակաղակի բոլտ, ռումբի փողակ, արկի լցարան, ֆուգասի լցարան, հրանոթի լցարան, դասակավորության խորություն, զենավարման դասակ, ելման դիրքեր և այլն։*

Այս կաղապարով կազմված տերմինային կապակցությունների դգալի մասը վերաբերում է ռազմական տեխնիկային, հատկապես զենքի տարբեր տեսակների հետ կապված հասկացություններին։ Այդպիսի որոշ

տերմիններ արդեն հնացել են և տերմինային համակարգից դուրս են մնացել կամ դուրս մնալու եզրին են գտնվում՝ ինչպես, օրինակ՝ գլխի ջոկատ, գլխի դեպք, գլխի դասակ, հեծելազորի վաշտ, հեծելազորի դպրոց և այլն։

Այս կաղապարով կազմված հնացած տերմիններին այժմ փոխարինում են ածական+գոյական կաղապարով կազմվող տերմինային կապակցությունները՝ գլխի ջոկատ>գլխային ջոկատ և այլն։

դ) Գ+Գ Գոյականի ուղղական հոլով+գոյականի ուղղական հոլով կաղապարով կազմված տերմինային կապակցություններ։ Այս կաղապարով կազմված տերմինների քանակը չնչին մաս է կազմում տերմինային երկանդամ կապակցությունների մեջ։ Այն այնքան էլ կենսունակ չէ ինչպես հին տերմինների, այնպես էլ նոր տերմինների կազմության պրակտիկայում։ Օրինակ՝ համազարկ կրակ, պատրաստուհատ մարտիկ, օրապահ զորամաս, հետախույզ մարտիկ, տիեզերագնաց օդաչու, հետախույզ օդաչու, հետախույզ ինքնաթիռ, ճշտորդ ինքնաթիռ և այլն։ Ինչպես երեվում է բերված օրինակներից նորագույն շրջանում այս կաղապարով կազմվել են բավական շատ տերմիններ։

դ) Ե+Գ. Գոյականի գործիական հոլով+գոյականի ուղղական հոլով կաղապարով կազմված տերմինային կաղապարներ։ Այս կաղապարը կենսունակ չի եղել հին տերմիններ կազմելիս։ Այս անկենսունակ է նաև նոր տերմիններ կազմելու պրակտիկայում։

Օձաշարով շարժում, սայլերով փոխադրություն, դանդաղումով պայթուցիչ, համազարկով ռմբակոծում, օդով պաղեցում (սառեցում)։ Այս կարգի տերմինները հնանալով՝ դուրս են մնացել ռազմական տերմինային նոր համակարգից։ Հիշյալ կաղապարին որոշ դեպքերում հաջողությամբ կարող է փոխարինել ածական+գոյական կաղապարը։ Ինչպես, օրինակ՝ համազարկով ռմբակոծում-համազարկային ռմբակոծում, օդով պաղեցում (սառեցում)-օդային պաղեցում (սառեցում)։

Բայանձև+գոյական կաղապարով կազմվող տերմինային կապակցություններ.—Այս կաղապարով կազմվում են ինչպես հին, այնպես էլ նոր ռազմական տերմինային կապակցություններ։ Հատկանշական է, որ իբրև բաղադրիչ հանդես են գալիս ենթակայական և հարակատար դերբայները, որոնք իրականում ածականական իմաստ են արտահայտում։ Այդ առումով այս կաղապարը կարող է նույնանալ ածական+գոյական կաղապարի հետ։

ա) Ենթակայական դերբայ+գոյական կաղապար

Լողացող ավտոմեքենա, լողացող տանկ, լուսավորող ռումբ, հրկիզող ական, լողացող ական, կառավարվող ական, կառավարվող ականադաշտ, թափանցող ճառագայթահարում, չկառավարվող հրթիռ, կառավարվող հրթիռ, թռչող հրթիռ, լուսավորող հրթիռ, լցավորող ինքնաթիռ, հրկիզող արկ, պատնեշող շերտ, գործող բանակ, պատնեշող ավիացիա, բոցավառվող պատիճ, թրաշող թռիչք, վարվող ինքնաթիռ, վարող գոտի, պատերազմող կողմեր և այլն:

բ) Հարակատար դերբայ+գոյական կաղապար.

Մրագրավորված կառավարում, համուղղված անտենա, բողարկված դիրք, ծածկված դիրք, ծածկված տարածություն, ծածկված նպատակ, ծածկված նշան, ծածկված հրաձգություն, ծածկված տեղանք, հարկադրված վայրէջք, հարկադրված նահանջ, զինված ուժեր և այլն:

Մակբայ+գոյական կաղապարով կազմվող տերմինային կապակցություն.— *Այս կաղապարը կենսունակ չէ, ընդամենը մի քանի բառակապակցական տերմիններ են կազմվել հիշյալ կաղապարով. հանկարծակի հարձակում, հանկարծակի գրոհ, արագ քիլը:*

Մակբայ+բայանձև կաղապարով կազմվող տերմինային կապակցություն.—*Այս կաղապարով կազմված է ընդամենը մեկ տերմինային երկանդամ կապակցություն, որն ինքնին վկայում է նրա անկենսունակության մասին: Այդ կապակցությունն է՝ կամովին վարձված, որը դուրս է մնացել հայերին ռազմական նոր տերմինաբանությունից, որա փոխարեն այժմ օգտագործվում է վարձկան տերմինը:*

2. ԵՐԿԱՆԴԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

Ինչպես ածանցավոր, բարդ, բարդածանցավոր տերմինները, այնպես էլ տերմինային կապակցությունները կազմվում են տերմինաբանական նույնատիպ կաղապարներով՝ **տ+տ, տ+$\overline{\text{տ}}$, $\overline{\text{տ}}$+տ, $\overline{\text{տ}}$+$\overline{\text{տ}}$:**

1. **տ+տ** (տերմին+տերմին): *Դրանք այնպիսի կապակցություններ են, որոնց երկու բաղադրիչներն էլ տերմիններ են:*

Հրթիռային մարտակոց, հրթիռային զորքեր, հրթիռային զորամաս, հրթիռային նավ, հրթիռային հրաձգարան, հրթիռային պաշտպանություն, հրթիռային տեխնիկա, հետևակադեսանտային նավ, մանրէաբանական

ղենք, մանրէաբանական ռումբ, ջերմամիջուկային ղենք, թունաբանական ղենք, պարեկային ինքնաթիռ, հրթիռակիր ինքնաթիռ, ատոմային հրետանի, հակատանկային հրթիռ, հակատանկային հրետանի, նապալմային ռումբ, օդադեսանտային դասակ, օդադեսանտային գունդ, հրետանային գունդ, տանկային գունդ, պարաշյուտային դեսանտ, պարաշյուտային վաշտ, ռազմական հետախուզություն, լեռնահրաձգային դիվիզիա, մոտոհրաձգային դիվիզիա, զորական հրետանի, զորական ավիացիա, դիվիզիական կոմիսար, դիվիզիայի հրամանատար, բանակի գեներալ, հրանոթի փողանցք, ատրճանակի թմբուկ, ռադիոակտիվության ինդիկատոր, զարկանի պտուտակ, պարաշյուտիստ մարտիկ, համազարկ կրակ, տիեզերագնաց օդաչու, հետախուզ ինքնաթիռ և այլն:

Այս կաղապարով կազմված բառակապակցական տերմինների հատկանշական կողմն այն է, որ՝

ա) ածական +գոյական կաղապարով կազմված տերմինների ածական բաղադրիչը որպես տերմին ինքնուրույն գործածություն չունի, ինչպես, օրինակ՝ **հրետանային գունդ, տանկային գունդ, օդադեսանտային գունդ, հրթիռային զորեր, հրթիռային մարտկոց** *և այլն:*

բ) Այս կաղապարում որպես բաղադրիչ հանդես են գալիս այնպիսի տերմիններ, որոնք թեև ռազմական բուն տերմիններ չեն, բայց սպասարկում են նաև ռազմական տերմինաբանությանը. ինչպես, օրինակ՝ մանրէաբանական ղենք, մանրէաբանական ռումբ, ջերմամիջուկային ղենք և այլն:

2. **ա+ոչ ա** (տերմին+ոչ տերմին): *Այս կապակցության առաջին բաղադրիչը տերմին է, երկրորդը ոչ տերմին:*

Հրթիռային հարված, զոդաչափական հսկողություն, զոդաչափական քանակ, տակտիկական իրադրություն, օդադեսանտային գործողություն, ռազմական ուսումնարան, պատերազմական գործողություն, ռազմական գործողություն, ռազմական խորհուրդ, զինվորական գործ, զինվորական տարազ, զորական միավոր, զորական տնտեսություն, մարտական ուղք, հրանոթի բարձրացում, զորքի բավարարում, նշանոցի բույն, մարտակարգի խորություն, կրակի կարգապահություն, կրակի ճկունություն, զորքերի խմբավորում, փողանցքի երկարություն, փողի մաշվածություն, զարկանի անցք, հրահանի կատար, զորքերի խումբ, զինված ուժեր և այլն:

3. **ոչ ա+ա** (ոչ տերմին+տերմին): *Ջգալի թիվ են կազմում ոչ տերմին+տերմին բաղադրիչներից կազմված կաղապարներով տերմինային կապակցությունները:*

Կառավարվող ական, կառավարվող հրթիռ, քողարկված դիրք, լողացող տանկ, լուսավորվող ռումբ, հրկիզվող արկ, բռնող հրթիռ, կեղծ ականադաշտ, կեղծ տանկ, բազմանպատակ սուզանավ, մնացուկային ճառագայթահարում, թևավոր հրթիռ, բազմաստիճան հրթիռ, միաստիճան հրթիռ, միջմայրցամաքային հրթիռ, ազդանշանային հրթիռ, տուգանային վաշտ, տախտակամածային ինքնաթիռ, գերձայնային ինքնաթիռ, կարծր վառելանյութ, պատվավոր ուղեկցորդ, անվավոր ավտոմեքենա, զուգորդական անատենա, բետոնահար ռումբ, բազմականոն կապ, դիմամասային տանկ, կամրջային տանկ, միջին տանկ, ծանր տանկ, թեթև տանկ, ցերեկային ՙգրոհ, տևական մարտ, օդային մարտ, օդային հետախույզ, հետագնաց հետևախույզ, երկշերտ կրակ, հետավոր կրակ, անկանոն կրակ, մոտակա կրակ, լեռնային հրետանի, լեռնային հրանոթ, ծովափնյա պաշտպանություն, անծուխ, վառոդ, արտահերթ վերակարգ, գլխավոր շտաբ, օրվա վերակարգ, ղեկավարման դաստակ, ելման դիրքեր, ժամանակավոր ամրություն, ժամանակավոր ճամբար, ընդհանուր զորահավաք և այլն:

4. $\overline{\text{տ}}+\overline{\text{տ}}$ (ոչ տերմին+ոչ տերմին): Այս տերմինաբանական կազապարով կազմվող երկանդամ տերմինային կապակցություններն այնքան էլ շատ չեն: Դա նշանակում է, որ հիշյալ կազապարը այժմ կենսունակ չէ:

Սնկաձև ամպ, պայթուցիկ խառնուրդ, պայթուցիկ բաղադրություն, իրերի պաշար, օդով պաղեցում և այլն:

ԵՌԱՆԴԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս տիպի տերմինային կապակցությունները իրենց քանակով և կենսունակությամբ թեև զիջում են նախորդ՝ երկանդամ կապակցություններին, սակայն որոշ ակտիվություն են ցուցաբերում հատկապես հայերեն ռազմական նոր տերմինաբանության համակարգում: Այդ ակտիվությունը ռուսերենի նմանությամբ հայերեն ռազմական նոր տերմինների պատճենման հետևանք պետք է համարել: Ինչպես, օրինակ՝

Հատուկ նշանակության ավիացիա, ավտոմեքենայի քարշով հրետանի, մեխանիկական քարշով հրետանի, ռադիոակտիվ նստվածքների տեղում և այլն:

Ռազմական այս կարգի կապակցությունների առաջացման առիթով, ըստ երևույթին, պետք է ասել, որ տվյալ կազապարով կազմվող տեր-

մինների տեսակարար կշիռը տերմինաբանական համակարգում աճելու միտում ունի: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում այդ կարգի կապակցությունների ձևաբանական և տերմինային կաղապարները:

1. ԵՌԱՆԴԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

ա) Ածական+գոյական+գոյական ($Ա_1+Գ_1+Գ_2$): *Այս կաղապարը ամենատարածված և կենսունակն է: Կապակցության հիմնաբառը՝ գոյականը հանդես է գալիս ուղիղ ձևով, իսկ լրացնողը՝ թեքված հոլովով (սեռական, գործիական):*

Ռադիոլոկացիոն կայանի ինդիկատոր, շրջանաձև դիտման ինդիկատոր, մանրէական միջոցների ինդիկացիա, թունավոր նյութերի ինդիկացիա, ռադիոակտիվ վարակման հսկողություն, ռադիոակտիվ ճառագայթահարման հսկողություն, ռադիոակտիվ նստվածքների տեղումներ, ռադիոլոկացիոն հայտնաբերման հեռավորություն, հատուկ նշանակության ավիացիա, ռադիոակտիվ թունավորման տեղամաս, միջուկային պայթյունի բարձրություն, միջուկային զենքի փորձարկումներ, տիեզերական տարածության հետախուզություն, սկզբնարթային գործողության ական, սեղմիչ գործողության ական, ձգիչ գործողության ական, մեծ խտության ականանգաշտ, փոքր խտության ականանգաշտ, օդային մարտի հրթիռ, հեռավոր գործողության հրթիռ, կարծր վառելիքով հրթիռ, միջին հեռավորության հրթիռ, միջուկային մարտամասով հրթիռ, ինքնանշանառու համակարգով հրթիռ և այլն:

բ) Գոյական+գոյական+գոյական ($Գ_1+Գ_2+Գ_3$)

Ճառագայթահարման իրադրության քարտեզ, դատարկման գործողության ական, ավտոմեքենայի քարշով հրետանի, ուղղման գործողության ական, հեղուկ վառելիքով հրթիռ և այլն: Այս կաղապարը այնքան էլ տարածված չէ: Հիմնաբառի ուղիղ ձևով հանդես եկող գոյականի լրացումները հանդես են գալիս թեք հոլովներով (սեռական, գործիական):

գ) Ածական+ածական+գոյական ($Ա_1+Ա_2+Գ_1$):

Այս կաղապարով կազմվում են սակավաթիվ տերմիններ:

Հակատանկային ռեակտիվ նռնակ, ջերմամիջուկային պայթուցիկ նյութ, միջուկային պայթուցիկ նյութ, զրահահար հրկիզվող ռումբ, գերձագույն դիպուկ հրամանատար և այլն:

դ) Գոյական+ածական+գոյական ($Գ_1+Ա_1+Գ_2$)

Երկրի արհեստական արբանյակ:

Կենսունակ չէ և տարածման հնարավորություններ չունի:

ե) Մակբայ+դերբայ+գոյական ($Մ_1+Դ_1+Գ_1$)

վերջնականորեն սարած ական։

զ) Ածական+դերբայ+գոյական ($Ա_1+Դ_1+Գ_1$)

խորը շարանավորված պաշտպանություն։

է) Գոյական+դերբայ+գոյական ($Գ_1+Դ_1+Գ_2$)

Հազորդալարերով կառավարվող հրթիռ։

2.- ԵՌԱՆԴԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

ա) տ+$\bar{\text{տ}}$+տ (ոչ տերմին+ոչ տերմին+տերմին)

Ամենատարածված և կենսունակ կաղապարն է։ Օրինակ՝ ուղղման գործողության ական, դատարկման գործողության ական, հեղուկ վառելիքով հրթիռ, շրջանաձև դիտման ինդիկատոր, թունավոր նյութերի ինդիկատոր, հատուկ նշանակության ավիացիա, թրթուրավոր քարշով հրետանի, ակնթարթային գործողության ական, սեղմիչ գործողության ական, ձգիչ գործողության ական, մեծ խտության ականապաշտ, փոքր խտության ականապաշտ, հեռավոր գործողության հրթիռ, կարծր վառելիքով հրթիռ, հեղուկ վառելիքով հրթիռ, գերազույն գլխավոր հրամանատար և այլն։

բ) տ+տ+տ (տերմին+տերմին+տերմին)

ռադիոլոկացիոն դետքի ինքնաթիռ, միջուկային մարտամասով հրթիռ, ինքնանշանառու համակարգով հրթիռ, հակատանկային ռեակտիվ նռնակ։

գ) տ+տ+$\bar{\text{տ}}$ (տերմին+տերմին+ ոչ տերմին)

ռադիոակտիվ վարակման հսկողություն, ռադիոակտիվ ճառագայթահարման հսկողություն, միջուկային պայթյունի բարձրություն, միջուկային զենքի փորձարկումներ, գերմիջուկային պայթուցիկ նյութ։

դ) տ+$\bar{\text{տ}}$+$\bar{\text{տ}}$ (տերմին+ոչ տերմին+ոչ տերմին)

ռադիոակտիվ վարակման հսկողություն, ռադիոակտիվ նստվածքների տեղում, ռադիոլոկացիոն հայտնաբերման հեռավորություն, ռադիոակտիվ թունավորման տեղամաս, տիեզերական տարածության հետազոտություն, օդային մարտի հրթիռ և այլն։

ե) տ+$\bar{\text{տ}}$+տ (տերմին+ոչ տերմին+տերմին)

ավտոմեքենայի քարշով հրետանի, ճառագայթահարման իրադրության բարոմետր, ռադիոլոկացիոն կայանի ինդիկատոր, մանրէական մի-

ջոցների ինդիկացիա, մեխանիկական բարշով հրետանի, զրահահար հրթիռվող նյութ և այլն։

ՔԱՌԱՆԴԱՄ ԵՎ ԲԱԶՄԱՆԴԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս կարգի բառակապակցական տերմինները չնչին մասն են կազմում հայերեն ռազմական տերմինների համակարգում և կազմվել են հիմնականում ռուսերենի նմանությամբ, որպես տերմինային պատճենումներ։

1. ՔԱՌԱՆԴԱՄ ԵՎ ԲԱԶՄԱՆԴԱՄ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱԱԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

ա). Ածական+գոյական+ածական+գոյական ($Ա_1+Գ_1+Ա_2+Գ_2$)
հատուկ նշանակության ավիակիր ավիացիա, ստրատեգիական նշանակության հրթիռային զորքեր, կարծր վառելիքի հրթիռային շարժիչ։

բ) Ածական+գոյական+գոյական+գոյական ($Ա_1+Գ_1+Գ_2+Գ_3$)
միջուկային պայթյունի էպիկենտրոնի կոորդինատներ։

գ) Ածական+ածական+գոյական+գոյական ($Ա_1+Ա_1+Գ_1+Գ_2$)
միջուկային էներգետիկ տեղակայմամբ նավ, միջուկային էներգետիկ սարքավորմամբ սուզանավ, միջուկային պայթուցիկ նյութի ական, գերագույն գլխավոր հրամանատարության ռազմական։

դ) Գոյական+գոյական+գոյական+գոյական ($Գ_1+Գ_2+Գ_3+Գ_4$)
«օդ-օդ» կարգի հրթիռ, «օդ-նավ» կարգի հրթիռ, «երկիր-օդ» կարգի հրթիռ, «երկիր-երկիր» կարգի հրթիռ, «նավ-նավ» կարգի հրթիռ, «սուզանավ—օդ» կարգի հրթիռ։

ե) Ածական+դերբայ+ածական+գոյական+գոյական ($Ա_1+Գ_1+Ա_1+Գ_1+Գ_2$)
հակատանկային կառավարվող ռեակտիվ արկերի մարտկոց, հակատանկային կառավարվող ռեակտիվ արկերի շարժիչ։

զ) Ածական+գոյական+շաղկապ+գոյական+գոյական ($Ա_1+Գ_1+Շ_1+Գ_2+Գ_3$)
ուղղահայաց թռիչքի և վայրէջքի ինքնաթիռ, կարճ թռիչքի և վայրէջքի ինքնաթիռ։

ա) $\overline{\text{տ}}+\overline{\text{տ}}+\text{տ}+\text{տ}$ (ոչ տերմին+ոչ տերմին+տերմին+տերմին). *Հատուկ նշանակության ավիատիկիր ավիացիա, կարծր վառելիքի հրթիռային շարժիչ, գերագույն գլխավոր հրամանատարության ռազմական։*

բ) $\text{տ}+\overline{\text{տ}}+\text{տ}+\text{տ}$ (տերմին+ոչ տերմին+տերմին+տերմին). *Ստրատեգիական նշանակության հրթիռային զորքեր, միջուկային պայթյունի էպիկենտրոնի կոորդինատներ։*

գ) $\text{տ}+\text{տ}+\overline{\text{տ}}+\text{տ}$ (տերմին+տերմին+ոչ տերմին+տերմին). *Միջուկային էներգետիկ սարքավորմամբ սուզանավ, միջուկային էներգետիկ տեղակայմամբ սուզանավ։*

դ) $\text{տ}+\overline{\text{տ}}+\overline{\text{տ}}+\text{տ}$ (տերմին+ոչ տերմին+ոչ տերմին+տերմին). *Միջուկային պայթուցիկ նյութի ական։*

ե) $\overline{\text{տ}}+\overline{\text{տ}}+\overline{\text{տ}}+\text{տ}$ (ոչ տերմին+ոչ տերմին+ոչ տերմին+տերմին). *«Օդ-օդ» կարգի հրթիռ, «երկիր-օդ» կարգի հրթիռ։*

զ) $\overline{\text{տ}}+\text{տ}+\overline{\text{տ}}+\text{տ}$ (ոչ տերմին+տերմին+ոչ տերմին+տերմին). *«Օդ-նավ» կարգի հրթիռ։*

է) $\text{տ}+\text{տ}+\overline{\text{տ}}+\text{տ}$ (տերմին+տերմին+ոչ տերմին+տերմին). *«Նավ-նավ» կարգի հրթիռ։*

ը) $\overline{\text{տ}}+\overline{\text{տ}}+\overline{\text{տ}}+\text{տ}$ (ոչ տերմին+ոչ տերմին+ոչ տերմին+տերմին). *«Երկիր-երկիր» կարգի հրթիռ, «երկիր-օդ» կարգի հրթիռ։*

թ) $\text{տ}+\overline{\text{տ}}+\overline{\text{տ}}+\text{տ}$ (տերմին+ոչ տերմին+ոչ տերմին+տերմին). *«Սուզանավ-օդ» կարգի հրթիռ։*

ժ) $\text{տ}+\overline{\text{տ}}+\text{տ}+\text{տ}+\text{տ}$ (տերմին+ոչ տերմին+տերմին+տերմին+տերմին). *Հակատանկային կառավարվող ռեակտիվ արկերի մարտկոց, հակատանկային կառավարվող ռեակտիվ արկերի շարժիչ։*

ի) $\overline{\text{տ}}+\text{տ}+\text{տ}+\text{տ}$ (ոչ տերմին+տերմին+տերմին+տերմին). *Ուղղահայաց թռիչքի և վայրէջքի ինքնաթիռ, կարճ թռիչքի և վայրէջքի ինքնաթիռ։*

Քառանդամ և բազմանդամ տերմինային կապակցությունների ձևաբանական կաղապարները հիմնականում բնորոշվում են հետևյալ առանձնահատկություններով ու միտումներով։

1. Ըստ նվազող աստիճանականության առաջին տեղում են գոյական բաղադրիչներով կազմված կապակցությունները, այնուհետև ածա-

կանով և խոսքի այլ մասերով կազմվածները։ Ըստ որում, գոյական բառբաղադրիչը հանդես է գալիս ձևաբանական բոլոր կաղապարներում։

2. Զարգացման հեռանկարներ ունեն գոյական և ածական բաղադրիչներով կազմված քառանդամ և բազմանդամ կապակցությունները։

Նույն կարգի կապակցությունների տերմինային կաղապարներին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

ա) Ըստ նվազող հաճախականության մեծ թիվ են կազմում այն քառանդամ և բազմանդամ կապակցությունները, որոնք կազմված են ոչ թե բացառապես տերմիններով, այլև տերմիններով և ոչ տերմիններով։

բ) Հիշյալ կապակցություններին խորթ են բացառապես ոչ տերմին բաղադրիչներով կազմվող կաղապարները։

գ) Զարգացման հեռանկարներ ունեն հիմնականում՝ ոչ տերմին+ոչ տերմին+տերմին կաղապարները՝ եռանդամ կապակցություններում և ոչ տերմին+ոչ տերմին+տերմին+տերմին կաղապարները քառանդամ կապակցություններում։

Այսպիսով քննելով հայերեն ռազմական տերմինաբանությունը իր պատմական զարգացման մեջ և ժամանակակից փուլում, հավաստվեց, որ այն իբրև առանձին տերմինաբանական համակարգ փաստորեն ձևավորվել և մշակվել է սովետական իշխանության տարիներին։ Տերմինային կազմի հիմնական դանդվածը, ինչպես ցույց է տալիս սույն ուսումնասիրությունը, գլխավորապես կազմված է բնիկ հայերեն բառերից և հայերենի բառակազմական կաղապարներով կերտված բաղադրություններից։ Որոշ քանակ են կազմում ռուսերենից փոխառված տերմինները, որոնք ոչ միայն հաստատուն տեղ են գրավում նշված համակարգում, այլև հայերեն հիմնական և երկրորդական բառակազմական ձևույթների հետ ակտիվորեն մասնակցում են նոր տերմինների ու տերմինային կապակցությունների ստեղծմանը։

Ժամանակակից փուլում հայերեն ռազմական տերմինաբանությունը զարգանում է բառացանկի համալրման, տերմինների միօրինակացման, տերմինաբանական կրկնակների՝ հատկապես փոխառյալ և բնիկ տերմինների հոմանշության աստիճանաբար վերացման և ընդհանրապես համակարգի մյուս տարրերի կատարելագործման ուղղությամբ։

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՈՒՆ ԱՄՍԵՆՅԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ ՍՍՌ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հ. Ա. ՕՀԱՆՅԱՆ, Փոխառության վերաբերյալ տեսակետների ննջություն . 5
Երկու խոսք 5
Հայ գրողների տեսակետների ննջություն 7
Հայ լեզվաբանների սկզբունքներն ու ըմբռնումները 19
Մշակույթի այլ բնագավառների ներկայացուցիչները փոխառության մասին . . 41
Արևմտահայերենի նկատմամբ ցուցաբերվող մոտեցումները 60
Ամփոփում 64
Ռ. Խ. ՄԿՐՏՉՅԱՆ, Խոսքի մասերի բառաբարդման կաղապարները ժամանակակից հայերենում 66
Ներածություն 66
1. Բարդ բառերի բաղադրիչների համադրելիության սահմանափակիչ հանգամանքները 72
2. Աղատ և կախյալ ձևույթներով բարդ բառեր 78
3. Ձևահնչույթաբանության դերը բառաբարդման ժամանակ . . . 80
4. Հեղինակային նորաբանություններ և պոտենցիալ բառեր . . . 83
Անվանական խոսքի մասերի բառաբարդման կաղապարներ 95
1. Գոյականակերտ կաղապարներ 95
2. Ածականակերտ կաղապարներ 115
3. Դերանվանակերտ կաղապարներ 126
4. Թվականակերտ կաղապարներ 127
5. Մակբայակերտ կաղապարներ 128
6. Բայակերտ կաղապարներ 129
Պայսարկու խոսքի մասերի բառաբարդման կաղապարներ 134
1. Շաղկապ 134
2. Եղանակավորող բառեր 137
Բառաբարդման տեսակետից առդյունավետ խոսքի մասեր 140
Բազմարմատ բարդ բառերի կշիռը խոսքի մասերի համակարգում . . . 143
Համառոտագրություններ 148

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ս. Ա. ԱՍԼԱՆՅԱՆ, Տերմինաբանության աղբյուրները հայերենում . . 149
Երկու խոսք 149
Ներածություն 150
Նախասովետական շրջանի հայ տերմինաբանության մի քանի հարցեր 150
Համառոտ ակնարկ 1920-ական թվականների ռուս-հայ-րեն, հայ-ռուսերեն տերմինաբանական բառարան-ների 159
Տերմինակազմության ուղիները և աղբյուրները հայոց լեզվում 167
Տերմինների ստեղծման ներքին աղբյուրները հայերենում 171

I. Ժամանակակից հայոց լեզվի բառակազմական միջոցներով կազմված տերմիններ 171
1. Բառի նշանակության կամ իմաստի տերմինացում 172
2. Ածանցում, ածանցավոր տերմինների ստեղծումը 178
3. Բարդ տերմիններ 182
4. Բառակապակցություններ կամ տերմինային կապակցություններ . . 186
5. Հապավումներ 189
II. Արևմտահայերեն տերմիններ 190
III. Գրաբարյան տերմիններ 192
IV. Բարբառային տերմիններ 194
Տերմինների ստեղծման արտաքին աղբյուրները 198
I. Օտարազգի տերմինների փոխառության հարցերը . 198
1. Փոխառության հասկացությունը 199
2. Փոխառության պատճառները 200
3. Փոխառությունների տեսակները կամ տիպերը 201
4. Փոխառության աղբյուրները 205
5. Տնդայնաբանություններ 206
6. Փոխառյալ տերմինները հայոց լեզվում 208
7. Տերմինների փոխառության դրական և բացասական կողմերը . . 214
8. Փոխառյալ տերմինների յուրացումը լեզվում 216
9. Տերմինի միջազգային բնույթի հարցը 222
10. Տերմինը և լեզվի մաքրամտության հարցերը 230
II. Բառապատճենում 232
II. Ա. ԱՍԼԱՆՅԱՆ. Հայերեն ռազմական տերմինաբանությունը . . . 238
Երկու խոսք 238
Ակնարկ հայ ռազմական տերմինաբանության պատմության 239
Հայերեն ռազմական տերմինաբանությունը նորագույն շրջանում . . . 266
Հայերեն ռազմական տերմինների համակարգային-իմաստաբանական կառուցվածքը 270
Հայերեն ռազմական տերմինների աղբյուրները և կազմության միջոցները . . 275
Հայերեն ռազմական տերմինների ձագումնաբանական խմբերը 276
I. Բնիկ տերմիններ 276
II. Փոխառյալ տերմիններ 277
1. Բուն փոխառություններ 279
2. Իմաստային փոխառություններ կամ պատեհնումներ 280
Հայերեն ռազմական տերմինների կառուցվածքային առանձնահատկությունները . 282
Հայերեն ռազմական տերմինների ձևաբանական կազապարները 282
1. Միաբառ կամ պարզ տերմինների կառուցվածքը 282
2. Բարդ տերմիններ 292
Հայերեն ռազմական բարդ տերմինների խոսքիմաստային և տերմինաբանական կազապարները 295
1. Բարդ տերմինների խոսքիմաստային կազապարներ 295
2. Բարդ տերմինների տերմինաբանական կազապարներ 296
3. Բարդ ածանցավոր տերմիններ 297

4. Բարդ բաղադրյալ տերմիններ 299
Հայերեն ռազմական տերմինային կապակցությունների խոսքիմաստային և տերմինաբանական կաղապարները 300
Երկանդամ տերմինային կապակցություններ . . . 301
1. Երկանդամ տերմինային կապակցությունների խոսքիմաստային կաղապարները 302
2. Երկանդամ տերմինային կապակցությունների տերմինաբանական կաղապարները 306
Եռանդամ տերմինային կապակցություններ . . . 308
1. Եռանդամ տերմինային կապակցությունների խոսքիմաստային կաղապարները 309
2. Եռանդամ տերմինային կապակցությունների տերմինաբանական կաղապարները 310
Քառանդամ և բազմանդամ տերմինային կապակցություններ 311
1. Քառանդամ և բազմանդամ տերմինային կապակցությունների խոսքիմաստային կաղապարները 311
2. Քառանդամ և բազմանդամ տերմինային կապակցությունների տերմինաբանական կաղապարները 312

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆԱՎԱՐՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՎԻ ԲԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Հրատ. խմբագիր Ս. Ա. Անաստասյան
Կազմը Կ. Կ. Գաֆադարյանի
Գեղ. խմբագիր Հ. Ն. Գուրճակալյան
Տեխ. խմբագիր Հ. Մ. Մանուչարյան
Սրբագրիչ Ջ. Գ. Նարանյան

ИБ № 225

*Հանձնված է շարվածքի 8. 01. 1982 թ.։ Ստորագրված է տպագրության 14. 07. 1982 թ.։ ՎՖ 05910։ Չափը 60×84 1/16, թուղթ, № 1։ Տառատեսակ—«գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 18,35, տպագր. 19,75 մամուլ։ Հրատ.—հաշվարկ. 16,4 մամուլ։ Տպաքանակ 1500։ Պատվեր № 35։ Հրատ. № 5679։ Գինը 2 ռ. 70 կ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
Издательство АН АрмССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ. 24։
Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0198651

A II
68440